Սույն գիրքը թվայնացվել է Գրքասեր ՀԿ-ում՝ հայերենով գրականության պահպանման, հանրայնացման և ժամանակակից թվային միջավայրում հասանելի դարձնելու նպատակով:

Կազմակերպության նախաձեռնությունը միտված է հայերեն գրքերի և տեքստերի տարածմանը, ընթերցանության խթանմանը և մշակութային ոչ նյութական ժառանգության պահպանությանը՝ ապահովելով դրանց հասանելիությունը հնարավորինս լայն շրջանակների համար:

Մենք հավատում ենք, որ թվայնացումը ոչ միայն պահպանման միջոց է, այլև գիտելիքի, գրականության և մշակույթի շարունակական փոխանցման կարևոր ուղի:

Գրքասեր ՀԿ-ն գրքերը ձայնագրում և թվայնացնում է բացառապես Ձեր նվիրատվությունների շնորհիվ: Կազմակերպությանը կարող եք օժանդակել հետևյալ հղումով՝

https://grqaser.org/hy/donate

Ստուգված

Պատմություն

16+

Բագրատ Ուլուբաբյան

Արցախյան գոյապայքարը

Գիրքը հրատարակվում է մեկենասությամբ Կիլիկիո կաթողիկոսության ԱՄՆ-ի արևելյան շրջանի և Կանադայի Ազգային Առաջնորդարանի:

Հեղինակը հատուկ շնորհակալություն է հայտնում թեմի առաջնորդ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանին:

Երևան - 1994

ՄՈՒՏՔ

Մեր դարի առաջին քառորդում, երբ հայ ժողովուրդն իր մի մասով ջարդված էր արդեն, իսկ մյուս մասը ոտքի ելել, պիտի շարունակեր իր պատմական ճանապարհը, Հայաստանի արևելյան նահանգները կռվախնձոր էին դարձել նրանց իսկական տիրոջ ու նորահայտ հարևանի միջև: Այդ նահանգները՝ հին Արցախն ու Սյունիքը, որ նոր ժամանակներում մի ընդհանուր անվամբ կոչվում էին Ղարաբաղ, իրենք պիտի լուծեին իրենց բախտի վրա ծանրացած խնդիրը, քանի որ Հայաստանի նորելուկ պետությունը բավարար ուժ չուներ հարևանի անօրեն հավակնությունները հաղթահարելու համար: Ծայր էր առել անհավասար

մի կռիվ, որի հեռանկարը, եթե հայկական կողմի համար անհուսալիորեն մշուշոտ էր ու երերուն, ապա, միևնույն է, օտար կողմին ոչինչ չէր կարող խոստանալ, քանի որ արցախահայությունը դարեր ի վեր համառորեն անաղարտ ու աննվաճ էր պահել իր ազգային ու վարչական ինքնությունը և այս անգամ էլ պատրաստ էր մարտնչելու մինչև վերջ, մինչև հաղթանակ ու ազատություն:

Անհրաժեշտ էր ոգեկոչել ազգի բոլոր ուժերը, ծնվող նոր պետականությանը հուշել դիմելու հնարավոր ու անհնար ամեն միջոցի, որպեսզի հաղթանակեր արդարությունը:

Ահա այս օրերին էր, որ նոր ժամանակների պատմահայր Լեոն դաս էր տալիս հայոց ճակատագրի տնօրեններին, զգուշացնում էր, թե Արցախ-Ղարաբաղը «ներկայացնում է մի հսկայական միջնաբերդ, որի ճակատը դարձած է կուր-արաքսյան և մերձկասպյան անհուն տափաստաններին՝ բնությունից կոչում ստացած լինելով պաշտպանել հայկական բարձրավանդակն այս տափաստանների կողմից առաջացող շարժումների դեմ: Այդ հսկայական բերդի ամբողջ նշանակությունը հասկանալու համար պետք է նկատի առնել, որ նա փակում է ազգերի տեղափոխման այն մեծամեծ ճանապարհները, որոնք Կասպից ծովի հյուսիսային և հարավային ափերով Միջին Ասիայից բերում են կուր-արաքսյան արգավանդ տափաստանները: Պատմությունը մեզ շատ փաստերով ցույց է տալիս, որ նվաճող ազգերի ահավոր հորձանքները գալիս, ընդհարվում էին Ղարաբաղի լեռնաստանին, փշրվում էին ու հետ դառնում»:

Ուրեմն, այս Արցախ-Ղարաբաղը Հայաստանի պատնեշն է Արևելքից եկող արհավիրքների դեմ, և եթե նոր պետությունը ցանկանում է ապահով ու անխոցելի մնալ իրեն սպառնացող մեծ վտանգի դեմ, պետք է տերը մնա Արցախ-Ղարաբաղի:

Հետաքրքիր է, որ այս ճշմարտությանը հասու էին նաև օտարները: Ռուս մեծ մտավորական Սերգեյ Գորոդեցկին, արևմտահայության Եղեռնից հետո Հայաստանի փրկության ուղիների վրա մտորելիս, մատը հենց Արցախ-Ղարաբաղի վրա էր դրել և գրել այսպես. «Միաձույլ լինելով ազգագրորեն, տնտեսապես և լեզվական տեսակետից՝ Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արևելյան պատվարը: Այդպիսին է եղել անցյալում, այդպիսին է այժմ և այդպիսին կմնա հավերժորեն, քանի որ Հայաստանի սիրտը՝ դաշտն Արարատյան, անհնար է պաշտպանել, առանց տերը լինելու Ղարաբաղի»: «Այդպիսի՞ն է Ղարաբաղի նշանակությունը Հայաստանի համար, — պնդում էր մեծ ճանաչողն ու հայ ժողովրդի այդ իմաստուն բարեկամը:— Եթե Հայաստանը կորցնի այն, ապա մեծապես կտուժի ազգի ինքնորոշման գաղափարը: Եվ հակառակը, տեր մնալով Ղարաբաղին՝ Հայաստանը կստանա մշակութային եռանդուն ուժերի հզոր ներհոսք, որը, ողողելով Հայաստանի ավեր տարածքները, կարգասավորի դրանք մշակույթով և այդպես էլ կեզրափակի Ղարաբաղյան բազմադարյան փառավոր պատմությունը»:

Անհնար է ասել առավել ճշմարիտ, թերևս նաև ավելի սպանիչ: Սակայն կարծում եմ՝ չի խանգարի, որ այստեղ հիշենք նաև այն օրերի մեր ազգային-ազատագրական շարժման նվիրյալ Գարեգին Նժդեհի մարգարեական մի խոսքը: Նժդեհը զենքի մարդ էր և սիրում էր այն ճշմարտությունը, որ կտրում է թրի պես: Նա Ղարաբաղ ասելով հասկանում էր Արցախի ու Սյունիքի անբաժանելի միասնություն և զգուշացնում էր, թե Հայաստանն ի՞նչ ցուցանակի ներքո էլ որ լինի, չի կարող գոյություն ունենալ առանց այդ միասնության:

Հայաստանի բախտի նոր տնօրենները պիտի հասկանային այս ճշմարտությունը՝ ապացուցված երկար ու ձիգ դարերի դաժան փորձությամբ, հաստատված իմաստուն այրերի խոսք ու խորհրդով:

1918 թ. մայիսին, երբ Բաթումում բանակցություններ էին գնում անդրկովկասյան ժողովուրդների համար ստեղծվելիք վարչակարգի մասին, և սուր վեճեր էին ծագել սահմանների առթիվ, բարձրացավ նաև Արցախ-Ղարաբաղի հարցը:

Անդրկովկասին տեր էին լինելու երեք անկախ պետություններ՝ Վրաստանը, Հայաստանը և Արևելյան Անդրկովկասը:

Այս վերջինը դեռևս չուներ որոշակի տարբերակիչ, որովհետև անցյալ չէր ունեցել, ետ նայելիս չէր կարող ազգային վարչական որևէ միավորի փորձ վկայակոչել[1]: Սակայն հենց միայն նրանով, որ թիկունքում կանգնած ուներ բանակցությունների տնօրեն Թուրքիան, ցուցաբերում էր անհագուրդ ախորժակ: Եվ, որքան էլ զարմանալի, այդ ախորժակի առարկան էր Արցախ-Ղարաբաղը՝ բանակցությունների օրերում և նրանից առաջ էլ դարեր շարունակ ցայտունորեն ընդգծուն ազգային ու վարչական իր կերպարանքը պահած հայկական այդ մարզը:

Արևելյան Անդրկովկասի ապագա տերերի և նրանց հովանավոր թուրքաց համառ պահանջով հարցը լուծվեց ո՛չ թե իրավատեր հայկական կողմի օգուտին: Հայ պատվիրակները, հատկապես նրանց ղեկավար Ալեքսանդր Խատիսյանը, վճռական նշանակություն չէին տալիս այդ Արցախ-Ղարաբաղին: Մտածում էին, թե կարևորը նոր պետականությունն է, որ կծնվի, հայրենի հողի վրա կնվաճի իր ապրելու իրավունքը և առաջընթացի ճանապարհին տեր կկանգնի հին ու նոր ժամանակներում կորցրած իր հողերին:

Տարաբախտաբար այդ առաջընթացը, որ կատարվեց 1918—20 թվականների աղջամուղջում, հարցին վերջնական ու արդար լուծում չբերեց: Եթե Արցախ-Ղարաբաղը, համարյա առանց դրսի որևէ օժանդակության, ուղիղ երեք տարի կարողացավ պաշտպանել իր անկախությունը թուրք-թաթար-քուրդ միասնության շնչահեղձ հարձակումների, ամեն տեսակ վայրագությունների պայմաններում, ապա, միևնույն է, չկարողացավ մեկընդմիշտ միանալ մայր ժողովրդի պետությանը, դառնալ նրա անտրոհելի մասը: Չկարողացավ, որովհետև այս տարիներին էլ հակառակորդի թիկունքում, թուրք հովանավորի կողքին, կանգնած էին, այսպես կոչված, դաշնակից տերությունների, մանավանդ Մեծ Բրիտանիայի դիվանագիտական ու ռազմական ծախու զորությունները, որոնք ամեն կերպ խանգարում էին Արցախի վերամիացմանը մայր ժողովրդի պետությանը և զանազան խարդավանքներով ջանում էին իր ինքնույնը խրոխտորեն պաշտպանող մարզի վրա տարածել օտար բռնության տիրապետությունը:

Մխիթարական ոչինչ չէր բերելու նաև հաջորդ պատմաշրջանը՝ յոթ տասնամյակ ձգվելիք խորհրդային-սոցիալիստական մղձավանջով: 1920 թ. գարնանը Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան զորքերը մտան Անդրկովկաս՝ կարծես միայն նրա համար, որպեսզի ընդառաջեն «հեղափոխական» Թուրքիայի ու հանկարծակի բոլշևիկացած Ադրբեջանի հակահայկական հավակնություններին, ոտնահարեն հայ ժողովրդի ազգային-քաղաքական ու սոցիալական իրավունքները:

Այդ նրանք էին, որ բազմադարյան իր պատմության ամբողջ ընթացքում թշնամու առաջ երբեք վիզ չծռած, նախընթացի երեք տարիների անհավասար մարտերում իր անկախությունը պաշտպանած Լեռնային Արցախը բռնակցեցին Ադրբեջանին՝ իբր թե Անդրկովկասում մուսուլմանների և հայերի միջև խաղաղություն հաստատելու համար:

Այս պայմաններում դժվար էր սպասել, թե Արցախ-Ղարաբաղի հարցը կստանա իր արդար լուծումը՝ թեկուզ և այն օրենքների ու կարգախոսների ոգով, որոնք բոլշևիկների շուրթերից էին հնչում նրանց՝ Անդրկովկաս ոտք դնելու օրերին և պիտի անդադար տարփողվեին սոցիալիզմի չարաշուք գոյության բոլոր տասնամյակներին:

1921 թ. Արցախը բռնակցեցին Ադրբեջանին, 23-ին էլ նրան տվին սուտ մի ինքնավարություն՝ երևի հուսալով, թե շուտով հարցը կմարի, կմեռնի արցախահայի ազատության, մայր Հայաստանին վերամիանալու բաղձանքը: Իսկ հարցն ապրեց: Հանճարն

---

[1] В. М. Сысоев, Краткий очерк истории Азербайджана. Վ. Մ. Սիսոև, Ադրբեջանի պատմության համառոտ ակնարկ, ռուս., Բաքու, 1925, էջ 5. «Ադր. ԽՍՀ ինքնուրույն գոյությունն սկսվել է 1920 թ. ապրիլի 28-ից, իսկ Ադրբեջանի ինքնուրույն գոյությունը՝ իբրև առհասարակ պետության՝ 1918 թ. հունիսի 4-ից: Մինչև այդ «Ադրբեջան» անունը վերաբերել է բացառապես Պարսկաստանի հյուսիսային նահանգին...»: Նույնն էին հաստատում նաև ակադ. Վ. Վ. Բարտոլդը, Ա. Ե. Կրիմսկին, Ն. Ս. Պախոմովը և այլ անվանի հեղինակներ:

անշեջ կրակի պես հուրհրաց ու անընդհատ բորբոքվեց: Վկան՝ յոթանասուն տարիների առկայծումները հուսավառ, արդյունքը՝ 1988 թվականի փետրվարյան պոռթկումը հրդեհն, որից խանդավառված ոտքի ելավ համայն հայությունը Հայրենիքում ու Սփյուռքում: Ոտքի ելավ, դարձավ իր հին ու նոր իրավունքների տերը, նրանց համար հետևողականորեն մաքառողը:

Արցախի հարցի ծնունդը, նրա պաշտպանությունը 1918—21 թթ. հրդեհներում, հետագա առկայծումներն ու արծարծումները սոցիալիստական կարգերի դժոխային պայմաններում և, վերջապես, նոր պոռթկումը, որ վերածվեց համազգային ոգեշնչունչ պայքարի՝ կազմում են այս գրքի նյութը, հյուսվածքը, էությունը:

Գիրքը բաղկացած է երկու հատորից: Առաջինն ընդգրկում է առավել ծավալուն շրջանը՝ 1917—18 թթ. խառնակչությունից մինչև 1988-ի սկիզբը: Երկրորդում տրվում են 1988-ի փետրվարյան դեպքերը և նրանց հաջորդած բազմամյա պայքարը:

Եթե առաջինը հավակնում է լինել հարցի յոթանասունամյա հատվածի պատմությունը և իր հիմնական մասով հյուսված է աղբյուրագիտական հիմքի վրա, ապա երկրորդն առավելապես ժամանակակցի մի հիշատակարան է, ականատեսի՝ տաք դեպքերը բոլոր զգայարաններով ընկալած մարդու վկայություն, որի մեջ դեպքերն ու նրանց արձագանքները, խանդավառությունն ու ցավը հյուսված են իրար և չեն կարող տեղադրվել սառն ու անտարբեր պատմագրության սահմաններում: Չնայած անձնապես ես միշտ էլ այն համոզմանն եմ եղել, թե իրական պատմությունը և «սառն ու անտարբեր» շարադրանքը հակոտնյաներ են, խորթ՝ պատմող (ուրեմն՝ ապրող ու ապրածը հաղորդող) մարդու էությանը:

Առաջին հատորի շատ էջերում, մանավանդ 1950—70 թվականների իրողություններին վերաբերող մասում ևս գրածս հիմնականում հիշատակարան է: Ինչ վերաբերում է նախընթացի պատմությանը, ապա այստեղ օգտվել եմ բազմապիսի աղբյուրներից, որոնց մասին կուզենայի անել հետևյալ հաղորդումը:

1918—20 թթ. արցախահայության պայքարի ղեկավարները, Ազգային խորհրդի և այլ կազմակերպությունների գլխավորները հիմնականում գրագետ ու խելոք մարդիկ են եղել: Նրանցից ոմանք դեպքերի թարմ տպավորության տակ գրել են իրենց հուշերը, տպավորությունները, տվել իրողությունների այնպիսի քննություններ, որոնք այսօր բացառիկ արժեք են ներկայացնում իբրև վստահելի վավերականներ: Դրանց մի զգալի մասը տպագրված է (Արսեն Միքայելյանի, Եղիշե Իշխանյանի, Համբարձում Տերտերյանի, Ռուբեն Տեր-Մինասյանի, Հովակ Ստեփանյանի, Սուրեն Սարգսյանի և այլոց գրառումները): Ուրիշները, մանավանդ հայրենաբնակ գործիչների ձեռքից ելածները, հիմնականում անտիպ են՝ ծվարած պետական արխիվներում ու հարազատների անձնական պահոցներում[2]:

Այսօրինակ նյութերից երկուսը՝ Միրզա Տեր-Սարգսյանի ձեռագիրը և մանավանդ Հարություն Թումյանի հիշատակարան-ուսումնասիրությունը, արժանի են հատուկ ուշադրության:

Առաջինը՝ Մ. Տեր-Սարգսյանի (1910-ական թվականների տեղական մամուլից հայտնի Միսսար գրական անունով) հուշերի գիրքը («Լեռնային Ղարաբաղ, պատմական հիշատակարան, 1917—1923») շարադրվել է 1920—25 թթ. դեպքերի թարմ տպավորության տակ, վարժ գրչի տեր և ճշմարտության արժեքը լավ հասկացող մարդու ձեռքով: Նրան առաջին անգամ ծանոթացել եմ 1970-ական թվականների սկզբին: Հեղինակի հարազատները՝ մեր բանաստեղծ-թարգմանիչ Վրույր Բալայանը և իր տիկինը՝ հայ-ռուսական փոխհարաբերություններին վերաբերող վավերագրերի հավաքման ու կարգավորման հմուտ երախտավոր Սոնյա Ավագիմյանը, տվել էին՝ հուսալով, թե հավանելու

[2] Գրքի շարադրանքի մեջ աղբյուրները նշվում են իրենց մատենագիտական համապատասխան տվյալներով:

դեպքում ի վիճակի կլինեմ հրապարակել: Այն ժամանակ ևս գործի լծեցի հեղինակի հայրենակից, նաև աշխատանքին քաջածանոթ ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի զորությունը. . . Սակայն տպագրելն անհնար եղավ. այդ էր մնացել, որ Արցախի դժխեմ հոլովումները ցույց տվող, Շուշվա ողբերգության մասին ականատեսի վկայություններ հաղորդող գիրք տպագրեին 60-ականների հայտնի դեպքերից հետո, երբ նոր ուժով մոլեգնել էր ադրբեջանական շովինիզմը, և Հայաստանի ղեկավարներն Արցախի անունը տալուց էլ էին վախենում:

Ի դեպ, Սոնյան այն ժամանակ ինձ էր հանձնել նաև Լեոյի մի նամակը սույն ձեռագրի մասին: 1926-ին Միսսարը Բաքվից իր հիշատակարանն ուղարկած էր եղել մեծանուն պատմաբանին ու հին բարեկամին՝ խնդրելով աջակցել, որ այն տպագրվի: Լեոն կարդացել-հավանել էր աշխատանքը և, ահա՛, իր բարձր կարծիքն արտահայտելուց հետո, հայտնում էր, որ այդքան ազնիվ մի գիրք տպագրելու համար դժվար, պարզապես անհնար ժամանակ է: Օրերս եղա Հայաստանի կուսակցական Կենտկոմի քարտուղար Աշոտ Հովհաննիսյանի՝ իմ նախկին աշակերտի ու բարեկամի մոտ, — Լեոն էի պատմում: — Խնդրեցի՝ միջամտի, որ տպագրեն բազում տարիների տառապալից ջանքերիս արդյունքը՝ բազմահատոր հայոց պատմությունը: Ծանր հառաչեց, — Լեոն էր պատմում, — ապա թախծոտ բացատրեց, որ հայոց պատմության համար անբարենպաստ եղանակ է, և սպասվում է առավել դժնակը...

Այսքանը հաղորդելուց հետո, այնուամենայնիվ, Լեոն հետևյալ խորհուրդն էր տալիս. սիրելի Միրզա, — ասում էր, — իմ ապաբախտ հայրենակից, քո այդ նախշուն ձեռագրով մի քանի օրինակ արտագրիր ձեռագրիցդ և պահիր տարբեր տեղեր: Չի կարող, որ մեր գլխին եկած այս անբարենպաստ ու դժնակը հավերժական լինի: Կգա նաև մեր ազգի ժամանակը, բարի օրեր կլինեն, գրքիդ վրա ուշադրություն կդարձնեն, կտպագրեն, և երջանիկ սերունդները նրանից կիմանան մեր դժվար կյանքի մասին...

Վ. Բաղդասարը վերջերս նորից ինձ էր հանձնել ձեռագրի բախտը: Տպագրության պատրաստեցի՝ միաժամանակ իմ հատորի համար նրանից քաղելով մի շարք արժեքավոր տեղեկություններ:

Հարություն Թումյանի ձեռագրի հետ ևս առնչվել եմ 70-ականների սկզբին: Մեր ընդհանուր բարեկամ, մաթեմատիկոս Նիկոլ Գասպարյանն էր, որ մի օր ինձ հանձնեց այդ ձեռագրի թղթապանակը («Կարդա, տես ինչ կարելի է անել»):

Թումյանին ճանաչում էի 1965-ից: Արշավիր Քամալյանի հետ Ստեփանակերտ էր եկել: Հետաքրքրվում էր մարզը Հայաստանին վերամիավորելու համար բորբոքված շարժման ընթացքով: Ծանոթացանք, պարզվեց, որ երկուսն էլ 1918—20 թթ. նույն կռիվն էին մղել, որպես Ազգային խորհրդի անդամներ, մարզի ժողովրդական կառավարության կոմիսարներ... Եվ հիմա, առնելով արցախահայության ազատագրական նոր ոգորումի լուրը, եռացել էր հին արյունը, եկել էին նորից շնչելու հայրենի եզերքի ըմբոստ մթնոլորտը:

Ես հետո իմացա, որ Հարություն Թումյանը մեր ֆիդայական շարժման հռչակավոր ղեկավարներից մեկի՝ Թուման Թումյանի կրտսեր եղբայրն է, որը դեռ հայրենի Շուշիում եղբորից ու Նիկոլ Դումանից, Արամից ու Իշխանից, Սարգիս Մեհրաբյանից (Խանասորի Վարդան) և Իշխանից (Նիկոլ Պողոսյան) դասեր առած, այն դժոխային տարիներին լեռնաստանում էր մնացել նրա փրկությանը նվիրվելու, նոր Հայաստանի արևելյան կողմից պաշտպանելու համար:

Թումյանի ձեռագիրն անպայման արժանի էր տպագրության: Այս անգամ ևս անմիջապես դիմեցի Աշոտ Հովհաննիսյանին: Նա կարդաց, նույնիսկ դրվատական գրախոսություն գրեց, խոսեց հրատարակիչների հետ: Սակայն դրական ոչ մի արդյունք: Այն ժամանակ նա դիմեց հանրապետության Արխիվային վարչության պետ Աշոտ Հարությունյանին, առաջարկեց օժանդակել: Ես ու Հարությունյանը գրքի մի խոշոր հատված առանձնացրինք «Արխիվների բանբերում» հրապարակելու համար: Հարությունյանը որպես խմբագիր այդ հատվածը կարծեմ Կենտկոմ տարավ (երաշխավորություն ստանալու): Մի օր էլ զանգեց, թե Թումյանից

թույլտվություն վերցրու, հրապարակվելիք հատվածում որոշ հավելումներ կատարենք: Հաղորդեցի, Թումյանն ամոթխած, ասաց՝ «Չե՛մ ուզում»:

Մնում էր հետևել Լեոյի իմաստուն խորհրդին, և ես Մատենադարանի տնօրեն Լևոն Խաչիկյանի բարյացակամությամբ իրենց լուսատիպով բազմացնել տվի, մի օրինակը թողեցի Մատենադարանում, մյուսը հանձնեցի Պատմության պետական թանգարան, մեկն էլ ինքս վերցրի...

Վերջին տարիներին (70-ականներին) Թումյանը շատ էր ինքնամփոփ դարձել, ոչ ոքի չէր ընդունում, Արցախից եկած ցավալի լուրերից մթնում էր, խոշոր գլուխը տմրտմացնում: Մեր վերջին հանդիպմանը գրքի ճակատագրի մասին ոչինչ չխոսեց: Արցախի հարցն էր մտահոգությունը: Ասաց. «Մենք սխալ ճանապարհ ենք բռնել. մեր դեմ վայրենի բնազդով գործող հակառակորդն էր, իսկ մեզ առաջնորդում էին քաղաքակրթության օրենքները...» — և քիչ լռելուց հետո ասաց լսածս վերջին իր խոսքը. — «Ճիշտ էին մեր նահատակ նախորդները՝ Նիկոլ Դումանը, մեր Թումանը, Վարդանը, Դալի Ղազարը... Նույն դառնան նրանց հոգիները: Լույս դառնան և լուսավորեն այն ճանապարհը, որ Արցախի նոր փրկարարներն են անցնելու»:

Թումյանի ձեռագիրը որոշակի անուն չուներ: Բազմացնելիս ինքս եմ գրել՝ «Դեպքերը Լեռնային Ղարաբաղում, 1917—20 թթ. (պատմական ակնարկ)»:

1921—28 թթ. համար օգտվել եմ Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Ադրբեջանի բաժանմունքի հրատարակած փաստաթղթերի ու նյութերի ժողովածուից[3]: Գրքի խմբագիրը, հավանաբար նաև «Խմբագրության կողմից» առաջաբանի հեղինակը, ոչ անհայտ Զ. Փ. Գուլիևն է, որի խոսքն աչքի է ընկնում շատ փաստաթղթերի ծուռ ու շիլ մեկնաբանություններով և ապակողմնորոշող հայտարարություններով: Օրինակ, առաջաբանում այն պնդումը կա, թե Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանի սահմաններում առնելու մեջ «նախ և առաջ նկատի է առնված մարզի բնակչության տրամադրությունը»[4], որ տեղով մեկ սուտ է: Հայտարարվում է, իբր, ինքնավարությունը հռչակելուց հետո անց է կացվել մարզի բնակչության հանրաքվե, որով հաստատվել է այդ հարցի միահամուռ կամքը՝ ինքնավարության իրավունքով Ադրբ. ԽՍՀ կազմի մեջ մտնելու («1923 թ. օգոստոսին անցկացված հանրաքվեով մարզի բնակչությունն արտահայտվել է Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ ինքնավար մարզ կազմվելու օգտին»)[5]: Եվ այս լպիրշ սուտն ապացուցելու համար վկայակոչվում է այն ժամանակվա կուսակցության մարզկոմի քարտուղար Սերո Մանուցյանի հերթական սովորական զեկույցներից մեկի սովորական խոսքը, որի մեջ բացարձակապես ոչ մի խոսք չկա ո՛չ հանրաքվեի, ո՛չ էլ Ադրբեջանի մասին, և տրվում է լոկ ինքնավարության առթիվ անցկացված ժողովների միտինգային բնութագրությունը: Ահա այն. «Ինքնավարության ակտը գյուղացիության կողմից ընդունվեց լիակատար միակամությամբ... Գյուղացիներն իրենց զանգվածային բանաձևերում ողջունել են ինքնավարությունն ու խորհրդային իշխանությունը»[6]:

Բայց ո՞վ է ասել, թե հենց այսքանը՝ տրված մարզկոմի քարտուղարի պատեհապատշաճ զեկույցի մեջ, նշանակում է հանրաքվե (ռեֆերենդում): Թե՞ գուլիևները չեն էլ պատկերացնում՝ իրենց ի՛նչ է ներկայացնում հանրաքվեն, և այն ինչպե՞ս են կազմակերպում ու անցկացնում քաղաքակիրթ միջավայրում:

Մի տեղ էլ ժողովրդական միահամուռ հավանության արտահայտություն է հայտարարվում մի ժողովրդի լրատվական տեղեկությունը[7], որը խելամտորեն քննելիս պարզվում է, որ իրականում վերևի ներկայացուցիչը ժողովականներին հաղորդել է բացահայտ

---

[3] «К истории образования Нагорно-Карабахской области Азербайджанской ССР. 1918—1925, документы и материалы», Баку, 1989 (այսուհետև՝ «Փաստաթղթեր»):
[4] Անդ, էջ 6:
[5] Անդ, էջ 7—8:
[6] Անդ, էջ 203:
[7] Անդ, էջ 6:

անհեթեթություններ: Փաստաթղթի այն մասին է, որ Վարանդայի Հադրութի գյուղում հավաքված են եղել ենթաշրջանի 47 ներկայացուցիչներ: Ադրբեջանի ժողկոմխորհի ներկայացուցիչ Լևոն Միրզոյանը ջանացել է նրանց գլուխները մտցնել նախօրյացին Թիֆլիսում ընդունված հակահայկական որոշումը: Եվ այսպես, ինչպես փաստաթղթում արձանագրված է, «Համագումարը (ենթաշրջանի 47 ներկայացուցիչների հավաքն է համարվում համագումար — Բ. Ու.) անցնում է Ղարաբաղի հարցի քննարկմանը: Զեկուցում է ընկ. Լ. Միրզոյանը: Ընկ(երը) հայտարարում է, որ հարցը դրվում է ոչ թե քննարկման, այլ գյուղացիության կարծիքին ծանոթանալու նպատակով: Ընկ(երը) հաստատում է, որ տնտեսական, հոգևոր, քաղաքական և ազգային տեսակետներից Ղարաբաղը սերտորեն կապված է Ադրբեջանի կենտրոնի (Բաքվի) հետ. այդ գործոններն էլ կանխորոշում են այն հարցը, թե մենք քաղաքական ինչպիսի կազմավորման պիտի ենթարկենք Ղարաբաղը»[8]:

Գուլիևն այս հայտարարությունը մեջ է բերում՝ որպես թե բացահայտելով արցախահայության կարծիքը՝ մարզն Ադրբեջանի կազմի մեջ առնելու վերաբերյալ: Արցախահայությա՛ն, որ այն ժամանակ կազմում էր մարզի բնակչության ավելի քան 94 տոկոսը: Մի կողմ թողնենք, որ փաստաթղթում հիշվածը ոչ թե արցախահայության կարծիքն է, այլ «ընկ(երոջ)», որ Բաքվի ներկայացուցիչն էր: Բայց գրաճանաչ, իրեն մարքսիստ-լենինիստ համարող Գուլիևն այդ ինչպե՞ս է պատկերացնում «հոգևոր, քաղաքական ու ազգային տեսակետներից» արցախահայության կապը ո՛չ իր մայր Հայաստանի, այլ Ադրբեջանի հետ: Չէ՞ որ նման անհեթեթության համար իրական հիմք անհնար է պատկերացնել: Մանավանդ, որ, այսպես կոչված, համագումարի արձանագրությունն էլ ունի, որն ասում է. «Պատգամավորներից շատերը հայտարարում են, թե իրենք այդ հարցի առթիվ չեն կարող արտահայտվել բնակչության անունից և առաջարկում են հնարավորություն տալ նախապես հարցը քննարկելու գյուղերում»[9]:

Այսինքն՝ վերևից եկածը հազիվ 47 հոգի է մի տեղ հավաքել, հավաքը գավառի աշխատավորության համագումար համարելով, ուզում է նրա անունից Ադրբեջանի ղեկավարությանը տանել որոշում այն մասին, որ արցախահայությունը «հոգևոր, քաղաքական ու ազգային տեսակետներից» սերտորեն կապված է Բաքվի հետ, իսկ նրանք՝ այն խեղճ պատգամավորները, չեն կարող համաձայնել նման հիմարության հետ, ասում են՝ ա՛յ, գյուղերը գնացեք, նրանցում հարցը քննության դրեք և նրանց կարծիքը տարեք վերևներ:

Հարցը գյուղերում քննարկելու փորձ էլ է եղել: Լ. Միրզոյանը Հադրութից ուղիղ Ճարտար է գնացել: Մի տեղ է հավաքել չորս մարտակերտի բնակչությանը և երբ հաղորդել է, թե ի՞նչ հարց է քննարկման դրված, ու իրեն ի՞նչ տեսակ պատասխան է հարկավոր, գյուղացիները թողնելով հեռացել են, և հրապարակում բռնափոշման մնացել են Միրզոյանն ինքը և իրեն ուղեկցող պաշտոնյաները[10]:

Փաստերի և աղբյուրագիտական տվյալների այսօրինակ մեկնաբանություններով չեն բավարարվել ժողովածուի կազմողներն ու խմբագիրը: Կան առավել դատապարտելի կամայականություններ, ինչպես փաստաթղթերի նպատակային զտեհիկ կրճատումները, հանրահայտ տեղեկությունների վրա կատարած ձեռնաշարժությունները: Օրինակ, ո՞վ չգիտի, որ 1920 թ. դեկտեմբերի 1-ին Բաքխորհրդի հանդիսավոր նիստում արած իր հայտարարությամբ Նարիման Նարիմանովը Հայաստանինն է համարել Նախիջևանը, Զանգեզուրն ու Ղարաբաղը: Եվ այս անունները նույն իմաստով էլ մտել են Օրջոնիկիձեի ելույթի, ինչպես նաև դեկտեմբերի 2-ին հրապարակված հռչակագրի մեջ: Բայց արի ու տես, որ գրքում դրանք բոլորն էլ շուռումուռ են տրվել: Նարիմանովի ելույթում Նախիջևանի անունը բոլորովին չկա[11], Օրջոնիկիձեի ելույթում[12] Նախիջևանի անվան տեղում լոկ

---

[8] «Փաստաթղթեր», էջ 6—7, բնագրի էջ 95—96:
[9] Անդ, էջ 96:
[10] Այս դեպքերի մասին հանգամանորեն պատմում էր հին բոլշևիկ Սուրեն Հախումյանը:
[11] «Փաստաթղթեր», էջ 65:
[12] Անդ, էջ 67:

կախման կետեր են, նրան վերաբերող նախադասությունը ցնջել է, իսկ հռչակագիրը (դեկլարացիա) առհասարակ տեղ չի գտել ժողովածուում, որովհետև նրանից բառ հանելը կամ կախման կետերով փոխարինելը պիտի աչք ծակեր:

Եվ, այնուհանդերձ, ժողովածուի փաստաթղթերն են, որ այսպես թե այնպես բացահայտում են այն երեք տարիներին Արցախի հարցի գլխին ազերիների բերած աղետները: Չէ՞ որ միայն դրանք են լույս աշխարհ եկել, իսկ հիմքերն ստուգելու, առավել անաղարտ վիճակը ներկայացնելու հնարավորություն չունենք՝ գոնե այժմ, հայ-ազերական հարաբերությունների սրման այս պայմաններում:

1923-ին հաջորդած շուրջ երկու տասնամյակի իրողություններին վերաբերող սակավ փաստերն ու արխիվային փաստաթղթերը քննելուց հետո 1950—70-ական թվականների բավական հարուստ ու տեսական շրջանը ներկայացրել եմ գերազանցապես սեփական հուշերի, ամենատարբեր գրառումների, հիշողության մեջ անջնջելի մնացած տպավորությունների հիման վրա:

Այստեղ հիմնականում տեղ են բռնում քաղվածքներն իմ ձեռագիր մի գրքույկից, որ գրվել է 1936 թ.՝ իբրև նախընթացին Արցախում ու «նրա շուրջ» տեղի ունեցած դեպքերի և իրողությունների նկարագրություն:

Այդ ձեռագիրը (150 մեքենագիր էջ) բավական տարածված էր հենց ստեղծման ժամանակից: 1966-ի ամռանն էր, ընթերցելու համար տվել էի Երևանի համալսարանի ռեկտորի տեղակալ, իմ բարեկամ Հայկարամ Ութմազյանին: Նա ոչ միայն ընթերցել, այլև մի քանի օրինակով մեքենագրել էր տվել… Եվ շուտով ծանոթ ու անծանոթ հանդիպողները մտերմիկ զրույցի ժամանակ մեկ էլ կիսաձայն բացվում էին, խոստովանում, որ ունեն կամ կարդացել են: Իսկ 1968 թ., երբ ես դեռ Ստեփանակերտից Երևան չէի փոխադրվել, պրոֆ. Սողոմոն Սողոմոնյանը շտապ ինձ Երևան հրավիրեց, և հենց իր տանը հանդիպեցինք կուսակցության Կենտկոմի քարտուղար Գ. Ա. Տեր-Ղազարյանցի հետ: Քարտուղարն անհանգստացած պատմեց, որ ԽՄԿԿ Կենտկոմից ստացել են ձեռագիր գրքույկիս ռուսերեն թարգմանությունը՝ մի ընդարձակ գրպարտչական վերլուծության հետ, կից հանձնարարականով, որպեսզի Հայաստանի Կենտկոմը քննարկի այն ու պատասխանի…

— Անտոն Երվանդովիչը շատ է անհանգստացած քեզ համար,— հաղորդեց Տեր-Ղազարյանցը:— Ասում է՝ տղան այդքան տառապանքներ քաշեց, հիմա էլ զրպարտիչների ձեռքին պիտի բրբրվի...

Ես ասացի.

— Չեն կարող ապացուցել, որ ձեռագիրն իմն է:

— Ո՞նց չեն կարող, երբ տասնյակ էջերում քեզ հետ պատահած դեպքերն ու հանդիպումներն ես պատմում և այն էլ սեփական անունից, — կշտամբելու պես բացատրեց Տեր-Ղազարյանցը: — Հերոսներդ հո գիտե՞ն, թե ինչն ինչոց է: Օրինակ, Միկոյանը խիստ վիրավորված է իրեն վերաբերող անբարենպաստ արտահայտություններից և Քոչինյանին հանձնարարել է քեզ ասել, որ, իբր, ինքը քեզանից պակաս հայ չէ...

— Խոսքս դրան չի վերաբերում, — պաշտպանվեցի ես: — Կարող եմ ասել՝ Երևանի հյուրանոցում գողացել են օրագրերս, և ահա արդյունքը...

— Ուրեմն, օրագրերի հիման վրա ուրիշներն են սարքել գրքույկը, — նկատելիորեն ուրախացած խոսեց քարտուղարը: — Մենք այդպես էլ կպատասխանենք Կենտկոմին:

Ժողովածուում նշում կա (էջ 68), թե Օրջոնիկիձեի ելույթն արտատպված է նրա երկերի ժողովածուից («Статьи и речи», М., 1956) 139—141 էջերից: Այնտեղ էլ Նախիջևանը երկու անգամ է հիշվում այսպիսի կապակցություններում. «Зангезур, Нахичевань и Карабах для русского уха...», (նշված գիրքը, էջ 140): «Какая-то Нахичевань-болота, малярия и больше ничего»:

Չգիտեմ՝ Քոչինյանն ու Տեր-Ղազարյանցն ինչպես էին ձևակերպել իրենց պատասխանը: Բայց ինձ անհանգստացնող չեղավ: Միայն որոշ ժամանակ անց, երբ ես փոխադրվել էի Երևան և արդեն մամուլի կոմիտեի նախագահ դարձած Ութմազյանի բարյացակամությամբ, իբր, պիտի տպագրվի պաշտպանված դիսերտացիա՝ «Արցախը հնագույն ժամանակներից մինչև 10-րդ դարը», ձեռագիր գրքույկը վերստին ջրի երես ելավ:

Պետհրատում ծանոթացրին Արամայիս Կարապետյանի հետ, և նա, առանց ամաչելու, պատմեց, որ ձեռագիր գիրքս ու նրա վերլուծությունը ԽՄԿԿ Կենտկոմ ուղարկելուց հետո մի տարուց ավել սպասել է պատասխանի և, համոզվելով, որ այնտեղ նստած են «հանդուրժող ու անտարբեր մարդիկ», մեկ էլ վերցրել-տարել է ՊԱԿ-ի Հայաստանի Կոմիտե, անձամբ նախագահ Բադամյանցին: Այս Բադամյանցն էլ ձեռագիրը տակ ու գլխին է նայել, թերթել, շուռ ու մուռ է տվել, հետո էլ շպրտել երեսին, թե՝ «Տա՛ր, խնամքով պահի՛ր, դրանից մի քանի հատ էլ մենք ունենք»[13]:

Ինչ որ է, հիշյալ ձեռագրի մի զգալի մասը ես մտել է սույն գրքի մեջ և ցավագնորեն, ինձ համար միանգամայն հասկանալի թշնամանքով է ընդունվել շատ ընթերցողների կողմից: Չէ՞ որ նրանք իրենց կամ մտերիմների անվայել գործերն են տեսնելու այս էջերում, այն քայլերը, որոնց համար ժամանակին պաշտոնական բարձր գնահատություն ու խրախուսանք էր պահված, իսկ այսօր՝ ամեն կողմից եկող կշտամբանք ու համազգային ատելություն:

Այս դեպքում ինձ առաջնորդում է ո՛չ թե հիշաչարությունը, որ առհասարակ խորթ է իմ էությանը, այլ այն գիտակցությունը, որ պատմություն եմ գրում և պարտավոր եմ երբեք չմոռանալ մեր հին պատմիչի անբեկանելի խորհուրդը՝ «չյավելուլ զանեղեալսն…, չնուազեցուցանել զեղեալսն…», այլ գնաուն ողջախոհ զգուշությամբ բերել ի յայտ-նութիւն» (Ղազար Փարպեցի):

Առ այսօր հրապարակվել են շատ քիչ ուսումնասիրություններ քննության առնվող հարցի շուրջ: Հիշատակության արժանի են Գրիգոր Հովհաննիսյանի գիրքը[14], Հրանտ Աբրահամյանի բազմաթիվ հոդվածները՝ սփռված պարբերական մամուլի էջերում:

Վերջին տարիներին, արցախյան շարժման շնչով ու թելադրանքով՝ շատ շատերն ասպարեզ իջան, տպագրեցին հոդվածներ ու հրապարակախոսական ելույթներ, որոնց նպատակն է օգնել շարժման ակունքները պարզելուն, ադրբեջանական կողմի տարածած պատմագիտական մշուշները ցրելուն: Այսօրինակ հրապարակումների հեղեղի մեջ առանձնանում են Հրաչիկ Սիմոնյանի, Լենդրուշ Խուրշուդյանի, Խիկար Բարսեղյանի և էլի մի քանի ուրիշների հոդվածներն իրենց աղբյուրագիտական նյութերի բազմակողմանիությամբ և քննության մասնագիտական խորքով: Նրանք էին, որ անմիջապես ցույց էին տալիս ադրբեջանցի պատմահենների անսանձ ասպատակությունները Արցախի նոր պատմության անդաստանում, մերկացնում կեղծարարությունները, ընթերցող լայն զանգվածներին տալիս ճշմարիտ կողմնորոշում հարցի ու նրան առնչվող իրողությունների ոլորտում:

Այս հեղինակներն էին, որ հաճախ առաջին շրջանառության մեջ մտցրին արխիվային նորահայտ նյութեր, պարզ լույս սփռեցին հարցի այս կամ այն կողմի վրա, մեծապես ծավալեցին ընթերցողի պատկերացումները դեպքերի վերաբերյալ:

---

[13] Ինքը, որ տասնյակ տարիներ շարունակ զրպարտագրերով ու զանազան ատյանների հրապարակումներով վարկաբեկում էր իր ճանաչած բոլոր հայերին՝ շարքայիններից մինչև ամենանշանավորները (Մարտիրոս Սարյան, Ավետիք Իսահակյան), մնում էր անպատիժ: Բավական էր լսել, թե այսինչն Արցախի կամ Նախիջևանի անունը տվել է, ազգայնամոլի պիտակը կկպցներ, աջ ու ձախ կզրպարտեր… Եվ սա 1988 թ. գարնանն առաջինն էր, որ գրքույկ-բրոշյուր հրապարակեց ու «փիլիսոփայորեն», «մարքսիզմի դասականների տեսություններով» «ապացուցեց» հայ ժողովրդի իրավունքն Արցախի վրա:

[14] Գրիգոր Հովհաննիսյան, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, Երևան, 1971 թ.:

Օգտվել եմ նաև Արցախի մեծ զավակի՝ Լեոյի հուշագրական երկից, որ կոչվում է «Անցյալից»: Սա նոր ժամանակների մեր պատմա-նոր հիշողությունների ու գնահատանքների վերջին մեծ պարպումն է, արժեքավոր են ուսանելի նաև նրանով, որ գրքի բոլոր էջերում, սկզբից մինչև վերջ, հեղինակը նաև իրեն է ներկայացնում հայոց հարցի, որ ասել է՝ հայոց ճակատագրի, հիմնապաստառի վրա, անում իր խոստովանանքը:

Լեոյի գիրքն ավարտվել է 1924 թ. մայիսին՝ ներկայացնելով հայոց կենսագրության վերջին հիսնամյակի փորձանքները, մեծ ողբերգությունը, Արևմտահայաստանի կործանումն ու հայոց հարցի վախճանը: Ինքն ընդամենը 64 տարեկան էր, սակայն ասես երանի տալով այն տարեկիցներին, որ մեռել էին «միամտության մեջ, հավատալով, թե հայոց հարցը պիտի լուծվի հայ ժողովրդի երջանկության համար», մեկ էլ ուրախանում էր, որ մահն իրեն մոռացել է՝ հնարավորություն տալով տեսնել վերջը, ականատես լինել մնացորդաց վերածննդին ու վերակերտումի պատրաստությանը: Լեոն հայոց ողբերգության «պարգևած» մխիթարական երևույթն էր համարում այն գիտակցությունը, որ ազգն արդեն համոզվել էր, թե «մի Նիկոլա ցար, մի Բրիան, մի Դեշանել, մի Պուանկարե, մի Սալիսբյուրի, մի Լլոյդ Ջորջ, մի Քերզոն ոչ մի բանով լավ չեն մի Աբդուլ-Համիդից, ...մի Թալյաթ փաշայից, մի Էնվեր փաշայից կամ մի Քեմալ փաշայից: Շարունակենք լուծվել ուրիշ նախապաշարումներից ևս, և մենք շատ կհեշտացնենք ապագայի մեր աշխատանքը»:

«Ինձ քիչ կյանք է մնացել, — հայոց հարցի տխուր վախճանի հետ հաշտված մրմնջում էր մարգարեն: — Բայց քանի բերանումս լեզու կա...»:

Մեր պատմության մեջ շատ են նորոգվող, հաճախ նույնիսկ մանրամասներով կրկնվող դեպքերը: Եվ ահա մեր օրերում էլ հայոց վերջին կենդանի բեկորը, որ ասպարեզ բռնեց իբրև Արցախի խնդիր, կրկնվում, բացվում է նույն մանրամասներով, որ եղել են 18—20 թվականներին՝ մեր դեմ հանված թաթար-թուրք-քուրդ ավազակախմբերի ու դաշնակիցների միաձայն համերաշխ բարդույթներով, որպեսզի հետո էլ այդքանին գումարվեր խորհրդային-սոցիալիստական չարիքը: Լկտիները մեր ազատարարչի, անկախության համար պայքարող ազգակիցներին զինաթափ էին անում, կապոտում և նրանց վրա բաց թողնում սանձազերծ ու սպառազեն թշնամական ոհմակներին:

Այո՛, կրկնվում է պատմությունը, և այսօր էլ նույն վիճակն է, մեր ճակատագրի համար կարծես պարտադիր դարձած նույն դժխեմ էջը: Արցախի խնդիրը, ինչպես և հայոց հարցը տասնամյակների այն հեռվում, ապրում է եղերական մի վերջաբան, որից դատելով՝ միամիտները երևի թե սպասում են, թե «հարցը պիտի լուծվի հայ ժողովրդի երջանկության համար»: Իսկ ողջախոհնե՞րը... Նրանք պիտի մաքառեն, պիտի մինչև վերջ դիմակայեն նաև այս փորձությանը և հասնեն հաղթանակի՝ քաջ գիտակցելով այն մեծ ու դաժան ճշմարտությունը, որ դարասկզբին տարփողում էին մեր ազգի ազատության նվիրյալներն ու այլազգի բարեկամները: Հայոց պետությունը, — նրանց խորին խորհուրդն էր զգուշացնում, — ինչ ցուցանակ էլ կրելու լինի, չի կարող գոյություն ունենալ առանց Արցախական աշխարհի:

ՄԱՍՆ Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՔԻՆ, ԲԱՅՑ ՆՐԱՆԻՑ ԲԱԺԱՆ

(1918—1923 թթ.)

«Յուրաքանչյուր երկիր, յուրաքանչյուր ազգ ունի իր նվիրական հենարանը: Երբ ժողովրդի պատմությունը երջանիկ է դասավորվում, այն դառնում է մշակութային ու քաղաքական

կյանքի կենտրոնը: Երբ ճակատագիրը հալածում է ազգին, այն լինում է ազգային կյանքի պատվարը, հույսերի կողին, վերածնունդի գրավականը:

...Միաձույլ լինելով ազգագրորեն, տնտեսական և լեզվական տեսակետից՝ Ղարաբաղը դարձել է Հայաստանի միջնաբերդը, նրա արևելյան թևը: Այդպիսին եղել է անցյալում, այդպիսին է այժմ և այդպիսին կմնա հավերժորեն, քանի որ Հայաստանի սիրտը՝ դաշտը Արարատյան, անհնար է պաշտպանել, առանց տերը լինելու Ղարաբաղի:

...Բնությունն ու պատմությունը Ղարաբաղում ստեղծել են ցայտուն արտահայտված մի տիպ: Սփռված ամբողջ աշխարհում՝ ղարաբաղցիները հեշտությամբ կարող են ճանաչվել: Գործունեության լայն թափ, անձնազոհ քաջություն, վտանգալից խիզախության հակում, ինքնավստահություն, ինքնահատուկ համառություն, ուղղամիտ հաստատակամություն, նախապետականություն ընտանեկան կյանքում, — ահա ղարաբաղու համակրելի գծերը, որոնք ասես խտացնում են հին հայկական առաքինությունները՝ խամրած պատմության դաժանություններից և մաքուր տեսքով պահպանված Ղարաբաղում»:

ՍԵՐԳԵՅ ԳՈՐՈԴԵՑԿԻ

Նախահանրապետական հայկական կյանքի տասնամյակներին, նույնիսկ վերջին երկու-երեք հարյուրամյակներին, Արցախը մեկն էր մեր այն նահանգներից, որոնցում դեռևս լսելի էին ազգային վարչության ու մշակութային ինքնահատուկ կյանքի տրոփյունները: Հիշենք մելիքական շրջանը, երբ Հայաստանի ուրիշ նահանգներում, նույնիսկ Արարատյան երկրի կենտրոն Վաղարշապատում երանությամբ էին մատնացույց անում Արցախը՝ իբրև հայրենի երկրի միակ անկյունը, որտեղ ժողովրդի համար ազատություն կար, և մելիքներն էլ կարող էին քաղաքական ինքնուրույն հարաբերությունների մեջ մտնել օտար տերությունների հետ: Եվ, անշուշտ, այս հարաբերական անկախությունն ու քաղաքական վարչության գոյությունն էին, որ ցարական Ռուսաստանի միապետներին ստիպեցին հնարավոր համարելու վերականգնումը հայոց հին պետականության՝ հենց Արցախ կենտրոնով: Ճիշտ է, Արևելյան Հայաստանը նվաճելուց հետո Պետրոս Մեծի ու Եկատերինա Բ-ի հաջորդներն ուխտադրժորեն վերացրին մելիքական կարգը, որ հայոց պետականության վերջին բեկորն էր ու ապագա քաղաքական ինքնուրույնության առողջ սաղմը: Սակայն, միևնույն է, Արցախը դրանով չդարձավ ազգագրական անկերպարան մի տարածք կամ վարչական անդեմ ամբողջականություն, որպիսիք Ռուսաստանի շատ ծայրագավառներն էին ներկայացնում՝ իբրև արդյունք անձնապետական ուծացնող քաղաքականության: Արցախյան գյուղական համայնքն ապրում էր մելիքության շրջանի ազգային նահապետական անաղարտ բարքերով, իսկ երկրամասի վարչական ու մշակութային կենտրոն դարձած Շուշին այնքան բարեկեցիկ պայմաններ ուներ, որ բնաշխարհի արևելյան մասում իր համար ապահովել էր մի արտակարգ տեղ և դեպի իրեն էր քաշում շրջակա հայկական նահանգների ուսումնատենչ զանգվածներին, դարձել էր նրանց համար արհեստների ու առևտրի մի անփոխարինելի կենտրոն: Շուշիում իրենց թաղամասերն ունեին զանգեզուրցիները, մեղրեցիները, նախիջևանցիները և այլ վայրերից փոխադրված բազմաթիվ զանգվածներ, իսկ սա արդեն մի ինքնահատուկ կերպարանք էր տալիս երիտասարդ քաղաքին՝ իբրև Արևելյան Հայաստանի ծաղկեփունջը ներկայացնող բնակավայրի:

Շուշիի դպրոցները, մանավանդ նրա Թեմականը, մեծ հռչակ ունեին համահայկական ծավալով: Իսկ Ռեալականը բացառիկ մի երևույթ էր անդրկովկասյան իրականության մեջ:

Շուշին բնաշխարհի հայկական տպագրության առաջին օջախը դարձավ (1827 թ.) Էջմիածնից հետո: Եվ պատահական չէ, որ ամբողջ 19-րդ դարում այստեղ աշխույժ զարգացում էին ապրում մամուլը, գեղարվեստական ու գիտական գրականության հրատարակությունները, թատրոնն ու արվեստի մյուս բնագավառները:

Մեր դարի առաջին 20-ամյակին Շուշին մարզի հեղափոխական խմորումների օջախն էր նաև՝ կապված Ռուսաստանի ու եվրոպական լուսավորական կենտրոնների մտավոր-առաջադիմական հոսանքների հետ: Հայ հեղափոխական դաշնակցությունը, բոլշևիկների կուսակցությունը և հայկական քաղաքական ուրիշ կազմակերպություններ Շուշիում ունեին իրենց մարտական ջոկատները: Ահա թե ինչու, երբ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի պատճառով Անդրկովկասը դուրս էր մնացել Ռուսաստանի տեսադաշտից, Շուշվա հայ քաղաքական ուժերն անմիջապես իրենց ենթարկեցին ամբողջ մարզի վարչական հեղեղուկ կյանքը և ստեղծեցին հայկական ազգային մի մթնոլորտ, որին էլ պարտական ենք հետագա տարիների ինքնավարությունը:

Զմոռանանք, որ Հայկական Հանրապետության ստեղծմանն իր նշանակալից մասնակցությունն էր բերել նաև Արցախը: Սարդարապատի դաշտում, հայ ժողովրդի բոլոր հատվածների, ամեն խավի ու քաղաքական հոսանքի ներկայացուցիչների հետ միասին, անձնազոհությամբ կռվում էր հանրահռչակ Ղարաբաղյան կամ Մահապարտների գունդը, որ դրանից առաջ էլ իր անունն էր անմահացրել Վանի հերոսական պաշտպանության կրակների մեջ: Մահապարտների գնդի հետ էր նաև Արցախի կամ Շուշվա այն գունդը, որ նախընթացին կազմակերպվել էր Թիֆլիսում, որպեսզի գնար հայրենիք և այն փրկեր օսմանյան ու մուսավաթական հրոսակների ոտնձգություններից, սակայն ճանապարհին առել էր Սարդարապատյան ճակատամարտի լուրը և գնաց այնտեղ, իր ամենաառաջին պարտքը կատարեց այդ հերոսամարտում[15]: Էլ չեմ խոսում այն մասին, որ ճակատամարտի գլխավոր հրամանատար Դանիել-բեկ Փիրումյանը, զինվորությանն ու աշխարհազորային զանգվածներին հայրենաշունչ հորդորներով անձնազոհության տանող արքեպիսկոպոս Գարեգին Հովսեփյանը, եպիսկոպոս Զավեն Մստենց-Բաբայանը և շատ ու շատ ուրիշներ արցախցիներ էին, և նրանց արժանավոր ու անմոռաց երախտիքը կա Սարդարապատի հաղթանակի մեջ, Սարդարապատի, որ ծննդարանը դարձավ հայոց նոր պետականության՝ Հայաստանի Հանրապետության և ազգի կյանքին տվեց նոր ընթացք ու վերծննդի հնարավորություն:

Հայրենիքի փրկությունն ու ազգի հարատևումն ապահովող հերոսամարտերում թափված արյունը սրբազան է, անհատույց: Սակայն նրանք, որ կենաց ու մահու այդպիսի բախումներից հետո տերն են դառնում ազգի ճակատագրի, պարտավոր են լինել նույնքան արդար ու անձնազոհ, որքան հայրենիքի զոհասեղանին իրենց կյանքը դրած նվիրյալները:

Դեռ հանրապետությունը գործի չէր անցել, երբ նրա ապագա կառավարողների մի մասը[16], որ Բաթումի խորհրդաժողովում ներկայանում էր իբրև անկախ Հայաստանի կառավարության մասնիկ, առանց երկար-բարակ խորհելու, ստիպված եղավ հրաժարվել Արևելյան Հայաստանի մեծ մասից, մասնավորապես Արցախ-Ղարաբաղից: Անկասկած այս առթիվ լուրջ խոսակցություն եղել է, չնայած հայկական պատվիրակության անդամների գրառումներում Ղարաբաղի անվանը չեք հանդիպի[17]: Այո՛, եղել է, այլապես վրաց բանագնացների խորհրդականն իր վկայությունների գրքում ինչո՞ւ պիտի շեշտեր, թե «Հայերը հրաժարվել են Գանձակի նահանգի մասերից (Ղարաբաղ)...»[18]:

Սա Բաթումում կատարվել է 1918 թ. մայիսի 21-ին, սակայն իրականում նախապատրաստված է եղել ավելի վաղ և այն էլ Թիֆլիսում: Ահա թե այդ նախապատրաստության մասին ինչ է պատմում Լեոն՝ ժամանակակիցն ու դեպքերի մասնակիցը:

---

[15] Այս գնդի կազմակերպման ու գործունեության մասին տե՛ս Հովակ Ստեփանյան, Արցախյան կամ Շուշվա գնդի պատմությունը, «Հայրենիք» հանդես, 1935, թ. 147, էջ 87—95, թ. 148, էջ 83—93, թ. 150, էջ 89—101, թ. 151, էջ 80—89, թ. 152, էջ 100—108, թ. 153, էջ 122—131:

[16] Հայկական հանձնաժողովը գլխավորում էր Ալեքսանդր Խատիսյանը, անդամներն էին Հովհաննես Քաջազնունին և Միքայել Պապաջանյանը, խորհրդականը՝ Սիմոն Վրացյանը:

[17] Ես ծանոթ եմ Բաթումի խորհրդաժողովի (1918 թ. մայիս-հունիս) օրերի նրանց գրառումներին և ոչ մի տեղ Արցախ-Ղարաբաղի հիշատակություն չեմ տեսել:

[18] З. Авалов, Независимость Грузии в международной политике 1918—1921 гг., Париж, 1924, стр. 5.

Լեոն 1917-ին Թիֆլիսում կազմակերպված Արցախ-Զանգեզուրյան հայրենակցական միության նախագահն էր և Անդրկովկասում տիրական դարձած անիշխանության ու քաոսի պայմաններում լավ էր պատկերացնում այն ողբերգությունը, որ կարող էր կատարվել ծայրագավառներում, եթե ժամանակի տեր չկանգնեին ու հարցը չլուծեին քաղաքակիրթ աշխարհում ընդունված օրենքներով: «Այդ պատճառով էլ, — ասում է, — մենք պահանջեցինք Ահարոնյանի Ազգային խորհրդից (սա հայոց համազգային ղեկավար մարմինն էր, որ մինչև 1918 թ. մայիս-հունիսը նստում էր Թիֆլիսում — Բ. Ո.), որ նա Ղարաբաղի կամ Զանգեզուրի հարցը դրված ժամանակ խորհրդակցության հրավիրի մեր հայրենակցական միության ներկայացուցիչներին՝ իբրև իրազեկ մարդկանց: Մեր այս պահանջը հայոց ազգի բախտի տնօրինողը դարձած Ահարոնյանը չբարեհաճեց կատարել: Իշխանավոր էր նրա Ազգային խորհուրդը, իսկ իշխանավորը ժողովրդի կամքը չի հարցնում, այլ իր կամքն է նրան ուտեցնում: Եվ ահա Քաջազնունին, Խատիսյանը և Պապաջանյանը, մարդիկ, որոնք ոչինչ հասկացողություն չունեին ո՛չ Ղարաբաղի, ո՛չ Զանգեզուրի մասին, Բաթումի չարաղետ բանակցությունների միջոցին համաձայնություն են տալիս թուրքերին, որ Ղարաբաղը պատկանե Ադրբեջանին, իսկ Զանգեզուրը՝ Հայաստանին: Ադրբեջանցիները չեն բավարարվել այդ առաջարկով, շարունակել են պահանջել նաև Զանգեզուրը»[19]:

Ուրեմն Արցախն Ադրբեջանին զիջել էին Թիֆլիսում, մի տեղ, որ ճակատագրական պիտի դառնար նաև հարցի հետագա արծարծումների համար:

Բաթումում այս զիջումը տեղի ունեցավ մայիսի 21-ին:

Հաջորդ օրն իսկ Ղարաբաղյան գունդն իր մահն աչքի առաջ դրած՝ Սարդարապատում պիտի պաշտպաներ Հայաստանն ու իր Արցախական աշխարհը, իսկ Ալ. Խատիսյանի գլխավորած դիվանագիտական հանձնախումբը Բաթումում Արցախ-Ղարաբաղից հրաժարվում էր՝ առանց աչք թարթելու:

Կարելի է հասկանալ հայկական պատվիրակության անճարակությունը: Մայիսի 21—22-ին վրացիներն արդեն ապահովել էին Գերմանիայի կողմից խոստացված հովանավորությունը 26-ին հռչակվելիք իրենց հանրապետության վրա: Բաքվի ներկայացուցիչներն էլ այլևս չէին թաքցնում իրենց գլխին պահվող թուրքաց հովանավոր ձեռքը: Միայն հայերն էին «մենակ, անբարեկամ, անպաշտպան, ամենքից լքված, գոհ հարևանների դավաճանության»[20]:

Ալ. Խատիսյանը 1918 թ. հունիսի 2-ին Բաթումից Թիֆլիս՝ Հայոց ընդհանուր Ազգային խորհրդի նախագահ Ավետիս Ահարոնյանին գրած նամակում այնքան էլ ցավալի չէր համարում կատարվածը, քանի որ տեղի էր ունեցել ամենակարևորը՝ ստեղծվել էր հայ ժողովրդի նոր պետականությունը, կառուցվել էր նրա ազգային տունը-բույնը, որն ինչքան էլ փոքր ու անհարմար, սեփական է, միակն ու անկրկնելին և ունի ամրանալու, ծավալվելու ամենայն հնարավորություն[21]: Ուրեմն, կարելի էր շատ էլ չվշտանալ. հայոց բույնն ամրանալիս ու ծավալվելիս աստիճանաբար իր մեջ կառնի մեր անվիճելի, գոնե այն օրերին դեռևս հայաբնակ նահանգներն ու գավառները և նրանց հետ էլ Արցախ-Ղարաբաղը:

Ամեն մի հեղափոխություն իր դրոշի վրա ունենում է գեղուն կարգախոսներ ազատության վերաբերյալ, սակայն բերում է քաոս և բռնություն:

1917 թ. ռուսական հեղափոխությունը բացառություն չպետք է կազմեր: Ռուսաստանում, մանավանդ իշխանությունից զրկված հեռավոր մարզերում, ծայր առան այնպիսի անկարգություններ, որոնք զավեշտի վերածեցին հեղափոխականների հռչակած ազատությունը: Գավառական Շուշի քաղաքի ժամանակագիրն ասում է. «Ազատություն»

---

[19] Լեո, Անցյալից, հուշեր, թղթեր, դատումներ, Թիֆլիս, 1925, էջ 425:
[20] Սիմոն Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 149:
[21] ՀՊՊԿԱ, ֆ. 200, գ. 562, թ. 15:

խոսքը բացատրվում էր նրանով, որ ամեն մարդ իրավունք ուներ ազատ խոսելու, հայհոյելու, վիրավորելու, մինչև անգամ սպանելու և անպատիժ մնալու[22]:

Երկրի քաղաքական ու տնտեսական կենտրոններից կտրված թաթար ու քուրդ ավազակախմբերը, որոնք ղեկավարվում էին նորաստեղծ թաթարական «Դիկայա դիվիզիայի» հրամանատարության կողմից և խնդիր ունեին ամրապնդել մուսուլմանության դիրքերն Արևելյան Անդրկովկասում:

1918 թ. հունվարին Շամքորի մոտ «Դիկայա դիվիզիայի» հրոսակները հարձակվեցին Կովկասյան ճակատից տուն դարձող ռուսական զորամասի վրա, նախ զինաթափ արին, ապա կոտորեցին անզեն մարտիկներին:

Այդ ժամանակ էր, որ տունդարձի ճամփան բռնեց նաև Շուշիում տեղակայված 532-րդ կամ Սիբիրիական զորամասը՝ քաղաքի ու շրջակա գյուղերի հայության միակ պաշտպանը: Զորամասի ջոկատներն Աղդամից նոր էին դուրս եկել, որ ենթարկվեցին հարձակումների ու կողոպուտի: Նրանք սպանվեցին մինչև Եվլախ կայարան հասնելը:

Հույս կար, թե անզեն, անօգնական արցախահայության պաշտպանությունը կապահովեր Թիֆլիսի Արցախյան հայրենակցական միության կազմակերպած Արցախի կամ Շուշվա գունդը, որը, սակայն, երեք ամսում Թիֆլիսից հազիվ հասնելով Սևանի արևելյան ափը, տեղեկացել էր, որ թուրքերը գտնվում են Երևանի դարպասների մոտ, գնաց մասնակցելու Սարդարապատի ճակատամարտին և այսքանից հետո՝ միայն բռնելով իր փակ ճամփան, տեղ պիտի հասներ դեկտեմբերի կեսին, այսինքն՝ կազմավորումից մեկ տարի հետո: Եվ ի՞նչ մեկ տարի. աննախադեպ, չեղած-չտեսնված փորձանքների, Սարդարապատի հերոսամարտի, նրա ծնած հայոց նոր պետականության, այդ պետական մարմնի ոտքի կանգնելու և առաջին դժվար ու աներեր քայլերը կատարելու տարի:

Արցախը թողնված էր իր բախտին և ամենուրեք տիրական դարձած քաոսի, թուրք-թաթարական մշտադո թշնամանքի ու խարդավանքների պայմաններում պիտի ապրեր, ստեղծեր իր սեփական-ինքնուրույն գոյության կերպն ու ճանապարհը: Սեփական-ինքնուրույն և մանավանդ միայնակ, որովհետև, ինչպես վերը տեսանք, Հայաստանի հանրապետության ապագա կառավարողները, օսմանա-թուրքական ճնշման տակ և նրանց ադրբեջանցի կամակատարների դիվային գործարքների պատճառով, դեռ Բաթումի խորհրդաժողովում հրաժարվել էին Արցախից:

Այս պայմաններում, միայն իր հույսին մնացած Արցախի հասարակական կյանքի վրա ազդեցություն ունեցող ուժերը, այն ժամանակ տարածված կուսակցությունները, հայ հեղափոխական դաշնակցության ամենաեռանդուն մասնակցությամբ, որոշեցին ստեղծել մարզի կյանքի կարգավորման մի վարչություն՝ նրա վրա դնելով որոշումներ ընդունելու և այդ որոշումներով առաջնորդվելու իրավունքներն ու պարտականությունները:

Բայց ինչպիսի՞ն պիտի լիներ այդ վարչությունը, ղեկավար այդ մարմինը: Պետական կառավարման ի՞նչ սկզբունքներով պիտի առաջնորդվեր: Եղան ամենատարբեր առաջարկություններ՝ ժամանակի առաջավոր ժողովրդավարական կազմակերպություններից մինչև դիկտատորական կամ միապետական ապարատ: Նույնիսկ առաջարկ է լինում վերականգնելու մելիքական կարգը[23], որ ավելի քան երեք դար շարունակ, պարսից ու թուրքական բռնատիրությունների դժնդակ ակցանի մեջ, պահպանել էր Արցախ-Խամսայի հայկական ինքնավարությունը:

«Դաշնակցություն» կուսակցության հարող մտավորականության և ղեկավարների մի մասը պահանջում էր իշխանություն ստեղծել՝ բաղկացած բացառապես դաշնակցականներից: Իրավ է, Լեռնային Ղարաբաղում այդ ժամանակ չկար հասարակական ուժեղ հենարան

---

[22] Միրզա Տեր-Սարգսյան (Միսսար), Լեռնային Ղարաբաղ (պատմական հիշատակարան 1917—23), ձեռագիր (այսուհետ՝ «Միսսար»), էջ 5:
[23] Հ. Թումյան, մասն Ա, էջ 11:

ունեցող մի այլ քաղաքական հակակշիռ ուժ»[24]: Եվ, այսուհանդերձ, իրենք՝ դաշնակցականներն էլ վերջում եկան այն համոզման, որ պետք է ստեղծել բոլոր կուսակցությունների, հասարակական խավերի ու հոսանքները ներկայացնող կոալիցիոն հեղինակավոր մարմին, «Իսկ երբ հանգամանքները թույլ կտային, հետագայում հրավիրել ժողովրդական համագումար և նրա ընտրությամբ կազմել օրինական կառավարություն»[25]:

Այսպես էր, որ կազմվեց «Կուսակցությունների ու կազմակերպությունների ժամանակավոր խորհուրդ»՝ բաղկացած 14 հոգուց, նախագահությամբ Հայրապետ Մուսայելյանի, քարտուղարությամբ Նիկոլայ Իսախանյանի: Հետագայում այս խորհուրդը պիտի կոչվեր «Միջկուսակցական բյուրո»:

Անմիջապես գործի անցնելով՝ բյուրոն ճշգրտեց իր պարտականություններն ու անելիքները, տեղում ստեղծեց իր ներկայացուցչությունները, ժողովրդին ոտքի հանեց ինքնապաշտպանության և անսպառ գործունեության համար: Բյուրոյին ենթակա զինված ջոկատներն ու միլիցիական կետերը պատշաճ կարգ սահմանեցին ինչպես Շուշիում, այնպես էլ գավառներում:

Բյուրոն կարճ ժամանակում տանելի փոխհարաբերությունների մեջ մտավ նաև Շուշվա թաթար բնակչության հետ: Նրա ջանքերի շնորհիվ էր, որ կազմվեց Ազգամիջյան մարմին՝ 6 հայերի ու 6 թաթարների կազմով և գլխավորությամբ վրացի, Շուշվա նախկին հաշտարար դատավոր Իոսիֆ Իլարիոնովիչ Կորիևի:

Բյուրոյում շատ լավ էին հասկանում մարզի ռազմագիտական դիրքն ու վիճակը, և պատահական չէ, որ նրա առաջին մտահոգություններից մեկը դարձավ զինվորական պատրաստությունը:

Թուրքերը սփռված էին Արարատյան դաշտում, Կարյագինոյի ու Աղդամի կողմերում, Գանձակում ու Շամախիում: Ո՞ւր ասես որ չէին վխտում Թուրքիայի էմիսարները: Նրանք ոտքի էին հանում թաթարներին, և հեռու չէր այն օրը, երբ կմտնեին նաև Արցախ ու անպաշտպան, մայր երկրից իսպառ կտրված մարզը կդարձնեին ոտքի կոխան:

Մնում էր հույսը դնել սեփական ուժերի ու տեղական հնարավորությունների վրա: Եվ Բյուրոն հարևաններից աննկատ կազմակերպեց զորաջոկատներ, սկսեց նրանց ծանոթացնել մարտավարության տարրական կանոններին: Այդ ջոկատները զինելու համար էլ ձեռք զարկեց ամենատարբեր միջոցների՝ պահեստներում ընկած հին ու ժանգոտ զենքերը «վերակենդանացնելուց» մինչև նոր զենքերի ու զինամթերքի արտադրությունը: Այս վերջինի համար Շուշվա հայկական մասում «հիմնվեց արհեստանոց՝ ինժեներ Խորեն Օհանյանի ղեկավարությամբ»[26]:

Բյուրոյում ռազմական գործերը ղեկավարում էր Հարություն Թումյանը՝ բանիմաց ու քաջ մի մարդ, որն Արցախի պաշտպանությունն ու ռազմական գործը նախապատրաստելու համար կատարում էր ամեն հնարավորը, նույնիսկ անհնարինը: Նա այս ձեռնարկումների մասին քիչ բան է գրում իր գրքում[27]: Սակայն գործակից երկու ուրիշ բյուրոյականներ՝ Արշավիր Քամալյանն ու Լևոն Վարդապետյանը (Վարդանի), տարիներ առաջ հիացմունքով պատմում էին, թե ինչպես անմոռանալի Ֆիդայի Թումյան (Թորգոմ) այդ կրտսեր եղբայրը գավառներում չգոյությունից ստեղծել էր գործունյա ու քաջ զորաջոկատներ և ամեն օր ստվարացնում ու հզորացնում էր նրանց շարքերը:

Ապրիլի վերջին Բաքվում Ստեփան Շահումյանի ստեղծած Ժողովրդական կոմիսարների խորհրդի գործունեությունը ոգևորել էր Միջկուսակցական բյուրոյին, որն իր նիստերից մեկում կոմիսարներ կոչեց աշխատանքային տարբեր բնագավառների ղեկավարներին և

---

[24] Անդ, էջ 12:
[25] Անդ, էջ 13:
[26] Հ. Թումյան, էջ 39:
[27] Անդ, էջ 39-40:

որոշեց սերտ կապեր ստեղծել Բաքվի կոմունայի հետ, համատեղ միջոցներ փնտրել ու գործունեություն ծավալել թուրքական վտանգը կանխելու համար:

Ուրեմն, այսպե՞ս էր եղել. հայ-թուրքական պատերազմն ավարտվել էր Բաթումի դաշնագրով, որն Արարատյան երկրի հայությանը տվել էր խղճուկ մի տարածք, անբավարար նույնիսկ բնիկներին ու երեք հարյուր հազար գաղթականներին տեղավորելու համար: Թիֆլիսից Երևան փոխադրված կառավարությունը հայտնվել էր մի երկրում, ուր տիրում էին աղքատությունը, քաղցն ու համաճարակները: Անփորձ ու անօգնական կառավարողները, որոնք պետք է ժողովրդին դուրս բերեին այդ ողբերգական վիճակից, կարո՞ղ էին մտածել Արցախի մասին, ուժ ու հնարավորություն ունեի՞ն կռվի դուրս գալու թաթարների ու թուրքերի այն ջոկատների դեմ, որոնք վայրի ընձակների պես տիրել-բռնել էին հայոց լեռնաստանի շրջակայքը և ահա ուր-որ է կանցնեին վճռական քայլերի՝ Արցախ-Զանգեզուր-Նախիջևան գոտին հայերից իսպառ ազատելու համար:

Նախապես ասեմ, որ Արցախն ադրբեջանցի թուրքերի ու նրանց հովանավոր օսմանյան թուրքերի համար մի սովորական ինքնակաճար չէր, այլ բաղկացուցիչ համաթուրքական շահախնդրությունների առանցքը կազմող մի գերխնդիր: Օսմանյան Թուրքիան ու նոր կազմավորված Ադրբեջանը պիտի միավորվեին՝ դառնալով թուրքական մեծ պետության, Բալկաններից մինչև Միջին Ասիայի խորքերը ձգվող վիթխարի տարածքի առանցքը: Այս դեպքում Հայաստանն ընկած էր Թուրքիան ու Ադրբեջանն իրար բերող ճանապարհին. կա՛մ պիտի մի կողմ քաշվեր, կամ պիտի բնաջնջվեր, որպեսզի նրանք միավորվերին ու միասնաբար գնային՝ հասնելու իրենց համաթուրքական բաղձանքներին: Այսքանն այնպես պարզ էր ու այնպես բնական էր թվում, որ թուրք պարագլուխներն իրենք անթաքույց հաղորդում էին հայոց ներկայացուցիչներին[28]: Սակայն Սարդարապատի պարտությունից ու Բաթումի խորհրդաժողովից հետո թուրքերը երևի մտածում էին, որ իրենց համար անհնար պիտի լինի հայերին միանգամից ու լրիվ իրենց ճանապարհից վերացնելը և անհրաժեշտ է առժամանակ բավարարվել միջանցք բացելով, միջանցք, որ Նախիջևան-Զանգեզուր-Արցախ գոտին էր:

Արցախում լավ էին հասկանում այս հանգամանքը և շտապեցին իրենց ինքնուրույնությունն ապահով պահող պայմաններ ստեղծել, անխաթար դարձնել այդ ինքնուրույնությունը՝ մտածելով, թե կգա ժամանակ, հայրենի երկրի կառավարությունը ոտքի կկանգնի, կհզորանա և ուժ կունենա նաև կորցրած երկրամասերին տեր կանգնելու:

Սակայն շուտով պարզ դարձավ, որ Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը, Օսմանյան Թուրքիայի՝ Ադրբեջան թափանցած գործակալները և մանավանդ Գանձակում «մուսուլմանական բանակ» կազմող Նուրի փաշան լուրջ ծրագրեր ունեին Արցախն Ադրբեջանին բռնակցելու գործը շուտափույթ իրականացնելու համար, և Միջկուսակցական բյուրոն որոշեց արցախահայության լիարժեք համագումար հրավիրել, ստեղծել իրենց իսկական ու լիիրավ կառավարությունը:

Համագումարն սկսվեց 1918 թ. հուլիսի 22-ին Շուշիում և ավարտվեց 24-ին: Նիստերը տեղի էին ունենում Թեմական դպրոցի դահլիճում: Մասնակցում էին գավառների համարյա բոլոր գյուղերի պատգամավորները, շուրջ 180 հոգի: Սկզբում նախագահ ընտրված բոլշևիկ Ալեքսանդր Ծատուրյան-Ռուբենին առաջին իսկ նիստից հետո, առանց լուրջ պատճառաբանության, հրաժարվեց նախագահել՝ տարակուսանք և դժգոհություն առաջ բերելով պատգամավորների շրջանում[29]:

---

[28] Բաթումի խորհրդաժողովին, 1918-ի մայիսին, «մտերմիկ» մի զրույցի մեջ Բեհաէդդին Շաքիրը հայոց պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանին բացատրել է. «Հայերը կանգնած են մեր համաիսլամական ու համաթուրքական սրբազան իդեալներու իրականացման ճամբուն վրա, և մենք անխուսափելիորեն կը բախինք անոնց հետ... Մենք հարկադրված ենք տարերայնորեն ոչնչացնելու մեր ճամբուն վրայեն այն ամենը, ինչ որ արգելք կհանդիսանա մեր ազգային սրբազան իդեալներուն» (Ալ. Խատիսյան, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968, էջ 77):

[29] Հ. Թումյան, մասն Ա, էջ 70:

Նախագահ ընտրվեց դաշնակցական Արսո Հովհաննիսյանը, շրջահայաց ու ձեռներեց մի գործիչ, որը և մեծապես ազդեց համագումարի ընթացքի ու ընդունված որոշումների վրա:

Միջկուսակցական բյուրոյի կամ կոմիսարների խորհրդի գործունեության մասին հաշվետու զեկուցումով հանդես եկած Հ. Մուսայելյանը, մանրամասնորեն ներկայացրեց այն օրերի քաղաքական դրությունը՝ Հայաստանի Հանրապետության առաջին քայլերի ծանրությունը, առանձնապես ընդգծում է արցախահայության խնդիրները ստեղծված բարդ, պարզապես անելանելի իրավիճակից դուրս գալու համար:

Ելույթներում քննության են առնվում մարզի անիշխանության ու անկարգապահության վերացմանը, թուրքական վտանգի դեմ ռազմական ու քաղաքական ապահովություն ստեղծելուն ուղղված միջոցառումները: Եվ որոշվում է գյուղական համայնքներին բաժանելու համար բռնագրավել, այսպես կոչված, բեկական հողերը՝ արցախյան գավառների այն լավագույն, ամենաբերրի տարածությունները, որոնք Շուշվա թուրք խանի հարազատներին էին նվիրաբերվել 19-րդ դարի սկզբին, ռուսական տիրապետության առաջին իսկ տարիներին, ռուս չինովնիկների օգնությամբ:

«Գետաշենից եկած ներկայացուցիչները, նկարագրելով Գյուլիստանի շրջանի հայ բնակչության տագնապալի դրությունը, Ղարաբաղի նոր ընտրվելիք կառավարությանը խնդրում էին տեսադաշտից դուրս չթողնել նախկին Գյուլիստանի գավառը, որը կազմում էր պատմական Ղարաբաղի անբաժան մասը, մոռացության չտալ այնտեղ ապրող ու պայքարող հայ գյուղացիության կարիքները...»[30]:

Որոշվում է նոր կառավարություն ստեղծել՝ դարձյալ կոալիցիոն սկզբունքով, «բոլոր այն քաղաքական հոսանքների ներկայացուցիչներից, որոնք շահագրգռված են կենսականորեն հայ ժողովրդի ճակատագրով և պատրաստ են այդ լուրջ պատմական մոմենտին միավորելու իրենց ջանքերը երկիրը վերահաս աղետներից փրկելու համար»:

Պատգամավորներից մեկն առաջարկում է ընտրվելիք կառավարությունը անվանել «Ղարաբաղի ժողովրդական Կառավարություն», իսկ կառավարության անդամներին՝ «կառավարիչներ»: Կարճ վիճաբանությունից հետո ընդունվում է այդ առաջարկությունը:

Ընտրվում է կառավարություն՝ բաղկացած հետևյալ յոթ անձերից.

1. Եղիշե Իշխանյան, նախագահ և կառավարիչ ներքին և արտաքին գործերի,
2. Արշավիր Քամալյան, կառավարիչ հողային և արդարադատության գործերի,
3. Արսո Հովհաննիսյան, կառավարիչ պարենավորման գործերի,
4. Մարկոս Տեր-Աստվածատրյան, կառավարիչ ֆինանսների,
5. Հարություն Թումյան, կառավարիչ զինվորական գործերի,
6. Մարտիրոս Այվազյան, կառավարիչ հաղորդակցության,
7. Մելիքսեթ Եսայան, կառավարության քարտուղար[31]:

Բավական նպատակասլաց ու մարտական էր համագումարի հռչակագիր-դեկլարացիան, որի առանցքն էին կազմում ժողովրդի միասնության ու մարտունակության ապահովման, ազգային ինքնորոշման ճանապարհով անկախ ազգային գոյության խնդիրները:

---

[30] Հ. Թումյան, Ա, էջ 72:
Գյուլիստան գավառը, Արցախ-Ղարաբաղի այդ իսկապես անբաժան մասը, որ ընդգրկում էր այժմյան Գետաշենի ենթաշրջանը հյուսիս-արևելքում, իսկ արևմուտքում հասնում էր մինչև Թարթառի հոսանքը, 1923 թ. ամռանը, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզն ստեղծվելիս, ոչ միայն բռնությամբ պոկվեց այդ մարզից, այլև ինքը ենթարկվեց հոշոտման՝ զրկվելով Գետաշենի ենթաշրջանից, որը բռնակցվեց ուրիշ վարչական միավորի:
[31] Հ. Թումյան, էջ 72—73:

«Քաղաքական վայրիվերումներից առանձնացած, կղզիացած մնաց Ղարաբաղը, — գրված էր հռչակագրում: — Կտրված աշխարհից՝ նա ամբողջ ութ ամիս մնում էր միևնույն մեռյալ կետում: Սակայն մահացու կլիներ իր վիճակը կապել իրերի քմահաճ ընթացքին: Ղարաբաղը գիտակցեց պահի լրջությունը: Ժողովրդին հատուկ առողջ բնազդով Ղարաբաղի ամբողջ հայ բնակչությունը վճռեց չսպասել, մինչև կգա եղբայրական ուժը, որը պիտի ազատեր նրան շղթաներից: Այդ ընթացքը վտանգի կենթարկեր բոլոր արժեքները: Եվ, ահա՛, հավաքվել են Լեռնային Ղարաբաղի հաշտության ժողովրդական ներկայացուցիչները տնօրինելու երկրի ճակատագիրը:

Համագումարը մի անգամ ևս ընդգծեց իր բարեկամական վերաբերմունքը դեպի մյուս ազդեցությունների դեմոկրատիան: Այդ ճանապարհով մենք կարող ենք հասնել ռուսական հեղափոխության հայտարարած վսեմ գաղափարներից մեկի՝ ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացմանը:

Եվ դա է լինելու Ղարաբաղի կառավարության գործունեության ելակետը: Համագումարի ընտրած կառավարությունը կոչված է իրագործելու առաջին հերթին ժողովրդի կամքի այդ արտահայտությունը»[32]:

Հռչակագրում նշվում են բեկական հողերն իրենց միակ ու իսկական տիրոջը՝ հայ գյուղացուն վերադարձնելու և արցախահայության հուսալի ինքնապաշտպանությունն ապահովելու խնդիրները: Պարզ երևում է, որ նրա հեղինակներն ու համագումարը տեսնում են Արցախի գլխին կուտակված մռայլ ամպերը և համոզված են, որ դրանք չեն կարող կարկտաբեր չլինել:

Եվ կարկուտը չպետք է ուշանար:

Նորընտիր ժողովրդական կառավարությունը գործի անցավ անմիջապես և, իր համար առաջնահերթ դարձնելով կարգապահության, պարենի, արդարադատության, նույնիսկ լուսավորության խնդիրները, լծվեց ամենակարևորին՝ մարզի հայության պաշտպանությունն ապահովելուն: Ըստ երևույթին Գանձակում բնավորված Նուրի փաշան ու նրա տեղական գործակալներն ուշի-ուշով հետևում էին արցախահայոց համագումարին, տեղյակ էին նրա ընթացքին ու ընդունած որոշումներին և դրանք համարում էին լուրջ պատնեշներ Արցախը նվաճելու իրենց ծրագրի դեմ:

Նուրի փաշան, իբր կարգ պահպանելու համար, ռազմական «կոմենդանտներ» էր նշանակել Արցախի հարևան թաթարական գավառներում, և դրանք դարձել էին խառնակչության, հայկական բնակավայրերի վրա ավազակային հարձակումներ ու բռնություններ կազմակերպելու որջեր: Շուշիում էլ հայտնվել էր մի այսպիսի կոմենդանտ՝ օսմանյան սպա Հասան Բասրի-բեյի գլխավորությամբ: Եվ այդ Բասրի-բեյը ոչ միայն Նուրի փաշայի աչքն ու ականջն էր, այլև բոլոր մյուս «կոմենդանտների» խարդավանիգ գործունեության կազմակերպիչը: Այս առթիվ Վրաստանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը բողոքել էր Կովկասում գերմանական կայսերական պատվիրակության ղեկավար ֆոն Կրեսին, և սա էլ, իր տերության թուրքամետ քաղաքականությանը հավատարիմ, գրավոր հայտնել էր, թե «համաձայն թուրքական գլխավոր հրամանատար Նուրի փաշայի ինձ ուղարկած հաղորդագրության՝ օսմանյան զինվորական հրամանատարներ պիտի հաստատվեն Ղարաբաղի զանազան մասերում՝ այդ վայրերում կարգ ու ապահովություն ստեղծելու համար: — Ուրեմն, օսմանյան թուրքերը պիտի Ղարաբաղում կարգ սահմանեն: Եվ ամենակարևորը. — ...կհուսամ, որ ձեր կառավարությունը պետք եղածը պիտի կատարի, որպեսզի արգելի հայ զինվորների և հիշյալ զինվորական հրամանատարների միջև որևէ բախում»[33]:

---

[32] «Ղարաբաղի սուրհանդակ» շաբաթաթերթ, 1918, օգոստոս, թ. 1 (լույս է տեսել թերթի միայն այս համարը):
[33] ՀՀՊԿԱ, ֆոնդ 200, գ. 70:

Այդ բախումը, ավելի ճիշտ՝ ազգամիջյան կռիվը, եկել, Արցախի դուռն էր ծեծում: Օսմանցիների մի կողմից շարժվում էին դեպի Մարտ, մյուս կողմից, լցվելով Արցախի ու մյուս հայկական գավառների սահմանակից թաթարական շրջանները, զինում էին տեղացիներին:

Նոր կառավարությունը ոտ ու ձեռ էր ընկել աշխարհազորը լավ մարզելու, ճակատագրական մարտերի պատրաստված դիմավորելու համար: Ամենից շատ զենքի ու զինամթերքի կարիքն էր զգացվում: Սակայն Շուշվա արհեստանոցը շատ էր տկար այդ կարիքը վերացնելու համար:

Հայտնի է, որ Շուշվա կամ Արցախյան գունդը հսկայական ջանքերով զենք ու զինամթերք էր Գորիս բերել՝ իբր թե Արցախի զինվորությանը հասցնելու: Քանի ամիս փորձեր էին արվում, որ դրանք տեղ հասցնեն: Սակայն ապարդյուն, քանի որ Գորիս–Շուշի ճանապարհն էլ փակված էր Զաբուղի «կոմենդանտի» ու տեղական մահմեդական բաշիբոզուկների կողմից:

Օգոստոսի երկրորդ կեսին ռազմական գործողություն կազմակերպվեց ճանապարհը մաքրելու նպատակով: Դժբախտաբար գործողության մասնակից զանգեզուրցիները, Զաբուղից արևմուտք համառ դիմադրության հանդիպելով, նահանջել էին՝ հետագա շարժումը համարելով անհուսալի: Իսկ արցախցիներն էլ թթու ջրի կողմերում ու Բերդաձորի (Ղալադարասի) տակ մասնակի հաջողություններ ձեռք բերելուց հետո, այլևս անզոր դիմադրելու թուրք–թաթարական նոր համալրումներին, ստիպված եղան նահանջել դեպի Շուշի՝ իրենց հետ բերելով թշնամու կողմից գրավված Բերդաձորի շուրջ հինգ հազար բնակիչներին և մի քանի օր առաջ Զանգեզուրից այնտեղ տեղափոխված արևմտահայ համարյա նույնքան գաղթականներին:

Հայերի անհաջողակ այս գործողությունը ոգևորում է օսմանական ու թաթարական ուժերին, և նրանք պատրաստվում են նոր ու վճռական քայլերի:

Բանն այն է, որ Անդրանիկի երևույթը Զանգեզուրում, զորավարի ու նրա ջոկատի անպարտելիության համբավը՝ գումարած Արցախի ու Զանգեզուրի զինվորության ավանդական փառքին, նախընթացին զսպաշապիկի նշանակություն էին ունեցել հակառակորդի համար:

Եվ, իսկապե՛ս, Անդրանիկի երեք ու կես հազարանոց ընտիր, բազմափորձ ու խիզախ զորաջոկատը, ապա և Արցախ-զանգեզուրյան լեռնաստանը, որ շուրջ 30—40 հազար քաջամարտիկներ ժողովրդական զորավարի դրոշի տակ դնելու հնարավորություն ուներ, մի՞թե պակաս ուժ էին, որպեսզի, հենված անմատչելի լեռնաստանին, դեմ կանգնեին թուրք ու թաթար խառնակ զորությանը և պաշտպանեին երկրամասը:

Անդրանիկը մտածե՞լ էր այս առթիվ, փորձե՞լ էր որևէ քայլ կատարել այս ուղղությամբ: Դժբախտաբար, այս հարցի դրական պատասխանի համար ո՛չ մի հիմք չկա: Զորավարն իր զորքի ու գաղթականության համար պարզապես ապաստան էր դարձրել Զանգեզուրը, որ Բաթումի դաշնագրով հանված չէր Հայաստանի Հանրապետությունից, սակայն չէր էլ ենթարկվում նրան: Անդրանիկը փորձե՞ց այստեղ ստեղծել իր վարչությունը, հաստատել ազգային մի ղեկավար մարմին, որն ինքնուրույն կամ հանրապետության ենթակայության ներքո՝ ի վիճակի լիներ կարգավորելու կյանքը, մտնելու խաղաղ-ստեղծարար գոյության ճանապարհը:

Ցավո՛ք, անհո՛ւն ցավով այս հարցին էլ դրական պատասխան տալու ոչ մի հիմք չկա:

Իհարկե, երկար տասնամյակների հետվից հեշտ է հարցերի դրական կամ բացասական պատասխաններ գտնելը, մանավանդ նրանց մեջ ընտրություն կատարելը: Անդրանիկի պարագային՝ հատկապե՛ս: Իսկ նա այն ժամանակ մի մեծ հոգս ուներ. նախ գերմանական, ապա անգլիական բարձր ներկայացուցիչներին ցույց տալ ու ապացուցել, թե ինքը ոչ թե Հայաստանի Հանրապետության դրածոն է Զանգեզուրում, թե ինքն այդ երկրամասն իր զորքի ապաստանն էր դարձրել ոչ թե նրա համար, որ պատուհասի հարևան թաթար բնակավայրերին կամ խափանի օսմանյան էմիսարների «խաղաղարար», «կարգապահական» գործողությունները, ինչպես իրենց զրպարտչագրերում պնդում էին

թուրքերն ու թաթարները, — այլ որովհետև ուրիշ տեղ ու հնար չուներ, որովհետև թուրք-հայկական պայմանագրի համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքում իր զորքը կզինաթափեին, իսկ դա կործանարար կլիներ իր հովանու տակ մտած 15—20 հազարանոց գաղթականության համար: Մի խոսքով՝ փոխանակ լեռնաստանի գլուխ անցնելու և նրա ուժի ու քաջության դիրքից խոսելու, նա ստիպված էր արդարանալ զրպարտությունների ու խարդավանքների դեմ:

Այս չկատարված-չգոյացած դերը երկու տարի հետո հերոսաբար իրականացնելու էր Գարեգին Նժդեհը՝ զորավար Անդրանիկի ոգու նոր տերը և նոր ժամանակի ամենաերախտայից հերոսներից մեկը:

Բայց սա արդեն ուրիշ զրույցի նյութ է:

Անդրանիկի անվճռականությունն ու արցախցիների ձախողանքը Զարուդի ձորում հակառակորդին իրավունք էին տալիս հոխորտալու, սպառնալիքներ ներկայացնելու Արցախի իշխանությանը: 1918 թ. սեպտեմբերի սկզբին Աղդամի թուր «կոմենդանտը» մի գրությամբ Ղարաբաղի հայերից պահանջեց «վերջ տալ անիշխանությանը, ետ կանչել Ղալադարայի ուղարկված զորամասերը և ճանաչել Ադրբեջանի իշխանությունը», — հաղորդում է այն օրերի Արցախի ռազմական գործերի կառավարիչը՝ նշելով միաժամանակ, որ դա օսմանցիների առաջին հանդուգն պահանջն էր[34]: Թուրքական զորքի այս հրամանատար Զամիլ Զահիդ-բեյը, իհարկե, ամենից շատ մտահոգված էր Արցախի ու Զանգեզուրի կապերով, մանավանդ Զանգեզուրում Անդրանիկի առկայությամբ: Դրա համար էլ արցախցիներից «բարեկամաբար» պահանջում էր «հեռու մնալ Անդրանիկից»[35]:

Ծանր կացություն էր ստեղծվել արցախահայության համար: Անհրաժեշտ էր խորհրդի հավաքվել, ուժերն ստուգել, ճշգրտել հնարավորությունները՝ գալիք սպառնալից փոթորիկները կազմ ու պատրաստ դիմավորելու համար:

Ուրեմն դարձյալ մարզի գյուղացիության ներկայացուցիչները համագումարի պիտի հավաքվեին: Եվ այն տեղի ունեցավ սեպտեմբերի առաջին կեսին[36], շուրջ 200 պատգամավորի ներկայությամբ: Քննության առնվեցին ժողովրդական կառավարության հաշվետվությունը, Ղալադարա-Բերդաձորը վերականգնելու, բնակիչներին այնտեղ վերադարձնելու խնդիրը և թուրքական վտանգը դիմագրավելու նախապատրաստությունը: Ուշադրություն նվիրվեց թուրք «կոմենդանտների» գրգռիչ գործողությունների վրա. անհրաժեշտ է ծայրագույն զգուշություն՝ նրանց լարած թակարդների դեմ, ապա թե ոչ, արյունահեղություն կարող է առաջանալ ամեն մի անզգույշ քայլից:

Դավիթ Անանունը հիշում է, որ համագումարում նաև որոշվեց մարզի կառավարությունը կոչել **Արցախի հայոց ժողովրդական խորհուրդ**[37]:

Բերդաձորի հարցի վերջնական լուծման համար անհրաժեշտ համարվեց բանակցություններ վարել Զամիլ Զահիդ-բեյի հետ, և կազմվեց հինգ հոգուց բաղկացած պատվիրակություն (Դանիել Առաքելյան-նախագահ, Հայրապետ Մուսայելյան, Աշոտ Մելիք-Հովսեփյան, Արշավիր Քամալյան, Գերասիմ Մելիք-Շահնազարյան-Շուշվա քաղաքագլուխ):

Հ. Թումյանի վկայությամբ՝ գումարված երեք նիստերից հետո՝ սեպտ. 16-ին, համագումարը փակվել է, որպեսզի պատգամավորներն շտապեն տեղերը և անցնեն գործի[38].

Երբ Շուշվա հայոց պատվիրակությունը հասավ Աղդամ՝ Զամիլ Զահիդ-բեյի հետ բանակցություններ վարելու, այնտեղ արդեն առել էին Բաքվի ժողովրդական կառավարության անկման և թուրքերի Բաքու ներխուժելու լուրը: Հայտնի էր նաև, որ

---

[34] Հ. Թումյան, Ա, էջ 115—116:
[35] «Մշակ», 1919, փետր. 2-ի համարը:
[36] Աղբյուրները տարբեր օրեր են նշում բացման առթիվ՝ սեպտ. 6-ից մինչև 15-ը:
[37] «Մշակ», 1919, փետր. 27:
[38] Հ. Թումյան, Ա, էջ 120:

սկսված է Բաքվի հայերի կոտորածը, թուրք-թաթարական եռօրյա (սեպտ. 15—17) այն դիվային խրախճանքը, որին զոհ գնացին ավելի քան 30 հազար հայեր:

Ջամիլ Ջահիդ-բեյը, պատվիրակության ողջույնին պատասխանելու փոխարեն, երեսներին շպրտեց. — Ղարաբաղը չենթարկեցի՞ք Ադրբեջանին, դե՛հ, վայելեցե՛ք պատասխանը: Դա միայն սկիզբն է, իմացա՛ծ լինեք...

Ապա գրեց իր հրովարտակն Արցախի հայերին: Այն կարճ էր ու կտրական՝ զենքերը հանձնել և հպատակություն հայտնել Ադրբեջանին:

Այս հրովարտակն արցախահայությանը պիտի տանեին Դանիել Առաքելյանն ու Հայրապետ Մուսայելյանը: Իսկ մյուս երեքը (Աշոտ Մելիք-Հովսեփյան, Արշավիր Քամալյան, Գերասիմ Մելիք-Շահնազարյան) Աղդամում պատանդ էին պահվում և պետք է ազատ արձակվեին միայն հրովարտակի իրականացումից հետո[39]:

Այս օրերին էր, որ Աղդամում հայտնվեց Նուրի-փաշան՝ Ադրբեջանում իր հաղթանակը տոնող թուրքական զորքերի հրամանատարը: Նրա հետ Աղդամ էին հասել նաև հռչակավոր Գալիպոլիի դիվիզիայի երկու գնդերը[40]:

Երբ Առաքելյանն ու Մուսայելյանը Շուշվա հայոց Խորհրդին զեկուցեցին պատվիրակության հետ Աղդամում կատարվածի մասին, երկրորդ համագումարի պատգամավորների մի մասը դեռ այնտեղ էր: Ցասումով լցված ունկնդիրները վճռաբար հայտարարեցին, որ իրենք ու ամբողջ արցախահայությունը թուրքական սպառնալիքներին նայում են իբրև դատարկ հայտարարության և ունեն միայն մեկ պատասխան՝ մենք մեր ազատության ու ինքնուրույնության համար կռվելու ենք մինչև վերջին շունչը, մինչև արյան վերջին կաթիլը: Սակայն, այնուամենայնիվ, անմիջապես խնդրի պատասխանը չտվին՝ դրա համար նախ Աղդամի թուրքերից պահանջելով ազատ արձակել պատվիրակության մյուս երեք անդամներին:

Աղդամում տիրություն անողն արդեն Նուրի փաշան էր, որն իր հետ Գանձակից բերել էր երկու ազդեցիկ մարդու՝ տեղական հայ ղեկավարության ներկայացուցիչ Սերգեյ Տեր-Իսրայելյանին և մի ոմն Լևոն վարժապետի: Սրանք խնդիր ունեին արցախցիներին համոզելու՝ զենք չբարձրացնել թուրք-թաթարական ուժերի դեմ, այլ հարցերը լուծել փոխպայմանավորվածության գետնի վրա, որպեսզի «Գանձակի և նրա լեռնային շրջանի հայության կյանքն ու գույքը ետ չենթարկվեն վտանգի[41]»:

Սեպտեմբերի 25-ին պատանդներն ու Գանձակի ներկայացուցիչները հասան Շուշի, որ մեկ օր առաջ ստացվել էր և Նուրի փաշայի վերջնագիրն արցախահայությանը:

Թուրք զորապետը հավանաբար կարճ հիշողություն ուներ, մոռացել էր Սարդարապատի դասը և այստեղ խոսում էր հաղթողի ամբարտավանությամբ:

Վերջնագրի բնագիրը չի պահպանվել, սակայն հայոց զինվորական ղեկավարը (Հ. Թումյան) հիշողությամբ մոտավորապես վերականգնել է այն. «Նախ գոռոզամիտ ու հոխորտալի բառերով ղարաբաղցիներին հայտարարվում էր, որ տաճկական հրամանատարությունը Բաքուն գրավելուց հետո իր «հաղթական զորամասերն» ուղարկել է Ղարաբաղի դեմ և ղարաբաղցիներից պահանջում է զինաթափվել, ճանաչել Ադրբեջանի իշխանությունը և թուրք ու ադրբեջանցի զինվորներին ճանապարհ տալ անցնելու Շուշի:

Վերջնագրին պատասխան տալու համար տրվում էր 24 ժամ: Բացասական պատասխան ստանալու դեպքում, — սպառնում էր փաշան, — թուրք-ադրբեջանական զորքերն ազատ

---

[39] Անդ, էջ 125:

[40] Այս դիվիզիան էր, որ մի քանի ամիս առաջ խայտառակ պարտություն կրեց Սարդարապատում: Սակայն անունը (Գալիպոլի կամ Դարդանելյան, որ ձեռք էր բերել Դարդանելի, Գալիպոլի կողմում մեծ տերությունների դեմ տարած հաղթանակով) հավանաբար ստիպել էր, որ անմիջապես համալրեն-վերականգնեն և վերստին մարտի նետեն հայոց դեմ:

[41] Հ. Թումյան, Ա, էջ 132:

կլինեն պատերազմ սկսելու: Վերջնագիրն ավարտվում էր մոտավորապես հետևյալ խոսքով. «Ղարաբաղցինե՛ր, եթե, այնուամենայնիվ, դուք վճռել եք կռվել մեր դեմ, լեռնե՛րը քաշեցեք ձեր կանանց, երեխաներին ու ծերունիներին, որպեսզի մենք գործ ունենանք միայն կռվողների հետ[42]»:

Ինչպիսի՛ վեհանձնություն, որ կվայելեր աշխարհի ցանկացած կամողին, բայց միայն ո՛չ թուրքին:

Հայերը գիտեին, որ Բաքվի նվաճումից հետո թուրք-թաթարական ուժերի Արցախի վրա շրջելը դատարկ խոսք չէ. սահմանապահ ջոկատներից ամեն օր տեղեկություններ էին գալիս Աղդամում ու Թարթառում, Կարյագինոյում ու Մուղանի կողմերում կուտակվող զորքերի մասին: Բայց սրանք միայն Ասկերանի ձորով կարող էին Շուշի հասնել, իսկ այդ ձորը հուսալիորեն փակել էին արցախյան զորաջոկատները:

Արցախում գիտեին նաև, որ Նուրի փաշան ու թաթարների պարագլուխները որոշել են Շուշիին տիրելուց հետո ի մի բերել իրենց զորքերն ու Հայաստանի սահմաններում վխտացող ցեղակից հրոսակներին, գրոհել Զանգեզուրի ու Դարալագյազի վրա: Այս ծրագիրը նրանց համար այնքան կենսական նշանակություն ուներ, որ ամեն կերպ ջանացին իրականացնել նույնիսկ 1919-ին, «երբ Անդրկովկասում նստած էին հաղթական Անտանտի ներկայացուցիչները՝ անգլիական բռնագրավիչների գլխավորությամբ»[43]:

Արցախյան խորհուրդը Նուրի փաշային արդեն հաղորդել էր, որ վերջնագրին պատասխան տալու իրավունք ունի միայն մարզի հայության համագումարը և, առանց սպասելու համաձայնության, հրավիրեց արտակարգ համագումար (երրորդը)՝ յուրաքանչյուր գյուղից հրավիրելով երկու պատգամավոր:

Սեպտեմբերի 27-ին Շուշի էին հավաքվել ավելի քան 600 պատգամավորներ, բոլորն էլ զինավառ:

Համագումարի կազմակերպիչները տագնապում են այսքան զինված մարդկանց Ռեալական ուսումնարանի դահլիճ հավաքելուց և կեսին վերադարձնում են տեղերը՝ հանձնարարելով աչալրջորեն հսկել գյուղերի սահմանները:

Այս և նախորդ ու հաջորդ համագումարների սկզբնաղբյուրները Շուշիի 1920-ի մարտյան հրդեհին ճարակ են դարձել: Այդ է պատճառը, որ ուսումնասիրողները, վստահելով հետագայում այս ու այնտեղ հրապարակված վերհուշերին ու քննարկումներին, ստիպված են հայտնել իրարամերժ տեսակետներ անստույգ կամ ո՛չ այնքան հավանական: Օրինակ, երրորդ համագումարի որոշման մասին խոսողները հիմնականում այն կարծիքին են, թե համագումարը զիջողական դիրք է բռնել և հնարավոր է համարել, որպեսզի մարզը ժամանակավորապես կամ գոնե պայմանով ընդունի Ադրբեջանի գերիշխանությունը[44]: Հ. Թումյանը, դեպքերի անմիջական մասնակիցը և, առանց այս հանգամանքի էլ, ամենավստահելի պատմողը, տեղեկացնում է, որ համագումարը մերժել է ինչպես թուրք-թաթարական զորքի առաջ Շուշվա ճանապարհը բացելու և զինաթափվելու, այնպես էլ Ադրբեջանին հպատակվելու պահանջները:

Եթե թուրքերն իրենց պահանջներին դրական կամ զիջողական պատասխան ստացած լինեին, խաղաղ ու հանդարտ ընթացքով Շուշի կմտնեին և այնտեղ կվայելեին տիրողի արտոնությունները: Մինչդեռ հակառակ տեսակետը պնդողներին էլ հայտնի է, որ նրանք, սեպտեմբերի 30-ին Թարթառի ու Կարյագինոյի կողմից հարձակման մի քանի անհաջող փորձեր անելուց հետո, Աղդամում գործի են դրել իրենց հեռահար հրետանային մարտկոցները և ավերածություններ պատճառել Ասկերանի շրջակայքի հայկական

---

[42] Անդ, էջ 130:
[43] Անդ, էջ 131:
[44] Տե՛ս, օրինակ, Գր. Հովհաննիսյան, Սովետական իշխանության հաստատումը, էջ 92—93:

բնակավայրերին՝ Նախիջևանիկ ու Վարագաբույն, Խրամորթ ու Խանաբադ, Դահրավ ու Քյաթուկ գյուղերին:

Դրանից հետո՝ միայն Աղդամ բանակցությունների գնացած հայերը համաձայնվել էին, որ թուրքական մի զորաջոկատ (հազար զինվորով) մտնի Շուշի և տեղավորվի թաթարական քաղաքամասում:

Թուրքերը Շուշի մտան Նուրի փաշայի վերջնագրից 14 օր անց: Իսկ դա բավական ժամանակ էր գավառների պաշտպանությունը բազմակողմանիորեն կազմակերպելու, ինչպես նաև Շուշիում գործերը կարգավորելու համար:

Բանակցության պայմանները խախտելով՝ թուրքերը քաղաք մտցրին ավելի քան երկու հազար զինվոր, որոնց տեղավորեցին հայկական մասի բարեկարգ հասարակական շենքերում (Ռեալական ու թեմական դպրոցները, Օրիորդաց միջնակարգը, նախկին ռուսական զորանոցը ևն)[45]:

Երևի նախապես թուրքերին թվացել էր, թե Շուշի մտնելը բավական է լինելու, որ իրենք տեր դառնան ամբողջ Արցախին: Սակայն այդպես էլ չկարողացան որևէ կապ ունենալ գյուղացիների հետ, հակառակը, սրանք էին, որ ամրակուռ պաշտպանական կետերին հենված՝ հսկում էին թուրքերի ամեն մի տեղաշարժի վրա, հետախուզական իրենց միջոցառումներով հաճախ հասնում էին հին բերդի պարիսպներին՝ տագնապահար անելով թուրքերին[46]:

Թուրքերը մոլորություն ունեին կարծելու նաև, թե իրենց Շուշի մտնելը բավական է, որ տեր դառնան գոնե նախկին Շուշվա նահանգին, որի մեջ մտել էր նաև Սյունիք-Զանգեզուրը: Դրա համար էլ ջանացին վերացնել իրենց այդ երանելի վիճակը խափանող միակ հանգամանքը՝ հրովարտակ արին, որ Անդրանիկն իր զորքն առնի ու հեռանա Զանգեզուրից:

Ի պատասխան այս անպատկառ առաջարկության՝ Անդրանիկը Զանգեզուրում կազմակերպեց զորահավաք և ժողովրդին պատրաստեց ինքնապաշտպանության:

Հուսախաբությունից կատաղած թուրքերը կազմակերպեցին քաղաքի հայ ղեկավարների ու նշանավոր մտավորականների բանտարկությունը, ապա կախաղաններ կանգնեցրին քաղաքի հայկական ու թաթարական մասերում: Հայերին կախում էին զենք պահելու համար, թաթարներին՝ անկարգապահության ու ապիկարության: Հետո էլ իրենց ներկայությունը արդարացնելու համար հայերից պահանջեցին «մարդ ուղարկել գավառ՝ գյուղացիությանը համոզելու, որ ճանաչեն Ադրբեջանի իշխանությունը: Բայց այդ նպատակով գավառ ուղարկված քահանաները հազիվ կարողացան գլուխներն ազատել վրդովված գյուղացիների ձեռքից»[47]:

Հոկտեմբերի երկրորդ կեսին թուրքական հրամանատարությունը որոշում է իրեն խեղդող պարանը կտրել բարակ տեղից. Կարյագինոյի փաշայի անունից Դիզակի գավառին կարգադրում է ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Դիզակի ժողովրդական զինվորության հրամանատար Արտեմ Լալայանը խրոխտ պատասխան է ուղարկում թուրք կոմենդանտին: Ասում է՝ մեր գավառը փոքր է ու այնքան հրապուրիչ, բայց այն երբեք չի խոնարհվել օտար բռնավորի առաջ՝ սկսած վաղ միջնադարից, երբ մեր էսաի Աբու-Մուսե իշխանն իր Գտիչ բերդի տակ ջարդում էր արյունռուշ Բուղա թուրք զորավարին: Իսկ եթե կուզենաք ստուգել մեր խոսքի ճշմարտությունը, փորձեք զենքով գալ մեզ վրա:

---

[45] Քաղաքի հասարակական կյանքն ապահովող բոլոր շենքերը գտնվում էին հայկական մասում, միայն հռչակավոր բանտն էր, որ զարդարում էր թաթարական մասը՝ Փանահ-խանի ժամանակից ի վեր:
[46] Հ. Թումյան, Ա, էջ 154, ծան. «Նուրի փաշան Շուշում եղած ժամանակ, ծանոթանալով ստեղծված իրադրությանը, ասել էր. «Ղարաբաղի ղեկավարները խաբկանքով մեզ խաբեցին. նախ երկար ձգելով բանակցությունները, ապա Շուշի մտցնելով սահմանափակ ուժեր՝ բոլոր կողմերից շրջափակեցին մեզ»:
[47] Անդ, էջ 155:

Երևի Կարյագինոյի փաշայի վրա շշմեցնող ազդեցություն էր ունեցել այս ըմբոստ պատասխանը: Նա որոշել էր թաքունակն անել Դիզակի ամբողջ գավառը և դրա համար օգնական զորք պահանջեց Շուշիի կայազորից: Այն ժամանակ 400 ընտիր զինվորներից կազմված մի ջոկատ, Շուշուց ելնելով, Վարանդայով պիտի գնար Կարյագինոյի վրա: Լալայանն իմացավ այս զորաշարժի մանրամասներն ու, Դիզակի սահմաններն անցնելով, մի քաջավարժ ջոկատ ուղարկեց թուրքերին ընդառաջ: Ջոկատը ղեկավարում էր կենդանուծցի Սպանդիկ անունով մի երիտասարդ սպա, որն իր խմբով դարանակալեց Վարանդայի Մամնա գյուղի անտառում և, երբ թուրքերը գյուղի տակի ձորով անցնում էին, հանկարծակի վրա տվեց, ջարդեց՝ մինչև վերջին զինվորը:

Երևի, այնուամենայնիվ, փախչող-փրկվող էլ էր եղել, որովհետև հաջորդ օրվա՝ հոկտ. 29-ի երեկոյան արդեն Շուշիում Ջամիլ Ջանիկ-բեյը քաղաքի հայերից պահանջում էր, որ նրանք մարդիկ ուղարկեն Վարանդա և այնտեղից ետ բերեն իրենց «կորցրած» թնդանոթն ու գնդացիրները:

Հայոց զինվորական կառավարիչը վկայում է, որ Վարանդայի ու Դիզակի ըմբոստներն այդ անհաճո հանձնարարությամբ իրենց մոտ գնացածներին ձեռնունայն ետ էին տվել՝ սպառնալով, թե իրենք այդպես պիտի վարվեն լեռնաստանի բոլոր անկոչ հյուրերի հետ:

Մամնայի ջարդը թուրքերի համար դարձավ ավելի մեծ անհաջողությունների նախանշան: Ճիշտ է, նրանք Շուշվա բանտն էին լցրել հայկական քաղաքամասի նշանավոր շատ մարդկանց, նույնիսկ հայկական կառավարության նախագահ Եղիշե Իշխանյանին, իրավաբան Ստեփան Մանդինյանին և ուրիշ մի շարք մտավորականների, որոնցից շատ էին զգուշանում: Քաղաք էին բերել ու Ղարաբաղի գավառապետ նշանակել բժիշկ քուրդ Խոսրով-բեկ Սուլթանովին՝ նրան տալով մի հայ օգնական: Սակայն հայերից ո՞վ էր քանի տեղ դնում այդ պաշտոնը: Նրանք ճանաչում էին իրենց ընտրած ազգային կառավարությունը և նրան էին վստահում իրենց պահանջներն ու ցանկությունները:

1918 թ. հոկտեմբերի վերջերին արդեն հայտնի դարձավ, որ Թուրքիան ջախջախիչ պարտություններ է կրել Միջագետքում, Մերձավոր Արևելքում ու Բալկաններում և իր զորքերը ետ պիտի քաշի Անդրկովկասից ու մյուս երկրներից:

Հոկտեմբերի 30-ին էլ կնքվեց Մուդրոսի զինադադարը, որով Անգլիան էր պարտված Թուրքիային ստիպում կատարել անհամար զիջումներ:

Արցախի սիրտը խուժած թուրքերը ձևացնում էին, թե իրենց հետ ոչինչ էլ չի կատարվել: Սակայն ծպտված դուրս էին հանում զորքերը՝ դրանց տեղը թողնելով վերջին օրերին տեղացի թուրքերից հավաքագրած ու «վարժեցրած» զորախմբեր: Անշուշտ, հույս ունեին սրանց հետ ու սրանց միջոցով իրականացնել իրենց նվաճողական ծրագրերը: Դրա համար էլ թուրք զորապետերից շատերը, օրինակ՝ Նուրի փաշան, Խալիլ փաշան ու Քյազիմ փաշան, մնացին Ադրբեջանում և լծվեցին իրենց նոր գործին, որ հնի շարունակությունն էր և առավել նենգամիտ ու ստոր տեսակը:

Հայաստանի կառավարությունը կարո՞ղ էր օգտվել հանգամանքների այսպիսի դասավորությունից և իր զորքերը մտցնել Արցախ: Իհարկե, կարող էր և այդ պետ՞ք է աներ: Դրանով մեկընդմիշտ կազատվեր գլխացավանքից: Սակայն այդօրինակ մի քայլ ձեռնարկելու և հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ էր արտակարգ վճռունություն, իրադրությունը գնահատելու և նրանից իր առավելագույն օգուտը քաղելու ունակություն, որ, ցավոք, մեր հանրապետությունը չուներ: Նրա փոխարեն այդ ամենը և էլի ուրիշ բազմաթիվ գծեր, ինչպես խորամանկություն, կաշառքն ու զանազան սադրանքներով իր շահերն առաջ տանելու վարպետություն ուներ հակառակորդը, որ Ադրբեջանի մուսավաթական հանրապետությունն էր:

Հայաստանի Հանրապետությունը չկարողացավ օգտվել նույնիսկ Անդրանիկից, ասել է թե հայոց ամենաընտիր զինվորական միավորումի ու նրա ամենաքաջ, ամենահմուտ զորավարի գոյությունից: Բաքվում թուրքի հետ պայմանավորվել էին, որ այդ զորավարն ու

իրենք այլևս ոչ մի առնչություն չունենան, հակառակը՝ պիտի թշնամություն անեն, նրան հեռու վանեն Հայաստանից, և հիմա, երբ զորավարն ու իր զորքը կանգնած էին Զանգեզուրում, իսկապես ոչ մի կապ կամ առնչություն չունեին, ո՛չ բացահայտ, ո՛չ էլ գաղտնի: Մինչդեռ վերը հիշած ճկուն քաղաքականությամբ հնարավոր կլիներ հենց Անդրանիկի միջոցով լուծել հարցեր, որոնց մոտենալու իրավունք իրենք, իբր թե, չունեին:

1918 թ. վերջին զորավար Անդրանիկը հնարավորություն և վճիռ ուներ իր զորքը մտցնելու Արցախ: Ինչպես ցույց էր տվել համանման գործողությունը Զանգեզուրում, սա լինելու էր մի այնպիսի վճռական քայլ այդ նահանգի ինքնորոշման ճանապարհին, որ լուծելու էր հարցը՝ հակառակ կողմին մեկընդմիշտ զրկելով երկրամասի վրա ունենալիք որևէ հավակնությունից:

Սակայն զորավարին խաբեցին հակահայ պարագաները: Թերևս ինքը խաբվեց, և, ավա՜ղ, ճակատագրական քայլը տեղի չունեցավ: Այս պատճառով էլ Արցախ-Ղարաբաղի համար սկսվեց փորձանքներով ու ողբերգական իրադարձություններով լեցուն մի պատմություն, որի վերջին փրկության էջը կարծես անհնար պիտի լինի գրել:

Դեպքերի մասնակից և Արցախի դաշնակցական կառավարության մեջ առաջավոր դիրք ունեցած Եղիշե Իշխանյանը պատմում է, որ 1918-ի հոկտեմբերի սկզբներին արդեն լեռնաստանի գավառները՝ Դիզակ, Վարանդա, Խաչեն և Ջրաբերդ, ունեին իրենց կանոնավոր զորամասերը, ամենօրյա կապ էին պաշտպանում իրար հետ և հոկտեմբերի վերջին կարողանում են համոզել զորավար Անդրանիկին, որ նա իր զորքը մտցնի Արցախ, և իրենք միացյալ ուժերով դուրս վռնդեն Շուշիում բուն դրած թուրք ու թաթար բռնավորներին և մեկընդմիշտ լուծեն երկրամասն իր օրինական տեր Հայաստանին վերադարձնելու հարցը[48]:

Վստահենք ժամանակակից, դեպքերի մասնակից մարդկանց, որոնք գրել են, թե երբ Անդրանիկն իր բազմափորձ ու ընտիր զորքը մտցրել էր Զանգեզուր, այնտեղ հիմնավորապես հաստատել հայկական իշխանությունը և «քացախ լցրել» թուրք-թաթարական ախորժակի վրա, իսկ Արցախ-Ղարաբաղը դեռ կենաց ու մահու կռիվ էր տալիս նույն թուրք-թաթարական բռնավորների ամեն տեսակ խարդավանքների դեմ, արցախահայությունը դիմեց զորավարին, հաղորդեց, որ օսմանա-թուրքական ու մուսավաթական հիմնական զորամիավորումներն արդեն հեռանում են Ղարաբաղի սահմաններից, հարմար ու լավագույն ժամանակն է, որպեսզի զորավարն իր գունդը Ղարաբաղ մտցնի, այն միացնի Զանգեզուր-Սյունիքին և այս լեռնաստանն ապահովի «Ադրբեջանի նվաճողական նկրտումներից»[49]: Նույնիսկ նշվում էր, որ դրա համար պետք էլ չեն լինելու զինական ջանքեր ու զոհողություններ: Բավական կլինի լոկ զորավարի ու իր փառապանծ զորքի հուսատու ներկայությունը, իսկ պայքարն ու հաղթանակը իրենք՝ արցախցինե՛րը կապահովեն...

Կրկնվում էր երկու հարյուր տարի առաջ կատարվածը: Այն ժամանակ Արցախ-Ղարաբաղը ռուսների՛ց էր օգնություն սպասում, պարզապես օգնական ներկայություն, որպեսզի ինքը ճակատ տա թուրք ու պարսիկ բռնավորների դեմ և ապահովի իր ազատությունը: Արցախի մելիքներն ու Եսայի Հասան-Ջալալյան կաթողիկոսն իրենց նամակ-խնդրագրերում պնդում էին՝ գա՛ր տիզբրակալ, մեր լեռնաստանում նյութական ու զինական բավարար ուժ կա մեր թշնամիներին հաղթահարելու համար, քեզանից սպասում ենք մեկ-երկու զորաջոկատ, որպեսզի տեսնենք, որ աշխարհում մենք էլ ունենք թիկունք, հույս ու ապավեն...

Ապարդյո՛ւն սպասում, որովհետև անսպասելիորեն Շվեդիան էր վեր կացել ռուսական ծավալապաշտության դեմ, և Պետրոս Մեծն ստիպված եղավ իր զորքն ուղղել շվեդների դեմ՝ Այսրկովկասի հարցը թողնելով բարենպաստ ժամանակի:

---

[48] Ե. Իշխանյան, Դեպքերը Ղարաբաղում. «Հայրենիք» հանդես, 1933, թ. 12, էջ 111:
[49] Ե. Իշխանյան, թ. 12, էջ 130:

Եվ Արցախում ծայր առավ աղետալի պայքարը, որը, եթե չապահովեց էլ անկախությունը, ապա գոնե երկու հզոր թշնամիներին՝ Պարսկաստանին ու Թուրքիային համոզեց, որ այս լեռնաստանը ծնկի չպիտի գա բռնության առաջ... Եվ Թուրքիան շատ երկար ժամանակով հրաժարվեց նրա հանդեպ ունեցած ամեն տեսակ ծրագրերից, իսկ Իրանը Նադիր շահի միջոցով բարեկամացավ մելիքների հետ՝ նրանց ընդունելով իբրև դաշնակիցների:

Ի՞նչ պիտի լիներ նոր փորձության վերջը: Ի՞նչ արդյունք պիտի տայր ո՛չ թե ռուս միապետից, այլ արյունակից հարազատից սպասվող օգնությունը: Մանավանդ որ այժմ էլ թշնամին ոչ թե երկգլխանի արծիվ էր՝ թուրքական ու պարսկական զորքերի կերպարանքով, այլ թուրք-ադրբեջանական ավազակախմբերը, որոնք վխտում էին Արցախի կենտրոն Շուշիում և հարևան թաթարաբնակ շրջաններում:

Անդրանիկը համաձայնեց զորաշարժով մտնել Արցախ և անմիջապես սուրհանդակներ ուղարկեց՝ գավառային զորաջոկատների ուժերը դասավորելու, գործողություններին պատրաստ լինելու հանձնարարականներով:

Զորավար Անդրանիկի տրամադրության տակ պատկառելի մի զինվորություն կար: Նախորդ պատերազմի ժամանակ, ինչպես հաղորդում են հայկական ճակատի օրագրերը, նրա զորամասը բաղկացած էր եղել ավելի քան երեք ու կես հազար ընտիր կամավորներից: Իսկ Բաթումի դաշնագրից հետո ուներ «300 հետևակ, 700 ձիավոր, 150 թնդանոթաձիգներ, 60 գնդացրավորներ, 1 դաշտային և 3 լեռնային թնդանոթ...»[50]: Մինչև Զանգեզուր հասնելը պատահած փորձությունները որքան էլ նվազեցրած լինեին Անդրանիկի ուժերը, դրանք մնում էին բավական ազդեցիկ՝ ադրբեջանական կողմին տագնապահար անելու համար:

Անդրանիկի զորաշարժի լուրն առնելով՝ Արցախի գավառները ոտքի էին ելել, պատրաստ էին վճռական գործողությունների: Իսկ Շուշիում ու հարևան թուրքաբնակ գյուղերում տագնապ էր ընկել: Ականատեսն ասում է. «Շուշվա թաթարներից շատերը կառքերով ու ֆուրգոններով իրենց ունեցվածքն էին տեղափոխում Եվլախ, որ գլուխ պրծացնեն վերահաս աղետից»[51]:

Անդրանիկը վճռել էր զորաշարժն սկսել նոյեմբերի 5-ին (1918 թ.): Նույնիսկ իրեն օգնական էր վերցրել ղարաբաղցի կապիտան Ստեփան Սարգսյանին՝ ժամանակի մամուլից «Ստեսար» ստորագրությամբ հայտնի, տեղանքին քաջածանոթ և առհասարակ շրջահայաց մի երիտասարդի:

Նախապես կարգադրված էր, որպեսզի Վարանդայի և Դիզակի ջոկատները բռնեն Դիզափայտի ու Քիրսի փեշերը, Թթու ջրի շրջակայքը՝ Շուշվա թուրքերին հնարավորություն չտալով այդ կողմերում զինական կուտակումներ ստեղծելու: Զորավարի այս հրամանը տարբեր կերպ ընդունվեց տեղերում: Դիզակի զորամասն անմիջապես Դիզափայտի ու Քիրսի փեշերի վրա տարածել էր իր ազդեցությունը, Մուսուլմանաբ թուրքական գյուղն առնելով՝ ապահովել Գորիս-Շուշի ճանապարհի զգալի մասը: Իսկ Վարանդայի զորաջոկատը դարանել էր Քարինտակ գյուղում, նոր հրամանատար Սոկրատ-բեկ Մելիք-Շահնազարյանի սուրհանդակի միջոցով Անդրանիկին խնդրել էր զորաշարժը հետաձգել տասն օրով:

Հրապարակված կարծիք կա այն մասին, թե տասն օրն անհրաժեշտ է եղել, որպեսզի ազգի դավաճան Մելիք-Շահնազար Բ-ի այս նոր արյունակիցն ու հարազատը բանակցություններ վարի տեղական թաթարների հետ և նրանց հրահրի հանդիպակաց գործողությունների[52]: Սակայն իրողություններին առավել մոտիկից տեղյակ, այն օրերի արցախահայության ղեկավարներից մեկը՝ դաշնակցական ազդեցիկ գործիչ Եղիշե Իշխանյանը հերքում էր այս տեսակետը՝ ապացուցելով, որ Սոկրատ-բեկը հայրենասեր մարդ է եղել, և Անդրանիկի

---

[50] Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982 (այսուհետ՝ «Ս. Վրացյան»), էջ 329:
[51] Ե. Իշխանյան, թ. 12, էջ 130:
[52] Տե՛ս Արթուր (Քիրս Մարոտ), Ղարաբաղի կցումը Ադրբեջանին, «Հայրենիք» ամսագիր, 1929, թ. 8, էջ 128-129:

զորաշարժի մասին թուրքերին տեղեկացրել է նրա ազգական Գերասիմ-աղա Մելիք-Շահնազարյանը՝ Շուշվա քաղաքագլուխը:

Ինչևէ, Արցախ-Ղարաբաղի ճակատագրի համար ամենավճռական պահին Մելիք-Շահնազարյան տոհմը վերստին ներկայացնում էր ճիվաղային մի արարածի, որի խարդավանքը դարձյալ արյուն շաղիկ պիտի դառնար նահանգի համար, նրան վատեր տարիներ ու տասնամյակներ շարունակ:

Տասն օր հետո, նոյեմբերի 15-ին, Անդրանիկ զորավարն սկսում է իր ռազմերթը դեպի Շուշի՝ արդեն հասկանալով, որ իզուր ժամանակ է կորցրել և հիմա պետք է անցնելիք ամբողջ ուղին մաքրի ադրբեջանցի սահմանապահ ջոկատներից ու քուրդ հրոսակախմբերից: Առաջին իսկ օրերին Զաբուխի ձորում, Ավդալլարի (հետագայի Լաչին) մոտ կոտրում է հակառակորդի դիմադրությունը՝ զոհ տալով, սակայն, օգնական Ստեփան Սարգսյանին: Արդեն հասել էր Տաս վերստ կոչվող վայրը, մնում էր բարձրանալ Թթու ջուր և խճուղին բռնած հասնել Շուշի, երբ Հարար գյուղացի մի հայ ծերունի շնչակտուր մոտեցավ զորավարին և նրան հանձնեց Ադրբեջանում անգլիական միսիայի ղեկավար գեներալ Թոմսոնի հեռագիրը: Պարզվեց, որ Շուշիում Գերասիմ-աղա Մելիք-Շահնազարյանից իմացել են Անդրանիկի զորաշարժի մասին, հաղորդել Բաքու, և այնտեղ էլ Ադրբեջանի ղեկավարները դիմել են Թոմսոնին, որպեսզի սա խափանի զորաշարժը:

Թոմսոնի հեռագրում անհանգստություն էր արտահայտված «հայկական շարժումների» առթիվ, որոնք, իբր, «բացասական ազդեցություն կունենան հայկական դատի վրա, որը խաղաղ կերպով լուծվում է Եվրոպայում»: Եվ սրան էլ հետևում էր սպառնալիքը՝ «եթե որևէ մեկը չկատարի իմ այս հրամանը, կհամարվի Մեծ Բրիտանիայի թշնամին և գործ կունենա մեզ հետ»[53]:

Անդրանիկն ստիպված է լինում դադարեցնել առաջխաղացումը և ամրանալ գրաված դիրքերում, մինչև որ կպարզվեր դրությունը և հնարավոր կլիներ նոր քայլեր ձեռնարկել: Սակայն շուտով Շուշի են ժամանում Թոմսոնի լիազորած երկու սպա (անգլիացի կապիտան Նորլոմիյուն ու ֆրանսիացի կապիտան Կասֆիլդը)[54], որոնք էլ խնդիր ունեին տեսակցելու Անդրանիկի հետ և հիմնավորապես պայմանավորվելու, որպեսզի նա հեռանա Արցախի սահմաններից: Սպաներին Շուշիից ուղեկից և թարգման էր դարձել հայ բժիշկ Արտաշես Գյանջեցյանը, որը Թոմսոնի հանձնակատարներից թաքուն, իր հետ տանում էր «Ապառաժ» կոմիտեի նամակ-խնդրագիրը՝ ուշադրություն դարձնելու Թոմսոնի ու նրա սպաների սպառնալիքներին և անպայման մտնելու Արցախ, որն աղետալի վիճակում սպասում է սիրելի զորավարի փրկարար օգնությանը:

Ականատեսները պատմում են, թե զրույցին մասնակից հայերը նահանգի ամբողջ հայության անունից Անդրանիկին թախանձագին խնդրում էին շարունակել ճանապարհը, մասնակցել թրքության դեմ անպաշտպան մնացած հայ մարդկանց փրկությանը: Շուշվա գնդի հրամանատարներից մեկը՝ Հովակ Ստեփանյանը, որ Զանգեզուրում զորավարին օժանդակել էր ամեն ինչում, մանավանդ Թիֆլիսից բերած զինամթերքն էր եղբայրորեն կիսել և հիմա հայրենի եզերքին ծառայելու էր տանում ժողովրդական հերոսի դրոշի ներքո մեկտեղված իր գունդը, շատ ճշմարիտ ու օգտակար իր հուշերում գրել է. «Հանգուցյալ Ս. Չիթչյանը և տողերիս գրողը թե անձամբ և թե Եղիշե Քաջունու և բժիշկ Ռուբեն Տեր-Ստեփանյանի միջոցով շատ աշխատեցինք համոզել Անդրանիկին, որ նա **պատմական սխալ** չանե, ետ չդառնա, այլ մտնի Շուշի, մանավանդ որ դիմադրողները թուլացել էին: Այսպիսով Անդրանիկին ամենքին կատարված փաստի առաջ կդներ և մի անգամ ընդմիշտ կլուծեր դրական մտքով նախ Շուշվա, ապա ընդհանուր Ղարաբաղի խնդրո հարցը:

Բայց Անդրանիկը չլսեց մեզ, մնաց անդրդվելի, որովհետև **պատմական սխալի երկընտրանք** ստեղծեց իր համար: Հեռագիր-նամակի մեջ ասված էր. «Եթե դուք չլսեք և

---

[53] Անդ, էջ 120:

[54] Ե. Իշխանյան, էջ 116:

առաջ շարժվեք, ձեր այդ քայլը վատ կանդրադառնա հայկական հարցի վրա, որով այժմ զբաղված է Փարիզի կոնգրեսը...»:

Որքան ջանացինք համոզել, որ այդ տողերը նախապես խմբագրված են մուսավաթական շրջանում...

Ղարաբաղ թե՞ հայկական հարց, — այսպիսի կոպիտ երկընտրանքի առջև կանգնեց հերոսը և կատարեց օրհասական սխալը, որ հետագայում ունեցավ իր այնքան մեծ ու անուղղելի բացասական հետևանքները...»[55]:

Այսօրինակ բացատրություններ տալիս են իրողության մասնակից շատ հայեր, նույնիսկ թարգման Գյանջեցյանը, որը ոչ միայն Անդրանիկի...

Ռիկին է հանձնում «Ապարաժի» ԿԿ-ի հատուկ նամակ-հրավերը, այլև իր անունից հայտնում է, որ զորքի ետդարձը պիտի անկանխատեսելի փորձանքների առաջ կանգնեցնի արցախահայությանը: Սակայն զորավարն անդրդվելի էր:

Զորավարն իրավունք ունե՞ր վստահելու անգլիական միսիայի խոսքին՝ մարզի ամբողջ հայության խնդրանքը մերժելու գնով:

Մինչև քննության ենթարկվող պահը Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչները հայկական հարցի քրքրումների մեջ ունեցած իրենց մասնակցություններով մեկից ավելի հիմքեր էին տվել անվստահելի ճանաչվելու համար: Անդրանիկը չէր կարող չիմանալ դրանց մասին: Սակայն, ցավո՜ք, այս անգամ ևս հավատաց թոմսոնին: Ո՛չ միայն հավատաց, այլև իր հեղինակությունն օգտագործեց Զանգեզուրի և Արցախի հայությանը ենթարկելու ստորադիր հեռագրի թելադրած միջոցառումներին: Պահպանվել է գեներալի հրապարակած հետևյալ հրամանը, որ այս տխուր հանգամանքն է ապացուցում: Ահա այն.

«Հայկական հատուկ հարվածող զորամասի պետ, Գեներալ Անդրանիկի հրամանը Վարանդայի, Դիզակի, Խաչենի և Ջիվանշիրի զինվորական հրամանատարներին և հայ ազգաբնակչությանը.

Այս հրամանն ստանալուն պես անհապաղ դադարեցրեք բոլոր ռազմական գործողությունները թուրքերի և տաճիկների դեմ: Դաշնակիցները մեզանից պահանջում են անհապաղ դադարեցնել բոլոր ռազմական գործողությունները: Ինձ մոտ են եկել անգլիական և ֆրանսիական մի-մի կապիտան և հայտարարել են, որ արդեն որոշված է Կովկասում չթույլատրել պատերազմներ: Տաճկական զորքերը պետք է հեռանան: Բաքուն և Բաթումը գտնվում են անգլիացիների ձեռքում, և սրանք շարժվում են դեպի Թիֆլիս: Բոլոր հարցերը պետք է որոշվեն խաղաղարար կոնգրեսում: Դաշնակիցների ներկայացուցիչների ձեռքով ինձ հանձնված նամակի մեջ անգլիական գլխավոր հրամանատար Թոմսոնն զգուշացնում է, որ այսուհետև ամեն թշնամական գործողություն կարող է վատ անդրադառնալ հայկական հարցի լուծման վրա: Գեներալ-մայոր **ԱՆԴՐԱՆԻԿ**»[56]:

«Ղարաբաղդ թե հայկական հարց», — ա՞յս էր արցախահայությանը երեսի վրա լքված թողնելու պատճառը: Եթե այո՛, ապա «հայկական հարցն» ի՞նչ շահեց Թոմսոնի ու նրա ներկայացուցիչների խոստացած Փարիզի հաշտության խորհրդաժողովում, որին նույնիսկ հրավիրված չէր Հայաստանի ներկայացուցիչը, և որը, ձգվելով մի ամբողջ տարի (1919 թ.), իր երկար-բարակ քննարկումներում չանդրադարձավ էլ հայկական հարցին:

Անդրանիկի ճակատագրական սխալը բացատրելի ու ներելի դարձնելու համար հուշագրողները փորձում են գտնել այս կամ այն հիմքը:

---

[55] Հովակ Ստեփանյան, Արցախյան կամ Շուշվա գնդի պատմությունը, «Հայրենիք», 1935, թ. 153, էջ 127:
[56] Հ. Թումյան, Բ, էջ 10:
Այս հրամանը տարածվել է Զանգեզուրում ու Արցախում: Բնագրից արտագրված պահպանվել է Արցախի Ազգային խորհրդի անդամ Արշավիր Քամալյանի թղթերում: Թումյանը, ըստ իր խոստովանության, այնտեղից է քաղել:

Արցախի ինքնակոչ «գլխավոր հրամանատար» Սոկրատ-բեկի խնդրանքը և նրա ազգական, Շուշվա քաղաքագլուխ Գերասիմ-աղայի նամակը, որոնցով տասն օր ուշացել է զորաշարժը, ապա թե ոչ, Թոմսոնի հրահանգն Անդրանիկին կհասներ ոչ թե Զաբուխի ձորում, այլ Տեղու ջրում, Շուշուց ընդամենը 15—18 կմ հեռու, և նա այլևս ետ չէր դառնա[57]:

Բայց արդյո՞ք ետ չէր դառնա:

Հիշվում է նաև այն հանգամանքը, որ զորավարի գնդի հետ էր արևմտահայ գաղթականական մի հոծ խումբ, որի հոգսը նա իր վրա էր վերցրել և չէր զիջում ոչ մի ուրիշի, նույնիսկ նորաստեղծ հանրապետության կառավարությանը: Եվ, ահա, անգլիական միսիան նրա առաջ խնդիր էր դրել. եթե ենթարկվեցիր իմ հրամանին, դրամական օգնություն կհասցնեմ գաղթականներին, կլուծեմ նրանց ապահովության հարցերը: Եվ, իսկապես, Թոմսոնի լիազորներն իրենց հետ Բաքու տարան Անդրանիկի երկու հանձնակատարներին, և նրանց միջոցով Զանգեզուր հասավ երկու միլիոն ռուբլի:

Սակայն սրանք ըստ էության երկրորդական խնդիրներ են՝ կոչված մեղմացնելու հայոց մեծ զորավարի ու ժողովրդական հերոսի կատարած սխալի տխուր տպավորությունը: Կարևորն այն է, որ նա ամենաճակատագրական պահին չունկնդրեց արցախահայության օգնության կանչին, չմտավ Շուշի, տեր չկանգնեց այդ աշխարհի բնիկ հայության սրբազան իրավունքներին: Նույնիսկ ա՛յն ժամանակ, երբ Թոմսոնի հեռագրի տակ առկա էր նաև մուսավաթական կառավարության ղեկավարներից մեկի՝ Ֆ. խան-Խոյսկու ստորագրությունը, իսկ դա աներկբայորեն նշանակում էր՝ անգլիական ներկայացուցչությունը տվյալ հարցում գործում է մուսավաթականների հետ համերաշխ, նրանց թելադրանքո՛վ: Եվ այս դեպքում էլ թոմսոնները, թե՞ նրանց փոխարինելու եկած շատլվորտները, պիտի ծառայեին մուսավաթականների շահերին, պիտի ամեն միջոց գործադրեին Արցախը մուսավաթական Ադրբեջանի լծի տակ քաշելու համար:

Սա գաղտնիք չէր 1918-ի նոյեմբերին, իսկ հետագայում դարձավ առավել բացահայտ ու անսքող:

Թոմսոնի ներկայացուցիչներն Անդրանիկի հետ պայմանավորվել էին, որ Զանգեզուրի, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության արևելյան սահմանն անցնում է Հագարի գետի հոսանքով: Դա հինավուրց սահմանագիծն էր Մեծ Սյունիք-Զանգեզուրի և Արցախի միջև: Հագարիից արևմուտք առհասարակ Հաչի-սամլու կոչված (հետագայի Լաչինի շրջան) լեռնաստանում այլևս մահմեդականներ չէին մնացել: Նրանք նույնիսկ իրենցից արևելք բնակվող թուրքացած քրդերին էլ ասել, Անդրանիկի զորաշարժի ահից փախել էին դեպի դաշտային Ղարաբաղի մուսուլմանական շրջանները:

Աղբյուրներն ստուգորեն հաղորդում են, որ հայերը նրանց դեմ ոչինչ չէին ձեռնարկել: Նրանք իրենք, երևի նկատի առնելով նախընթացի ադրբեջանական վայրագությունները Բաքվի, Գանձակի ու այլ վայրերի հայության հանդեպ, մտածում էին, թե լավ է փախչեն, ազատվեն հայոց վրիժառությունից: Սակայն մուսավաթականների թելադրանքով Թոմսոնն Անդրանիկին գրել էր հայկական ինչ-որ շարժումների մասին և հետո էլ խորհուրդ էր տալիս ետ կանգնել հակաթաթարական միջոցառումներից: Պարզ է, որ ադրբեջանական կողմն այդ ստահոդ լուրերը տարածում էր հայերին ջարդարարների ու արյունարբու ավազակախմբերի գործողությունների վերագրում՝ նախապես արդարացնելու համար իր նախապատրաստած և շուտով սկսվելիք նոր վայրագությունները հայկական բնակավայրերի դեմ:

Անդրանիկի նահանջից հետո անգլիացիների հովանավորությամբ Շուշվա գեներալ-նահանգապետ դարձած Խոսրով-բեկ Սուլթանովը վերստին իր ցեղակիցներին բնակեցրեց լքված գյուղերում, կազմակերպեց Դիզակի կողմից Սյունիքին հարող տարածքի Հարար, Սպիտակաշեն և Պետրոսաշեն հայկական գյուղերի բնակչության ջարդը՝ ապահովելով Զանգեզուրի վերջնական անջատումն Արցախից: Եվ այսպես, օրը ցերեկով, Հայաստանի Հանրապետության ու, մանավանդ, Զանգեզուրում դեռևս տիրություն անող Անդրանիկի

[57] Տե՛ս Հովակ Ստեփանյան, էջ 125-126:

աչքի առաջ ոչնչացվեց Արցախը Զանգեզուրի հետ կապող վերջին մի փոքրիկ հողաշերտ: Հետևանքն այն եղավ, որ այդ օրերից ի վեր Հայաստանի սահմանային բնակավայրեր դարձան Խոզնավարը, Խնածախը, Տեղը, Կոռնիձորն ու Խնձորեսկը[58]:

Անդրանիկին Գորիս վերադարձնելու համար Թոմսոնն ու նրա կողմից հովանավորվող մուսավաթականները բավական զիջող էին դարձել, ոչ միայն արևմտահայ գաղթականության համար բաց թողեցին երկու միլիոն ռուբլի, այլև հայերին համաձայնություն տվին, որ հայրենիք մտնի արցախյան կամ Շուշվա գունդը:

Համաձայնություն էր կայացել, որ այս գնդի ջոկատները մտնեն իրենց հայրենիք և պահպանեն նրա ինքնուրույնությունը՝ մինչև Փարիզի վեհաժողովը կլուծեր «հայկական հարցն ու նրա բաղկացուցիչները...»

Սակայն դեկտեմբերի կեսին գունդը հազիվ էր Շուշի մտել, երբ Սուլթանովի գործակալներն ու անգլիական միսիայի ներկայացուցիչները վրա տվին ու ստիպեցին, որ հայ զինվորները զինաթափվեն՝ ունեցած զենքն ու զինամթերքը հանձնելով իրենց[59]:

Օսմանյան թուրքերի գնալուց հետո, 1918-ի դեկտեմբերից, Ադրբեջանում և Կովկասում մեծապես տիրություն էր անում հաղթանակած Մեծ Բրիտանիայի ներկայացուցչությունը՝ նույն գեներալ Թոմսոնի գլխավորությամբ: Սակայն Արցախի համար ոչինչ չէր փոխվել, եթե չասենք՝ վիճակն ավելի էր ծանրացել. առաջ ժողովուրդը զինված ու բացահայտորեն ոտքի ելած պաշտպանում էր իր ինքնուրույնությունը, իսկ այժմ կաշկանդված էր անգլիական երկդիմի հսկողությամբ, սուտ խոստումներով: Այդ քաղաքականությունը պարզապես աչքերին կապոցել էր և նրանց վրա բաց թողել թաթար-ադրբեջանական խաժամուժը:

Անգլիացիներն Արցախ էին մտել իբրև հաղթանակած մեծ տերության հզոր ու արդար ներկայացուցիչները: Սակայն իրենց մուտքը նշանավորեցին մի գործողությամբ, որը կարելի է կոչել միայն կողոպուտ: Այդ առթիվ էր, որ տեղական մարմինները հաղորդեցին, թե Շուշի են մտել անգլիական 50 զինվորներ (սկզբում), որոնք «յուրաքանչյուր ընտանիքից պահանջեցին 10 փութ գարի կամ ցորեն, երեք ոչխար կամ դրա փոխարեն այդպիսի համապատասխան չափով»[60]:

Եթե այսքանը պահանջվել է ամբողջ մարզի «յուրաքանչյուր ընտանիքից», դժվար չէ պատկերացնել, թե Ալբիոնի զավակների ի՜նչ որկրային ախորժակով էին մտել Արցախ, իսկ եթե միայն Շուշվա քաղաքաբնակներից, ապա դարձյալ դժվար չէ որոշել նրանց վարքը... Մանավանդ, եթե նկատի ունենանք, որ այդ անգլիացիների թիվը մուտքին եղել է 50, ելք-հրաժեշտին՝ 398 զինվոր կազմել են միայն Մաք-Մոզլի շքախումբը[61]: Եվ այն էլ վեց ամսվա ընթացքում՝ 1918-ի դեկտեմբերի 18-ից մինչև 1919-ի հունիսի 12-ը:

Անգլիական նշանավոր մի գործիչ՝ Համայնքների պալատի անդամ Բերստոնը, դեռ առաջին աշխարհամարտի նախօրյակին Հովի. Թումանյանի հետ ունեցած զրույցին, երբեմն հայությանը ճիշտ կողմնորոշելու համար, զգուշացրել է, թե «Անգլիացիները մուսուլմանական աշխարհի հետ կապված մեծ շահեր ունեն, և երբեք չհավատաք, թե Անգլիան կարող է պաշտպան կանգնել հայերին»[62]:

Սակայն պատերազմին հրաժեշտ տալիս Անգլիան ու դաշնակիցները Հայաստանը հայտարարել էին փոքր դաշնակից, և սա անհարկի ստոր թույլ չտվեց, որ գոնե պատերազմի օրերին Անգլիայի ու դաշնակիցների նյութած հակահայկական դավերը դասի տեղ ընդունվեին, որպեսզի գոնե այդ պատերազմից հետո հայերը որևէ հույս չկապեին անգլիական «արդարամտության» հետ: Հայաստանի Հանրապետության ղեկավարները,

---

[58] Հ. Ստեփանյան, էջ 129:
[59] Հ. Ստեփանյան, էջ 130:
[60] Компартия-организатор победы Советской власти и социалистического строительства в Азербайджане (сборник статей). Баку, 1958, стр. 315.
[61] Տե՛ս Գր. Հովհաննիսյանի գիրքը, էջ 113:
[62] ՀԳԿՊԿ, ֆ. 223, գ. 72, թ. 27 (տե՛ս նաև՝ Հ. Թուման, ԵԼ, էջ 1):

Արցախում՝ առավել ևս, հավատում էին, թե թուրքերից հետո Անդրկովկաս մտած անգլիական գործակալությունը ծառայելու է մարդկային խղճին ու արդարամտությանը, ուրեմն և կօգնի, որպեսզի Արցախ-Զանգեզուր-Նախիջևան գոտին վերամիանա նոր Հայաստանին՝ հնարավորություն ստեղծելով, որ Արարատյան երկրի մի մասում կուչ եկած հայությունը գոնե ազատ շունչ քաշի:

Սակայն անգլիացիները Բաքվո՛վ էին Արցախ գալիս: Բաքվով էլ չգային, միևնույն է, իրենք՝ ադրբեջանցինե՛րը, կգային, կնստեին նրանց և կգործադրեին լեզու գտնելու ամենափափուկ եղանակը, կհասնեին իրենց նպատակին: Այդ է պատճառը, որ անգլիացիների Բաքու մտնելուն պես երկուսի՝ եկածի ու տեղացու համար էլ Արցախ-Զանգեզուր-Նախիջևան գոտու հարցը լուծված էր համարվում, մնում էր դրան ընտելացնել հայկական կողմին:

Անգլիական ներկայացուցչությունը (սկզբում 50 զինվորով) հիմնավորապես Արցախ էր մտել 1918 թ. դեկտեմբերի 18-ին[63]: Եվ սրանից հետո էր, հենց նույն դեկտեմբերի երկրորդ կեսին ու հունվարին, որ Աղդամում, Կարյագինոյում, Թարթառում, Ջաբրայիլում ու Արցախին սահմանակից մյուս շրջաններում թաքնված թուրք սպաներն ադրբեջանական ավազակախմբերի հարձակումները գլխավորելով մարդկային ու նյութական ահռելի վնասներ հասցրին հայկական բնակավայրերին: Հ. Թումյանի գրքում այս ամենի մասին խոսվում է ամենայն մանրամասնությամբ, մեկ առ մեկ նշելով տուժած գյուղերը (Սուս, Մանուկաշեն, Արփա-գյադուկ, Թեքիսար, Խծաբերդ, Խանձաձոր, Սպիտակաշեն, Պետրոսաշեն, Ղարաղշլաղ, Դողուշչի, Ճարտար), նրանց կրած վնասներն ու կորուստները[64]:

Թումյանն այս ամենի վկան ու վերապատմողն է: Ասում է. «Հայերի բողոքներն ադրբեջանական ու տաճկական միացյալ զինված ուժերի հարձակումների առթիվ ամենանվազագույն ուշադրության իսկ չէին արժանանում անգլիական հրամանատարության կողմից: Գեներալ Թոմսոնը ոչ մի միջոց ձեռք չէր առնում ստիպելու Ադրբեջանի կառավարությանը, որ վերջ դնի հայերի սպանություններին ու գյուղերի ավերումներին: Մինչդեռ հայերի դեմ Ադրբեջանի բերբերած միտումնավոր ու ստահոդ ամեն մի գանգատ արժանանում էր հիվանդագին ուշադրության, նույն անգլիական հրամանատարության համար առիթ էր դառնում հայերի հասցեին ուղղելու անհամար հանդիմանություններ ու սպառնալիքներ»[65]:

1919 թ. հունվարի 15-ին Ադրբեջանի կառավարությունը, իհարկե, ո՛չ առանց գեներալ Թոմսոնի համաձայնության, Արցախի ու Զանգեզուրի գեներալ-նահանգապետ էր նշանակել բժիշկ Խոսրով-բեկ Սուլթանովին, որը նախընթացին Արցախի կողմերում հայտնի է եղել իր հակահայկական ջարդարարական գործերով, իսկ առհասարակ երիտթուրքերի գործակալ էր Անդրկովկասում[66]:

Արցախն ընդվզում է բացահայտորեն վայրենի այս գործարքի դեմ: Հունվարի 26-ին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Սիրական Տիգրանյանն իր բողոքի ու մերժումի գիրն է ուղարկում Ադրբեջանի կառավարությանը. ո՞նց թե հայաբնակ ու հայկական անկախ լեռնաստանում գեներալ-նահանգապետ պիտի նստի Ադրբեջանի ներկայացուցիչը, այդ ո՞ր օրենքով, ի՞նչ իրավունքով... Եվ Ադրբեջանի կառավարությունն այս գիրը համարում է ադրբեջանական իշխանությունների հեղինակության դեմ ոտնձգություն, Ադրբեջանի «ներքին գործերին միջամտելու փորձ»:

---

[63] «Մշակ», 1919, մարտի 2:
[64] Հ. Թումյան, Բ, էջ 10-13:
[65] Հ. Թումյան, էջ 13:
[66] Խոսրով-բեկ Սուլթանովը Հաջի-Սամոյի (այժմյան Լաչինի շրջան) Սինջանի գյուղի քրդերից էր, կալվածատեր, մուսավաթականների ու օսմանյան թուրքերի հակահայկական մի շարք ջարդերի, հատկապես Բաքվի եռօրյա կոտորածի կազմակերպիչներից մեկը: Նրա եղբայր Սելիմ-բեկն էլ Հաջի-Սամոյի մուսավաթական զորախմբի ղեկավարն էր և հայտնի էր Արցախի ու Զանգեզուրի գյուղերի ավազակային ասպատակություններով:

Միաժամանակ Երևանում ստանում են նաև գեներալ Թոմսոնի մի գրությունը, որը փաստորեն պատասխան էր տալիս Տիգրանյանի բողոքին: Այնտեղ գրված էր. «Դոկտոր Սուլթանովը գնում է Շուշի իբրև ընդհանուր նահանգապետ Զանգեզուրի, Շուշիի և Ղարաբաղի շրջանների: Նա այդ անում է՝ առանց դնելու որևէ պահանջ Ադրբեջանի ապագա վարչության վերաբերմամբ: Նա գնում է այնտեղ միայն օրենքը և կարգը պահպանելու համար»[67]:

Ահա այսպե՛ս, զինկորն մերկ ու գռեհիկ. հակահայ ջարդարարը պիտի հայկական երկու մարզերում օրենք ու կարգ պահպանի:

Եվ նրան թե ու թիկունք պիտի լիներ անգլիական միսիան՝ մայոր Սաբ-Մոզլիի գլխավորությամբ, որը Սուլթանովի ժամանելուն պես հրովարտակ հրապարակեց՝ հայտարարելով, թե «գեներալ-նահանգապետության ու նրա մարմինների կողմից տրվող ամեն տեսակ հրամաններն ու հանձնարարությունները պետք է անհապաղ իրականացվեն նահանգի բոլոր բնակիչների կողմից: Յուրաքանչյուր դիմադրություն կխափանվի բրիտանական հրամանատարության կողմից ամենայն վճռականությամբ»[68]:

Մինչդեռ հենց այդ ժամանակ գեներալ Քորին՝ Մեծ Բրիտանիայի պատվիրակության անդամը, Փարիզի վեհաժողովում հայտարարում էր, թե մինչև Լեռնային Ղարաբաղի, իբրև վիճելի շրջանի, հարցը չլուծվի Փարիզի վեհաժողովում, այնտեղ միայն հայկական Ազգային խորհուրդը կլինի տիրական և ի՛նքը կլուծի մարզին վերաբերող ամեն տեսակ հարցեր[69]:

Մարզի օրինական ժողովրդական կառավարության, նրա Ազգային խորհրդի ու տեղական մյուս մարմինների դեմ անգլիական միսիան բացահայտ կռվի է մտել Շուշի ժամանելու առաջին իսկ օրից: Իսկ Սուլթանովի պաշտոնավարությունն էլ եկավ այդ կռիվը դարձնելու առավել ստոր ու խարդավալիգ:

Բրիտանիայի հրամանատարներից մեկն էլ, առանց ամաչելու, հայտարարել էր, թե «Անգլիական հրամանատարությունը, գեներալ-նահանգապետի իշխանության օրինականությունն ընդունելով և աջակցելով նրա ամրապնդմանն ու տարածմանը, հսկայական ծառայություն է մատուցում Ադրբեջանի մուսավաթական կառավարությանը Ղարաբաղի հարցում»[70]:

Սա, իհարկե, այն հայտարարություններից է, որ արվում է՝ ստացված կանխավճարը փակելու համար կամ էլ հնչում է իբրև վարձատրության պահանջ: Երկուսն էլ շատ էին կիրառվում այն օրերի անգլո-ադրբեջանական փոխհարաբերություններում:

Մաք-Մոզոնի (կան այլ տարբերակներ ևս՝ Մակ-Մոզոն, Մաք Մեսըն ևն)աջ թևն էր հանդիսանում մի ռուս՝ Մատենիկով ազգանունով, թաթարական «վայրի դիվիզիայի» նախկին սպա, որն, իբր, անգլիական միսիայի թարգմանիչն էր, սակայն հիմնականում մուսավաթական կառավարությանն էր ծառայում իբրև լրտես ու հակահայկական դավադրությունների կազմակերպիչ: Սրա զորությունը մեծացավ նրանով, որ շատ շուտով կարողացավ ծախու սրիկաներ հավաքագրել նաև հայերի միջից (Սոկրատ-բեկ Մելիք-Շահնազարյան, միլիցապետ Միքայելյան ևք)[71]:

Հունվարի 15-ին Արցախի հայոց Ազգային խորհուրդը Բաքվի հայոց ազգային խորհրդին (թերևս նաև Հայաստանի Հանրապետության կառավարությանը) մի ընդարձակ զեկույց էր ներկայացրել, որով փորձում էր պատկերացում տալ անգլիական նվաճողների տիրապետության բերած աղետների մասին: Թե ինչպե՞ս արցախահայությունը կտրված է Հայաստանից և առհասարակ արտաքին աշխարհից: Թե ինչպե՞ս փակ են ամեն տեսակ ճանապարհները (Եվլախ–Զարուդ-Գորիս), հեռագրական կապ չկա, նույնիսկ ձորերով ու

---

[67] Ս. Վրացյան, էջ 312:
[68] «Компартия-организатор...», էջ 315:
[69] Տե՛ս ՀՊՊԿԱ, ֆ. 200, g. 309, թ. 85:
[70] ՄԼԻ Հայկական բաժանմունքի արխիվ, ֆ. 4033, գ. 461, թ. 171:
[71] Հ. Թումյան, Բ, էջ 11—12, ծան. 1:

անտառներով անցնող կածանները բռնված են մուսավաթական ավազակախմբերով: Թե ինչպե՞ս Բաքվի թերթերը տպագրում են ստահոդ հազար տեսակ լուրեր արցախահայերի ինչ-որ ապստամբության մասին, և «մեզանից ոչ ոք հնարավորություն չունի հերքելու որովհետև հեռագրատները նրանց (թուրքերի) ձեռքին են, և մեր բողոքը տեղ չի հասնում:

...Մինչև օրս մենք պաշտպանվել ենք տաճկական զորքերի ու տեղական մահմեդականների դեմ և ինքներս մեզ կառավարել ենք՝ առանց դրսից որևէ օգնություն ստանալու: Մի ամբողջ տարի մենք տարել ենք հազար ու մի տանջանք, բայց ոչ ոքի թույլ չենք տվել բռնանալու մեր ազատության ու անկախության վրա:

...Որպեսզի ավելի պարզ լինի մեր ներկա վիճակը, կարևոր ենք համարում հայտնել, որ հունվարի 5-ից սկսած Ադրբեջանի զորքերը, Ղարաբաղում մնացած թուրք ասկյարները և մուսուլմանական զանազան խմբեր զինվորական շտաբ են կազմակերպել Աղդամում՝ տաճիկ սպաների գլխավորությամբ, բերել են տվել մեծ քանակությամբ ռազմամթերք, թնդանոթներ, գնդացիրներ, մի քանի հազար մարդուց բաղկացած բանակն էլ ուղարկել են Զարուղի ձորը և գրավելով Ասկերանը՝ նորից զորք են մտցրել Խանքենդի:

Այս ամենից երևում է, որ մեզ շրջապատում են թե ճակատից և թե թիկունքից... Իսկ մենք, ճշտությամբ կատարելով անգլիական միսիայի պահանջները, ոչ մի միջոց չենք ձեռնարկում դրա առաջն առնելու համար, ուրիշ խոսքով՝ մենք մեր ձեռքով փորում ենք Ղարաբաղի հայության գերեզմանը»[72]:

1919 թ. փետրվարի կեսերին Շուշվա Թեմական դպրոցի դահլիճում տեղի ունեցավ Արցախի հայության չորրորդ համագումարը[73]: Այն վերստին պիտի պատասխան տար անգլիացիների ու Սուլթանովի կտրական առաջարկին՝ ընդունելու Ադրբեջանի տիրապետությունը, ինչպես նաև որոշելու այն միջոցառումները, որոնց իրականացումն ապահովելու էր մարզի անկախ ու ինքնուրույն գոյությունը:

Ընդունվեցին մի շարք որոշումներ, որոնց մեջ էլ երկար ու տաք բանավեճի արդյունք՝ հետևյալ որոշում-բանաձևը.

«ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ԲԱՆԱՁԵՎԸ ՂԱՐԱԲԱՂԸ ԱԴՐԲԵՋԱՆԻՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՓՈՐՁԵՐԻ ՄԱՍԻՆ

Կանգնած լինելով ժողովրդի ինքնորոշման սկզբունքի վրա՝ Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը հարգանքով է վերաբերվում դեպի հարևան թուրք ժողովրդի ինքնորոշման սկզբունքը և դրա հետ միաժամանակ ամբողջ աշխարհի առաջ վճռականորեն բողոքում է ադրբեջանական կառավարության փորձերի դեմ, որոնցով նա ցանկանում է ոչնչացնել այդ սկզբունքը հայկական Ղարաբաղի նկատմամբ, որն իր վրա չի ընդունում և երբեք չի ընդունելու Ադրբեջանի իշխանությունը: Համագումարը պնդում է իր իրավունքների պաշտպանության վրա՝ թե՛ Կովկասում գտնված դաշնակից պետությունների ներկայացուցիչների և թե՛ Եվրոպայի խաղաղարար համագումարի առաջ:

Այս բողոքն ուղարկվում է նաև Բաքվի դաշնակից պետությունների հրամանատարությանը, գեներալ Թոմսոնին, Ադրբեջանի կառավարությանը և Եվրոպայի խաղաղարար համագումարի հայ պատգամավորներին:

Համագումարի նախագահ՝ Ա. Շահնազարյան

---

[72] ՀՊՊԿԱ, ֆ. 223, գործ 86, թ. 36, Հ. Թումյան, Բ, էջ 13—16:

[73] «Մշակը» (1919, մարտի 16, հ. 38) համագումարը տեղի ունեցած է համարում փետրվարի 12—21-ը, Ս. Վրացյանը՝ ևս (էջ 312), Գ. Հովհաննիսյանը (էջ 101)՝ փետր. 19-ից, իսկ Հ. Թումյանը (Բ, էջ 10—20)՝ փետրվարի 10-ից:

քարտուղար՝ Առստամյան»[74]:

Փետրվարի 20-ին համագումարն ընտրեց Ազգային խորհուրդ՝ նրան վստահելով մարզի հայության ճակատագրի տնօրինությունը[75]:

Համագումարի ընտրած Ազգային խորհուրդն ընդամենը երկու օրական էր, որ Մաք-Մոգգիից ստացավ «պաշտոնական հաղորդում» կոչված մի փաստաթուղթ՝ լիքը այսպիսի հանձնարարականներով:

Զանգեզուրի, Շուշու, Ջիվանշիրի և Ջաբրայիլի ժամանակավոր (sic !!!) գեներալ-նահանգապետ է նշանակված Խոսրով-բեկ Սուլթանովը, որի «քաղաքացիական մասի օգնականը լինելու է հայ: Գեներալ-նահանգապետին կից հիմնվելու է մի խորհուրդ՝ բաղկացած երեք հայերից ու երեք մուսուլմաններից և մի խորհրդականից, որը լինելու է բրիտանական սպաներից մեկը»:

«Զորքերի բոլոր տեղաշարժերը կատարվելու են բրիտանական միսիայի գիտությամբ...»:

«Բրիտանական միսիան անհրաժեշտ է համարում կրկին անգամ հաստատել, որ հիշյալ մարզերի պատկանելությունը այս կամ այն պետական միավորին՝ պիտի որոշվի խաղաղության կոնֆերանսում»:

«Սրանով բրիտանական միսիան հայտարարում է, որ գեներալ-նահանգապետության ու նրա մարմինների բոլոր հրամաններն անխափան պիտի կատարվեն բոլորի կողմից: Ընդդիմությունը պիտի պատժվի ամենավճռական միջոցներով»:

Հ. Թումյանն ասում է՝ այս թուղթը հայկական ազգային խորհրդին է տրվել որպես նախագիծ և, իբր, պիտի իրավական ուժ ստանար միայն խորհրդի կողմից հաստատվելուց կամ համաձայնության արժանանալուց հետո[76]:

Այսպիսի պայման և կողքին էլ՝ «Ընդդիմությունը պիտի պատժվի ամենավճռական միջոցներով»:

Կամ. գեներալ-նահանգապետն արդեն գործում էր մի ամսից ի վեր... Ճիշտ է, հայերն այդ ամբողջ ընթացքում նրան չէին ընդունել, ցույցեր էին արել նրա ներկայության դեմ, և արենախումը սարսափից երբեք հրապարակ չի ելել, մարդկանց հետ չի հանդիպել, հնարավորություն չի ունեցել որևէ բառ փոխանակելու այն ժողովրդի հետ, որի գլխավոր է նշանակվել օտար պետական մարմնի կողմից, ուրեմն՝ ապօրինաբար:

Եվ հետո. եթե հիշյալ մարզերի պատկանելությունը դեռ չի սահմանված և պիտի որոշվի խաղաղության կոնֆերանսում, ապա Ադրբեջանի կառավարությունն ի՞նչ իրավունքով է նրանց վրա գեներալ-նահանգապետ նշանակում իր ներկայացուցչին: Առավել ևս՝ այդ ինչպե՞ս էր Արցախ-Ղարաբաղը լուծվում «Շուշու, Ջիվանշիրի և Ջաբրայիլի գավառների» մեջ: Մի՞թե քաղաքակիրթ Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչներն այնքան բթացել էին, որ Ղարաբաղի սրտում նստած՝ պիտի անգիտանային այդ երկրի անվան, նրա մեջ մտնող գավառների, սրանց բնիկ հայ բնակչության հանգամանքներից: Թե՞ ռուսափաշական

---

[74] «Արև» (Բաքու), 1919, h. 17:

[75] Հ. Թումյանը գտնում էր, թե սխալ է եղել Ազգային խորհուրդ ընտրելը, քանի որ դա կառավարություն չէր կամ պետական իշխանություն, այլ «ազգային ներ կայացուցչական մարմին», որը չպիտի կարողանար տնօրինել ճակատագրական ժամանակաշրջանն ապրող արցախահայության բախտը: Նրա կարծիքով՝ այդ ժամանակ նախընտրելի պիտի լիներ ստեղծել թեկուզ ժամանակավոր կառավարություն, որը, ինչպես նախորդ տարում (1918 թ.), վճռական ու համարձակ գործունեությամբ երկիրը դուրս կբերեր վերահաս փորձանքներից՝ «պահպանելով և էլ ավելի բարձրացնելով հայկական Ղարաբաղի դիրքն ու հմայքը» (Բ, էջ 21--22):
Այդպես էլ չկարողացա հասկանալ, թե ո՛վ կամ ի՞նչը պիտի խանգարեր, որ Ազգային խորհուրդը կատարեր այդ նույն, օրինակ և ժամանակավոր նշանակության դերը:

[76] Հ. Թումյան, Բ, էջ 22—24:

կառավարությունն ու Թումանը որոշել էին հարցերն այնպես լուծել, որ մինչև Խաղաղության Կոնֆերանսում ձայն բարձրացնելը հիմնահարցն այլևս որևէ քննության կարիք չունենա:

Ազգային խորհուրդը հանգամանորեն վերլուծեց Մաք-Մոգգիի բերած թուղթը, նրանց տվեց մի պատասխան, որ միայն այն ըմբոստ լեռնաստանին կվայելի: Ահա այն.

«Շուշու Մեծ Բրիտանական միսիային»

Ղարաբաղի հայության Ազգային խորհուրդն իր ամբողջ կազմով, Ղարաբաղի բոլոր շրջանների հրամանատարների հետ, քննելով Ադրբեջանի կառավարության կողմից **Ղարաբաղում գեներալ-նահանգապետ նշանակվելու փաստը**, եկավ այն եզրակացության, որ հայկական Ղարաբաղը չի կարող հաշտվել դրա հետ, որովհետև կախումն **Ադրբեջանի կառավարությունից, ինչպիսի ձևով էլ այն արտահայտվելու լինի**, Ղարաբաղի հայությունը համարում է անընդունելի՝ շնորհիվ այն բռնությունների և իրավունքների ոտնահարման, որոնց պիտի ամենուրեք ենթարկվել է մինչև վերջին ժամանակներս հայությունը Ադրբեջանի կառավարության կողմից ամենուրեք, որտեղ նա կապել է իր վիճակը այդ կառավարության հետ: Հայկական Ղարաբաղն ամբողջ աշխարհին ցույց է տվել, որ նա փաստորեն չի ճանաչել և չի ճանաչում իր սահմաններում Ադրբեջանի կառավարության իշխանությունը, ինչպես այդ վճռեց օրերս Ղարաբաղի հայության համագումարը[77]:

Եվ այսքանից հետո անում են քաղաքավարական մի զիջում. եթե, կուզեք, նշանակեցեք անգլիացի գեներալ-նահանգապետ, դա կհանդուրժենք և կսպասենք Խաղաղության խորհրդաժողովի որոշմանը[78]:

Անհնար է ասել ավելի պարզ, ավելի վճռական, մանավանդ առավել անփոփոխելի ու հավերժական, ասել՝ ահա այսպես, մենք վճռել ենք հանուն բոլոր ժամանակների ու բոլոր հանգամանքների համար. արցախահայությունն իր Ազգային խորհրդի ու զինվորական գործի ղեկավարների անունից մերժում է ո՛չ միայն Խոսրով-բեկ Սուլթանովի գեներալ-նահանգապետությունը, այլև «առհասարակ կախումն Ադրբեջանի կառավարությունից, ինչպիսի ձևով էլ այն արտահայտվելու լինի»:

Ազգային խորհրդից մերժված Մաք-Մոգգին դիմեց Արցախյան զորքերի հրամանատարներին՝ հուսալով, թե սրանք համաձայնության կգան: Սակայն այստեղ ևս կտրական մերժման արժանացավ:

Սրանից հետո էր, որ Ազգային խորհուրդը, լրջորեն քննելով իրավիճակը, ազգային գեներալ-նահանգապետության մի նոր տարբերակ ներկայացրեց սպային: Այս տարբերակը պիտի ապահովեր «հայկական Ղարաբաղի ինքնավարությունը»՝ բրիտանական միսիայի հսկողության ներքո: Ղեկավար մարմինն է լինելու «Մարզային խորհուրդը»՝ բաղկացած յոթ հայերից ու երեք մուսուլմաններից: Խորհրդի մեջ պիտի մտներ նաև բրիտանական միսիայի Շուշվա ներկայացուցիչը՝ վետոյի իրավունքով:

Այս տարբերակն ուղարկվում է նաև Բաքու՝ Թոմսոնին, մի նամակ-բացատրագրի հետ, որն ամենայն արդարամտությամբ ներկայացնում էր Արցախի հայության վիճակը, դատապարտում անգլիական միության հովանավորությունը թրքության հանդեպ: «Ընդառաջելով ձեր դիմումին, — գրված է նամակում, — ...Ղարաբաղի հայությունը հրաժարվեց ռազմական գործողություններից, զորաշարժերից: Սակայն, հակառակ ձեր դիմումի, դաշնակից միության գալուց հետո Ադրբեջանի կառավարությունն իր զորքերը կենտրոնացրել է կարևոր ռազմագիտական կետերում՝ Ասկերանում, Խանքենդում,

[77] ՀԿՊԿԱ, ֆ. 252, g. 1, գ. 20, թ. 4:
[78] Անդ, թ. 4—5:

Զաբուղում, Շուշիում և Կարյագինոյում: Բացի դրանից, Ղարաբաղի սահմաններում շարունակում են գործել թուրքական ջոկատներ՝ տաճիկ սպաների ղեկավարությամբ:

Այդ ամենն ապացույց է, որ Ադրբեջանը Ղարաբաղի դեմ ագրեսիա է նախապատրաստում...»[79]:

Այս բողոքն էլ անուշադրության մատնվեց, որովհետև Թոմսոնի համար նորություն չէր Ադրբեջանի ռազմական նախապատրաստությունը Ղարաբաղի դեմ: Նրան հայտնի էին նույնիսկ թուրք հրամանատարների ներկայությունը ու գործունեությունն Ադրբեջանում, որ նշանակում էր Մուդրոսի դաշնագրի կոպիտ խախտում: Հ. Թումյանը նշում է Թոմսոնի մի սանձարձակ գործարքն օսմանյան բարձրաստիճան զորական Նուրի փաշայի հետ. նրան էր հանձնել Բաքվում կարգ պահպանելու խնդիրը[80]:

Մուսավաթական կառավարության հեռահար նպատակներին ընդառաջելով՝ Թոմսոնն ու Մաք-Մոդընը համաձայն էին, որ Արցախը կապվի ոչ թե Զանգեզուրի, այլ, այսպես կոչված, դաշտային Ղարաբաղի հետ: Այդ էր պատճառը, որ Մաք-Մոդընի նախագծի մեջ լեռնային Ղարաբաղը դարձել էր «Շուշվա գավառ», և նրան էր կցվել նաև Ջաբրայիլի գավառը:

Ո՞րն էր ադրբեջանա-անգլիական այս աջար-սանդալի նպատակը. «ամրապնդել» Արցախ-Ղարաբաղի ու դաշտային Ղարաբաղի տնտեսական կապերը, որովհետև, իբր, նրանք առանց այդ կապերի ու փոխօգնության չէին կարող գոյություն ունենալ: Սուտ ու փուտ մի կարծիք, որի ետև թաքնված էր գերնպատակը՝ մեկ վարչական միավորի մեջ առնել Արցախն ու դաշտային Ղարաբաղը, ուր այլևս ոչ մի խոսք չէր կարող լինել բնակչության հայ մեծամասնության և ազգարական մյուս առանձնահատկությունների, դրանց հուշած քաղաքական-իրավական արտոնությունների մասին:

Թոմսոնին ուղղված գրության մեջ Ազգային խորհուրդը կտրականապես մերժում էր նաև այդ բռնակցումը, որովհետև «...այդպիսի խառը վարչություն՝ ի մի ձուլելով հայկական ու մուսավաթական (դաշտային — Բ. ՈՒ.) Ղարաբաղի երկու տարբեր մարզերը, տեղական կյանքի ներկայումս ստեղծված իրական պայմաններում միասնորեն անհնարին կլինի և յուրաքանչյուր քայլում պիտի առաջ բերի անցանկալի շփումներ ու տարաձայնություններ»[81]:

Արցախը համառորեն իր ինքնավարությունն էր պաշտպանում և պահանջում էր նրա ընդունումն ու հաստատումը: Իսկ անգլիական դրածոն ու նրան գնած մուսավաթականներն ամեն միջոց գործադրում էին ոչնչացնելու համար և՛ այդ ինքնավարությունը, և՛ ինքնավարության հիմքն ու առանցքը հանդիսացող տեղաբնիկ հոծ հայությունը: Եվ որովհետև գիտեին, որ Արցախի համառության ու պայքարի ոգին առավել ամրապնդում են նրա մտավորական ղեկավարները, փորձեցին մարզը զրկել այդ ամրապնդող ուժից, շարքից հանել ղեկավարներին: Ի՞նչ մի դժվար բան էր. Խոսրով-բեկ Սուլթանովին կհանձնարարեն կեղծել ու մի պատրվակ հորինել՝ կալանավորելու Ազգային խորհրդի անդամներին: Սկզբում նրանց, ապա և... Սակայն մեկ էլ մտածեցին, որ Շուշիում դա մեծ աղմուկ ու բողոքություն կստեղծի, և որոշեցին հրավիրել Բաքու, իբր գեներալ Թոմսոնի հետ կարևոր բանակցություն վարելու համար: Վեց հոգի պիտի գնային, և նրանց մեջ՝ անպայման Ազգային խորհրդի նախագահն ու իր երկու տեղակալները[82]:

Ազգային խորհրդում կանխազգացին նախապատրաստվող խարդավանքը և Մաք-Մոդընին ներկայացրին վեց հոգու մի ցուցակ, որի մեջ բացակայում էին Թոմսոնի պահանջած մարդկանց անունները: Այն ժամանակ մեջտեղից վերացավ «կարևոր բանակցության» կարիքը:

Չէր կարելի չնկատել, որ մուսավաթականները բրիտանական միսիայի ձեռքով մեծ աղետ են նախապատրաստում Արցախի համար, և Ազգային խորհուրդը հիմա էլ փորձեց ստուգել

---

[79] ՀՊԿԿԱ, ֆ. 252, գ. 1, ց. 20, թ. 6—7:
[80] Հ. Թումյան, Բ, 29, տե՛ս նաև՝ ՀՊԿԿԱ, ֆ. 200, գ. 691, թ. 1—2:
[81] ՀՊԿԿԱ, ֆ. 252, գ. 1, ց. 20, թ. 6—7:
[82] Անդ, թ. 8—10:

Դաշնակիցների կովկասյան հրամանատարության խիղճը: 1919 թ. մարտի 13-ին Թիֆլիսի հայոց Ազգային խորհրդին մի նամակ ուղարկեց՝ հաղորդելով արցախահայության դեմ բրիտանական միսիայի գործած անիրավությունները («անգլիացիները կարծեք եկել են մեր մինչև այժմ պահպանված անկախությունն ու ազատությունը ոտնահարելու և բռնի կերպով մեզ ենթարկելու Ադրբեջանին»)[83], և խնդրելով, որ Արցախի հարցը քննության դրվի Դաշնակիցների՝ Թիֆլիսում նստող կովկասյանյան գլխավոր հրամանատարության նիստում՝ ձեռնարկելու արցախահայության իրավունքների պաշտպանող միջոցներ:

Թիֆլիսում Ղարաբաղցիների հայրենակցական միությունը և հայկական մյուս կազմակերպությունները բուռն գործունեություն ծավալեցին հօգուտ Արցախի հարցի արդար լուծման: Սակայն նրանց խնդիրներն ու բողոքի թղթերը՝ ուղղված ֆրանսիական, ամերիկյան ու իտալական ներկայացուցչություններին, հենց իրեն՝ Թոմսոնին, ոչ մի արդյունք չտվին, որովհետև Դաշնակիցների գլխավոր հրամանատարության մեջ վճռականը Մեծ Բրիտանիայի ներկայացուցչության ձայնն էր, իսկ սա էլ պաշտպանում էր Թոմսոնի դիրքը, որ մուսուլմանասիրական էր, ավելի ճիշտ՝ կաշառակերական, նախընթացին հիմնավորապես ու մեկընդմիշտ կազմավորված:

Արցախի հարցն արդեն բռնել էր համաանդրկովկասյան մթնոլորտը, և անհարմար կլիներ, եթե նրանով չզբաղվեր նաև Հայաստանի Հանրապետությունը, մանավանդ որ այդ ժամանակ կառավարության գլուխն էլ Ալեքսանդր Խատիսյանն էր, որը երեփ չպիտի մոռացած լիներ, որ մեկ տարի առաջ Բաթումում թեթև ձեռքով ինքն էր այդ մարզը թուրքերին զիջել, և ահա՛, հայ ժողովուրդը չի կարողանում դուրս գալ Բաթումում փորված այդ փոսից:

Երևան էր գնացել Թոմսոնը, և Հայաստանի վարչապետ Խատիսյանի մոտ մարտի 23-ին խորհրդակցություն էր հրավիրված Արցախի հարցով:

Խատիսյանն սկզբում իր իմացածի սահմաններում տալիս է մարզի հայության անմխիթարական վիճակի պատկերը, ապա և հանրապետության կառավարության դիրքորոշումը՝ պահանջելով օգնել, որպեսզի հիմնահարցն արդար լուծում ստանա, և հայ ժողովրդի այդ հնավուրց, ազատասեր հատվածը տեր դառնա իր անկախությանը: Նա այս առթիվ Թոմսոնին է հանձնում Հայաստանի հանրապետության «դրույթները»:

Սակայն խոսում է Թոմսոնը և այնպես է չքմեղանում, Արցախի նկատմամբ գործադրած իրենց միջոցառումներն ու քաղաքականությունը այնպես օրինական ու խրախուսելի է ներկայացնում, որ իրողությանն անծանոթ ունկնդրին կարող էր թվալ, թե այդ մարզում թագավորում է քրիստոնեական բարեսրտությունը... Նենգավոր ու ծախու այդ դիվանագետի ճառում Խոսրով-բեկ Սուլթանովն անգամ «դարձել էր» հայասեր ու արդարամիտ մի գործիչ, որը քուն և հանգիստ չուներ հայ գաղթականներին օգնելու, նրանց կյանքը կարգավորելու հոգս ու ցավից:

Թոմսոնը հաջողությամբ ի չիք դարձրեց նաև Խատիսյանի այն մեղադրանքները, որոնք վերաբերում էին ադրբեջանական զորաշարժերին Արցախի սահմանների վրա, Խանքենդում, Ասկերանում ու Շուշիում իրագործած զինվորական կուտակումներին: Դրանք բացատրելով որպես Անդրանիկի վախից կատարված քայլեր՝ Թոմսոնը փորձում էր ներկաներին լարել Անդրանիկի դեմ՝ հավանաբար մտածելով, որ ժողովրդական մեծ հերոսի բացակայությամբ ինքն այլևս ոչ մի դժվարություն չէր ունենա կատարելու իր խնդիրը՝ Արցախն ու Զանգեզուրը դնելու Ադրբեջանի ենթակայության տակ:

Խատիսյանն իր վերջին խոսքում այնքան քաջություն ունեցավ, որ հայտարարեց, թե Թոմսոնի խոսքերն «ընդունելով ի գիտություն», Հայաստանի կառավարությունը Ղարաբաղի հարցում պաշտպանում է իր տեսակետը:

---

[83] Անդ, թ. 15—16:

Հավանաբար այս «քննարկումը» ևս չէր կարող որևէ դրական նշանակություն ունենալ Արցախի հիմնահարցի լուծման ճանապարհին:

Մի քանի օր հետո Թոմսոնը կարգվեց Անդրկովկասում բրիտանական գլխավոր հրամանատար: Նրա փոխարեն Բաքու գնաց գնդապետ Շատելվորտը, որը գործի անցավ հայերի հանդեպ թոմսոնյան քաղաքականությունն անշեղորեն իրականացնելու ծրագրով: Արցախ հասած նրա առաջին խոսքը 1919 թ. ապրիլի 3-ի հրամանն էր, որով Շուշու, Զանգեզուրի, Ջաբրայիլի ու Ջիվանշիրի հայ բնակչությունից պահանջում էր անմռունչ ենթարկվել գեներալ-նահանգապետ Սուլթանովին:

Լեոն լավ էր ասել, թե կաշառված անգլիացիների համար այն օրերին անգիր արված մի կարգախոս կար՝ կա՛մ Խոսրով-բեկ Սուլթանով, կա՛մ ջրհեղեղ:

Արցախահայությունը Շատելվորտի հրամանը ևս համարեց դատարկ ու անարժեք խոսք: Շուշվա հայությունը, գավառի մեծաթիվ ներկայացուցիչների հետ միասին, բողոքի ցույց կազմակերպեց քաղաքում: Անգլիական միսիայի շենքի մոտ ելույթ ունեցողները պահանջեցին Սուլթանովին հեռացնել Արցախից և վերջ տալ անգլիական հովանավորությամբ կազմակերպվող հակահայկական վայրագություններին: Իսկ Հայաստանի Հանրապետության արտաքին գործոց նախարարն այս առթիվ հայտարարեց, թե «Հայաստանի կառավարության կարծիքն ու որոշումը մնում են անփոփոխ, այսինքն՝ Զանգեզուրի ու Ղարաբաղի հայ բնակչությանը չի կարելի ստիպել ենթարկվելու Ադրբեջանին»[84]:

Ըստ երևույթին այդ Շատելվորտն ավելի «գործնական» մարդ էր, քան նախորդը՝ Թոմսոնը. իր հրամանի ետևից գնաց-հասավ Շուշի և ստիպեց, որ մարզի հայությունն անմռունչ կատարի իր պահանջը՝ ենթարկվի Սուլթանովին, նրա միջոցով էլ՝ Ադրբեջանին:

Ապրիլի 23-ին, ո՛չ առանց Շատելվորտի հարկադրանքի, Շուշիում բացվեց մարզի հայության հինգերորդ համագումարը, որին մասնակցեցին 69 պատգամավորներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մի խումբ ներկայացուցիչներ:

Առաջին իսկ նիստում ելույթ ունեցավ Շատելվորտը և պահանջեց, որ համագումարն ընդունի Ադրբեջանի կազմած և անգլիական միսիայի կողմից հավանության արժանացած նախագիծը Ղարաբաղի վարչական կազմակերպման վերաբերյալ: Ուրիշ խոսքով՝ Արցախն իր վիզը պիտի դներ Ադրբեջանի լծի տակ և այդ օրվանից դառնար նրա հպատակը: Խնդիրը դյուրացնելու համար անգլիական սպան հայտարարեց նաև, թե Հայաստանի կառավարությունն էլ արդեն տվել է իր համաձայնությունը, որպեսզի Արցախը համարվի Ադրբեջանի մաս:

Հայաստանի Հանրապետության երկու ներկայացուցիչներ՝ Միքայել (Միշա) Արզումանյանն ու Հովսեփ Արղությանը, որոնք ներկա էին համագումարին, ելույթ ունեցան և տեղնուտեղը մերկացրին այդ հերյուրանքը[85]:

Շատելվորտի բերած ծրագիրն ուրիշ բան չէր, քան այն գրությունը, որ դեռևս փետրվարին Թոմսոնն էր ջանում փաթաթել Արցախի վզին: Համագումարն այն քննեց ամենայն մանրամասներով և ընդունեց մի ընդարձակ որոշում, որից և քաղում եմ նրա վճռական մասը.

«Ղարաբաղի հայության 5-րդ համագումարը, 1919 թ. ապրիլի 23-ին, լսելով անգլիական հրամանատարության ներկայացուցիչ գնդապետ Շատելվորտի առաջարկությունը

---

[84] ՀՊՊԿԱ, ֆ. 200, g. 612, թ. 68:

[85] Ա. Իշխանյանը գրել է, թե «Մ. Արզումանյանին Շատելվորտը առաջարկում է գրել Հայաստանի Հանրապետության կառավարությունը և համոզել վերջինիս՝ ժամանակավորապես ընդունելու Ադրբեջանի գերիշխանությունը Ղարաբաղում, մինչև սահմանների ճշտումը Վերսալի վեհաժողովում, բայց կտրական մերժում է ստանում» (Ե. Իշխանյան, «Դեպքերը Ղարաբաղում», «Հայրենիք», 1933, թ. 12, էջ 123):

Ղարաբաղի ժամանակավոր վարչական կազմակերպության մասին և քննելով այդ հարցն ապրիլի 24-ին իր պաշտոնական նիստում, որոշեց.

...Համագումարն անընդունելի է համարում ամեն մի վարչական ծրագիր, որը որևէ կապ կհաստատի Ադրբեջանի հետ, իսկ այդպիսի ծրագրի բռնի գործադրությունը, համագումարի կարծիքով, լուրջ ազգամիջյան կռիվներ ու արյունահեղություն կառաջացնի, որի համար Ղարաբաղի հայության հինգերորդ համագումարը ոչ մի դեպքում չի կարող պատասխանատու լինել»[86]:

Հ. Թումյանը տեղեկացնում է նաև, որ ապրիլի 25-ին Խոսրով-բեկ Սուլթանովը մի գրությամբ դիմել էր համագումարին, որպեսզի համատեղ, այսինքն ինքն ու հայոց համագումարը «միասին քննեն մի քանի հարցեր»: Առանց իմանալու էլ, թե ինչ հարցերի մասին է սուլտ-նահանգապետի խոսքը, համագումարը մերժեց նրա առաջարկը նկատի ունենալով արցախահայության համար այդ ժամանակ անզիջելի դարձած սկզբունքը՝ ո'չ մի առնչություն Ադրբեջանի հետ[87]:

Շատելվորտն էլ համագումարին հանձնարարեց քննության առնել դաշտային Ադրբեջանից սար բարձրացող քոչի հարցը և երաշխավորություն տալ, որ խաշնարածների երթուղարձը լինելու է անվտանգ:

Համագումարն այդ հարցի առիթով վճիռ հանեց պայմաններով նախ, որպեսզի քոչվորներն այլևս զինված չլինեն, ապա և ամենակարևորը ճանապարհին կատարած ամեն մի զանցառության, մանավանդ գողության համար պատասխանատվության ենթարկվեն...[88]:

Շատելվորտը կատաղած էր այդ պայմանների դեմ, սակայն ոչինչ անել չէր կարող. համագումարն անդրդվելի էր:

Շուշիում վարկաբեկիչ պարտություն կրելով՝ անգլիական սպան ուղևորվեց Գորիս: Հույս ուներ այնտեղ պատշաճ կարգ ստեղծել և դաս տալ բրիտանական միսիայի հանձնարարականներն արհամարհող զանգեզուրցիներին:

Ասեմ, որ Շատելվորտի ժամանումից մի քանի շաբաթ առաջ Զանգեզուրի քաղաքական կյանքում էական փոփոխություններ էին կատարվել: Չեզոք գոտի հայտարարված Լեռնահայաստանի (Զանգեզուր-Արցախ) նկատմամբ ծայրահեղորեն երկչոտ հանրապետության կառավարությունը գարնանամուտին վերջապես որոշել էր այնտեղ վճռական քայլեր կատարել:

Երբ Անդրանիկը Զանգեզուրում էր գտնվում, Հայաստանի կառավարությունն այս երկրամասին վերաբերվում էր որպես մի օտար մարմնի: Գեներալի հեռանալուն պես շտապեց այնտեղ մտցնել իր իշխանության ներկայացուցչին. 1919 թ. մարտին Զանգեզուրի ռազմական մարմին ստեղծեց՝ գլխավոր կամ գեներալ-կոմիսար նշանակելով փոխգնդապետ Արսեն Շահմազյանին:

Շահմազյանը փաստորեն Հայաստանի ռազմական ներկայացուցիչն էր՝ կարգված ամբողջ Արցախ-Զանգեզուրի վրա, սակայն, անգլիացիներից երկնչելով, պաշտոնի առաջին մասը չէին բացահայտում: Չնայած դրան, Գորիս հասնելուն պես նոր ղեկավարը ջանաց անմիջապես իր ձեռքը վերցնել երկու մարզերի պաշտպանության ու ինքնապաշտպանության խնդիրը, դեմ կանգնել մուսավաթական կառավարության ու անգլիական միսիայի ոտնձգություններին:

Պահպանվել է Ղարաբաղի հայոց Ազգային խորհրդի մի ընդարձակ նամակ-զեկույցը գեներալ-կոմիսար Ա. Շահմազյանին գրված 1919 թ. մարտի 19-ին: Այնտեղ ըստ հնարավորին ճիշտ գնահատական է տրվում Արցախի ղեկավարության անցյալ

---

[86] Հ. Թումյան, Բ, էջ 39–40:
[87] Անդ, էջ 41:
[88] Հ. Թումյան, Բ, էջ 41–42:

գործունեությանը, իհարկե, մեծ մասամբ նկատի առնելով սայթաքումներն ու սխալները, որոնք ճիշտ գնահատել նշանակում էր նաև ունենալ պատրաստակամություն շտկելու համար: Նամակը խիստ ու ծանր խոսքեր է ասում նաև Հայաստանի (իրավացիորեն կոչված Արարատյան) հանրապետության հասցեին: Ահա այդ խոսքերից մի քանիսը. «...Արարատյան հանրապետությունը հանցավոր ու դատապարտելի անտարբերություն է ցույց տվել այժմ դեպի Ղարաբաղը, որը հայկական բնագավառներից մեկն է, և որի ազգաբնակչության մոտ 90 տոկոսը հայություն է կազմում: Արարատյան հանրապետությունն իր ժամանակին չկարողացավ ըմբռնել մոմենտը և ուղարկել տեղս իր ներկայացուցչին՝ անհրաժեշտ դրամական միջոցներով: Արարատյան հանրապետությունը պետք է ի նկատի ունենար մի հանգամանք, որ առանց դրամական միջոցների անկարելի է ձեռք բերել մի շրջան, որը նրա անմիջական տիրապետությանը չի ենթարկվել զանազան արգելառիթ պայմանների շնորհիվ: Այսօր մենք տեսնում ենք, թե ինչպես Ադրբեջանը փողի միջոցով... տիրում է Ղարաբաղի կենտրոնին, իսկ հետագայում փորձեր կանի ձեռք բերել նաև գավառը...

…«Ադրբեջանական գեներալ-նահանգապետն արգելել է ռոճիկ տալ նրանց, որոնք իր կառավարության իշխանությունը չեն ճանաչում...»:

Խոսելով զինվորության հնարավորություններին, Խորհուրդն իրավացիորեն նշում էր, որ «Ղարաբաղի ռազմիկ ուժերն ընդհանուր ղեկավար չունեն: Շրջանների՝ Դիզակի, Վարանդայի, Խաչենի ու Ջրաբերդի հրամանատարներից և ոչ մեկը չի կարող կենտրոնացնել իր ձեռքում հայ զինվորությունը: ...Արարատյան հանրապետությունը ցայժմ չի ուղարկել տեղս մի ղեկավար ուժ, որի ներկայությունը մեծապես զարկ կտար ժողովրդի համախմբման... Քանի ուշ չէ, պետք է ուղարկել տեղս մի հմուտ, եթե ոչ գեներալ, գոնե գնդապետ, որը կկարողանար սանձ դնել բոլորին: Պիտի միանգամայն համոզված լինենք, որ առանց այդ ղեկավար ուժի անհնարին է միացնել ի մի բոլոր գործուն զինվորական ուժերը: Բոլորիս համար ավելի քան պարզ է, որ մենք մեր ուշադրությունը ներկայումս գերազանցապես պիտի դարձնենք ինքնապաշտպանական գործի վրա, այսինքն երկրի ռեալ ուժերի վրա...»:

Այս ժամանակ, հավանաբար, Անդրանիկ զորավարի հեռանալը դեռևս հայտնի չէր արցախցիներին[89]: Խորհուրդն աղերսում էր, որ նա չհեռանա, որովհետև Ադրբեջանը պատրաստվում է նոր ստորնություններին: Ոչ միայն չհեռանա, այլև մտնի Արցախ՝ «ուշադրություն չդարձնելով անգլիական միսիայի հարկադրանքներին...»:

Դարձյալ կրակ է դնում Արարատյան կառավարության տակ. «Այս բոլորից հետո գալիս ենք ասելու, թե Ղարաբաղը Հայաստանին միացնեք, որը Ղարաբաղի հայության միակ և բուռն ցանկությունն ու նպատակն է, հնարավոր կլինի այն դեպքում, երբ Հայաստանի հանրապետությունը ռեալ միջոցների կդիմի»:

Նամակն ավարտվում է նրանով, ինչով սկսվել էր՝ հորդորով, որ հանրապետությունը գնա այդ վճռական քայլին: Ապա թե ոչ, «եթե պահելու լինի, Ղարաբաղի հայությունը այդ համարելու է դավաճանական ակտ՝ ուղղված հայկական Ղարաբաղի դեմ»[90]:

Փոխգնդապետ գեներալ-կոմիսար Արսեն Շահմազյանն իր ձեռքն էր հավաքել ոչ միայն Զանգեզուրի, այլև Արցախի զինական ուժերի ղեկավարությունը, ստեղծել ամենօրյա սերտ կապ գավառների բոլոր հրամանատարների, Ազգային խորհրդի ու նրա տեղական մարմինների հետ:

Մարտի 31-ին Գորիսում հրավիրված համազանգեզուրյան համագումարը, որին մասնակցում էին նաև Արցախի ներկայացուցիչները, նահանգի Ազգային խորհուրդը ցրեց՝

---

[89] Լեո, Անցյալից, էջ 429. Շատելվորտի Զանգեզուրում հայտնվելուց «սառը անգլիական պատվիրին ականջ դնելով գեներալ Անդրանիկը լքել էր իրան անմխիթար անձնատուր եղած լեռնցի ժողովուրդը և իր զորքի հետ հեռացել էր Զանգեզուրից դեպի Երևան»:

[90] Նամակն ամբողջությամբ հրապարակված է «Գրական թերթի» 1989 թ. հոկտ. 13-ի համարում: Այն խմբագրությանն է տրամադրել Հանրապետության պետական արխիվի նախկին տնօրեն, արժանահիշատակ Վլադիմիր Ղազոյանը:

նրա փոխարեն ընտրելով Զանգեզուր-Արցախյան շրջանային խորհուրդ, որով ասես նվիրագործվեց երկու նահանգների միությունը, և առավել իրական հիմքի վրա դրվեց նրա միացումը Հայաստանին: Խորհրդի մեջ մտան հիմնական անդամներ երկու նահանգներից՝ ներկայացնելով տարբեր կուսակցություններ[91]:

Դեռ Շուշիում տեղեկանալով այս ամենին՝ Շատելվորտը կատաղել-փրփրել էր: Գորիսում արդեն նա դեմ առավ լեռնեցիների ավանդական համառությանը: Երբ հրապարակավ փորձեց մեջտեղ քաշել իր միսիայի սերտած կարգախոսը՝ ընդունել Ադրբեջանի նշանակած նահանգական ղեկավարությունը..., զանգեզուրցիները զինված ցույց տվին նրա ինքնաշարժի շուրջ և քիչ էր մնում ձերբակալեին նրան[92]:

«Շատելվորտը Գորիսում գտավ մի բեռնեկություն, որ ցույց էր տալիս, թե նույնիսկ աշխարհից կտրված այս լեռնաստանում էլ հասկացել են, թե ի՞նչ են անգլիացիները և արդեն զզվում են նրանցից»[93]:

Շատելվորտը մայիսի 3-ին այս ամենի մասին զեկույց-ամբաստանագիր ուղարկեց Թոմսոնին՝ հակաբրիտանական ռազմամոլական մեղադրանքներ բարդելով արցախահայության, նրա Ազգային խորհրդի, Զանգեզուրի ու նրա գեներալ-կոմիսար Շահմազյանի վրա: Զեկույցում դրությունն այնպես էր նկարագրված, թե Ադրբեջանն ու նրա գործակալներն էին օգնության կարոտ, և դաշնակիցների սրազան պարտքը պիտի լինի նրանց պաշտպանել հայոց չարությունից[94]:

Հավանաբար այս զրպարտչական տեղեկություններն էլ նրա համար էին հերյուրված, որպեսզի արդարացվեին հենց նույն Շատելվորտի ու նրա կամակատար Մաք-Մոզոնի մասնակցությամբ իրականացվող ադրբեջանական ռազմական պատրաստությունները, այլև որոշակի գործողություններն Արցախի ու Զանգեզուրի դեմ:

Չի ուշանում և հետևանքը: Ամառնամուտին արդեն Արցախը շրջափակված էր չորս կողմից: Խնոդային բոլոր ելումուտները դրված էին թաթարական զորախմբերի հսկողության տակ: Հայերի դրսի հետ կապվելու, կենցաղային ամենաանհրաժեշտ ապրանքներ գնելու ոչ մի հնարավորություն չունեին: Մահվան սպառնալիքի տակ էր առնված հայերին աղ ու նավթ վաճառող ամեն մի ադրբեջանցի: Շուշիում հայտնի էր դարձել, որ գիշերով մի ադրբեջանցի նավթ էր տվել իր հին հայ քիրվային, և Սուլթանովն անմիջապես նրան կախաղան բարձրացնել տվեց, որպեսզի այդ ահավոր պատիժը դաս դառնա ուրիշների համար:

Արցախի դաշտային մասերում, որոնք սահմանակից էին Աղդամի ու Կարյագինոյի գավառներին, «հայ գյուղացիները դաշտային աշխատանքի դուրս գալ չէին կարող, որովհետև մուսուլմանական զինված խմբերը շրջում էին սահմանների վրա և ահաբեկում այգիներում աշխատող գյուղացիներին»[95].

Հունիսի 4-ին Շուշվա ադրբեջանական թաղից հարձակվեցին հայկական թաղի մոտիկ տների ու արհեստանոցների վրա: Ապա հայտնի դարձավ, որ ադրբեջանական թաղում աշխատող հայ 17 արհեստավորներ տանջամահ են արվել:

Այդ վայրենի գործողություններին մասնակցում էին նաև բրիտանական միսիայի հնդիկ մուսուլման զինվորները, այս էլ՝ Մաք-Մոզոնի իմացությամբ:

Երբ Արցախի թեմի առաջնորդ Վահան եպիսկոպոս Տեր-Գրիգորյանը Մաք-Մոզոնին բողոքեց իր հոտի նկատմամբ գործադրվող վայրագությունների դեմ, անգլիացի սպան պահանջեց, որ իրեն ներկայանա Ազգային խորհրդի նախագահ Եղիշե Իշխանյանը, ռազմական գործերի ղեկավար Հարություն Թումյանը և Աստվածատուր Ավետիսյանը:

---

[91] Ս. Վրացյան, էջ 331:
[92] Անդ, էջ 330:
[93] Լեո, Անցյալից, էջ 425:
[94] Հ. Թումյան, Բ, էջ 42—44:
[95] Հ. Թումյան, հ. 45—46:

«...Հունիսի 5-ին ...«պիկապ» մեքենաների վրա, անգլիական սպաների և հնդիկ զինվորների ուղեկցությամբ Ղարաբաղից վտարվեցին Իշխանյանը, Թումյանն ու Ավետիսյանը»[96].

Երեքին աքսորել էին առավոտյան: Կեսօրվա դեմ Սուլթանովի զորքերն ու շուրջ երկու հազար քուրդ ավազակներ՝ Սուլթանովի եղբայր Սելիմ-բեկի գլխավորությամբ հարձակվեցին Շուշուց հարավ-արևելք, 5—6 կմ հեռավորության վրա գտնվող Ղայբալիշենը կործանելու: Արնածարավ ասպատակիչները սրի քաշեցին անզեն-անպաշտպան բնակչությանը, կողոպտեցին, այրեցին տները: 700 շունչ հայ բնակիչներից հազիվ 11 տղամարդ և 87 կին ու երեխա փրկվեցին[97].

Վկաները պատմում են, որ անգլիական միսիայի ներկայացուցիչները Շուշվա բերդից անտարբեր դիտում էին օր-ցերեկով իրականացվող ոճիրը: Իսկ նրանց զորքը հսկում էր քաղաքից ելնող ճանապարհի վրա, որպեսզի Շուշվա հայ զինվորությունն օնգության չգնա յուրայիններին: Հաջորդ օրերին էլ ջարդարար խուժանը, Խանքենդում կուտակված ադրբեջանական զորամասերի հետ միասին, նույն սպանդն է սարքել նաև Զամիլու, Փահլուլ, Կրկժան և Դաշուշեն գյուղերի հայության վրա:

Հետո էլ նույն բախտին պիտի արժանանար Քարինտակ գյուղը, Շուշվա բերդից ներքև, Կարկառ գետի ձախ ափին կուչ եկած այն արծվաբույնը, որի բանջարանոցներից ու այգիներից քաղված բարիքներով էր ապրում Շուշին: Նախորդ երեք օրերի անսանձ ու անպատիժ չարագործություններով հարբած թուրք ու քուրդ զորաջոկատները որոշել էին բնաջնջել ձորապռնկին կպած գյուղը, ապա շարժվել դեպի Շոշ և սրա թիկունքին շարված մյուս բնակավայրերը:

Ոտքի կանգնեց Քարինտակի երիտասարդությունը և մահն աչքի առաջ դրած՝ դիմադրեց որքան կարող էր: Հակառակորդը երևի չէր ուզում զոհեր տալ, կատվի խաղ էր անում զոհի հանդեպ՝ սպասելով, որ պաշտպանվողները դուրս գան թաքստոցներից, մերկանան բաց տարածության մեջ: Մինչդեռ Քարինտակի երիտասարդները պաշտպանությունը ձգում էին և գիտեին, որ շուտով վրա է հասնելու փրկարար օգնությունը. սուրհանդակ էին ուղարկել Սղնախ գյուղը, ուր նոր միայն ոտք էին դրել Դիզակի ու Վարանդայի զինված ուժերը:

Օգնությունը հասավ այնպես հանկարծակի, փախուստի ճանապարհները միանգամից փակելով, և դիմացի անտառից այնպիսի լավա թափվեց թուրք ու քուրդ զորաշարքերի վրա, որ մի քանի ժամվա ընթացքում դիակներով ծածկվեցին ձորալանջերը: Քարանձավներում ու քարայրներում թաք կացածներին էլ քարինտակցիները դուրս բերեցին և անխնա կոտորեցին՝ հիշեցնելով, որ դա վրեժն է Ղայբալիշենի ու մյուս գյուղերի անմեղ նահատակների: Սղնախից զորքի ղեկավարությունը մարդ ուղարկեց Շուշի՝ քաղաքի անգլուխ մնացած հայությանն առաջարկելով իր օգնությունը: Պատասխանը խնդրանք էր, որ Շուշին հանգիստ թողնեն, քանի որ վճռել են «լեզու գտնել Սուլթանովի հետ»[98].

Հայաստանի Գիտությունների ակադեմիայի Պատմության ինստիտուտում է պահվում Լեոյի արխիվի մի մասը: Այնտեղ կա մի ձեռագիր-օրագրությունների դավթար, որը 1918—20 թթ. արցախյան դեպքերի մասնակից Արամայիսի գրչին է պատկանում[99]: Արամայիսն ամենայն մանրամասնությամբ ցույց է տալիս Արցախի ինքնորոշումը սասանելու համար Ծատուրյանի

---

[96] Անդ, էջ 50: Ավետիսյանի պաշտոնը չի նշված: Ս. Վրացյանն Ավետիսյանի փոխարեն հիշում է Ա. Տեր-Աստվածատրյան և աքսորվածների թիվը համարում 7: Կարծում եմ հավաստի է Թումյանի՝ դեպքի մասնակցի, տվյալը: Մանավանդ, երբ առկա է նաև մի երրորդ վկայություն, որի համաձայն, Արցախը թողնելու վճիռ հանված է եղել վեց հոգու դեմ՝ Ե. Իշխանյան, Հ. Թումյան, Աս. Ավետիսյան, Ասլան Շահնազարյան, Արտեմ Լալայան և Արտաշես Տեր-Միքայելյան: Սակայն վերջին երեքը չեն ներկայանում Մաք-Մոզոնին, անցնում են գավառները, փրկվում աքսորից (տե՛ս Սաբուր, Ղարաբաղի կցումը Ադրբեջանին. «Հայրենիք», 1929, հունիս, էջ 138):

[97] Ղայբալիշենը խառը բնակչություն ուներ: Ադրբեջանցիներին նախորդ գիշերն էին հեռացրել, որպեսզի նրանք ոչ մի վնաս չկրեն:

[98] Թումյան, Բ, էջ 20:

[99] Արամայիս, Ղարաբաղի տրագեդիան (Համառոտ նյութեր պատմության համար). ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի արխիվ, Լեոյի անձն. ֆոնդ 1, ցուցակ 1, գ. 255 (այսուհետ՝ «Արամայիս»):

կատարած մեքենայությունները, որոնց շարքում շատ հետաքրքիր է հետևյալը. Շուշի ժամանած անգլիական սպան, տեսնելով, որ հարկադրանքն ու հորդորները չեն անցնում, երկրամասի համագումարի մասնակիցներին փորձում է խլացնել անկախության բերելիք սարսափներով. «Ի նկատի ունեցեք, որ ձեր ճանապարհները կարող են փակվել, այն ժամանակ դուք որտեղի՞ց կստանաք մթերքներ և ինչպե՞ս կպահպանեք հաղորդակցությունն արտաքին աշխարհի հետ: Կարող են ձեզ տնտեսական բոյկոտ հայտարարել, կարո՞ղ եք ապրել առանց հացի: Եվ եթե խուժանների զինված ամբոխը հարձակվի ձեզ վրա, կարո՞ղ եք պաշտպանվել:

Կարծես թե այդ հարցերը տալով Շատելվորտը Ադրբեջանին սովորեցնում էր թե, ինչ պիտի անել Ղարաբաղը հպատակեցնելու համար, — եզրակացնում է օրագրողը և ուղղում նաև մի հարց, որով ջնջվում են կաշառված անգլիացու բարբաջանքները: Ասում է. — Եթե այդ բոլորը պետք է կատարվեն անգլիական հրամանատարության ներկայությամբ, ապա դուք էլ ինչի՞ համար եք այստեղ:

Յոթանասուն տարի հետո արցախահայերի հետ այդպես պիտի խոսեր նաև Խորհրդային Միության ղեկավար Միխ. Գորբաչովը. իսկ դուք մտածե՞լ եք Ադրբեջանի մնացած շրջաններում ու Բաքվում բնակվող հայերի ճակատագրի մասին: Գիտե՞ք, թե ինչպիսի տնտեսական վիճակ կստեղծվի մարզի ու Հայաստանի համար, երբ ձեր բոլոր ճանապարհներն անցնում են հարևանների տարածքով... Սա ևս հուշում էր, թե ի՞նչ կարելի է անել արցախահայությանը ծնկի բերելու համար:

Արամայիսի օրագրություններով, սկսվելով ապրիլի 27-ից, հասնում են մինչև հուլիսի 2-ը, և ամեն տեղում գրելով Արցախի ալեկոծ օրերի վրա փռված ծիածանակույթը, բաց են անում մի ծանր պատկեր: Տեղական ու եկվոր թուրքերի, քրդերի ու անգլիացիների բացահայտ ու գաղտնի սադրանքները հայության դեմ, նրանց անհատապաշտ շահագրգռությունները, որոնք ունեն մեկ ու միակ նպատակ՝ արցախահայությանը քաշել Ադրբեջանի մուսավաթական լծի տակ: Իսկ այդ արցախահայությունն էլ իր անկախությունն է պաշտպանում հնարավոր ու անհնար բոլոր միջոցներով: Անհնար, որովհետև համարյա անզեն էր բազմագլուխ հակառակորդի սպառազեն զորամիավորումների ու ամեն կողմից եկող ավազակախմբերի դեմ: Անհնար, որովհետև, եթե իր անհավասար ու օրհասական պայքարը մղում էր օտարների դեմ՝ իր մայր Հայաստանին վերամիավորվելու համար, զրկված էր նաև այդ Հայաստանի նյութական ու ռազմական, նույնիսկ բարոյական օժանդակությունից: Օրագրություններից ընդգրկված ամբողջ ժամանակահատվածում Հայաստանի միայն երկու նվիրյալներ էին ժամանել Արցախ՝ Միքայել (Միշա) Արզումանյանն ու Հովսեփ Արղությանը՝ իբրև «օգնություն»: Շուշվա Ազգային խորհրդի ղեկավարների այն «ավելի քան հրատապ հարցին, թե հապա Հայաստանն ի՞նչ է մտածում Ղարաբաղը փրկելու մասին. ախր զենք, ռազմամթերք ու հաց չունենք: Ադրբեջանն իր թնդանոթներով ու զրահաշարժերով, անգլիական միսիան իր եռանդուն պահանջներով մեր հոգին հանեցին: Ի՞նչ քայլեր եք անում մեր դրությունը մեղմացնելու համար: (Արղությանը) պատասխանեց, թե որոշված է... աշխատել: — Դառնորեն պատմում է օրագրողը, ապա ավելացնում. — Արղությանի այդ պատասխանը մեր սրտերը դաղեց, և իմ բերնից մի վատ անեծք դուրս թռավ»[100]:

Ասում է՝ այս դեպքերից առաջ Հայաստանի կառավարությունն Արցախ էր ուղարկել մեկ միլիոն երկու հարյուր հազար ռուբլի դրամ: Փոքր գումար չէր, չնայած Ադրբեջանի սուտ գեներալ-նահանգապետ Սուլթանովն Արցախ էր մտել «25 միլիոն ռուբլով, նրա համար բաց էր արված անսահմանափակ վարկ Ադրբեջանի գանձարանում» [101]: «Արցախը նվաճելու համար Ադրբեջանը չէր խնայում իր միլիոնները, փողը հոսում էր ջրի պես, և կաշառվածները վխտում էին ամեն անկյունում»[102]:

---

[100] «Արամայիս», էջ 17:
[101] Անդ, էջ 12:
[102] Անդ, էջ 19:

Հայաստանի ուղարկած դրամով պետք է զենք ու զինամթերք հայթայթվեին, ինքնավար իշխանության պետքերը հոգացվեին: Սակայն դրամը լռվել-մնացել էր Զանգեզուրում, որտեղի հոգատար եղբայրները Շուշուց գնացած հարազատներին քանի՛-քանի անգամ դատարկաձեռն ետ էին վերադարձրել... Երբ Հայաստանի մեծերին հաղորդում էին այս մասին՝ խնդրելով համապատասխան կարգադրություն անել և առհասարակ փութալ մարզն օրինական վիճակից հանելու համար, նրանցից ստանում էին պարապ մի հորդորանք՝ «Պի՛նդ կացեք», «Մենք Ղարաբաղը չե՛նք զիջի ոչ ոքի»[103]:

Օրագրերում տեղ է գտել Հայաստանի կառավարության մի ծրագիր ևս՝ հաղորդված Հովսեփ Արղությանի միջոցով. «Ճիշտ է, մինչև այժմ կառավարությունը ոչինչ չի արել, բայց այսուհետ վճռական քայլեր պիտի անի», և մասնավորապես՝ «Զանգեզուրը կուժեղացվի, որպեսզի դեպք եղած ժամանակ կարողանան այնտեղից ուժ հասցնել: Միաժամանակ ձեռք կառնվեն դիվանագիտական միջոցներ»[104]:

Անկասկած, ականատես, ժամանակի աղետները վայելած Արամայիսը գույները շատ է մռայլեցրել: Սակայն և չի կարելի շեղակայցնել, որ Հայաստանի կառավարությունը ժամանակին հնարավոր ամեն ինչ չի գործադրել մարզի փրկության համար:

Արցախում այս օրերին տեղի ունեցած դեպքերի նկարագրությամբ, բողոքներով ու խնդրագրերով հեղեղված է ժամանակի մամուլը: Հայերը դատապարտում էին մուսավաթական կառավարությանը, արյունռուշտ Սուլթանովին և վայրագությունները խրախուսող անգլիական միսիայի ներկայացուցիչներին: Ադրբեջանցիներն անմեղ գառների կեցվածք ընդունած, իրենց «զոհերի» բազմապատկումն էին ցուցաբերում՝ աշխարհի ուշադրությունը հրավիրելով Հայաստանի Հանրապետության վրա, որն իբր միջամտում է Ադրբեջանի ներքին գործերին, ոտնահարում նրա անկախությունը: Պարապ չէին նաև անգլիացի ծախու գրչակները, որոնց հրապարակած խոսքերում ևս հայերն էին մեղավոր, որ պահանջում են Արցախն ու Զանգեզուրը: Եղավ անգլիական միայն մեկ սպա, որ փորձեց ճշմարտությունն ասել «Кавказское слово» թերթում ունեցած իր պաշտոնական հայտարարության մեջ, նրան էլ անմիջապես հեռացրին ծառայությունից[105]:

Լեոյի հիշած «միայն մեկ սպան» հավանաբար գնդապետ Գլաստերբերգն էր, որ գործուղվել էր Արցախ՝ քննելու կոտորածների հանգամանքները և վերադառնալով՝ զեկուցեց, թե «կոտորածի ամբողջ պատասխանատվությունն ընկնում է Սուլթանովի վրա, որը նախօրոք քաղաքի ս. Ղայբալիշենի մոտերը դրել էր քրդական խմբեր և նրանց միջոցով ջարդել հայերին»[106]:

Մեծ Բրիտանիայի Անդրկովկասյան միսիայի ղեկավար Թոմսոնին փոխարինած գեներալ Կորին ոչ միայն որևէ չափով չէր օգնում, որ խաղաղություն ստեղծվի Արցախում, և չարագործները պատժվեն, այլև բացահայտորեն չար էր պաշտպանում՝ դրությունն այնպես ներկայացնելով, թե այնտեղ ոչինչ էլ չի կատարվել, հայերը պարզապես աղմկում են: Ամենայն Հայոց Կաթողիկոսը Կորիին բողոքի հեռագիր էր տվել՝ մանրամասն պատմելով կատարված վայրագությունները և խնդրելով օգտագործել իր բարձր դիրքը՝ թույլ չտալու նոր կոտորածներ, որոնք նախապատրաստվում են հակառակորդի կողմից: Ասում են՝ պատասխանը եղել է բամբակական մի թրթնջոց՝ «Հայերին ուռցնո՛ւմ են»:

Անդրկովկասում և Ռուսաստանում փոթորիկել էին այն մեծ ու փոքր քաղաքները, որոնցում հայեր էին ապրում: Թիֆլիսում տեղի ունեցան բազմահազարանոց հրապարակային երկու ժողովներ՝ հունիսի 8-ին ու 22-ին: «Մասնակցում էին քառասունից ավելի ազգային ու հայրենակցական կազմակերպություններ... Նախագահում էր Հովհաննես Թումանյանը: Ընդունած բանաձևը պահանջում էր դաշնակիցների միջամտությունը, դոկտոր Սուլթանովի

---

[103] Անդ, էջ 12, 15, 19 և հտգ.:
[104] Անդ, էջ 20:
[105] Լեո, Անցյալից, էջ 430—431:
[106] Ա. Վրացյան, էջ 318:

վտարումը Ղարաբաղից, կոտորածի հեղինակների ձերբակալությունն ու պատժելը և Ղարաբաղի միացումը Հայաստանին»[107]:

Հետաքրքիր է հունիսի 16-ին Երևանում տեղի ունեցած բազմահազարանոց ցույցի որոշում-կոչը, որը ոչ միայն անարգանքի սյունին էր գամում տեղի ունեցածի գարշելի հեղինակներին, այլև ազգային քաղաքական ուժերից պահանջում էր գործնական քայլեր: Ահա նրա հիմնական մասը.

«Հունիսի 16-ի հրապարակային ժողովը խորը հուզումով լսեց այն լուրը, որ Ղարաբաղում, անգլիական աչքերի առջև Ադրբեջանի զորքը Սուլթանովի գլխավորությամբ ավերել է վեց հայկական գյուղեր..., սպառնում է շարունակել կոտորածը և ստիպել Հայկական Ղարաբաղը արյան մեջ ողողվել: Մենք համոզված ենք, որ այս շարունակությունն է Էնվեր-Թալեաթյան քաղաքականության: Այնտեղ, Թուրքիայում, ամբողջ քաղաքակիրթ մարդկության աչքերի առջև կոտորածի ենթարկվեց միլիոնավոր հայ ժողովուրդը: Այստեղ, Ադրբեջանում, դաշնակից ժողովուրդների աչքերի առջև, աշխատում են ոչնչացնել Ղարաբաղի հայ ազգաբնակչությունը և հաստատել իրենց արյունոտ կարգերն այս երկրում: Խորը գիտակցելով մեր պարտականությունը՝ վճռականապես բողոքում ենք այն բարբարոսության դեմ, որ գործադրում է Ադրբեջանը: Պահանջում ենք անհապաղ հեռացնել Ղարաբաղի սահմաններից Սուլթանովի ավազակախումբը: Մենք հայտարարում ենք, որ Ղարաբաղի իրավունքների պաշտպանության հարցում մեր կառավարությունը լիակատար աջակցություն կարող է գտնել մեր կողմից: Բավ՛ է, որքան կոտորվեց հայ ժողովուրդը Թուրքիայում, Ղարաբաղում, Ադրբեջանում: Մենք այլևս չենք կարող թույլ տալ, որ եվրոպական մեծ ժողովուրդների աչքերի առջև մեր կանայք ու երեխաները ենթարկվեն կոտորածի: Պահանջում ենք, որ դաշնակից պետությունների՝ Կովկասում գտնվող ներկայացուցիչները վերջ դնեն կոտորածի և ավերի քաղաքականությանը: Պահանջում ենք հայկական կառավարությունից բուռն կերպով բողոքել դաշնակիցների ներկայացուցիչներին և, հանուն քաղաքակրթության ու մեր ժողովրդի ֆիզիկական գոյության, պաշտպանել հայ ժողովուրդը ձեռքի տակ ունեցած բոլոր միջոցներով: Մենք բողոքում ենք և մեր հիացմունքն ենք արտահայտում Ղարաբաղի մեր եղբայրներին, որոնք հերոսաբար կռվում են Սուլթանովի բռնակալության դեմ հանուն ժողովուրդների ինքնորոշման ու քաղաքակրթության»[108]:

Իրենց բողոքն ու զայրույթն էին արտահայտել նաև Ադրբեջանի խորհրդարանի հայ անդամները, որոնց կողմից լիազորված Պ. Զուբարը գնացել էր Արցախ, ուսումնասիրել և, Բաքու վերադառնալով, բազմաթիվ փաստերով ու պաշտոնական վավերագրերով հաստատել, որ Ղայբալիշենի ու մյուս գյուղերի կոտորածը Սուլթանովի գործն է: Խորհրդարանը, սակայն, գտավ, որ Ղարաբաղի «տեղական իշխանությանց և հատկապես ընդհանուր նահանգապետի գործողությունների մեջ չկա ապօրինության և ոչ մի փաստ»[109]:

Տեղում, իհարկե, դժվար էր սպասել արդարության կատարյալ հաղթանակին, որովհետև այն խառնակ ժամանակներում, դաշնակիցների անդրկովկասյան ներկայացուցչության կաշառված ու աչառու վերաբերմունքը հաղթահարելը պիտի լիներ չափազանց դժվար, եթե ոչ անհնար: Այդ պատճառով էլ Թիֆլիսի Ղարաբաղյան հայրենակցական միությունը փորձեց հարցը բարձրացնել Փարիզում, դաշնակիցների դիվանագիտական բարձրագույն ատյանում: Դիմում-հեռագիր հղեց այնտեղ գտնվող հայկական պատվիրակության ղեկավարին՝ հուսալով, թե նա կհետևի, որ հարցը պատշաճ քննություն ու արդյունք ունենա: Սակայն այստեղ էլ գործին խանգարեցին մանր կրքերը[110]:

---

[107] Անդ:
[108] Ա. Վրացյան, էջ 317:
[109] Անդ, էջ 319:
[110] Լեո, Անցյալից, էջ 431—432. «Ղարաբաղի կոտորածի մասին մենք հեռագիր ուղարկեցինք նաև Փարիզ, բայց ոչ թե Ահարոնյանի պատվիրակության, քանի որ գիտեինք նրա ակնբախ անկարողությունը Ղարաբաղի հարցի վերաբերմամբ, այլ Պողոս Նուբարի պատվիրակության: Բայց որովհետև այս երկու պատվիրակությունները շուն ու կատվի դրության մեջ էին գտնվում իրար

Ի՞նչ եղավ այսքանից հետո, Արցախն ինչի՞ տեր դարձավ միջազգային, համարյա համաշխարհային այս աղմուկի շնորհիվ:

Նախ, դեռևս հունիսի 12-ին Արցախից հեռացան Մաք-Մոզլնի գլխավորած անգլիական ներկայացուցչությունն ու զորքը[111]: Եվ Խոսրով-բեկ Սուլթանովը, նրա կուտակած ադրբեջանական զորքերն ու քրդական ավազակախմբերը մնացին դեմ-հանդիման՝ անպաշտպան ու անօգնական, դրսից բացարձակապես ոչ մի օժանդակություն չսպասող արցախահայության հետ:

Ազգային խորհուրդը, Շուշիում մնալն այլևս անհնար համարելով, անցել էր գավառ, Շոշում կամ Տոնաշենքում էր անցկացնում իր օրերը և էլի բողոքի գրություններ էր հղում Թիֆլիս, Երևան, Բաքու, հաստ իր հավատամքն էր պնդում, իբր, ո՛չ մի նշանակություն չունի, որ Շուշին անցել է Սուլթանովին, կարևորը գավառներն են, որոնք պիտի կռվեն մինչև վերջին շունչը:

Իսկ ինչու՞ պիտի կռվեին, ո՞ւմ օգնությամբ, թիկունքն ո՞ւմ դարձրած, եթե Հայաստանի Հանրապետությունը Սուլթանովի կազմակերպած ջարդերից հետո՝ անգամ իր զորքը չմտցրեց Արցախ՝ իր համար արդարացուցիչ հանգամանք համարելով դաշնակիցների միայնակ պայմաններով ու կարգադրություններով կապկպված լինելը: Բայց չէ՞ որ այդ պայմաններին ու կարգադրություններին հավասարապես վերաբերում էին նաև Ադրբեջանին: Հնարավոր է, առաջները մտածում էին, թե իրենք ուժ չեն ունենա դիմագրավելու ադրբեջանցիների ու անգլիացիների միացյալ ուժերին, որոնք Արցախում կանգնած էին միասնական ու միահամուռ: Իսկ Մաք-Մոզլնի գնալուց հետո՞: Չէ՞ որ միայն Սուլթանովին ենթակա զորքերն էին մնացել, և նրանք էլ, դատելով կատարած անվճռական քայլերից, երկնչում էին նույնիսկ տեղական հայ զինվորության ուժից և ոչ մի լուրջ տեղաշարժ չէին կատարում դեպի գավառները:

Անկասկած չէր կարելի արհամարհել այն օրերի ադրբեջանական ուժը: Այն օժտված էր նյութական բավարար հիմքով ու պաշարներով: Բավական է հիշել Բաքուն, դաշտային բերրի անհուն տարածությունների վրա ստեղծված գյուղատնտեսական բարիքները: Ռազմական տեսակետից ևս նախընտրելի էր նրա վիճակը. զենք ու զինամթերք անհրաժեշտ չափով հավաքել էին՝ ռուսական զորքերի հետ քաշվելու ժամանակ նրանց պահեստները նվաճելով ու զորագնդերը զինաթափ անելով: Իսկ զորամիավորումներ, այն էլ կանոնավոր ու բավական վարժ, երկու տարվա ընթացքում ստեղծել էին եվրոպական կրթություն ու փորձառություն ունեցող սպաների անմիջական օգնությամբ: Հիշենք, որ Ադրբեջանի հանրապետության ծնունդից անմիջապես հետո այնտեղ էին գտնվում Խալիլ փաշան, Նուրի փաշան, Քյազիմ փաշան, բազմաթիվ բեկեր ու բարձրաստիճան հրամանատարներ: 1919-ի գարնանն էլ եկել էր Էնվեր փաշան՝ երիտթուրք կառավարության ռազմական գերագույն հեղինակությունը, որ նպատակ ուներ ադրբեջանական ու հարևան մահմեդական զորաբանակները կարգի բերել, վճռական ճակատամարտի հանել՝ Անդրկովկասում գերիշխանություն նվաճելու և այն ապագա թուրքական տիեզերական տերության մեջ առնելու համար:

Այս ամենի դեմ ի՞նչ ուներ Հայաստանի հանրապետությունը: Աղքատ, դեռևս ոտքի չկանգնած տնտեսություն, գաղթականության չլուծված հարցեր և մի բուռ հողի վրա իրար չբերվող քաղաքական անհամար հակասություններ, որոնց լուծման հնարավորություններն իսկ չէին երևում:

Եվ, այսուամենայնիվ, հենց այս նույն պայմաններում, նույն իսկ օրերում, երբ Արցախը մեկընդմիշտ իրենցը դարձնելու և առհասարակ Արցախ-Զանգեզուր-Նախիջևան գոտին

հանդեպ, Ահարոնյանը, որ ուզում էր «ազգային գործերի» մենաշնորհն իր ձեռքում պահել ի փառս դաշնակցության, գրեթե բարկանում է մեզ վրա և գրում է Հայաստանի կառավարության, որ մեզ արգելվի դիմումներ անել ուրիշ որևէ մեկին, բացի իրանից: Ղարաբաղի հարցն ի՞նչ ցավերով էր տանջվում, իսկ այնտեղ, Սենայի ափին մեր դիպլոմատ կոչվածներն ինչո՞վ էին զբաղված»:

[111] Ս. Վրացյան, էջ 316:

սեփականացնելու համար, երկար ու հիմնավոր նախապատրաստությունից հետո, ադրբեջանական զորքերը հարձակվեցին Զանգեզուրի վրա (1919-ի հունիսի վերջին), խայտառակ պարտություն կրեցին ու ետ ճողոպրեցին՝ հազարավոր դիակներ, զենք ու զինամթերք թողնելով Կապանի Ղազարա, Ագարակ ու Եղվարդ գյուղերի տարածքում:

Ուրեմն, հնարավոր էր նրանց հաղթել, իսկ եթե նկատի առնենք արցախյան զինվորության մեծ քանակն ու առավել մեծ պատրաստությունը, ապա դա պետք է լիներ շատ ավելի դյուրին: Բայց և այնպես Հայաստանի հանրապետությունը նման քայլի չդիմեց, դրա փորձն իսկ չարեց:

Դեպքերի մասնակից մեկը պատմում է, որ երբ Շուշիում հայոց վիճակն անտանելի էր դարձել, գավառներում ամեն ժամ սպասելի էր հակառակորդի հարձակումն ընդհանուր ճակատով, մեծ անհրաժեշտություն դարձավ Հայաստանի Հանրապետության գոնե բանավոր ներկայությունը, որպեսզի խելք խելքի տալով՝ մի ելք հնչի անտանելի կացության մեջ հայտնված մարդու համար: Երևի լուր էին տվել, ազդեցիկ ու շրջահայաց ներկայացուցիչ պահանջել: Եվ, ահա, մայիսի 15-ին ներկայացավ Հովսեփ Արղությանը (Իշխան)՝ կառավարության ամենահեղինակավոր անդամներից մեկը, որ իրադրությանը հանգամանորեն ծանոթանալուց հետո, մայիսի 22-ին մասնակցեց Ազգային խորհրդի նիստին, որն էլ որոշեց Շուշի «քաղաքը գործողության հենակետ չդարձնել, թողնել Ադրբեջանին, Խորհուրդը փոխադրել գավառ, զինվորական շտաբի գործունեության զարկ տալ և ինքնապաշտպանությունը դնել կանոնավոր հիմքերի վրա...»[112]:

Սակայն մի՞թե պարզ չէ, որ ծայրահեղորեն անհեռանկար այս քայլին մղելով՝ Ազգային խորհուրդն ու նրա հանրապետական խորհրդականը, նախ և առաջ, թուրք-թաթարական ռոճակներին հնարավորություն տվին ազատ ու անկաշկանդ լցվելու Շուշի, այն դարձնելու բացառապես իրենց որջը և այնտեղից կազմակերպելու հարձակումները հայկական քաղաքամասի ու գավառների վրա:

Մայիսի 23-ին Արղությանը, Ազգային խորհրդի անդամ Ս. Մելիք-Հովսեփյանին էլ իր հետ առնելով, ուղևորվեց Երևան՝ հանրապետության կառավարությանը զեկուցելու Արցախի օրհասական դրության մասին: Ի՞նչ եղավ արդյունքը, կառավարությունն ի՞նչ միջոցներ ձեռնարկեց դրությունը փրկելու համար, մեզ հայտնի չէ ոչինչ: Երևի արդեն լրիվ պատկերացնում էին հունիսյան աղետները և նախապատրաստվում էին այդ առթիվ դաշնակիցների ներկայացուցիչներին բողոքելու թուրք-ադրբեջանա-քրդական վայրագությունների դեմ:

Այս պայմաններում էր, որ Շոշ գյուղում գումարվեց մարզի հայության վեցերորդ համագումարը (1919 թ. հունիսի 28—30):

Նախապես պայմանավորվել էին, որ ներկա են լինելու Ադրբեջանի կառավարության ներկայացուցիչն ու Մաք-Մոզլը, որպեսզի համատեղ ջանքերով խաղաղության ճանապարհը գտնվի, և աշխատավոր գյուղացիությունը հնարավորություն ստանա դժվարին պայմաններում աճեցրած բերքը հավաքելու, խաղաղ շունչ քաշելու իր հայրենի երկրում:

Սակայն օտար հրավիրվածներն իրենց խոստումը չկատարեցին, չներկայացան, և համագումարը համարյա նախորդների ոգով մի ընդարձակ բանաձև ընդունեց՝ նրանում պաշտպանելով իր ինքնորոշման իրավունքը և բողոք ու զայրույթ հայտնելով այդ իրավունքը ոտնահարողների դեմ:

Համագումարի ցրվելուց մի քանի օր հետո Շոշ գյուղը գնացին ադրբեջանական կառավարության և Մաք-Մոզլը ներկայացուցիչները խնդրելով նոր համագումար հրավիրել և որոշումը նորոգել: Բացասական պատասխան ստանալով վերադարձան, և մի քանի օր հետո Սուլթանովի հրոսակները թնդանոթներով ու գնդացիրներով հարձակվեցին Դիզակի

---

[112] Ե. Իշխանյան, Դեպքերը Ղարաբաղում, «Հայրենիք», 1933, թ. 12, էջ 125:

Դոլանլար ու Քինյաթլու գյուղերի վրա, կողոպտեցին, հրդեհի մատնեցին: Սակայն երբ փորձեցին նույնը կատարել նաև Առաջույլ գյուղում, տեղական ուժերը՝ արդեն միավորված ու կազմակերպված, խիզախ դիմադրություն ցույց տվին, նույնիսկ ետ փախցրին կողոպուտի ու ավերածությունների վարպետներին[113]:

Սրանով վերջ չտրվեց, իհարկե, սուլթանովյան ավազակախմբերի գործունեությանը: Դաշտային աշխատանքների ամենաեռուն շրջանն էր, հայ գյուղերում հնձի ու կալի գործերն իրականացվում էին վտանգներով լեցուն մթնոլորտում: «Սուլթանովական բանդաները գիշերները... հրդեհի էին մատնում խուրձերը և դեռևս չհնձած արտերը, իսկ ցերեկը կրակ էին բացում դաշտերում աշխատող գյուղացիների վրա»[114]:

Այս պայմաններում էլ օգոստոսի 13-ին Շուշում բացվեց Արցախի հայության յոթերորդ համագումարը, որին մասնակցում էին 135 պատգամավորներ: Երկար ու տաք վեճեր եղան Արցախի ու Ադրբեջանի հետագա փոխհարաբերության հարցի շուրջ, և ի վերջո կազմվեց մի հանձնաժողով (նախագահ Արշ. Քամալյան), որը պատրաստեց բանաձև փոխհարաբերությունները տանելի դարձնելու նպատակով Ադրբեջանի կառավարության հետ բանակցություններ վարելու մասին (համագումարն «ընդառաջ է գնում Ադրբեջանի կառավարության առաջարկին բանակցությունների միջոցով խաղաղ ճանապարհով լուծելու ներկա ճգնաժամային խնդիրը՝ իբրև հավասար կողմեր և որոշում է պաշտոնական բանակցությունների մեջ մտնել այդ նպատակով»)[115]:

Տեսնելով, որ հարցի լուծումը ձգձգվում է, Սուլթանովն օգոստոսի 14-ին վերջնագիր հղեց համագումարին պահանջելով 48 ժամվա ընթացքում որոշակի պատասխանել Արցախը ճանաչու՞մ է Ադրբեջանի իշխանությունը, թե՞ ոչ: Վերջապես պատրաստվեց համաձայնության մի նախագիծ, որը Սուլթանովի և նրա կառավարության կողմից լրացվելուց հետո հրապարակվեց հետևյալ բովանդակությամբ ու շարադրանքով.

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Նկատի առնելով, որ Ղարաբաղի լեռնային մասի վիճակի խնդիրը պիտի որոշվի խաղաղ կոնֆերանսում, որ յուրաքանչյուր ընդհարում կորստաբեր է Ղարաբաղում բնակվող ազգությունների համար, որ ինչպես էլ լուծվելու լինի Ղարաբաղի խնդիրը, հայերը և թուրքերը պիտի ապրեն միասին, — Ղարաբաղի հայության 7-րդ համագումարը որոշեց Ադրբեջանի Հանրապետության կառավարության հետ ժամանակավոր համաձայնության գալ հետևյալ պայմանների վրա.

1. Երկու կողմերն էլ ընդունում են այս ժամանակավոր համաձայնությունը, մինչև խնդրի լուծումը խաղաղարար կոնֆերանսում, որի որոշումը հավասարապես պարտադիր է երկու կողմերի համար:

2. Ղարաբաղի, այն է՝ Շուշու, Ջիվանշիրի և Ջաբրայիլի գավառների լեռնային մասը (Դիզակը, Վարանդան, Խաչենը և Ջրաբերդը), որտեղ բնակիչները հայեր են, ժամանակավորապես իրեն համարում է Ադրբեջանի Հանրապետության սահմաններում:

3. Շուշու, Ջիվանշիրի և Ջաբրայիլի գավառները շարունակում են մնալ որպես Ղարաբաղի գեներալ-նահանգապետության առանձին ադմինիստրատիվ միավորներ այնպիսի ներքին կազմակերպությամբ, որ լեռնային հայկական շրջանում վարչությունը նշանակվում է հայերից, և փոքրամասնության իրավունքները պաշտպանվում են:

---

[113] Հ. Թումյան, Բ, էջ 64—65:
[114] Հ. Թումյան, Բ, էջ 66:
[115] Անդ, էջ 67:

4. Ղարաբաղի լեռնային մասում (Դիզակում, Խաչենում, Վարանդայում և Ջրաբերդում) վարչական պաշտոնական անձինք նշանակվում են խորհրդի հայ անդամների առաջարկությամբ:

5. Ղարաբաղի գեներալ-նահանգապետությանը կից կազմվում է խորհուրդ՝ 6 հոգուց բաղկացած՝ երեք հայ և երեք մուսուլման:

6. Խորհրդի հայ անդամներին ընտրում է Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության համագումարը: Համագումարն իրավունք ունի վերընտրություն կատարելու:

7. Ազգամիջյան բնույթի բոլոր սկզբունքային հարցերը չեն կարող կիրառվել կյանքում, առանց նախապես խորհրդի քննության ենթարկվելու:

8. Խորհուրդը նախաձեռնության իրավունք ունի գեներալ-նահանգապետության կազմավորման և կառավարման խնդիրների նկատմամբ:

9. Խորհուրդը հսկողության և ստուգման իրավունք ունի գեներալ-նահանգապետության վարչության վերաբերմամբ, առանց, սակայն, վարչության գործողություններին միջամտելու իրավունքի:

10. Հիմնվում է գեներալ-նահանգապետի օգնականի պաշտոն քաղաքացիական մասի վերաբերմամբ, և այդ պաշտոնում նշանակվում է հայ:

11. Գեներալ-նահանգապետի քաղաքացիական մասի օգնականի պաշտոնի համար հայկական համագումարը Ադրբեջանի կառավարությանն է ներկայացնում երկու թեկնածու, որոնցից մեկը հաստատվում է:

12. Ղարաբաղի հայերը օգտվում են կուլտուրական ինքնորոշման իրավունքով:

13. Կուլտուրական ինքնորոշման իրավունքն իրագործվում է Ղարաբաղի Ազգային խորհրդի միջոցով, որն ընտրվում է Ղարաբաղի հայերի պարբերաբար հրավիրվող համագումարներում: Համագումարը հրավիրում է Ազգային խորհուրդը:

14. Ադրբեջանի Հանրապետության կառավարությունը հայոց Ազգային խորհրդի գործունեությունը հսկում է հայ լիազորների միջոցով:

15. Զինվորական մասերը տեղավորվում են Շուշիում և Խանքենդում՝ խաղաղ ժամանակի կազմով:

16. Ղարաբաղի, այսինքն՝ Շուշու, Ջաբրայիլի և Ջիվանշիրի գավառների լեռնային շրջաններում, ուր բնակվում են հայեր, զինվորական մասերի յուրաքանչյուր տեղափոխություն կատարվում է խորհրդի անդամների 2/3-ի համաձայնությամբ:

17. Քաղաքական համոզմունքների համար ոչ ոք չի կարող ենթարկվել հալածանքի ո՛չ դատական և ո՛չ էլ վարչական կարգով:

18. Բոլոր այն հայերը, որոնք ստիպված են եղել հեռանալ քաղաքական նկատառումներով, իրավունք ունեն վերադառնալու իրենց տեղերը:

19. Ղարաբաղում հայ և թուրք բնակչության զինաթափումը դադարեցվում է մինչև Ղարաբաղի հարցի որոշվելը խաղաղարար կոնֆերանսում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.

Որովհետև ամբողջ Ադրբեջանում հայտարարված է զինաթափում, խոսք կարող է լինել միայն Ղարաբաղում նրա դադարեցման մասին:

20. Ադրբեջանի կառավարությունը ցույց է տալիս նյութական ու բարոյական աջակցություն Ղարաբաղի բնակչությանը՝ արագորեն վերականգնելու հայկական և թուրքական ավերված գյուղերը:

21. Ազգամիջյան հարաբերությունները լավագույն կերպով կանոնավորելու համար խորհուրդը պարբերաբար հրավիրում է ընդհանուր և տեղական հայ-մուսուլմանական համագումարներ:

22. Տրվում է միությունների, խոսքի և մամուլի լիակատար ազատություն: Իսկ ժողովները, նկատի ունենալով, որ ամբողջ Ադրբեջանում զինվորական դրություն է հայտարարված, գումարվում են միայն վարչության թույլտվությամբ:

23. Մասնավոր և պաշտոնական անձանց յուրաքանչյուր հանցանք պետք է հետապնդվի դատական կարգով, բացառությամբ այն զանցանքների ու հանցավոր գործողությունների, որոնք Ադրբեջանի հանրապետության Պետական պաշտպանության կոմիտեի 1919 թ. հունիսի 11-ի պարտադիր որոշման համաձայն այլևս ենթակա չեն ընդհանուր դատի:

24. Մինչև այժմ տեղի ունեցած ազգային ընդհարումների մասնակիցները հալածանքի չեն ենթարկվում:

25. Սույն համաձայնությունը ուժի մեջ է մտնում Ղարաբաղի հայկական յոթերորդ համագումարի կողմից ընդունվելու պահից:

26. Սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում թե՛ պաշարողական, թե՛ զինվորական և թե՛ այլ դրությունների ժամանակ:

Ստորագրել են.

1. Դանիել Առաքելյան, 2. Աբրահամ Կիսիբեկյան, 3. Սիմոն Պողոսյան, 4. Սմբատ Բաղայան, 5. Բենիամին Բաբաթեփյան, 6. Իսրայել Ղուկփեփյան, 7. Աբրահամ-բեկ Իշխանյան, 8. Բախշի Մորադյան, 9. Հովհաննես Աբրահամյան, 10. Ստեփան Ստեփանյան, 11. Հակոբ Բալասանյան, 12. Տիգրան Մելիք-Գասպարյան, 13, Ավանես Գասպարյան, 14. Լևոն Վարդապետյան, 15. Արսեն Հովհաննիսյան:

Շուշի, 22 օգոստոսի, 1919 թ.»[116]:

Համաձայնագիրն ըստ էության իրենից չէր ներկայացնում ճակատագրական մի երևույթ, որն, իբր, սահմանագիծ դառնալով՝ արցախահայության կյանքը տարել է մի այլ ընթացքով, քան մինչ այդ էր՝ ավելի քան մեկ տարվա փոթորկալից շրջանում: Միայնակ, անօգնական ու անպաշտպան մնացած մարզի հայերը, պաշարված թուրք-ադրբեջանական-քրդական զորամասերով և դաշնակիցների միսիայից էլ հարկադրված՝ որոշում են ժամանակավորապես համերաշխվել ադրբեջանական վարչության հետ, մինչև որ իրենց

[116] Հ. Թումյան, II, էջ 69—72: Այս համաձայնագրի ռուսերեն բնագիրը, ինչպես նշված է Թումյանի ուսումնասիրության Բ մասի 72-րդ էջի ներքո, պահվել է Արշավիր Քամալյանի մոտ, և նա է տրամադրել Թումյանին, որը և թարգմանել է հայերեն:
Համաձայնագրի հայերեն թարգմանությունն ավելի վաղ լույս էր տեսել Ս. Վրացյանի գրքում (էջ 320—322): Այն իմաստով ճշգրտորեն համապատասխանում է Թումյանի թարգմանածին, եթե անտես առնենք ստորագրողների անուն-ազգանունների չնչին տարբերությունները:

խնդիրը լուծվի «խաղաղ կոնֆերանսում», որի որոշումը հավասարապես պարտադիր կլինի երկու կողմերի համար»:

Սակայն ադրբեջանցիներն այսքանն ընդունեցին որպես իրենց լիակատար հաղթանակը, ժամանակի մթնոլորտը լցրին տոնական աղմուկ-աղաղակով: Իսկ Հայաստանի Հանրապետությունն էլ դա ճանաչեց իբրև հայ ժողովրդի դեմ գործված ահավոր դավաճանություն և իր Արտաքին գործոց նախարարի անունից 1919-ի օգոստոսի 28-ին բողոքի գիր ուղարկեց Փարիզի խաղաղարար համաժողովին:

Բողոքը բողոք, սակայն մարդիկ թեկուզ և իրենք իրենց հաշիվ չէին տալիս, թե այդ ի՞նչ իրավունքով, երբ մի ամբողջ հանրապետություն, հայ ժողովրդի միակ ու գերագույն կառավարական մարմինը, ձեռքերը ծալած սպասում էր, թե ի՞նչ կլինի վերջը, արյունռուշտ վիշապի երախում թպրտացող մի մարդ ի՞նչ հրաշքով պիտի պաշտպանի իր ինքնուրույնությունը: Դեպքերի մասնակիցները պատմում են, որ երբ Արցախի Ազգային խորհրդի անդամները Բաքու էին գնացել մուսավաթական կառավարության հետ բանակցություններ վարելու համաձայնագրի շուրջ, և քննարկումներն ստացել էին ջղային ու սպառնական ընթացք, արցախացիներն իրենց հայրենակից, Հայաստանի Հանրապետության Բաքվի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանին խնդրեցին, որ նա անպայման մասնակից դառնա բանակցություններին, իր պաշտոնով ազդի ընթացքի և ընդունվելիք որոշման վրա: Բեկզադյանը, գուցե թե խորհրդակցելով իր կառավարության հետ, հրաժարվել էր բանակցություններին մասնակցելուց[117]:

«Համաձայնությունից» հետո միաժամանակ բարելավվել էր արցախահայության վիճակը. ճանապարհները բացվել էին, երթևեկն ազատ էր: Ադրբեջանական շուկաներում և առևտրական տներում հայերի առջև այլևս չէին փակում դռները, նույնիսկ Բաքվից մթերքներ էին հասցնում և եղբայրության շողոքորթ խոսքերով էին բերան դատարկում փոխհարաբերությունների մեջ:

Սակայն շուտով այս ամենը վերացավ, և տիրական դարձավ թշնամական ժամանակի սարսափները: Ճանապարհները փակվեցին, գավառներում ժողովուրդը վերստին խեղդվում էր ավազակախմբերի ասպատակություններից, կողոպուտներից ու սպանություններից:

Համաձայնությամբ Ադրբեջանի կառավարությունը պարտավորվել էր իր միջոցներով վերականգնել ավերված հայկական գյուղերը, սակայն ոչ միայն իր պարտավորությունները չէր կատարում, այլև զինական արգելքներ ստեղծեց, երբ հայերն իրենք փորձում էին սեփական տները վերականգնել և փոխադրվել իրենց բնակավայրերը:

Նույն համաձայնությունը թույլ էր տալիս Շուշիում ու Խանքենդիում պահել միայն խաղաղ ժամանակի կայազորներ: Սակայն մի ամիս չանցած՝ այդ երկու բնակավայրերը վերածվեցին ռազմական ճամբարների, որոնցում կուտակվեցին խոշոր ուժեր Զանգեզուրի վրա արշավելու համար[118]:

Ադրբեջանի կառավարությունն Արցախի կենտրոնի վրա թեկուզ և ժամանակավոր տիրապետություն հաստատած լինելը համարում էր բավական հզոր հիմք եռանահանգյան (Արցախ-Զանգեզուր-Նախիջևան) գոտին նվաճելու ճանապարհին: Երևի ծրագրած ունեին, որ հաջորդ քայլն էլ դարձնեն Արցախի գավառների վրա իշխանության տարածելը կամ արշավանքը դեպի Զանգեզուր: Սակայն գավառների վրա իշխանություն հաստատելու մի քանի փորձերը ձախողվել էին, իսկ այս դեպքում Զանգեզուրի վրա արշավելն աննպատակահարմար էր, քանի որ չվնասազերծված թիկունքը՝ Արցախի գավառների անկախ զինվորությունը, վրա կտար և Քրդստանը կդարձներ հարձակում ձեռնարկված զորքերի գերեզմանը:

---

[117] Սաբուր, Ղարաբաղի կցումը Ադրբեջանին, էջ 142:
[118] Հ. Թումյան, Բ, էջ 74:

Կարևոր էր նաև մի այլ հանգամանք. Զանգեզուրում վերացված էր անգլիական ներկայացուցչությունը, ուրեմն և զորավոր հովանավորությունը Ադրբեջանի նկատմամբ:

Եվ նվաճողի բնազդը հուշեց, որ ամենահարմարը Նախիջևանի թուրքությանը ոտքի հանելն է:

Մի քանի ամիս առաջ (1919 թ. մայիսին) դաշնակիցների խիղճն արթնացել էր, թույլ էին տվել, որ Հայաստանի հանրապետությունը 18 հազար գաղթականներ տեղավորի Նախիջևանի հայկական պարպված գյուղերում և այնտեղ զորամաս պահի գաղթականության ու բնիկ հայերի ապահովության համար: Հայաստանի Հանրապետությունն էլ այդքանն արել էր, ինքնահանգստացել՝ երևի մտածելով, թե Նախիջևանն արդեն իրենն է, ոնց որ գրպանում դրած լինի:

Ադրբեջանական զորքերի գլուխն անցած թուրք սպաները հուլիս-օգոստոսին մտան Նախիջևան, ապստամբություն բարձրացրին, ապա անգլիական միայնակ զորքերի հետ համագործակցելով՝ երկրամասից դուրս արին հայկական զորամասն ու հայ գաղթականությանը:

Մի քանի օրվա ընթացքում թուրք-ադրբեջանական ուժերն իրենցը դարձրին Նախիջևան հայկական նահանգը:

Այն ժամանակ թուրքական սպաները, հատկապես չորս փաշաները (Խալիլ, Նուրի, Քյազիմ, Էնվեր) ադրբեջանցի հովանավորյալներին համոզել էին, թե մնում է Զանգեզուրը նվաճել, և արդեն Նախիջևան-Զանգեզուր-Ղարաբաղ ճանապարհով Ադրբեջանը մեծ Թուրքիայից առատորեն կստանա այնքան ռազմամթերք ու զենք, որքան պետք լինի առաջնահերթ ռազմագիտական խնդիրները կատարելու և Անդրկովկասին իր կամքը թելադրելու համար: Իսկ Զանգեզուրի նվաճումն, առանց այլևայլության, Ադրբեջանի տիրապետության տակ կդնի նաև Ղարապաղյաղը, Վեդին ու շրջակայքերը, և Հայաստանը՝ կխեղդվի Արարատյան դաշտի մի անկյունում, — դա արդեն թուրք-ադրբեջանցի երազողների համար այլևս տեսանելի ու փայլուն մի հեռանկար էր:

Ադրբեջանի բանակի գլխավոր շտաբի պետն էր մի ռուս գեներալ՝ Սուլկևիչ ազգանունով, որը ռուս-թուրքական պատերազմի ժամանակ գեներալ Յուդենիչի հրամանատարության ներքո բավական փորձ ու «հմտություն» էր ցուցաբերել արևմտահայկական նահանգները հայաթափ անելու գործում և, հավանաբար, մի քիչ էլ հասկացել էր, թե այդքանից հետո հայ ժողովուրդն ինչ վերաբերմունք պիտի ունենա իր պատմական հայրենիքի հյուսիս-արևելյան նահանգների ճակատագրի հանդեպ: Ահա այդ գեներալ Սուլկևիչը 1919 թ. սեպտեմբերի 7-ին գաղտնի մի թուղթ է հղում Ղարաբաղի նահանգապետ Սուլթանովին՝ շարադրելով իր նկատառումները քննարկվող հարցի կապակցությամբ: «Ղարաբաղի հարցի խաղաղ լուծումը,— գրում է Սուլկևիչը՝ նկատի առնելով օգոստոսյան համաձայնագիրը,— ստիպում է մտածել, որ Զանգեզուրի գավառի միացումը կկատարվի առանց դիմադրման, որովհետև նրա հայ բնակչությունը, Նախիջևանի ջարդից հետո, այժմ դրված է երկու կրակի մեջ և հազիվ թե համարձակվի մեզ դիմադրել՝ իր թիկունքում չունենալով առաջվա պաշտպանությունը»:

Ուրեմն, ադրբեջանցիների ծառան, որ հաշվել էր նաև, Զանգեզուրի հարցն էլ վերջնականապես վճռված էր համարում: Բայց և այնպես, գիտեր, թե այդ գոտին, մանավանդ Արցախը, ի՛նչ նշանակություն ունի հայ ժողովրդի համար, ուստի զգուշացնում էր նաև. «Հայերը Ղարաբաղը մշտապես կորցնելու հետ հաշտվել չեն կարող և անտարակույս պետք է ձգտեն օգտագործել ամեն հնարավորություն կորցրածը ետ բերելու համար»: Ուրեմն, զգուշացե՛ք Ղարաբաղից և ձեր զինական ամեն տեսակ միջոցներն օգտագործեցեք Ղարաբաղը՝ այդ ամենակարևորը, ձեռքից չտալու նպատակով: Իսկ ո՞րն էր ստույգն ու անշեղն «ամեն տեսակ միջոցներից»: Ահա այստեղ է, որ գեներալին օգնության է հասնում իր փորձը՝ «միայն օգտագործել քրդերի ներկայացրած մարտական նյութը՝ նրանցից կազմակերպելով հեծելազոր և հետևակ՝ «Համիդիեի» օրինակով, որ գործնական արժեքն էր թուրքերն արդեն ստուգել վերջին պատերազմի ժամանակ:

Փոքրասիական, պարսկական ու միջագետյան ռազմաճակատներում տեղի ունեցած կռիվներին քրդական գնդերի («Համիդիե») մարտական փառապանծ գործելակերպի մասին միահամուռ խոսում են պատերազմի բոլոր մասնակիցները»[119]:

Զարմանալի է, չէ՞. անցյալ պատերազմից ի՞նչ դասեր է քաղել քաղաքակիրթ Ռուսաստանի զավակը և ինչպե՞ս դրանք քուրդ ցեղապետին է փոխանցում՝ անտեղյակ ժողովրդական հին առածից, որն ասում է. քրդի տղին լող երգել չեն սովորեցնի:

Ուրեմն, նախ, ասեմ այն օրերի (1919 թվականի արյունոտ օրերի) հայի ու ադրբեջանցու ճակատագրերի տարբերությունը. հայ ժողովրդի բարեկամն էր ռուս բանաստեղծ ու մարդասեր Սերգեյ Գորոդեցկին, որն զգուշացնում էր աշխարհին, թե այս ժողովուրդն աշխարհին ասելիք և տալիք մշակութային անփոխարինելի, անզուգական գանձեր ունի, փրկենք նրա պահպանված բեկորները: Իսկ ադրբեջանցիների բարեկամն էր արևմտահայերի արյունն իր խղճի վրա դեռ չչորացած գեներալ Սուլկևիչը, որն արածը քիչ համարելով՝ հիմա էլ արևելահայությանն ու նրա սրբազան մաս Արցախը բնաջնջելու եղանակներն էր մշակում Սուլթանովի հետ:

Ռուս գեներալի տված դասերով ու հանձնարարություններով էր, որ կարճ ժամանակում կազմավորվեցին թուրք-ադրբեջանա-քրդական զորամիավորումները և հարձակվեցին Զանգեզուրի վրա:

Առաջին իսկ բախումներում խայտառակ ջարդ կրելով՝ թուրք-ադրբեջանցի-քուրդ հրոսակախմբերը ետ քաշվեցին, նորից լցվեցին Շուշի, Խանքենդի ու Արցախի սահմանակից ադրբեջանական բնակավայրերը:

Արխիվային նյութերում պահպանվել են բազմաթիվ տեղեկություններ նրանց մեծաթիվ կորուստների, փախչելիս Զանգեզուրում թողած վիթխարաքանակ զենքի ու զինամթերքի մասին: Օրինակ, միայն թուրքական հեծյալ դիվիզիոնը, որի հրամանատարն էր, այսպես կոչված, գեներալ-նահանգապետ Սուլթանովի եղբայր Սելիմ-բեկ Սուլթանովը, Զանգեզուրում թողած հարյուրավոր սպանվածներից բացի, հայոց զորքին է «նվիրել» 150 գերի, 13 գնդացիր, 4 թնդանոթ և ուրիշ ռազմամթերք[120]: Եվ այսքանից հետո շատ հասկանալի է, թե ինչո՞ւ Ադրբեջանի զորքերի մնացորդներն այդպես կատաղի ու դաժան էին Արցախի և հարևան հայկական շրջանների բնակչության դեմ գործելիս:

Ադրբեջանի զորքերով ու Սուլթանովի լարած որոգայթներով շրջափակվեց, արտաքին աշխարհից լիովին կտրվեց Արցախը: Առաջներում, երբ ճանապարհները փակվում էին, էլի մնում էր Զանգեզուրի հետ միացնող լեռնային կածանների՝ միայն լեռնաստանի բնակիչներին հայտնի ցանցը, և Արցախն ու Զանգեզուրը իրար օգնության էին հասնում, լուծում ամենահրատապ հարցերը: Հիմա Զաբուղի ձորն էին լցվել Սելիմ-բեկ Սուլթանովի քրդերն ու ադրբեջանցի հրոսակները, փակել էին անտառներով կորչող արահետներն ու լեռնային անցումները, և Արցախը մնացել էր ինքն իր հետ, իր մենության հույսին:

Հետաքրքիր է, որ այս շրջափակման պայմաններում էլ Սուլթանովի գործակալները հայկական բնակավայրերում սուտ ու ճիշտ լուրեր էին տարածում մյուս հայկական շրջաններում, օրինակ, Ուտիքի լեռնային մասում, Նախիջևանի կողմերում իրենց կազմակերպած ջարդերի ու ավերածությունների մասին: Ինչպիսի՜ զարհուրելի գույներով էին ներկայացնում, ասենք, Ագուլիսի կոտորածը, Գանձակի ու Շամքորի ճանապարհներին ամեն օր տեղի ունեցող բռնությունները հայերի դեմ... Սպանված հայերի ուռճացված թվերն էին տալիս, նրանց ազգակիցների անհիրավված, անհեռանկար վիճակը: Մտածում էին, որ Արցախը ծնկի բերելու ամենահարմար եղանակն է դա:

Այս ժամանակ էր, 1919 թ. դեկտեմբերի սկզբին, որ Հայաստանի Հանրապետության հանձնարարությամբ Արցախ մտավ փորձված գործիչների մի խումբ՝ արցախցի Արսեն

---

[119] ՀՊՊԿԱ, ֆ. 200, ց. 15, գ. 691, թ. 41:
[120] ՀՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 179—180:

Միքայելյանի և սպա Զ. Մեսյանի գլխավորությամբ[121]: Նրանք, իրենց գործունեության կենտրոն դարձնելով Ջրաբերդն ու Խաչենը, ստեղծեցին Արցախի ինքնապաշտպանության մարմին՝ աշխատելով իրենց ձեռքը վերցնել բոլոր գավառների զինված ուժերի ղեկավարությունը:

Կարելի է մտածել, մանավանդ մարդկային սովորական փոխհարաբերություններից ելնելով, որ Ադրբեջանի կառավարությունը եթե շրջահայաց ու նրբանկատ լիներ, արցախահայության 7-րդ համագումարի որոշակի զիջողական վճռից հետո կջանար այդ ինքնասեր ու ըմբոստ լեռնաստանում վարել մեղմ, բարեկամական քաղաքականություն և գոնե դրանով ամրապնդել կապը կամ գոնե պահպանել ձեռք բերածը: Սակայն այդ բռնակալական-նվաճողական մտույցքներ ունեցող վարչարարները, հարկավ, այդպիսի հասկացողությունից հեռու են լինում և ամեն պարագայում իրենց առաջին խնդիրն են համարում ճնշել ու բռնանալ, երևի հույս ունենալով, թե դրանով իրենց կհաջողվի նաև խեղճացնել: Իսկ խեղճացածները, սովորակա՞ն բան է, ուրիշ ճար չեն ունենում, քան գլուխ խոնարհելն ու վիզ ծռելը:

1920 թ. փետրվարի 19-ին Սուլթանովը հատուկ գրով Արցախի Ազգային խորհրդից պահանջեց, որ այն վերջնականապես հպատակվի Ադրբեջանի կառավարությանը և թույլ տա ադրբեջանական զորքեր մտցնել գավառները: Մինչև այդ հաջողվել էր զինվորության որջեր դարձնել Շուշին ու Խանքենդին, իսկ գյուղական շրջանները, Արցախի ամբողջ հայ գյուղացիությունը, անկախ էին, զինված ու իրենց ինքնապաշտպանությանը պատրաստ:

Սուլթանովը նպատակ ուներ իր զորքը գավառներ մտցնելուն պես գլխատափ անել հայությանը... Իսկ նրանից հետո ի՞նչ մի դժվարություններ կարող էր ներկայացնել հարցը թրքավարի կարգադրել՝ հպատակվեցե՛ք, այլապես պիտի կոտորենք կամ բռնագաղթի ենթարկենք:

Ազգային խորհուրդը մերժեց բռնակալի պահանջը՝ պատասխանելով, թե դրա առթիվ վճիռ հանելու իրավունք ունի միայն ժողովրդական համագումարը:

Այնուհետև Սուլթանովը փորձեց իր հրամանն իրականացնել միայն Ջրաբերդի գավառի մի մասում, առաջարկեց թույլ տալ, որ ադրբեջանական զորքը տեղավորվի Ավան-Յուզբաշյանի կալվածքում՝ Մարդակերտում: Այդ առթիվ էլ վճիռ հանելու համար Մարդակերտում հավաքվեցին գավառի գյուղերի 86 ներկայացուցիչներ և միահամուռ որոշեցին մերժել բռնակալի հակահայկական պահանջը:

Սակայն դրանով հարցն առավել խճճվում էր, քանի որ Մարդակերտ բերելիք զորքից քանակապես ավելին և առավել սպառազեն ստորամասեր տեղադրվեցին Թարթառում, Աղդամում և հայոց հետ շփում ունեցող ուրիշ մի քանի կետերում:

Սև ամպեր էին կախվում Արցախի հայության վրա, և նրա բախտի տնօրենները նորից նոր ջանքեր գործադրեցին փոթորիկը կանխելու համար:

Դեռևս հունվարի վերջերին միջկուսակցական բյուրոն Ազգային խորհրդին առաջարկություն ներկայացրեց հրավիրելու հերթական 8-րդ համագումարը, որը պիտի քններ մարզի աղետալի վիճակը և նշեր նրանից ելնելու ուղիները:

Նախնական պայմանավորվածության համաձայն՝ 8-րդ համագումարը պիտի տեղի ունենար Շոշ գյուղում, գեներալ-նահանգապետից անկախ վայրում և պիտի սկսվեր փետրվարի 28-ին, ամբողջ հայ բնակչության կողմից ընտրված 168 պատվիրակների կազմով:

---

[121] Խումբը Խաչեն է հասել դեկտ. 7-ին: Ա. Միքայելյանն Արցախ էր եկել 6—7 տարի իր կյանքն Ամերիկայում անցկացնելուց հետո, որը Հ. Թումյանի կողմից գնահատվում է որպես հիմնական պատճառ այն ձախողումների, որոնք պիտի մղի տար ինքնապաշտպանության մարմինը (Հ. Թումյան, Բ, էջ 20):

Սակայն սկսվելու օրը պարզվեց, որ շուշեցի պատգամավորները չեն կարող մասնակցել համագումարին, որովհետև Սուլթանովը նրանց արգելում էր Շոշ գնալ և մնացածներին էլ ստիպում էր հավաքվել Շուշի, այնտեղ իր սպառնալիքների տակ անցկացնելու համագումարը և մեկընդմիշտ որոշելու չարչրկված խնդիրը:

Շուշում հիմնականում մնացել էին բոլշևիկ պատգամավորներն ու նրանց հարողները՝ Ալ. Ռուբենի-Ծատուրյանի գլխավորությամբ: Պարզ է, որ նրանք չէին կարող իրենց հավաքը կոչել համագումար, այլ խորհրդակցություն, որն, սպառնալիքներն ընդունեց իր որոշումը, որը ինչքան էլ թմբկահարված իբրև ժամանակի համար ամենախոհեմ ու ամենահեռանկարային[122], ըստ էության խուսափում է «երկու սարի արանքում, երկու քարի արանքում» և չի նշում դրությունից ելնելու ճանապարհը: Կարևորն այն է, սակայն, որ քննադատելով Ադրբեջանի կառավարության ու Սուլթանովի հակահայկական գործողությունները, պահանջում է անշեղորեն իրականացնել 7-րդ համագումարի պայմանները և նրանցից դեռ ոչ մի քայլ չի կատարում՝ ընդառաջելու Սուլթանովի պահանջին: Այդ հարցի առթիվ մասնավորապես նշված է, թե «Պատգամավորական խորհրդակցությունը գտնում է, որ նախքան մի ժողովուրդ վերջնականապես կմտնի այս կամ այն սահմանների մեջ, անհրաժեշտ է գործով համոզվի, որ այդ պետության մեջ նա կգտնի խաղաղ կյանքի և ազատ զարգացման բոլոր պայմանները»: Եվ սա քիչ է, անբավականություն էլ է արտահայտվում 7-րդ համագումարի ընդունած չարաբաստիկ համաձայնագրի վերաբերյալ: Ահա այն. «Նկատի ունենալով, որ 7-րդ համագումարի օգոստոսյան որոշումը շատ կողմերով պակասավոր է, խորհրդակցությունը գտնում է, որ ապագա 8-րդ համագումարին անհրաժեշտություն կզգա քննության ենթարկել այն»[123]:

Մինչդեռ բոլշևիկներն ու նրանց հարող մյուս կուսակցությունների ներկայացուցիչները Շուշիում, փշերի վրա նստած, այսպիսի երկչոտ ու խուսափողական խոսքերով էին արտահայտում իրենց վերաբերմունքը քննության դրված հարցի վերաբերյալ, Շոշ գյուղում արցախյան գյուղացիության իսկական ներկայացուցիչները՝ 96 պատգամավորներ, անց էին կացնում այդ «ապագա 8-րդ համագումարը»:

Համագումարն իր որոշում-բանաձևի մեջ օգոստոսյան համաձայնագիրը համարում է ժամանակին գտած ժամանակավոր այն միակ ճանապարհը, որով պիտի քայլեին հարևան ժողովուրդները, մինչև որ դաշնակիցները խաղաղարար համաժողովում կգտնեին իսկական ելքը և իրենց հնարավորություն կտային նրանով անցնել: Սակայն, ավա՜ղ, այստեղ «հավաքված պատգամավորները... ստիպված են մատնանիշ անել այն տխուր ու միանգամայն ցավոտ հանգամանքը, որ համաձայնությունը կայացնելուց մինչև այսօր Ադրբեջանի կառավարությունը ոչ մի կարգ ու կանոն չկարողացավ պահպանել Ղարաբաղում, այլ, ընդհակառակը, պատճառ եղավ անիշխանության»:

«Ակնհայտի մարդասպաններ ու գողեր օրը ցերեկով սպանում, թալանում են խաղաղ ժողովուրդը և դրա դեմ ոչ մի միջոց ձեռք չէր առնվում, մեղավորները չէին պատժվում: Կանոնավոր ասկյարներ թալանում են խաղաղ ժողովրդի տները, կոտորում տղամարդկանց, կանանց ու երեխաներին, և նրանցից ոչ ոք չի պատժվում: Ավերված գյուղերի բնակիչները մինչև այսօր էլ թափառում են այս ու այն գյուղերում, և Ադրբեջանի կառավարությունը, հակառակ իր խոստման, նրանց չի բնակեցրել իրենց վայրերում: Ժամանակավոր համաձայնության ամենագլխավոր կետերը միանգամայն խախտված են Ադրբեջանի կառավարության կողմից»[124]:

---

[122] Տե՛ս Ս. Շահումյանի հրապարակումը՝ «Կոմունիստ», 1923, ապրիլի 18, հ. 43: Անդ, Ա. Գնունու հոդվածը: Գր. Հովհաննիսյան, Սով. իշխ. հաստատումը Լեռնային Ղարաբաղում, էջ 136—137:
[123] «Կոմունիստի» նույն համարում: Ա. Միքայելյանի աշխատության մեջ պնդում կա այն մասին, թե «Քաղաքի ներկայացուցիչները, 28 ձայնով, վճռում են Ղարաբաղը համարել Ադրբեջանի անբաժանելի մասը». («Ղարաբաղի վերջին դեպքերը». «Հայրենիք», 1923, հ. 11, էջ 11): Բարեբախտաբար, հրապարակված որոշման մեջ նման բան չկա:
[124] «Հայրենիք», 1923, անդ, էջ 122:

Մեկ առ մեկ հիշվում են այդ «ամենագլխավոր կետերը», և յուրաքանչյուր անգամ ցույց է տրվում, թե դրանք ինչպես են ոտնահարվել Սուլթանովի ու նրա կառավարության կողմից: Սուլթանովի երեսին են շպրտվում նրա սանձարձակ պահանջները («Իբրև օրակարգի առաջին կետ քննել և հաստատել՝ Ղարաբաղն Ադրբեջանի հետ՝ իբրև նրա տնտեսական անբաժանելի մասը»), արհամարհանքը խաղաղության վեհաժողովի նկատմամբ («Ֆրանսիան և Իտալիան չեն կարող իրենց ապուրը եփել, ո՞ւր մնաց մեր կերակուրը...», ուրեմն՝ հանձնվեցե՛ք և վե՛րջ), ինքնագլուխ զորաշարժերը այն վայրերում, ուր համաձայնագրով վճռապես արգելված էր...[125]: Ապա Ադրբեջանի կառավարությունից պահանջվում է անշեղորեն իրականացնել «ժամանակավոր համաձայնության կետերի ամբողջական կիրառումը»:

«Վճռականապես բողոքում է ամբողջ քաղաքակիրթ աշխարհի առաջ՝ Խանբենդում, Ասկերանում և Շուշի-Եվլախ ճանապարհի վրա տեղի ունեցած անլուր կոտորածների առթիվ և կոչ է անում քաղաքակիրթ աշխարհի խղճին՝ վերջ տալու Ադրբեջանի այսօրինակ քաղաքականությանը:

Հայտնում է, որ նման դեպքերի կրկնությունը Լեռնային Ղարաբաղի հայությանը կստիպի իր կյանքի և պատվի պաշտպանության համար դիմել համապատասխան միջոցների...»[126]:

Որոշված էր բանաձևը հրապարակել հայկական մամուլի տարբեր մարմիններում, «ուղարկել դաշնակից պետությունների Անդրկովկասի ներկայացուցիչ Հասկելին, դաշնակից պետությունների դիվանագիտական ու զինվորական ներկայացուցիչներին, Անդրկովկասի երեք հանրապետություններին...» ևն, ևն[127]:

Արցախը՝ թուրք-ադրբեջանա-քրդական օղակում մեջ, վաղվա փոթորիկների դեմ այլևս անզոր, մի կողմից դիմում էր «քաղաքակիրթ աշխարհի խղճին», չնայած անցյալ փորձություններից պետք է եզրակացրած լիներ, որ խուլ ու բութ է այդ խիղճը, մյուս կողմից՝ գավառներում պատրաստվում էր դիմագրավելու, հաղթահարելու ավելի ծանր փորձությունը:

Անշուշտ, Արցախի վիճակը հայտնի էր արդեն հայության բոլոր հատվածներին ու հոսանքներին, մանավանդ հանրապետության կառավարությանը, որն այդ շրջանում արդեն ինքն էլ գտնվում էր հյուսիսից եկող կարմիր գնդերի և բնաշխարհում նրանց ավերիչ գալստյանն սպասող բոլշևիկյան խմբակների հարուցած անկանխատեսելի հեռանկարի դեմ-հանդիման: Բաքվում ու Թիֆլիսում, Մոսկվայում ու Պետերբուրգում, նույնիսկ եվրոպական կենտրոններում հայկական հասարակական խմբերն իրենց տագնապալից ձայնն էին բարձրացնում սպասվող ճակատագրականի դեմ: Այն օրերի հայության այս տագնապը սուր արտահայտություն է ստացել նաև մամուլում, որից ահա մի օրինակ: Թիֆլիսում լույս տեսնող «Աշխատավորը» ն. թ. մարտի 5-ին, այսինքն՝ արցախահայության 8-րդ համագումարի ավարտի հաջորդ օրը, հնչեցրել է մի այսպիսի ահազանգ. «Ադրբեջանի տարբեր վայրերում տեղի ունեցած հայկական մասնակի կոտորածները նպատակ ունեին ոչ միայն թուլացնել հայկական տարրը այդ պետության սահմաններում առհասարակ, այլև ահաբեկել Ղարաբաղը, կոնկրետ կերպով ցույց տալով այն հեռանկարը, որ նրան սպասում է: Մարգարե չպետք է լինել գուշակելու համար, որ Ղարաբաղը կանգնած է արյունալի նախօրեների նախօրյակին, որովհետև կասկածից դուրս է, որ տևական հայությունը երբեք կամովին չի համաձայնի իր վիզը թեքել թուրքական յաթաղանի հանդեպ…

Ինչպես անցյալում, այնպես էլ այժմ, Ղարաբաղի փրկությունը նրա կազմակերպված կամքն է ու կատարյալ վճռականությունը՝ ամեն գնով ապահովել իր ազատությունը, միանգամայն հավատացած լինելով, որ իր հետ է այդ գործում ամբողջ հայությունը…»[128]:

---

[125] «Հայրենիք», 1923, հ. II, էջ 122—123:
[126] Անդ, էջ 114:
[127] Անդ:
[128] «Աշխատավոր» (Թիֆլիս), 1920, մարտի 5-ի խմբագրական հոդվածը:

«Աշխատավորի» մարգարե չէր, սակայն լավ գուշակել էր Արցախի մոտիկ ապագան, մանավանդ «արյունալի նախօրեների»:

Հայերի ինքնապաշտպանական մարմինները գործում էին գիշեր-ցերեկ, գավառներում զինվորությունը պատրաստ չէր ոչ միայն կասեցնելու հակառակորդի ամեն մի ավազակային քայլ, այլև եթե հարկ լինի՝ սուլթանական բռնությունը դուրս քշելու իր հողից: Ալիևի խորամանկության ու գայլի գիշատչության տեր այդ ճիչը գիտեր, որ գավառներում հայ ժողովուրդը պատրաստ է մեծ բախումի, և Զանգեզուրի կողմից Հայաստանի ներկայացուցիչներն էլ անընդհատ գալիս էին՝ իրենց հետ բերելով զենք, զինամթերք, նույնիսկ կառավարության դրամական օգնություն: Գիտեր ու իր կառավարությանը հաղորդելով այս ամենը՝ մանրամասներ էր պահանջում էր լրջագույն պատրաստություն մեծ բախումին, իսկ ավելի ճիշտ՝ հարձակում իր պետության ամբողջ ուժով: Այո՛, ամբողջ ուժով, չնայած առանց ժամանակից նոր ուժերի էլ, Շուշին ու Խանքենդին լցրել էր զորքերով, և նրանց հրազենների փողերի դեմ «պատանդ ուներ Շուշու հայությունը» (Լեո):

Արցախահայությունը կանգնած էր իր հին ու նոր պատմության մեծագույն փորձության առաջ, և հարկ էր, որ նրա ղեկավարները լրջորեն, ամենամեծ պատասխանատվությամբ կշռադատեին, որոշեին կատարելիք յուրաքանչյուր քայլը… Եվ, որքան էլ ցավալի, հենց այստեղ, ամենաճակատագրականի առաջ նրանք սայթաքեցին՝ թույլ տալով մի, մեղմ ասած, անխոհեմություն, որն անելանելի անդունդի մեջ պիտի նետեր Շուշին՝ մշուշով ծածկելով նաև ամբողջ Արցախի ապագան:

Մարտի 23-ին, Նովրուզի (մահմեդական նոր տարվա) տոնի օրը, հայ-թաթարական կռիվ է բռնկվում Շուշիում: Առաջին գիշերն իսկ թաթարները հրկիզում են հայկական թաղամասի տները, տագնապ ու խուճապ գցում անզեն բնակիչների մեջ, ապա վայրի խուժանը քշում նրանց վրա… Եվ երեք օրը բավական է լինում, որ քաղաքի փառաշուք մասից՝ հայկական թաղից, մնան կողոպտված ու ավերված տներ, անթաղ դիակների կույտեր ու մի աննախադեպ ողբերգություն:

Այս ամենը կազմակերպել էին քուրդ բժիշկ Սուլթանովն ու թաթար բժիշկ Մեհմանդարովը: «Այդ երկու բժիշկները, — գրել է Լեոն, — տանջվող մարդկության ծառայելու ակադեմիական ուխտ արած, հրամայում են խուժանին՝ կոտորեցե՛ք, այրեցե՛ք, կողոպտեցե՛ք, ձեռն են հայերի կանայք ու աղջիկները: Եվ դժբախտ քաղաքը լցվում է սարսափներով: Առնվազն յոթ հազար անմեղ մարդիկ մորթվում են: Մի հատ տուն չի ազատվում բոցերից: Հայ կանանց ու աղջիկների լլկումն ու տանջանքները անցնում են ամեն չափ ու սահման: Մոտ հինգ հազար հոգի կարողանում են ազատվել փախչելով: Մոտ 2—3 հազար հոգի գերի են մնում Սուլթանով և Մեհմանդարով բժիշկների ձեռքին: Գանձակի կողմից ադրբեջանական մեծ արշավանք է սկսվում, որը ճանապարհին ոչնչացնում է տասնյակներով հայ գյուղեր…»[129]:

Այո՛, Լեոն Շուշվա զոհերի թիվը յոթ հազար է համարում: Բայց ո՞վ է հաշվել, երբ ամիսներ անց էլ Կնունցներում ու ջրհորներում իրար վրա թափված են եղել դիակները, իսկ վեց տարի հետո անգամ գրողը ճամփեզրերի առուներում տեսել է նահատակված կանանց ու աղջիկների վարսափնջերը:

Ո՞վ է հաշվել, ո՞վ է քննել այս չարագործության մանրամասները, որոնք աննախադեպ էին, չեղած-չտեսնված և գուցե թե իրենց նմանակը չունեին նույնիսկ իրենցից հինգ տարի առաջ արևմտահայկական նահանգներում գործված վայրագությունների մեջ:

Ո՛չ ոք չի քննել… Բայց հայտնի է սկիզբը, և մենք, իբրև քաղաքակիրթ ազգի ներկայացուցիչներ, իբրև անուղղելի արդարամիտներ, այդ սկիզբը շատ ենք հոլովել՝ փորձելով նրա մեջ պեղել մեր մեղքը, առաջինը դատաստանի հանել մեր մեղապարտին: Լեոն, օրինակ, պատմում է ժամանակին լայն տարածում գտած այն տարբերակը, որի համաձայն՝ «Շուշու դահիճ հանդիսացած ու դաշնակցական սևանուն Արսեն Միքայելյանը: Ոճրագործի հանդգնությամբ լցված այս մարդը վաթսուն հոգով մտնում է Շուշի…, երբ

[129] Լեո, Անցյալից, էջ 438:

թուրքերն իրանց տոնով էին զբաղված: Գիշերը մի ինչ-որ տան արբեցությամբ անցկացնելով, առավոտը գնում են զորանոցը վերցնելու և կրակ են բաց անում նրա դեմ: Թուրք զինվորները դուրս են վազում, կռիվ է սկսվում…»[130]:

Լեոյի այս վարկածը հիմք ընդունելով է, որ դեպքից մի քանի ամիս անց Թիֆլիսի «Նոր խոսք» լրագիրն Արսեն Միքայելյանին, իբրև հանցագործի, դնում էր Խոսրով-բեկ Սուլթանովի կողքին: «Մուսավաթի իթթիհատական Խոսրով-բեկ Սուլթանովի և դաշնակցական Արսեն Միքայելյան, — ահա այն չար ոգիները, որոնց Ղարաբաղն անեծքով է հիշելու որդվոց որդի»[131]:

«Դաշնակցականն», իհարկե, կուսակցական կամ անկուսակցական անհանդուրժողականության տխուր արտահայտություն է և մեզ համար էական նշանակություն չունի, որովհետև Արսեն Միքայելյանը թուրքական զորանոցը կոտորումով չի գրոհել, այլ հարբած գլխով: Մանավանդ որ մի այլ դաշնակցական՝ Հարություն Թումյանը, հավաստիորեն վկայում է, որ Միքայելյանը նույնիսկ նախապատրաստած է եղել զորանոցի գրոհը և արհամարհելով դաշնակցական ու ոչ դաշնակցական ղեկավարների հորդորը՝ չխառնվելու քաղաքի գործերին, 50—60 հոգով հարձակվել է 200-ից ավելի զինվորներ ու անհամեմատ լավ սպառազինություն ունեցող զորանոցի վրա[132]:

Պիտի կրկնեմ. մեր անուղղելի և մոտ արդարամտությունն է, որ Շուշվա կործանման պատճառները քննելիս Սուլթանովին ու Միքայելյանին դնում է իրար կողքի: Ուրիշ ի՞նչ եղանակով կամ ո՞ւմ մտքով կանցնիր դահիճն ու զոհին կապել նույն ախտով: Այո, դահիճն ու զոհին: Դահիճն, որ Սուլթանովն էր, հայկական թաղամասն ավերած, նրա 35 հազար բնակչության մեծ մասը կոտորած, փոքր մասն էլ գաղթականության ու նոր տառապանքների քշած մի չարագործ, և Միքայելյանի՞ն, որ զոհն էր, նախընթացն է Սուլթանովի կազմակերպած վայրագությունների, ջարդերի, ամեն տեսակի խարդավանների դեմ ոտքի ելած անհեռատես խենթը:

Արսեն Միքայելյանն իրավունք ունե՞ր նախկին ռուսական զորանոցում տեղակայված թուրք-ադրբեջանական զորամասի դեմ կռվի դուրս գալու: Հասարակ, մարդկային տրամաբանությամբ՝ այո՛: Չէ՞ որ Արցախի կենտրոնն էր Շուշին, իսկ այդ Արցախը դաշնակից տերությունների կողմից ճանաչվել էր չեզոք գոտի, որտեղ կողմերից (հայկական և ադրբեջանական) ոչ մեկը զորք չպիտի մտցներ, մինչև որ հարցը չլուծվեր խաղաղարար խորհրդաժողովում և չպարզվեր, թե մարզն ո՞ւմ է պատկանում:

Եվ հետո ու ամենակարևորը. մի՞թե սուլթանովները մարզի հայերին կոտորում էին միայն միքայելյանների հարձակումից հետո: Իսկ Շուշում Սուլթանովի կազմակերպած առաջին ջա՞րդը, Ղայբալիշենի և մյուս գյուղերի ավերումներն ու կոտորած-կողոպո՞ւտը: Եվ մի՞թե կա միամիտ մեկը, որ մտածում է, թե Շուշիի հայությունը կփրկվեր, եթե չլիներ իրական թե հորինովի, իսկապես կատարված թե պարզապես հրահրված հարձակումը զորանոցի վրա:

Սուլթանովն ու իր մուսավաթական կառավարությունը բազմիցս հայտարարել էին, թե արցախահայությունն ունի երկու ելք. կամ կհպատակվի Ադրբեջանի իշխանությանը և կդառնա նրա կամայականությունների առարկան, կամ պիտի կոտորվի մինչև վերջինը: Եվ այս վճռի երկրորդ մասն իրականացնելու համար նրանք պատճառի կամ առիթի չէին սպասում, բավական էր, որ կար արցախահայության՝ չենթարկվելու որոշումը: Միքայելյանն

---

[130] Անդ:

[131] «Նոր խոսք», 1920, հոկտ. 25, հ. 10:

[132] Հ. Թումյան, Դ. մաս, էջ 8—11: Այստեղ հեղինակը պատմում է նաև, որ այն օրերին ինքն ու ազգային խորհրդի մի այլ անդամ՝ Աշոտ Մելիք-Հովսեփյանը, տեսնելով Ա. Միքայելյանի՝ անդորրության հասնող քայլերը մարզում և մանավանդ, տեղյակ լինելով նրա անզսպահայ բնավորությանը, «մի պատասխանատված գրությամբ (դիմել էին) Հայաստանի պատրանքների բոլոր ֆրակցիաներին՝ խնդրելով պատժել զինվորական մինիստրից, որ նա Միքայելյանին անմիջապես ետ կանչի Ղարաբաղից և այնտեղ վարի շատ զգուշավոր ու մտածված քաղաքականություն» (անդ, էջ 4): Սակայն, դժբախտաբար, այս դիմումը համապատասխան արդյունք չի տվել:

արագացրե՞ց դիվային վճռի իրականացումը: Ո՛չ, նույնիսկ չարագացրեց էլ, որովհետև վճիռն իրականանում էր քայլ առ քայլ, և զորանոցում տեղակայված զինվորները հենց դրա համար էլ բերվել էին:

Վեց տարի հետո Շուշի է այցելել այն ժամանակ արդեն անուն հանած գրող Մարիետա Շահինյանը և ահա թե ինչ է գրել Արցախի նկատմամբ Ադրբեջանի մուսավաթական կառավարության և նրա հարազատ ժառանգ բոլշևիկյան իշխանության վարած քաղաքականության մասին: 1926-ին էլ դեռ թարմ էին ավերի ու ավարի, կոտորածի ու չարագործության մյուս տեսակների հետքերը: «Երկու բլուրները կանգնած էին իմ առաջ, — քաղաքի հայկական մասի տարածքն այսպես է տեսել գրողը, — կանգնած էին տների կմախքների շարքերով: Չի մնացել ոչինչ, որ կյանք հիշեցնի. ո՛չ տանիքներ, ո՛չ դռներ, ո՛չ պատուհանի շրջանակներ, ո՛չ տախտակե հատակ, ո՛չ երկաթ, ո՛չ ծառ, ո՛չ տախտակ, ո՛չ փայտամած, ո՛չ մեկս: Միայն ավերակնե՛ր, քարեր ու քարե՛ր՝ ինչպես անատոմիական կմախքի քերված, կրծված ու չորացած ոսկորները: Խորաբաց ճեղքեր հատակի փոխարեն, փոթորկված-քանդրտված նկուղներ, դեպ տնկված պատեր, քարե սյուներ, ուղղանկյուն սեղաններ, շրջանակներ: Այս բոլորը սրված են, ցուցադրաբար բաց կամ դիք դրված, աչք են խցկվում իբրև ցցուն մագնետ: Ամեն ինչ ունի կրծված կրաքարի մահագույն ճերմակը: Հրաշագեղ ճարտարապետության եկեղեցին քո դեմ տնկվում է իբրև թղթե ուրվական, ինչ-որ տեղ օդում կախված քիվով. ահա ուր-որ է կքանդվի: Ապակի՛, տանի՛ք, զարդաքանդա՛կ, նախշազա՛րդ, ամեն ինչ հանել-տարել են կամ բերել, դուրս թափել: Մնացել է փխրուն հենքը, բայց այն էլ մահամերձի պես, աչքիդ առաջ ոնց որ լողում է ավերի ահավոր տեսիլքի մեջ:

Առաջինը, որ ինձ ցնցեց, լռությունն էր: Այդքան սարսափելի լռություն ես չէի զգացել ոչ մի տեղ, երբեք, և անմիջապես այն ինձ թվաց անբնական: Հանկարծ մարդուն թվում է, թե լռությունը քթմնջում է. քարերը շշնջում են, օրորվում, խշխշում և գլխիդ մազերը բիզ-բիզ կանգնում են: Այստեղ 1920 թվականի մարտին երեք օրվա ընթացքում հրդեհի ու ավերի են ենթարկվել 7000 տներ և մորթվել են, — տարբեր թվեր են ասում, — մեկն ասում է՝ երեք-չորս հազար, ուրիշները՝ ավելի քան տասներկու հազար հայեր: Իրողությունն այն է, որ երեսունհինգ հազար հայերից Շուշիում չի մնացել ո՛չ մեկը: Առուներում պատահատեղ դեռ կարելի է տեսնել կանանց վարսափնջեր՝ նրանց վրա չորացած սև արյան հետ միասին: Երևակայություն ունեցող մարդն այստեղ դժվար կշնչի. գնում ես, գնում, գնում ծխաթաք պատերի, ավելի ճիշտ՝ նրանց բեկորների մոտով, շտապում ես հեռանալ և վախենում ես, թե երբեք էլ դուրս չես ելնի: Սպասում ես, թե լռությունը փշուր-փշուր կլինի, վերջապես, գլխիդ վրա են հնար կտա, որ թոքերդ օդ առնես...»[133]:

Շահինյանը գիտեր, որ Շուշվա կործանումը եղել է ոչ թե մի առանձին ու պատահական դեպք, այլ թուրքերի հակահայկական վայրագությունների շարքի մեկ օղակը, նրա վերջին ու դժոխային արարը: Արցախի «212 գյուղերի ընդհանուր թվից 59-ը ջնջվել է հողի երեսից, բնակչության մեկ քառորդը (37 հազար մարդ) մնացել է անտուն, յոթ հազար տնտեսություն հրի մատնվել...», — վիճակագրական ճշգրտությամբ հաստատում է գրողը[134]:

Իսկ այն ժամանակներում Շուշի այցելած բանաստեղծ Օսիպ Մանդելշտամը, քաղաքի ադրբեջանական մասին տալով նրա իսկական անունը գիշատի՛չ, սարսափով մնչում էր.

«Сорок тысяч мертвых окон

Там видны со всех сторон,

И труда бездушный кокон

На горах похоронен».

---

[133] Мариэтта Шагинян, Нагорный Карабах, Москва, 1930, стр. 41—42.

[134] Անդ, էջ 5:

Եվ այսքանի համար ոչ ոք ոչ մի պատիժ չի կրել: Ոչ ոքի ամոթանք չեն տվել հրապարակորեն: Թվում է, հանցագործը, եթե մարդ-արարած է և ենթակա մարդկային ու չգրված օրենքների բարոյականության, անօրինության ու հանցավոր հանդուրժողության այս գեհենն անցնելուց հետո, գոնե ինքն իր հետ մենախոս կամ զոհի նոր գալարումները տեսնելիս խղճի խայթ կունենա, հոգու (հոգո՞ւ) խորխորատներում ծվարած մարդկային մի կայծի արթնություն կզգա և կանի համապատասխան մի քայլ: Սակայն կատարված անագորույնից հետո էլ զոհին, որ Արցախն էր, նա դաժանորեն գերել-կապոտել-գցել էր իր ոտքերի տակ... Ո՛չ մի օգնություն, որ նա ոտքի կանգնի, ապրի մարդավայել, քայլ առաջ գցի: Շահինյանը 1926-ին, դեպքերից 6 տարի և մարզին, իբր թե, ինքնավարություն «շնորհելուց» երեք տարի հետո, տեսել է այդ «ինքնավարության» վիճակը և սրտի կսկիծով արձանագրել, թե այդ հրաշալի «երկրամասի բյուջեն իր զրկվածությամբ ամենաողբերգականներից մեկն է ամբողջ Միության մեջ»[135]: Այսինքն՝ բյուջե չկար, հանրապետությունն իր ծով հարստությունից, Միությունից ստացած ահռելի գումարներից ոչինչ չէր հատկացրել իր իսկ ավերած մարզին, որպեսզի այն չնչին հնարավորություն ունենա իր վերքերը բուժելու, ոտքի կանգնելու, և ամենակարևորը, որպեսզի Ադրբեջանն ինքը երես ունենա Արցախին նայելու, իրավունք ստանա ասելու՝ ահա այսպես, մինչև հիմա արած չարություններս նրա համար էին, որ դառնամ տերը, հիմա որ տերն եմ, տե՛ս որ ես է՛լ մարդ եմ ու մարդկային արարքների ընդունակ...

Ո՛չ, այս էլ չեղավ, չկատարվեց: Ընդհակառակը, խղճմտանք ցուցադրելու, ամոթ զգալու փոխարեն նրանք նոր դիվային չարություններ ծրագրեցին և, մանավանդ, հպարտությամբ էին հիշում արդեն կատարվածը: 1968 թ. ամառնամուտին Ադրբեջանի գրողների միությունն իր հերթական պլենումն անցկացրեց Արցախում, և երբ Շուշվա մշակույթի տանը գրողների հանդիպումն էր քաղաքի թրքության հետ, առաջինը խոսք վերցրեց հանրապետության ժողովրդական բանաստեղծ Ռասուլ Ռզան և բառացիորեն ասաց հետևյալը. — Շուշին Ադրբեջանի փառքն ու պարծանքն է, որովհետև այստեղ է գրվել մեր ազգի պատմության ամենախայտառակ էջը:

Նրանից ետ չմնալու համար էլ երեկոն ղեկավարող Նաբի Խազրին՝ այն ժամանակվա գրողների միության քարտուղարը, արտասանեց իր բանաստեղծությունը՝ «Շուշվա ճամփեքին», որի մեջ կրկնվող այսպիսի տող ունի՝ «Մենք այստեղ՝ Շուշվա ճամփեքին, ճանաչեցինք մեր իսկական բարեկամներին ու թշնամիներին»:

Այսպե՞ս, ո՛չ ավել, ո՛չ պակաս:

Ինչ որ է, 1920-ի մարտի 30-ին սկսվեց այն պատերազմը, որի համար նախաբան դարձավ Շուշվա կործանումը:

Ազգային խորհրդի, միջկուսակցական բյուրոյի և, այսպես կոչված, ինքնապաշտպանական մարմնի անդամները կատարում են աշխատանքի նոր բաժանում, գավառների ու ճակատների նոր ղեկավարներ են նշանակում[136] և սկսում պաշտպանությունը՝ արդեն

---

[135] Անդ:

[136] Ա. Միքայելյանի աշխատության մեջ այդ բաժանման հետևյալ տվյալներն են առկա. Պարենավորման ընդհանուր վարիչ՝ Հարություն Թումյան (որ Ասկերանի ճակատում սպայակույտի պետը դարձավ), 2. Վարանդայի պարենավորման վարիչներ՝ Բյուզանդ վարդապետ, Մարտիրոս Արզումանյան, Դանիել Առաքելյան, 3. Կոպրճի-Հացի-Ղզղալայի շրջանի պարենավորման վարիչ՝ Խաչատուր Մելքումյան, 4. Դիզակի պարենավորման վարիչ՝ Ասլան Շահնազարյան, օգնականներ՝ Արմենակ Տեր-Բաղդասարյան, Աբրահամ Սաթարյան, 5. Սարուշենի զինապահեստի, ինչպես նաև պարենավորման վարիչ՝ Խաչատուր Եղիազարյան, 6. Բժշկական մասի պատասխանատու՝ Ասատուր Ավետիսյան, 7. Կենտրոնական շտաբի պետ՝ Բագրատ Բաբաջանյան, 8. Դաշունշենի ճակատի վարիչ և երևանյան պատասխանատու՝ Կոստյա Աբաջյան, 9. Մարտունի-Մոլի շրջանի պարենավորման վարիչ՝ Հայրապետի Գևորգ... («Հայրենիք», 1923, թ. 12, էջ 119): Այսքանից հետո Ա. Միքայելյանի իր համար պահում է մի համեստ պաշտոն («Ընդհանուր կապի պահպանող»)՝ երևի պատասխանատվությունն իրենից հեռու վանելու նպատակով:

Արցախի սահմանները հասած մուսավաթական ամբողջ զինական ուժի դեմ: Այո՛, անպայման՝ ամբողջ զինական ուժի, քանի որ, ինչպես հիմա իրենք՝ ադրբեջանցի պատմաբաններն են հաստատում, այն օրերին մուսավաթական կառավարությունը շտապ կարգով Արցախ էր ուղարկել իր ռազմական հիմնական ուժերը՝ այնտեղ, իբր թե, ծագած վիթխարի ապստամբությունը ճնշելու, Արցախին տիրելու և կատարելու հաջորդ հարվածները Զանգեզուրի, Ղարադաղլուի ու հայկական մյուս շրջանների վրա: Ադրբեջանի ժամանակակից պատմաբանների կարծիքով՝ այստեղ՝ Արցախում էր վճռվում Ադրբեջանի կենաց ու մահու խնդիրը, և կառավարությունը չէր կարող ճակատամարտի չհանել իր ամբողջ հզորությունը:

1990 թ. Լոնդոնի համալսարանում տեղի ունեցած մի գիտաժողովում, որը նվիրված էր Անդրկովկասի նոր պատմության խնդիրներին, ադրբեջանցի ճառախոսներն աղբյուրների բազմաթիվ տվյալներով ապացուցում էին, որ 1920 թ. գարնանը, Արցախի ապստամբությունը ճնշելու համար, Ադրբեջանն իր ունեցած-չունեցած զորքերը նետել է լեռնաստանի վրա, Բաքուն և հանրապետության հյուսիսային մասերը թողել անպաշտպան, և այդ պատճառով էլ Ռուսաստանի 11-րդ բանակը, առանց մի գնդակ արձակելու, մտել է անտեր ու անպաշտպան երկիրը, նվաճել այն, հայտարարել խորհրդային:

Իհարկե, այստեղ կա ճշմարտություն: Ադրբեջանի հիմնական զորամիավորումներն Արցախի կռվով էին զբաղված, այստեղ իրենց վայրագություններն էին կատարում, և մերկացած հյուսիսային սահմանից ներս մտան ռուսական կարմիր զորքերը, անարյուն հեղափոխությամբ Բաքվում ու հանրապետության մյուս տարածքներում նոր կարգեր ստեղծեցին: Սակայն Արցախի ի՞նչ ապստամբության մասին կարող է խոսք լինել, երբ այն երկրի տեր ժողովուրդը երբեք և ոչ մի պայմանով չի հրաժարվել իր ինքնորոշումից, իսկ 1920 թ. գարնանամուտին էլ նույն այդ ինքնորոշման համար իր արյունն ու կյանքն էր տալիս թուրք-ադրբեջանական-քուրդ նվաճող հորդաների դեմ:

Պատերազմը տեղի ուներ Արցախի բոլոր գավառներում, Դիզակից մինչև Գյուլիստան և Զարուդի ձորից մինչև Կարյագինոյի ու Աղդամի մատույցները: Սակայն ամենից կատաղին ու ամենից վճռականը Ասկերանի ձորի բախումներն էին, հին բերդից արևելք, Վարազաբունից մինչև Քարագլուխ, շուրջ 15 կմ ճակատով ձգված այն մարտերը, որոնցով թուրքերը պիտի վերականգնեին Աղդամ-Շուշի խափանված կապը, այնտեղից էլ կանցնեին Քրդստան-Հաջի-Սամլու (այժմյան Լաչինի շրջանը) և տարածվեին դեպի Զանգեզուր-Նախիջևան: Իսկ հայերը նրանց առաջ փակել էին այդ ամենակարևոր ճանապարհը և, հենված իրենց լեռնաստանին, քաջության ու հնարամտության հրաշալի օրինակներ էին ցույց տալիս:

Ասկերանի կռիվը ղեկավարում էր գանձակեցի մի խիզախ ֆիդայի՝ Դալի Ղազար մականունով (իսկականը՝ Միքայել Բաղդաշյան), որի անունը հայտնի էր կամավորական հերոսամարտերից, և հիմա էլ Հայաստանից բերած մի ջոկատ քաջորդիներով դարձել էր Ասկերանի հայոց ճակատի ոգին: Առաջին օրերին հայերը հաջողությամբ պաշտպանում էին իրենց դիրքերը, երբեմն էլ դուրս էին գալիս և խուճապահար փախչող ասկյարներին հետապնդում մինչև Աղդամ: Թումյանը պատմում է, թե 1918-ին Վարանդայում օսմանցիներից խլած «Շնեյդեր» սիստեմի լեռնային հրանոթը, որի համար ունեին միայն 60 արկ, իր ահարկու ազդեցությունն էր ունեցել թուրքերի վրա, երբ դիպուկ կրակով ավերել էր նրանց մարտկոցների շարքերը[137]:

Սակայն հակառակորդը որոշել էր Ասկերանի ձորում վճռել պատերազմի ու առհասարակ Արցախի հարցը և դրա համար արագորեն այստեղ կատարեց մեծ համալրումներ, ամբողջ ճակատի երկարությամբ դասավորեց վրա հասած գնդերը՝ նորագույն զինավառությամբ և սկսեց ահարկու ճակատամարտը:

[137] Հ. Թումյան, Գ, էջ 12—13:

Երբ հայ պաշտպանվողների վիճակը ծանրացել էր, այնտեղ սպայակույտի պետ ուղարկվեց նախկին ժողովրդական կառավարության զինվորական կոմիսար Հ. Թումյանը, և այս հմուտ զինվորականը բավական ամրացրեց պաշտպանությունը:

Սակայն ինչ էլ որ լիներ, Արցախն ինչպես էլ որ կռվեր, դժբախտաբար պատերազմի ելքը պայմանավորված էր այն ամենակարևոր հանգամանքով, որ Ասկերանում հայությունը պիտի դիմագրավեր ոչ միայն Ադրբեջանի սեփական ռազմական ուժին, այլև քուրդ հրոսակախմբերին և Ադրբեջանը ոտքի կանգնեցնելու համար այնտեղ եկած օսմանաթուրքական ուժերին:

Թումյանն ահա թե ի՛նչ տվյալներ էր հաղորդում թշնամական զորքի մասին. «Բացի ճակատում գտնվողներից, Աղդամ էին բերվել... 1-ին ջիվանշիրյան հետևակային գունդը, Գանձակի 3-րդ գունդը, 1-ին թաթարական, 2-րդ ղարաբաղյան և Շաքիի 3-րդ հեծյալ գնդերը, ռոտմիստր Սելիմ-բեկ Սուլթանովի վերակացվյալ բրիադական հեծելազորը, մեծաքանակ ծանր ու թեթև թնդանոթներ, գնդացիրներ և անսպառ զինամթերք: Կռիվների վերջին օրերում Ղարաբաղի դեմ հանված ադրբեջանական զինված ուժերի ընդհանուր թիվը, կանոնավոր ու անկանոն, առանց չափազանցության, կազմում էր ոչ պակաս, քան 30 հազար մարդ»[138]:

Զանգեզուրից սուրհանդակներ էին եկել, հաղորդեցին, թե շուտով տեղ կհասնեն Հայաստանի կառավարության հանձնարարությամբ առանձնացված հետևակ ու հեծյալ զորամասեր՝ ժողովուրդական հերոս Դրոյի ղեկավարությամբ: Սակայն դժնդակ օրերն անցնում էին, և այդ օգնական-փրկարար զորամասերը տեղ չէին հասնում: Եվ, այսուամենայնիվ, Ասկերանում, արցախյան պատերազմի ամենավճռական մասում, հայերն աննկուն էին, անպարտելի, քանի իրենց դեմ կռվող խառնամբոխի գլխավոր հրամանատարն էր ադրբեջանցի Սելիմովը:

Իրար հետևող պարտությունները մուսավաթական կառավարությանն ստիպեցին ճակատում սկզբունքային փոփոխություններ մտցնել. կայծակնային թափով կենտրոնից այնտեղ ուղարկեցին դաղստանցի ընտիր զորքերը, հրամանատարական կազմի վերադասավորություններ կատարեցին և, գեներալ Սալիմովին հետ կանչելով, ճակատի գլխավոր հրամանատար դարձրին ամենափորձառու գայլին՝ օսմանցի Խալիլ փաշային[139]:

Մարտի վերջին օրերին և ապրիլի 1—2-ին Խալիլ փաշան չուրս կատաղի գրոհ կազմակերպեց հայկական դիրքերի վրա և չորս անգամ էլ պարտություն կրելով ու տալով մեծաթիվ զոհեր՝ նահանջեց: Միայն ապրիլի 3-ին, օգտվելով դիրքերի վրա նստած թանձր մառախուղից նրա գրոհող տարատեսակ զորախմբերն անտեսանելի հասան հայոց դիրքերին, ձեռնամարտի նետվեցին... Թվական ահռելի գերակշռությունը հաղթեց, և թուրքերը նախ տիրեցին Խրամորթ գյուղին, ապա լցվեցին խճուղին և շարժվեցին դեպի Շուշի[140]:

Ասում են՝ ապրիլի 3-ի օրհասական ժամերին հայոց հերոս հրամանատար Ղայի Ղազարը, տեսնելով, որ արդեն սպառված է զինամթերքը, վճռված է ճակատամարտի բախտը, և չկա ոչ մի փրկություն, վերջին զինվորներին կարգադրել է թողնել դիրքերը, իսկ ինքը միայնակ, ատրճանակը ձեռքին սպասել է այնքան, որ տաճկական առաջապահ զինվորներն իրենց հրամանատարի հետ կից մոտենան: Անվրեպ կրակոցներով գետնին տապալել առաջից մոտեցող սպային ու երեք ասկյարների, իսկ վերջին գնդակն ուղղել իր քունքին:

Սա հաղորդում է Հ. Թումյանը՝ ավելացնելով. «Թուրքական հորդաներին հատուկ փոքրոգությամբ ու դաժանությամբ ադրբեջանական հեծելազորի առաջապահ նիզակակիրը

---

[138] Թումյան, Գ, էջ 12—13:
[139] ՀՊԿԿԱ, ֆ. 200, g. 1, գ. 563, թ. 158:
[140] Հ. Թումյան, Գ, էջ 23—24:

«թաթարական հեծյալ գունդը» կտրեց մեռած հերոսի գլուխը և նիզակի ծայրին տարավ դեպի Շուշի»[141]:

Հակառակորդն արդեն նվաճել էր Կարկառի ձորը՝ Աղդամից մինչև Շուշի, հետևաբար և տերն էր Եվլախ-Աղդամ-Շուշի-Ջաբրայիլ ճանապարհի: Այդ նշանակում է՝ մեջտեղից կիսված էր Արցախը, իրարից կտրված էին Դիզակ-Վարանդան և Խաչեն-Ջրաբերդ-Գյուլիստանը: Բաժանված, իրար օգնության հասնելու, միասնաբար կռվելու անընդունակ:

Մոլեգնել էր թրքությունը, իր կառավարության կարգադրությամբ պիտի ավերեր հայկական բնակավայրերը, բնաջնջեր նրանց բնակչությունը, մանավանդ Գանձակի շրջաններում, այնտեղ, ուր հայությունն ասես պատանդ էր կամ ռազմագերի իր երդվյալ թշնամու իշխանության ներքո:

Եղան, իհարկե, մխիթարական դրվագներ ևս. ապրիլի 11—12-ին թուրքերը խայտառակ պարտություն կրեցին Գետաշենի տակ: Քարհատի ու Ծամձորի լեռնային գյուղերը հաջողությամբ ետ էին մղում ասպատակիչների հարձակումները: Թուրք ստվար մի զորախումբ Աղդամի կողմից հարձակվել էր Վարանդայի Նոր-շեն գյուղի վրա, սաստիկ ջարդ կերավ և չնչին մնացորդներով միայն վերադարձավ Աղդամ... Սակայն օսմանցի Քյազիմ-բեյի հրամանատարությամբ գործող ադրբեջանական ավազակախմբերը կողոպտեցին ու հրդեհի մատնեցին Ազատ, Արմավիր, Սուլակ, Մանաշեն, Մանասբեկ և այլ գյուղերը: Նուխիի ու Արեշի գավառների 36 հայկական բնակավայրերի շուրջ 50 հազար բնակիչներ, որոնք ողջ էին մնացել 1918 թ. կոտորածից հետո, իրենց մահը գտան այս նոր եղեռնի ժամանակ:

Արցախում ու հարևան գավառներում հայության դեմ գործվող վայրագությունները զայրացրել էին ողջ Կովկասին և նրանում բնավորված դաշնակից պետությունների ներկայացուցիչներին: Դեռևս մարտի վերջին վրաց մենշևիկյան կառավարության պարագլուխները դիմել էին «բարձր կոմիսարներին», որպեսզի նրանք սանձահարեն թուրք-ադրբեջանական չարագործներին, քանի որ, «երբ հյուսիսից սպառնալիք է ստեղծված անդրկովկասյան հանրապետությունների անկախության դեմ, Ղարաբաղի դեպքերը կարող են կործանարար ազդեցություն ունենալ երեք նորաստեղծ հանրապետությունների ճակատագրի համար»[142]:

Ուրեմն եթե հյուսիսից եկող սպառնալիքը չլիներ, հնարավոր կհամարվեր թույլ տալ, որ «Ղարաբաղի դեպքերը» շարունակվեին:

Եվ իսկապես էլ շարունակվում էին: Շուշուց ու Խանքենդուց թուրքերը հարձակումներ էին գործում մոտակա գյուղերի վրա՝ վախենալով խորանալ գավառների մեջ: Միայն մեկ անգամ փորձեցին մխրճվել Սղնախ գյուղը և այնպիսի հակահարված ստացան, որ ապրիլի 13-ի լույս 14-ի գիշերը դիրքերը լքելով ետ փախան՝ թողնելով բերած զենքն ու զինամթերքը:

Ապրիլի 12—13-ին թուրքական հրետանին սկսեց ռմբակոծել Դաշուշենն ու Շոշը: Նախօրյակին Գորիսից ժամանած փոխգնդապետ Թարվերդյանի հրետանավորները Տոնավարժ գյուղի տարածքից պատասխան կրակ բացեցին և հակառակորդին ստիպեցին համրանալ[143]:

Թուրք-ադրբեջանական կողմի վերջին փորձերն էին դրանք՝ ցույց տալու, որ իրենք դեռ կան և տիրապետություն են անում Արցախի կենտրոնի վրա: Հետագա օրերին Բաքվից ստացած լուրերը նրանց ստիպեցին լռել, սպասել իրադրության հստակեցմանը: Իսկ հայերը, որ հենց այդ օրերին էլ Զանգեզուրից համալրումներ ու նյութական օժանդակություն էին ստացել, ակտիվացան, նույնիսկ լծվեցին գյուղատնտեսական աշխատանքների, մտածելով, որ եկել է գարնան այն ժամանակը, երբ օրը տարի է կերակրում:

---

[141] Հ. Թումյան, Գ, էջ 24:
[142] ՀՊԿԿԱ, ֆ. 200, g. 1, գ. 563, թ. 14, 62, 99: Հմմտ. Թումյան, Գ, էջ 28:
[143] Թումյան Գ, էջ 30—31:

Ասում են՝ ժամանողներն իրենց հետ բերել էին նաև Հայաստանի Հանրապետության հատկացրած դրամական օգնությունը՝ բավական մեծ մի գումար հայկական չեկերով: Գումարն անմիջապես տարածվել էր մարզի բոլոր գավառներում՝ ժողովրդի լայն շրջաններին պատճառելով այն ցնծությունը, թե իրենք էլ ահա ընդգրկված են Հայոց անկախ ու միասնական պետության մեջ և օգտվում են նրա հարազատ դրամանիշներից:

Դեռևս 1919 թ. դեկտեմբերին Հայաստանի Հանրապետությունը Դրոյին նշանակել էր Զանգեզուրի ու Արցախի ընդհանուր հրամանատար[144]: Եվ բավականին ուշ, փետրվարին, Արցախում լուրեր էին պտտվում, թե ահա ուր որ է Դրոն է գալու իր պատժիչ զորախմբով, որպեսզի Շուշուց դուրս քշի Սուլթանովին ու նրա դահիճներին և մեկընդմիշտ հայոց իշխանությունը հաստատի ամբողջ մարզում: Սակայն Դրոն Արցախ մտավ միայն ապրիլի 13-ին թե՞ 17-ին[145], երբ արդեն կործանված էր Շուշվա հայկական մասը, ընկել էր Ասկերանը, և լեռնաստանի անկյուն զինվորությունը, հին օրերի սովորությամբ, ամրացել էր ավանդական բերդամրոցներում ու ժայռակույտերին կպած ավաններում և սպասում էր առավել ահավոր փորձությունների:

Դրոն իր հետ բերել էր փոքրիկ մի զորաջոկատ: Սակայն դա էլ բավական էր, մանավանդ հրամանատարի հմուտ ու անվեհեր վրիժառու անունը, որպեսզի Արցախը վերստին փարի փոքր-ինչ սասանված իր հատվածին:

Հայաստանի Հանրապետության բարձրաստիճան ներկայացուցիչն ուներ ամենապատասխանատու լիազորություններ և ճակատագրական մի ծրագիր՝ վերականգնել և ամրապնդել Արցախի իշխանությունը, մարզը վերջնականապես միացնել մայր Հայաստանին: Եվ դրա համար բերվել էր մի կլոր գումար դրամ՝ հանրապետության չեկերով:

Փայլատակել էր հայի «ետին խելքը», բայց շա՞տ չէր ուշ: Չէ՞ որ Ռուսաստանի հեղափոխական բանակն արդեն Ադրբեջանի դռներն էր ծեծում և տոնական շքերթով քայլելու էր դեպի հարավ՝ Գանձակ ու Արցախ:

Դրոն նստավայր դարձրեց Վարանդայի Ղարաբուլախ գյուղը և մի քանի օրում հեռախոսային կանոնավոր կապ ստեղծեց տեղի գավառների ու Գորիսի միջև, հանգամանորեն ծանոթացավ շրջաններին ու նրանց ռազմագիտական հնարավորություններին:

Դրոյի ետևից էլ եկավ Նժդեհ-Գարեգին Հարությունյանը և, անցնելով Դիզակ, այնտեղ ոտքի հանեց բոլոր կարող ուժերը:

Նժդեհը՝ աստվածընտիր այդ զորականն ու հայրենասերը, մի քանի օրվա ընթացքում Դիզակը դարձրեց լայնածիր զորակայան, գտավ-ճանաչեց գավառի հմուտ զորականներին և իր տեղապահը դարձրեց նրանցից մեկին՝ տումեցի Թևան Ստեփանյանին, որը հետագա տարիներին լինելու էր ադրբեջանական-չեկիստական հրոսակախմբերի հոգեառը, Դիզակի հայության անձնազոհ պաշտպանը:

Առաջնահերթ խնդիր էր մարզի իշխանության ստեղծումը, և Դրոնն առաջին իսկ օրերին կազմակերպեց Արցախի վարիչների խորհուրդը՝ Ասլան Շահնազարյանի նախագահությամբ: Խորհրդի անդամներն էին նախորդ երկու տարիներին ղեկավարության փորձ ձեռք բերած Ա. Ավետիսյանը (ներքին գործոց վարիչ), բժիշկ Տեր-Գրիգորյանը (առողջապահության), Գր. Ղարագյոզյանը (լուսավորության), Խ. Մելքումյանը (պարենավորման), Հ. Թումյանը (գաղթական գործերի), Արշ. Քամալյանը (գյուղատնտեսության), Հայաստանի Հանրապետության լիազոր Ս. Միքայելյանը (քաղաքացիական ու զինվորական գործերի միջև կապն ապահովող)[146]:

---

[144] Ս. Վրացյան, էջ 371:
[145] Անդ, էջ 373՝ 13-ին, «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 123՝ 17-ին:
[146] «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 123:

Շուշեցի գաղթականները սփռված էին հիմնականում Վարանդայի ու Դիզակի բնակավայրերում: Նրանց վերաբերող հարցերը Դրոյի կարգադրությամբ դարձան գավառական վարչությունների ուշադրության կենտրոնը:

Վարանդայում ու Դիզակում նոր զորահավաք արվեց, և ամենակարճ ժամանակում զենքի տակ դրվեցին շուրջ երեք հազար երիտասարդներ: Նրանց համար զենք ու ձի էին հայթայթվում Երևանից բերված չեկերով: Դրոյի կարգադրությունն էր, որպեսզի Արցախի տանջահար գյուղացուն այլևս ոչ ոք չնեղի զորքի համար զինամթերք ու պարեն հայթայթելիս:

Դիզակում ու Վարանդայում շատ շուտով գործերը կանոնավոր հունի մեջ էին մտել: Մնում էին Խաչենը, Ջրաբերդն ու Գյուլիստանը: Այդ կողմերին էլ ապրիլի 24-ին գործուղվեցին երկու բարձրաստիճան զինվորականներ (փոխգնդապետներ)՝ Զ. Մեսյանն ու Գ. Ղարագյոզյանը, որոնք Դրոյից առաջ էին ժամանել Արցախ և մասնակցել էին նախորդ ճակատամարտերին:

Ապրիլի 25-ին Թաղավարդ գյուղում տեղի ունեցավ Արցախի գյուղացիության իններորդ համագումարը, որի պատգամավորներն էին հիմնականում Վարանդայի ու Դիզակի ներկայացուցիչները, քանի որ հյուսիսային գավառներում խառնակ դրություն էր, և նրանց պատգամավորներն էլ Մարդակերտում պիտի հավաքվեին՝ քննելու միևնույն օրակարգի հարցերը:

Համագումարի Թաղավարդի նիստը երեք հարց ուներ. մարզի վարիչների խորհրդի հաստատումը, ռազմական վիճակը կարգավորելու միջոցառումների մշակումը, ապա վերջինը՝ «որոշել Ղարաբաղի քաղաքական դիրքը հանդեպ Հայաստանի և ընտրել ներկայացուցիչներ, Անդրկովկասյան խորհրդաժողովի առջև Ղարաբաղի դատը պաշտպանելու համար»[147]:

Պատգամավորները միաձայն ու միահամուռ էին իրենց վճիռներում և ընդունեցին համապատասխան որոշումներ:

Համագումարի մարդակերտյան մասը տեղի ունեցավ ապրիլի 29-ին (62 պատգամավորներ ներկայացնում էին Խաչենի, Ջրաբերդի ու Գյուլիստանի 70 գյուղերը):

Անդրկովկասյան հանրապետությունների Թիֆլիսյան խորհրդաժողովի պատվիրակներ ընտրելուց հետո քննության դրվեց օրակարգի հիմնական հարցը՝ «Համագումարը Հայաստանի և Ադրբեջանի հանրապետություններից որի՞ օրիենտացիան է ընդունում»: Եվ կարճ ու կտրական ելույթներից հետո «Համագումարը որոշեց ընդունել Հայաստանի հանրապետության օրիենտացիան և ոչ մի դեպքում ու (ոչ մի) պայմանով չենթարկվել Ադրբեջանի խան-բեկական կառավարությանը»[148]: Այնուհետև որոշման մեջ շարադրվում են 7-րդ համագումարից հետո Ադրբեջանի կառավարությանն ու նրա դրածո Սուլթանովի կողմից իրականացված բազմաթիվ այն «աղաղակող փաստերը, որոնք հիմք են ծառայում անընդունելի համարելու Ադրբեջանի հակաժողովրդական-հակահայկական տիրապետությունը Ղարաբաղի հայ ժողովրդի վրա» (անուն առ անուն հիշվում են երեք գավառների այն 32 գյուղերը, որոնցում կործանել են 4266 տներ, ի բաց առյալ սպանությունները, կողոպուտը և մնացած վայրագությունները)[149]:

Արձանագրությունն ստորագրել են բոլոր պատգամավորները, նախագահ Ա. Վերոյանն ու քարտուղար Հ. Երիցյանը:

Եվ այսպես արցախահայության 9-րդ (վերջին) համագումարը ևս նախորդների հատուկ վճռականությամբ մերժում ու դատապարտում էր ադրբեջանական ամեն մի հավակնություն հայկական Արցախի, հայոց քաջության ու անկախության այդ ավանդական միջնաբերդի

---

[147] «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 124:
[148] ՀՊՊԿԱ, ֆ. 200, g. 1, գ. 563, թ. 191:
[149] Անդ, թթ. 191—192:

վրա, արտահայտում իր անսասան կամքն ու վճիռը լինելու մայր ժողովրդի հետ, նրա պետության կազմում. . . Եվ մի՞թե պիտի գտնվեր արդարության կամ օրինականության որդեգրված որևէ պետություն, խիղճ ու բանականություն ունեցող որևէ մարդ, որ չհասկանար այս վճիռը, չընդուներ կամ չպաշտպաներ այդքան պարզ ու այդքան համամարդկային մի իրավունք:

Համագումարում Անդրկովկասյան խորհրդաժողովի պատվիրակներ ընտրվեցին, իհարկե, ձևական նշանակություն ունեցավ, քանի որ խորհրդաժողովն սկսվել էր ավելի քան երկու շաբաթ առաջ: Թիֆլիս էին հավաքվել պատվիրակներ, որոնք ներկայացնում էին երեք հանրապետությունների՝ տարբեր ուղղություններով իրարից հեռու փախչող շահերն ու խնդիրները: Դաշնակից տերությունների դիվանագետների հորդորներով նրանք պիտի վերջ տային ազգամիջյան կոտորածներին, ստեղծեին կայուն խաղաղություն: Հանձնաժողովներ էին կազմվում, որոշումներ ու վճիռներ էին հանվում, նույնիսկ խոսք էր գնում երեքի տնտեսական համագործակցության, Անդրկովկասյան, այսպես կոչված, կոնֆեդերացիա ստեղծելու հեռանկարների մասին: Սակայն այդ բոլորը նման էր երգիծական ներկայացման, որովհետև խորհրդաժողովին ներկա ոչ մեկը չէր հավատում, թե սայլը տեղից պիտի շարժվի: Նույնիսկ արցախյան ջարդերի հարցը քննող կոչված հանձնաժողովը, որ իր պարտքը համարեց Արցախ հասնելուց առաջ Բաքու ներկայանալ և հանձնարարականներ ստանալ Ադրբեջանի կառավարությունից, գավառում ոտք դրեց ապրիլի 20-ից հետո: Եվ այստեղ էլ գործի անցավ «ջուր ծեծելով»: Երկար-բարակ վիճում էին՝ նախ Շուշիի կոտորածի մանրամասնե՞րն քննել, թե՞ Զանգեզուրի, կամ քննությունների արդյունքները որտե՞ղ և ինչպե՞ս պիտի ի մի բերվեն[150]:

Եվ մինչդեռ այս պարապ, հենց սկզբից և եթ ձախողումի դատապարտված աշխատանքը ձգվում էր, Անդրկովկասի վրա եկավ բոլշևիկյան պղտոր հեղեղը և միանգամից իրար խառնեց տեղական բոլոր հաշիվները:

Ապրիլի 26-ին հյուսիսից հաղթականորեն Անդրկովկաս խուժած 11-րդ կարմիր բանակի սպառնալիքի տակ ստեղծվեց Ադրբեջանի ժամանակավոր հեղկոմ, որն էլ 28-ին իր երկիրը հռչակեց խորհրդային: Կայծակնային արագությամբ խորհրդայնացան, բոլշևիկյան կազմակերպություններն ու նրանց պարագլուխները: Մուսավաթական կառավարությունը միանգամից մաշկափոխ եղավ և ապրիլի 28-ին արևներես ելավ իբրև Ադրբեջանի խորհրդային սոցիալիստական իշխանություն: Նույն մաշկափոխություն-գունափոխությունը կատարվեց նաև Շուշիում. մուսավաթական հայակեր Սուլթանովը մի գիշերում դարձավ բոլշևիկ, ապրիլի 28-ին ավազակախումբը հայտարարեց Ղարաբաղի հեղկոմ, իրեն էլ՝ այդ հեղկոմի նախագահ:

Որ կատարվածը միայն մաշկափոխություն կամ գունափոխություն էր, իսկ էությունը նույնն էր մնում, կարելի է որոշել Արցախի ու Զանգեզուրի հանդեպ ցուցաբերած նվաճողական կրքից: Ապրիլի 29-ին, Ադրբեջանի խորհրդայնացման հաջորդ իսկ օրը, նորաթուխ կառավարության անունից Հայաստանի հանրապետությանը վերջնագիր հեռագրվեց, որի մեջ ամբարտավան հետևյալ սպառնալիքն էր հնչում.

«Ադրբեջանի խորհրդային Հանրապետության բանվորա-գյուղացիական կառավարությունը, հանձինս հեղափոխական կոմիտեի, պահանջում է. նախ՝ ձեր զորքերից մաքրել Ղարաբաղի ու Զանգեզուրի հողամասերը, երկրորդ՝ քաշվել դեպի ձեր սահմանները, երրորդ՝ դադարեցնել ազգամիջյան կոտորածը: Հակառակ դեպքում, Ադրբեջանական խորհրդային սոցիալիստական հանրապետության հեղափոխական կոմիտեն իրեն կհամարի պատերազմական դրության մեջ Հայաստանի հանրապետության հետ: Վերջնագրի

[150] Այս խորհրդաժողովի մանրամասները տե՛ս Ս. Վրացյան, էջ 373—377, «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 124—125:

պատասխանի համար տրվում է երեք օր ժամանակ: Ադրբեջանի խորհրդային հանրապետության Արտաքին գործերի նախարար Հուսեյնով»[151]:

Որ Ադրբեջանի խորհրդային կառավարությունը մուսավաթականից ուղղակի ժառանգություն էր ստացել անասնական մոլուցքը Զանգեզուրն ու Արցախը բռնագրավելու, դա պարզ էր ու հասկանալի: Բայց նաև նրա անառակ վարքը: Այդ արցախահայության և հատկապես Շուշվա կոտորածների հեղինակներն էին հայոց կառավարության վրա մատ թափ տալիս՝ «դադարեցնել ազգամիջյան կոտորածը»:

Այսքանից հետո արդեն ոչ ոք չպետք է զարմանար, որ նույն օրը բոլշևիկացած Սուլթանովն էլ Արցախում հրապարակեց և մանավանդ նորակազմ Հայկական խորհրդին ներկայացրեց հետևյալ հռչակագիրը. «Հեղափոխական Ղարաբաղը, միշտ էլ կողմնակից լինելով Ադրբեջանի պրոլետարիատի շահերի պաշտպանությանը, սպասել է Ադրբեջանի կողմից խորհրդային իշխանության ճանաչմանը, կապիտալի բռնություններից նրա պրոլետարիատի ազատագրմանը և այդ խնայելով՝ մեր հայացքներն ուղղված են եղել դեպի Խորհրդային Ռուսաստանը: Այժմ Ղարաբաղի դեմոկրատիան երջանիկ է իր նվիրական ցանկությունների կատարումով և ավելի է համոզված նրանց կատարյավ հաջողությամբ՝ շնորհիվ Խորհրդային Ռուսաստանի հետ ունեցած միության: Ղարաբաղի դեմոկրատիան խորապես համոզված է և հավատում է Անգլիայից ու արևմուտքի մնացած իմպերիալիստական պետություններից աշխատավոր ժողովրդի ազատվելուն՝ Խորհրդային Ռուսաստանի, Ադրբեջանի և Թուրքիայի դաշնակցության ջանքերով:

Կեցցե՛ն Խորհրդային Ադրբեջանը և Թուրքիան, կարմիր բանակն ու պրոլետարիատի առաջնորդները:

Ղարաբաղի հեղկոմի նախագահ՝

Խ. Սուլթանով

1920, ապրիլի 29, Շուշի[152]:

Ամենացավալին այն է, որ անօրենների իշխանություն Արցախ էր մտնում հայ բոլշևիկների ուղեկցությամբ և նվաճող 11-րդ բանակի արնաներկ դրոշներով: Գյուղերն էին լցվել հայ բոլշևիկ ագիտատորները և քարոզում էին նոր իշխանության խոստումներն ազգային ու մարդկային երջանկությունների վերաբերյալ:

Իսկ ի՞նչ պիտի աներ նախորդ տարիների արյան նախճիրից ու վայրի բռնություններից դեռևս աչք չբացած հայ գյուղացիությունը:

Բայց լավ է այստեղ մեջբերենք Դրոյի մի հեռագիրը, որ Հայաստանի հանրապետության զինվորական նախարարությանն է հղել 1920 թ. մայիսի 19-ին: Այն ասում է. «Հենց այժմ Շուշուց եկան բոլշևիկների ներկայացուցիչները՝ Անդրկովկասյան ճակատի ռազմական խորհրդի լիազորներ Տեր-Գաբրիելյանը, Կարդաշովը և Պերևանին: Ինձ հետ խոսեցին Գլխավոր Լիազոր Օրջոնիկիձեի անունից: Հայտնեցին, որ մտադիր են կարմիր-ռուս զորքեր մտցնել Լեռնային Ղարաբաղ: Մինչև Հագարի գետը Ղարաբաղը պետք է պատկանի Խորհրդային Ադրբեջանին: Նպատակ ունենալով Ղարաբաղի միացումը Հայաստանին, ենթադրելով, որ բոլշևիկների մտադրությունների ներքո թաքնված է հին Ադրբեջանը, ես նրանց առաջարկեցի այդ հարցերի առթիվ կապվել Հայաստանի կառավարության հետ, քանի որ ես լիազորված չեմ այդպիսի հարցեր լուծելու, որ ամեն պարագայի իրենց պահանջները չեն համերաշխվում ժողովուրդների կառավարման այն սկզբունքների հետ, որոնց հիմքը մեծամասնության ինքնորոշումն է, և որ Հայաստանի ճակատագրի պարզաբանման համար մայիսի 4-ին մեր պատգամավորներն են ուղևորվել Մոսկվա:

---

[151] Ս. Վրացյան, էջ 377:

[152] «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 125:

Բոլշևիկներն այսօր էլ վերադարձան Շուշի՝ Օրջոնիկիձեի հետ խորհրդակցելու: Ես զինվորությանը հրաման տվի՝ բոլշևիկների առաջխաղացման դեպքում նրանց դիմավորել կրակով և նրանց ցույց տալ համառ դիմադրություն: Միաժամանակ Մեյսանից ստանում եմ տեղեկություն, որ Ջիվանշիրի շրջանի Հասան-Ռիզայի մեր գյուղերը հրաժարվել են ընդունել մեր իշխանությունը և բացահայտորեն իրենց հայտարարել են բոլշևիկներ: Պարզվում է, որ նրանք բոլշևիկների հետ սերտ կապ ունեն, ուժգնորեն աշխատում են ագիտատորները: Ձեռնարկված են արտակարգ միջոցներ ապստամբությունը ճնշելու համար: Հույս ունեմ, որ կմարենք բոցավառվելու ընդունակ հրդեհը: Ռուսների ներկայությունը տարբերվում է մեր գյուղացիությունը: Կարծում եմ՝ այժմ ժամանակն է դեպի Ջիվանշիր շարժել Բասարքեչարի զորամասը: Մեկնումի օրվա մասին հայտնեցեք ինձ ժամանակին, նկատի առնելով, որ ձեր հեռագրերը ես ստանում եմ ութ-ինը օր հետո: Մայիսի 19, ժամը 20, Ղարաբաղ... Զանգեզուր-Ղարաբաղյան (զորամասի) (պետ) Դրո»[153]:

Դրոն հաղորդում է, որ հեռագիրը Երևանից-Արցախ է հասնում 8—9 օրում: Ուրեմն, այդ հաշվով էլ իր տագնապոտ հեռագիրը Երևան, Արտ. գործ. նախարարին է հասել մայիսի վերջերին, և նախարար Համո Օհանջանյանն անմիջապես գործի է անցել՝ կանխելու Արցախի վրա կախված նոր վտանգը:

Պետք է արժանին հատուցել. Օհանջանյանն այն օրերին հանդես էր գալիս որպես իրադրություններին քաջատեղյակ, գործիմաց ու շրջահայաց գործիչ: Նա դեռևս 1920 թ. մայիսի 3-ին, հեռագրով Ռուսաստանի Արտգործժողկոմ Չիչերինին ու Ժողկոմխորհի նախագահ Լենինին, հանգամանորեն պատմել էր մուսավաթական կառավարության հակահայկական չարագործությունները Ղարաբաղում ու Լեռնային Գանձակի գավառներում, կարծես զգուշացնելով, որ ահա մի քանի օր առաջ բոլշևիկացած մուսավաթականները հիմա էլ գործում են Ռուսաստանի քաղաքական ու ռազմական ուժերի գլխավորությամբ, և սպասվող արյունալի հետևանքների համար, թուրք-ադրբեջանական խաժամուժի հետ միասին, պատասխանատու է նաև Խորհրդային Ռուսաստանը:

Եվ հիմա էլ Դրոյի տագնապոտ հեռագրից հետո Հայաստանի հանրապետության Արտաքին գործոց նախարար Օհանջանյանի նոր ընդարձակ հեռագիրը Խորհրդային Ռուսաստանի Արտ. գործ. կոմիսար Չիչերինին՝ գրված նույն թվի մայիսի 31-ին: Այնտեղ Հայաստանի հանրապետության կառավարության բարձր ներկայացուցիչը ցույց է տալիս ոչ միայն իրադրության ըմբռնողություն, այլև նոր երևույթի՝ Անդրկովկաս թափանցած խորհրդային իշխանության, խառնակիչ դերը հասկանալու կարողություն: Այդ պատճառով էլ հարկ ենք համարում հեռագիրը մեջ բերել ամբողջությամբ.

«Մոսկվա, Արտ. գործ կոմիսար Չիչերինին,

Պատճենը՝ Հայաստանի դիվանագիտական պատգամավորության նախագահ Լևոն Շանթին,

Պատճենը՝ Օրջոնիկիձեին.

Կովկասյան ճակատի Ռազմական խորհրդի նախագահ Օրջոնիկիձեի կողմից լիազորներ Տեր-Գաբրիելյանի, Կարդաշովի ու Պերևանիի միջոցով Լեռնային Ղարաբաղի բնակչությանը հաղորդվել է ռուս կարմիր զորքերը Լեռնային Ղարաբաղի սահմանները մտցնելու առթիվ խորհրդի մտադրության մասին, և որ, նրանց ասածի համաձայն, մինչև Հագարի գետը պետք է պատկանի Խորհրդային Ադրբեջանին:

---

[153] ՀՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 154:

Հայկական Լեռնային Ղարաբաղը, մինչև համաշխարհային պատերազմի ավարտը պաշտպանած լինելով իր անձեռնմխելիությունը հարձակմամբ իր վրա եկած թուրք-քուրդ-թաթարական հրոսակախմբերից, իր գյուղական պատգամավորների հերթական ութ համագումարներում ամեն անգամ հատուկ կերպով ընդունել է վճռական որոշում իր հարազատ Հայաստանի Հանրապետության մեջ մտնելու օգտին: Սույն թվականի ապրիլի 20-ի կողմ Ղարաբաղի գյուղական պատգամավորների իններորդ համագումարը վերստին հաստատել էր նախորդ համագումարներում իր ընդունած աներեր որոշումը՝ միավորվելու Հայաստանի հանրապետության հետ: Նույն համագումարը կտրականապես մերժել էր Ադրբեջանի իշխանության ընդունումը նույնիսկ նրա մեջ տեղի ունեցած քաղաքական հեղաշրջումից և նրանում խորհրդային իշխանություն հաստատելուց հետո:

Չնայած շարադրածին և չցանկանալով Ղարաբաղի գյուղացիությանը ենթարկել պատերազմական նոր աղետների, Հայաստանի հանրապետությունը երկու հանրապետությունների միջև հարցը խաղաղ համաձայնությամբ լուծելու բազմաթիվ առաջարկներ է արել Ադրբեջանի կառավարությանը, որը փորձում է զենքի ուժով Ղարաբաղի գյուղացիությանը փաթաթել նրա համար ատելի ադրբեջանական իշխանությունը: Այժմ, երբ իմ կառավարության պատվիրակությունը Մոսկվա է ուղևորվել երկու հանրապետությունների՝ Ռուսաստանի և Հայաստանի միջև բարեկամական փոխհարաբերություններ հաստատելու համար, բոլորովին անհասկանալի է թվում կոմիսար Օրջոնիկիձեի առաջարկը Ղարաբաղի գյուղացիությանը, որպեսզի սա, հակառակ պարզորոշ արտահայտած իր կամքի, իրեն համարի Ադրբեջանի մաս: Իմ կառավարությանը հայտնի չէ նաև, թե կոմիսար Օրջոնիկիձեն ո՞ր կառավարության անունից է խոսում՝ Խորհրդային Ռուսաստանի՞ թե Խորհրդային Ադրբեջանի: Իմ կառավարությունն արդեն Ձեզ հաղորդել է, որ ինքը պատրաստ է Ղարաբաղի հետագա ճակատագրի հարցը հանձնել հենց նրա բնակչության ձեռքը, և վերջինիս շրջանում իններորդ անգամ հանրաքվե անցկացնելուց հետո, հաստատել նրա իսկական ցանկությունն ու տրամադրությունները և որոշումը միավորվելու այս կամ այն պետական կազմավորման հետ: Սույնով վերստին հաստատում եմ իմ կառավարության պատրաստակամությունը և Ձեզ խնդրում եմ նույն հարցով խոսել Մոսկվա եկած մեր պատգամավորության հետ: Ղարաբաղի բնակչության կամքի ազատ արտահայտման շահերի համար և վերջինիս (գյուղացիության) անխուսափելի արյունահեղությունից փրկելու նպատակով (խորհրդային զորքերը բռնի կերպով նրանց հայրենիքի խորքը մտցնելու դեպքում) իմ կառավարության անունից խնդրում եմ նախապես շտապ կարգադրել, որպեսզի արգելվի նշված զորքերի մուտքը հայկական Ղարաբաղ, ինչպես նաև ետ դարձվեն դրանք Ձիվանշիրի գավառի Հասան-Ռիզից՝ որպես Հայաստանի տարածքի սահմանների մեջ գտնվող շրջանից:

Երևան, 1920 թ. մայիսի 31:

Հայաստանի Արտաքին գործոց նախարար Օհանջանյան»[154]:

Ուրեմն այսպե՛ս. աշխարհում կա ազգերի ու ժողովուրդների ինքնորոշման անկապտելի իրավունք, որն արցախահայությունը վճռաբար պնդել ու հայտարարել է իր նախորդ համագումարներում: Եթե դրանց չեք էլ հավատում, ապա փորձեցեք հարցնել կարծիքը, թույլ տվեք ինքնորոշվելու մեր ազգի այն հատվածին, որ ամբողջ աշխարհամարտի ընթացքում

[154] ՀՊԿԿԱ, ֆ. 300, ց. 1, գ. 563, թ. 194—195:

հերոսաբար իր այդ ինքնուրույնությունն ու անկախությունն է պաշտպանել թուրք-ադրբեջանա-քրդական հրոսակախմբերի շարունակական հարձակումներից: Եվ, վերջապես, սուտ ու անարդար հավակնություն ունի Ադրբեջանը, բայց ինչո՞ւ նրա պահանջը Ռուսաստանի ներկայացուցիչ Օրջոնիկիձեն է ներկայացնում: Այդ ի՞նչ նոր կարգ է, որ մի պետության լիազորը դառնում է մի այլ կառավարության բերանը, այն էլ այդքան սպառնացող ու դավադիր:

Ապրիլի վերջերին Հայաստանի կառավարությունը կազմել էր մի պատվիրակություն (նախագահ՝ Լևոն Շանթ, անդամներ՝ Համբարձում Տերտերյան և Լևոն Զարաֆյան), որը Մոսկվա պիտի գնար Ռուսաստանի կառավարության հետ բանակցություններ վարելու և Հայաստանի հանրապետության անկախությունը ճանաչել տալու համար: Երբ Օհանջանյանն այդ առթիվ հեռագիր հղեց Չիչերինին (մայիսի 4-ին), պատվիրակությունը գտնվում էր ճանապարհին[155]: Այն իր հետ ուներ Լեռնային Ղարաբաղի աշխատավորության 9-րդ համագումարի որոշման հետևյալ կարճ ու հատու քաղվածքը.

«Լեռնային Ղարաբաղի աշխատավոր գյուղացիության ս. թ. ապրիլի 23—29-ին տեղի ունեցած 9-րդ համագումարը որոշեց.

1. 7-րդ համագումարի անունից Ղարաբաղի ու Ադրբեջանի կառավարության միջև ընդունված ժամանակավոր համաձայնությունը համարել խափանված՝ Ղարաբաղի խաղաղ բնակչության վրա ադրբեջանական զորքերի կազմակերպված հարձակումներով, Շուշիի ու գյուղերի բնակչության ջարդերով:

2. Հռչակել Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի հանրապետությանը՝ իբրև նրա անբաժանելի մասի:

3. Խնդրել Հայաստանի հանրապետության Մոսկովյան պատվիրակությանը՝ այս որոշումն ի գիտություն հայտնելու Ռուսաստանի խորհրդային կառավարությանը»[156]:

Պատվիրակությունը իր կառավարությունից ևս հանձնարարություն էր ստացել Արցախի առթիվ: Հայտնի է, օրինակ, պատվիրակության լուծելիք խնդիրներից կենտրոնականի բովանդակությունը՝ «Խորհրդային Ռուսաստանը պետք է ճանաչե Հայաստանի անկախությունը՝ ընդունելով Հայաստանի սահմաններում Ղարաբաղն ու Գյուլիստանը» [157]:

Այն օրերին Մոսկվայում էր գտնվում նաև հայկական մի այլ պատվիրակություն, որը կատարում էր Թիֆլիսի Ղարաբաղյան հայրենակցական կոմիտեի, ինչպես նաև Մոսկվայում գտնվող հայ գործիչների հանձնարարությունը:

Պատվիրակության անդամներն էին Արամայիս Երզնկյանն ու Սիմոնիկ Փիրումյանը, որոնց խնդիրն էր «պաշտպանել խորհրդային կառավարության առաջ Ղարաբաղի հանրապետության շահերը»[158]:

Նրանք գործի լծվեցին նաև մոսկովյան հայ բոլշևիկների և հնարավոր ամեն միջոց գործադրեցին Արցախի հարցին արդար լուծում տալու համար: Ի՞նչ արժե, օրինակ, Լենինին

---

[155] Ս. Վրացյան, էջ 453:
[156] ՀԿՊԱ, ֆ. 220, g. 1, գ. 581, թ. 28 (տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1989, թ. 1, էջ 120):
[157] Ս. Վրացյան, էջ 453:
Փոքր-ինչ այլ է Լ. Շանթի հաղորդածն այս հարցի առթիվ. «Մեր կառավարությունը մեզ իբրև դիրեքթիվ տված էր երեք որոշում... «Գ. Զանգեզուրն ու Ղարաբաղը պետք է մտնեն(ն) հայկական սահմաններուն մեջ. ծայրագույն պարագային համաձայնիլ Ղարաբաղի խնդիրը հանրաքվեի (հանրաքվե—Բ. ՈՒ.) միջոցով վճռելուն» (Շանթի նամակը. Ս. Վ., էջ 611):
[158] «Մշակ», 1920, թ. 16:

ուղղված այն նամակ-խնդրագիրը, որ անպայման պատվիրակության հորդորով, Մոսկվայում աշխատող բոլշևիկ գործիչներ Ռուբեն Քաթանյանն ու Գուրգեն Հայկունին[159] են ստորագրել: Ահա այդ նամակն ամբողջությամբ.

«ԸՆԿ. ԼԵՆԻՆԻՆ

Մոսկվա ժամանած հայկական պատվիրակությունը ձգտում է հասնել Ղարաբաղի ու Զանգեզուրի միացմանը Հայաստանին: Ըստ մեզ հասած տեղեկությունների, հայկական պատվիրակությունը համաձայն է, որ բնակչության ճնշող մեծամասնությունը, որ կազմում են հայ գյուղացիական զանգվածները, «արյունակից ու հավատակից» Հայաստանին կգերադասի մուսուլմանական Ադրբեջանից, թեկուզև վերջինս մտնում է ՌԽՖՍՀ կազմի մեջ: Ընդ որում, Հայաստանի կառավարող կուսակցությունը՝ դաշնակցությունը, գտնում է, որ ագիտացիայի ժամանակ հնարավոր կլինի օգտագործել խորհրդային իշխանության իբր մուսուլմանամետ քաղաքականությունը, և որ հայ զանգվածները, վախենալով հայ-թաթարական բախումներից, ավելի շուտ կգերադասեն միանալ Հայաստանին, քան մտնել Ադրբեջանի կազմի մեջ:

Մենք էլ գտնում ենք, որ ինչպես քաղաքական, այնպես էլ ռազմագիտական պայմաններից ելնելով՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը պետք է հայտարարվեն խորհրդային հանրապետություն, որը մտնի ՌԽՖՍՀ կազմի մեջ ֆեդերատիվ հիմունքներով, հետևյալ պատճառներով.

1. Զանգեզուրի և Ղարաբաղի բնակչությունը, որն իր ճնշող մեծամասնությամբ բաղկացած է հայերից, փաստորեն ինքնորոշվել է, երբ նա ապստամբել է Ադրբեջանի դեմ, ընդ որում այդ ապստամբությունը կազմակերպվել է կոմունիստների կողմից և ընթացել նրանց ղեկավարությամբ:

2. Ղարաբաղի բնակչությունը համագումարներում բազմիցս որոշում է ընդունել այն մասին, որ ինքն անբաժան է Ռուսաստանից և չի ցանկանում միանալ ո՛չ Ադրբեջանին, ո՛չ էլ Հայաստանին:

3. Չնայած Ղարաբաղի ու Զանգեզուրի ցույց տված զինյալ դիմադրությանը երիտթուրքերի, Ադրբեջանի ու անգլիացիների կանոնավոր զորքերին և անգլիական գնդապետ Մատել Վորտի (Շատելվորտ — Բ. ՈՒ.) արտաքսմանը, խորհրդային զորքերը, թեև խիստ սակավաթիվ էին, ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Զանգեզուրում ընդունվում էին բերկրանքով և անարգել առաջ էին շարժվում անանցանելի լեռներով:

4. Ղարաբաղ-Զանգեզուրի խորհրդային հանրապետության ստեղծումը, փարատելով այդ շրջանների բնակչության վախը, որ երկյուղ է կրում մուսուլմանական, թեկուզև խորհրդային Ադրբեջանից, շատ լուրջ սպառնալիք կլինի Հայաստանի համար, եթե վերջինս Անտանտի խարդավանքների հետևանքով հանկարծ որոշի հարձակում գործել Խորհրդային Ադրբեջանի վրա:

5. Ղարաբաղ-Զանգեզուրի խորհրդային հանրապետության իրականացումը հնարավորություն կտա յուրաքանչյուր համապատասխան պահի կոմունիստական ուժեր ուղարկել Հայաստան՝ այնտեղ խորհրդային կարգեր հաստատելու համար:

Գ. Հայկունի

---

[159] Ռ. Քաթանյանը 1920—21 թթ. ՌԿ(բ)Կ Կենտկոմի ագիտացիայի ու պրոպագանդայի բաժնի վարիչն էր, իսկ Գ. Հայկունին աշխատում էր Հայկական գործերի կոմիսարիատում:

Ռ. Քաթանյան»[160]:

Քաթանյանի ու Հայկունու նամակը հետաքրքիր է մի քանի տեսակետից, որոնցից ևս կնշեի հետևյալները.

Ա) Արցախահայությունն ապստամբել է Ադրբեջանի բռնատիրական ձգտումների դեմ, և այդ ապստամբությունն իրավացի ու խրախուսելի է համարվում, քանի որ «կազմակերպվել է կոմունիստների կողմից ու ընթացել նրանց ղեկավարությամբ»: Նույնը նաև խորհրդային զորքերի առթիվ, որոնք «ինչպես Զանգեզուրում, այնպես էլ Ղարաբաղում ընդունվում էին բերկրանքով»: Ուրեմն, եթե կոմունիստները մասնակցած չլինեին ապստամբությանը կամ ժողովուրդը խորհրդային զորքերին բերկրանքով դիմավորելու առիթ ունեցած չլիներ, Ղարաբաղն իրավունք չպիտի ունենար վերամիանալու իր մայր Հայաստանին:

Բ) Իբր, Ղարաբաղի գյուղացիությունն իր համագումարների որոշումներում բազմիցս նշել է, որ «ինքն անբաժան է Ռուսաստանից և չի ցանկանում միանալ ո՛չ Ադրբեջանին, ո՛չ էլ Հայաստանին»[161]:

Մենք արդեն ծանոթ ենք այդ համագումարների որոշումներին և հաստատապես կարող ենք ասել, որ նրանցում նման կետի հիմքն անգամ չի եղել: Ուրեմն, հայ ճանաչված բոլշևիկների կարծիքով՝ այդ սուտն ևս իրենց կարծիք-առաջարկությանը զորություն պիտի հաղորդեր:

Պարզվում է, որ բոլշևիկներ Երզնկյանի ու Փիրումյանի դիմումը ևս պարունակել է նման տրամաբանություն, որի դեմ էլ զայրույթով բողոքել են նրանց Մոսկվա ուղարկած կազմակերպությունները[162]:

Գ) Ղարաբաղ-Զանգեզուր հանրապետությունը պիտի ստեղծվեր իբրև խրտվիլակ Հայաստանի հանրապետությանը վախեցնելու համար («շատ լուրջ սպառնալիք կլինի Հայաստանի համար» և «հնարավորություն կտա յուրաքանչյուր համապատասխան պահի...»):

---

[160] ՄԼԻ ՀՄԿԱ, ֆ. 1022, ց. 2, գ. 157, թթ. 1—2: Այս փաստաթուղթն առաջին անգամ հրապարակել է Հ. Ռ. Սիմոնյանը (տե՛ս՝ «ԽՁ» թերթ, 1989, օգոստոսի 25, թ. 201):

[161] Ի դեպ, սա Արցախում եղել է միայն բոլշևիկյան կազմակերպության հավատամքը, որի մասին 1920 թ. մեկն այսպիսի մահագույժ բառեր է շարել. «Ղարաբաղի դեմոկրատիան միակն է եղել Անդրկովկասում, երբ նա կտրված ամբողջ աշխարհից, խեղդվելով բերդական ռեակցիայի տնտեսական ու ռազմական բլոկադայից, իր համագումարների բերանով, իր անվեհեր ապստամբություններով հայտարարել է ի լուր աշխարհի, բոլոր հայ և օտար հեղափոխական ուժերի, որ նրա օրիենտացիան Ռուսաստանի հեղափոխական դեմոկրատիան է, որի եղբայրական օժանդակությամբ նա պետք է տնօրինի իր բախտը և բուժի իր վերքերը» («Նոր խոսք» շաբաթաթերթ, Թիֆլիս, 1920, դեկտ. 13):
Սակայն, ինչպես տեսանք գրքիս նախորդ էջերում, Արցախի բոլշևիկները ո՛չ նկատելի մասնակցություն ունեցան նահանգի գյուղացիության համագումարներին, ո՛չ կապ ունեին ապստամբությունների ու ինքնապաշտպանական կռիվների հետ, ո՛չ էլ հետագայում կատարեցին որևէ տեսանելի քայլ, որը կարողանար օժանդակել սեփական բախտը տնօրինելու և իր վերքերը բուժելու համար արցախահայության ծավալած գործին: Այդ վերքերը, որ մինչև այսօր էլ կան, բաց են ու անամոք:

[162] Այս պատվիրակության անդամները դիմումում, խեղաթյուրելով պատմական փաստերը՝ կաշվից դուրս են գալիս ապացուցելու, որ այս երկու-երեք տարվա ընթացքում Ղարաբաղը կռվել է մեծամասնական գաղափարների համար, սպասել է մեծամասնականներին և ոչ թե գլխավորապես արյուն է թափել արյունռուշտ Ադրբեջանից ազատվելու և Հայաստանին միանալու համար: Արտակարգ ուշադրություն և հետաքրքրություն է գրավում այդ զեկուցագրի մեջ արտահայտված այն միտքը, թե Ղարաբաղի հայ գյուղացիությունը իր «չորրորդ համագումարներում զենքը ձեռքին պաշտպանել է իր հողն ու ինքնորոշման իրավունքը՝ համարելով վատթարագույն դեպքում ավելի ընդունելի միանալ մանր բուրժուական Հայաստանին, քան բուրժուական-կալվածատիրական Ադրբեջանին»: Դուրս է գալիս, որ Ղարաբաղի հայ գյուղացիության համար չարիք է իր երկիրը Հայաստանին միացնելը... («Մշակ», 1920, թթ. 14,16: Հմմտ. Ս. Վրացյան, էջ 455, ծան.):

Այս էր ժամանակի հայ բոլշևիկ գործիչների քաղաքական ու բարոյական մակարդակը, ուստի և երբեք պատահական չպիտի համարել նրանց պարտությունները հայրենի երկրի, մայր ժողովրդի արդար դատի համար մղված դիվանագիտական ու քաղաքական բախումներում: Սակայն բանից պարզվում է, որ այս անգամ էլ Հայաստանի կառավարությունն ուշացել էր: Մինչև հայ բանագնացները Մոսկվա կհասնեին, Թուրքիայի ու Ադրբեջանի գործակալներն այնտեղ էին և ծավալել էին հակահայկական մի գործունեություն, հայերի ու հայոց հանրապետության դեմ ստեղծել էին մի մթնոլորտ, որ հայերը երիցս խելոք կլինեին, եթե այնտեղ չհայտնվեին: Լևոն Շանթը՝ ռուս-հայկական բանակցությունների հայկական պատվիրակության ղեկավարը, հետագայում հիշում էր, որ խորհրդային կառավարության ներկայացուցիչ, հայազգի Լևոն Կարախանի հետ իրենք համարյա բոլոր հիմնական հարցերի գծով համաձայնության էին եկել, երկկողմանիորեն ձեռնտու դաշինքի շարադրել-պատրաստել, սակայն Բաքվի «կոմունիստների» ճնշման պատճառով ամեն ինչ ի դերև ելավ: Նրանց կարծիքով՝ «Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը թուրքական հողեր են, անվիճելի թուրքական և Հայաստանին հետո միացնելու խոսք անգամ լինել չի կարող»[163]:

Մոսկվայում ստեղծված հակահայկական մթնոլորտի մանրամասներն ավելի որոշակի արտահայտված են այն զեկուցագրի մեջ, որ Երզնկյանն ու Փիրումյանն են հրապարակել Թիֆլիսի թերթերից մեկում: Նրանք գրել են. «...առավել ուշագրավ էր ռուսական շրջանակներում ստեղծված այն բնորոշ տրամադրությունը, որ առաջացել է նախքան հայկական պատվիրակության Մոսկվա մեկնելը, թուրք-թաթարական պրովոկացիայի շնորհիվ՝ նպատակ ունենալով մոլորության մեջ պահել Ռուսաստանի հասարակական կարծիքն ու նրա ղեկավար շրջանները: Պատվիրակները, Մոսկվա հասնելով, շվարած են մնում այն ստերից, որոնցով ընթերցողներին կերակրելիս են եղել կառավարական օրգանները՝ «Իզվեստիան», «Պրավդան» և այլ թերթեր:

Այդ լրագրական հոդվածներում շարունակ այն միտքն է արծարծվել, թե Հայաստանը, Լեհաստանի նման, դաշնակիցների գործիքն է, թե իմպերիալիստ դաշնակիցները համարյա թե ամեն օր Հայաստան են ներմուծում լեռների չափ ռազմամթերք, զինագործական արհեստանոցներ, որոնք առանց դադար առնելու ռազմամթերք են պատրաստում, թե գործը փայլուն կերպով է դրված և երկաթուղային ցանցի վրա աշխատանքը եռում է: Ամբողջ աշխարհի բուրժուաները Հայաստան են հավաքվել՝ շահագործելու համայն պրոլետարիատին և այնպիսի քաղաքականություն են մտցրել, որ ուղղված լինի սոցիալիստական Ադրբեջանի և սոցիալիստական Թուրքիայի խեղճ ու կրակ աշխատավոր զանգվածների դեմ: Այդ երկու երկրների մուսուլման ժողովուրդները հանգիստ չունեն հակահեղափոխական հայոց կառավարության հսկայաթիվ զորքերի նվաճողական հարձակումներից: Իբր, հակահեղափոխականների ձեռքով հրահրված Ղարաբաղի անցքերի ժամանակ տուժեցին ոչ թե հայերը, այլ խորհրդային իշխանության մշտական կողմնակից մսալման աշխատավորությունը»[164]:

Հայկական երկու պատվիրակություններն էլ Մոսկվայում ոչ մի արդյունքի չհասան:

Դրա բուն պատճառը ոչ միայն ռուսների շրջանում թուրք-ադրբեջանական կողմի հրահրած հակահայկական մթնոլորտն էր, այլև մի շարք ուրիշ հանգամանքներ, որոնցում վերջին տեղը չէին գրավում նաև հայկական շրջանները: Ասենք՝ մայիսյան բոլշևիկյան ապստամբությունը, որ երկրում իրար էր խառնել ամեն ինչ և մոռացության մատնել Արցախի նման հարցերը: Նաև՝ հայոց համար նոր վանդետա դարձած Բաքվում ծվարած հայ բոլշևիկների՝ Մոսկվա հղվող հեռագրերն ու հեռախոսազանգերն այն մասին, թե Հայաստանում «հին» հանրապետությունն այլևս գոյություն չունի, և Խորհրդային Ռուսաստանը նրա ներկայացուցիչների հետ չէ որ պետք է բանակցություններ վարի:

---

[163] Լ. Շանթի նամակը Ս. Վրացյանին (Ս. Վրացյան, էջ 608):
[164] Ս. Վրացյան, էջ 454:

Սակայն ինչ էլ որ լիներ, Արցախում ուրբաթը շուտ վրա հասավ, քան շաբաթը: Մարդը բոլորովին կտրված էր Երևանից: Նույնիսկ հեռագրական կապ գոյություն չուներ այլևս: Դրոն կառավարությանը լուր տալու հնարավորություն ուներ միայն Բասարգեչարի միջոցով: Այս ճանապարհով մայիսի 21-ին տված նրա հեռագիրը ստացվել է մի շաբաթ հետո՝ հաղորդելով հետևյալ ահնուսալի տեղեկությունները.

«1920 թ. մայիսի 21: Ռուսական զորքերի մոտենալով Ջևանշիրին, կարմիր հազարյակի (զինվորների) կողմից Թարթառ գյուղի գրավումը և կարմիր հարյուրյակի մուտքը Մերկուրով-փիր (երևի Մարդակերտ — Բ. Ու.) ու Կուսապատ՝ վերջնականապես բարոյալքման են ենթարկել մեր գյուղացիությանը: Ջևանշիրում խորհրդային իշխանություն է հայտարարված: Բուռնութար Մարտիրոսյանն սպանված է իր զինվորների կողմից: Խաչենը վարակվում է բոլշևիզմով: Այսօր երեկոյան այնտեղ եմ ուղարկում մեկ հարյուրյակ, հույս ունեմ պահպանել Խաչենը, փրկել փոխգնդապետ Մեսյանին ու հրամանատարական կազմը, որոնց վտանգ է սպառնում: Վարանդայում ու Դիզակում առայժմ հանգիստ է: Հայկական գյուղացիության միջոցով անհնար է դիմադրություն ցույց տալ բոլշևիկներին...»[165]:

Մայիսի վերջին ևս Դրոյից հեռագիր էր ստացվել Բասարգեչարում: Այստեղ էլ թվարկվում էին արցախահայության դեմ զանազան կետերում Ադրբեջանի կուտակած զինվորական ուժերի ու զինամթերքի ահռելի քանակները՝ թողնելով այնպիսի տպավորություն, թե զուր է ամեն մի դիմադրություն:

Մայիսի 24-ին Ավետարանոց-Չանախչի գյուղում խորհրդակցության են հավաքվում Հայաստանի հանրապետության ներկայացուցիչները (Դրո, Նժդեհ, գնդապետ Սիլիմանյան, Արս. Միքայելյան) և տեղական ուժերի ղեկավարները: Քննության առնելով իրադրությունը՝ պարզում են.

Ա) Որ Ղարաբաղի ժողովրդի տրամադրությունները զգալապես փոփոխության ենթարկված են և աստիճանաբար կարող են վերածվել թշնամության.

Բ) Որ մայիսի 12-ից սկսյալ Հայաստանի կառավարությունից, հակառակ բազմիցս եղած դիմումների, ոչ մի տեղեկություն չի ստացվել, ապա ուրեմն Հայաստանի հանրապետությունը գտնվում է օրհասական վտանգի մեջ.

Գ) Որ Նժդեհի Ղափանի զորամասը չի կարող երկար մնալ Ղարաբաղում, որովհետև բոլորն էլ գյուղացիներ են և կամավոր ու կկամենան վերադառնալ հայրենիք՝ դաշտային աշխատանքներին լծվելու.

Դ) Որ ռուսական բանակի որոշ զորամասեր, խճուղու վրայով, գրավում են կարևոր դիրքեր, որով կտրում են Ղարաբաղի հայկական զորամասի նահանջի ճամփան»[166]:

Որոշում են Արցախի իշխանությունը և բավական զինամթերք ու հեռախոսային կապի միջոցներ հանձնել հայ բոլշևիկներին, որոնց գլուխ էր կանգնած բժիշկ Սաքո Համբարձումյանը:

Հայաստանի հանրապետության զորքը Դրոյի առաջնորդությամբ մայիսի վերջին[167] Քիրսի ստորոտով անցնում է Խծաբերդ, այնտեղից էլ Զանգեզուր:

Եվ նորից, երևի թե վերջին անգամ, Արցախը թողնվում է մեն-մենակ, իր հույսին, որ ասել է՝ անհուսության: Անհուսության, որովհետև նրա ճակատագրին տեր պիտի դառնային բոլշևիկները, մանավանդ հայ բոլշևիկները, որոնց համար գոյություն չուներ ազգային հարց, որոնք, լծված համաշխարհային հեղափոխության մոտալուտ հաղթանակի, թուրք ու

---

[165] ՀՊՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 199:
[166] «Հայրենիք», 1923, թ. 12, էջ 126:
[167] Արս. Միքայելյանն այս գործողության օր է համարում մայիսի 26-ը («Հայրենիք», անդ, էջ 127), Նժդեհը՝ հունիսի առաջին օրերին («Հայրենիք», անդ, էջ 136):

ադրբեջանցի կոմունիստների հետ հաշտ ու համերաշխ այդ հաղթանակին հասնելու հեռանկարով ցնցվածները, պատրաստ էին զոհաբերել ո՛չ միայն Արցախը, այլև ամբողջ Հայաստանն ու հայ ժողովրդին:

Բայց արդյո՞ք հնարավոր էր կանխել այս բոլորը, Հայաստանի հանրապետությունն ուժ և ժամանակ ունեցե՞լ էր այսպիսի ճակատագրական հարց լուծելու համար: Հայաստանի Հանրապետությունը՝ արցախահայության հետ միասին:

Նժդեհը՝ Զանգեզուրի մեն-մենակ ու լեռնական իր մի քանի վաշտերի հետ միասին թուրք-ռուս-քուրդ նվաճողներից փրկած հերոսը, գտնում էր, որ նույնիսկ Արցախն ինքը միայնակ կարող էր և պետք է պաշտպաներ իրեն: «Ղարաբաղը, հաղթական ցանկությունից զատ, հաղթելու բոլոր տվյալներն ուներ, — գրել է նա: — Հասարակականապես ուժեղ, տեղագրորեն ամուր, գրեթե անառիկ մեր ժողովրդի այդ հատվածին հաղթելու համար պակասում էր հոգեբանական նախապատրաստությունը միայն:

Իսկ այդ բանում, իհարկե, միայն ժողովրդի՞ն չէր կարելի մեղադրել[168]:

Սրանից առաջ էլ նա «հոգեբանական նախապատրաստություն» ասելով հասկանում էր անխոհեմ այն «ապստամբությունը», որի արդյունքն էին դարձել Շուշվա հայության ջարդն ու անպաշտպան գյուղերի ավերածությունները: «Ապստամբություն», որի ղեկավար-հեղինակներն էին եղել Արսեն Միքայելյանը և նրա տեղացի գործընկերները...

Դարձյալ հարցն գալիս, դեմ է առնում ղեկավարությանը:

Այն ե՞րբ էր եղել, այս դեպքերից շուրջ մեկ ու կես հարյուրամյակ առաջ, որ հայոց ազատագրության անխոնջ նվիրյալ Հովսեփ Էմինը եկել էր Արցախ՝ տեսնելու նրա գեղեցիկ ու հարուստ բնությունը, անառիկ ռազմավարական հնարավորությունները, ճանաչելու նրա հերոս բնակչությանը...

Եվ այսքանից հետո ցավով արձանագրել էր, կարծես նշելով հավերժական պատիժը, թե «Աշխարհում եղած ամեն բան ունի, բացի մեկից, որը բոլորի թագուհին է՝ խոհեմ ղեկավարություն...»[169]:

1920 թ. մայիսի 26-ին Վարանդայի Թաղավարդ գյուղում տեղի ունեցավ Արցախի հայության 10-րդ համագումարը: Պատգամավորների հիմնականում բոլշևիկներ էին, և ելույթներն ու ընդունած որոշումները, հեռագրերը՝ հղված վերևներին՝ աչքի էին ընկնում աղմկարար այն դատարկաբանությամբ, որ բնորոշ էին լինելու կուսակցության և նրա կողմից ստեղծված հասարակարգի էությունը, խոսքին, գործին: Ողջունում են 11-րդ կարմիր բանակի մուտքն Արցախ, երկրամասը հայտարարում խորհրդային, և ստեղծվում է հեղկոմ՝ Սաքո Համբարձումյանի նախագահությամբ:

Մայիս-հունիս ամիսներին Ադրբեջանի մի շարք շրջաններում հակախորհրդային բուռն ցույցեր և կատաղի կռիվներ եղան: Դրանցից անմասն չմնաց և Շուշին, որի ադրբեջանցի «հերոսներին» ղեկավարում էին մուսավաթական բանակի սպա (գնդապետ) Զեյնալովը[170] և հատուկ այդ ապստամբությունը կազմակերպված անցկացնելու համար Դաղստանից Շուշի եկած (հունիսի 4—5-ին) տխրահռչակ Նուրի փաշան:

---

[168] «Հայրենիք», անդ, էջ 136:

[169] «Հովսեփ Էմինի կյանքը և արկածները» թարգմանություն Հ. Խաշմանյանի, Պեյրութ, 1958, էջ 349:

[170] Զեյնալովը մեկն էր Շուշվա հայկական թաղամասի ողբերգության կազմակերպիչներից: Հայտնի է, որ այն օրերին հայերի տները կողոպտելով, ձեռք է բերել 3 միլիոն 200 հազար ռուբլի դրամ և մի քանի փութ ոսկե ու արծաթե իրեր՝ դրանք պահ տալով բանկին: Երբ ապստամբությունը ճնշվեց, նա Նուրի փաշայի հետ ճողոպրեց արտասահման՝ կողոպտած հարստությունը թողնելով խորհրդային Ադրբեջանի անգամ բանկում (տես՝ «Կոմունիստ», 1920, հունիսի 24-ի համարը): Հետաքրքիր է, ի՞նչ պատժի է արժանի այն կառավարությունը, որն իր նյութական հարստությունն այսօրինակ կողոպտումով է դնում՝ առանց հիշելու կողոպտված մարդկանց շահերը:

Արցախահայությունն իր բոլոր ուժերն ի սպաս դրեց ապստամբությունը ճնշելու և խորհրդային կարգերը հաստատուն դարձնելու գործին՝ առանց նկատելու այն նոր խարդավանքը, որ կազմակերպվում էր իր ազգային ամբողջության դեմ: Ճիշտ է, ցրվել էր Խ. Սուլթանովի սուտ հեղկոմը, որը գոյություն ունեցավ ընդամենը երկու շաբաթ[171]: Իսկ ի՞նչ եղավ նրանից հետո: Ստեղծվեց նոր հեղկոմ, որի նախագահն էր մի ոմն Բահադուր Վելիբեկով: Սրա տիրապետության տակ էին գտնվում Քրդստանը, Շուշին, Խաչենը, Աղդամը և Ջրաբերդը: Հայկական շրջանները՝ ադրբեջանի Վելիբեկովի ու նրա ադրբեջանական հեղկոմի տիրապետության ներքո: Կողքին էլ Սաքո Համբարձումյանի հեղկոմը Թաղավարդում: Հետո էլ այս երկու հեղկոմները պիտի տեղավորվեին կողք-կողքի, Շուշիում: Իսկ նրանց գլխի վրա էլ հանրապետության արտակարգ լիազորն էր մի Դադաշ Բունիաթզադե, որի խնդիրն ուներ Արցախից ու հարևան շրջաններից կազմել-ձուլել մեկ տնտեսական ամբողջություն, որի սահմաններում հայության ազգային հարցեր ո՛չ պիտի լինեին, ո՛չ էլ նոր գոյային:

Այս խնդրի իրականացման հաջորդ քայլն էլ Սաքո Համբարձումյանին մարզից հեռացնելն էր իբր այլ աշխատանքի անցնելու կապակցությամբ: 1920 թ. հոկտեմբերին էր, Շուշիում գումարվեց նահանգի կոմկուսի կոնֆերանս, որը, այսպես կոչված, գավկոմի քարտուղար Համբարձումյանին հանելով՝ տեղն «ընտրեց» ինչ-որ Սուրխայ Ադիգյոզալովի[172]:

Սովից ու համաճարակներից փրկություն չունեցող գյուղերում անվերջ գումարվում էին ժողովներ ու միտինգներ, երկու «քաջամարդյան» հարևան, եղբայր ու բարեկամ ժողովուրդների փոխհարաբերությունները փառաբանում, եղբայրության երդումներ տալիս-առնում: Իսկ փողոցներում ռազմական կոմունիզմի մոլեգնած ուրվականն էր պտտվում՝ ավերելով շատ թե քիչ տանելի կյանք ունեցող տնտեսություններն ու ընտանիքները: Խանբեկտու և Ասկերանի արանքում Բալլուջա գետակի ու Կարկառի միացման կետում Բերդաձոր-Ղարաղշլաղից բռնագաղթված հայ ընտանիքները մի խղճուկ բնակավայր էին ստեղծել, ուզում էին նոր կյանք սկսել: Մարզի ադրբեջանցի տնօրենները որտեղից որտեղ հայտնաբերեցին Հայաստանի Ղարաբաղլաղից փախած ցեղակիցներ ու բնակեցրին գաղթական բերդաձորցիների կողքին՝ միացյալ-«եղբայրական» գյուղը կոչելով Խոջալու: Բայց ինչո՞ւ հենց այստեղ, աստծուց անիծված այս գետեզերքին, ուր տարին առնվազն հինգ ավերիչ կարկուտ է տեղում, եթե նկատի էլ չառնենք ուրիշ անհարմարությունները: Ադրբեջանի տնօրենների աչքը տեղի՛ վրա էր, ռազմագիտական տեսակետից շա՛տ կարևոր տեղի: Մեծ ճանապարհի հանգուցակետ էր, և անհարմար կլիներ, եթե նրա վրա միահեծան տիրություն անեին հայերը: Ապագայի նենգավոր ծրագրերն էլ քողարկեցին ստապատիր խոստումներով ու կարգախոսներով: Կոոպերատիվներ ու կոմունաներ ստեղծելու կոչեր էին լսել ինչ-որ տեղ, բերին Բաքվում առաջին կոմունան կազմակերպեցին այդ Խոջալու դավադրավայրում՝ անունը դնելով Դարալագյազ[173]:

Ի՞նչ ժամանակ էր անցել, ինչքա՜ն կարճ ու տխուր ուղի սոցիալիզմի ադրբեջանական տարբերակի կիրառման համար, Արցախը դարձել էր անճանաչելի: Ծայրամասային շրջանները տրվել էին հարևան այլազգի գավառական իշխանությունների տնօրինությանը: Ջրաբերդի մեծ մասը՝ Թարթառին, Դիզակը՝ Զաբրահիլին:

Այս բռնակցումների, ժողովրդական զանգվածների դեմ գործադրվող բռնությունների ու անարդարությունների, ազգային խտրության ու արհամարհանքի դեմ բողոքի ձայն

---

[171] Ապրիլի 29-ին հռչակված սուլթանովյան հեղկոմի դեմ արցախցիները ցույցեր էին կազմակերպել և հեռագիր ուղարկել Լենինին՝ մերկացնելով նախագահի հակահայ արարքները: Նույնն էր Մայիսի 14-ին նրա հովանավոր Ն. Նարիմանովն ստիպված եղավ վերացնել եղեռնագործ հեղկոմը, հակաշահ Սուրաթանիին էլ կալանքի տակ առնելով փոխադրել Բաքու: Հետագայում մամուլում հրապարակվել էր հաղորդում, որով հայտնվում էր, թե Խոսրով-բեկ Սուլթանովը Պարսկաստանում հակախորհրդային կազմակերպություն է ստեղծում՝ նպատակ ունենալով անցնել Անդրկովկաս և այնտեղ գործել (տես՝ «Խորհրդային Հայաստան», 1926, ապրիլի 5, թ. 97):
Երևի Նարիմանովն էր նրան Պարսկաստան «գործուղել» այդքան կարևոր հանձնարարությամբ:
[172] Գր. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 192—193:
[173] ԼՂԻՄ-ի պետարխիվ, ֆ. 23, ց. 2, թ. 13: Հմմտ. Գր. Հովհաննիսյանի աշխ.-ը, էջ 195:

բարձրացնողները տեղնուտեղը կալանքի տակ էին առնվում, ենթարկվում ռազմական կոմունիզմի բերած, առաջներում չեղած-չտեսնված պատժաձևերի:

Եվ այս ամենի դեմ ծայր առան ժողովրդական ընդվզումները Վարանդայում ու Դիզակում, Խաչենում ու Զրաբերդում:

Զինված պայքարի առաջին կոչը հնչել էր Դիզակի Տումի գյուղում, և այդ պայքարի ղեկավարությունն իր ձեռքը վերցրեց Տումու զավակ, ցարական բանակի լեյտենանտ (հեծյալ զորամիավորման սպա) Թևան Ստեփանյանը: Նա, որ գարնանը, Դիզակի ռազմական ուժերը կարգի բերելիս, Նժդեհի խորհրդատուն էր եղել ու քաջահմուտ օգնականը:

Թևանի ջոկատը դեռևս աշնան սկզբից պատժարշավի ելավ Դիզակի գյուղերում սանձազերծված բռնությունների դեմ և սարսափի տակ դրեց սոցիալիզմի ու ադրբեջանական կառավարության անունից արցախցի հայի տունը քանդողներին: Կարճ ժամանակում ակնառու հաջողություններ ձեռք բերեցին ապստամբները՝ Դիզակի լեռնային գյուղերում, Տողի և Տումու ենթաշրջանում վերացնելով խորհրդային իշխանությունը և վերականգնելով անկախության շրջանի կարգ ու կանոնը: Նոյեմբերի վերջերին թևանականների դեմ «սրբազան» պատերազմի էին ելել ամբողջ Զաբրահիլի կոմունիստական ջոկատները, Դիզակի ու Վարանդայի համարյա բոլոր գյուղերի բոլշևիկյան զինված խմբերը: Անհավասար պայքարում տեղի տալով՝ Թևանն ու մի քանի յուրայիններ անցան Զանգեզուր, և, այնտեղ Նժդեհից համալրումներ ու զինամթերք ստանալով, վերադարձան Արցախ՝ շարունակելու պայքարը: Դեկտեմբերի կեսերին Թևանի զորախումբը Դիզակում ու Վարանդայում վերստին վերացրել էր խորհրդային իշխանության տեղական մարմինները: Օրեցօր ծավալվում էր նրա ազդեցության ոլորտը, նոր գյուղեր էին հանձնվում ժողովրդական հերոսի տնօրինությանը:

Ապստամբության հաջողությունները շփոթեցրել էին Շուշվա տերերին: Բաքուն հեռագիրը հեռագրի հետևից էր տալիս՝ պահանջելով կրակի վրա խորովել անհնազանդ արցախցուն և նրա համախոհներին: Ոտքի էին ելել ամբողջ մարզի բոլշևիկյան ուժերը, շրջակա գավառներից օգնության շտապող զորաջոկատները: Եվ, սակայն, ամբողջ ձմեռ նրանք անզոր էին որևէ լուրջ վնաս հասցնել ապստամբներին:

Այն ժամանակ գործի դրվեց բոլշևիկյան պրոպագանդան: Ապստամբներին ժողովրդի աչքում վարկաբեկելու համար հյուսիսային Արցախում նրանց մասին զարհուրելի պատմություններ էին տարածում, նրանց էին վերագրում չարագործություններ, որոնք իրենց՝ կոմունիստների գործունեության մեջ անգամ չէին կիրառվել: Ահա այդ օրերին հնչյուրված հանցանքների մի փունջ, որը կրկնում էր ետնագույն ուսումնասիրողներից մեկը. «Ի՞նչ պատիժներ ու գազանություններ ասես, որ չկիրառեցին այդ բարբարոսները սովետական մարդկանց նկատմամբ. նրանք կտրում էին մարդկանց ականջը, մատը, ձեռքը, քիթը, պայտում էին ոտքերին, շիկացած երկաթով խարանում էին, գլխիվայր կախում ու ծեծում… Այդպես վարվեցին թևանական հրոսակապետներն իրենց գրաված գյուղերում նրանց նկատմամբ, ովքեր այս կամ այն չափով համակրում էին սովետական իշխանությանը»[174]:

Արցախ գործուղված ադրբեջանական կուսակցական պատասխանատու մի աշխատող (իհարկե ո՛չ ադրբեջանցի) 1921 թ. օգոստոսի 3-ին իր Կենտկոմին զեկուցել է ներկայացրել՝ պատմելով մարզի հայ բնակչության դեմ գործադրվող անարդարություններն ու իրավախախտումները: Ասում է՝ «մարզի հայկական մասի խորհրդային աշխատողները վեց ամիս աշխատավարձ չեն ստացել: Նրանք գալիս են սպառկոմ, խնդրում են իրենց կերոսին վաճառել, բայց նրանց այնտեղից վռնդում են՝ ասելով, որ նրանք բոլորն էլ թևանիստներ են, ուստի նրանց ոչինչ չի հասնում և այլն, և այլն»[175]:

---

[174] Գր. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 203:
[175] ՄԼԻ ԿՈԱ, ֆ. 64, ց. 1, գ. 95, թ. 200: Մեջբերումը՝ ըստ Հ. Սիմոնյանի հրապարակման (տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1980, սեպտեմբերի 20-ի համարը):

Ես 50—60-ական թվականներին Հադրութի (նույն Դիզակի) տասնյակ ու տասնյակ հնաբնակների հետ եմ զրուցել: Հարցուփորձ եմ արել ծերունիների, որոնք Թևանի համազյուղացիներն էին, մոտիկ ծանոթները, նրան անձամբ ճանաչած մարդիկ: Եվ նրանք բոլորն էլ հիացմունքով էին խոսում մեծ ապստամբի ու նրա զորաջոկատների անձնազոհ խիզախության մասին, ապացուցում էին, որ նրանք եղել են ժողովրդի համար գլուխները դրած մարդիկ, որոնց կռիվն ադրբեջանական բռնի տիրապետության և նրա առաջ սողացող տեղական ռամկատարների դեմ էր, բոլշևիկյան ռազմական կոմունիզմի կամայականությունների ու չարագործությունների դեմ:

Հին տումեցի Շամիր դային՝ բանաստեղծ Բոգդան Ջանյանի հայրը, գեղջկական անկեղծությամբ ու գորովանքով էր վերհիշում հերոսի սխրագործությունները, որոնցից յուրաքանչյուրի մղումը եղել է հայ մարդու արդար իրավունքի պաշտպանությունը: Ծեր տումեցու աչքերը վառվում էին Թևանի անունը տալիս: Ես հարցրել էի. «Ձա՞ր մարդ էր, կատարե՞լ է անարդար ու դաժան գործեր: Չէ՞ որ ժամանակն ինքը չար էր ու դաժան»:

Շամիր դային, իր գիտեցածին հայլի–մայլի, պատմում էր, և նրա այդ պատմածից հառնում էր արցախահայերի փրկության համար աշխարհ եկած մի դյուցազուն, որին գնդակ չէր առնում... Եվ ի՜նչ ժողովրդական բարություն կար նրա արած-թողածի, առհասարակ թևանիստների[176] գործունեության մեջ՝ այդ Շամիր դայու ներկայացրած տարբերակում: Միայն մեկ անգամ Թևանը պիտի չարությանը չարությամբ վարձատրեր, և այն էլ աստված խափանեց:

Միր Ջաֆար Բաղիրովի «չեկան» մեր գյուղի տավարած բոլշևիկներից մեկին հանձնարարել է, որ խեղդի Թևանին,— Շամիր դային էր պատմում:— Էս տավարա Թևանի ջահել հարսի-փերի քրոջը բռնում, տանում է, ծմակում կապոտում, անասնի պես անում հետը, վերջն էլ գլուխը կտրում, գցում Իզակի գետը: — Ծերունու աչքերը խոնավ էին, ձայնը կոտրատվում էր: Եվ բռունցքով արցունքը սրբեց, հետո շարունակեց: — Թևանն եկավ, իմացավ ինչն ինչո՜ց է, քրոջն առոք–փառոք թաղեց, հետո էլ տեղեկացավ, որ էն տավարը ծմակից էլ տուն չի գալիս: Իր տղերքն ասացին. «Թևան, մեծ ախպեր, դու սգվոր ես, տանը նստի, մենք գնանք անտառը սանրենք, էն ավազակին ճարենք-բերենք»: Թևանն ասաց. «Չէ՛, ես ի՜նքս, ես իմ ձեռքո՜վ»: Եվ անտառ գնալու տեղակ, աչքն ավազակի տան վրա էր պահում... Մեկ էլ նկատեց, որ սրա աղջիկը, ձեռքին մի կապոց, գնում է դեպի ծմակը...

Թևանս Գորոզու բերդի տակին սրան բռնում է. աղջկա տարած հացն ուտելիս է լինում: Բռնում է ու կարգադրում, որ տեղից չշարժվի: «Դու էստեղ կմնփվես, — ասում է, — մինչև ես աղջկադ շենի գլուխը հասցնեմ, վերադառնամ»: Եվ աղջկան տանում, ծմակից հեռացնում է, որ սա չտեսնի, սրտաճաք չլինի... Թևանս վերադառնում է Գորոզու բերդի տակը և ի՜նչ տեսնի, որ լավ լինի... Տեսնում է՝ էն անասունը սրտաճաք դառած, մեռած...

Հա՛, էսպես էր, որ Թևանը հնար չունեցավ իր վրեժն չարությամբ լուծելու:

Իսկապե՞ս այդպես է եղել, թե ո՛չ, Տումիում այս պատմությունը հիմա էլ ապրում է մարդկանց շուրթերին:

Թևանի իշխանությունը Դիզակում ու Վարանդայի մի մասում դիմացավ ավելի քան վեց ամիս: Դիմացավ Ադրբեջանի զորքերի ու մարզի բոլշևիկյան զորաջոկատների հետ կռիվ տալով:

1921 թ. գարնանն Ադրբեջանի կառավարությունն Արցախ ուղարկեց զինական թարմ ու մեծ համալրումներ: Նրանց հետ էին 11-րդ կարմիր բանակի 84-րդ բրիգադի 250, 251 և 252-րդ գնդերը՝ ռուս հրամանատարներ Վոյցեխովսկու, Զուլովի և Միզրիկովի գլխավորությամբ:

---

[176] «Թևանիստներ» էին կոչվում ապստամբության մասնակիցներն ու համակիրները, նույնիսկ տարիներ հետո Թևանի մասին որևէ դրական խոսք ասողները: 1920—30-ական թվականներին «թևանիստը» դժխեմագույն մեղադրանք էր, որով կալանքի տակ առնվեցին և անհետ կորան տումեցի, հադրութցի, նույնիսկ վարանդեցի շատ ու շատ գեղջուկներ, մասնավորապես գյուղաբնակ մտավորականներ:

Լեռնային ամրություններին ապավինած, ապստամբ գյուղերում ու անտառներում ապաստանած ազատամարտիկները, ցավոք, ոչ մի տեղից օժանդակություն չէին ստանում: Զանգեզուրը հնարավորություն չուներ հասցնելու իր խոստացած օգնությունը: Եվ ծանր ու օրհասական պայքարից հետո ապրիլի վերջին-մայիսի սկզբներին ազատագրական արյունահեղ պայքարը մարեց: Թևանն իր մի քանի զինակիցների հետ հեռացավ Պարսկաստան: Զինվորներից շատերը Խծաբերդի կողմով անցան Զանգեզուր և միացան Նժդեհի բանակին:

Թևանը մեկ էլ հայրենի լեռներում հայտնվեց 30-ական թվականներին: Համագյուղացիներն ասում են՝ եկել էր արցախահայությանը նոր պայքարի հանելու Ադրբեջանի ստորացուցիչ իշխանության դեմ: Սակայն տեսավ մարզի նոր վիճակը, համոզվեց, որ ապստամբությունը կամ ժողովրդական պայքարն այլևս խեղճ ու անզոր միջոց պիտի լինի մի այնպիսի տերության հանդեպ, ինչպիսին ստալինյան բռնապետությունն էր՝ ծանրորեն նստած աշխարհի մեկ-վեցերորդական մասի վրա:

Հայրենական պատերազմի վերջին տարում Պարսկաստան մտած խորհրդային զինված ուժերն այնտեղ ապաստանած շատ հայերի էին բռնոտել, փոխադրել թիկունք և այստեղ ենթարկել պատիժների, որոնց միայն իրենք էին ընդունակ: Բռնոտվածների մեջ է եղել նաև Թևանը:

Այն ժամանակ Արցախում ժողովուրդը հետաքրքիր դիպվածներով էր պատմում Թևանի բռնվելը, Բաքվի՝ Բաղիրովի կարգադրության տակ տարվելը, հանդիպումը հին թշնամու հետ, նույնիսկ չարաչար պատիժը առնական վեհանձնությամբ կրելու մանրամասները...

Ժողովուրդն իր հերոսի սխրանքը պատմելիս չեր խնայում ո՛չ գույներ, ո՛չ էլ իր արգելված սիրո ջերմագին զեղումները:

Ասացի, որ Լևոն Շանթի պատվիրակությունը մնացել էր Մոսկվայում: Սակայն չանդրադարձանք Արցախի հիմնահարցին վերաբերող նրա բանակցությունների մանրամասներին: Մինչդեռ սա հիմնահարցի հոլովման կարևոր դրվագներից է և արժե, որ ներկայանա հնարավոր ամբողջականությամբ:

Լևոն Շանթի գլխավորած պատվիրակությունը (անդամներն էին Համբարձում Տերտերյանն ու Լևոն Զարաֆյանը) Մոսկվայում, իբր թե, հայ-ռուսական բանակցություններում անցկացրեց համարյա ամբողջ ամառը: Եղան բազմաթիվ հանդիպումներ Արտաքին գործոց նույնիսկ իրենց պատվիրակության վարկն այնքան էլ չզարդարող հանիստ փոքր պաշտոնյաների հետ: Բոլոր հանդիպումները հնարավոր մանրամասներով նկարագրել է Համբարձում Տերտերյանը[177], որը բավական սուր դիտողություն ու վարժ գրիչ ունեցող և մանավանդ վերին աստիճանի անկեղծ մարդ է երևում: Այնքա՜ն անկեղծ, որ չի շրջանցում նույնիսկ իրենց պատվիրակության վարկն այնքան էլ չզարդարող հանգամանքները: Այդ պատճառով էլ զարմանում ես այն թմրած վիճակից, որ իրենք են ապրում ամիսներ շարունակ, անձեռներեցությունից, որ այնքան ժամանակ ցուցադրում են՝ Լևոն Կարախանի պես հրաշալի հայի և արդարամիտ գործչի հետ անմիջական շփումներ և գործակցություն ունենալով հանդերձ:

Տվյալ դեպքում ինձ հետաքրքրողը Լեռնային Արցախի հարցն է, որը, տեսնե՛ք, ի՜նչ հոլովումների է ենթարկվում: Եղան կետեր գիտենք. կառավարությունը հանձնարարել էր հասնել նրան, որ «Խորհրդային Ռուսաստանը… ճանաչի Հայաստանի անկախությունը՝ ընդունելով Հայաստանի սահմաններում Ղարաբաղն ու Գյուլիստանը»: Սկզբում Չիչերինն ու Կարախանը համաձայնում են այս և մի շարք ուրիշ հայկական պայմանների… Բայց պատվիրակության անդամներն ու հատկապես նրա նախագահը երևի մտածում են, թե որքան ձգեն, այնքան օգտակար կլինի: Չգեն, երբ գիտեն, որ Ադրբեջանը՝ 11-րդ կարմիր

---

[177] Համբարձում Տերտերյան, Հայաստանի հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի բանակցությունները, Լևոն Շանթի պատվիրակությունը, «Հայրենիք», 1954, փետրվար-մայիսի համարները:

բանակի մեջքը ելած՝ ասպատակում է Հայաստանի արևելյան նահանգները, իսկ արևմուտքից էլ Քեմալ Աթաթյուրքն է ճամփա ելել՝ արևելակեզ հայացքը հառած Հայաստանի վրա:

Հունիսի կեսերին տեղի է ունենում մի կարևոր հանդիպում, որը ցույց է տալիս, թե ժամանակը հայաց օգտին չի գործում. ձեռք բերված նոր պայմանավորվածությամբ՝ «Նախիջևանի շրջանը և Զանգեզուրը անվերապահորեն պիտի համարվեին հայկական հողամասեր, իսկ Ղարաբաղը պիտի նկատվեր վիճելի, որի իրավական վիճակը որոշվելու էր հետագային ժողովրդական հանրաքվեով»[178]:

Անընդունելի՞ են համարում այսպիսի պայմանները, թե՞ դարձյալ ձգելու մեջ են տեսնում իրենց օգուտը, մի երկու շաբաթ ևս ջուր են ծեծում, և «Հունիսի վերջերին հայ-ադրբեջանական սահմանների վերաբերյալ մեր պատվիրակությունը ստացավ մի նոր առաջարկ, որով Ղարաբաղը վերջնականապես թողնվում էր Ադրբեջանին, Նախիջևանը՝ Հայաստանին, իսկ Զանգեզուրը համարվում էր վիճելի…»[179]:

Այս կետում արդեն պատվիրակության երեք անդամները բաժանվում են երկու մասի. Շանթը գտնում էր, որ չի կարելի Արցախը զիջել, առանց Հայաստանի կառավարության համաձայնությունն իմանալու, իսկ մյուս երկուսը վճռել էին ընդունել արված առաջարկությունը՝ այսինքն՝ Արցախը հանձնել Ադրբեջանին՝ «ունենալով այն խոր համոզումը, որ Ղարաբաղի ազատասեր և ըմբոստ հայությունը վաղ թե ուշ պիտի միանար իր մայր հայրենիքին՝ Հայաստանի հանրապետությանը»[180]:

Եվ այսպես պարապ օրերն ու ապարդյուն հանդիպումներն այնքան են ձգվում, մինչև որ հորիզոնում երևում է «նոր» Թուրքիայի առաջնորդ Քեմալ Աթաթյուրքը, ռուսական հեղափոխության մեծագույն բարեկամն ու հզոր հենարանն Արևելքում, որն իրեն ներկայացնում է իբրև խորհրդային իշխանության ոխերիմ թշնամի Անգլիայի և առհասարակ «արևմտյան կապիտալիստների» դեմ երդվյալ մարտնչող և հույս ունի, թե «ինքը կգտնի ամեն տեսակ պաշտպանություն Ռուսական խորհրդային մեծ հանրապետության կողմից, որը բացեիբաց իրեն հայտարարել է ճնշվածների ազատարար և կապիտալիստների ու իմպերիալիստների անհաշտ թշնամի»[181]:

Այս շարժուն սիրազեղումը թուրքական նոր կառավարության կարևոր դեմքերից մեկի՝ Բեքիր Սամի-բեյի նամակից է՝ ուղղված Չիչերինին: Հետաքրքիր է, որ հենց այս նամակում էլ Բեքիր Սամին հաղորդում է, թե Մեծ ժողովը բարեկամության ու համագործակցության ծրագիր մշակելու համար Մոսկվա է գործուղել իր պատվիրակությունը, որն ահա մեկ ամիս նստած է Էրզրումում՝ «այն պատճառով, որ մեր դրացի հայերը փակել են հաղորդակցության ուղիները»:

Թուրքն իր երկրից Մոսկվա կարող էր գնալ ամեն տեղով և ամեն ճանապարհով՝ ծովով, երկաթգծով, բարեկամը խնդիրներով, հատկապես ավելի կարճ ու հեշտ այն ճանապարհով, որ ընկած էր Վրաստանում (Բաթում-Թիֆլիս-Մոսկվա), իսկ Հայաստանով միայն գունջապայի ճանապարհ կար: Բայց դա կարևոր չէր, պիտի «դրացի հայերի» քիթը կրծեր, որովհետև տեղ հասնելուն պես ուրիշ հաշիվներ էլ էր մաքրելու:

Այս ժամանակ էր, 1920 թ. հունիսի 17-ին, որ Ռուսաստանի Արտաքին գործոց նախարարը հաղորդում էր, թե Ռուսաստանն ահա շուտով իր ներկայացուցչությունը կուղարկի Փոքր

---

[178] «Հայրենիք», 1954, թ. 6, էջ 14:
[179] Անդ, էջ 15:
[180] Անդ, էջ 16:
[181] Թուրքիայի ազգային մեծ ժողովի նախագահ Մուստաֆա Քեմալ փաշային Չիչերինի 1920 թ. հունիսի 3-ին ուղարկված նամակի պատասխանից (ստորագրող Մեծ ժողովի արտաքին գործերի կոմիտեի անդամ Բեքիր Սամի), «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Ե., 1972, էջ 449—450:

Ասիա՝ Անգորա, իսկ «Մոսկվայում է գտնվում թուրք հայտնի գործիչ Խալիլ փաշան, որը ներկայացնում է Թուրքական հեղափոխական կառավարությունը»[182]:

Սա մեզ շատ ծանոթ Խալիլ փաշան էր, երիտթուրքական կառավարության հայտնի պարագլուխներից և հայկական ջարդերի կազմակերպիչների շարքում առաջիններից մեկը, նա՛, որ հենց այս ժամանակ Մոսկվայից էլ պիտի փոխադրվեր Բաքու և այնտեղ կազմակերպեր թուրք-ադրբեջանական զորամասեր՝ պատրաստ լինելու մարտական այն առաջադրանքներին, որ կհաշվեին թրքական միասնության շահերը: Հայտնի է, որ միասնությունն այն ժամանակ ընդունել էր լայն ծավալներ, և բոլորովին պատահական չէր, որ Խալիլ փաշայի զորամասերում ծառայելու էին գալիս ինչպես թուրքերն ու ադրբեջանցիները, այնպես էլ առհասարակ մահմեդական շատ երիտասարդներ Ղրիմից, Բաշկիրիայից, Թաթարիայից, Միջին Ասիայի տարբեր քաղաքներից:

Բայց ինչ էլ որ լիներ, դաշն կնքողները Ռուսաստանն ու Թուրքիան էին, և սրանց բարեկամությունն էր, որ պիտի տրորեր հայ ժողովրդի ու նրա պետականության շահերը: Բավական է թեկուզ մի թռուցիկ հայացք ձգել այն ժամանակ, 1920 թ. սեպտեմբերի 1--8-ին, Բաքվում տեղի ունեցած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի նյութերին, որպեսզի պարզից էլ պարզ դառնա, թե ռուս-թրքական, այսպես կոչված, բարեկամությունն ու դաշնությունն ինչպես պիտի ոտքի տակ տային հայության իրավունքները, շահերն ու արժանապատվությունը: Համագումարի պատվիրակները, ռուս թե թուրք, հայ կոմունիստ թե եվրոպացի դեմոկրատ, իր մի բուռ հողի վրա խեղդվող հայ ժողովրդի և նրա նորածին պետության դեմ այնպիսի ատելությամբ, բնաջնջելու այնպիսի վճռականությամբ էին խոսում, ասես աշխարհին այն օրերին չուներ ավելի վտանգավոր թշնամի, քան այդ Հայաստանը: Իսկապե՛ս, Հայաստանի հանրապետության դեմ վայրահաչելիս բոլորը միաձայն էին, միահամուռ, միասիրտ, և՛ երիտթուրքերի բռնապետության ներկայացուցիչ Էնվերը, և՛ Անատոլիայի, այսպես կոչված, հեղափոխական կամ քեմալական շարժման պատվիրակ Իբրահիմ Թալին[183], և՛ համագումարին ուղղություն ու տոն տվող Զինովևը, և՛ նույնիսկ հայ բոլշևիկները: Եվ սրանք ձայնակցում էին նշանավոր հեղափոխականներ Բելա Կունը, Ջոն Ռիդը... Տեսեք, Եղեռնից հետո Հայաստանին հասցված ամերիկյան օգնությունն ուրանալով՝ Ջոն Ռիդն ինչպես էր խեղաթյուրում իրողությունները. իբր, Ամերիկան օգնություն էր խոստացել, սակայն չկատարեց, և եթե կատարեր էլ, միևնույն է, դա լինելու էր «Բենի Մեմի» հայտնի խաղը՝ օգտագործելու Հայաստանի հանքային հարստությունները, ապա հայ ժողովրդին դարձնելու էժան աշխատուժի պահեստ[184]:

Պատվիրակների մոլեռանդ ու անպատասխանատու հայտարարություններից այնպիսի տպավորություն է ստացվում, թե խաղաղասեր, անմեղ ու իր ազատությանը ձգտող Թուրքիային երկու հակամարտկային ու գաղտագողի ուժեր են տանջում՝ Էլեֆտերիոս Վենիզելոսի հույները արևմուտքից և դաշնակցական հայերն արևելքից[185]:

Իսկ Զինովևը՝ Ռուսաստանի քաղաքականությունը ներկայացնող բարձր պաշտոնյան, ահա թե ինչպես է խոսում այն Հայաստանի մասին, որի հետ այն ժամանակ իր կառավարությունն, իբր թե, խաղաղարար բանակցություններ էր վարում՝ բարեկամության դաշնագիր կնքելու համար: «Այստեղ շատ են խոսում Հայաստանի մասին, — ասում էր նա: — Միաժամանակ Հայաստան գոյություն չունի. գոյություն ունի բանվորա-գյուղացիական Հայաստան՝ մի կողմում, որին մենք եղբայրական ձեռք ենք մեկնում, և անիծյալ, ճահճային դաշնակցական, բուրժուական Հայաստան՝ մյուս կողմում»[186]:

---

[182] Անդ, էջ 452:

[183] Էնվերն ու Թալին համագումարի նիստերին ներկա չէին, սակայն Բաքվում էին գտնվում և համագումարին ուղարկել էին իրենց հայտարարությունները, որոնց ընթերցումը մահմեդական պատվիրակների խանդավառությունն էր առաջացրել:

[184] Տես՝ «Первый съезд народов Востока», стенографический отчет, Пгр., 1920, стр. 123—124.

[185] Անդ, էջ 113, 115:

[186] Անդ, էջ 226:

Երկրորդ կողմին կպցրած մակդիրները բավական են հասկանալու համար, թե Զինովևը, իր կառավարությունը և դահիճն հավաքվածների դաժան միասնությունը ինչպե՞ս կվարվեին Հայաստանի հետ, եթե այն հանկարծ հայտնվեր իրենց կողքին:

Եվ այս մթնոլորտում կրակի վրա ձեթ է լցնում Ռուսաստանի Ազգությունների կոմիսարիատի աշխատակից, արևելագետ Մ. Պ. Պավլովիչը (իսկականը՝ Միխ. Լազ. Վելտման), որը դատապարտում է Հայաստանին՝ Զանգեզուրի ու Ղարաբաղի նկատմամբ ցուցաբերած հավակնությունների համար. իբր իրեն հայտնի է Դրոյի նամակն այդ առթիվ՝ գրված 1920 թ. օգոստոսի 4-ին[187]:

Պավլովիչը Հայաստանին մեղադրում է մի այլ մահացու հանցանքի մեջ ևս. «Հայաստանը ցանկանում է դառնալ միջերկրական մեծ երկիր և տիրապետել այն տարածքի վրա, որտեղ հայերը կազմում են բնակչության ընդամենը 50 տոկոսը»[188]:

Կարծես 50 տոկոսը քիչ բան է՝ Եղեռնից ու զանգվածային բռնագաղթերից հետո, կամ նրանք, որ բռնի տիրապետություն ունեին նույն տարածքի վրա, 50-ից ավելի տոկոսն էին կազմում բնակչության:

Եվ այս տրամաբանության, այս մտածելակերպի տեր մեկը ստալինյան Ազգությունների կոմիսարիատում ազգային հարցի խորհրդատուն էր, արևելագետ, իր կարծիքը թելադրող (թե՛ վերից ստացած տեսակետը թմբկահարող):

Պավլովիչն առհասարակ շատ էր երազում, որ Թուրքիան իր ողջ ռազմական ուժերով և Ռուսաստանից ստացած դրամի ու ռազմամթերքի հզորությամբ հարձակվի Հայաստանի վրա, նրան մի լավ դաս տա: Նա համոզված էր, «որ Հայաստանի վրա թուրքական այդ հարձակումը, նույնիսկ անհաջողության դեպքում, կունենա միջազգային մեծ նշանակություն»[189]:

Ամեն ինչից երևում է, թե Ռուսաստան-Թուրքիա-Ադրբեջան դաշնությունը, որ իր մեղրամիսն էր ապրում, ի՜նչ ստոր ու դիվային ճակատագիր էր պատրաստում Հայաստանի համար:

Հուլիսի վերջերին էր, որ Ռուսաստանի Արտաքին գործոց նախարարությունը հայոց պատվիրակությանն առաջարկել էր բանակցությունները փոխադրել Երևան և այնտեղ հասցնել ավարտին: Այդ կապակցությամբ Խորհրդային Ռուսաստանը Հայաստանում իր լիազոր-ներկայացուցիչն էր նշանակել Բ. Վ. Լեգրանին, «որի խնդիրը կայանում էր Ռուսաստանի խորհրդային հանրապետության և հայկական հանրապետության միջև բարի-դրացիական հարաբերություններ հաստատելու, բոլոր վիճելի հարցերը կարգավորելու, նրանց միջև եղած կոնֆլիկտները վերացնելու և երկու հանրապետությունների վերջնական խաղաղությունն ամրապնդելու մեջ»[190]:

Երկկողմ համաձայնությամբ բանակցությունները Երևան էին փոխադրվել: Լեգրանը հունիսի 29-ին էլ հեռագրել էր Երևան՝ պատրաստակամություն հայտնելով ժամանել Երևան, սկսել գործը... Սակայն Շանթի պատվիրակությունը դեռևս Մոսկվայում էր և միայն սեպտեմբերի սկզբներին պիտի հասներ Երևան[191]:

Պարզվում է, որ հայկական կողմը բանակցությունները ձգձգելու համար հիմքեր ունեցել է: Մտածում էր, որ մինչ այս-այնը, Անդրկովկասում ջրերը կպարզվեն և որոշակի կերևա, թե իրեն ո՛ր դիրքն է ձեռնտու: Մյուս կողմից էլ Անգլիայից ռազմամթերք պիտի ստացվեր, և կարծես դա ևս փոխելու էր ուժերի հարաբերակցությունը[192]:

---

[187] Անդ, էջ 149:
[188] Անդ:
[189] Բաքվի «Կոմունիստ» թերթի աշխատակցի հետ 1920 թ. հոկտ. 24-ին ունեցած զրույցից:
[190] ՀՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 560, մասն I, թ. 31:
[191] Տերտերյան, 1954, թ. 5, էջ 5:
[192] Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տիգրան Բեկզադյանը գրել է. «...մենք ժամանակ կվաստակենք, մինչև կստանանք Անգլիայից եկող ռազմամթերքը և այն ժամանակ

Իսկ հանրապետության կառավարությունն այս խառն ու խրթին օրերին անգամ չէր մոռացել, որ կա Արցախի հարց և պիտի դրանով զբաղվի, հասնի նրա արդար լուծմանը: Համո Օհանջանյանը՝ հանրապետության վարչապետն ու Արտաքին գործոց նախարարը, վերստին դիվանագիտական ուղիներով քննություն էր կատարել և պարզել, որ Ադրբեջանի նոր կառավարությունն Արցախ-Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելը համարում է անիրականանալի, քանի որ այդ երկրամասն անխզելի տնտեսական կապերով ենթարկված է դաշտային Ղարաբաղին և հատկապես Բաքվին:

Օհանջանյանին օգնության էին եկել նշանավոր մասնագետներ, որոնք հակառակն էին ապացուցում՝ ցույց տալով, որ Լեռնային Ղարաբաղը տնտեսական ու ազգագրական-մշակութային նվազագույն առնչություն իսկ չունի այն հանրության հետ, որին պատկանում է նախկին մուսավաթական և նոր կամ Խորհրդային Ադրբեջանը: Այստեղ նշելի է Դավիթ Անանունի «Ղարաբաղ» հոդվածը, որ հեղինակի կից նամակի հետ վարչապետին է հասել ն. թ. սեպտեմբերի 4-ին[193]: Նամակում խնդրվում է, որպեսզի վարչապետը ծանոթանա հոդվածին և նրա դրույթներով էլ առաջնորդվի Արցախի հարցը քննելիս: Բացի հոդվածում շարադրված կուռ հիմնադրույթներից, Անանունը նամակում ևս վկայակոչում է բազմաթիվ փաստեր, օրինակ՝ հաստատելով, որ իսկապես ծնունդով ղարաբաղցի շատ արդյունաբերողներ ու առևտրական գործիչներ կապված են աշխարհի մի շարք երկրների, խոշոր կենտրոնների հետ (ինքը՝ Ղարաբաղի գյուղացին), փակ տնտեսություն ունի և չի առնչվում արտաքին աշխարհին... Սրանից ելնելով՝ «...գալ և այսօր պնդել, թե որովհետև Ղարաբաղից ելած հայ բուրժուազիան հարստությունների տեր է Բաքվում, որին և մեր գյուղացիությունն իր բնակած վայրերով օժիտ պիտի տանք Բաքվի տիրոջը–սա արդեն հանցագործություն է»:

Անանունը հիշում է, որ Շուշուն բռնությամբ տիրացած խաներն անգամ իրենց այնքան օտար էին զգում այս երկրում, «որ թաղվում էին ոչ թե տեղում, այլ Բարդայում»[194]:

«Ղարաբաղ» հոդվածն ավարտվում է այս խոսքով. «Ղարաբաղն ամբողջական Հայաստանից դուրս՝ դա խոց է, որ նախ և առաջ գերեզման պիտի իջեցնի անկախ Ադրբեջանի գաղափարը: Բայց միաժամանակ նա պիտի թունավորի և Հայաստանի անդորրությունը: Եթե Ադրբեջանում խելքը գլխին քաղաքագետներ լինեին, նրանք ամենից առաջ պիտի հրաժարվեին Ղարաբաղից: Եթե Հայաստանում հայրենիքի հավաքման համոզված գործիչներ կան, նրանք օրերուն պիտի մտածեն Ղարաբաղի մասին»[195]:

Այս մարգարեական խոսքի հետ համահունչ է հայոց ազգային ազատագրական պայքարի վերջին շրջանի մեծ հերոսի՝ Գարեգին Նժդեհի լուսավոր պատգամը թե կանխատեսությունը, որ ասում է. «Հայաստանն ինչ ցուցանակ էլ որ կրելու լինի, չի կարող գոյություն ունենալ առանց Ղարաբաղի ու Զանգեզուրի»[196]:

Հայաստանի կառավարությունը վերջապես հասկանում ու հաշվի էր առնում, թե Հայաստան երկրի համար ի՜նչ նշանակություն ունի Արցախ-Զանգեզուր լեռնաստանը, և թե դրանից մեկի, տվյալ դեպքում Արցախի, կորուստն ինչ ողբերգությունների դուռ կբացի Արարատյան երկրի համար: Սակայն տեսնում էր նաև, թե Անդրկովկասում իր շոշափուկները տարածող Ռուսաստանն ինչպես սիրախաղեր է անում Բաքվի ու քեմալական Թուրքիայի հետ, ու չէր շտապում անհեռանկար բանակցությունները վերսկսել, ավարտին հասցնել:

Պահպանված նյութերից կարելի է ենթադրել, որ ռուսական կողմը ևս շատ էլ չէր շտապի, եթե չունենար թուրքերին օգնելու հանգամանքը. պարտավորվել էին ռազմական ու

հնարավորություն կունենանք դիմադրելու նույնիսկ ռուսական զորքերին...» (ՀՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 216, թ. 127):

[193] ՀՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1, գ. 128, թ. 242—249:

[194] Ճիշտը՝ Աղդամում, քանի որ Փանահ խանի դամբարանը գտնվում է Աղդամի արևմտյան արվարձանում:

[195] Անդ, թ. 249:

[196] «Հայրենիք», 1925, թ. 31, էջ 131:

տնտեսական օգնություն ցույց տալ «հեղափոխական» Թուրքիային, և այդ օգնությունն Ադրբեջանից Թուրքիա հասցնելու ամենահարմար ուղին Հայաստանի վրայով պիտի լիներ (Լ. Շանթ. «Ազատ անցք տալ մեր հողերուն վրալով զորք ու ռազմամթերք անցնելու Ադրբեջանեն Թուրքիա»[197]: Ուրիշ խոսքով՝ Ռուսաստանն էլ արդեն շահագրգռված էր, որ Արցախ-Զանգեզուր-Նախիջևան գոտին գտնվեր իր դաշնակից ու նորաթուխ բարեկամների՝ թուրք-ադրբեջանական խմբակցության ձեռքին:

Լեգրանի պատվիրակության հետ բանակցություններն սկսվեցին հոկտեմբերի 13-ին[198] և ավարտվեցին 28-ին ընդունված արձանագրությամբ թե՞ պայմանագրով: Այստեղ է, որ Լեգրանը, չգիտես՝ ի՞նչ իրավունքով կամ միջազգային դիվանագիտության ո՞ր օրենքի համաձայն, պայմանագիր է ստորագրում ոչ միայն իր Ռուսաստանի, այլև Ադր. ԽՍՀ անունից[199]: Ահա պայմանագրի առաջին կետը. «ՌԽՖՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ կառավարությունները ճանաչում են վիճելի մարզերի՝ Նախիջևանի ու Զանգեզուրի նահանգների, տարածքների նկատմամբ Հայաստանի հանրապետության անսասան իրավունքը և այդ նահանգների սահմաններից դուրս կբերեն այն բոլոր զորամասերը, որոնք գտնվում են ՌԽՖՍՀ և Ադր. ԽՍՀ հրամանատարության ներքո»: Իսկ երկրորդ կետով՝ «Հայաստանի հանրապետության կառավարությունը, իր հերթին, անվերապահորեն կհրաժարվի որևէ պահանջից այսպես կոչված Ղարաբաղի մարզի նկատմամբ»[200]:

Հունիսին չէին ուզում ստորագրել մի թղթի տակ, որով Արցախի հիմնահարցը թողնվում էր լուծելու հանրաքվեով, իսկ հիմա անվերապահորեն հրաժարվում են նույն մարզի նկատմամբ ցուցաբերվելիք որևէ պահանջից:

Ինչպե՞ս էր պատահել, որ ռուսները, թուրքերը և ադրբեջանցիները միանգամից ընդունել էին Հայաստանի «անսասան իրավունքը» Զանգեզուրի ու Նախիջևանի նկատմամբ:

Սրա պատասխանն էլ թաքնված չէր, ավելի ճիշտ՝ պարզորոշ երևում էր հետագա դիվանագիտական ստոր խաղերի մեջ: Մի ամիս հետո, Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու օրերին, արդեն Նախիջևանն էլ էր շնորհվել Ադրբեջանին[201], և մնում էր միայն Զանգեզուրը, որի հարցը, հավանաբար, ռուսները թուրքերին ու ադրբեջանցիներին խոստացել էին լուծել ժամանակին, այսինքն՝ երբ հնարավոր կլիներ խաղաղ ճանապարհով այնտեղից դուրս բերել Նժդեհի զորքը…

Իսկ Արցա՞խը: Հրաժե՞շտ, ուրեմն, Արցախին ու նրա հիմնահարցին: Բոլշևիկյան կենտրոնն, ուրեմն, իր իսկ հռչակած ազգային քաղաքականության, ազգի ինքնորոշման իրավունքի գերակայության կոպիտ ու վայրագ խախտման գնով պիտի Արցախը միանգամից ու մեկընդմիշտ հանձներ Ադրբեջանի՞ն:

Այո՛, պիտի հանձներ, սակայն ոչ միանգամից և ոչ մեկընդմիշտ: Պիտի ոտնահարեր Հայաստանի ու հայ ժողովրդի իրավունքը, որովհետև Հայաստանը նրա համար չուներ տնտեսական ու քաղաքական այն նշանակությունը, իսկ հայ ժողովուրդն էլ չէր ներկայացնում այն ուժը, որի համար արժենար ընդառաջել, հետը հաշվի նստել, իրավունքը հարգելու ձև կատարել: Այ՛, ուրիշ էր Ադրբեջանն իր նավթով, բամբակով, թուրքերի

---

[197] Ս. Վրացյան, էջ 612:

[198] Հ. Տերտերյան, անդ, էջ 8:

[199] Լ. Շանթն ասում է՝ պայմանագիրը երկուստեք ստորագրելուց հետո Լեգրանը գնաց «համոզելու Բաքվի ընկերներին, որ ընդունեն մեր եկած համաձայնությունը» (Ս. Վրացյան, էջ 613):

[200] ՀՊԿՊԱ, ֆ. 300, ց. 1, գ. 12, թ. 29:

[201] Տե՛ս ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցչության և հայկական կողմից լիազորված Դրոյի ու Տերտերյանի ընդունած համաձայնագրի 3-րդ կետը, որով գծվում էին Հայկական ԽՍՀ տարածքի սահմանները. «Ռուսաստանի խորհրդային կառավարությունն ընդունում է, որ Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության հողերի մեջ անվիճելի կերպով մտնում են՝ Երևանի նահանգն իր բոլոր գավառներով, Կարսի նահանգի մի մասը, որ զինվորական տեսակետից կապահովի երկաթուղու տիրապետությունը Ջաջուռ կայարանից Արաքս կայարանը, Գանձակ նահանգի Զանգեզուր գավառը և Ղազախ գավառի մի մասը օգոստոսի 10-ի համաձայնության սահմաններում, և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչև 1920 թ. սեպտ. 28-ը»:

ցեղակցությամբ և արևելքի մնացած մահմեդականների հետ ունեցած հավատակցությամբ: Այս ամենի թելադրանքով պիտի ընդառաջեր Ադրբեջանի նվաճողական անհագուրդ տենչին…, սակայն և իր պահանջները հուշելու, նրանց ծառայեցնելու համար պարբերաբար պիտի այն Արցախի հիմնահարցը խաղաթուղթ դարձներ, թափ տար նրա քթի տակ՝ ձևացնելով, թե ետ է խլում, պիտի տա իր իսկական տիրոջը…

Ահա այսպիսի մի խաղ, որ սկսվելու էր 1920-ի նոյեմբերի վերջից, երբ Հայաստանում ոտք դրեց բոլշևիզմը և շարունակվելու էր յոթանասուն տարի:

Հայ բոլշևիկները խորհրդային 11-րդ բանակի ուժերով Արցախը խորհրդայնացրին և, քանի որ Հայաստանում դեռևս դաշնակցական հանրապետության իշխանությունն էր տիրապետող, այն հանձնեցին խորհրդային Ադրբեջանին՝ ի տնօրինություն, մինչև խորհրդային կարգերը կհաստատվեին նաև Հայաստանում:

Կարելի է կարծել, թե այս ամենը տեղի ունեցավ հարթ ու խաղաղ և, մանավանդ, առանց հետագա բարդությունների: Չէ՞ որ նույնիսկ Դրաստամատ Կանայանը, ինչպես տեսանք, իր կառավարությանը զեկուցել էր, թե Արցախի գավառներն արդեն բոլշևիկացել են և իրենց այլևս չեն ընդունում:

Սակայն, ինչպես նախորդ էջերում տեսանք, սա այնքան էլ ճիշտ տպավորություն չի եղել, և հետագա դեպքերը ցույց տվին, որ ջրի երես դուրս եկած բոլշևիկյան-ապազգային տրամադրությունները վճռական նշանակություն չունեին, և ժողովուրդը, լեռնաշխարհի գյուղացիությունը մնում էր իր հին վճռին, չէր ուզում ոչ մի կապ Ադրբեջանի հետ և պատրաստ էր շարունակել կռիվն ինքնուրույնության և մայր Հայաստանին միանալու համար: Գավառներում տեղի ունեին արյունոտ բախումներ ադրբեջանական իշխանությունը ներկայացնող ջոկատների ու ապստամբ խմբերի հետ: Բանակային միավորումներն անգամ ի վիճակի չէին խաղաղություն հաստատել գյուղերում: Եվ հարցը հասավ կենտրոնական իշխանություն:

Բանն այն է, որ Ադրբեջանի կառավարությունը, օգտվելով ստեղծված իրադրությունից, մանավանդ Հայաստանի կառավարության նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի անբարեհաճ վերաբերմունքից, ամեն կերպ ջանում էր ավարտին հասցնել Արցախի, Զանգեզուրի ու Նախիջևանի վերջնական նվաճումը: Իսկ Ռուսաստանի կառավարության ազդեցիկ շրջաններում դեռևս կային շրջահայաց մարդիկ, որոնք ոչ միայն չէին աջակցում նրան, այլև հաճախ դիմադրում էին՝ փորձելով Անդրկովկաս մտած խորհուրդներին պահել արդարության ու ճշմարիտ ժողովրդավարության համար մարտնչողի դերում: Վերջինների շարքում էր Գեորգի Չիչերինը՝ այն օրերի Ռուսաստանի Արտգործժողկոմը, որն Անդրկովկասում խաղաղություն հաստատելու համար առաջարկել էր հիշյալ մարզերը ճանաչել իբրև վիճելի գոտի, զբաղեցնել միայն ռուսական զորքերով, մինչև որ խորհրդային կարգեր կհաստատվեին Հայաստանում ու Վրաստանում, և հնարավորություն կստեղծվեր միջհանրապետական-ազգամիջյան հարցերը լուծել խաղաղ դեմոկրատական միջոցներով:

1920 թ. հունիսի 19-ին Անդրկովկասում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ (Կուսակցության Կովկասյան բյուրոյի ղեկավար) Օրջոնիկիձեին նա հղել էր այսպիսի հեռագիր. «Ղարաբաղը, Զանգեզուրը, Շուշին, Նախիջևանը, Ջուլֆան չպետք է միացվեն ո՛չ Հայաստանին, ո՛չ էլ Ադրբեջանին, այլ պետք է գտնվեն ռուսական օկուպացիոն զորքերի տիրապետության ներքո, տեղական խորհուրդների ստեղծման (ապագաներում), քանի որ ուրիշ որևէ վճիռ կխախտեր մեր խաղաղության քաղաքականությունը»[202]:

Սրանից մի երկու շաբաթ հետո էլ Չիչերինը նույնը պիտի կրկներ՝ պատասխանելով Հայաստանի արտգործնախարար Օհանջանյանին. «Ստեղծվում են պայմաններ, որոնք հնարավոր կդարձնեն վիճելի տարածքային հարցերի հանգիստ ու անաչառ քննարկումը»[203]:

---

[202] ՄԱԻ ԿԿԱ, ֆ. 64, g. 2, գ. 5, թ. 19:
[203] Անդ, գ. 11, թ. 13:

Սակայն այդ միջոցները չէին գոհացնում Ադրբեջանի ղեկավար Նարիմանովին, և նա վերևներից անվերջ պահանջում էր անհապաղ լուծել իր բարձրացրած հարցը, հատկապես Արցախ-Ղարաբաղի հարցը, որովհետև Զանգեզուրում Հայաստանի հանրապետության զորքն էր ամուր նստած, իսկ Նախիջևանի համար նա ուներ ուրիշ ծրագիր:

Եվ Նարիմանովին ընդառաջելու պատրաստակամությամբ Վ. Ի. Լենինը 1920 թ. հունիսի 24-ին Գ. Չիչերինին է դիմում այսպիսի հարցապնդումով՝ «Մի՞թե հնարավոր չէ համերաշխության գալ Նարիմանովի հետ»: Արտժողկոմն այս հարցին պատասխանում է միանշանակ ու վճռական. «Ղարաբաղը հինավուրց հայկական տարածք է»[204]:

Սակայն դա ևս Նարիմանովի համար էական նշանակություն չուներ, որովհետև Արևելքի «հեղափոխական» մթնոլորտի առաջնորդին մտահոգում էին առավել կարևոր, շատ ավելի լայնաձիգ հիմնահարցեր, և դա էր պատճառը, որ Կիրովին էլ նա «հավատացրել էր», թե «այդ նահանգների զիջումը (Հայաստանին — Բ. Ու.) այժմ կդառնա խորհրդային իշխանության վարկաբեկում ոչ միայն Ադրբեջանում, այլև Պարսկաստանում և Թուրքիայում»[205]:

Հավանաբար, Նարիմանովը ոչ միայն այսօրինակ թեզեր էր ներկայացրել, այլև իր իրական ու հավանական ընդդիմախոսների դիրքերը խարխլելու նպատակով դիմել էր միջոցների, որոնք պիտի առաջացնեին անկողմնապահ գործիչների վրդովմունքը: Եվ այդ էր, որ Չիչերինին ստիպեց հուլիսին Օրջոնիկիձեին հեռագրով հաղորդել հետևյալը. «Մեզ բազմիցս դիմել են, թե իբր Ղարաբաղն ու Զանգեզուրը մեր օկուպացիոն զորքերի կողմից ժամանակավորապես զբաղեցնելը՝ փոխանակ դրանք Ադրբեջանին տալու, կխախտի խորհրդային իշխանությունը Բաքվում: Պարզ ու որոշակի հաղորդեցեք, թե ինչո՞ւմն է բանը: Եթե խոսքը գնում է ազգայնամոլ մուսուլմանների նվաճողական ձգտումների մասին, դա վատ քաղաքականություն է, այդ ճանապարհին մենք միայն կարող ենք օժանդակել ազգայնամոլական բնազդների զարգացմանը..., կարող ենք համեմատվել մուսավաթականների հետ և դրանով կօգնենք իրենց: Իսկ եթե գործը վերաբերում է խորհրդային իշխանության շրջանակի լայնացմանը, դա ձեռք պիտի բերվի ռուսական օկուպացիայի միջոցով: Եթե այստեղ թաքնված է մուսավաթական կողմնորոշման ձգտում, ապա դա պետք է մերժել այնպես, ինչպես և հակառակ (պահանջը)»[206]:

Ճիշտն ասած, այն ժամանակ այսպես էին մտածում ոչ միայն Չիչերինն ու Կիրովը: Վիճելի մարզերում տեղակայված զորքերի ղեկավարները, որոնք առավել մոտիկ ծանոթություն ունեին ժողովրդական զանգվածների տրամադրությունների հետ և անմիջապես պատասխանատու էին նույն տարածքների անդորրի ու ազգամիջյան փոխըմբռնումի համար, նրանք ևս կանգնեցին նարիմանովյան բռնագրավման քաղաքականության դեմ, պահանջեցին ձեռք քաշել այնպիսի միջամտություններից, որոնք կարող են ոտնահարել տվյալ նահանգների հիմնական բնակչության ինքնորոշման իրավունքները: Այս տեսակետից շատ բնութագրական է 11-րդ բանակի 32-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատարի զեկույցն իր բանակի ռազմական խորհրդին՝ վերնագրված «Դրությունը Զանգեզուրում ու Լեռնային Ղարաբաղում՝ կարմիր բանակի առաջխաղացման և այդ մարզերի բնակչության խորհրդային Ադրբեջանի նկատմամբ ունեցած վերաբերմունքի կապակցությամբ»:

Բացի այն կարևոր հանգամանքից, որ դիվիզիայի հրամանատարը ցուցաբերում է իրադրության և հատկապես հիշյալ մարզերի բնակչության տրամադրությունների խոր ըմբռնում, զեկույցը ներկայացնում է բարոյական ու քաղաքական այնպիսի մակարդակ, որը երանի թե ունեցած լինեին ժամանակի քաղաքական կյանքի ազդեցիկ գործիչները: Այնտեղ նշվում է, որ Լեռնային Ղարաբաղում «ավերված են շատ գյուղեր, բնակչության զանգվածներ են ոչնչացված: Ազգային այսպիսի թշնամանքը շուտ չի մոռացվում: Մյուս կողմից էլ, Ադրբեջանի խորհրդային աշխատողներից, թեկուզ և կոմունիստներից, սպասել իսկապես

---

[204] Անդ, ֆ. 2, ց. 1-1516, թ. 2:
[205] С. М. Киров, Статьи, речи и документы, М., 1936, стр. 144.
[206] ՄԱԻ ԿԿԱ, ֆ. 64, ց. 2, գ. 5, թ. 52:

ինտերնացիոնալ քաղաքականություն՝ ազգային նախապաշարմունքների և ուրիշ ազգերի կարիքների վերաբերյալ, միշտ չէ հնարավոր, քանի որ նրանցում ևս ուժեղ է ազգայնությունը: Դրա համար էլ նույնիսկ հնարավոր է, որ լինի ինչ-որ գրգռիչ վերաբերմունք առանձին աշխատակից անձերի կողմից, մի խոսքով՝ բորբոքումներ, որոնք զանգվածների ուժեղ զգացությունների պայմաններում խոշոր պրովակացիոն դեր պիտի խաղան: Անխուսափելի է նաև, թեկուզ և արտաքին տպավորությամբ, մեկ ազգի տիրապետությունը մյուսի վրա, որը, ազգասիրության արտակարգ բորբոքվածության պայմաններում, կարող է պատճառել շատ վնասներ: Իսկ շարունակել գոյություն ունեցող անորոշ դրությունը, իբր իրենք՝ կուսակցական կազմակերպություններն էլ որոշակի պատասխան տալ չեն կարող, անհնար է: Վերին մարմինները պիտի հարցը լուծեն: (Ապա թե ոչ) այնժամ մենք հակահեղափոխականներին հնարավորություն կտանք օգտվելու վիճակի անորոշությունից: Կարծում եմ, որ հարցի ամենաճիշտ որոշումը՝ դա առաջիկայում Զանգեզուրի ու Ղարաբաղի լայն ինքնավարությունն է, մինչև հարցի լուծումն այդ մարզերի խորհուրդների համագումարների կողմից, զանգվածներին նախապատրաստելուց հետո, սկզբունքորեն նկատի առնելով հեղափոխության մոտակա հաղթանակը նաև Արարատյան հանրապետությունում»[207]:

Եվ այսքանից հետո միանգամայն բնական ու տրամաբանական էին ՌԿ(բ)Կ Քաղբյուրոյի այն միջոցառումները, որոնց նպատակն էր խաղաղություն ստեղծել Անդրկովկասում և սահմանային վեճերն ու տարաձայնությունները պահել վերջնականապես լուծելու այն ժամանակ, երբ խորհրդային կարգեր հաստատված կլինեին նաև Հայաստանում ու Վրաստանում: Հունիսի 22-ին ՌԿ(բ)Կ Քաղբյուրոն ընդունեց որոշում «Կովկասում (վարելիք) քաղաքականության մասին» և Արտգործժողկոմատին հանձնարարեց այդ որոշման հիմքի վրա ստեղծել հրահանգներ կուսակցության Կովբյուրոյի և Անդրկովկասում գործող մյուս պատասխանատու աշխատողների համար: Չիչերինի գլխավորությամբ շուտով կազմվեցին այդ հրահանգները, որոնք և Քաղբյուրոյի հուլիսի 7-ի նիստում հաստատվեցին և ուղարկվեցին Անդրկովկաս՝ ի ղեկավարություն: Որոշում-հրահանգի 8-րդ կետով Կովկասում գործող կոմունիստների պարտականությունն էր համարվում վիճելի տարածքների բնակչությանը բացատրել, որ իրենց մարզերում ռուսական զորքը տեղակայվում է ժամանակավոր, ազգամիջյան արյունահեղությունները կանխելու համար, և այդ մարզերի պատկանելության հարցը պիտի լուծի Ռուսաստանի ներկայացուցչի գլխավորությամբ գործող խառն հանձնաժողովը, որն էլ անպայման առաջնորդվելու է մարզերի բնակչության ինքնորոշման կամքով»[208]:

Երևի թե այս որոշման տրամաբանական շարունակությունն էր օգոստոսի 10-ին Թիֆլիսում ՌՍՖՍՀ և Հայաստանի հանրապետության ներկայացուցիչների ընդունած համաձայնությունը, որով դադարեցվում էին ռազմական ամեն տեսակ գործողություններն ու զորաշարժերը, և կարմիր բանակի զորամասերն էլ թողնվում էին Լեռնային Ղարաբաղում, Զանգեզուրում ու Նախիջևանում՝ մինչև դրանց կցումը Հայաստանին կամ Ադրբեջանին[209]:

Այս միջոցառումներն, անշուշտ, մեծապես պիտի նպաստեին լարվածության թուլացմանը, ամուր հիմք ստեղծեին կնճռոտ հիմնահարցի արդար լուծման համար: Չէ՞ որ առաջ էին քաշվում և վճռական գործոններ էին ճանաչվում վիճելի մարզերի հիմնական բնակչության կամքն ու ինքնորոշման իրավունքը:

Եվ հենց այս ժողովրդավարական սկզբունքի դեմ էլ ոտքի ելավ Նարիմանովը՝ խափանելու նախատեսվող բանակցություններն ու դրանից բխելիք արդար վճիռները: Նա գործում էր

---

[207] Խորհրդային բանակի ԿՊԱ, ֆ. 195, ց. 3, գ. 464, թ. 15: Հմմտ. В. Микаелян, Л. Хуршудян. Некоторые вопросы истории Нагорного Карабаха, «Вестник ОН АН Арм. ССР», 1988, № 4, стр. 52.
[208] Տե՛ս Վ. Միքայելյանի ու Լ. Խուրշուդյանի հոդվածը, էջ 49—50: Նաև՝ С. Хармандарян. Ленин и становление Закавказской федерации, стр. 43.
[209] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, ց. 2, գ. 11, թ. 54, 63—64:

գաղտնի և բացարձակ, իսկ միջոցները տարբեր էին՝ շանտաժն ու սպառնալիքները, ինչպես տեսանք, և կաշառքն ու զանազան դիվային գործարքները, ինչպես քիչ հետո կտեսնենք:

Պահպանվել է Նարիմանովի մի հեռախոսազրույցի սղագրությունը, որից չի կարելի չեզրակացնել, որ Ադրբեջանի ղեկավարն իր նպատակին հասնելու համար կանգ չպիտի առներ ոչ մի միջոցի առաջ:

Զրույցը տեղի է ունեցել կուսակցության Կենտկոմի հունիս-օգոստոսյան ձեռնարկումներից հետո, որոնց նպատակն էր եղել ապահովել վիճելի մարզերի անձեռնմխելիությունը Հայաստանի ու Ադրբեջանի համար, որպեսզի հետագայում, բնակչության կամքի ազատ ու անկաշկանդ դրսևորումը հիմք ընդունելով, որոշվի դրանց պատկանելության հարցը: Ադրբեջանի կառավարության անդամը Թիֆլիսում վերջինիս ստացել էր նման զգուշացում ու հանձնարարություն և, այդ մասին հաղորդելով Նարիմանովին, անհունորեն բորբոքեց նրա զայրույթը: Ո՞նց թե իրենք պետք է մի կողմ քաշվեն, և վիճելի նահանգների բնակչությունն ի՛նքը որոշի իր ճակատագիրը: Նարիմանովն իր աշխատակցին զգուշացրեց, որ պետք է լայն գործունեություն ծավալել այդ բնակչության վրա ամեն տեսակ ազդեցություն ունենալու համար և վճռաբար հայտարարեց. «Աշխարհում ոչ ոք ի վիճակի չի խանգարելու, որ մենք նշված մարզերի բնակչության վրա ազդենք, որպեսզի նա արտահայտվի Ադրբեջանին միանալու օգտին»[210]:

Սովորական մահկանացուները երևի թե չկարողանան գուշակել, թե Խորհրդային Ադրբեջանի ղեկավարն այդ ի՞նչ եղանակով պիտի ազդեր վիճելի մարզերում գերակշիռ մեծամասնություն կազմող հայության վրա, որպեսզի այն, իր Հայաստան հայրենիքը թողած, արտահայտվի «Ադրբեջանին միանալու օգտին»:

Այս էլ պարզվում է նույն օրերին գրված երկու նամակ-հանձնարարականներով, որոնց հեղինակն է Նարիմանովի դրածո, Ղարաբաղի Հեղկոմ Ասադ Կարաևը, և մինչև վերջ մերկացնում է Նարիմանովյան կառավարության այն մեքենայությունները, որոնք հայկական կամ վիճելի մարզերում էին գործադրվում՝ բնակչությանն ստիպելու, որ արտահայտվի «Ադրբեջանին միանալու օգտին»:

Առաջին նամակը.

«Հույժ գաղտնի

ՂԱՐԱԲԱՂԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՀԵՂԿՈՄ,

1920 թ. հուլիսի 19, ք. Շուշի,

Գորիսի գավառային Հեղկոմին,

Ընկերներ,

Ձեր հաջողությունները մեզ շատ են ուրախացնում: Մենք բոլորովին էլ չենք կասկածում, որ Բաքվից բաց թողնված շուրջ 100 միլիոնը անօգուտ չի կորչի: Թող ալլահն օրհնի փողի ուժը, որն ավելին է անում, քան հզոր զորքը: Նրանք, ովքեր գիտեն հայերի հոգեբանությունը, միշտ էլ նրանց (հայերի) տերը կդառնան: Չկա մի հայ, որը փողով չծախի ամեն ինչ: Այդ ազգը փողից բացի ուրիշ սրբություն չի ճանաչի: Եվ հենց դրանով էլ պիտի բացատրել հայ լրտեսների, գործակալների մեծ քանակությունը: Ոչ մի երկրում փողով չի կարելի կատարել այն, ինչ հայերի մոտ: Դա փաստ է: Դժբախտ, աղքատ հարևաններին զուր տեղը մեղադրում են դրա մեջ: Եվ

[210] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, ց. 2, գ. 5, թ. 80: Հմմտ. Վ. Միքայելյանի ու Լ. Խուրշուդյանի հոդվածը, էջ 50:

այս մասին ձեզ երկար եմ գրում՝ ձեզ և բոլոր ընկերներին համոզելու համար, որ խորապես սխալ է եղել ձեր հին քաղաքականությունը, այսինն՝ Ղարաբաղի ու Զանգեզուրի նվաճումը զորքերով: Մենք գիտենք, որ մեր զորքերը ջարդվել ու նահանջել են, իսկ այժմ զորքերի փոխարեն մեր փողերն են հրաշքներ գործում: Նորից ու նորից կրկնում եմ իմ խորհուրդը՝ չխնայել ոչ մի գումար, ավելացրեք վարձատրությունը, նվերներ տվեք և արեք ամեն ինչ, որ իրենք կուզեն: Կառավարությունը որոշել է Ղարաբաղն ու Զանգեզուրը Ադրբեջանին միացնելու համար բաց թողնել 200 միլիոն ռուբլի: Պետք է շտապել: Կարող է հանկարծ փոխվել դրությունը: Անգլիան քնած չէ: Բաքվում կասկած ու ենթադրություն կա, թե այն (Անգլիան) Թուրքիային կարող է իր կողմը գրավել: Եթե դա տեղի ունենա մինչև Զանգեզուրն Ադրբեջանին միացնելը, ապա Զանգեզուրը դարձյալ պիտի համարել կորսված: Դե՛հ, ալլահն օրհնի ձեզ, շտապեք, ժամանակը չի սպասում...

Ընկերական ողջույններով՝ Ասադ Կարաև»[211]:

Ահա և երկրորդ նամակը.

«Հույժ գաղտնի

ՂԱՐԱԲԱՂԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ՀԵՂԿՈՄ,

1920 թ. հուլիսի 21, ք. Շուշի.

Գորիսի գավառային Հեղկոմին.

Ընկերներ,

Եկող ընկերները պատմում են, որ մինչև այժմ դեռևս զինաթափված չէ Զանգեզուրի գյուղերի 90 տոկոսը: Դա ցավալի է: Բայց առավել ցավալին այն է, որ մինչև այսօր գլխատված չէ Զանգեզուրի հայությունը: Նրա մտավորականությունը և ռազմական պարագլուխները մինչև այժմ գտնվում են գյուղերում: Վաղը, ապստամբության դեպքում, նրանք կդառնան ապստամբության ղեկավարներ և մեր ուժերը դուրս կքշեն Զանգեզուրից: Նորից ու նորից կրկնում եմ. ժամանակը չի սպասում: Գործեցե՛ք, որպեսզի բոլոր նշանավոր ու պետական հայերը կալանավորված լինեն: Մեծ բան չեն աքսորն ու կողոպուտը: Օրերը կանցնեն, դրությունը կփոխվի, և նրանք նորից կվերադառնան իրենց երկիրը: Թողեք մարդասիրությունը: Դրանով անհնար է պետություն ստեղծել, երկրներ նվաճել, ապրել խաղաղության մեջ: Այստեղի ընկերները շատ էլ գոհ չեն Գորիսի հայկական Հեղկոմից, աշխատեցեք վերընտրել Հեղկոմը և այդ ընթացքում ընտրել միայն մուսուլմանների և մեզ հայտնի ռուսներին: Այս օրերին Գորիս կգա Արմենակ Ղարագյոզյանը: Նա ուշանում է փող ստանալու պատճառով: Մինչև որ 22 միլիոն ռուբլին չստանա, չի ուղևորվի: Հարստանալու լավ ժամանակ է, ինչու՞ չօգտվի: Դե՛, բարի՛ վայելքի՝ ինչ որ մեր կառավարությունն է նրան տալիս: Նա էլ խոստանում է յոթ օրվա ընթացքում Զանգեզուրը միացնել Ադրբեջանին: Չենք կասկածում, որ շուտով մեզ կուրախացնեք Կապանը միացնելու լուրով: Եթե դուք ուժ չունեք, ապա կա փող: Ինչու՞ ուշացնում եք այդ ապստամբած շրջանի (միացումը)՝ արդարանալով ինչ-որ

[211] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, ց. 1, գ. 10, թ. 9:

Աժդա (Նժդեհ) փաշայի գոյությամբ: Օգտագործեցեք օրհնված միջոցները: Այն ո՞ր հային երեք միլիոն ռուբլի տաք, որ ձեզ չբերի այդ մարդու գլուխը: Եթե դուք փողի կարիք ունենաք, հեռագրեցեք, կուղարկենք:

Ողջույնով՝ Ասադ Կարաև[212]:

P.S. — «Զինվորականներով հարուստ ու հայտնի տեղերում, հայերին թուլացնելու նպատակով, մի ռուս զինվոր սպանեցեք և դրանում մեղադրեցեք հայերին: Իմացած լինեք, թե ի՞նչ կանեն ռուսները: Զանգեզուրում մի՛ թողեք ոչ որևէ կարգին մարդու, ոչ էլ հարստություն, որպեսզի սգո անիծված ազգն այլևս չկարողանա ոտքի կանգնել: Ռուսաստանում այդպես են վարվել, այդպես պիտի անեք նաև դուք:

Ասադ Կարաև»[213]:

Նման դեպքերում ծանոթագրությունները դառնում են ավելորդ: Այս անգամ նրանք կարող են աղքատացնել տպավորությունը, և ադրբեջանական բոլշևիզմի ինքնաներկայացման փաստերը կերևան ոչ իրենց իրական փայլ ու շուքով:

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի հանրապետության կառավարությունը, Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի միջնորդությամբ, կամավոր, առանց որևէ բարդության կամ կրակոցի, իշխանությունը հանձնեց հայ բոլշևիկներին: Սակայն վերջիններս նոյեմբերի 29-ին արդեն Իջևանում հռչակել էին իրենց կառավարության ծնունդը՝ այդ առիթով անմիջապես հեռագրեր հղելով Մոսկվա, Բաքու և այլ ուղղություններով:

Դատելով ժամանակի մամուլի արձագանքներից՝ կարելի է կարծել, թե Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումն ամենամեծ խանդավառությունն առաջացրեց Բաքվում, «եղբայրական» մուսուլմանական (այն ժամանակ հիմնականում այսպես էին կոչում ադրբեջանցի ժողովրդին) ազգի ղեկավար ու աշխատավորական շրջաններում: Այնտեղ էին Կիրովն ու Օրջոնիկիձեն, Անդրկովկասը բոլշևիկացնելու համար կիրառման գործադրված մյուս քաղաքական ու ռազմական գործիչները: Եվ, հավանաբար, հենց նրանց նախաձեռնությամբ էլ կազմակերպվել էին պաշտոնական այն ցնծագին արարողությունները, որոնց համար հետագայում «պատասխան» պիտի տար Ադրբեջանը: Նախ, տեղի ունեցան հանդիսավոր նիստեր (Ադր. Հեղկոմի, Բաքվի խորհրդի... ևն, ևն)...

Եվ հենց Իջևանից ստացված հեռագրի հաջորդ օրն իսկ, նոյեմբերի 30-ին, Հայաստանում ստացվեց հետևյալ հեռագիրը.

«Ադր. Հեղկոմի ողջույնը՝ բոլորի՞ն, բոլորի՞ն... Ադրբեջանի խորհրդային սոցիալիստական հանրապետության անունից հայ ժողովրդին հայտարարեցե՛ք Ադրբեջանական Հեղկոմի դեկտեմբերի 30-ի որոշումը. «Ադրբեջանի բանվորա-գյուղացիական կառավարությունը, ստանալով ապստամբած գյուղացիների անունից (հղված) ուրախալի լուրը Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետության հռչակման մասին, ողջունում է եղբայրական ժողովրդի հաղթանակը: Այսօրվանից վերացված են հայտարարվում սահմանային վեճերը Հայաստանի ու Ադրբեջանի միջև: Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը համարվում են Հայաստանի սոցիալիստական հանրապետության մասեր: Կեցցե՛ Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի բանվորների ու գյուղացիների

---

[212] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, g. 1, գ. 10, թ. 9:
[213] Անդ, թ. 10:

եղբայրությունն ու միությունը: Ադրբեջանի խորհրդային Հեղկոմի Նախագահ՝ Նարիմանով, Արտաքին գործոց կոմիսար Հուսեյնով»:

Հայաստանում մարդիկ այս հեռագիրը կարդացել ու չեն հավատացել սեփական աչքերին: Երևի այդ է պատճառը որ այն հրապարակվել է մի շաբաթ հետո, դեկտեմբերի 7-ին[214]:

Իսկ Բաքվում սրանից հետո էլ դեկտեմբերի 1-ին կազմակերպվեց քաղաքի խորհրդի հանդիսավոր նիստը, որին մասնակցում էին վերը հիշված գործիչները, հանրապետության ղեկավարները, բանվորագյուղացիական աշխատավորության ներկայացուցիչները: Այստեղ էլ Նարիմանովն իր հեռագրի բովանդակությունը հրապարակեց իբրև հռչակագիր-դեկլարացիա, որը խանդավառությամբ ընդունեցին ու ողջունեցին բոլոր ելույթ ունեցողները՝ Հայաստանի ներկայացուցիչ Ակ. Բեկզադյանը, 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդի անունից՝ Միխայլովը, Ադր. կոմ. Կենտկոմի անունից՝ քարտուղար Կամինսկին: Կոմունիստական կուսակցության Անդրերկրկոմի առաջին քարտուղար Գ. Կ. Օրջոնիկիձեի ելույթն աչքի էր ընկնում իրերի ու կացության խորն ըմբռնումով, սրտացավությամբ ու անկեղծ խանդավառությամբ: Կարդանք նրա արտասանած, թեկուզ, այս նախադասությունները. «Խորհրդային Ադրբեջանը, հանդես գալով հանձին ընկ. Նարիմանովի, ապացուցեց ամբողջ աշխարհին և ամենից առաջ Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին, որ միայն խորհրդային իշխանությունն է ընդունակ լուծելու ազգային թշնամանքի հետ կապված բոլոր անիծյալ հարցերը, որոնք կային այստեղ և շա՛տ-շատ են ամբողջ աշխարհում...»: Ապա դառնալով Զանգեզուրը, Նախիջևանն ու Ղարաբաղը խորհրդային Հայաստանին հանձնելու մասին արված հայտարարությանը, նա հաստատում էր, որ «Այստեղ կարդացված այդ ակտը խոշորագույն կարևորության ակտ է, որը չունի իր օրինակը մարդկության պատմության մեջ...»[215]:

Օրջոնիկիձեին հաջորդ օրն իսկ, դեկտեմբերի 2-ին, հեռագրեց Մոսկվա, Լենինին ու Ստալինին՝ հավաստելով, որ «Ադրբեջանը երեկ արդեն հայտարարել է Նախիջևանը, Զանգեզուրն ու Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանի օգտին հանձնելու մասին»[216]: Եվ Ստալինն էլ, Ռուսաստանի խորհրդային կառավարության անունից, իր հերթին ողջունելով խորհրդային կարգերի հաստատումը Հայաստանում, ընդգծել է, որ «Դեկտեմբերի 1-ին Խորհրդային Ադրբեջանն ինքնակամ հրաժարվում է վիճելի գավառներից և հռչակում Զանգեզուրի, Նախիջևանի ու Լեռնային Ղարաբաղի հանձնումը Խորհրդային Հայաստանին»[217]:

Մնում էր, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունն արձագանքեր, իր խոսքն ասեր Ադրբեջանի Հեղկոմի ու կառավարության այդ երախտալից քայլի մասին: Իսկապես որ, մարդիկ ոնց որ չէին հավատում իրենց աչքերին: Այդ պատճառով էլ պատասխանը եղավ բավական ուշ, հունվարին: Հայաստանի Հեղկոմի նախագահ Ս. Կասյանը հայության և իր անունից Նարիմանովին հղեց երախտագիտական նամակ, սկզբից իսկ հաղորդելով, որ «Հայաստանի Խորհրդային ռազմահեղափոխական կոմիտեն եղբայրական հիացումի զգացումով ընդունեց Ադրբեջանի խորհրդային իշխանության 1920 թ. նոյեմբերի 30-ին (ընդունած) պատմական ակտը Զանգեզուրի, Նախիջևանի ու Լեռնային Ղարաբաղի մասին»[218]:

Անկախ նրանից, թե հետագայում ինչպե՞ս պիտի դասավորվեին նահանգների ճակատագրերը, արված մեջբերումներից չի կարելի չեզրակացնել, որ 1920 թ. նոյեմբերի վերջին ու դեկտեմբերի սկզբին Խորհրդային Ադրբեջանի կառավարությունն ինքնակամ հրաժարվել էր մինչ այդ վիճելի գոտի ճանաչված Նախիջևանի, Զանգեզուրի ու Լեռնային

---

[214] «Կոմունիստ», հայերեն թերթ, Երևան, 1920, դեկտ. 7:
[215] Г. К. Орджоникидзе, Статьи и речи, М.. 1956, стр. 110 – 141.
[216] Անդ, էջ 142, նաև «Պրավդա», 1920, դեկտ. 4:
[217] «Պրավդա», 1920, դեկտ. 4:
[218] ՀՍՍՌ ԻՄԿԱ, ֆ. 40113, ց. 3, գ. 2, թ. 13:

Ղարաբաղի նկատմամբ ունեցած հավակնություններից և այդ մարզերը հանձնել էր Խորհրդային Հայաստանին:

Այսպիսին է փաստերի ու փաստաթղթերի ուժը, և հայ գիտնականները միշտ էլ այդպես են հասկացել ու բացատրել մեջբերված աղբյուրագիտական տեղեկությունների ճշմարտությունը:

Պաշտոնական փաստաթղթերի համաձայն՝ Նարիմանովյան հռչակագիրը միայն համաժողովրդական ցնծությամբ է ընդունվել Ադրբեջանում: Սակայն իրատես լինենք և հիշենք, թե նախընթացին ինչպիսի՞ մթնոլորտ էր տիրում հայ-ադրբեջանական փոխհարաբերություններում, և պարզ կլինի, թե հռչակագրին ի՞նչ պիտի հետևեր ադրբեջանական ազգայնամոլ շրջաններում: Օրինակ, Արցախի ժամանակագիրը վկայում է, թե Շուշվա ադրբեջանցի բնակչության մեծ մասը, հատկապես հայկական կոտորածի մասնակիցները հռչակագրի լուրն առնելուն պես կապել էին իրենց իրերը, հեռանում էին դեպի ադրբեջանական շրջանների խորքերը[219]: Հասկանալի է, նրանք պիտի մտածեին, թե գալու է Հայկական կառավարությունը, որը չի կարող հաշիվ չպահանջել կատարվածի համար:

Ղեկավար շրջաններում, հատկապես այնտեղ, ուր դիմադրությունը համարվում էր հնարավոր ու շահավետ, ելել-բարձրացել էր մուսուլմանական մի խառնակչություն, որի սկիզբը Բաքվում էր, ծայրը Անկարայում: Նախիջևանում թուրք էմիսարները բորբոքել էին տեղական մուսուլմանների մոլեռանդությունը և հենց այդ օրերին երկրամասը դարձրին հակահայկական, նաև հակախորհրդային սադրանքների կենտրոն: Հայտնի մուսավաթական գործիչ (Նարիմանովի հովերով «բոլշևիկացած») Բ. Շահթախթինսկին Նախիջևանում հռչակագրի դեմ «սրբազան պատերազմ» հայտարարեց հռչակագիրը համարելով ազգային դավաճանություն: Նա տեղի մուսուլմաններին կոչ էր անում երես դարձնել Նարիմանովի հանրապետությունից և փրկության հույսը կապել միայն Անկարայի հետ: «Այժմ դուք հայացքներդ դարձրեք միայն դեպի թուրքերը, — հրամայում էր նա: — Նրանք են ձեր միակ փրկությունը: Ամո՛ւր բռնեցեք նրանցից»[220]:

Կարճ ժամանակում Նախիջևանը դարձավ սև ուժերի կենտրոնատեղի: Զուգաչափ նաև արդյունքը. դեկտեմբերի 30-ին Բ. Լեգրանը Գ. Չիչերինին հեռագիր հղեց՝ հաղորդելով, որ Նախիջևանում ինչ-որ թուրք Վեյսալ-բեկ իրեն հայտարարել է Թուրքիայի ժամանակավոր արտակարգ կոմիսար և իր երկրից սպասում է իսկական տերերի ժամանելուն[221]:

Սրանք խառնակ օրերի քաղաքական ու ազգամիջյան իրադրության այն մանրամասներից են, որոնք ոչ մի չափով չեն կարող ստվերի տակ թողնել ընդունված հռչակագրի և նրա հետ առնչվող փաստաթղթերի իրողությունը:

Սակայն վերջերս Ադրբեջանի պատմաբաններն ու պաշտոնական շրջանները, անդրադառնալով այս փաստաթղթերին և առհասարակ խնդրո առարկա հռչակագրի բովանդակությանը, համառորեն պնդում են, թե առնվազն թյուրիմացություն է, իսկ իրականում կեղծարարություն Նարիմանովյան հռչակագրի մեջ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին տալու վերաբերյալ տեղեկության տեսնելը[222]:

Ինչպե՞ս թե: Բայց չէ՞ որ սույն տեղեկությունն առկա է Նարիմանովի հռչակագրում, Օրջոնիկիձեի հաղորդման մեջ, Ստալինի հեռագրում: Որքան որ այդ մարդկանց ենք ճանաչում՝ ըստ հայության հիմնահարցերի հետ ունեցած իրենց առնչությունների, անհնար

---

[219] «Միտսաբ», էջ 193:
[220] ՀՀ ԿՊԱ, ֆ. 114, g. 1, գ. 45, թ. 13:
[221] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, g. 2, գ. 11, թ. 281: Հմմտ. Բարխուդարյան, էջ 100:
[222] Տե՛ս Т. Кочарян, Необходимое уточнение, «Бак. рабочий», 1989, 1 июня. Д. Гулиев, Следовать истине, а не амбициям, «Бак. раб.», 1989, 12 июня: Его же: С позиций интернационализации, «Бак. раб.», 1988, 14 июля...

է պատկերացնել, թե նրանցից որևէ մեկը վեր կկենար ու կեղծարարությամբ կզբաղվեր հօգուտ հայ ժողովրդի:

ՉԷ՛, ասում են, նրանց ստորագրությամբ հայտնի այդ փաստաթղթերում Լեռնային Ղարաբաղը թյուրիմացաբար է հայտնվել Հայաստանին հանձնվող մարզերի շարքում, իսկ իրականում Լեռնային Ղարաբաղի աշխատավորությանը տրվել է լոկ «ինքնորոշման լիակատար իրավունք»: Ճիշտն ասած հայ ժողովուրդն այս տարբերակից անգամ ո՛չ այն ժամանակ կհրաժարվեր, ո՛չ էլ այժմ, քանի որ Արցախն ահա շուրջ երեք քառորդ դար կռվում, քրտինք ու արյուն է թափում, որպեսզի օրինական ճանաչման արժանանա իր ազգային ինքնորոշման իրավունքը: Եթե այսօրվա Ադրբեջանի տերերն իրենք իրենց համարում են Նարիմանովի քաղաքականության ժառանգորդները և համաձայն են, որպեսզի Արցախի հայությանը տրվի «ինքնորոշման լիակատար իրավունք»... Սրանից էլ երանելի բա՞ն:

ՉԷ, — Նարիմանովի ժառանգորդներն են ասում, — նախ՝ ուրիշ բան է խոստանալը, միանգամայն ուրիշ՝ տալը, իսկ ամենակարևորը՝ նարիմանովյան հռչակագրի մեջ Լեռնային Ղարաբաղն առհասարակ չի հիշվել Հայաստանին նվիրաբերվող նահանգների շարքում:

Այս պարզունակ ձեռնածությունը մեր գիտնականներին շատ էր բորբոքել, և նրանք աղբյուրագիտական բազմաթիվ տվյալներով ու կուռ տրամաբանությամբ հաստատեցին, որ ճիշտ այնպես, ինչպես թուրքը միշտ մնում է թուրք, ադրբեջանցի պատմաբան-կեղծարարն էլ ամենուրեք ու ամեն ժամանակ մնում է այդպիսին... և ուղղակի անմտություն է նրանից ուրիշ բան սպասել[223]:

Զ. Գուլիևը, հետին թվով սարքված իրենց «աղբյուրը» մեջտեղ քաշելով, հիշում էլ է Նարիմանովի մի պնդումն այն մասին, որ, իբր, հայ գործիչները խեղաթյուրել են իր հռչակագրի բնագիրը՝ նրան վերագրելով իրենց կամեցած իմաստը: «Եթե նրանք վկայակոչում են իմ Հռչակագիրը, — ասել է նա, — ապա Հռչակագրի մեջ տառացիորեն ասված է հետևյալը. «Լեռնային Ղարաբաղին տրվում է ազատ ինքնորոշվելու իրավունք»[224]:

Ճիշտն ասած, մինչև վերջ համոզված լինելով, որ նոյեմբերի 30-ին հեռագրված և դեկտեմբերի 1-ի հանդիսավոր նիստում էլ հրապարակված Հռչակագիրն ունեցել է միայն մի բովանդակություն՝ Ադրբեջանը Հայաստանին է հանձնում Նախիջևանը, Զանգեզուրն ու Լեռնային Ղարաբաղը և այդ մարզերն ինքնակամ հանձնում է նրան, այնուամենայնիվ, ես համոզված եմ, որ այն ինքը կեղծ ու խաբեական է եղել իր էությամբ, իր հիմքում ու հեռանկարում: Նարիմանովն այն հեռագրել ու հրապարակել է՝ առանց որևէ կարևորություն տալու, մտածելով, որ այսօր հռչակում է, վաղն էլ կհրաժարվի կատարել...

Ամեն ինչից էն, մանավանդ, Օրջոնիկիձեի ելույթից ևս երևում է, որ Նարիմանովից այս խոստովանություն-խոստումը կորզվել է մեծ դժվարությամբ (ժողովուրդն ասում է՝ շուն թակելով, կամ՝ ինչպես ձվից մազ պոկեին): Այո՛, Օրջոնիկիձեի ելույթից՝ առաջին հերթին, քանի որ այնտեղ կան ակնարկներ Նարիմանովի կարդացած ճառի այնպիսի երանգների մասին, որոնք մատնում են նրա գրգռված, թունոտ տոնը, հարկադիր «նվիրաբերության» դեմ բացահայտորեն արտահայտված նեղսիրտ փնփնթոցը: Օրջոնիկիձեն ասում է. «Շատ բնութագրական է ընկ. Նարիմանովի ելույթը: Նա մեզ կարդաց իր հռչակագիրը: Զանգեզուրը, Նախիջևանը և Ղարաբաղը այս խոսքերի բովանդակությանն անծանոթ ռուսական ականջի համար բնավ ոչինչ չեն նշանակում: Ինչ-որ Զանգեզո՞ւր, անպտուղ սարե՞ր, ոչ հաց, ոչ ջուր: Այնտեղ ոչինչ չկա: Ինչ-որ Նախիջևա՞ն, ճահիճնե՞ր, մալարիա և ուրիշ ոչինչ: Ինչ-որ Լեռնային Ղարաբա՞ղ: Ի՞նչ կա այն Ղարաբաղում: Ոչինչ չկա: Եվ, ահա՛,

---

[223] Հրաչիկ Սիմոնյան, Ազգամիջյան լարվածության ակունքներում. «Խորհրդային Հայաստան», 1989, սեպտ. 14,20; Լ. Խուրշուդյան, Պատմագիտության միակ չափանիշը ճշմարտությունն է. «Երեկոյան Երևան», 1989 օգոստ. 23,24:

[224] «Բակ. ռաբ.», 1988, հուլիսի 4: Իբր, Նարիմանովի խոսքն էլ գտնվում է՝ ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, ց. 1, գ. 31, թ. 86:

ընկ. Նարիմանովն ասում է. «Վերցրե՛ք, ձե՛զ լինի: Այդ անպտուղ հողերը վերցրեք Հայաստանի համար»: Ասես Խորհրդային Ադրբեջանն ազատվում է ավելորդ բեռից»[225]:

Մի՞թե ունկնդիրը հռչակագրի բովանդակությունից կարող էր այսպիսի պատկերացում ստանալ: Երբե՛ք: Ուրեմն, էությունն եղել են այդ տպավորության համար հիմք հանդիսացած խոսքերն ու դժգոհությունը: Իսկ դրանք էլ կարտահայտվեին միայն ու միայն մեկ դեպքում. եթե Նարիմանովը հարկադրված լիներ ակամա, ընդդեմ իր համոզման ու կամքի, «վիճելի մարզերը» Հայաստանին հանձնելու փաստաթուղթը ստորագրել: Ստորագրել և հրապարակել: Իսկ հարկադրողները, պարզ է, եղել են Օրջոնիկիձեն, Կիրովը, Ռուսաստանի մյուս ներկայացուցիչները, այն օրերին հայկական հողերը Հայաստանին վերադարձնելու համար պատրաստ զարկերակ Սլ. Բեկզադյանը:

Իսկ հանդիսավոր նիստից հետո Նարիմանովն իրեն ազատ է զգացել Հռչակագիրը հրապարակելիս գոնե Լեռնային Ղարաբաղի համար ձևակերպել մի տարբերակ, որն իր կարծիքով հետագայում կարելի կլիներ շուռումուռ տալ և շրջանցել: Այստեղից էլ իր իսկ պնդումը, թե «Լեռնային Ղարաբաղին տրվում է ազատ ինքնորոշվելու իրավունք»[226]:

Եվ շատ իրավացի է մեր Հ. Սիմոնյանը, որ համոզված է, թե Նարիմանովի ձեռքով է կեղծվել հռչակագիրը՝ ստեղծելով արտասովոր միակ թյուրիմացությունը սկզբնաղբյուրների այնքան համերաշխ տվյալների շարքում[227]:

Եվ ի՞նչ կատարվեց հետո: Նարիմանովի ադրբեջանական կառավարությունը հարգե՞ց իր հանդիսավոր խոսքը: Հայաստանին հանձնե՞ց Նախիջևանն ու Զանգեզուրը, իսկ Լեռնային Ղարաբաղի աշխատավորությանը տրվե՞ց ազատ ինքնորոշման իրավունք:

Պատմական հետագա դեպքերը ցույց տվին, որ Նարիմանովը ոչ միայն նպատակ չէր ունեցել տերը մնալու իր հանդիսավոր խոսքի, որ կնշանակի՝ երդումի, այլև Ռուսաստանի հակահայկական ուժերն ու Թուրքիայի ավանդական թշնամանքը պիտի դարձներ գործիք՝ Հայաստանից պոկելու այդ նահանգները, նրանց կազմած ռազմավարական հզոր տարածքով մեկուսիչ շերտ կապվելու ցեղակից ու դավանակից Թուրքիայի հետ:

Ինչպես հայտնի է, Ադրբեջանի ընդունած դեկտեմբերյան հռչակագրից առաջ Հայաստանի միջազգային դիրքը բավական խախուտ էր եղել: Դեռևս սեպտեմբերի սկզբին Բաքվում կայացած Արևելքի ժողովուրդների համագումարը Հայաստանի հանրապետության մասին այնպես էր խոսում, ասես աշխարհի բոլոր ժողովուրդների ամենայն դժբախտությունների պատճառը միայն նա է, և համագումարի հավաքված պետությունների առաջին հիմնական խնդիրն էլ պետք է լինի կործանել այդ հանրապետությունը:

Իսկ նույն սեպտեմբերի վերջին, այսպես կոչված, հեղափոխական Մուստաֆա Քեմալի Թուրքիան հարձակվեց Հայաստանի վրա, նվաճեց նրա մի շարք մարզերը, կոտորեց բնակչությանը, սպառնաց նույնն անել նաև Արարատյան նահանգում, որովհետև ինչպես հետագայում Քեմալն էր խոստովանել, իր Թուրքիայի նպատակն էր եղել «ոչնչացնել հայկական բանակն ու Հայկական պետությունը»[228]: Չի կարելի կարծել, թե Քեմալի համար որևէ նշանակություն ուներ՝ իր դեմ Հայաստանի հանրապետությո՞ւնն է, թե Խորհրդային Հայաստանը:

---

[225] Գ. Կ. Օրջոնիկիձե, նշվ. գիրքը, էջ 140:

[226] Այս խոսքերը նա 1921 թ. հունիսի 27-ին հեռախոսով ասել է Ադրբեջանի արտգործժողկոմ Հուսեյնովին, որպեսզի նա էլ հաղորդի Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու վրա պնդող Օրջոնիկիձեին, Կիրովին և Կովկասյան բյուրոյի մյուս անդամներին (ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, ց. 12, գ. 65, թ.): «Ասացեք, որ դա Քաջբերունու ու Կազեմբեկի կարծիքն է, և եթե նրանք կառչում են իմ Հռչակագրից, ապա այնտեղ տառացիորեն ասված է հետևյալը. «Լեռնային Ղարաբաղին տրվում է ազատ ինքնորոշվելու իրավունք»:

[227] Հրաչիկ Սիմոնյան, Մի՛ մոռացեք փաստերը. «Խ. Հ.», 1989, օգոստ. 23:

[228] Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 3, М., 1932, стр. 102.

Թուրքիայից տարբեր չէր և աշխարհի համայն աշխատավորության միակ «իսկական բարեկամ» Խորհրդային Ռուսաստանի վերաբերմունքը: Դեպքերն ու փաստերը ցույց տվին, որ այդ հայակուլ Թուրքիային Անտանտի գրկից հանելու և «հեղափոխական ուղու վրա» պահելու համար Ռուսաստանը պատրաստ է զոհաբերել Հայաստանն ու հայ ժողովրդին:

Կարևոր է նկատի առնել, որ ինչպես նախընթացին, այնպես էլ հենց այս ժամանակ Թուրքիան սերտ կապերի մեջ էր Ադրբեջանի հետ. օգնում էին իրար՝ ոտքի կանգնելու, իրենց ընդհանուր թուրքական շահերն առաջ տանելու և զարգացնելու համար:

Եվ թուրք-ադրբեջանական միասնությունն իր խանձարուրում իսկ հովանավորության ու պաշտպանության էր արժանանում նոր Ռուսաստանի կառավարության մի այնպիսի ազդեցիկ գործչի կողմից, ինչպիսին Իոսիֆ Ստալինն էր:

Հիշենք նրա՝ հիմա արդեն լայնորեն հայտնի հեռագիր-հանձնարարականը, որ 1920-ին էր տվել Օրջոնիկիձեին, որը, թերևս սխալմամբ, փորձում էր պաշտպան կանգնել հայկական կողմի ոտնահարվող տարածքային իրավունքներին: Ստալինը գրել էր. «Իմ կարծիքն այն է, որ չի կարելի շարունակ լարախաղացություն անել կողմերի (այսինքն՝ թուրք-ադրբեջանական և հայկական — Բ. ՈՒ.) միջև: Պետք է վճռականորեն պաշտպանել կողմերից մեկին, տվյալ պարագային, իհարկե, Ադրբեջանին՝ Թուրքիայի հետ միասին»[229]:

Եվ այսպիսի պայմաններում նոյեմբերի վերջին-դեկտեմբերի սկզբին, հիմնականում ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի ղեկավար Ս. Օրջոնիկիձեի ճնշման տակ, Ադրբեջանն ստիպված եղավ հրաժարվել վիճելի մարզերից՝ Լեռնային Ղարաբաղից, Զանգեզուրից ու Նախիջևանից, դրանք հանդիսավորապես հանձնել Հայաստանին:

Նկատի առնելով, որ Օրջոնիկիձեի այս բացահայտ «կողմնապահությունն» էլ ողջունել էր Ստալինը, մենք հիմա կարող ենք մտածել, որ կատարվածը լոկ դիվանագիտական խաղ է եղել՝ հայ բոլշևիկների աչքերին քող փչելու, հայ ժողովրդին առժամանակ հանգստացնելու համար: Այլապես մենք պարտավոր պիտի լինենք պատասխանելու ամենակարևոր մի հարցի՝ ինչո՞ւ Հռչակագրից անմիջապես հետո Հայաստանը չմտավ Լեռնային Ղարաբաղ ու Նախիջևան, որպեսզի մեկընդմիշտ հաստատի իր տիրապետությունը ավելի քան երեք տարի կռվախնձոր եղած նահանգներում: Միանգամայն այլ էլ Զանգեզուրի խնդիրը. Գարեգին Նժդեհն այնտեղ դրության տերն էր, և ուրիշ ոչ ոք չէր կարող նրա վրա իրավունք բանեցնել:

Ուրեմն ինչպես Ստալինը, այնպես էլ Օրջոնիկիձեն ու Նարիմանովը գիտեին, որ Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանը վերջ ի վերջո Ադրբեջանին պիտի մնան, և քաղաքական կյանքի տարբեր օղակներում այդ խնդրի վերջնական լուծումն էին հասունացնում:

Երբ 1921 թ. սկզբին ծրագրվել էր Մոսկվայում անցկացնել ՌՍՖՍՀ և Թուրքիայի կառավարական պատվիրակությունների դիվանագիտական խորհրդակցությունը, որն էլ պետք է ավարտվեր բարեկամության պայմանագրի կնքումով, թուրք-ադրբեջանական կողմը ներկայացավ իր կենսական հարցերի անողոք վճռով և այն ոչ մի քայլ չզիջելու նպատակով: Ուրիշ եզրակացության անհնար է հանգել՝ նկատի առնելով այն մանրամասները, որոնք հայտնի են դարձել միայն վերջերս հրապարակված փաստաթղթերի շնորհիվ: Օրինակ, ուսումնասիրողները գիտեն, որ թուրքական պատվիրակությունը Մոսկվա գնալու ճանապարհին երկար ժամանակ մնացել է Բաքվում: Իսկ թե ի՞նչ են պայմանավորվել տեղացիների հետ, մեծ հավանականությամբ հիմա կարելի է ենթադրել այն թղթերից, որ այդ առթիվ ստեղծվել են Օրջոնիկիձեի ու Նարիմանովի ձեռքերով:

Փետրվարի 9-ին Օրջոնիկիձեն Լենինին հեռագիր է հղել՝ տեղեկացնելով, որ Թուրքիայի պատվիրակությունը, մի քանի օր Բաքվում գտնվելուց հետո, փետրվարի 6-ին Մոսկվա է ուղևորվել: Խորհուրդ էր տալիս կարգն ու պատշաճը մատուցել թուրքերին և, մանավանդ, «որքան կարելի է, շուտ պայմանագիր կնքել, քանի որ Մուշը, Վանը և Բիթլիսը Հայաստանին

[229] ՀՍԱՄ ՀՀԿԱ, ֆ. 13, ց. 4, գ. 496, թ. 142:

տալու մասին Չիչերինի պահանջը կարող է Մուստաֆա Քեմալին հարկադրել «Անտանտի հետ մերձեցման ուղիներ որոնելու»: Մեջտեղ է քաշվում հայկական հարցն իր փշոտ կողմերով, սրան էլ հետևում է զգուշացումը՝ հեռու մնալ նրանից, «քանի որ Հայկական հարցը դա Արևելյան Անատոլիայի հարցն է», իսկ խորհրդային կողմի համար դա ամենակարևորն է, քանի որ «եթե Անկարան թեքվի և Անտանտի կողմը, Արևելյան Անատոլիան կմնա մեզ հետ, դա մեզ համար չափազանց կարևոր է»[230]:

Օրջոնիկիձեի հեռագրի (Մոսկվայում ստացված փետրվարի 11-ին) իր օրինակի վրա Ստալինը Լենինին հետևյալ խորհրդանշական բացատրությունն է ուղղել. «Ընկ. Լենին. ես միայն երեկ իմացա, որ Չիչերինն իրոք ինչ-որ ժամանակ թուրքերին է ուղարկել մի հիմար (ու պրովոկացիոն) պահանջ՝ Վանը, Մուշը և Բիթլիսը (թուրքական գավառներ՝ թուրքերի հսկայական գերակշռությամբ) մաքրելու մասին՝ հօգուտ Հայաստանի:

Այդ հայկական-իմպերիալիստական պահանջը չի կարող մեր պահանջը լինել: Անհրաժեշտ է արգելել ազգայնականորեն տրամադրված հայերի թելադրանքով թուրքերին նոտաներ ուղարկելը»[231]:

Ուրեմն թուրքերը, դեռ Մոսկվա չհասած, այսպես հոգատար ու սրտացավ վերաբերմունքի էին արժանացել: Վերաբերմունք, որը տիրապետող էր և՛ Ստալինի գլխավորած Ազգությունների գործերի կոմիսարիատում, և՛, ինչպես պետք է կռահել, Լենինի ու նրա մերձավորների շրջանում: Բայց գործի գլուխ էր կանգնած Ստալինի կոմիսարիատը, որի քաղաքականությունը տվյալ հարցում մինչև վերջ մերկացած ենք տեսնում մի հոդվածի մեջ, որը լույս տեսավ Կոմիսարիատի թերթում, նրա աշխատակից Ա. Սկաչկոյի ստորագրությամբ: Սկաչկուն Սկաչկո՛, սակայն թերթը պաշտոնական էր և արտահայտում էր քննարկվող հարցի շուրջ ժամանակի Խորհրդային Ռուսաստանի կառավարության դիրքորոշումն ու քաղաքականությունը: «Արևելյան չորս պետությունների՝ Խորհրդային Ռուսաստանի, Հայաստանի, Ադրբեջանի և իմպերիալիզմի դեմ կռվող Թուրքիայի առաջիկա կոնֆերանսը բացառիկ կարևորություն ունեցող երևույթ է, համաշխարհային հեղափոխության պատմության մեջ շրջադարձային կետերից մեկը», — սկզբից ևեթ հայտարարում էր հեղինակը, հետո էլ բացատրում, որ Թուրքիան բռնել է հեղափոխության ուղին, իր ետևից տանում է ամբողջ Արևելքը, հետևաբար և անհրաժեշտ է նրան ընդառաջել ամեն տեսակ զիջումներով, ապա թե ոչ, ետ կկանգնի հեղափոխությունից, կանցնի Անտանտի կողմը, և դա էլ կլինի «սարսափելի հարված Արևելքի հեղափոխության զարգացմանը: Իսկ հեղափոխության մարումն Արևելքում՝ դա հավերժական հետաձգումն է Արևմուտքի հեղափոխության»[232]:

Ազգությունների կոմիսարիատի, թե՞ Ստալինի, բերանը հենց սկզբից էլ կոչ է անում, որ բանակցությունների պատրաստվող չորս երկրներն «իրար անեն այնպիսի զիջումներ, որոնք կարող լինեն վերացնելու փոխադարձ անբավականությունն ու փոխադարձ անվստահության ամեն տեսակ առիթները»: Եվ հայ մարդիկ պիտի ցնծային. չէ՞ որ զիջումները լինելու են փոխադարձ, ուրեմն, հնարավոր է, որ իրենց ետ զիջումներ անեն և դրանով մեկընդմիշտ վերջ տան իրենց անբավականությանն ու զրկվածությանը:

Սակայն հոդվածի հետագա ամբողջ բարբաջանքն այն մասին է, որ միայն հայերն իրենք պիտի զիջումներ անեն, նույնիսկ եթե այլևս զիջելու ոչինչ չունենան: Այո՛, եթե զիջելու ոչինչ չունենան: Նրանք «պետք է հաղթահարեն իրենց ազգայնականությունը և հանուն համաշխարհային հեղափոխության շահերի պետք է զոհաբերեն ո՛չ միայն տարածքներ, այլև իրենց ազգակիցների խմբերը. . . »: «Եթե մենք Անկարայի վրա կասկածենք համաշխարհային իմպերիալիզմի կամ մարտընչող իմպերիալիզմի մեջ, որ նա ցանկանում է

---

[230] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 558, g. 1, պ. մ. 5240, թ. 1ա,բ: Հմմտ. Հրաչիկ Սիմոնյան, Ողբերգության դրամին, «Գարուն», 1981, h. 4, էջ 48:

[231] Անդ:

[232] Ա. Սկաչկո, Армения и Турция на предстоящей конференции, «Жизнь национальностей» թերթ, 1921 թ. մարտի 4:

իր տիրապետության տակ թողնել հայերով բնակեցված տարածքներ և նույնիսկ ուզում է նվաճել Կովկասը, անգամ այդ պարագային էլ հիմք չի լինի վախենալու Թուրքիայից. . . »: Եվ այսպես ձգվում է զիջումների ու նվիրաբերությունների անվերջ, անվճար զոհաբերությունների թվարկումը, որի վերջում էլ գալիս է սրտաբաց խոստովանությունը. «Բոլոր այս նկատառումները վերաբերում են Հայաստանին, քանի որ ո՛չ Ռուսաստանը, ո՛չ էլ Ադրբեջանը Թուրքիայի հետ վիճելու հարցեր չունեն»: «Հայաստանը պետք է ղեկավարվի ազգային մեծագույն զոհողությունների մասին լենինյան սկզբունքով, նա պետք է հրաժարվի ոչ միայն «ծովից ծով Հայաստանի» դաշնակցական-իմպերիալիստական պահանջներից, այլև նույնիսկ հայկական կոչվող հողերն իրեն միացնելու համեստ ցանկությունից»: Խոսելով արևմտահայկական նահանգներում կատարված թուրքական վայրագությունների մասին, ցինիկորեն ավելացնում է, թե, միևնույն է, «Հայաստանին ոչինչ չի մնում անելու, քան հաշտվել ստեղծված դրության հետ և համաշխարհային հեղափոխության շահերի համար զոհաբերել և՛ իր նախկին տարածքները, և՛ իր ժողովրդի՝ Թուրքիայում մնացած մասը: Հայաստանը պարտավոր է հրաժարվել ոչ միայն այդ տարածքներից, այլև նույնիսկ նրանցից, որոնք մտնում էին անկախ Հայաստանի մեջ»: Ինչու՞: Որովհետև Հայաստանն այլևս բավականաչափ հզորություն չունի իր այդ հարցերը սեփական ուժերով լուծելու համար, իսկ «Խորհրդային Ռուսաստանը, ելնելով իր պետական շահերից, միջազգային հիմնահարցեր չի դնում»:

Հոդվածն սկզբից մինչև վերջ այսօրինակ անմարդկային ու անբարոյական հայտարարություններից է կազմված: Երևի այդ առաջին անգամ լկտիորեն բաց էր անում ժամանակի քաղաքական կյանքի վրայի քողը և ցույց էր տալիս, թե լենին-ստալինյան հեղափոխական պետական մեքենան ի՞նչ տեսակ դիվանագիտական խաղերով է ասպարեզ մտնում՝ կառավարելու իր թրի տակ անցած տերություններին, տնօրինելու հպատակ ժողովուրդների դժխեմ բախտը:

Ես «լենին-ստալինյան» միասնությունը պատահաբար չդրի այստեղ: Մինչև այժմ ուսումնասիրողները խորհրդայնացած Հայաստանի առաջին տարիների ողբերգությունների հիմնական պատճառ են ճանաչել Ստալինին՝ արևմտահայկական ու արևելահայկական նահանգների նվիրաբերումները թուրքերին ու ադրբեջանցիներին բացատրելով լոկ իբրև այդ ստոր դահճապետի հայատյացության ու կամայականությունների արգասիք: Եվ ստացվել է այնպես, թե ևս 1920—21 թվականներին, նույնիսկ 1918-ի ձմեռնամուտին հայ ժողովրդի դեմ նյութել է ամենաահավոր դավեր՝ հակադրվելով Լենինին կամ դրանք գաղտնի պահելով նրանից: Եվ քանի՛-քանիսն են գրել հենց այս 21 թ. ռուս-թուրքական բանակցությունների ու ընդունած պայմանագրերի մասին՝ դրությունն այնպես ներկայացնելով, թե ամեն ինչ կատարվում էր Ստալինի ձեռքով, վարագույրի ետև, առանց Լենինի գործուն մասնակցության կամ միջամտության:

Պատմում են, որ ռուս-թուրքական բանակցություններին (թե՞ կոնֆերանսին) հրավիրված Ալեքսանդր Բեկզադյանը, վճռաբար դեմ կանգնելով վերին կառավարության դիրքորոշմանը, ներկայացրել է իր ժողովրդի շահերն ու պահանջները, մարտնչել դրանց համար, և Թուրքիայի պատվիրակությունը այնքանը չհանդուրժելով՝ պահանջել է, որ Բեկզադյանին զրկեն բանակցություններին մասնակցելու իրավունքից: Հետո Հայաստանի Արտգործժողկոմն իր վրդովմունքն է հայտնել անձամբ Լենինին, նրա հետ ունեցել ծանր զրույց, որը և պատճառ է դարձել, որ Հայաստանը բաժան-բաժան անեն, նվիրաբերեն թուրքերին ու ադրբեջանցիներին, առանց ունկնդրելու Հայաստանի ձայնը, առանց նույնիսկ պաշտոնապես նրան մասնակից դարձնելու այդ արարողություններին:

Եվ այս ամենը՝ Լենինի գլխավորած երկրում, այն մարդու, որը մինչև այդ ազգի ինքնորոշման տեսություն էր ստեղծել, լենինյան տեսություն, որով յուրաքանչյուր ազգ, նույնիսկ ամենափոքրաթիվն ու ամենաանզորը, պետք է ունենար իր բախտը տնօրինելու անսահմանափակ իրավունքներ, ամենավճռական ձայն և մեծերի ու հզորների ամենաբազմակողմանի պաշտպանությունը:

Ազգային քաղաքականության մեջ հայտնի լենինյան այս տեսության ամենամոլեռանդ հակառակորդն ինքը՝ Լենինն էր, որը գոնե հայկական հարցում, իր գահակալության 3—4 տարիների ընթացքում, խաղաց ամենաազդելի մի դեր: Վերացական չլինելու համար հարց տանք, թե Արևմտահայաստանի մասին դեկրետ ընդունելուց հետո այն ո՞վ էր, որ իր զորքերը ետ քաշեց՝ այնտեղի հայությանը թողնելով հրեշի բերանին:

Իսկ 1921 թ. փետրվար-մարտյան ռուս-թուրքական բանակցություններին թուրքերն ու ադրբեջանցիները, խոսքերը մեկ արած, անվերջ նրան հասկացնում էին, որ անկասելի նպատակ ունեն պատառ-պատառ անելու Հայաստանը, իսկ նա ուշի-ուշով հետևում էր, թե այդ նպատակն ինչպես է իրականացվում, այսպես կոչված, հաշտության կամ բարեկամության խորհրդաժողովում:

Հիմա մեր ձեռքի տակ են Նարիմանովի երկու նամակները Լենինին՝ գրված խորհրդաժողովի նախօրյակին: Մի քանի տարի առաջ նրանց բովանդակությունը ճշգրիտ գրի առած ինձ էր տրամադրել պրոֆ. Հրանտ Եպիսկոպոսը: Ասում էր՝ մոսկովյան կուսակցական արխիվում են գտնվում, և արտագրել չի կարելի, չի թույլատրվում: Վերջապես դրանք արևերես հանեց Հրաչիկ Սիմոնյանը՝ հնարավորություն տալով, որ ուսումնասիրողներն ու ընթերցողը մինչև վերջ տեղյակ լինեն հայ ժողովրդի ճակատագրի դեմ գործված եռապետական (Ռուսաստան-Թուրքիա-Ադրբեջան) խարդավանքի մի նոր ծալքին ևս:

Առաջին նամակը գրված պիտի լինի 1921 թ. փետրվարի 16-ին: Լենինն ստացել, կարդացել գործակիցներին ծանոթանալու է հանձնարարել 19-ին: Այստեղ հիմնականում խոսք է գնում թուրքերին սիրաշահելու և այդ կերպ «արևելյան ազգերի հեղափոխության այդ առաջնորդներին» գործի դնելու մասին, և սիրաշահելու միակ եղանակն էլ հայկական հարցում նրանց բոլոր պահանջները կատարելն է համարվում: «Անգորացիներն անկեղծորեն ցանկանում են իրենց բախտը կապել մեզ հետ՝ ընդդեմ Անգլիայի,— Լենինին տեղեկացնում է Նարիմանովը: — Նրանց համար ամենաափսոսի հարցը հայկականն է: Այս հարցում նրանք առավելագույն եռանդ են դրսևորել, որպեսզի այն լուծեն իրենց օգտին: Ես խոսք գցեցի Բաթումի և Ախալցխայի մասին, բայց նրանք սառեցին. «Հայկական հարցը կյանքի և մահվան հարց է: Եթե այս հարցում մենք զիջենք, զանգվածները չեն գա մեր ետևից: Մինչդեռ այս հարցը մեր օգտին լուծելը մեզ ուժեղ է դարձնում»:

Հաջորդ պարբերությունն իր մեջ կենտրոնացնում է ամբողջ ասելիքը. «Անշուշտ նրանք դեմ են Անտանտին, նրանք պատրաստ են մեզ հետ միասին կռվելու Անգլիայի դեմ մինչև վերջին մարդը, բայց թե Մոսկվան հայկական հարցի պատճառով անգորացիներին վանի իրենից, ապա նրանք հուսահատված կարող են նետվել Անգլիայի գիրկը»:

Ապա գալիս է ապրանքը թանկացնող թարիֆինաման. «Անգորացիները գնալով ավելի մեծ ժողովրդականություն են վայելում որպես մուսուլմանական Արևելքում եվրոպական իմպերիալիզմի լծից ազատագրվելու համար պայքարող մարտիկներ: ...Եթե հիմա հրաժարվենք անգորացիներից, ապա մենք ոչ միայն կկորցնենք մեր ամբողջ ազդեցությունը մուսուլմանական Արևելքում, այլև կբացենք մեզ համար չլսված Արևելյան ռազմաճակատ: Եթե Անգլիան էլ, օգտվելով այդ հանգամանքից, բացի, նաև Արևմտյան ռազմաճակատ...»:

Ահա այսպես. վտանգված է համաշխարհային հեղափոխության գործը, խորհրդային երկիրը կընկնի երկու չեղած-չտեսնված ռազմաճակատների աքցանը, եթե խելամտություն չունենանք Անգորայի թուրքերին սիրաշահելու, իսկ այս էլ հնարավոր է միայն ու միայն հայկական հարցը ոտնատակ տալով, քանի որ աշխարհի փրկարար անգորացիների համար «հայկական հարցը կյանքի և մահվան հարց է»:

Նարիմանովը հմուտ դիվանագետ էր. գիտեր, որ Մոսկվայում իր տեսակետի դեմ խոսք անպայման կլինի, չէ՞ որ այնտեղ էր Չիչերինը՝ նոր կառավարության բարձր ոլորտում երևի թե միակ արդարասեր մարդը, որը հայկական հարցը հնարավոր սահմաններում խղճմտանքով լուծելու ուղիներ էր որոնում: Եվ Նարիմանովը նախապես կտրում է նրա չիլը: «Ես պետք է նախազգուշացնեմ Ձեզ, — գրում է նա, — ընկ. Չիչերինը խճճում է արևելյան հարցը, նա չափից ավելի է հրապուրվում հայկական հարցով և հաշվի չի առնում այն ամենը,

ինչ կարող է լինել, եթե անգորացիների հետ խզումը տեղի ունենա հենց Հայկական հարցի պատճառով: Ես կտրականապես հայտարարում եմ՝ Կովկասում (Դաղստանում և Վրաստանում) ստեղծված իրադրության մեջ, եթե կամենում ենք մեր ձեռքում պահել Ադրբեջանը, մենք պետք է ամուր դաշինք կնքենք անգորացիների հետ, ինչ գնով էլ լինի: Ես կրկնում եմ. այդ դաշինքը մեզ կտա ամբողջ մուսուլմանական Արևելքը, և այն ընդհանուր դժգոհությունը, որ մենք ինքներս (այսինքն՝ Չիչերինի մեղքով — Բ. Ո.) ենք ստեղծել մեր անձնական Արևելյան քաղաքականությամբ, կվերանա, և դրանով մենք Անգլիայի ձեռքից կխլենք պրովոկացիայի գործիքը»[233]:

Ուշադրություն դարձրեք. «Եթե կամենում ենք մեր ձեռքում պահել Ադրբեջանը»: Այս ահռելի սպառնալիքն էլ պահել էր վերջի համար, որպեսզի ասպարեզ հանի և ընթերցողին շշմեցնի. ապա թե ինչո՞ւ կարող եք կորցնել հայկական հարցը պաշտպանելով և, մանավանդ, ինչե՞ր կարող եք շահել այն ոտքի տակ տալով:

Կա և երկրորդ նամակը՝ գրված փետրվարի 21-ին: Այն գրելիս Նարիմանովի համար արդեն առկա էր մի հզոր հաղթաթուղթ՝ Հայաստանում տեղի ունեցած փետրվարյան հեղաշրջումը: «Ձեզ հայտնի է, որ խորհրդային իշխանությունը Հայաստանում արդեն տապալված է, — իր հերթին նա հաղորդում է առաջնորդին՝ կատարելով և իր համար բաղձալի եզրակացությունը: — Դա նկատի առնելով՝ ես կարծում եմ, որ թուրքական պատվիրակության հետ բանակցություններ վարելիս Հայկական հարցն այլևս դեր չպիտի խաղա»:

Ուրեմն, Հայաստանը մեռած է, նրա դիակի վրայով կարող եք շարժվել ետ ու առաջ:

Եվ պատահական չէ, որ Չիչերինին ու Կարախանին համառ դիմադրությունն անգամ հայկական (բացակա) կողմին ոչինչ չտվեց, ո՛չ Արևմտահայաստանի նվազագույն մասը՝ Վանի, Բիթլիսի ու Մուշի նահանգները, որոնց հարցը բանակցությունների նախօրյակին լուծված, պրծած էր համարվում, ո՛չ էլ նույնիսկ Կարսի ու Արդահանի շրջանները, որոնք վերջին պատերազմում էին բռնագրավվել Հայաստանի հանրապետությունից: Հակառակը, հարցը գնում էր մի բուռ դարձած Հայաստանի մարմինը ևս ծվատելու մասին, և այն սկսեցին Նախիջևանն Ադրբեջանին պարգևելով: Այստեղ այլևս կասկած չկար, որ թուրք գործիչների, Ռուսաստանի Ազգությունների կոմիսարիատի և Նարիմանովի ջանքերը համապատասխան արդյունքի հասել էին. անգորացիների դերն ու կշիռն այնքան բարձրացել էր, որ նրանք բանակցությունների ընթացքում վռնդել տվին Հայաստանի ներկայացուցչին, իսկ դաշնագրի մեջ էլ հայկական նահանգ Նախիջևանն Ադրբեջանին նվիրաբերելու մի այնպիսի տարբերակ թելադրեցին, որ ինքնուրույն ու անկախ պետությունների փոխհարաբերություններում աննախադեպ է: Պայմանագրի 3-րդ հոդվածն ունի հետևյալ ձևակերպումը. «Երկու պայմանավորվող կողմերը համաձայն են, որ Նախիջևանի մարզը՝ սույն Պայմանագրի 1-ին (բ) հավելվածում նշված սահմաններում կազմի ինքնավար տարածք՝ Ադրբեջանի խնամակալության ներքո՝ պայմանով, որ Ադրբեջանը սույն խնամակալությունը չզիջի մի երրորդ պետության»[234]:

Եվ այսպես ընդամենը երեք ու կես ամիս հետո այն Հռչակագրից, որ «եղբայրական Ադրբեջանն» էր աշխարհով մեկ արել՝ խոստովանելով, թե «Լեռնային Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը համարվում են Հայկական սոցիալիստական հանրապետության բաղկացուցիչ մասեր» (մյուս տարբերակում՝ Զանգեզուրի ու Նախիջևանի նահանգների տարածքները հանդիսանում են Խորհրդային Հայաստանի անբաժանելի մասը»):

Նախիջևանն-անբաժանելի մասն այսպես բաժանեցին Հայաստանից, տվին Ադրբեջանին, որպեսզի կարճ ժամանակ անց էլ նրա միջոցով ապահովվեր իրար հետ շփման ոչ մի կետ չունեցող Թուրքիայի ու Ադրբեջանի սահմանակցությունը: Թուրքիան իր արևելյան մասում

---

[233] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 2, g. 1, պ. մ. 24508, թ. 1—2 (տես՝ «Գարուն», 1989, h. 4, էջ 50—51):

[234] «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սով. արտ. քաղ. փաստաթղթերում» (1828—1923), Երևան, 1972, էջ 501:

50 կմ երկարությամբ մի տարածք զիջեց Պարսկաստանին և փոխարենը Նախիջևանի սահմանում 17 կմ երկարությամբ մի նեղ շերտ ստացավ, որպեսզի սրանով ապահովվի թուրքական երկու պետությունների սահմանակցությունը:

Նախիջևանը կորցնելուց ամիսներ հետո միայն Հայաստանի կառավարությունը գործի անցավ գոնե Արցախին տեր կանգնելու համար: Հավանաբար այս առթիվ լուրջ խոսակցություն էր եղել կուսակցության Կովկասյան բյուրոյում կամ նրա կառավարության շրջանակում, որովհետև 1921 թ. հունիսի 3-ին Կովլ. բյուրոն, Ս. Օրջոնիկիձեի, Ֆ. Մախարաձեի, Ն. Նարիմանովի, Ալ. Մյասնիկյանի և այլոց մասնակցությամբ, ընդունել էր որոշում, որի 5-րդ կետով Հայաստանին հանձնարարվում էր հռչակագրով հաստատել Լեռնային Ղարաբաղի պատկանելիությունը Հայկական ԽՍՀ-ին[235]: Եվ այս հիման վրա էլ Հայաստանի Ժողկոմխորհն իսկապես ընդունեց հետևյալ հռչակագիրը. «Ադրբեջանի սոցիալիստական խորհրդային հանրապետության Հեղկոմի հռչակագրի և Հայաստանի ու Ադրբեջանի սոցիալիստական խորհրդային հանրապետությունների կառավարությունների միջև եղած համաձայնության հիման վրա հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղը այժմվանից կազմում է Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության անբաժան մասը:

Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության Ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյան (Ալ. Մարտունի),

Քարտուղար Մ. Ղարաբեկյան:

1921 թ. հունիսի 12, Երևան»[236]:

Երկու «հանրապետությունների միջև եղած պայմանավորվածության հիման վրա» ակնարկը վկայում է, որ Հայաստանի ու Ադրբեջանի միջև այդպիսի պայմանավորվածություն իսկապես եղել է, այսինքն՝ Նարիմանովի կառավարությունը տվել է իր համաձայնությունը, որպեսզի Հայաստանի Ժողկոմխորհն ընդունի նման որոշում և հրապարակի: Այլապես անհնար կլիներ պատկերացնել հռչակագրի մեջ նույն ակնարկի առկայությունը, մանավանդ այդ հռչակագրի հրապարակումն Ադրբեջանի պաշտոնական մամուլում («Բակինսկի ռաբոչի»):

Այս որոշումը՝ ընդունված երկու հարևան հանրապետությունների կառավարական բարձր մակարդակով, ինչ-որ չափով նախապատրաստված էր նաև կենտրոնում՝ Ռուսաստանյան ղեկավարության ու նրա՝ Անդրկովկասում գործող ներկայացուցիչների շրջանակում: Հիշենք, օրինակ, որ 1921 թ. հունիսի 2-ին Ռուսաստանի Արտգործժողկոմատից դիմել էին Կովկասյան ճակատի շտաբին՝ խնդրելով տեղեկություններ հաղորդել Կովկասի խորհրդային սահմանների մասին, և Կովկասյան առաջին կորպուսի շտաբի պետ Վորոբյովը նույն ամսի 9-ին, այսինքն՝ Կովկասյան բյուրոյի որոշումից հետո, պատասխանել է. «Ղարաբաղն ու Զանգեզուրը, որպես հայ բնակչության մեծ տոկոս ունեցող նահանգներ, Ադրբեջանի Հեղկոմի որոշմամբ, Զանգեզուրում հակահեղափոխության վերացումից հետո, պետք է անցնեն Հայաստանին»[237]:

Ուրեմն, պարզվում է, որ Զանգեզուրն ու Ղարաբաղը Հայաստանին տալու որոշում է ընդունել ոչ միայն Կովկասյան բյուրոն, այլև Ադրբեջանի Հեղկոմը: Եվ այսքանից հետո՝ ամենաօրինական, ո՛չ մի առարկություն չընդունող հռչակագիրը, որ Հայաստանի կառավարությունն ընդունեց հունիսի 12-ին:

Հռչակագրի կապակցությամբ Հայաստանի կառավարությունն ստեղծեց նաև Ղարաբաղում Հայաստանի հանրապետության Արտակարգ լիազորի պաշտոն, և այդ պաշտոնին նշանակվեց ժամանակի հայ նշանավոր գործիչներից մեկը՝ Ասքանազ Մռավյանը:

---

[235] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, g. 2, գ. 1, թ. 77:
[236] «Խորհրդային Հայաստան», 1921 հունիսի 19, «Բակ. ռաբոչի», 1921, հունիսի 22:
[237] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, g. 16, գ. 44, թ. 2—3:

Հետո՝ պիտի պարզվեր, որ այդ հռչակագիրն իր նախապատրաստությամբ ու հետևանքով մեկն էր այն խաբկան մեքենայություններից, որոնք նոր Ռուսաստանի ներկայացուցիչներն էին կատարում արցախահայության ճակատագրի վերաբերյալ: Ըստ երևույթին Հայաստանի ու Անդրերկրկոմի ղեկավարներին շատ էր անհանգստացնում ըմբոստ Զանգեզուրի խնդիրը: Ոչ մի կերպ չէին կարողանում ծնկի բերել, մնացել էր մի վերջին միջոց՝ երկրամասը կանգնեցնել երկընտրանքի առաջ, տեսնո՞ւմ եք՝ Արցախն էլ միացրինք Խորհրդային Հայաստանին, և մնացիք դուք, որ արանքում պիտի խեղդվեք: Եվ, իսկապես, հունիսի 18-ին, այսինքն՝ հռչակագիրը հրապարակվելուց անմիջապես հետո, Զանգեզուրում ստացվում է մի ուղերձ, որի մեջ մասնավորապես գրված էր. «Հայաստանի բանվորագյուղացիական կառավարությունը նորեն դիմում է ձեզ՝ զանգեզուրցիներիդ, վերջ տալու տեղի ունեցող ընդհարումներին. ինքնորոշման հիմունքներով Զանգեզուրը պիտի համարվի իր հարազատ բանվորագյուղացիական հայրենիքի անբաժան մասը: — Ապա. — Ամբողջ Անդրկովկասում հաստատված է խորհրդային իշխանություն, Լեռնային Ղարաբաղը ևս միացված է Հայաստանին, միայն Զանգեզուրն է բացառություն կազմում»[238]:

Այսպես, ուրեմն. Ղարաբաղն էլ միացվեց, մնացիք դուք, որ ուրիշ ելք չունեք:

Հռչակագիրն ունեցել էր որոշակի նպատակ, որը հաջորդվել էր նաև Նարիմանովին (սա էր, որ մի քանի օր հետո, այդ նպատակից դժգոհ, պիտի քրթմնջար. «եթե խորհրդային Հայաստանն այդ գործողությամբ ցանկանում է թողնել ակնհայտ տպավորություն Հայաստանի դաշնակների ու անկուսակցական զանգվածի վրա...»):

Չի կարելի կարծել, թե սպասված տպավորությունը չստացվեց. ամսավերջին Զանգեզուրի աշխատավոր գյուղացիության տրամադրությունը փոխված էր արդեն: Նժդեհի մարտիկներն անգամ «բանվորագյուղացիական կառավարության» զորքի դեմ չէին կռվում այն վճռականությամբ, որ ցույց էին տալիս նախորդ ամիսներին... Եվ ահա՛, հուլիսի սկզբին նահանջն անցնում է խորհրդային իշխանությանը: Սրանով էլ, ըստ երևույթին, հռչակագիրը (Արցախի մասին) մեծապես օգնեց Լր խնդրի կատարմանը և այլևս կարող էր չեղյալ հայտարարվել:

Այն օրերին Թիֆլիսում համաանդրկովկասյան կարևոր խորհրդակցություն էր գնում, և այնտեղ էր գտնվում նաև Մռավյանը: Օրջոնիկիձեի հանձնարարությամբ Մռավյանն ու Ադրբեջանի Ռազմածովային ժողկոմ Ալիհեյդար Կարաևը պետք է մեկնեին Ղարաբաղ՝ Հայաստանին տրված մարզի կյանքը կազմակերպելու և նոր հունի մեջ դնելու համար: Այսպիսով պիտի իրականացվեին Կովկասյան բյուրոյի հունիսի 3-ի որոշումը և Հայաստանի ժողկոմխորհի հունիսի 12-ի հռչակագիրը: Կարծես հաղթահարված էին դժվարությունները, և ոչինչ չէր կարող խանգարել իրերի տրամաբանական ընթացքին: Սակայն երբ Ղարաբաղ ուղարկվածները հասան Եվլախ, Կարաևը Մուսայելյանին հայտնեց, թե, իբր, նախորդ երեկոյան Թիֆլիսում գտնվող իրենց արտգործժողկոմ Հուսեյնովը հեռախոսով կապված է եղել Բաքու, Նարիմանովի հետ, և վերջինս հանձնարարել է, որպեսզի Կարաևն ու Մուսայելյանը Եվլախից ուղիղ գնան Բաքու, քանի որ Լեռնային Ղարաբաղի հարցը նոր պարզաբանումների կարիք ունի, և դրանք պիտի կատարվեն Բաքվում:

Պետական գործչի, և առհասարակ մարդ-անհատի, յուրաքանչյուր այսպիսի քայլի մեջ կարելի է բնութագրական շատ բան տեսնել: Նրա անձի, նույնպես իրեն ծնած ու սնած միջավայրի պատկերը գծելու համար: Երբ Օրջոնիկիձեն Կարաևին ու Մուսայելյանին Արցախ էր գործուղում, Կարաևն արդեն գիտեր Հուսեյնովի ու Նարիմանովի հեռախոսազրույցի և տրված հանձնարարության մասին: Նա այդքանն անմիջապես Մուսայելյանին պիտի հաղորդեր, ու այլևս կարիք չէր լինի գնացք նստել, հասնել Եվլախ: Ճանապարհին, Թիֆլիսից մինչև Եվլախ էլ գնացքում նրանք երևի իրար տեսել են, զրուցել, չէ՞ որ, իբր, նույն ղեկավար հանձնարարությունը միասին կատարելու էին գնում և եթե կարիք ու պատեհություն լիներ, ժողովրդի առաջ ելույթ ունենային, պիտի եղբայրության, անկեղծ բարեկամության և ուրիշ այսպիսի սրբազան երևույթների մասին խոսեին: Սակայն

[238] «Միասար», էջ 199:

Կարաև-գործընկերն իմացած կարևորագույն հանձնարարականի մասին լռել է Թիֆլիսում, համր է մնացել ամբողջ ճանապարհին և միայն Եվլախում, երևի իր տանը, արիացած ու անկեղծացած՝ տվել Մուսայելյանի երեսին:

Մուսայելյանը գանձակեցի էր և, ուղեկցի ցեղային վարք ու բարքին մանկությունից ծանոթ, բանիմաց մարդ, իսկույն հասկացել էր, որ Արցախի հարցը նորից ճակատագրական խարդավանքի է դեմ առնում: Հրաժարվեց Բաքու մեկնելուց, հունիսի 25-ին էլ սուրհանդակի միջոցով տագնապոտ երկտող ուղարկեց Օրջոնիկիձեին: Երկտողում նա վրդովված էր. «Լեռնային Ղարաբաղի հարցի շտապ ու աներկդիմի լուծումն ունի վիթխարի կարևորության քաղաքական նշանակություն և վճռական գործոն կհանդիսանա Զանգեզուրի հարցը լուծելիս:

Հետագա ձգձգումը միայն հաղթաթուղթ է մեր թշնամիների ձեռքին»[239]:

Դժբախտաբար, Մուսայելյանը չէր սխալվել: Արցախի դեմ նորից ստոր դավ էր նյութվել: Ադրբեջանի կառավարության հրամանով նրա լիազորությունը բեկանված էր, և նա ստիպված եղավ վերադառնալ Երևան: Իսկ Կարաևը շարունակեց ճանապարհը, Ղարաբաղ հասավ ու այնտեղ որոշակի ձեռնարկումներ կատարեց իր կառավարության կարգադրությամբ: Կարճ ժամանակ անց նրա գործունեության առթիվ Բաքվում ստացվեց հետևյալ զեկույցը. «Ընկեր Կարաևի կողմից ձեռնարկված են համապատասխան միջոցներ այդ հարցի վերացման համար»[240]:

Պարզ է, որ խոսքը վերաբերում էր Ղարաբաղի հարցին:

Մուսայելյանի երկտողն ստանալով հունիսի 26-ին Օրջոնիկիձեն երևի հանձնարարած պիտի լիներ, որ այդ օրերին (25—27) Անդրկովկասյան հանրապետությունների սահմանային հարցերը քննող հանձնաժողովն առավել ուշադիր լինի Լեռնային Ղարաբաղի հարցի նկատմամբ: Մանավանդ, որ այնտեղ էլ Բեկզադյանն էր անվերջ մարդկանց լարված պահում նույն հարցի առթիվ իր պահանջներով:

Այդ օրերին (հունիսի 25—27) Թիֆլիսում իր աշխատանքներն էր տանում այն հանձնաժողովը Կիրովի ղեկավարությամբ, որ Կովբյուրոն դեռևս մայիսի 2-ին էր ստեղծել երեք հանրապետությունների սահմանների հարցը քննելու և եզրակացությունները բյուրոյին ներկայացնելու վերջնական որոշման համար: Հանձնաժողովի կազմում էին վրաց կողմից Սվանիձեն ու Թոդրիան, Ադրբեջանից Հուսեյնովը, Հաջինսկին, Ռասուլ-զադեն ու Օմար-Ֆաիկը, Հայաստանից միայն Ալեքսանդր Բեկզադյանը: Ինչո՞ւ այսպիսի անհամամասնություն, — զարմացած են ուսումնասիրողները: — Մի՞թե հենց դա էլ չի մատնում ղեկավարության ո՛չ հայանպաստ տրամադրությունը, երբ այն օրերին հենց հայկական կողմն էր, որ ավելի շատ խնդիրներ ուներ սահմանների տեսակետից[241]:

Հանձնախմբի աշխատանքի սկզբից իսկ Բեկզադյանը խնդիր դրեց նկատի առնել Հայաստանի տարածքային անբարենպաստ վիճակը, ինչպես նաև մոտիկ անցյալում հայ ժողովրդի տված ծանր ու ճակատագրական կորուստները և զիջումներ կատարել գոնե այն շրջաններում, որոնց հայկական պատկանելությունը չի կարող հարց լինել: Այս խոսքը, անտարակույս, վերաբերում էր նաև զգացումների մարզին և ուղղված էր գործընկերների խղճին. «Հանուն ընդհանուր համերաշխության, հանուն մեկընդմիշտ ամենաանկեղծ բարեկամական փոխհարաբերություններ հաստատելու անել որոշ տարածքային զիջումներ, ընդ որում խիտ հայ բնակչություն ունեցող շրջաններում»[242]:

---

[239] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 85, g. 14, գ. 141, թ. 4:
[240] Անդ, ֆ. 64, g. 1, գ. 95, թ. 201: Հմմտ. Հ. Սիմոնյան, Ազգամիջյան լարվածության ակունքներում, «Խ. Հ.», 1989, սեպտ. 14:
[241] Անդ: Л. Хуршудян. Истина..., էջ 33:
[242] ՀԽՍՀ ՀՀՆԹ ԿՊԱ, ֆ. 128, g. 1, գ. 1420, թ. 15 և հտգ:

Բեկզադյանի առաջարկությունը վերաբերում էր Ախալքալաքի շրջանին, Լոռու գավառին և Լեռնային Ղարաբաղին:

Վրաց ու ադրբեջանական կողմերը կտրականապես մերժեցին այդ առաջարկությունը, և հետո մեջտեղ եկան նաև տարաձայնություններ հենց նրանց միջև իրենց համար վիճելի տարածքների հարցը քննելիս: Եվ, այսուհանդերձ, Լեռնային Ղարաբաղի հարցի կապակցությամբ խորհրդակցության արձանագրության մեջ ադրբեջանական պատվիրակության ղեկավար Հուսեյնովի մասին գրանցված է հետևյալը: «Առանձնապես կողմնակից լինելով շովինիստների կողմից բանիցս ազգամիջյան պայքարի ռազմաբեմ դարձած Լեռնային Ղարաբաղն արդարացիորեն հայերին տալուն, նա միաժամանակ, իբրև Ադր. ԽՍՀ պատվիրակության ղեկավար, հանձնաժողովին խնդրում է այդ հարցի լուծումը փոխադրել հաջորդ օրվան՝ խոստանալով երեկոյան Բաքվից հեռախոսով ստանալ անհրաժեշտ ցուցումներ ու լիազորություններ»[243]:

Հաջորդ օրը, հունիսի 26-ին, պարզվեց, որ Նարիմանովը դեմ է Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելուն: Ստացվել էր նաև Մոսկվայի երկտողը: Ուստի և Օրջոնիկիձեն ու Կիրովը որոշեցին հանձնաժողովում հարցի քննարկումն առժամանակ դադարեցնել: Իսկ մինչ այդ անհրաժեշտ էր ստանալ ադրբեջանական կողմի կարծիքն ու պատճառաբանությունները: Նրանք նույն հունիսի 26-ին էլ հեռագրեցին Բաքու, Նարիմանովին՝ մասնավորապես գրելով. «Խնդրում ենք հրավիրել (Ադր. Կ(բ) Կենտկոմի) քաղբյուրո և (Ադր. ԽՍՀ) ժողկոմխորհ և լուծել Ղարաբաղի հարցն այն հաշվով, որպեսզի վաղը, հունիսի 27-ին, հնարավոր լինի ավարտել բանակցությունները: Եթե հետաքրքրվում ես մեր կարծիքով, ապա այն հետևյալն է. բոլոր պատճառները վերջնականապես լուծելու և իսկական բարեկամական հարաբերություններ հաստատելու համար, Լեռնային Ղարաբաղի հարցը լուծելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքով. ո՛չ մի հայկական գյուղ չպետք է միացվի Ադրբեջանին, ինչպես և ո՛չ մի մահմեդական գյուղ չի կարելի միացնել Հայաստանին»:

Հունիսի 27-ին Նարիմանովը հրավիրեց հանրապետության կուսակցական ԿԿ-ի քաղբյուրոյի ու կազմբյուրոյի նիստ, ընդունեց որոշում՝ արտահայտելով իրենց անհամաձայնությունը Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու դեմ:

Ահա այս առթիվ ընդունված որոշումը. «Լեռնային Ղարաբաղի հարցն ամբողջովին, ընկ. Բեկզադյանի դրվածքով, քաղ. և կազմ. բյուրոն համարում է անընդունելի՝ նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի անառարկելի տնտեսական կապվածությունն Ադրբեջանին, որպեսզի իմաստով էլ պիտի հարցը լուծվի»[244]: Ապա մերժվում է նաև հայկական գյուղերը միայն Հայաստանին, ադրբեջանականներն Ադրբեջանին միացնելու առաջարկը՝ այն պատճառաբանությամբ, թե դա տնտեսական ու վարչական տեսակետներից աննպատակահարմար է, քանի որ, իբր, հանուն «հայ ու մահմեդական չքավորագույն բնակչության բարօրության և հեղափոխության ամրապնդման» անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղը միացնել միայն Ադրբեջանին[245]: Այսքանը հաղորդելով Թիֆլիս, այնտեղ գտնվող արտգործժողկոմ Հուսեյնովին՝ Նարիմանովը միաժամանակ հանձնարարեց, թե «Հարցը պիտի վճռվի միայն այս կերպ, այլապես (Ադր. ԽՍՀ) ժողկոմխորհը պատասխանատվությունը ձգում է իրենից, քանի որ եթե խորհրդային Հայաստանն այդ գործողությամբ ցանկանում է թողնել ակնհայտ տպավորություն Հայաստանի դաշնակների ու անկուսակցական զանգվածի վրա, ապա պետք չէ մոռանալ այն հանգամանքը, որ դրանով իսկ մենք Ադրբեջանում վերականգնում ենք այնպիսի հակախորհրդային խմբերին, ինչպիսիք են (իրենց) դաշնակները» [246]:

---

[243] Անդ:
[244] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, g. 2, գ. 7, թ. 13:
[245] Անդ, ֆ. 85, g. 13, գ. 66, թ. 1:
[246] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, g. 2, գ. 7, թ. 13:

Հունիսի 27-ին Կովբյուրոյի նախագահությունը (Օրջոնիկիձե, Կիրով, Ֆիգատներ) լսեց Ադրբեջանի արտգործժողկոմ Հուսեյնովի զեկուցումն իր ու Նարիմանովի հեռախոսազրույցի մասին (Լեռնային Ղարաբաղի հարցի շուրջ) և ընդունեց որոշում. «Հրավիրել ՌԿԿ Կովբյուրոյի արտահերթ պլենում և ընկ. ընկ. Նարիմանովին ու Մյասնիկովին հղել հետևյալ հեռագիրը. ՌԿԿ Կենտկոմի Կով. բյուրոյի նախագահությունը առաջարկում է սույնն ստանալուն պես անմիջապես ճանապարհվել Կով. բյուրոյի պլենումի արտահերթ նիստին: Օրակարգում հանրապետությունների սահմանազատման հարցն է: Թիֆլիսում են գտնվում Կով. բյուրոյի վեց անդամները: Ձեր չհամաձայնելու դեպքում Կով. բյուրոյի՝ Թիֆլիսում գտնվող վեց անդամների որոշումը համարվելու է պարտադիր: Այդ պատճառով էլ պահանջում ենք ձեր շուտափույթ ժամանումը»[247]:

Այս հեռագրից պարզ երևում է, որ Կով. բյուրոյին լուրջ անհանգստություն, եթե չասենք զայրույթ էր պատճառել Նարիմանովի դիրքորոշումը: Եվ նկատի առնելով հեռագրի սպառնալից տոնը, չի կարելի կասկածել, որ բյուրոյի սպասվող նիստն ու հարցի քննարկումը պետք է անցնեին ջղային մթնոլորտում, անզիջում պայքարով ու վճռական որոշումով:

Հեռագիրը Նարիմանովին ու Մյասնիկյանին տրվել էր հունիսի 27-ին: Բյուրոյի նիստը տեղի ունեցավ հուլիսի 2—7-ը: Լեռնային Ղարաբաղի հարցի համար հայկական ու ադրբեջանական կողմերը բավական ժամանակ էին ունեցել նախապատրաստվելու և քննարկմանը ներկայացնելու ամեն տեսակետից հիմնավոր կռվաններ:

Երբ արդեն բյուրոյի անդամներն ու հանրապետություններից հրավիրված բազմաթիվ աշխատողներ հավաքվել էին, պարզվեց, որ ներկա է նաև Ստալինը: Եկել էր Նալչիկից, ուր հանգստանում ու բուժվում էր: Ինչո՞ւ էր եկել, ո՞ւմ հրավերով կամ պահանջով՝ փաստաթղթերը որոշակի ոչինչ չեն հաղորդում իբրև պատասխան այս հարցերի:

Միայն Ս. Խանդամարյանը, առանց աղբյուր նշելու, գրում է, թե Օրջոնիկիձեն նախապես նրան պատմած է եղել, որ երեք հանրապետություններն ունեն սուր վեճեր սահմանային հարցերում և, պլենումին հրավիրելով, այնպես հույս ուներ, թե նրա ներկայությունը կօգներ ընդունելու միայն ճշմարիտ որոշումներ[248]:

Լեռնային Ղարաբաղի պատկանելության հարցը քննության դրվեց Կով. բյուրոյի հուլիսի 4-ի նիստում: Ներկա էին Ստալինը և բյուրոյի 8 անդամները (Օրջոնիկիձե, Կիրով, Մախարաձե, Նարիմանով, Մյասնիկյան, Նազարեթյան, Օրախելաշվիլի, Ֆիգատներ):

Քննության ընթացքում երևան եկան երկու տեսակետներ և քվեարկության դրվեցին հետևյալ հարցերը.

Ա. Ղարաբաղը թողնել Ադրբեջանի սահմաններում: Կողմ քվեարկեցին Նարիմանովը, Մախարաձեն, Նազարեթյանը, դեմ՝ Օրջոնիկիձեն, Մյասնիկյանը, Կիրովը, Ֆիգատները:

Բ. Հանրաքվե անցկացնել ամբողջ Ղարաբաղում՝ ինչպես հայ, այնպես էլ մահմեդական ամբողջ բնակչության մասնակցությամբ:

Կողմ քվեարկեցին Նարիմանովն ու Մախարաձեն:

Գ. Ղարաբաղի լեռնային մասը մտցնել Հայաստանի կազմի մեջ:

Կողմ քվեարկեցին Օրջոնիկիձեն, Կիրովը, Մյասնիկյանը, Ֆիգատները:

Դ. Հանրաքվե անցկացնել միայն Լեռնային Ղարաբաղում, այսինքն՝ հայերի շրջանում: Կողմ քվեարկեցին Օրջոնիկիձեն, Մյասնիկյանը, Ֆիգատները, Կիրովը, Նազարեթյանը:

---

[247] Անդ, ֆ. 17, ց. 13, գ. 384, թ. 26:
[248] Տե՛ս նրա գիրքը, էջ 198:

Որոշվեց. Լեռնային Ղարաբաղը մտցնել Հայկական ԽՍՀ կազմի մեջ, հանրաքվե անցկացնել միայն Լեռնային Ղարաբաղում[249]:

Այս որոշումն ընդունվելուց հետո էր, որ Նարիմանովը կատարեց հետևյալ հայտարարությունը. «Նկատի առնելով այն կարևորությունը, որ Ղարաբաղի հարցն ունի Ադրբեջանի համար, անհրաժեշտ եմ համարում այն վերջնական լուծման համար փոխադրել ՌԿ(բ)Կ Կենտկոմ»: Հաշվի առնելով այդ հայտարարությունը՝ Կով. բյուրոն ընդունեց նոր որոշում, որ է. «Նկատի առնելով, որ Ղարաբաղի հարցը հարուցել է լուրջ տարաձայնություններ, ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կով. բյուրոն անհրաժեշտ է համարում այն փոխադրել ՌԿ(բ)Կ Կենտկոմ՝ վերջնական որոշման համար»[250]:

Սակայն հաջորդ օրն իսկ բյուրոն, նույն կազմով ու Ստալինի մասնակցությամբ, վերստին անդրադարձավ Ղարաբաղի հարցին (Օրջոնիկիձեն ու Նազարեթյանը հարց էին բարձրացրել վերանայել նախորդ նիստի որոշումը Ղարաբաղի մասին) և, առանց քննարկելու, առանց նույնիսկ քվեարկության դնելու, ընդունեց հետևյալ որոշումը.

«Ա. Ելնելով մահմեդականների ու հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից և Վերին ու Ներքին Ղարաբաղի տնտեսական կապից, նրա մշտական կապից Ադրբեջանի հետ, Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբ. ԽՍՀ սահմաններում՝ նրան տալով մարզային լայն ինքնավարություն՝ վարչական կենտրոն Շուշի քաղաքով, որը մտնում է ինքնավար մարզի մեջ:

Բ. Հանձնարարել Ադրբեջանի Կենտկոմին՝ որոշելու ինքնավար մարզի սահմանները և ներկայացնելու ՌԿԿ Կով. բյուրոյի հաստատմանը:

Գ. Կով. բյուրոյի նախագահությանը հանձնարարել պայմանավորվելու Հայաստանի Կենտկոմի ու Ադրբեջանի Կենտկոմի հետ Լեռնային Ղարաբաղի արտակարգ կոմիսարի թեկնածուի մասին:

Դ. Ադրբեջանի Կենտկոմին՝ պարզել և Կով. բյուրոյի հաստատմանը ներկայացնել ինքնավարության ծավալը»[251]:

Հայտնի չէ ի՞նչ դրդում էր նախորդել այս որոշմանը, ինչպե՞ս էր պատճառաբանվել հուլիսի 4-ին ընդունված վերջին որոշումն այնպես բռնի կերպով բեկանելը... Հասկանալի է մի բան. միայն Ստալինի ներկայությունն ու միապետական-գռեհիկ միջամտությունը կարող էր հնարավոր դարձնել, որպեսզի նման դեպքերի համար նախատեսված բոլոր օրենքներով ընդունված որոշումն առանց պատճառաբանության բեկանվի, և ընդունվի նոր որոշում, որը ոչ միայն չունի հիմք, այլև չի անցել նման դեպքերի համար պարտադիր քվեարկությամբ:

Ուսումնասիրողների համար միշտ էլ զարմանալի ու տարակուսական է եղել Ալ. Մյասնիկյանի բռնած դիրքը հարցի քննարկման ամբողջ ընթացքում:

Մի՞թե նա չէր կարող բողոքել գոնե որոշման, այսպես կոչված, հիմքերի անհեթեթության դեմ ի՞նչ էր նշանակում Վերին կամ Ներքին կամ Դաշտային Ղարաբաղի «տնտեսական կապ», որը միայն փչոց էր: Չէ՞ որ Ադրբեջանի հետ, իբր թե, ունեցած մշտական կապն էլ հիմարություն էր, մանավանդ՝ դրա հիման վրա քաղաքական որևէ հարց լուծելը: Այն ժամանակ արդեն նավթի «տնտեսական կապով» Ադրբեջանի հետ մշտական ու անխզելի կապված էր ողջ Ռուսաստանը: Ուրեմն, պիտի վերցնեին և հսկա Ռուսաստանը և՞ս միացնեին Ադրբեջանին:

Իսկ «մահմեդականների ու հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտության» պայմանն արդեն զավեշտական էր իր ողբերգական խորքով:

---

[249] ՍԼԻ ԿԿԱ, ֆ. 17, g. 13, գ. 384, թ. 66, նաև՝ նույն տեղում, ֆ. 64, g. 2, գ. 1, թ. 117—118, ֆ. 85, g. 18, գ. 58, թ. 17:
[250] Անդ:
[251] ՍԼԻ ԿԿԱ, ֆ. 17, g. 13, գ. 384, թ. 67, նույն տեղում, ֆ. 64, g. 2, գ. 1, թ. 118, ֆ. 85, g. 18, գ. 58, թ. 18:

Մինչև այդ մահմեդականներն էին կոտորել հայերին (հիշենք, թեկուզ Բաքվի ու Շուշիի զանգվածային ջարդերը, Շուշիի հայկական մասի և տասնյակ ու տասնյակ գյուղերի կործանումը): Ուրեմն իբրև վարձատրություն կամ պարգև այդ ամենի դիմաց՝ հայերը պարտավոր էին Արցախ-Ղարաբաղն էլ հանձնել իրենց դահիճներին:

Եվ, վերջապես, եթե Նարիմանովը գտնում էր, որ Ղարաբաղի հարցը մեծ կարևորություն ունի Ադրբեջանի համար և այդ հիմքի վրա էլ ստիպում էր բեկանել արդեն Հայաստանի օգտին ընդունված որոշումը, մի՞թե Մյասնիկյանը համոզված չէր, թե նույն հարցը շատ ավելի կարևոր է Հայաստանի համար, Հայաստանի՛, որը նախընթացին ոչ միայն իր պատմական հայրենիքի բոլոր լավագույն հողերի մեծագույն մասն էր կորցրել, ապրել անպատմելի ողբերգություններ, այլև, այդքանից հետո նրան կտրում էին մի մարզից, որն իր ամբողջ պատմության ընթացքում եղել է Հայաստանի վարչաքաղաքական կենտրոններից մեկը, իսկ հենց այդ ժամանակ պահպանում էր իր բնակչության 94-ից ավելի տոկոսյա ազգային պատկերը: Եվ այսքանից հետո էլ, մի՞թե հնարավորություն չուներ պահանջելու, որ հարցի վերջնական լուծումը փոխադրվեր կենտրոն, այնտեղ քննվի երկրի բարձր ղեկավարների մթնոլորտում, ազգային խնդիրների ամենահայտնի ու ամենաընդունելի պահանջներով: Գիտենք, որ այնտեղ էլ Ստալինի կարծիքն ու կամքը վճռական դեր կխաղային, եթե նկատի էլ չառնենք Ազգությունների կոմիսարիատի թրքամոլ շրջանակը, որին ծանոթացանք գրքիս նախորդ էջերում... Բայց այդ դեպքում Մյասնիկյանն ինչո՞ւ չունեցավ հրաժարականով սպառնալու քաջություն: Չէ՞ որ Նարիմանովն այդպես էր հասնում իր դիրքի ճանաչմանը. «Ես իմ վրայից դեն եմ ձգում պատասխանատվությունը»:

Ամիսներ հետո միայն, 1922 թ. հունվարին, Հայաստանի կոմունիստական կուսակցության առաջին համագումարում Ալ. Մյասնիկյանն ստիպված էր ցավով անդրադառնալ Կովկասյան բյուրոյի այն չարահուշ նիստին: Ասում էր. «Այնտեղ ի հայտ եկավ որոշակի նացիոնալիզմ կովկասյան հանրապետությունների կողմից: Եվ եթե բնութագրելու լինենք Կովկասյան բյուրոյի վերջին նիստը (այն, որը բռնադատեց Լեռնային Ղարաբաղի հարցը — Բ. Ու.), ապա կարծես այնտեղ նստած լինեին Ահարոնյանը, Թոփչիբաշևն ու Չխենկելին: Այսպես, Ադրբեջանն ասում էր, որ եթե Հայաստանը պահանջի Ղարաբաղը, ապա ինքը նավթ բաց չի թողնի: Այդ նիստին մենք նստած էինք քարտեզը ձեռներիս... Սա, իհարկե, նախկին նացիոնալիզմ է: Ես աշխատել եմ Արևմտյան Ռուսաստանում, որտեղ ազգային տարաձայնությունները լեհերի ու հրեաների միջև ավելի շատ են, քան այստեղ, բայց այնտեղ կոմունիստների շրջանում այդպիսի բան չկար: Իսկ այստեղ վրաց կոմունիստն ատում է հայ կոմունիստին, թաթար կոմունիստը՝ հայ կոմունիստին: Նրանց, ովքեր խոսում էին սահմանները վերացնելու մասին, անվանում էին գաղութարարներ»[252]:

Մյասնիկյանն, անկասկած, ամենից շատ Նարիմանովից պիտի դժգոհ լիներ, նրա երկերեսանիությունից ու բացահայտ հակահայ վարքից: Մի քանի ամսվա ընթացքում հենց Ղարաբաղի հարցում նա քանի՛ անգամ փոխել էր իր դիրքը՝ կարծես ամեն անգամ էլ ցույց տալու համար, թե ահա այսպես ինչ ուզեմ, այն էլ կանեմ... Սակայն ամենաարտակարգն ու անսպասելին այն անթաքույց հայատյացությունն էր, որ նկատել էր նույնիսկ իրերին մակերեսորեն ծանոթ Ց. Լեգրանը[253]: Իսկ հայ մարդը, օրինակ, Հայաստանի հանրապետության դեսպանը Բաքվում՝ 1920 թ. օգոստոսի 9-ին իր կառավարությանը գրել էր. «Երեկ, ամսույս 8-ին, ցերեկվա ժամը 2-ին ես տեսակցություն ունեցա Հելկոմի նախագահ դոկտոր Նարիմանովի հետ: Այդ տեսակցությունը հարկադրական էր, քանի որ Հումեյնովը Մոսկվայից դեռ չի վերադարձել, նա սպասվում է այսօր, և նրան փոխարինում է Նարիմանովը: Առհասարակ ես խուսափում եմ Նարիմանովի հետ տեսնվել, քանի որ նա չունի նույնիսկ թաթի ցեղին հատուկ վարվեցողության եղանակը, այսիննքն՝ արտաքին սիրալիրությունը, և շատ ակնհայտ երևան է բերում իր հակահայկական տրամադրությունները և չի աշխատում գոնե դա քողարկել քաղաքավարության քողի տակ: Նա շատ հաճախ մոռանում է, որ կոմունիստ է և իր ազգային թրքական պատկերը ցայտուն

[252] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 1, g. 2, գ. 1, թ. 23:
[253] ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 1, g. 2, գ. 1, թ. 23:

կերպով հրապարակ է հանում: Անշուշտ, մյուսները դրանից ավելի կոմունիստ և ինտերնացիոնալ չեն, բայց իրենց մերժումները և հակակրանքն այդքան ցինիկ կերպով չեն արտահայտում»[254]:

Նախորդային ու հետագա առնչությունների ընթացքում Նարիմանովը միշտ էլ բացահայտորեն, «այդքան ցինիկ կերպով» դրսևորում էր իր հակահայկական տրամադրություններն ու նկրտումները, և չհաշված մի քանի բարեկիրթ մարդկանց ահա այսօրիական բացատրությունները, ոչ ոք չհամարձակվեց առերես խոսել այդ մասին, պաշտոնապես ցույց տալ, որ նա իրեն պահում է որպես մուսավաթական բռնապետ:

Ահա այսպիսի անհատականության և նմանների հետ էր Ալ. Մյասնիկյանի գործը: Այսպիսիներից և սրանց թիկունքը պինդ պահող Ստալինի՛ց պետք է փրկեր իր ազգի ոտնահարված իրավունքը: Իսկ նա այն միամտությունն ուներ, թե երբ Նարիմանովը բոլշևիկի տոմս է դրել գրպանը, արդեն մեկընդմիշտ դադարել է թափչիբաշևապես մտածելուց ու գործելուց:

Ի՞նչ եղավ հետագայում: Մյասնիկյանն ու իր կառավարությունը պաշտոնական որևէ արտահայտություն տվի՞ն Ղարաբաղի հարցի այդօրինակ բռնադատման դեմ ունեցած իրենց անհամաձայնությանն ու զայրույթին: Այո՛, հայտնի է, որ հենց որոշումից մեկ տասնօրյակ անց, հուլիսի 16-ին, Հայաստանի կոմունիստական Կենտկոմի բյուրոյի նիստում արձանագրվել է Կենտկոմի անհամաձայնությունը հայ ժողովրդի իրավունքը ոտնահարող որոշման հետ՝ այն համարելով անհավասարակշիռ և իր հիմքում սխալ[255]:

Ընդամենն այսքան բան:

Անդրերկրկոմի հուլիսի 5-ի հակաօրինական ու անտրամաբանական որոշումից հետո հայ-ադրբեջանական պաշտոնական հարաբերությունները ծայրահեղորեն լարված պիտի լինեին՝ ի դժբախտություն արցախահայության, որովհետև այն էր, որ մնացել էր իր կեր ադրբեջանական անհագուրդ թշնամանքի: «Լարվածքը» երևի թե մեղմ ու քիչ բնութագրական է այն օրերի մթնոլորտի համար, քանի որ պահպանված փաստաթղթերից (որոնց մի չնչին մասն են կցկտուր հրապարակել ադրբեջանցի ուսումնասիրողները)[256] պետք է ենթադրել, որ Հայաստանի ու Ադրբեջանի ղեկավարներն իրար ճանաչում էին իբրև քաղաքական ու դասակարգային թշնամիների: Քիչ առաջ տեսանք, որ Ալ. Մյասնիկյանն Անդրերկրկոմի հուլիսի 5-ի նիստի մասնակիցների մեջ տեսնում էր ազգամիջյան այնպիսի հակասությունների կրողներին, ինչպես, նրա կարծիքով, դաշնակցականները, մուսավաթականները և մենշևիկներն էին: Իսկ Նարիմանովը Ղարաբաղի ինքնավարության՝ այդ նվազագույն ու խղճուկ իրավունքի մասին որոշումն իրականացնողներին կոչում էր դաշնակցականներ, հայ-ադրբեջանական թշնամանքը բորբոքողներ[257]: Բայց չէ՞ որ այդ որոշումը 1921 թ. հուլիսի 5-ին թելադրված էր հենց իր՝ Նարիմանովի կողմից, և դրա օգտին ի՞նքն էր ձայն տվել: Մի՞թե ինքն այն ժամանակ դաշնակցական է եղել. . . Այո՛, նա այդ Է՛լ կլիներ, մի ուրիշ բան Է՛լ: Կլիներ՝ ինչ որ պահանջեր իր ազգի շահը, ավելի ճիշտ՝ իր ազգայնամոլական կուսակցությունը:

Իսկ հայ գործիչների ղեկավար Մյասնիկյանը ոչ միայն չէր կարողանում լինել ուրիշ տեսակ, այլև հավասարակշռությունն էր կորցնում՝ տեսնելով ուրիշի հանկարծական մակաշփոթությունը:

Եվ այս մթնոլորտում չի կարելի չտեսնել հայ գործիչների, եռանդուն, խելոք ու ձեռներեց մի ամբողջ սերնդի ողբերգությունը:

---

[254] ՀՊՊԿԱ, Ֆ. 200, g. 1, գ. 4, թ. 17:
[255] ՄԼԻ ՀԲԱ, ֆ. 1, g. 1, գ. 40, թ. 29 (տե՛ս նաև Լ. Խուրշուդյանի գիրքը, էջ 42):
[256] «Փաստաթղթեր», էջ 92—153:
[257] «Ադերբայջան» թերթ, 1989, նոյեմբ. 5:

Ես այս սերնդի մեջ չեմ տեսնում Միկոյանի անունը. քա՛վ լիցի, նա խելոք ու ձեռներեց էր ի՛ր համար և մեկ էլ նրա՛, որին պետք է ծառայեր, իր ազգի հավերժական թշնամի թուրքը լիներ թե ստալինյան բռնատիրությունը: Առավել ևս այդ սերնդի մեջ չէին վերևներից գործուղված Աթարբեկովն ու նրա տեղական տարբերակները (Ավիսը, Կասյանովը և ուրիշներ), որոնք չեղած տեղն էլ խառնարաններ պիտի ստեղծեին և նրանցում խեղդեին ժողովրդի կամքն ու երազները:

Ես այդ ողբերգական սերնդի մեջ տեսնում եմ Ալեքսանդր Մյասնիկյանին, Ալեքսանդր Բեկզադյանին, ինձ հետաքրքրող հիմնահարցում Լևոն Միրզոյանին, Սուրեն Շադունցին և բոլոր նրանց, ովքեր մարդկայնորեն տառապում էին իրենց ազգի փրկության համար, պատրաստ էին գնալու ամենամեծ զոհաբերությունների, սակայն միջավայրն անմարդկային էր, ամենուր իրենց դեմ կանգնած էին խարդավանքով ու ստոր գործարքներով ստեղծված պատնեշներ, և. . . նրանց ամեն մի փորձ, նպատակին ուղղված ամեն մի քայլ դեմ էր առնում այդ անանցանելի պատնեշներին. . .

Պատահել է, մենք մեղադրել ենք Մյասնիկյանին. այդ ինչպե՞ս պատահեց, որ Նարիմանովն ընդվզեց հուլիսի 4-ին ընդունված որոշման դեմ, նախ այդ բեկանեց և ապա մի գիշերվա ընթացքում Անդրերկրկոմն այնպես շուռ տվեց, որ հաջորդ առավոտյան իսկ նույն մարդիկ հավաքվեցին ու ընդունեցին ճիշտ հակառակ, անարդարորեն հակահայկական որոշում: Ինքը՝ Մյասնիկյանը չէ՞ր կարող ընդվզել, պահանջել, որ հարցը փոխադրվի կենտրոն, քննվի և արդար լուծում ստանա այնտեղ:

Մեզանից ոչ ոք գոնե ինքն իրեն հարց չի տալիս՝ որտեղի՞ց իմացանք, թե չի ընդվզել: Այն անբարոյական ժողովի արձանագրությունի՞ց: Բայց չէ՞ որ այնտեղ չի էլ նշված, թե ինչպե՞ս պատահեց, որ նախընթացին Արցախի վրա Հայաստանի տիրակալությունը և առհասարակ հայ բնակչության ինքնորոշման իրավունքը մինչև վերջ պաշտպանած Օրջոնիկիձեն ու Կիրովը հանկարծ շուռ եկան և համաձայնեցին, որ ընդունվի իրենց կամքին հակառակ, բացահայտորեն սուտ ու անարդար մի որոշում: Մյասնիկյանի ուշացած բացատրությունի՞ց, որ ասում է՝ այնտեղ, Թիֆլիսյան այն դժոխային խառնաժողովում ասես իրար դեմ նստած էին ոչ թե կոմունիստներ, որոնք պարտավոր էին լինել արդար, ազնիվ, մարդասեր, ժողովրդական բաղձանքներ իրականացնողներ, այլ Ահարոնյանը, Թոփչիբաշևն ու Չխենկելին, որոնք իրար դեմ կռիվ ունեին միայն ու կռվով, ազգերի արյան գնով փախցնեին պատառներ[258]: Եվ նկատի առնելով, որ հայտնի են Ալեքսանդր Բեկզադյանի ընդվզումները ռուս-թուրքական մոսկովյան բանակցություններին (1921 թ. մարտ), դրան հաջորդած թիֆլիսյան խորհրդակցություններին (1921-ի ամառ), որոնց նպատակն էր որոշել երեք հանրապետությունների սահմանները, մանավանդ՝ նվազագույն չափով հարգել Հայաստանի պատմական իրավունքները և նրան թողնել գոնե Արցախը՝ Նախիջևանն այնպես անգթորեն պոկելուց հետո... Հարց տանք՝ ի՞նչ շահեցին այդ ընդվզումներից: Լենինի արհամարհոտ կշտամբա՞նքը, Ստալինի ահավոր թշնամա՞նքը, հարևանների խարդավա՞նքը՝ թակարդնե՞րը՝ լարված մեր ազգի անցնելիք ճանապարհի բոլոր կեռմաններում:

---

[258] Ալ. Մյասնիկյանի՝ վերջը մեջբերված խոսքին հետևում է միամտության չափ անկեղծ մի խոստովանություն: Ասում է՝ Արցախի հարցը քննիս ադրբեջանական կողմն սպառնաց՝ դե՛, որ դուք Ղարաբաղ եք պահանջում, մենք էլ մեզ նավթ չենք բաց թողնի:
Ես այս առթիվ գրել եմ, թե, ուրեմն, Արցախը փոխանակվել է նավթով:
Այժմ հակված եմ կարծելու, որ այդ մեղադրանքը ևս միամտություն է, որովհետև այնտեղ էլ այնպես չէ, որ լուծվել է Արցախի հարցը, և Մյասնիկյանի խոսքը վերաբերում է միայն հակառակորդի ստոր մանրակրկտությանը:
Մյասնիկյանը ներկայացնում էր ահա այս մարդու կերպարը և գլխավորն էր ժամանակի հայ դժբախտ, անսահմանորեն ողբերգական այն սերնդի, որն իրավունք չպիտի ունենար ոչ միայն պայքարելու, այլև ապրելու ստեղծված հակաժողովրդական, հակամարդկային հասարակարգում:
Մյասնիկյանը խելոք մարդ էր և պարտավոր էր հասկանալ, թե ի՞նչ աղետալից ճակատագրի էր դատապարտվում Արցախը: Սակայն նա այնքան ազնիվ էր, որ չէր կարող պատկերացնել, թե ադրբեջանական կողմն ի՞նչ դաժանությամբ ու ստոր միջոցներով էր հյուսելու այդ ճակատագիրը:
Եվ ահա գալիս էր այդ ապերախտ մարդկանց, այդ ողբերգական ճակատագրերի գործելու ժամանակը:

Ողբերգական է, չէ՞. սկսվում էր մի պատմաշրջան, որի շարժիչները լինելու էին դաժան հաշիվները, կեղծիքն ու քսությունը, կաշառքն ու խարդավանքը... Եվ այդ պատմաշրջանի սայլին լծված հայ մարդիկ մոլորություն ունեին կարծելու, թե իրենք մտնում են ժողովուրդների համերաշխության, ճշմարիտ համակեցության ու ազնիվ բարքերի թագավորություն:

Ադրբեջանական կողմը հասել էր իր նպատակին. Անդրերկրկոմի որոշումով նվաճել էր Լեռնային Ղարաբաղի տարածքը՝ այդտեղի բնակչության 94,6 տոկոսը կազմող հայությանն ինքնավարություն տալու պայմանով: Սակայն ամեն ինչից երևում էր, որ այդ ինքնավարությունը չի տրվելու:

Ի՞նչ պիտի անեին հայ գործիչները: Հիմա էլ պիտի պայքարեին, որպեսզի արցախահայությունն արժանանա գոնե ինքնավարության՞:

Այո՛, ցավոք, նրանք ուրիշ ճար չունեին:

Եվ ադրբեջանական ղեկավարության մեջ այդ ժամանակ իր բավական նշանակալից կշիռն ունեցող Լևոն Միրզոյանը գյուղեգյուղ ման էր գալիս, զանազան գրություններ ու համախոսականներ էր ստեղծում, որպեսզի մարզն առանձնացվի իբրև ինքնուրույն վարչական միավոր:

Միրզոյանը գյուղերում եղել էր 1921-ի օգոստոսի սկզբներին, Անդրերկրկոմի որոշումից մեկ ամիս հետո: Եվ ահա օգոստոսի 8-ին, Ղարաբաղից վերադառնալուն պես, զեկույց է ներկայացնում կուսակցության Ադրբ. Կենտկոմ (պատճենը Անդրերկրկոմ)՝ պահանջելով շուտափույթ կերպով իրականացնել միջոցառումներ մարզի դրությունը կարգավորելու համար: Այդ միջոցառումների մեջ կարևորագույն տեղն, իհարկե, գրավում էր ինքնավարության հարցը: Առաջարկում էր «**Ամբողջ** Լեռնային Ղարաբաղն առանձնացնել որպես ինքնուրույն վարչական միավոր՝ ենթակա կենտրոնին՝ Ադրբ. Ժողկոմխորհին ու Կենտգործկոմին, իսկ կուսակցական գծով՝ Ադրբ. ԿԿ-ին[259] (ընդգծումն իմն է — Բ. Ու.):

Հարց կարող է ծագել՝ ի՞նչ կարիք կար նման առաջարկությամբ դիմելու Ադրբեջանի կառավարությանը, մանավանդ՝ դիմումի պատճենն էլ ուղարկելու Անդրերկրկոմ՝ այն ղեկավար մարմինը, որն ինքը երկու ամիս առաջ որոշում էր ընդունել ճիշտ այդպիսի բովանդակությամբ: Որպեսզի նրա ընդունած որոշման մեջ, որ վերաբերում էր Լեռնային Ղարաբաղին («Լեռնային Ղարաբաղը թողնել Ադրբեջանի սահմաններում...»), ուղղում մտցնի, դարձնի «ամբողջ Լեռնային Ղարաբաղը» և շեշտի, որ այն պետք է «առանձնացնել որպես ինքնուրույն վարչական միավոր»: Գուցե դա ևս նշանակություն ունեցող հանգամանք է եղել այն ժամանակ: Թերևս ո՛չ երկրորդական հանգամանք: Սակայն դիմումի բուն պատճառը և ամենահիմնականը բացվում է մի այլ փաստաթղթով, որ ստեղծվել է դիմումից շուրջ մեկ ու կես ամիս անց, և. թ. սեպտեմբերի 26-ին: Այդ օրը Ադր. Կ(բ)Կ Կազմբյուրոն ու Քաղբյուրոն հավաքվել էին նիստի և որոշեցին «խնդրել Կովկ. բյուրոյին՝ վերանայելու իր որոշումը Լեռնային Ղարաբաղն առանձնացնելու մասին. մինչ այդ (երևի՝ մինչև այդպիսի որոշում ընդունելը — Բ. Ու.) այսուհետ ինքնավարություն չհայտարարել»[260]:

Այս որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ (կողմ ձայն են տվել 9 հոգուց յոթը): Դեմ են քվեարկել միայն Նարիմանովն ու Բունիաթզադեն, որոնք, իբր, առաջարկել են ամենակարճ ժամանակում անցկացնել Կովկ. բյուրոյի որոշումը Լեռնային Ղարաբաղն իբրև ինքնավար միավոր առանձնացնելու մասին:

Սակայն, ինչպես հայտնի է, նման պարագաներում գործի է դրվում ձայների մեծամասնությամբ ընդունված որոշումը, և հասկանալի է, թե ի՛նչ որոշում-առաջարկություն պետք է գնար Անդրերկրկոմ՝ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի հետագա ընթացքի համար:

---

[259] «Փաստաթղթեր», էջ 96:
[260] «Փաստաթղթեր», էջ 97:

Այնուամենայնիվ, Նարիմանովն ի՞նչ նկատառումով էր դեմ քվեարկել այն որոշմանը, որի էությունը իր սրտից էր բխում և իրականացման համար, ինչպես հետո կտեսնենք, պայքարելու էր ունեցած բոլոր հնարավորություններով ու ամեն տեսակ միջոցներով: Այս հարցի պատասխանն էլ մեկն է ու միանգամայն հասկանալի. որոշումն Անդրերկրկոմում չէր կարող չառաջացնել հուլիսի 5-ի որոշումն ընդունողների բողոքն ու վրդովմունքը: Կասեին՝ Նարիմանով-Նարիմանով, քո առաջարկությամբ ու համառ պնդումով այդ Լեռնային Ղարաբաղը պոկեցինք Հայաստանից և քեզ տվինք՝ նրա լայն ինքնավարությունն ապահովելու պայմանով: Հիմա այդ ի՞նչ պատահեց, որ հենց քո կառավարությունն էլ որոշումը բեկում էդ քո նախաձեռնությամբ ընդունված մեր վճռի դեմ:

Նա պիտի չմեղանար, պիտի երդում-հավատ աներ, թե ինքը հիմա էլ նույն կարծիքին է և այն պաշտպանում է ատամներով: Բայց, ահա՛, կանգնել են հանրապետության տերերը (համենայն դեպս՝ ինչից յոթը, նրանց հետ էլ Սերգեյ Կիրովը) և պահանջում են Լեռնային Ղարաբաղը չառանձնացնել հանրապետությունից ու չօժտել ոչ մի ինքնավարությամբ:

Անդրերկրկոմն ինչպե՞ս ընդունեց այս որոշումը: Արժանի վերաբերմունք ցո՛ւյց տվեց: Դժվար թե նման դեպքում այդ խոտոր փաստաթուղթը կգնահատվեր որպես քաղաքական խաղ ու երկերեսանություն, և ասպարեզ կքաշվեր հուլիսի 4-ի վճիռը, կհարգվեր երկրամասի հայության ազգային ինքնորոշման իրավունքը, գոնե ետին թվով հաղթանակած կլիներ արդարությունը:

Հնարավոր է, որ վարագույրի ետև վեճեր ու բախումներ են եղել: Ադրբեջանական կողմը պահանջած կլիներ, որ ուշադրության առնվի իր այդ ինքնավարության խնդիրը, իսկ նվազագույնը՝ քաշքշելու, ձգձգելու, որպեսզի ժամանակը, հանգամանքները, երկրամասում գոյացող բարդացումները անհնար դարձնեն մարզին ինքնավարություն շնորհելու գործը: Չէ՞ որ հակաադրբեջանական ժողովրդական ընդվզումներ էին բորբոքվել Դիզակում, Ջրաբերդում ու Վարանդայում և, դրանք օգտագործելով, հնարավոր պիտի լիներ Լեռնային Ղարաբաղն այնպես քրքրել, որպեսզի այն ոտքի կանգնելու և ինքնավարություն պահանջելու ոչ մի հնար այլևս չունենար: Պահպանվել են այն որոշումները, որոնցով միլիցիական նոր ուժեր են ուղարկվել Ղարաբաղ, գործի է դրվել արնախում Բաղիրովի իր բանդաներով, հրահանգվել է՝ «անխնա գնդակահարել» զանգվածային ընդվզումների մասնակիցներին[261]: Ադրբեջանական շովինիզմի դեմ բարձրացած դժգոհությունն ու գանգատը բնութագրվել են սրբապղծություն, և ընդունվել է ղեկավար այսպիսի հրաման՝ «Ազգայնական հոգի ու ազգայնական տրամադրություններ ունեցող բոլոր աշխատակիցները պետք է անհետաձգելիորեն դեն շպրտվեն և փոխարինվեն ինտերնացիոնալիստ աշխատակիցներով»[262]:

«Ազգայնական» տվյալ դեպքում նշանակում էր Արցախի հայ, իսկ «ինտերնացիոնալիստ»՝ անպայման ադրբեջանցի:

Այլ աշխատանքի անցնելու քողի տակ մարզից հեռացրել էին Սաքո Համբարձումյանին. և Շուշվա գավառային կոմիտեի քարտուղար էր դարձել մի ոմն Ադիգյոզալով: Գավառների աչքաբաց հայ ղեկավարներին հայտարարել էին ազգայնամոլներ, ոչնչացրել կամ նետել բանտերը: Ներքին գործերի կոմիսար Բաղիրովին էին հանձնել տեղական հեղինակությունների հաշիվները մաքրելու արյունոտ գործը, և կարճ ժամանակում այս արնախումի ձեռքով մարզի հայությունը դրվել էր Բաքվից ու ադրբեջանական այլ շրջաններից բերված մահմեդականների ենթակայության տակ:

Այս պայմաններում էր, որ 1921 թ. հոկտեմբերի 21-ին հրավիրեցին Ղարաբաղի, այսպես կոչված, «պատասխանատու աշխատողների» (ճիշտը՝ Նարիմանովի ու Բաղիրովի ադրբեջանցի դրածոների) կոնֆերանս և ջանացին որոշել մարզի հետագա քաղաքական կյանքի կերպարանքը: Եվ ինչպես որ պետք էր սպասել, ընդունվեց այսպիսի որոշում. «Ղարաբաղի աշխատողների կոնֆերանսն աննպատակահարմար է համարում Լեռնային

---

[261] «Փաստաթղթեր», էջ 98, 99:
[262] Անդ, էջ 100:

Ղարաբաղի բաժանումն իբրև առանձին ինքնավար մարզի և գտնում է, որ բոլոր միջոցառումները, որոնք նշվում են վերը՝ (կոնֆերանսի) բանաձևում, հենց հանդիսանում են ղարաբաղյան հարցի լուծում»[263]:

Իսկ վերը՝ բանաձևում, ի՞նչ միջոցառումներ էին նշված: Ա՛յ, սա՛ որ շատ հետաքրքիր է, ընդունված բանաձևի 12 կետերից առաջին հինգով նշվում են, իբր թե, բանդիտիզմի, իսկ իրականում ժողովրդական ընդվզման մասնակիցների դեմ գործադրվելիք միջոցառումների, որոնցում առաջին ու հիմնական տեղն են բռնում «անխնա գնդակահարությունները»: Իսկ ինչո՞ւ միայն մասնակիցները: Երրորդ կետով, օրինակ, ասված է, որ «Ավազակներին (կարդա՝ ապստամբներին) թաքցնող գյուղերը դաժանորեն պատժվում են և պետք է տուգանվեն ոչ պակաս քան տասը միլիոն ռուբլով»[264]:

Բայց ո՞վ պետք է որոշեր, թե թաքցնում են: Բաղիրովի հրոսակնե՞րը: Ուրեմն նրանք ազատ էին հայտարարելու, թե հայկական բոլոր գյուղերն են թաքցնում իրենց ապստամբներին:

Վեցերորդ կետն այն մասին է, որ միլիցիան ունենա լավագույն սպասարկում, քանի որ բաղկացած է լինելու «լավագույն ինտերնացիոնալ կադրերից»[265]: Հասկանալի է, իհարկե, որ հայկական Լեռնային Ղարաբաղում «ինտերնացիոնալ կադր» նշանակում էր ադրբեջանցի: Այդ պատճառով էլ 7-րդ կետը հրահանգում էր. «Ազգայնական հոգի ու ազգայնական տրամադրություններ ունեցող բոլոր տրամադրությունները պետք է անհետաձգելիորեն դուրս շպրտվեն և փոխարինվեն ինտերնացիոնալիստ (այսինքն՝ ադրբեջանցի) աշխատակիցներով»[266]:

Նույնն էր պահանջում նաև 8-րդ կետը. «Այս կամ այն պաշտոնին աշխատակիցներ նշանակելիս անհրաժեշտ է ելնել ոչ թե ազգային ծագման հատկանիշից, այլ նրա գործնականությունից, ընդունակությունից ու ազնվությունից...»: Իհարկե, բայց մի՞թե Լեռնային Ղարաբաղում այդպիսիք չկային, և դրա համար անհրաժեշտ էր «ինտերնացիոնալացնել» գավառների ու տեղամասերի աշխատակիցների կազմը[267]:

Հաջորդ երեք կետերը ևս այսօրինակ միջոցառումների են նվիրված: Իսկ վերջինը (12-րդ) գավառային գործադիր կոմիտեների խնդիրն է համարում «Կազմակերպել կապը կենտրոնի և Եվլախի հետ»[268]:

Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու փոխարեն կապում են Եվլախի հետ:

Ուրեմն կոնֆերանսի կարծիքով՝ ահա այս միջոցառումներն են, որ իրենց ամբողջության մեջ ներկայացնում են «ղարաբաղյան հարցի լուծումը»: Բավական է դրանք իրականացվեն, որպեսզի «ղարաբաղյան հարց» այլևս գոյություն չունենա:

Սա ընդունվել էր կոնֆերանսի անունից: Բայց ահա որոշ ժամանակ անց, դեկտեմբերի 10-ին Ադր. Կ(բ) Կենտկոմի անունից էլ հայտարարվեց, թե «Կոնֆերանսի կողմից հաստատվել է, որ ոչ մի առանձնահատուկ, այսպես կոչված «Ղարաբաղյան հարց» էլ գոյություն չունի, որ այն ծագում է Ղարաբաղում կուսակցական ու խորհրդային աշխատանքի թուլությունից, ամուր, ուղիղ ու հետևողական քաղաքականության բացակայությունից, և որ այդ հարցը կարող է լուծվել ոչ թե ինչ-որ ծայրահեղ ու բարդ ռեֆորմներով, այլ միայն Ղարաբաղում ծավալված աշխատանքով»[269]:

Մենք տեսանք, թե ադրբեջանական կողմն ինչպես էր պատկերացնում ծավալվելիք այդ աշխատանքը, որին և լծվել էր բոլոր ուժերով:

---

[263] Անդ, էջ 101:
[264] «Փաստաթղթեր», էջ 99:
[265] Անդ, էջ 100:
[266] Անդ:
[267] Անդ:
[268] Անդ, էջ 101:
[269] Անդ, էջ 103:

Սակայն անդրդվելի էր Արցախը:

Լեռնային երկրամասի հայության շահերի պաշտպանությամբ հանդես էր գալիս նաև Հայաստանի ղեկավարությունը, որն ստեղծված պայմաններում մարզն իր հանրապետության կազմի մեջ մտցնելը համարելով անհնար, պետք է ջանար գոնե ազգային ապահովություն ու խաղաղություն հաստատել նրա համար:

Արցախի հիմնահարցն իր ամբողջ բարդությամբ կանգնած էր նաև 1922 թ. փետրվարին Թիֆլիսում տեղի ունեցած Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարի առաջ: Երբ Սերգո Օրջոնիկիձեն համագումարին հաշվետվություն էր տալիս կուսակցության Կենտկոմի Կովկ. բյուրոյի անունից փորձեց ազգամիջյան հարցերի կարգավորման բնագավառում ձեռք բերած հաջողությունները նշել և այդ շարքում կարևոր տեղ հատկացրեց այն աշխատանքին, որ իբր իրականացվել էր Լեռնային Ղարաբաղում: «Ճիշտ է, — ասել է նա, — Ադրբեջանում մենք երկար զբաղվեցինք ղարաբաղյան հարցով, սակայն վերջ ի վերջո որոշեցինք ղարաբաղյան բնակչությանը՝ Լեռնային Ղարաբաղի հայերին, տալ ինքնավարություն Ադրբեջանի խորհրդային հանրապետության սահմաններում: Գործնականում այդ ինքնավարության կենսագործումը հանձնարարվել էր Ադր. ԿԿ Կենտկոմին: Ես խոսեցի ընկ. Կիրովի հետ. ինչո՞ւ դա դեռևս չի արվել, և նա նշեց, թե հայերն ու մուսուլմանները համաձայնել են (այն հարցում), որ այդ ինքնավարության անհրաժեշտությունը չկա: Ես չգիտեմ՝ դա այդպե՞ս է թե մի ուրիշ կերպ, ամեն պարագայի, այդ հարցն այնպես է լուծված, որ բնակչությանը հնարավորություն տրվի վճռելու իր խնդիրը»:

Փաստն այն է, որ այնտեղ ոչ մի բախում, ոչ մի տարաձայնություն չկա, և դա ցույց է տալիս, թե ազգային հարցի այդ լուծումը, որ մենք կատարել էինք սկզբից իսկ, ճիշտ է: Ոչ մի ծայրագավառում ազգային հարցն այնպես հաջող չի լուծվել, ինչպես մեզանում»[270]:

Օրջոնիկիձեն լուսնից ընկած մարդ չէր, տեղյակ էր նախորդ տարիներին արցախահայության մղած անդադրում ազատագրական պայքարին և հարհավիտյան մայր Հայաստանի հետ լինելու նրա ցանկությանն ու վճռին: Եվ դրանից հետո այդ նույն հայության մասին ասել են՝ նա համաձայնել է, որ այդ ինքնավարությունն իրեն չտան: Պատահակա՞ն էր, որ Օրջոնիկիձեն չէր հավատում նման հայտարարությանը («չգիտեմ՝ դա այդպե՞ս է, թե մի այլ կերպ...»), թեպետ այն ասվել է մի այնպիսի մարդու բերանով, ինչպիսին Կիրովն էր:

Հավանաբար այս հարցն իր խմորումն էր տվել համագումարում: Սղագրության ժլատ տվյալներն անգամ բերում են այդ եզրակացության: Օրինակ, էլ ինչպե՞ս կարելի է բացատրել ադրբեջանական կազմակերպության ներկայացուցիչ Կուլիևի բացահայտ հարձակումը Կովկ. բյուրոյի՝ հենց տվյալ հարցում ցուցաբերած քաղաքականության դեմ: «Կովկ. բյուրոն ուներ որոշակի սիստեմ, — գանգատվում էր Կուլիևը: — Նա մտածում էր, թե յուրաքանչյուր գավառ, ուր ապրում է որևէ ազգություն իր լեզվով, պետք է ինքնավարություն ունենա: Ադրբեջանական Կենտկոմն էլ, որ Ղարաբաղի հարցի պարզաբանման համար հանձնաժողով էր ընտրել, շատ ճիշտ վարվեց, երբ ասում էր՝ Ղարաբաղին պետք չէ՛ ոչ մի ինքնավարություն: Այդ մոտեցումը ճիշտ էր և այդպես պետք էր մոտենալ, որպեսզի հաստատվի իսկական խաղաղություն և՛ Ղարաբաղում, և՛ ամբողջ Անդրկովկասում»[271]:

Ավելի պարզ ու կտրուկ դժվար է պատկերացնել, որպեսզի հասկանալի դառնա, թե ինչպես Կիրովը թյուրիմացության մեջ է գցել Անդրերկրկոմի բյուրոյին. ո՛չ թե «հայերն ու մուսուլմանները համաձայնել են, որ այդ ինքնավարության անհրաժեշտությունը չկա», այլ «Ադրբեջանական Կենտկոմը շատ ճիշտ վարվեց (sic!), երբ ասում էր՝ Ղարաբաղին պետք չէ ոչ մի ինքնավարություն»:

---

[270] Первый Закавказский съезд коммунистических организаций (Стенографический отчет), Тифлис, 1922, стр. 41—42.

[271] «Первый Закавказский съезд...», էջ 80:

Այս անսանձ կամայականությունը չէր կարող հանգիստ թողնել համագումարի հայ պատվիրակությանը և առհասարակ մասնակից հայերին: Նույնիսկ Ադրբեջանի պատվիրակության անդամ Լևոն Միրզոյանի ելույթի կցկտուր սղագրությունից էլ երևում է, որ նա վրդովված է եղել: Օրջոնիկիձեին կուսակցության ազգային քաղաքականության նվաճում էր համարում Արցախի հարցի այդօրինակ ոտնահարումը՝ այն համեմատության մեջ դնելով Ռուսաստանի ուրիշ ծայրագավառներում՝ Բաշկիրիայում, Թուրքմենստանում, Կիրգիզիայում տիրող վիճակի հետ («Ոչ մի ծայրագավառում ազգային հարցն այնպես հաջող չի լուծվել, ինչպես մեզանում»)[272]: Իսկ Միրզոյանը «էական սխալ» է համարում նման համեմատությունը, որովհետև տարբեր են ծայրագավառների մակարդակն ու պահանջմունքները, և «այս հարցում չի կարելի ինքն իրեն կերակրել պատրանքներով»[273]:

Ելույթ է ունեցել նաև Հայաստանի ԿԿ Կենտկոմի քարտուղար Սարգիս Լուկաշին-Սրապիոնյանը՝ հօդս ցնդեցնելով այն պատրանքը, թե, իբր, Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հարցը վերջնականապես լուծված (Կուլիևի «հաջողական» հայտարարության համաձայն՝ թաղված) պիտի համարել: «Այստեղ խոսք եղավ Ղարաբաղի հարցի մասին, — ասել է նա: — Այդ Ղարաբաղի հարցը մեկն է այն հարցերից, որոնց մասին չի կարելի չխոսել և որոնք անհնար է լուծել մի քանի ժամվա ընթացքում, թեկուզ և կոմունիստական ուղղությամբ:

Մենք մինչև այժմ չենք լուծել ազգային հարցը, բայց մենք կոչված ենք լուծելու այն»[274], — վճռաբար հայտարարել է Լուկաշինը՝ անպայման նկատի առնելով այն համառ պայքարը, որ պահանջվելու էր Արցախի հիմնահարցի գոնե թերատ լուծման համար:

Սղագրության հապճեպ ակնարկներից դժվար է պատկերացնել, թե Ի՞նչ արծարծումներ է ունեցել Արցախի հարցը, որի «մասին չի կարելի չխոսել», և որն «անհնար է լուծել մի քանի ժամվա ընթացքում»: Սակայն հաշվի առնելով, որ հենց այդ օրերից սկսած շահագրգիռ մարմինները գործնականորեն զբաղվում էին նրանով, կարելի է կարծել, որ սառույցը կոտրված էր արդեն: Ն. թ. փետրվարի 5-ին, օրինակ, Ադր. կուս. Կենտկոմը Լեռնային Ղարաբաղում աշխատելու է ուղարկում Արմենակ Կարակոզովին՝ իբրև Ադր. Հեղկոմի ներկայացուցիչ:

Կարակոզովը Բաքվի բոլշևիկյան կազմակերպության շարքերում աճած կադրերից էր, ադրբեջանական կողմին բավական ծառայություններ մատուցած ու վստահելի: Մարդ էր գնում իբրև Ադր. Հեղկոմի (Նարիմանովի) համար շատ ձեռնտու մի տարբերակ: Քի՞չ բան էր, որ այդ վստահելին իբրև հայ էլ ձևականորեն ներկայացնում էր նաև Հայաստանի Հեղկոմը:

Կարելի էր հուսալ, թե նոր այդպիսի ղեկավարը պիտի կարողանար գլխավորել «ղարաբաղյան հարցի» աստիճանական մարման ու վերջնական վախճանի գործը:

Այս տխուր վախճանը կանխելու համար Հայաստանի ղեկավարությանը ոչինչ չէր մնում, քան դիմել Անդրերկրկոմ և հիշեցնել 1921-ի հուլիսի 5-ի որոշումը: Այսպես. 1922 թ. հունիսի 5-ին Հայաստանի ԿԿ Կենտկոմի պլենումն ընդունեց հետևյալ որոշումը. «Քարտուղարությանը հանձնարարել դիմելու Անդրերկրկոմ՝ պատճառաբանված խնդրով՝ իրականացնելու Կովկասյան բյուրոյի որոշումը Լեռնային Ղարաբաղին Ադրբեջանի հովանավորության տակ ինքնավարություն տալու մասին»[275]:

Ուրեմն, այսպես՝ ճարահատյալ: Առաջ պայքարում էին մարզի հայության ազգային ինքնորոշման իրավունքի, մարդկային հասարակ ու սովորական տրամաբանության հաղթանակի համար: Իսկ հիմա՝ պահնջե՛ք՝ «Ադրբեջանի հովանավորության տակ», բայց գոնե ինքնավարության իրավունքո՛վ:

---

[272] Անդ, էջ 42:
[273] Անդ, էջ 82:
[274] Անդ, էջ 85:
[275] ՄԼԻ ՀԲԱ, ֆ. 1, g. 2, գ. 3, թ. 6:

Եվ միայն Ն. թ. հոկտեմբերի 27-ին Անդրերկրկոմի նախագահությունը համարձակություն է ստանում Ադրբեջանի ԿԿ Կենտկոմին հանձնարարելու, որ այն իրականացնի Անդրերկրկոմի 1921 թ. հուլիսի 5-ի որոշումը Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տալու մասին: Նախագահության հենց այս նիստը միաժամանակ Ս. Կարակոզովին նշանակում է Ղարաբաղի գործկոմի նախագահ և Սուրեն Շադունցին էլ երաշխավորում մարզում պատասխանատու աշխատանքի[276]:

Ճիշտ է, այս որոշումից անմիջապես հետո, 1922 թ. հոկտ. 30-ին, Ադր. ԿԿ Կենտկոմի նախագահության որոշում էր ընդունվել Ղարաբաղի ինքնավարության մշակումը նախապատրաստող հանձնաժողով կազմելու մասին[277], և մեկ ամիս հետո նորից անդրադարձել էին այդ հանձնաժողովի հարցին[278]: Իսկ դեկտեմբերի 15-ին ընդունվել էր երրորդ փաստաթուղթը Անդրերկրկոմի որոշումն իրականացնելու մասին[279]: Սակայն հետագա ամիսներին, հարցը մեկընդմիշտ լուծելու փոխարեն, Ադրբեջանի ղեկավարությունը Երևան ու Թիֆլիս ուղարկած թղթերով միայն ջուր էր ծեծում՝ պահանջելով հայ կադրեր, զանազան միջնորդություններ ու կիսատ-պռատ միջամտություններ... Եվ միայն 1923-ի հունիսի 27-ին Անդրերկրկոմը երկու անգամ անդրադարձավ Ղարաբաղի ինքնավարության խնդրին, երկրորդ անգամ արդեն վճռաբար պահանջելով «մեկ ամսվա ժամկետում Լեռնային Ղարաբաղն անջատել իբրև ինքնավար մարզ»[280]:

Ի՞նչ էր պատահել, ինչպե՞ս եղավ, որ Անդրերկրկոմը հանկարծ այսքան համարձակ ու հետևողական դարձավ և երկու տարի առաջ ընդունած իր որոշումը կատարելու համար հիմա տալիս էր ընդամենը մեկ ամիս ժամանակ: Եվ, ո՛վ զարմանք, Ադրբեջանի ղեկավարությունն էլ, ոչ թե մեկ ամսվա ժամկետում, այլ ուղիղ երեք օր անց, հուլիսի 1-ին, իր Կենտգործկոմին հանձնարարում էր «հռչակել Լեռնային ինքնավարությունը»[281]:

Ղարաբաղի հարցը հապճեպ լուծելու համարձակություն ու վճռականություն էր տվել Նարիման Նարիմանովի բացակայությունը: Հայտնի է, որ Ադրբեջանի ամենակարող ղեկավարին 1922-ի վերջին Մոսկվա էին տարել, և նա այնտեղ էր աշխատում իբրև Միության Կենտգործկոմի նախագահներից մեկը:

Այստեղ չի կարելի երկու խոսք չասել ժամանակի մի այլ հայ գործչի մասին, որի դերն իր հայրենի Արցախի ճակատագրի համար նույնքան ողբերգական էր, որքան Մյասնիկյանինն ու Միրզոյանինը: Դա Սուրեն Շադունցն էր, որն իբրև արցախցի Անդրերկրկոմն էր ներկայացնում մարզում և այս ժամանակ էլ գլխավորում էր ինքնավարության հարցերը լուծող, այսպես կոչված, Լեռնային Ղարաբաղի կոմիտեն: Այս պաշտոնում նա գործում էր Կարակոզովից, Մանուցյանից ու մյուսներից անկախ՝ ջանալով պաշտպանել մարզի հայ աշխատավորության օրինական շահերը:

Հետաքրքիր է նրա մի հոդվածը, որը գրվել է երևի մինչև Արցախում գործի անցնելը և տպագրվել է 1922-ի աշնանը: Այնտեղ առանց խորանալու իրերի պատճառական կապերի մեջ, հեղեղուկ ու սայթաքուն տպավորություններ են հաղորդվում Արցախի անցյալ ու ներկա վիճակների մասին, արվում հայտարարություններ, որոնք շատ պիտի դուր եկած լինեին նարիմանովականներին: Քի՞չ բան էր հենց միայն մարզի ողբերգության հիմնական պատճառը, որ նա տեսնում էր դաշնակցական իշխանության մեջ, կամ այն հայտարարությունը, թե ադրբեջանական ղեկավարությունը քայլեր է կատարում մարզի աշխատավորության հոգսերը վերացնելու համար[282]:

---

[276] «Փաստաթղթեր», էջ 127:
[277] «Փաստաթղթեր», էջ 128:
[278] Անդ, էջ 129:
[279] Անդ, էջ 132:
[280] Անդ, էջ 149:
[281] Անդ, էջ 148:
[282] Տե՛ս «Բանվորական տարազ», 1922, դեկտ. 21:

Սակայն մարդը հասնում է Արցախ, ծանոթանում երկրամասի վիճակին, ժողովրդի ցավերին ու ձգտումներին, մանավանդ ադրբեջանական ղեկավարության գաղութակալական կամայականություններն է քննում, և նրա հոգին ծառս է լինում դժոխային վիճակի դեմ: Ինչպես թե Լեռնային Ղարաբաղը պետք է հանձնել Ադրբեջանին... Եվ ի՞նչ տարբերություն, որ հիմա արդեն ոչ թե մուսավաթական, այլ խորհրդային-բոլշևիկյան Ադրբեջան է: Չէ՞ որ մարզի հայության հանդեպ վարած քաղաքականությամբ դրանք ոչնչով չեն տարբերվում իրարից:

Բայց ի՞նչ անել, երբ Անդրերկրկոմն արդեն ուներ իր որոշումը, և այն բեկանելն անհնար է, ինչ միջոցների էլ դիմես:

Շաղունցը չէր կարող չիմանալ, թե ինչպիսի սիրախաղերի էին լծված Ռուսաստանը, Թուրքիան ու Ադրբեջանը: Չէր կարող տեղյակ չլինել, թե Մոսկվայում ի՞նչ լրբենի գործարք է կատարվել, երբ հարցը վերաբերում էր Նախիջևանին, այդ հնավուրց հայկական մարզին, որի հետ Ադրբեջան կոչված նորաստեղծ վարչական միավորը ո՛չ մի առնչություն չուներ, ո՛չ տնտեսական, ո՛չ քաղաքական, ո՛չ էլ նույնիսկ աշխարհագրական... Եվ, սակայն, պոկեցին Հայաստանից և տվին նրան: Տվին, որովհետև նա Ադրբեջա՞նն էր, թիկունքում ուներ բոլշևիկյան խաղացող Թուրքիա, և հարցը վարում էին Նարիմանովյան տիպի նվաճող-սանձարձակ ղեկավարներ... Իսկ Հայաստանի ղեկավարնե՞րը... Ովքե՞ր էին նրանք, ի՞նչ իրավունքներով օժտված... Ամենաշատը կարող էին լինել դիտորդ, եթե, իհարկե, նախապես իրավունք ստացած լինեին մասնակցելու այն ատյաններին, որոնցում Հայաստանին վերաբերող հարցեր էին քննվելու, վերածնվելու և վերաբաժանվելու էին նրա ավանդական հողերը...

Եվ այսքանը քաջ գիտակցելով՝ Շաղունցն ուրիշ ճար չեր գտնում, քան առաջարկել, որ Լեռնային Ղարաբաղը տան ո՛չ Ադրբեջանին, ո՛չ Հայաստանին...

Ահա այս առթիվ նրա գրած փաստաթղթի բովանդակությունը:

Շաղունցը՝ Անդրերկրկոմի կողմից ստեղծված Լեռնային Ղարաբաղի Կոմիտեի ղեկավար անդամը, Կոմիտեի պատրաստած հատուկ զեկույցին կից ուղարկում է նաև իր սեփական տեսակետը՝ այն հասցեագրելով Օրջոնիկիձեին, պատճենները՝ Ադր. ԿԿ Կենտկոմին ու ՀԿԿ Կենտկոմին: Սկզբից իսկ հաղորդում է, թե Լեռնային Ղարաբաղի Կոմիտեում Ղարաբաղի իշխանության կազմակերպման հարցը քննելիս և այդ հարցը դրել եմ՝ կապված Զանգեզուրի հետ: Ապա պնդում է, որ «Այժմ, ըստ իս, չի կարելի խոսել Ղարաբաղի վերականգնման մասին՝ աչք փակելով մի ուրիշ, նրա հարևան ամենահարուստ երկրամասի քայքայվելու նկատմամբ: Զանգեզուրը կապված է Ղարաբաղի հետ, երկուսի հարցն էլ պետք է լուծել միասին»:

«Ես գտնում եմ, որ ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Զանգեզուրում ազգային հարցը ճիշտ լուծելու համար և այդ երկրամասի (Ղարաբաղի ու Զանգեզուրի) տնտեսական վերածնունդի համար անհրաժեշտ է Ղարաբաղի լեռնային մասը Զանգեզուրի հետ միասին առանձնացնել իբրև մեկ ինքնավար միավոր»:

Նամակում ակնարկ կա այն մասին, որ կոմիտեի ընդունած նախագծի մեջ շարադրված են եղել նախընթաց հայ-ադրբեջանական հարաբերությունների փաստերը: Եվ այժմ էլ «Բերված փաստերը... (հայերի ջարդը Շուշում, Զանգեզուրի կոմ. ջոկատի զինաթափումը Շուշում, լեռնային գոտու շահերի լրիվ արհամարհելը) բավական ակնառու կերպով ասում են, որ այդ երկրամասը թողնել Ադրբեջանի սահմաններում՝ այն հարաբերությունների պայմաններում, որոնք եղել են մինչև հիմա, չի կարելի: Ուստի և ես գտնում եմ, որ այդ ինքնավար մարզը պետք է կապված լինի անմիջապես Անդրժողկոմխորհի հետ»[283]:

Հետաքրքիր է առաջարկության տրամաբանությունը: Մարդն անպայման համոզված է, որ լեռնային Ղարաբաղն առանձին վերցրած ո՛չ Հայաստանին կթողնեն, ո՛չ էլ ենթակա

[283] ՄԼԻ ՀԿԿԱ, ֆ. 85, ց. 24, գ. 307, թ. 1:

կդարձնեն Անդրժողկոմխորհին: Բայց ահա Ղարաբաղն ու Զանգեզուրը միասին՝ պիտի ներկայանան որպես տնտեսական ու վարչական մի պատկառելի միավոր, և անհնար է, որ այն չգրավի շահագրգռված մարդկանց ուշադրությունը...

Բայց արդյո՞ք շահագրգռված էին: Սա է հարցը, որ այնպես խղճալի ու ողբերգական է դարձնում մեր երրորդ հերոսի դիրքը:

Շաղունցի նամակը գրված է եղել 1923 թ. հունիսի 13-ին: Դրանից երկու շաբաթ հետո էր, որ Անդրերկրկոմի պլենումը նույն Շաղունցի ու Կարակոզովի զեկուցման հիման վրա կտրուկ վճիռ հանեց Լեռնային Ղարաբաղն առանձին ինքնավար մարզ դարձնելու մասին և Ադր. ԿԿ Կենտկոմին հրահանգեց մեկ ամսվա ընթացքում իրականացնել այդ որոշումը:

Անդրերկրկոմի 1923 թ. հունիսի 23-ի որոշմամբ հանձնարարված է եղել ստեղծվելիք ինքնավար մարզի հռչակագրի մեջ մարզի տարածքի հողն ու ջրի տեր համարել նույն տարածքի բնակիչ հայ գյուղացիությունը: Եվ ահա, Ադրբեջանի Կենտգործկոմի ընդունած հռչակագրի (1923 թ. հուլիսի 7-ի) առաջին կետով շեշտվում է՝ «Լեռնային Ղարաբաղի հայկական մասից կազմել ինքնավար մարզ...», իսկ երրորդ կետի ծանոթագրությամբ նշվում է, որ «բոլոր արոտավայրերը, անտառները, այգիները և հողի ու ջրի փաստական տնօրինությունը պահպանվում է (են) ներկայիս տերերի (պարզ է՝ հայ բնակչության — Բ. Ու.) ձեռքում»:

Հռչակագրի սկզբունքները և նրա հետ առնչվող մի շարք հարցեր սկզբնապես մտել են Ադր. Կկ Կենտկոմի նախագահության հուլիսի 1-ի որոշման մեջ: Այնտեղ մարզի Հեղկոմի նախագահ էր նշանակվում Արմենակ Կարակոզովը, կուսմարզկոմի նախագահ՝ Սերո Մանուցյանը:

Սակայն նույն որոշման հիմնական մասն էր կազմում ևս մի հարց, որը ճակատագրական դեր պիտի խաղար ինքնավարության համար. ինքնավար մարզի սահմանների որոշման հետ էին կապվում «Քուրդիստանի դրությունը» և «Ներքին Ղարաբաղի վարչական բաժանումը»[284]:

Իրերին անտեղյակ մարդը կարող է մտածել, որ դրանք իսկապես առնչություն ունեն Լեռնային Ղարաբաղի հետ և մարզի սահմանները որոշելու կապակցությամբ պետք է որ հանգամանորեն քննության առնվեին: Սակայն հետագա իրողությունները ցույց են տալիս, որ այդ երկու, իբրև թե, ստեղծվելիք վարչական միավորներն ասպարեզ են քաշվել նոր կազմվող հայկական մարզն անձուկ սահմանների մեջ խեղդելու համար:

Սահմանները որոշող հանձնաժողովի նախագահ էր նշանակված Ադրբեջանի ռազմածովային ժողկոմ Կարաևը, անդամներ՝ Կարակոզովը, Սվիրիդովը, Իլդրըմը և Բունիաթզադեն:

Նարիմանովը չկար, սակայն հենց այդ Կարաևն ու Բունիաթզադեն էլ բավական էին, որպեսզի ոտքի տակ տրվեին արցախահայության երազանքները: Այդ նրանք էին, որ Քուրդիստանի սարքովի հարց մեջտեղ քաշեցին, մի նեղ ու երկար շերտով Արաքսի ափից մինչև Փոքր Կովկասյան լեռնաստանի հյուսիսային փեշերը տարածեցին, որպեսզի նոր կազմվող մարզը շփման ոչ մի կետ չունենա Հայաստանի հանրապետության հետ: Շփման կետեր կամ սահմանակցություն կարող էր ստեղծվել Բերդաձոր (Կալադարասի)-Զաբուղի ձոր-Տեղ-Կոռնիձոր գծով: Կամ այդպիսի գոտի կարելի էր դարձնել Հարար-Պետրոսաշեն-Սպիտակշեն շերտը, որով Դիզակ-Հադրութ գավառը Հագարի ու Որոտան գետակների հովտի վրա անմիջապես կապվում էր Սյունիք-Զանգեզուրի հետ: Այսպիսով այլևս ոչինչ չէր կարող խանգարել հայոց հանրապետության ու հայկական մարզի սահմանակցությանը... Սակայն երկու տեղամասերում էլ անցկացրին անջատման գոտիներ, որպեսզի հետագայում դրանք բնակեցնեն մահմեդականներով և անջատումը դարձնեն անխուսափելի...

---

[284] «Փաստաթղթեր», էջ 154:

Ադր. Կ(բ)Կ Կենտկոմի նախագահության 1923 թ. հուլիսի 16-ի նիստի որոշման մի կետով հանձնարարվում էր «Քրդերի զբաղեցրած տարածքից կազմել «Քուրդիստանի գավառ»[285]: Հետագայում և՛ այն հիշատակվում է մի շարք որոշումներում ու բանաձևերում: Սակայն որովհետև այն ժամանակ արդեն նույն տարածքի քրդերի թրքացումը համարյա իրողություն էր, իսկ նրա ավարտի համար Ադրբեջանի ղեկավար մարմինները գործադրում էին բոլոր ու ամեն տեսակ միջոցներ, ապա կարճ ժամանակ անց ավելորդ ճանաչվեց գավառի Քուրդիստան տարբերակիչը, մանրացավ՝ վերածվելով այն շրջանային բաժանումներին (Քելբաջարի, Լաչինի, Կուբաթլիի, Զանգելանի), որպիսիք այժմ գոյություն ունեն:

Այսբանից հետո կարելի է եզրակացնել, որ Քուրդիստան կոչված, իբր թե, վարչական-ազգագրական միավորը, Լեռնային Ղարաբաղի ինքնավարության հետ միաժամանակ ու միասին հրապարակ նետվելով, Հայաստանի հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի սահմանակցությունը խափանելու իր միակ դերը կատարելով՝ աստիճանաբար մարել է, անհետացել՝ ոչ մի նշանակալից հետք չթողնելով իր ետևից:

Նույնպիսի դերով պիտի բավարարվեր նաև Ներքին կամ Դաշտային Ղարաբաղ կոչվածը: Նորակազմ հայկական մարզը, ըստ հռչակագրի, ընդգրկելու էր Լեռնային Ղարաբաղի հայաբնակ տարածքը: Սակայն նրանից անջատեցին ամբողջ հյուսիսային Արցախը՝ նախկին Գյուլիստանի մելիքության տարածքը, Թալիշի մուտքերից մինչև Սևհարակ լճի (Գյոլ-գյոլ) հարավային ափերը, ուր անտիկ Գետաշեն ավանն է՝ մերձակա հայկական գյուղերով: Մարզից անջատվեցին և հարևան ադրբեջանական գավառներին տրվեցին Դիզակի, Վարանդայի ու Զրաբերդի արևելյան մասերի մի շարք գյուղեր իրենց բերրի հողատարածություններով: Եվ այս կողոպտված մարզի ներսում էլ անհրաժեշտ համարեցին իրականացնել հակահայկական մի այնպիսի միջոցառում, որը և՛ ճակատագրական էր լինելու հետագա պատմաշրջանում: Հռչակագրի մասին խոսող փաստաթղթերում մարզի կենտրոն էր համարվում ոչ թե ավանդական Շուշին, այլ Խանքենդի անշուք ու խղճուկ (հինավուրց Վարարակն) ավանը, որն էլ Ղարաբաղի կուսակցական մարզկոմի 1923 թ. սեպտեմբերի 18-ի որոշմամբ Ստեփան Շահումյանի անունով կոչվեց Ստեփանակերտ[286]:

Շուշին մայրաքաղաք ընդունելու պարագային պետք կլիներ չնչին ծախսերի գնով վերականգնել նրա հայկական առավել բարեշեն ու գեղեցիկ թաղամասը: Մինչդեռ հանրապետության տնօրենները որոշեցին ոչ միայն չվերականգնել և մարզին հատկացվող չնչին միջոցների հաշվին կառուցել տալ նոր կենտրոն, այլև Շուշիում հայկական ոչինչ չվերականգնելով հանդերձ, խնամքի տակ առնել միայն ադրբեջանական մասը: 1923 թ. հոկտեմբերի 8-ին Ադր. Կ(բ)Կ Կենտկոմի նախագահությունն ընդունել էր մի որոշում, որը պիտի դառնար հայկական մարզը ներսից պայթեցնելու սև գործի սկիզբը. իբր թե ժամանակավորապես՝ Շուշին դարձնում էին Քուրդիստանի գավառային կենտրոն՝ այն պահելով «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի կազմում»[287]:

Մի կողմից մարզի հայության ցասումնալից դժգոհությունը, մյուս կողմից էլ իր իսկ Քուրդիստան վարչական միավորի անհեռանկար ու սարքովի վիճակը թույլ չտվին, որ այդ որոշումն իրականանա: Սակայն առանց այդ էլ Շուշին պիտի զարգանար, մարզի հաշվին ուռճանար իբրև բացառապես ադրբեջանական կենտրոն՝ պատուհաս դառնալով հայկական ինքնավար մարզի զարգացման դեմ:

Այսպես է ստեղծվել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը՝ ի հեճուկս ադրբեջանական ղեկավարության հակահայկական գործարքների ու սադրիչ դիմադրության, հակառակ այն բոլոր մեքենայությունների, որոնք անվերջ գործում էին «ամենազոր» Նարիմանովն ու նրա ազգակից գործակալների կողմից:

---

[285] «Փաստաթղթեր», էջ 149, 151, 153:
[286] «Փաստաթղթեր», էջ 188:
[287] Անդ, էջ 192:

Եվ նույնիսկ հարցի այսպիսի լուծումն էլ աչքի փուշ դարձավ Նարիմանովի համար, որը, Մոսկվայում նստած, անզոր լինելով սեփական ձեռքով խափանել արցախահայությանը տրված ինքնավարությունը, փորձում էր օգտվել Ստալինի ամենազոր ծառայությունից:

Ադրբեջանում վերջերս հրապարակել են Նարիմանովի ինչ-որ զեկույց-նամակը՝ հասցեագրված Ստալինին, պատճենները՝ Տրոցկուն ու Ռադեկին (հավանաբար այն տեղ չի հասել)[288]: Երևում է՝ հրապարակումը կատարվել է մեծ բացթողումներով ու կամայական կրճատումներով: Սակայն լույս աշխարհ եկած տեսքով էլ այն բավական պարզ պատկերացում է տալիս հեղինակի էության, մանավանդ բարոյական կերպարի մասին:

Զեկույցը գրվել է 1923 թ. վերջին (տակը նշանակված է 1923 թ. դեկտ. 24), այսինքն՝ երբ հեղինակն արդեն երկրի Կենտգործկոմի նախագահներից մեկն էր: Այդ պաշտոնում գրել է սովորական մի զրպարտագիր-դանոս՝ լի կեղտոտ բամբասանքներով ընդդեմ Չիչերինի, Օրջոնիկիձեի, Կիրովի, Միկոյանի, Սարգիսի, Սերեբրովսկու, Միրզոյանի..., նույնիսկ իր նախկին գործակից ազգակիցների՝ Ս. Կասյանի ու Մ. Հուսեյնովի («Կենտկոմի անդամներ Կասյանը՝ մեևշևիկ 18 թվականից և Մ. Դ. Հուսեյնովը՝ մուսավաթական 18 թվականից...»): Միաշար ու զազրելի ամբաստանություններով փորձում է ապացուցել, որ Ադրբեջանում միայն ինքն է, որ իսկական հեղափոխական ու ժողովրդավարական գործ է կատարել, մնացած բոլորը կեղտոտ պաշտոնամոլներ են եղել, ստահակներ, ադրբեջանական ժողովրդի (իր ասելով՝ թուրքերի) երդվյալ թշնամիներ: Ասում է՝ Ադրբեջանի հիմնադիրները «լիքն են ռուսներով, հայերով, հրեաներով», որոնց միակ նպատակն է հանրապետությունում բնաջնջել թուրքերին, Արևելքում էլ՝ հեղափոխության սրբազան գործը («Ըստ Օրջոնիկիձեի տեսության՝ իհարկե, կարելի է փոքրիկ Ադրբեջանի բնակչությանը հետևողականորեն ոչնչացնել, բայց դրանից հետո ումի՞ց է կազմված լինելու հանրապետությունը»):

Այս, ներողություն արտահայտության համար, զեկույցը տեղ չի հասել, հեղինակը պահել է իր թղթերի մեջ և հետո, 1924-ի մայիսի 27-ին, կատարել մի լրացում, որ բացառապես վերաբերում է ժամանակի Ադրբեջանի հայ ղեկավար աշխատողներին, մանավանդ Լևոն Միրզոյանին:

Այստեղ արդեն բաժին է հասնում նաև Ստալինին («ՌԿԿ Կենտկոմը, հանձին Սերգոյի ու Ստալինի, չեն վստահում մեզ՝ թուրքերիս, և Ադրբեջանի բախտը հանձնարարում են հայ դաշնակներին»):

«Ադրբեջանում դաշնակցական աշխատանքի մասին իմ կանխագուշակումների մյուս կեսը, ես մտածում եմ, ի հայտ կգա այս տարի,— հայտարարում է Նարիմանովը և դառնում իրեն տանջող հիմնական ցավին.— Լեռնային Ղարաբաղը Միրզոյանի ուժգին ճնշման տակ հայտարարված է ինքնուրույն մարզ: Իմ օրոք դա չէր հաջողվում ո՛չ թե այն պատճառով, որ ես դեմ էի այդ ինքնավարությանը, այլ պարզապես որովհետև իրենք՝ հայ գյուղացիները դա չէին ցանկանում: Միրզոյանն այդ ընթացքում հայ դաշնակ ուսուցիչների օժանդակությամբ հող է պատրաստել և հարցն անց է կացրել Անդրերկրկոմում: Այդ պահից կտրուկ սրվել են հայ գյուղացիների ու թուրք գյուղացիների հարաբերությունները: Հետո էլ հարցը կդառնա Գանձակի լեռնային մասին ևն: Ադրբեջանում դաշնակցական քաղաքականությունն առաջ է գնում ամբողջ ուժով»:

Ահա այսպես. իսկ և իսկ իրեն՝ Նարիմանովին վայելուչ նենգապատիր մի գրություն, որի յուրաքանչյուր նախադասություն կեղծիք է ու բացահայտ սուտ, շաղախված է ու զրպարտություն: Երբեք տարի էլ չկար, որ Անդրերկրկոմը հենց իր՝ Նարիմանովի սանձարձակ հարկադրանքով «որոշեց», թե Լեռնային Ղարաբաղին պիտի տալ ինքնավարություն Ադրբեջանի սահմաններում, իսկ այստեղ Միրզոյանի ճնշման տակ ու հայ դաշնակ ուսուցիչների աջակցությամբ է Անդրերկրկոմը գնացել այդ քայլին: Իր հարկադրանքի ու շանտաժի հիմքն է Անդրերկրկոմի որոշման մեջ մտել այն հիմարությունը, թե հայերի ու մուսուլմանների խաղաղությունն է պահանջում այդ ինքնավարությունը

[288] «Азербайджан» շաբաթաթերթ, 1989, նոյեմբ. 5, էջ 4—5:

(«Ելնելով մուսուլմանների ու հայերի միջև ազգային խաղաղության անհրաժեշտությունից...»): Իսկ այստեղ ինքնավարություն տալը սրել է «հայ գյուղացիների ու թուրք գյուղացիների հարաբերությունները»: Եվ, վերջապես, կամ հենց ամենից առաջ, իր տիրապետության ժամանակ այդ ինքնավարությունը հռչակած որոշումը չէր իրականանում ոչ թե այն պատճառով, որ Նարիմանովը չէր ցանկանում, այլ որովհետև չէին ցանկանում իրենք՝ հայ գյուղացիները: Արցախի հայ գյուղացիությունը երեք տարի անվերջ ու անընդմեջ կռվել է իր թշնամի թրքության դեմ, կռվել է իր ազատության ու անկախության համար, իսկ նարիմանովյան եղկելի իշխանության համն առնելով՝ հրաժարվել էր նույնիսկ վերջին ողորմելի հնարավորությունից՝ մարզային ինքնավարությունից:

Ադրբեջանում այս «փաստաթուղթը» հրապարակել են, ըստ երևույթին, նոր լույս սփռելու Արցախի հիմնահարցի վրա, սակայն իրականում ընթերցողին հնարավորություն են տալիս ծանոթանալու...

Նարիմանով-երևույթի մութ ծալքերին, տեսնելու նրա նենգապատիր քաղաքական դեմքը: Նարիմանովի այդ նորահայտ «փաստաթուղթն» օգնում է պարզելու մի հարց ևս, որը մոտավորապես նույնքան քննություն ունի, որքան և ինքը՝ սույն «փաստաթուղթը», սակայն մինչև օրս թաքուն է պահվել իր հետ կապված մի հարցական:

Մասնագետներին վաղուց հայտնի էր, որ 1923 թ. ապրիլի 24-ին, ՌԿԿ(բ) 12-րդ համագումարի 14-րդ նիստում ելույթ ունենալով, Կ. Բ. Ռադեկը հայտարարել է, թե Ադրբեջանում հայերը նեղում են մուսուլմաններին («Ես համագումարում լսում եմ, Ադրբեջանում այդպիսի միտումներ կան: Եվ չկարողացա դա ստուգել, սակայն նշում եմ, որ չի կարելի թույլ տալ...»)[289]:

Այս զրպարտչական հայտարարության դեմ համագումարի նախագահությանը նամակ էին գրել Ադրբեջանի պատվիրակության մի խումբ անդամներ և ցույց էին տալիս, որ իրականում նման բան գոյություն չունի և չի կարող ունենալ: «Որ Ադրբեջանում բոլոր տնտեսական ու խորհրդային մարմիններն 99 տոկոսով գլխավորում են գերազանցապես թուրքերը, մասամբ էլ ռուս ընկերները, խոսում է անճշտության ու կեղծիք լինելու մասին այն տեղեկությունների, որոնք ընկ. Ռադեկին հաղորդում է մի ադրբեջանցի պատասխանատու ընկեր»[290], — գրել էր պատվիրակների խումբը:

Հայտարարության զռռացող անհեթեթությունը զայրացրել էր նույնիսկ մի այնպիսի հակահայ բռնակալի, որպիսին Ստալինն էր: Եվ նա իր եզրափակման խոսքում, իհարկե հայ պատվիրակների խնդրանքով, արել էր հետևյալ ճշգրտումը.

«Այդ դիտողությունը, ըստ իս, չի համապատասխանում իրականությանը, — ասել էր Ստալինը: — Ընկ. Ռադեկն այստեղ ասաց, թե հայերն Ադրբեջանում շահագործում են կամ կարող են շահագործել ադրբեջանցիներին... Ես պետք է հայտարարեմ, որ առհասարակ այդպիսի երևույթներ բնության մեջ չեն լինում: Լինում է հակառակ երևույթը, որ Ադրբեջանում ադրբեջանցիները, որպես մեծամասնություն, շահագործում են հայերին և կոտորում են, ինչպես դա եղել է Նախիջևանում, ուր կոտորել են բոլոր հայերին»[291]:

Որ Ռադեկի կողմից տեղի է ունեցել իրականության գռեհիկ աղավաղում, և այն անմիջապես հերքվել է, դա հասկանալի է ու արդար: Բայց ո՞վ է եղել այն «ադրբեջանցի պատասխանատու ընկերը», որը Ռադեկին նման ստոր սուտ է հաղորդել՝ նրան գցելով թյուրիմացության մեջ: Այս հարցին էլ պատասխան է տալիս վերը քննության առնված նարիմանովյան «փաստաթուղթը», որը շուրջ երկու տարի անց հասցեագրվել էր Ստալինին,

---

[289] «XII съезд РКП(б)», стенографический отчет, М., 1968, стр. 619.
[290] «XII съезд РКП(б)», էջ 824:
[291] Անդ, էջ 660:
Ստալինին այստեղ հայերի օգտին մի ճշմարիտ տեղեկություն հաղորդելով՝ իր պարտքն էր համարել, հավասարակշռության համար, հաղորդել նաև մի հրեշավոր սուտ, իբր «Հայերն էլ իրենց Հայաստանում կոտորում են բոլոր թաթարներին: Այդ եղել է Զանգեզուրում» (անդ):

Տրոցկուն ու Ռադեկին: Այնտեղ նույն զրպարտությունն էր հայերի հասցեին. իբր նրանք Ադրբեջանում նվաճել են բոլոր ղեկավար պաշտոնները, տիրել-բռնել արդյունաբերության բնագավառը, հանրապետության վերին ոլորտները և իրենց դաշնակցական գործն են առաջ տանում: Համագումարում ադրբեջանական պատվիրակության նամակ-բողոքագրի տակ, բնականաբար, Նարիմանովի ստորագրությունը չկա: Նա է Ռադեկին հաղորդել սուտը, իսկ հրապարակորեն մերկացվելուց հետո էլ դաս չառնելով՝ դեկտեմբերին նստել, հորինել այն հրեշավոր զրպարտագիրը, որ ադրբեջանցի նորաթուխ չգիտնականներն են հպարտությամբ հրապարակել՝ ի լուր իրենց ընթերցողների:

ՄԱՍՆ Բ

ԽՈՒԼ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԸ

(1923—1987 թթ.)

«Առանց Սյունիքին և Արցախին,
Ի՞նչ ցուցանակ էլ որ կրելու
լինի Հայաստանը,
գոյություն ունենալ չէ կարող»:

Գարեգին Նժդեհ

1923 թ. ամառվանից սկսած առժամապես խաչ էր քաշվել Արցախի ազատագրության հիմնահարցի վրա: Դա, իհարկե, պաշտոնական շրջաններում: Մանավանդ, եթե նկատի առնենք Հայաստանի խորհրդային հանրապետության պարագան: Անդրֆեդերացիայի (1922—1937 թթ.) ստեղծումով արհեստականորեն խլացվել էին այդ վարչական միավորի մեջ մտնող ազգերի ներքին պահանջներն ու դժգոհությունները, ծավալվել էր վերին հրամանով վարվող մի քաղաքականություն, որի երեսն ու աստառը հյուսված էին ինտերնացիոնալիզմից, որ իրականում նշանակում էր ցուցադրական ու կեղծապատիր եղբայրություն:

Ուրեմն, պաշտոնեության համար այլևս Արցախի հարց չկար: Հակառակը, եթե խոսք լիներ, պիտի անպայման նշվեր, որ միակ ճիշտը մարզը «եղբայրական Ադրբեջանի» կազմում պահելն է:

Այս շրջանի խորհրդային մամուլի հազարավոր նյութերից քաղելիք միակ եզրակացությունն է սա, եթե, իհարկե, միամտություն ունենանք հավատալու, թե դա էր իրականությունը, և այդպես էր մտածում ժողովուրդը: Եվ միայն Սփյուռքի հայկական հրապարակումներում է, որ առիթից առիթ հնչել է արցախահայության խուլ գոյապայքարի արձագանքը, և մեկ էլ արտասահմանում ծվարած հայ ազատասեր ուժերն էին թմբկահարում իրենց հավատարմությունը այդ պայքարին: Իրավացի էր Ռուբեն Տեր-Մինասյանը, որ 1926-ին արդեն գրում էր, թե «Հ.Հ. Դաշնակցությունը, իբրև հայ ժողովրդի հույսի և հավատի խտացումը, չէ դավաճանած գանձակ-ղարաբաղցիին, ընդառաջ է գացած անոր բաղձանքներին և ամենեն տագնապալի վայրկյանին իսկ չէ մոռացած զայն: Այսօր ալ իր հալածական վիճակին մեջ, իր ծրագրին մեջ ունի հին Արցախի գավառներուն ազատագրումը: Այդ ծրագիրն ինքը չէ հղացած, այլ քաղած է Ղարաբաղի ժողովուրդին կամքեն»[292]:

«Ղարաբաղի ժողովրդին կամքե՞ն», որը մնաց միշտ էլ անտեղիտալի ու աներեր, չնայած երկրում հաստատված և օրըստօրե ահագնացող բռնատիրությանը:

Այդ ժողովուրդը ոչ մի ժամանակ չհաշտվեց իր վիճակի ու դառն ճակատագրի հետ: Ժամանակի սփյուռքահայ մամուլի էջերն են թափանցել անհամար տեղեկություններ այն մասին, որ Արցախի գավառներում եղել են ընդվզումներ ու ապստամբական պոռթկումներ ադրբեջանական պաշտոնեության դեմ, մարզն ադրբեջանական ստրկությունից ազատագրելու համար: Խոսելով այսօրինակ բազմաթիվ փաստերից, լայնորեն քննելով Ադրբեջանի կուսակցական ղեկավար Լևոն Միրզոյանի մի ճառի բացահայտ ակնարկները հանրապետության տարածքում եռացող ազգամիջյան գժտությունների մասին[293], սփյուռքահայ լրագրողը եզրակացնում էր, որ «Մերկ բռնությունն ու կամայականությունն են պահում այդ շրջանը ադրբեջանական լծի տակ»[294]:

Երևանից Սեգիմ կեղծանունով մեկը սփյուռքահայ հանդեսի խմբագրությանը գրել էր, թե «Ադրբեջանի հայերի վիճակը սարսափելի է... Ադրբեջանից հաճախ թղթակցություններ են հղվում «Խորհրդային Հայաստան» թերթին հայերի ծանր վիճակի մասին, բայց չեն տպվում: Կհամարձակվե՞ն երևանցիք վատ խոսք ասել Ադրբեջանի վարիչների մասին»[295]:

Բայց մինչև ե՞րբ:

Ժամանակի ամենահեռատես մարդիկ անգամ չէին կարող որոշակի ասել, թե ե՞րբ է կտրվելու ծայրահեղորեն ձգված թելը: Իրեն ժողովրդապետություն հորջորջող և ազգի ու մարդու ամեն տեսակ ազատություններից գիշեր-ցերեկ ճամարտակող կառավարությունը ե՞րբ է ունկնդրելու ժողովրդի ձայնը, կատարելու նրա կամքը:

Գրքիս նախորդ էջերում ես վկայակոչել էի մեր այն գործիչներից մի քանիսին, որոնց համար աներևակայելի էր ո՛չ միայն Հայաստանի ու Արցախի, այլև Արցախի ու Զանգեզուրի անջատումն իրարից: Հնուց ի վեր գտնվելով Հայոց միասնական թագավորության սահմաններում՝ այս երկու նահանգները (Մեծ Սյունիք և Փոքր Սյունիք) մերձավորագույն հարևաններ են եղել, տնտեսական, վարչական ու մշակութային անհամար օղակներով իրար շաղկապված, իրար պահող մարմիններ:

---

[292] Ռուբեն, Գանձակ-Ղարաբաղի վեճը. «Դրոշակ», 1926, հ. 2, էջ 52:
Այստեղ հեղինակը գտնում է, որ «Զոհել Ղարաբաղի և Լեռնային Գանձակի մոտ 200000 հայությունը՝ Հայաստանի հայության 1/4-ը կնշանակի դավաճանել ոչ միայն Լեռնային Գանձակի ու Ղարաբաղի, այլև Հայաստանի և անոր ժողովրդին դեմ» (անդ):
[293] «Դրոշակ», 1928, հ. 10:
[294] «Դրոշակ», հ. 11, էջ 275:
[295] Անդ, 1927, հ. 8, էջ 248:

Նույնն է նրանց ապրելակերպը, հոգեբանությունը: Տառացիորեն նույն բարբառով է խոսում Սյունյաց արևմտյան եզերքից մինչև Մուխանք դաշտավայրն ընկած ամբողջ տարածքի տեր հայությունը:

Պատմությունից հայտնի են դեպքեր, երբ Մեծ Սյունիքում ահավոր երաշտ է եղել, և սովը հաղթահարվել է Արցախի հաշվին, կամ հակառակը: Իսկ եթե նկատի առնենք, որ մինչև վերջին ժամանակներս Սյունյաց երկարատև ձմեռը կտրում էր հաղորդակցության ամեն ճանապարհ Արարատյան երկրի հետ, և միայն Արցախն ու Սյունիք-Զանգեզուրն էին մնում թիկունք-թիկունքի, իրար օգնական ու աջակից, հասկանալի կդառնա մեր նշանավոր պետական այրերից մեկի՝ Ռուբեն Տեր-Մինասյանի հետևյալ սրտառուչ խոսքը. «Զանգեզուրցիին համար Հայաստանը մայր հայրենիքն է, իսկ Ղարաբաղը՝ կենդանի իբր բուն հայրենիք: Բաժնել Ղարաբաղն իրմե և Հայաստանեն՝ կնկատե բաժանել եղբայրը եղբորմեն, փետուրափ և աննեցուկ ձգել զինքը, ինչ-որ նախաքայլն է իր ոչնչացման: Բաժնել իրմե Ղարաբաղը՝ և կամ հարված հասցնել անոր, կնշանակե փշրել իր ողնաշարը և ձգել թշնամիին առջև»[296]:

Հմուտ գրչի տեր լինելով՝ Ռուբեն Տեր-Մինասյանը նաև խորն ուսումնասիրել էր և հրաշալի գիտեր Անդրկովկասի պատմությունը, տնտեսական ու ազգամիջյան փոխհարաբերությունների ծալքերը և անպայման տեսնում ու գնահատում էր այնպիսի գաղտնիքներ, որոնք թաքնված էին քաղաքական հազար ու մի վարագույրների ետևում: Տեսեք՝ նա ինչպես բացում է այդ վարագույրը և ցուցադրում ադրբեջանական ծավալապաշտության ակունքները: Ասում է. «Ադրբեջանը շահագրգռված է լեռնամասերով և այդ է գլխավոր պատճառը, որ կուզե ամեն գնով իր ձեռքը պահել հայկական գավառները: Ադրբեջանը տաք երկիր է, բնակիչներու խոշոր հատվածը թափառական կամ կիսաթափառական կյանք կվարե:

Այդ տարրը նահապետական խաշնարածությամբ կզբաղվի. ձմեռը, գարունը, աշունը անապատներուն մեջ իր ոչխարները կարածե, իսկ ամառը կբարձրանա հոտերով Գանձակի, Ղարաբաղի վրայով Հայաստանի արոտատեղիները: Ուրիշ խոսքով՝ խաշնարած դաշտաբնակներու համար տնտեսական անհրաժեշտություն է Լեռնային Ղարաբաղը: Բայց այդ պարագային Ղարաբաղն ու Գանձակը լոկ ճանապարհներ են, հասնելու համար իսկական արոտատեղերը, որոնք կգտնվին Հայաստանի կուրծքին վրա՝ Սևանի լճի ավազանը, Դարաագյազի, Զանգեզուրի, Լոռիի, Դիլիջանի, Ալագյազի, Սիսիանբալակի լեռներուն մեջ: Եթե Ադրբեջանի թափառական ցեղերու շահը միայն նկատի առնենք, ոչ միայն Ղարաբաղը, Գանձակը, այլև ամբողջ Հայաստանը պետք է զոհաբերվի խաշնարածներու ապահովության: Այսպիսի ծրագիրներ եղած են և կան Ադրբեջանի, ինչպես և Վրաստանի մեջ. ծրագիրներ, որոնք կդրժեն Հայաստանի գոյությունը և կձգտին բաժանել զայն երկու պետությանց միջև, քաղաքական և տնտեսական պատճառներով...»[297]:

Հայաստանը Վրաստանի և Ադրբեջանի միջև բաժանելու գաղտնի ծրագիր ունեցե՞լ են երկու հանրապետությունների հակահայ կառավարողները, — անցյալի առումով նման խնդրում պետք է վստահենք մեր հեղինակին, որը Հայաստանի հանրապետության ռազմական մինիստրն է եղել Օհանջանյանի կառավարության մեջ և խոշոր դեր է խաղացել թուրքերի ու ադրբեջանցիների հակահայկական խժդժությունները զսպելու գործում: Իսկ որ նման մի ծրագիր փոխանցվել է բոլշևիկ հաջորդներին, այս էլ բացվեց չարաբաստ Միր-Ջաֆար Բաղիրովի դատավարության ժամանակ: Ինքս ներկա եմ եղել դատավարությանը և հիշում եմ, թե ինչպես ռազմական տրիբունալի նախագահն ու ԽՍՀՄ գերագույն դատախազ Ռուդենկոն խաչաձև հարցաքննումներով Բիզովի բերանից դուրս էին քաշում Հայաստանի պետական ամբողջության դեմ նախապատրաստված ու համարյա ավարտին հասցված հրեշավոր ծրագիրը: 1953 թ. ամռանը պետք է իրականացվեր հայերի աննախադեպ մեծ մի բռնագաղթ, այնքան մեծ, որ հանրապետության բնակչությունը պակասեցներ մեկ միլիոնից,

---

[296] Ռուբեն, Զանգեզուրի պայքարը. «Դրոշակ», 1925, հ. 6, էջ 189:
[297] Ռուբեն, Գանձակ-Ղարաբաղի վեճը, էջ 51:

և միութենական հանրապետության իրավունքից զրկված Հայաստանը ենթակա դառնար հարևանների տիրապետությանը:

Ուրեմն Ռուբենը լավ էր հասկացել Ադրբեջանի ղեկավարների փայփայած երազանքը՝ «Ամբողջ Հայաստանը պետք է զոհաբերվեր խաշնարածներու ապահովության» :

Բաղիրովի դատավարությանը վկա հրավիրված Սուրեն Բաղդասարը՝ Լեռնային Ղարաբաղի մարզգործկոմի նախկին նախագահը, որ 1937—54 թվականներն անց էր կացրել բանտերում ու աքսորավայրերում, ուղիղ երկու ժամ, առանց մի վայրկյան դադարի, պատմեց Բաղիրովի ու սրա գործակիցների չարագործությունների մասին, և սրանք բոլորը հակահայկական էին, հակաարցախյան: Պատմում էր, փաստերով ու փաստաթղթերով ցույց տալիս, թե այդ հրեշն իր ավազակախմբերի միջոցով ի՜նչ ժողովրդասպան միջոցառումներ էր իրականացնում Հայաստանից իսպառ բաժանված հայկական մարզում, ինչպես դժնդակ բռնությունների դեմ բարձրացող ամենաանմեղ բողոքը, խուլ տրտունջն անգամ խլացվում էր տեղնուտեղը, և բողոքողն անհետանում էր ոտով-գլխով, հաճախ էլ գերդաստանով հանդերձ: Բաղդասարը հրապարակում էր ցուցակներն արցախահայ նահատակների՝ մարզկոմի ու մարզգործկոմի նախկին ղեկավարներ, մարզային ու շրջանային մասշտաբի աշխատողներ, շարքային տասնյակ ու հարյուրավոր հայ մարդիկ, որոնց մեղքը մեկն էր եղել՝ անհանդուրժողություն ադրբեջանական բռնությունների ու անսանձ կամայականությունների դեմ, արտահայտված կամ թեկուզ ենթադրվող ձգտում ինքնավար մարզն իր իսկական ու օրինական տիրոջը՝ Հայաստանի հանրապետությանը վերադարձնելու: Եվ որ շատ կարևոր է. բոլոր այդ զոհերի, սեփական ազգի ազատագրության համար պայքարած կամ ազատագրությունը երազած բոլոր այդ նահատակների վրա միշտ ու ամենուր բարդվել է կաղապարից ելած մեկ մեղք՝ բանդիտիզմ: Իբր, նրանք բոլորն էլ եղել են խորհրդային իշխանության երդվյալ թշնամիները և կռվել են իշխանության դեմ կամ կռվելու վճիռ են ունեցել:

Բաղդիկյանն ասում էր.

— Բաղիրովի զինված ավազակախմբերը վխտում էին հայկական գյուղերի շուրջը և տեղնուտեղը գնդակահարում էին իրենց քթներին ուռը չեկած հայ մարդկանց: Մարզում տիրում էր ահավոր մի սարսափ, որից չկար փրկություն: Եթե ղեկավար որևէ աշխատողի կանչում էին Բաքու, այլևս վստահություն չկար, թե նա կվերադառնա տուն: Հանրապետական քանի՜–քանի ժողովների ենք գնացել պատասխանատու աշխատողների հոծ խմբերով և վերադարձել՝ կեսն այնտեղ թողած:

30-ական թվականների սարսափները մարզում պիտի մոռացվեին Հայրենական պատերազմի ահեղ հարվածով, որը ռազմադաշտ քշեց ավելի քան 45 հազար հայ մարդ և կին ու աղջիկ, մարզի բնակչության մեկ երրորդը, այսինքն՝ նրա աշխատունակ համարյա ամբողջ մասը:

Տեղյակ մարդիկ պատմում են, որ մարզի ադրբեջանական գյուղերում դույզն իսկ զորահավաք չի կատարվել: Իսկ հարևան ադրբեջանական շրջաններում կաշառքով ու զանազան գործարքներով աջողացրել են, որպեսզի երիտասարդությունը մնա և պարբերաբար ասպատակի մարզի հայկական գյուղերը:

Մարզը հայաթափ անելու ծրագրի մեջ կա դաժան մի թվական, որի հուշն անգամ սարսուռ է պատճառում: 1949-ն է դա: Ամանորամուտին իրականացրին մեծ բռնագաղթ՝ հազարավոր «տեսակետների» դաշնակցության մնացորդի, ռազմագերու կամ պարզապես հակակառավարական տարրի պիտակներով: Իսկ աշնանը հարկահանների ջոկատները տեղում մնացածների, նույնիսկ քաղաքաբնակների ընտանիքները խուժեցին և տեղաշորթերը թափ տալով, իբր նեղ օրում գտնվող հայրենիքի համար բրդամթերման ու բամբակամթերման պլաններ կատարեցին:

1920-ական թվականների սկզբին Հայաստանի, նույնիսկ Խորհրդային Ռուսաստանի ականավոր մի շարք գործիչներ անհնար ու անհանդուրժելի էին համարում Արցախի միացումն Ադրբեջանին՝ շովինիստական այն վերաբերմունքի պայմաններում, որ

Ադրբեջանի ղեկավարությունն էր ցուցաբերում մարզի հայության հանդեպ: Միացմամբ վերանալու կամ բարեփոխվելու էր վերաբերմունքը, Ադրբեջանի կուսակցական ու խորհրդային կառավարիչները պիտի ընդունեին, որ մարզի հայ բնակչությանը տրվել է ազգային, տնտեսական ու քաղաքական ինքնավարություն և հարկ է հարգել ու ապահովել այդ ինքնավարության բնականոն զարգացումը:

Այս հարցին միայն բացասական պատասխան տալ՝ կնշանակի դեռևս ոչինչ չասել: Պարզապես ոչինչ, որովհետև բռնակցումից հետո վերաբերմունքը ոչ միայն չկարգավորվեց, չընդմեջեց բնականոն ընթացքը, այլև տարվեց մի ուղղությամբ, որը կվայելեր դաժան գաղութատիրությանը: Հանրապետությունը, նրա ղեկավարները և շարքայինները բռնի հպատակեցված մարդկանց այնպես էին վերաբերվում, ոնց որ այն իրենց առաջ նետված լիներ իբրև ձրի կեր:

Այո՛, ձրի՛, որովհետև շուրջ յոթ տասնամյակների ընթացքում Ադրբեջանական հանրապետությունը խմել է այդ բարեբեր երկրի քրտնաջան աշխատավորության ստեղծած բարիքները, առանց նվազագույն իսկ չափով փոխհատուցելու, քամել է մարզի կենսական հյութերը՝ նրա տնտեսության ու մշակույթի զարգացման համար ոչ մի ծախս չկատարելով, հանրապետության ուռճացած բյուջեից հատկացումներ չկատարելով:

Ուշագրավ փաստ է. 1926 թ. Մարիետա Շահինյանը «Պրավդայի» հանձնարարությամբ այցելել էր Լեռնային ինքնավար մարզ, ծանոթացել նրա տնտեսության խայտառակ վիճակին, մշակութային ու լուսավորական զարգացման «տարերային առաջաշրջին» և գրեց, թե մարդիկ այստեղ իրենց մարզի վերելքը կազմակերպում են «դատարկ ձեռքերով, որովհետև այս հրաշալի երկրամասի բյուջեն ամբողջ երկրում ամենաողբերգականներից մեկն է իր զրկվածությամբ»[298]:

Հանրապետության կառավարությունը մարզին զրկել էր պետական բյուջեից, խնայում էր ամենաչնչին օժանդակությունն անգամ, երբ ինքնավարության հռչակման աղմկալից օրերին կուրծք ծեծելով խոստացել էր ամենակարճ ժամանակում վերականգնել ադրբեջանաթուրքական հրոսակների կողմից հիմնահատակ ավերված Շուշի քաղաքի հայկական մասն ու մարզի ավելի քան երեք տասնյակ գյուղերը, ոռոգման ցանցով ծածկել շրջանների ցանքատարածություններն ու այգիները, վիթխարի գումարներ հատկացնել մշակութային շինարարության համար, մարզը դարձնել օրինակելի լուսավորության երկրամաս: Սակայն ոչ միայն չկատարեց իր խոստումներից և ոչ մեկը, այլև խանգարեց, խափանեց ամեն մի առաջաքայլ, տնտեսական ու մշակութային ամեն մի նախաձեռնություն, որ մարզն էր իրականացնում տեղական խղճուկ բյուջեի կամ մարզի տնտեսությունների ողորմելի մասհանումների հաշվին: Լեռնային Ղարաբաղը հիմնականում գյուղատնտեսական երկրամաս է, և գյուղատնտեսության մեջ էլ առաջավոր դեր են խաղում հացագործությունն ու այգեգործությունը: Այս բնագավառների զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ էր ստեղծել վերամշակման առաջնակարգ արտադրություններ, մեքենայական հզոր պարկ, առաջնակարգ տեխնոլոգիական հնարավորություններ, որ մարզը երբեք չի ունեցել և այսօր էլ չունի: Պակաս խոսուն չէ այն հանգամանքը, որ հացագործությամբ փայլող մարզն առ այսօր չունի և ոչ մի ալրաղաց և, իր սպառածից հինգ-տասը չափ ավելի հաց արտադրելով հանդերձ՝ վերևների ձեռքին է նայում իր օրվա հացն ստանալու համար:

Պատերազմից հետո մարզի ղեկավարները միութենական կառավարության դռները մաշելով աջողացրել էին, որ Ստեփանակերտում կառուցվի գյուղատնտեսական մթերքների վերամշակման հզոր կոմբինատ, որպեսզի մարզի այգիների ու բանջարանոցների առատ, հրաշալի բերքը տեղում մշակվի և ոչ թե փչանա կամ, լավագույն դեպքում, չնչին հատուցմամբ վերամշակման տրվի հեռու-մոտիկ ադրբեջանական շրջանների կոմբինատներին ու ֆաբրիկաներին: Ստեփանակերտի կոմբինատը կառուցվում էր, առաջնակարգ տեխնոլոգիական սարքավորումներ էին ստացվել Չեխոսլովակիայից: Եվ երբ

[298] Мариета Шагинян, Нагорный Карабах, М., 1930, стр. 5.

շինությունը պատրաստ էր, ու սարքավորումները պիտի տեղադրվեին, հանրապետության ղեկավարությունն անմիջապես սարքավորումները փոխադրել տվեց Կիրովաբադ ու Նուխի քաղաքները, իսկ Ստեփանակերտում կառուցված վիթխարի շենքն էլ կարգադրեց օգտագործել «այլ նպատակների համար»… Մարահնչալ տեղական ղեկավարները ոչինչ չէին կարող անել, քան շենքը կոշիկի ֆաբրիկա դարձնելն էր, որովհետև կոշիկ կարելու համար վիթխարի սարքավորումներ հայթայթելու կարիք չկար:

Մինչև 1970-ական թվականները, այսինքն՝ խորհրդային կարգերի ավելի քան հիսուն տարիների ընթացքում, պետական բյուջեի հաշվին չի կառուցվել և ոչ մի դպրոցական շենք, ակումբ, մշակույթի տուն, մարզական, առողջապահական կամ հասարակական այլ շինություն: Հ. Ալիևն իր մեծապատվական այցելությունների ժամանակ քանի՜ցս երդում-հավատով խոստացել էր մարզի կենտրոնում կառուցել տալ պիոներների պալատ, սակայն երբ միջոցները հայթայթվել էին, և մնում էր նախագիծ պատրաստել շինարարությունն սկսելու համար, կարգադրեց, որպեսզի այդ միջոցներով ղազախցի ադրբեջանական բանաստեղծ Վագիֆի դամբարան-թանգարան կառուցվի Շուշիում:

Արցախական աշխարհի բոլոր գետերն էլ՝ Թարթառն ու Խաչենը, Կարկառն ու Բալուջան, Իգակն ու Իշխանագետը, լեռնային, գահավիժ հոսող ջրեր ունեն ու կարող են աշխատացնել անհամար մեծ ու փոքր հիդրոէլեկտրակայաններ, որոնց արտադրած էներգիան կլինի ամենաէժանը:

1930-ական թվականներին Թարթառի միջին հոսանքներում, պատմական Մատաղիս ավանի մոտ, կառուցվել էր հիդրոկայան, որը բավարարում էր ոչ միայն Մարտակերտի շրջանի, այլև հարևան Միր-Բաշիրի, Աղդամի ու Բարդայի շրջանների բնակավայրերի մեծ մասի պահանջները: ՀԷԿ-ի կառուցումը, որն իրականացվել էր համարյա մերկ ձեռքերով, տեղական ուժերի նախաձեռնությամբ (հակառակ հանրապետական անբարյացակամությանը), ստեղծել էր համապատասխան շինարարական կադրեր՝ ինժեներատեխնիկական աշխատողներից մինչև շարքային բանվորություն: Եթե հնարավորություն ընձեռվեր, նրանք Թարթառի ու Խաչենի ամբողջ երկարությամբ ուլունքաշարի պես մեծ ու փոքր ՀԷԿ-եր կկանգնեցնեին, և մարդը լիուլի կբավարարվեր ամենաէժան էլեկտրաէներգիայով: Սակայն հանրապետության ղեկավարներին այդ բավարարումն ակնթարթում իսկ տեսնում էին մի ահավոր վտանգ և պատերազմի նախօրեին փակեցին Թարթառհէկ-ը, կարճ ժամանակում քարուքանդ արին տասնապատիկ ի մի բերված սարքավորումների, ավերեցին շինությունները, թե ի՞նչ է, Կուր գետի վրա Մինգեչաուրի հիդրոհանգույց է հիմնադրվում, և ոչ մի կարիք չկա, որպեսզի հանրապետության տարբեր մասերում գոյություն ունենան ջրատնտեսական ուրիշ կառույցներ: Մարզը ոչ միայն չափազանց մեծ չափերի հասնող ֆինանսական վնաս կրեց՝ կորցնելով հարյուր միլիոնների հասնող նյութատեխնիկական հնարավորությունները, այլև զրկվեց մասնագիտական բանուժից, որը գայթակղիչ խոստումներով փոխադրվեց Մինգեչաուրի հիդրոհանգույցի շինարարության և հանրապետության այլևայլ շինհրապարակներ:

Մատաղիսի նախկին բանավանի ու ՀԷԿ-ի հրաշքով փրկված շինություններում քամիներ էին խաղում: Մարզի ղեկավարները պատերազմի ծանր պայմաններում այնտեղ ստեղծեցին փայտամշակման գործարան և լուցկու ֆաբրիկա: Միութենական համապատասխան գերատեսչությունների բարյացակամությամբ էլ բուսական հումքի վրա կաուչուկի արտադրություն հիմնեցին, որովհետև Մարտակերտի դաշտի մի հսկայական տարածության վրա սոյա էին աճեցնում և, մասնագետների կարծիքով, այն, սոյա մշակող ուրիշ շրջանների համեմատությամբ, տալիս էր ամենաէժան ու ամենաորակյալ հումքը:

Ադրբեջանի ղեկավարներն այսքանի մեջ էլ տեսան հեռահար Մատաղիսի հետապնդող դավադրություն և վերացրին ինչպես կաուչուկի գործարանն ու նրա հիմքը՝ սոյայի արտադրությունը, այնպես էլ փայտամշակման գործարանն ու լուցկու ֆաբրիկան: Մարզն իրավունք չուներ փայտ մշակելու: Նա միայն պետք է կտրեր իր անզուգական անտառների

ընտիր ծառերը, գերանները համարյա անվճար ուղարկեր Կիրովաբադի ու Բաքվի փայտամշակման գործարանները:

Երբ Մատաղիսում վերացնում էին բուսական կաուչուկի արտադրությունը, օդը լիքն էր Սումգայիթի հիմնադրության, նրա կաուչուկի և այլազան արտադրական հեռանկարների պարգևելիք մարդկային երջանկության խոստումներով: Մինգեչաուրը, իբր, քիչ աշխատուժ էր անդարձ կլանել Արցախից, հիմա էլ Մարտակերտից ու մյուս շրջաններից սկսվեց վարար մի հոսք դեպի այդ օտար արշավավայր: Չի կարելի մոռանալ և Ստեփանակերտի ՀԷԿ-ի պատմությունը: Հենց քաղաքի փեշով հոսող Կարկառի վրա կառուցվել էր էլեկտրական, որը բավարարում էր մարզկենտրոնի էներգետիկ պետքերը: Հանրապետության ղեկավարները երևի մտածում էին, թե այս հնարամիտ արցախցիք կվերցնեն ու Կարկառի ամբողջ հնարավորությունը կօգտագործեն, այն ժամանակ էլ ո՞ւմ պետք կլինի Մինգեչաուրից տալիք ողորմությունը: 50-ականների սկզբին Ստեփանակերտի ՀԷԿ-ն էլ փակեցին:

Եվ այսպես, աստծո տված ամեն տեսակ բարիքներ ու հնարավորություններ ունեցող Արցախն էլեկտրական էներգիայի տեսակետից դարձավ միայն սպառող, որը, կապված Մինգեչաուրին, պարտավոր էր վիզը ծուռ նայել Ադրբեջանի ձեռքին: Անցյալ տասնամյակներին շատ է պատահել, որ զանազան պատրվակներով հոսանքը կտրեն և մարզը թողնեն նավթի ճրագի հույսին… Իսկ հիմա Արցախը շրջափակված է, և Մինգեչաուրում նստած ինքնավար մարզի «լուսավորիչը» ուզի լույս կտա, չուզի՝ կկտրի աչքն: Արդեն քանի՛ անգամ այս ուղղությամբ էլ իր պայմանն է առաջարկել «Ազգային ճակատ» կոչվածը. «թե ուզում եք էլեկտրական լույս ունենալ, ձեռ քաշեք ձեր այդ **միացումից**»:

Արցախը պատմական Հայաստանի ամենաբարեբեր նահանգներից մեկն է, արցախցին՝ աշխատասեր, հնարամիտ ու ձեռներեց: Այս երկուսի պսակը միշտ էլ եղել են նյութական ապահովությունը, մշակութային բարեբաստիկ ընթացքը և վարչական ինքնուրույնությունը: Սա՝ պատմական անցյալի առումով: Իսկ խորհրդային անցած 70 տարիների ընթացքում հատուկ ծրագրով վերացվել կամ նվազագույնի են հասցվել այդ հնարավորությունները, և մարդը հայտնվել է մի խեղճ վիճակում, որից դեռևս այնպես անհնար է պատկերացնել:

Դժվար է մեկ առ մեկ թվարկել, ցույց տալ այդ հայակործան ծրագրի բոլոր կետերը: Բայց նայենք մարզի արդյունաբերությանը: Նրա ամենազոր օղակը Ղարմետաքսկոմբինատն էր՝ Խորհրդային Միությունում բնական մետաքս արտադրող երեք խոշորագույն ձեռնարկություններից մեկը: Վերջին տարիներին այն արտադրում էր տարեկան շուրջ 16 միլիոն մետր մետաքսեղեն, բնական ամենաթանկարժեք մետաքսի գործվածքներ: Սակայն կոմբինատն ու նրա տեր մարդը հազիվ քարշ են տալիս իրենց գոյությունը, որովհետև հանրապետության ղեկավարությունը հմտորեն այս կոմբինատը կապել էր իրենից ավելի փոքր հզորություն ունեցող Նուխի-Շաքիի կոմբինատի պոչին և քամում է ու քամում:

Ստեփանակերտի մետաքսկոմբինատն ստեղծվել է նախախորհրդային շրջանում մարզի ամբողջ տարածքում հաջողությամբ գործած մետաքսամանածական ու մետաքսագործական ֆաբրիկաների հիմքի վրա: Այս ձեռնարկները մեծ հռչակ ունեին Ռուսաստանում ու Եվրոպայում, իրենց հրաշալի մետաքսեղեն արտադրանքի համար տասնյակ ու տասնյակ մրցանակներ էին շահում միջազգային տոնավաճառներում...

Բայց ահա սրանց հիմքի վրա ստեղծված վիթխարի կոմբինատը ոչնչի էլ չի տիրանում, որովհետև… միայն մետաքսեղեն հումք է արտադրում Շաքիի կոմբինատի համար, էժանագին հումք, որով ո՛չ անուն են հանում, ո՛չ փառք բերում, ո՛չ էլ գանձ հարստություն:

Իր սեփական ավարտուն մետաքսե արտադրանքը տալու համար Ղարմետաքսկոմբինատին միայն մի բան է պետք՝ ներկարարական ցեխ, որը չունի և չի կարողանում ստեղծել, քանի որ հանրապետության ղեկավարությունը չի ուզում և թույլ չի տալիս:

Տասնամյակներ շարունակ մարզի շինարարական աշխատանքները ենթարկվում էին Մինգեչաուրի շինտրեստին, տեղական շինանյութեր արտադրող ձեռնարկությունները՝ Աղդամի կոմբինատին, նույնիսկ իր հսկայածավալ անտառային հարստություններն ունեցող Ղարաբաղյան անտառարդը՝ առհասարակ անտառագուրկ Աղդամի շրջանի գյուղատնտեսական բաժին:

Վերև ցույց տրվեց արցախյան գետերի էներգետիկ պաշարների հանդեպ ցուցաբերած հանցագործ վերաբերմունքը: Նույնը պիտի ասել այդ երբեք չցամաքող գետերի ու գետակների մելիորատիվ անհուն հնարավորությունների մասին: Ջրերը հոսում են ապարդյուն, առանց հագեցնելու մարզի հողատարածությունների մշտագո ծարավը, որովհետև հանրապետության կառավարությունը տասնամյակներ շարունակ մարզին միջոցներ չէր հատկացնում ջրատնտեսական աշխատանքներ կատարելու, ջրամբարներ կառուցելու, ոռոգման ցանց ստեղծելու համար:

Պատերազմից հետո Կուր գետի վրա կառուցվեց Մինգեչաուրի հիդրոհանգույցն իր վիթխարի ջրամբարով: Հանգույցի կառուցմանն իր մասնակցությունն էր ունեցել Արցախի հայությունը՝ ինչպես կառավարության պարտադրած աշխատանքային հավաքագրումներով, այնպես էլ ոգևորված այն կախարդիչ խոստումներով, թե հանրապետության ամբողջ տարածքում ստեղծվելիք ոռոգման ցանցի մեջ է առնվելու նաև Լեռնային Ղարաբաղի տարածքը: Սակայն շինարարությունն ավարտվեց, մարզի ամբողջ լայնությամբ կտրեցին-անցան Աղդամի, Կարյագինոյի ու Ջաբրայիլի շրջանների հողատարածությունները ոռոգող առուները, իսկ մարզում ոչ մի քառակուսի մետր հող ոռոգման հնարավորություն չստացավ, որովհետև առուները փորվել էին 8—10 մետր խորությամբ, և նրանց ամբողջ երկարությամբ էլ գիշեր-ցերեկ ադրբեջանցի հսկիչներ էին կարգված, որպեսզի չլինի թե առուների եզրերին խաշվող արտերի, այգիների ու բանջարանոցների տեր հայ մարդիկ որևէ հնարքով այդ ջրերից օգտվեին:

Երբ Արցախի անիրավված տերերը բողոքում էին, պատասխանը մեկն էր լինում. «Շուտով Թարթառի վրա խոշոր ջրամբար ու ՀԷԿ կկառուցենք, և մարզի բոլոր պահանջները կբավարարվեն»: Այն էլ կառուցվեց Սարսանգ տեղամասում՝ կլանելով հայկական չորս գյուղ, մի քանի հազար հեկտար ցանքատարածություն ու անտառ: Եվ երբ ամեն ինչ ավարտվեց, ՀԷԿ-ն ու ջրամբարը գործարկվեցին, պարզվեց զավեշտական մի բան. Մարդակերտի շրջանը, որ իբր թե հիդրոհանգույցի տերն էր, ջրամբարից հիմա ավելի քիչ էր օգտվում, քան առաջներում Թարթառից հանված ձեռնաշեն առուներով... Եվ, մանավանդ, հանգույցի տնօրենը նստում էր հարևան Միր-Բաշիրի շրջկենտրոնում և այն էլ ջրերը բաշխում էր միայն ադրբեջանական շրջանների վրա:

Վերը շարադրված փաստերը սովորական տրամաբանության ու բարոյական նորմերի հետևող մարդուն կարող են թվալ անհեթեթ ու անհավանական. ինչպե՞ս թե հանրապետության ղեկավարությունը մեթոդիկ կերպով խարխլում, հետամնացության մեջ է պահում տնտեսությունը մի մարզի, որի հզորությունն ու հարստությունը նաև իրենն են: Այդպե՞ս է իրականում. թող Մարտունու և Մարդակերտի հացագործներն ու խաղողագործները չնչին բերք ստանան, թող ամայանա Հադրութի շրջանը... Չէ՞ որ դրա վերջը մարզի հայաթափ դառնալը պիտի լինի:

Մենք սիրում ենք ամեն առիթով, նաև անառիթ, հիշել մեր հին ու նոր զորապետերին, նրանց ռազմի սխրանքներն ու ռազմավարական իմաստությունը: Եվ չի պատահում, որ ուշադրության առնենք նաև մեր ռազմավարության ճակատագրական սխալները, անհնար դարձնենք դրանց կրկնությունը: Սակայն դիտելով ու քննելով մեր հարևանի՝ այդ երեկվա վաչկատունի արած-թողածը, չես կարող քար չկտրել նրա անթերի ռազմավարությունից, որը չի տալիս ոչ մի վրիպում:

Մենք տեսանք, որ 1918—20 թթ. թուրքութիւնն ու նրա գրագետ ու անգրագետ ժառանգները մեզ հետ ամեն անգամ ոտք գցելիս բնազդով թե իրենց արյան անսխալ թելադրանքով կատարում էին իրենց համար ամենաձեռնտու քայլերը: Ինչպե՞ս կարողանում էին լեզու

գտնել երկրամասի բախտը տնօրինելու համար այստեղ եկած ամեն տեսակ օտարի հետ, անգլիացին լիներ դա թե ֆրանսիացին, ռուսը թե իր ցեղակից թուրքը:

Իսկ երկիրը ձեռք ձգելու և ձեռքից չտալու նրա հնարամտությունը: Այն թուրքութեան մեջ իրենց փոքրաքանակ թվով ավերեցին Շուշվա հայկական մասը և շուրջ հիսուն հայկական գյուղեր ու ավաններ, որոնք հիմնականում այնպես ավերակներ էլ պիտի մնային, իսկ բնակիչները՝ գաղթականի, հայրենազուրկի ախտավոր դերի:

Այսքանից հետո արցախցիների վրիժառությունը բռնել էր. 1920-ին Ղուշչի, Քյաթուկ, Ղայբալու, Հարավ, Բալուջա և այլ գյուղերը վրա տվին, իրենց օղակի մեջ գտնվող Մալիբեյլին ավերեցին և նրա թուրք բնակիչներին էլ փախստական դարձրին:

Այս հայ գյուղերը շատ մեծ ոխ ունեին Մալիբեյլիի դեմ. նա էր, որ իբրև սոված գայլերի որջ, անվերջ կողոպտում էր հայ հարևանների տներն ու գոմերը: Ապա Շուշուց դեպի Վարանդա ու Խաչեն տանող ճանապարհների վրա լինելով՝ դարանակալում, արգելվում էր հայերի ազատ երթևեկն իրենց սեփական գյուղերում ու գավառից գավառ:

Ո՞վ կմտածեր, թե հողին հավասարեցված Մալիբեյլին մեկ էլ կկենդանանա և նորից կդառնա մարզի կենտրոնից դեպի հարավ ու արևելք տանող ճանապարհների տերը: Երբ խաղաղ ժամանակ էր, հին մալիբեյլեցիներն ու նրանց նոր զինակիցներն անաղմուկ հավաքվեցին, եկան (իհարկե, իրենց սեփական պետության ամենայն աջակցությամբ), կառուցեցին նոր մի այնպիսի Մալիբեյլի, որը պատուհաս պիտի դառնար ինքնավար մարզի համար:

Նույնը կատարվել է նաև մարզի մյուս վայրերում: 30-ական թվականներին, ցուցադրական «եղբայրության» դրոշի տակ, դաշտի կողմից մի քանի քոչվոր գերդաստաններ էին խուժում Մարտունու շրջանը: Վրաններ խփեցին Նորաշեն Մարտունի շրջկենտրոնի կողքին, մեկ էլ ավելի վերև, Կաղարծի ու Հադրութի գյուղերի արանքի ձորակում: Երկուսն էլ մարզի կենտրոնով անցնող միակ ճանապարհի վրա: Բայց ինչո՞ւ հենց այդտեղ, ո՞վ էր նրանց հուշել, թե թուրքը պիտի նստի հայի ճանապարհի վրա և դառնա նրա տերը: Հիմա Մարտունուն կպած է Խոջավանդ կոչված վիթխարի գյուղը, որ երևի թե Մութաֆիրովի հրովարտակով քաղաք հռչակվելու մեծ հեռանկար ունի: Իսկ վերև, Հադրութու և Կաղարծու միջև օրըստօրե ուռճանում-տարածվում է Ղարադաղլուն: Երկուսն էլ տիրել-բռնել են Մարտունի-Ստեփանակերտ խճուղին և ուզեն, այն կփակեն, որպեսզի վարանդեցին հույսը դնի երեկվա քոչվորի ու այսօրվա բռնավորի ողորմածության վրա:

Եվ չկարծեք, թե դրությունն այսպես է միայն շրջաններում: Իսկ մարզի կենտրոն Ստեփանակերտո՞ւմ: Այն օղակված է դարձյալ երեկ-մեկել օրվա այս երկարամյա ժամանակ վրանաբնակների գյուղերով (Կրկժան, Քյասլար, Ջամիլլու, Խոջալու ևն), որոնք հանրապետության ամենօրյա հոգատարությամբ աճում-ծավալվում են, և հեռու չէ այն օրը, երբ ասելու են՝ մենք ենք այս վայրերի տերն ու տիրականը, թող ձեր Ստեփանակերտը քաշվի-հեռանա:

Այսպիսին է վիճակը նաև մյուս շրջանների՝ Մարդակերտի, Հադրութի, Շուշվա շրջաններում: Ներքին ճանապարհների վրա, ռազմավարական ամենակարևոր կետերում տնկված են երեկվա քոչվորների նոր բնակավայրերը, որոնք տիրություն են անում, ավելի ճիշտ՝ «կարգավորում» են հայերի անցուդարձը:

Իսկ միջշրջանային ճանապարհնե՞րը: Այդպիսիք չկան, եթե նկատի չունենանք հին ու խորդուբորդ սայլուղիները, որոնք բոլորն էլ անցնում են հարևան թրքական շրջաններով: Այո՛, հանրապետության մարմինները երբեք միջոցներ չեն տրամադրել մարզի շրջաններն իրար կապող ասֆալտապատ կամ գոնե սովորական խճուղիներ անցկացնելու համար... Եվ օգտագործում են ավանդական խարխուլ ուղիները, որոնք Ստեփանակերտից Մարդակերտ տանելու համար պիտի անցնեն Աղդամի ու Բարդայի շրջաններով, Մարտունուց Հադրութ տանելու համար՝ Ֆիզուլու շրջանով... Նույնիսկ Հադրութ շրջկենտրոնն իր գյուղերի մեծ մասի հետ կապ ունի միայն հարևան ադրբեջանական շրջանների տարածքներով:

Ազգային խտրականության, ճնշման ու հալածանքի քաղաքականությունն առավել մոլեգնորեն կիրառվել է մշակույթի ու ժողովրդական կրթության ոլորտներում:

Ինքնավարության առաջին տարիներին, հավանաբար Անդրֆեդերացիայի հսկողության ներքո, մարզը կապված էր Հայկական ԽՍՀ մշակութային ղեկավար կազմակերպությունների հետ, համատեղ միջոցառումներ էին կազմակերպվում արցախահայությանը հանրապետության բնակչության մշակութային առաջընթացին համաքայլ առաջ տանելու համար: Մարզում հայերեն դասագրքեր էին տպագրվում, լույս էին տեսնում հայերեն գրական հանդես, երիտասարդական թերթ...

Սակայն աստիճանաբար վերացան այս բոլորը: Անբեկանելի կարգով մարզի առողջապահությունն ու ժողովրդական կրթությունը պետք է մասնագետներ ստանային միայն Բաքվից, և այդ մասնագետներն էլ պետք է լինեին միայն ադրբեջանցիներ: Մարզի հայկական դպրոցը երկաթե վարագույրով անջատվեց մայր Հայաստանի դպրոցական կյանքից: Ոչ միայն դպրոցը, արցախահայն այնպես բաժանվեց իր ազգային վարչական ու մշակութային առավել խոշոր միավորից, որ Հայաստան ուսման գնալը կամ այնտեղ կատարած սովորական երթևեկը դիտվում էր որպես քաղաքական անհուսալիության բացասական դրսևորում: Սակայն առավել վտանգավորն ու դատապարտելին համարվում էր Հայաստանի հայի հայտնվելն Արցախում, նրա որևէ առնչությունն Արցախի հասարակական կյանքի հետ: Հայ գրողը, հայկական մշակույթի գործիչը, հայ գիտնականն ու արվեստագետը իրավունք չունեին ոտք դնելու Արցախ, հանդիպելու իրենց հայրենակիցների հետ, որոնք, իբր թե, ունեին սեփական ինքնավարություն և կարող էին օգտվել դրա ընձեռած ազգային մշակույթի ու առաջադիմության պտուղներից: Միայն 1948 թ. ամռանն Ավետիք Իսահակյանը համարձակվեց այցելել Արցախ, և կուսակցության մարզկոմում ու Ստեփանակերտի ինստիտուտում էլ հայ մարդիկ համարձակվեցին ընդունել իրենց ազգային սրբություն բանաստեղծին... Եվ դա բավական էր, որ Մ. Ջ. Բաղիրովը կուսակցության մարզային արտահերթ կոնֆերանս հրավիրել տար, մարզկոմը ցրեր, իսկ մարզում էլ կազմակերպվեր գաղափարական շախմատի ու ձերբակալությունների տևական մի շրջան, բանտ ու աքսոր քշեր Գրողների միության մարզային բաժանմունքի քարտուղար Բագրատ Զալյանին, Ուսուցչական ինստիտուտի ռեկտոր Աղասի Սաֆարյանին, դասախոսներ Արտավազդ Ալվազյանին, Ռուբեն Ալավերդյանին, Խորեն Բալասանյանին և ուրիշ մտավորականների: Այս գործող եղանակը՝ մայր ազգի ու նրա ներկայացուցիչների ամենասովորական, ամենաանմեղ մի հանդիպումը, դատապարտել, որպեսզի այնուհետև ոչ ոք երազում անգամ չհամարձակվի Երևան տեսնել, հանդիպել կամ շփվել Հայաստանը ներկայացնող որևէ նշանավոր մարդու հետ: Եվ սա՝ ոչ միայն բաղիրովյան բռնապետության տասնամյակներում, այլև բոլոր ժամանակներում, նույնիսկ խրուշչովյան, այսպես կոչված, ձնհալի կարճ շրջանում:

Իհարկե, Ստալինից հետո, մանավանդ խրուշչովյան «ժողովրդավարության» առաջին տարիներին, մենք խաբկանք ունեցանք կարծելու, թե բացվել են ազատության բոլոր դռները: Արցախի ճանապարհը բանուկ դարձավ Հայաստանի գրողների, մշակույթի մյուս բնագավառների գործիչների համար: Առաջինը Հրաչյա Քոչարն էր, որ 1956-ին ոտք դրեց Ստեփանակերտ, ծանոթացավ մարզի շրջաններին: Թարթառի հովտում գինովցած, արտասուքը թաց աչքերում շողացնելով ասաց. «Հայը եթե դրախտ է ունեցել՝ սա՛ է: Ես էլ մտածում էի, թե Մամեդն ինչո՞ւ ձեռից բաց չի թողնում»: Ապա եկան Նաիրի Զարյանը, Սիլվա Կապուտիկյանը, Գևորգ Էմինը, Պարույր Սևակը, Հրաչյա Հովհաննիսյանը: Իսկ Համո Սահյանի, Սերո Խանզադյանի, Սուրեն Այվազյանի, Սողոմոն Սողոմոնյանի համար Արցախն արդեն պապենից տուն էր...

Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի բեմը վայելեց Վահրամ Փափազյանի ու Հրաչյա Ներսիսյանի փառավոր ներկայությունը, Թաթուլ Ալթունյանի երգի-պարի անսամբլի և ուրիշ խմբերի ելույթները:

Սակայն սա կարճ մի պահ էր, մեկ հնգամյակ, թերևս մի քիչ ավելի: Մամեդը գլխի ընկավ, թե ի՛նչ կարող է հետևել այդ այցելություններին և... ժանիքներ ցույց տվեց:

Մի իմաստասեր ասել է՝ եթե ուզում ես ազգի այսօրն ու վաղը տեսնել առավել շոշափելի, նայիր նրա դպրոցին: Արցախի հայկական դպրոցների համար ուսումնական ծրագրեր էր կազմում Ադրբեջանի լուսավորության մինիստրությունը, որը եթե ետպատերազմյան տարիներին, շուրջ մեկ տասնամյակ, հանրապետության հայկական շրջանների բողոքներն ու համառ պահանջները, իբր, բավարարելու համար, պահում էր մինիստրի մի հայ տեղակալ, այն էլ հիմնականում հայոց լեզվին չտիրապետող, ապա նախորդ ու հաջորդ տասնամյակներին չէր պահում և ոչ մի աշխատող, որն ունենար նվազագույն հնարավորություն՝ հայոց դպրոցի ներսն ու դուրսը հասկանալու: Իհարկե, այս չէր պատճառը, որ հայկական դպրոցի համար այս մինիստրության ստեղծած ծրագրերում ոչ միայն իսպառ բացակայում էր հայ ժողովրդի պատմությունը, այլև առհասարակ որևէ խոսք հայ ժողովրդի կենսագրության, նրա ստեղծած մշակույթի, պատմական կամ թեկուզ ժամանակակից Հայաստանի աշխարհագրության մասին: Խորհրդային կարգերի առաջին երեք տասնամյակներին ադրբեջանական համալսարանը, իսկ մինչև 70-ական թվականները՝ նաև Բաքվի մանկավարժական ինստիտուտը, ունեցել են հայկական բաժանմունք՝ հայոց լեզվի ու գրականության, պատմության ու աշխարհագրության և բնական գիտությունների ֆակուլտետներով: Հայ ժողովրդի պատմություն չէին անցնում այդ ֆակուլտետներից և ոչ մեկում, ներառյալ և պատմության ֆակուլտետը: Մինչդեռ Ադրբեջանի պատմությունն անցնում էին և այն էլ այնպիսի դասագրքերով, որտեղում կողոպուտի էին ենթարկված Հայաստանի հին ու միջնադարյան պատմությունը, հայ ժողովրդի բազմադարյան մշակույթի գանձերը:

Ստացվում էր այնպես, որ Ադրբեջանի բուհերում կրթություն ստացած հայ պատմաբան-ուսուցիչներն իրենք ստիպված պիտի լինեին զբաղվել բացահայտ հակահայկական կեղծարարություններով, առանց տեղեկություններ ունենալու իրենց ազգային պատմությունից: Իսկ եթե այդպիսիք ձեռք կբերեին ծրագրից դուրս և կփորձեին հաղորդել իրենց աշակերտներին, ապա պիտի դատապարտվեին իբրև ազդաշնականներ, «դաշնակ թափթփուկներ» և վռնդվեին մարզի դպրոցական ցանցից:

70-ական թթ. սկզբին Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժինը փակվեց, և փոխարենը մարզի կենտրոն Ստեփանակերտում հեռահար մի նպատակով ստեղծվեց մանկավարժական ինստիտուտ՝ հայկական ու ադրբեջանական բաժանումներով: Այստեղ ևս հայ ժողովուրդն պատմություն չուներ և ոչ մի իրավունք: Բայց, ըստ էության, կարևորը ոչ թե դա էր, այլ այն հանգամանքը, որ Ստեփանակերտում, մարզի ու հարակից շրջանների շուրջ մեկ միլիոն հայ բնակչության համար բացված ինստիտուտի 65—70 տոկոսը կազմում էր ադրբեջանական բաժանմունքը, որն այստեղ, Բաքվի, Կիրովաբադի, Նախիջևանի ադրբեջանական մանկավարժական ինստիտուտների գոյության պայմաններում, պարզապես չուներ ոչ մի անհրաժեշտություն, բացի նրանից, որ կոչված էր փոխել մարզի կենտրոնի մաքուր հայկական ազգագրական պատկերը: Չէ՞ որ ադրբեջանական բաժանմունքն իր հետ Ստեփանակերտ էր բերել ադրբեջանցի դասախոսների, վարչական աշխատողների, այլևայլ սպասարկողների ու նրանց հարազատների մի ահռելի քանակություն: Ինստիտուտին էլ հետևեցին Ստեփանակերտում գործող հայկական բժշկական ու գյուղատնտեսական տեխնիկումներին, մանկավարժական ուսումնարանին և այլազան կրթական հաստատություններին կցված ադրբեջանական բաժինները:

60-ական թվականներին Ստեփանակերտում բացել էին արհեստագործական, հիմնականում շինարարական կադրեր պատրաստող մի ուսումնարան: Այն գայթակղիչ պայմաններով սաներ էր հավաքագրում միայն մարզի գյուղերից և կադրեր էր պատրաստում Ադրբեջանի շրջանների ու քաղաքների համար: Ամեն տարի այն թողարկում էր 250—300 երիտասարդ ու պատանի արհեստավոր, որ նշանակում է՝ ամեն տարի Արցախում առնվազն մեկ գյուղ էր դատարկվում... առնվազն, քանի որ գնացող երիտասարդի հետո էլ իր ետևից պիտի տաներ նշանածին, ծնողներին ու մյուս հարազատներին:

Այս և նման միջոցառումները շատ շուտով ցուցադրեցին իրենց կործանարար արդյունքը. եթե 1923 թ. հայերը մարզի բնակչության 94,4 տոկոսն էին կազմում, 1959-ին՝ ավելի քան 80, ապա 80-ականների սկզբին իջել էին 75 տոկոսի:

Ըստ երևույթին ադրբեջանական մոլեռանդությանն այս արդյունքն էլ չէր բավարարում. մտածում էին գտնել ավելի հեշտ միջոցներ ու կարճ ուղիներ մարզը հայաթափ անելու, մեկընդմիշտ վերջ դնելու Հայաստանի ու հայ ժողովրդի հավակնությանն Արցախի նկատմամբ: Գործի անցան հանրապետության գիտնական-պատմաբանները, բանասերները, հնագետները ևն, որպեսզի իրենց նորագույն «հետազոտություններով» մեկընդմիշտ «հաստատեն», որ Արցախի ու շրջակա հայկական-հայաթափական գավառների բնակիչներն իսկական հայեր չեն, այլ Հայաստանի կողմից բռնությամբ հայացված աղվաններ, որոնք էլ իրենց հերթին ներկայիս ադրբեջանական ժողովրդի անմիջական նախնիներն են հանդիսանում: Այս տեսությամբ ստացվում է, որ միայն 15—16-րդ դարերում Անդրկովկասում հայտնված օղուզ թուրքերը (այժմյան ադրբեջանցիների իսկական նախնիները) Անդրկովկասում մ. թ. առաջ և մ. թ. առաջին դարերում ապրած աղվանական ցեղերի անմիջական ժառանգներն են: Ժառանգները և նրանց ստեղծած նյութական ու հոգևոր մշակույթի տեր-ժառանգորդները: Իսկ սրանից էլ հետևում է, որ Արցախի ամբողջ տարածքում սփռված հուշարձանները, նույն տարածքում տարբեր պատմաշրջաններում ստեղծված գրական ու մատենագրական կոթողները ևս աղվանական-ադրբեջանական են: 1988 թ. ապրիլի 27-ին Ադր. ԽՍՀ Մինիստրների խորհուրդն իր հ. 145-րդ որոշմամբ աղվանական-ադրբեջանական էր հայտարարում Արցախի, Նախիջևանի, հին Ուտիքի և այլ տարածքներում գտնվող բոլոր ու ամեն տեսակ հուշարձանները՝ իսպառ մերժելով նրանցից որևէ մեկի այս կամ այն առնչությունը հայ ժողովրդի հետ: Զարմանալի է միայն, թե բռնագրավիչ ախորժակն ինչո՞ւ դեռ հիշված նահանգներով է գոհանում, երբ կարող էր նույն հաջողությամբ աղվանական-ադրբեջանական համարել մնացած Հայաստանի մշակույթը:

Այստեղ հարկ է նշել, որ Ադրբեջանի միշտ շովինիստական ու նպատակասլաց ղեկավարությունը խտրական քաղաքականություն է վարել ոչ միայն Լեռնային Ղարաբաղի հայոց ինքնավարության դեմ, և կրավորության մեջ չեն գտնվել կամ գոնե տանելի վիճակում չեն եղել հանրապետության մի շարք շրջաններում (Շահումյան, Խանլար, Շամքոր, Քարհատ ևն) բնակչության բացարձակ մեծամասնությունը կազմած հայերը, ինչպես նաև Բաքվի հայությունը: Հակառակը, եթե մարզում, ինքնավարության պարտադրանքով, հայ բնակչությունն տրվել է մշակութային-լուսավորական իրավունքների ինչ-ինչ փշրանքներից, ապա նշված շրջանների ու Բաքվի հայությունը նույնիսկ այդպիսի իրավունքներից էլ զրկված էր և ստիպված էր լինում կամ թողնել ավանդական բնակավայրերը, լքել անցյալ դարերում իր իսկ ձեռքով և տաղանդի ուժով ստեղծած նյութական ու հոգևոր մշակույթի բարձրարժեք հուշարձանները, կամ կորցնել իր ազգային հատկանիշները, ձուլվել բռնությամբ իր շուրջն ստեղծված օտար միջավայրին:

1988 թ., երբ Արցախի հիմնահարցը կրքեր էր բորբոքել, Ադրբեջանի ղեկավարներն ու պատմաբանները պնդում էին, թե Բաքվում բնակվում է ավելի քան 350 հազար հաշվով հայություն: Ուզում էին ասել՝ այդքան պատանդներ ունենք մեր ձեռքի տակ և չհամարձակվեր Արցախի հիմնահարցը սրել: Ինչ որ է, սա առաջին դեպքն էր, երբ Բաքվի հայության քանակի մասին ճշգրիտ տվյալ էր հաղորդվում:

Եվ ահա այն 350 հազար հայերը, որոնք պատերազմից առաջ Բաքվում ունեցել էին իրենց հայկական պետական դրամատիկական թատրոնը, մշակույթի տները, 79 միջնակարգ դպրոցները, հայկական բաժանմունքները Բաքվի համալսարանում ու մանկավարժական ինստիտուտում, հանրապետության ղեկավարության մեջ իրենց տասնյակ ու տասնյակ ներկայացուցիչները՝ կուս. Կենտկոմի քարտուղարներ, բաժինների վարիչներ, մինիստրներ ու այլազան գերատեսչությունների ղեկավարներ, 70-ականների երկրորդ կեսին չունեին այլևս ոչինչ, տառացիորեն ոչինչ, որ հիշեցներ իրենց ազգային պատկանելությունը:

Կործանել էին բոլոր շենքերը, որոնք իրենց վրա կրել էին հայկական ճարտարապետության դրոշմը: 30-ական թվականներին քաղաքի երեք տարի տևած շաբաթօրյակներով քանդեց հայոց գլխավոր եկեղեցին՝ միջազգային մրցանակաբաշխության արդյունքով (Հովի. Քաջազնունու նախագծով) կառուցված, երևի թե հայոց եկեղեցական ճարտարապետության ամենափառահեղ նմուշը հանդիսացող հոյակերտը: Հողին էին հավասարվել Գանձակի ու Նախիջևանի, Նուխիի ու Խաչմասի, հայկական մեծ ու փոքր ուրիշ բնակավայրերի եկեղեցիները, աշխարհիկ ճարտարապետության բոլոր երևելի նմուշները: Ընդ որում՝ ո՛չ միայն հները, որոնք մատնում էին այդ վայրերի հնամենի տերերի ազգային պատկանելությունը, այլև նորերը, որոնք կարող էին հիմք ու օժանդակ լինել, որպեսզի իրենց շուրջն ապրողները հիշեն որ իրենք հայ են, հպարտավարի ապրելու, ազգային իրենց կերպարանքը պահպանելու իրավունքով ու պարտականությամբ:

1960-ական թվականների կեսին Քարհատի (Դաշքեսան) շրջանի Բանանց հայկական գյուղում աշխատավորության հանգանակությամբ կանգնեցվել էր մի գեղեցիկ հուշարձան՝ այդ գյուղից Հայրենական պատերազմում զոհված 600 զինվորների հիշատակին: Հուշարձանի հեղինակներ, Խորհրդային Միության ժողովրդական ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն ու Հայաստանի ժողովրդական նկարիչ Արա Հարությունյանը հուշարձանի մեջ ամփոփել էին հայկական արվեստի հին ու նոր ավանդները, անմահացրել հայրենի երկրի նահատակների փառքը, որը նոր սերունդներին պետք է մղեր ազգային հպարտության ու ստեղծագործական վերակերտումների: Եվ շատ ժամանակ չէր անցել հուշարձանի հանդիսավոր բացումից, երբ մի երեկո, կուսշրջկոմի ու շրջգործկոմի նախագահների անմիջական ղեկավարությամբ, գյուղի էլեկտրական լույսերն անջատելուց հետո, բուլդոզերներն ու ամբարձիչ ծանր կռունկները կործանեցին հուշարձանը, ջարդուփշուր արին նրա առանձին մասերը: Այս անօրինակ սրբապղծությունը կատարվել է 1969 թ. գարնանը: Երբ շրջկոմի առաջին քարտուղար Սուլեյմանովին հարցրել են, թե ինչո՞ւ կատարեցին այդ բարբարոսությունը, նա առանց ավելորդ ձևականության պատասխանել է. «Մենք պատրաստվում ենք այդ հայերից մաքրել մեր հողը, իսկ իրենք նոր հուշարձաններ են կանգնեցնում»:

70-ական թվականներին Խանլարի շրջանի Չարդախլու գյուղում պիտի կանգնեցվեր Խորհրդային Միության կրկնակի հերոս, մարշալ Հովհաննես Բաղրամյանի կիսանդրին: Հայրենիքի փառապանծ հազարավոր զինվորների ու բազմաթիվ զորապետների հայրենի գյուղը, լեռնային այդ արծվաբույնը արժան էր պատվանդան դառնալու աշխարհահռչակ իր զավակի կիսանդրու համար, գալիք փորձություններում իրար կպահեին, կպաշտպանեին գյուղն ու կիսանդրին, այդ պաշտպանությամբ կհավերժանային: Այն ժամանակ հանրապետության ղեկավար Հեյդար Ալիևը խափանեց այդ միասնության հնարավորությունը և կիսանդրին կանգնեցնել տվեց Գանձակ-Կիրովաբադում՝ հայատյաց ու աշխարհավեր խուժանի աչքի առաջ[299]: Եվ պատահական չէ, որ արցախյան շարժման առաջին իսկ օրերին, Նելսոն Ստեփանյանի, Իվան Թևոսյանի ու հայ մյուս ականավոր գործիչների հուշարձանների հետ, առաջին կործանվածների մեջ էր նաև Բաղրամյանի կիսանդրին: Իսկ 1989-ին առաջիններից մեկն իր բազմադարյան տեղերից պարպվեց Չարդախլուն՝ երկու մարշալների, յոթ գեներալների, տասնյակ ու հարյուրավոր հրամանատարների ու զինվորների սրբազան հող-հայրենին:

Կարելի էր Ադրբեջանում տասնամյակներ շարունակ մոլեգնած ազգային խտրականության, իսկ իր իսկական անունով՝ վայրագ շովինիզմի այս օրինակները շարունակ թվել, և նրանց վերջը չի լինի: Իսկ ամենակարևորը՝ նրանք անառարկելիորեն կապացուցեն, որ Ադրբեջանի ղեկավարությունն այդ քաղաքականությունը որդեգրված է եղել խորհրդային կարգերի հաստատման սկզբից իսկ և հայ բնակչության նկատմամբ այն անվերջ ու անխնա կիրառել է հետագա բոլոր տասնամյակներին: Հետևապես և ստորաբար կեղծում են բոլոր նրանք,

---

[299] Երանի՜ մարշալը կենդանի լիներ, և մենք նրան հարց տայինք, թե այն ինչպե՞ս համաձայնեց, որ կիսանդրին կանգնեցվեր Գանձակում և ոչ թե իր ծննդավայր Չարդախլվում, ինչպե՞ս ենթարկվեց Ալիևի այն նենգապատիր գործարքին, և հետո էլ, երբ կիսանդրու բացման հանդեսին խոսք չտրվեց ո՛չ մի հայի, դրա համար ինչո՞ւ ցավ ու ամոթ չզգաց ինքը՝ հայ ժողովրդի զավակ զորավարը:

ովքեր փորձում են հավատացնել, թե ադրբեջանական վայրագությունները նոր երևույթ են, ծնունդ արցախյան հիմնահարցի ծավալումների:

1988 թ. փետրվարի վերջից ի վեր ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Ա. Ի. Վոլսկին Արցախում էր գտնվում: Իրատես և թափանցող մարդ լինելով՝ կարճ ժամանակում տեսավ, թե ինչն ինչոց է և հասկացավ իրադարձություններն իրենց ակունքներով ու պատճառներով: Հետագայում, երբ նրան ԼՂԻՄ-ի Հատուկ կառավարման ղեկավար էին նշանակել, կենտրոնական թերթի աշխատակցի այն հարցին, թե ո՞րն է արցախյան շարժման պատճառը, նա ազնվորեն նշեց ամենակարևորը: Ահա այն. «Ինչո՞ւ մարդիկ հարց էին դրել միավորվելու Հայաստանի հետ: Որովհետև տեսել էին, որ Ադրբեջանի նախկին ղեկավարությունը անվերջ ու անընդհատ մարդուն մղում էր փակուղի, ջանում էր կտրել հայ բնակչության բնական կապերը Հայաստանի հետ՝ մշակույթի, լեզվի բնագավառներում, հայալեզու մտավորականության դեմ կանգնեցրել էր վճռական արգելքներ: Այս ամբողջն իրական է: Այս ամբողջը ճշմարիտ է»:

Իսկ ո՞րն էր այդ ամբողջ իրականի ու ճշմարիտի արդյունքը: Այս հարցին պատասխան տալու համար էլ Ս. Ի. Վոլսկին կատարում է մի խոստովանություն, որն արդեն ճակատագրական է. «Երկրում շրջելիս, — ասել էր նա, — ես չեմ հանդիպել այնպիսի ավերվածության, մարդկանց ճակատագրերի հանդեպ այնպիսի արհամարհանքի, ինչպես Լեռնային Ղարաբաղում»[300]:

Քանի՛ տասնյակ տարի էր անցել Մարիետա Շահինյանի տեսածից ու արձանագրածից, ոչինչ չէր փոխվել: Հակառակը, Ադրբեջանի ղեկավարությունն այդ ամբողջ ընթացքում լոկ մի հոգս էր ունեցել՝ որքան կարելի է խոր ու անհուսալի փակուղի մղել մարդուն, նրա հայ բնակչությանը քաշել ստրկական ու գաղութարարական լծի տակ՝ հիմնարար մոռանալով, որ այդ հայությունը նույնիսկ թաթար-մոնղոլական, թուրքական ու պարսկական տիրապետությունների ժամանակ էլ պահպանել է իր ազգային ինքնությունն ու վարչական ինքնավարությունը:

Գրիգոր Հարությունով-Հարությունյան... Այս մարդուն կենդանության օրով և այնուհետև ծանոթներից ո՛չ մեկը, իսկ մոտ ծանոթություն ու առնչություն չունեցած և ո՛չ ոք չէր մտցնի հայ հայրենասեր ղեկավարների ցուցակը: Մտածում էին, թե 30-ականների խժդժությունների ժամանակ Ստալինին պետք է եղել իր մարդն ունենալ Հայաստանում, ուղարկել է որպես այդ քրքրված երկրի առաջին ղեկավար, և նա էլ իրեն պահել է տասնվեց տարի (1937—1953), իբրև Ստալինի կամակատարը:

Որպեսզի ջնջվի այս սխալ պատկերացումը հայ արժանավոր ղեկավարի մասին, բավական է հիշել, որ Հարությունովը Երևանն է կառուցել՝ մեր այսօրվա մայրաքաղաքի այն մասը, որը մենք հպարտությամբ համարում ենք մեր ազգային ճարտարապետության նոր ու աննախընթաց վերելքի ապացույցը: Կարող են ընդդիմանալ, ասել՝ դրա հանճարեղ նախագիծն ու հիմքերը Թամանյանն է դրել: Այո՛, դրել է, բայց հիմքերի վրա պետք է շենք կառուցվեր...

Եվ Հարությունով-Հարությունյանն եղավ այդ կառուցողը:

Ասում են՝ Մարտիրոս Սարյանը նրան կոչել է Գրիգոր Շինարար, և ժողովուրդը միահամուռ ընդունել է իր ղեկավարի այդ հարմար անունը:

Հիշենք նաև, որ մեր անցյալ ղեկավարներից և ո՛չ մեկը ստալինյան դժնյա ժամանակներում չհամարձակվեց ազգային կյանքին վերաբերող, այն էլ զորավոր հարևանների շահերը շոշափող մի այնպիսի հարցի հետ առնչվել, ինչպիսին արցախահայության ճակատագիրն է:

Մինչև վերջին ժամանակներս նույնիսկ մերձավոր գործակիցները, նրանք, որ 16 տարի հետն աշխատել էին Հայաստանի կուսակցական Կենտկոմում ու կառավարության օղակներում, բնավ տեղեկություն չունեին, որ Գրիգոր Հարությունով-Հարությունյանը միութենական

---

[300] «Պրավդա», 1989, հունվարի 15:

ղեկավարությանը, անձամբ Իոսիֆ Ստալինին է դիմել արցախի հիմնահարցով և արտահայտել է իսկական հայ-հայրենասերի իր դիրքն ու կողմնորոշումն այնպիսի վեհանձնությամբ, ինչպես և ո՛չ ոք իրենից առաջ ու իրենից հետո:

Հարությունով-Հարությունյանի դիմումը, ճիշտ է, ներկայացված է իբրև «Հայաստանի ԿԿ-ի ու Ժողկոմխորհի» առաջարկություն, սակայն տակը միայն ի՛ր ստորագրությունն է, և նրան մոտիկից ճանաչող մարդիկ այժմ դա բացատրում են նրանով, որ մարդը, գիտակցելով ժամանակի համար նման քայլի վտանգավորությունը, պարզապես լծակիցներին է հեռու պահել հնարավոր կործանարար պատասխանատվությունից:

Ինչ որ է, տեսեք նրա դիմումը, որ աչքի է ընկնում կուռ ու սպառիչ բովանդակությամբ և անավելորդ գործնականությամբ:

«ՀամԿ (բ) Կ Կենտկոմ, ընկեր Ստալինին.

Իոսիֆ Վիսարիոնովիչ,

Հայաստանի տարածքին հարող Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը 1923 թվականից մտնում է Ադրբեջանական ԽՍՀ կազմի մեջ:

Այդ մարզի բնակչությունը հիմնականում հայկական է: 153 հազար բնակիչներից 137 հազարը հայեր են:

Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսությունը հար ու նման է Հայաստանի լեռնային մասի գյուղատնտեսությանը: Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմի մեջ մտցնելը մեծապես կնպաստեր նրա զարգացմանը և կբարելավեր տնտեսության ղեկավարումը:

Բնակչության մշակութային-զանգվածային և քաղաքական սպասարկումը մայրենի լեզվով կուժեղանար Հայաստանի հանրապետական մարմինների կողմից ղեկավարվելու դեպքում:

Լեռնային Ղարաբաղի մարզի Հայաստանի կազմի մեջ մտնելը տեղական կադրերին հնարավորություն կտար շարունակել մայրենի լեզվով բարձրագույն կրթությունը Հայաստանի բուհերում: Մյուս կողմից՝ Հայկական ԽՍՀ-ը կկարողանար Լեռնային Ղարաբաղի մարզից ստանալ ազգային կադրեր, որոնք աչքի են ընկնում իրենց գործարարությամբ և ներկայումս, բնականաբար, չեն կարող լրիվ օգտագործվել Ադրբեջանում:

Ելնելով դրանից և Լեռնային Ղարաբաղի բնակչության ցանկությունից՝ Հայաստանի Կենտրոնական Կոմիտեն և Ժողկոմխորհը ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և միութենական կառավարության քննարկմանն են ներկայացնում Ադրբեջանական ԽՍՀ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Հայկական ԽՍՀ կազմի մեջ որպես Ղարաբաղի մարզ մտցնելու հարցը:

Այդ հարցի դրական լուծման դեպքում Կենտկոմը և Հայաստանի Ժողկոմխորհը կառավարությանն առաջարկություն կներկայացնեն Ղարաբաղի նախկին կենտրոնի՝ Շուշի քաղաքի վերականգնման մասին, որն ավերվել էր խորհրդային իշխանության հաստատումից առաջ:

Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի քարտուղար

Գր. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՈՎ

1945 թ. նոյեմբերի 11[301]:

Ստալինն ինչպե՞ս է ընդունել այս դիմումը, որ փաստորեն ուղղված էր իր՝ իսկ մասնակցությամբ հունցված հանցավոր խմորի դեմ, երբ առանց դրան էլ նամակ-դիմումն ինքնին կարող էր դառնալ մի գլխակեր քայլ:

Այն հետազոտողները, որոնք նամակ-դիմումը դուրս են բերել միութենական ու հանրապետական արխիվների համապատասխան գործերից[302], ոչինչ չեն հաղորդում նրա արդյունքների մասին: Եվ հարցին ինչ-որ չափով պատասխանում է Իգրար Ալիևն իր ձեռագիր մի աշխատության մեջ (անթվական, ավելի քան 50 էջ), որը 1989 թ. տարածված էր ամենուրեք և, իբր, անտեղյակ մարդկանց ճշմարիտ պատկերացում պիտի տար ԼՂԻՄ-ի մասին[303]:

Ի. Ալիևը, Ադրբեջանի կուսակցական արխիվից քաղելով, հաղորդում է, որ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Մալենկովը Հարությունովի դիմումը ժամանակին ուղարկած է եղել Ադր. Կ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար Մ. Ջ. Բագիրովին՝ ծանոթանալու և արված առաջարկի նկատմամբ իր կարծիքը հայտնելու հանձնարարությամբ: Բագիրովն իր պատասխան գրի մեջ, իբր, մերժել է Հարությունովի բոլոր փաստարկները, սակայն միաժամանակ տվել է իր համաձայնությունը Հայկական ԽՍՀ-ին միացնելու ԼՂԻՄ-ը՝ առանց բացառապես ադրբեջանցիներով բնակեցված Շուշվա շրջանի՝ միայն պայմանով, որ Ադրբեջանի կազմի մեջ մտցվեն Հայկ. ԽՍՀ երեք շրջանները, որոնք հարակից են Ադրբեջանին և ունեն գերազանցապես ադրբեջանցի բնակչություն[304]:

Հ. Ալիևը հաղորդում է, թե Բագիրովը ներկայացրած է եղել նաև իր ուրիշ պահանջներն Անդրկովկասի ու Կովկասի խորհրդային հանրապետությունների սահմանների մեջ կատարելիք էական փոփոխությունների վերաբերյալ[305]:

Ալիևն այդ «էական փոփոխությունների» մանրամասները չի տալիս: Իսկ ես հիշում եմ Բագիրովի դատավարությունը, որին ներկա եմ եղել որպես Արցախի պատվիրակության անդամ և լավ եմ հիշում, թե ռազմական տրիբունալի նախագահի ու գլխավոր մեղադրող Ռ. Ա. Ռուդենկոյի խաչաձև հարցաքննությամբ ինչպես պարզվեց, որ Բագիրովը ծրագրած է եղել Ադրբեջանին միացնել Դաղստանի ԻՍՍՀ-ը, իսկ ինքը, Ստալինն ու Բերիան էլ, ինչպես վերը նշվեց. որոշած են եղել 1953-ի ամռանը կազմակերպել Հայաստանում բնակվող հայության մի նոր վիթխարի բռնագաղթ, որով արդեն Հայաստանի բնակչությունը պիտի կրճատվեր, դառնար մեկ միլիոնից էլ պակաս, որպեսզի զրկվեր միութենական հանրապետության իրավունքներից:

— Ուրեմն Հայաստանը պիտի բաժան-բաժան արվեր, միացվեր հարևաններին. այդպե՞ս պիտի հասկանալ, — հարց տվողը ռազմական տրիբունալի նախագահն էր:

— Այո՛, քաղաքացի նախագահ, — անվրդով պատասխանեց Բագիրովը: — Ծրագիրը խափանվեց միայն Ստալինի մահվան պատճառով:

---

[301] ՄԼԻ ՀՄԿԱ, ֆոնդ 1, ցուցակ 25, գործ 42, էջ 1:

[302] Տե՛ս, օրինակ, Հրաչիկ Սիմոնյան, Ինչու՞ նորից աղմուկ. «Խորհրդային Հայաստան» թերթի 1989 թ. հունիսի 17-ի համարում:

[303] Տեղեկանք կոչված այս զրպարտագիրն անստորագիր է, սակայն հեղինակը ներսում քանի՛ցս իրենն է համարում հրապարակված առանձին հոդվածներ, որոնց հեղինակն ինքը՝ Իգրար Ալիևն է՝ Ադր. ԳԱ Պատմության ինստիտուտի դիրեկտորը:

[304] Անդ, էջ 50:

[305] Անդ, էջ 50 (Ադր. կուս. արխիվ, ֆ. 1, ց. 169, գ. 249, թ. 3—6ա):

— Բայց ո՞րն է հիմքը, ի՞նչն էր միավորում ձեր և Ստալինի տրամադրությունները, — այս հարցն էլ տվեց գլխավոր մեղադրող Ռոման Ռուդենկոն:

— Ես Ադրբեջանի ղեկավարն էի՝ շահագրգռված նրա ամեն տեսակ հզորությամբ: Իսկ Ստալինին ձեռնտու էր Արևելքում, մահմեդական աշխարհի նախադռանն ունենալ Ադրբեջանի պես հզոր ու հավատարիմ մի հենարան-հանրապետություն, — դարձյալ անվրդով ու հանգիստ պատասխանեց եռյակ դահճապետության վերջին ներկայացուցիչը:

Բագիրովյան ծավալապաշտական ծրագիրը երևի նախապատրաստվում էր բազմակողմանիորեն և խոր արմատներ էր գցել իր հանրապետության մտավորական շրջաններում: Երբ 1952 թ. Ադրբեջանի գաղափարական աշխատողների հանրապետական ակտիվի նիստերին տված իր չարչարական զեկուցման մեջ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի անդամ (թե՞ անդամության թեկնածու) Մ. Ջ. Բագիրովը մերկացնում էր Հայաստանում տարվող գաղափարական աշխատանքի «թույնոտ ազգայնամոլությունը», «խորհրդային ժողովուրդների ինտերնացիոնալ եղբայրության հիմքերը խարխլող նպատակները», կամ նույն հանգամանքներով՝ խարխլված «Շամիլի շարժման հակառուսական էության» վրա, որ երևան էր հանում Դաղստանի ինքնավար հանրապետության սահմաններում, ունկնդիրներին այնպես էր թվում, թե Կովկասի այդ նոր խալիֆն իրեն տերն է զգում ո՛չ միայն Ադրբեջանի, այլև հիշատակվող երկու հանրապետությունների:

Եվ նշանակալից է, որ բաղիրովյան շարժումն անմիջապես ունեցավ միութենական իր լայն արձագանքը. զեկուցման համառոտ շարադրանքը լույս տեսավ «Պրավդա» թերթում, որտեղ անմիջապես էլ ելույթ ունեցավ Պոսպելովը և, Բաղիրովին առաջնորդող ցուցումներ տված մարգարե համարվելով, առաջ տարավ նրա հայացքները, ծավալեց, դարձրեց ժամանակի խորհրդային գաղափարական աշխատանքի ուղեցույց...

Բարեբախտաբար, քիչ ժամանակ անց երևս եղավ Ստալինը, և դրանով էլ խափանվեց հակահայ դավադրության եռյակի ահավոր ծրագիրը, որը երկար ժամանակ դեռ գուրգուրանքի առարկա էր Ադրբեջանի մտավորականության լայն շրջաններում:

Չեմ մոռանա Ադրբեջանի Գրողների միության 1966 թ. համագումարի մի դիպվածը: Արցախի պատգամավորներս օրենքից դուրս էինք, քանի որ նախորդ մի ամբողջ տարին հանրապետությունը խլվում էր մարզի 13 ղեկավար աշխատողների հայտնի դիմումի[306] ու հետագա գործունեության պատճառով, իսկ «13-ի» մի մասը գրողներ էին և, առանց «ամաչելու», վեր էին կացել, եկել համագումար:

Համագումարի առաջին թե երկրորդ օրվա ուշ երեկոյան Հայաստանից եկած հյուրերի (Հրաչյա Հովհաննիսյան, Արշավիր Դարբևի և, կարծեմ, Սարմեն) հետ ընթրիքի էինք «Ինտուրիստ» հյուրանոցի ճաշարանում, մեկ էլ այն տեսանք, որ Ռասուլ Համզաթովը վրդովված ու շփոթ հերս ընկավ և, սրահում իր միակ ծանոթ Հրաչյա Հովհաննիսյանին փաթաթվելով, սկսեց հայհոյել տեղացիներին, անհասող սպառնալիքներ ուղարկել այս ու այն կողմ... Արցախցիներս շուտով հեռացանք մեր սենյակները, իսկ Հրաչյան, որ ամբողջ գիշեր Համզաթովի հետ էր անցկացրել, հաջորդ առավոտյան մեզ պատմեց հետևյալը.

Երեկոյան նիստից հետո Համզաթովին իր տունը ճաշկերույթի է տարել Ադրբեջանի նշանավոր բանաստեղծ Ռասուլ Ռզան և սեղանի վրա դաղստանցի հյուրին հաղորդել իր ազգի ամենակարևոր երազանքն ու իրականացնելիք ամենաճակատագրական միջոցառումը. «Եթե դու համաձայնես և քո ժողովրդին էլ համաձայնեցնես, որպեսզի Դաղստանը միանա Ադրբեջանին, — առանց աջ ու ձախ ընկնելու իր սիրտը բացել է Ռասուլ Ռզան, — մենք կկազմենք ամենահզոր հանրապետությունը Միության հարավում և մեր կամքը կթելադրենք հարավային Կովկասին ու հարևան երկրներին»:

---

[306] Այս դիմումը և սրա արդյունքների քննությունը կլինեն գրքիս հաջորդ էջերում:

Լսածին չհավատալով՝ Համզաթովը պահանջել է, որ նա կրկնի իր առաջարկությունը, և երկրորդ անգամ այն լսելուց հետո վեր է կացել ու հայտարարել.

— Մենք՝ դաղստանցիներս, հյուրասիրության սրբազան օրենքներ ունենք: Եթե ես քո հյուրը չլինեի, քեզ կսպանեի իբրև պատասխան այդ վիրավորական առաջարկության և նոր կլքեի քո սեղանը: Իսկ այժմ հեռանում եմ՝ անիծելով այն հացը, որ մինչև այս վայրկյանը կերել եմ քո տանը կամ քեզ հետ:

Համագումարից հետո պոեզիայի մեծ երեկո էր կազմակերպված: Նախագահող Միրզա Իբրահիմովը շատ էր ցանկանում Համզաթովի հետ ստեղծված անախորժությունը հարթել. լորձնաշուրթ փառաբանեց նրան, առաջինը հրավիրեց ելույթի: Եվ խիզախ դաղստանցին այստեղ նորից ցուցադրեց իր ըմբոստ ուղղամտությունը (համագումարին ունեցած ելույթում նա հայտարարել էր, թե ինքը ժամանակակից Ադրբեջանում իսկական մեծ բանաստեղծ չի ճանաչում): Ասաց.

— Երբ ես իմ հայրենի Դաղստանում գլուխս լեռներին եմ դնում հանգիստ առնելու, շատ եմ երազում, որ հարավից միայն խաղաղ քամիներ գան դեպի մեր լեռնաշխարհը: Այսքա՜ն բան:

Ասաց ու կարդաց ավարտուն բանաստեղծություններ՝ սրանք էլ ուղղելով դահլիճի առաջին շարքերում նստած իր հայրենակից մի խումբ զինվորականների, որոնց հետ երեկոյից առաջ էր ծանոթացել:

Մոսկվայի Գրողների տանը յոթանասունական թվականներին մի անգամ Ռասուլ Համզաթովին հիշեցրի այս միջադեպը, և նա տխուր ժպտաց ու աչքերը փակ հառաչեց.

— Դուք մի անգամ եք վկա եղել այդպիսի սանձարձակության..., իսկ ես մինչև այսօր էլ փրկություն չունեմ:

Հիմա վերստին դառնամ Հարությունովի ու Արցախի հիմնահարցի առնչությանը: Ի՞նչ եղավ Բաղիրովի առաջարկությունից հետո, հարցն ի՞նչ շրջապտույտ ընդունեց, «ժողովուրդների հայրն» ինչպե՞ս ընդունեց իր հարազատ զավակների՝ Հարությունովի ու Բաղիրովի չարաճճիությունները, — ոչինչ հայտնի չէ: Որոշ ուսումնասիրողներ հայտնում են, թե Հարությունովը նման դիմումով հանդես է եկել նաև 1947 և 1949 թվականներին, սակայն աղբյուրներ չեն վկայակոչում և հայտարարությունը չեն հիմնավորում լրացուցիչ տվյալներով: Հրաչիկ Սիմոնյանը գրում է. «1949 թ. կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Գր. Հարությունյանը նորից դիմեց Ստալինին, խնդրելով քննության առնել Լեռնային Ղարաբաղը Հայաստանի կազմի մեջ մտցնելու հարցը՝ սփյուռքահայերի հայրենադարձության կապակցությամբ: Ստալինը Բերիային և Բաղիրովին հանձնարարեց առաջարկություններ մտցնել և հարցը նախապատրաստել քննարկման համար: Բայց հայտնի պատճառներով հարցի քննարկումը տեղի չունեցավ»[307]:

Կարծում եմ սփյուռքահայերի հայրենադարձության կապակցությամբ Հարությունովը դիմած կլիներ ավելի վաղ, և Հայաստանի մի շարք շրջաններից ադրբեջանցի բնակչության գաղթեցումն էլ տեղի ունեցած կլիներ իբրև արդյունք այդ հարցի բարդացման: Ես հաստատ գիտեմ, որ տասնյակ հազարավոր ադրբեջանցիներ (բազմաթիվ գյուղական համայնքներ) Հայաստանից Ադրբեջան են փոխադրվել 1947 թ. ամռանամուտին: Կարելի է ենթադրել, որ դա կատարվել է դատարկված գյուղերում հայրենադարձվող սփյուռքահայերին բնակեցնելու նպատակով: Բայց արդյո՞ք միայն Հարությունովի ցանկությամբ ու նախաձեռնությամբ, որին էլ, իբր, Բաղիրովը ենթարկվել է անմռունչ:

Ադրբեջանցիների մեծագովված այս վերաբնակեցման պատմությունը վերջերս այնպես էր ներկայացվում, որ հայերն ու իրենց ղեկավարությունը դառնում էին բռնագաղթեցնողներ, որոնք, իբր, իրենց հանրապետության լավագույն հող ու կլիմա ունեցող շրջաններից բարբարոսաբար դուրս են քշել ավանդաբար այնտեղ ապրած ադրբեջանցիներին, և սրանք

---

[307] Հր. Սիմոնյան, Ինչու՞ նորից աղմուկ. «Խ. Հ.», 1988, հունիսի 17:

էլ ստիպված են եղել բնակություն հաստատել Ադրբեջանի տոթակեզ շրջաններում, մեծ մասամբ կոտորվել են համաճարակից ու անսովոր կլիմայական պայմաններից:

Այս ահավոր զրպարտությունը հնչում է շատ-շատերի բերաններից՝ Ադրբեջանի անփառունակ նախագահ Մութալիբովից մինչև մամուլի փորձված կեղծարարներն ու շարքային բամբասողները: Օրինակ, տեսեք, թե Այազ Մութալիբովի համամիութենական «Սոյուզ» պարբերականի թղթակցի հետ ունեցած հարցազրույցում ինչպես է բացատրում այդ վերաբնակեցումը. «Դուք մտածում եք, որ, ի՞նչ է, մենք հարևանների նկատմամբ պահանջ ու բողոք չունե՞նք... Չէ՞ որ եղել է այսպես կոչված միկոյանական բռնագաղթեցումը, երբ շուրջ 100 հազար ադրբեջանցիներ դուրս են քշվել Հայաստանից և նոր վայրերում նրանցից հազարավորները կոտորվել են, և շատերը՝ խոլերայից»[308]:

«Սոյուզի» ընթերցողը երևի պարտավոր պիտի լիներ հավատալ այս հայտարարությանը, որ անում է Ադրբեջանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի առաջին քարտուղարն ու հանրապետության պրեզիդենտը: Այսքան բարձրապաշտոն մեկն ինչպե՞ս կարող է չիմանալ, թե ի՛նչ է կատարվել իր ազգի հարյուր հազարավորներ կազմած մի հատվածի հետ, այն էլ սրանից ընդամենը քառասուն տարի առաջ:

Բայց եթե այդ ընթերցողը փորձեր հարցեր էլ տար: Ա՛յ, ասենք, այսպիսի հարց՝ Միկոյանն ի՞նչ կապ կարող էր ունենալ 100 հազարավոր ադրբեջանցիների Հայաստանից Ադրբեջան բռնագաղթեցնելու հետ: Չէ՞ որ նա ո՛չ երկրի միահեծան տերն է եղել երբևէ, ո՛չ ներքին գործերի նախարարը, ո՛չ էլ նույնիսկ Հայաստանի ղեկավարը, որպեսզի ստալինյան բռնապետության շրջանում գլխից ձեռք վերցներ ու գնար այդպիսի հրեշավոր քայլին:

Մութալիբովը որտեղի՞ց է պեղել այսօրինակ անհեթեթ ու կեղտոտ հերյուրանքը: Պարզվում է՝ իր հանրապետության բամբասանաբանոցներից: Ուրիշ էլ որտեղի՞ց, երբ արխիվներում կամ պաշտոնական այլևայլ հաստատություններում նման բան ո՛չ կա, ո՛չ էլ կարող է լինել:

Եվ ահա վերջերս նույն հերյուրանքի ուրիշ տարբերակներին, իբր թե, հավատ ընծայած պատմաբան Ջ. Գուլիևը հրապարակեց հենց այդ վերաբնակեցման համար հիմք հանդիսացած փաստաթղթերը՝ ինքն էլ չհասկանալով, թե դրանով ինչպես է մերկացնում է իր հանրապետության ղեկավարի մեծապատիվ սուտը, ուրեմն՝ արժանավորապես կեղտաջուր է թափում նրա գլխին:

Փաստաթուղթը թվագրված է 1947 թ. դեկտեմբերի 3, ստորագրված Մ. Ջ. Բաղիրովի ու Գ. Ա. Հարությունովի կողմից, ուղղված «Ընկեր Ի. Վ. Ստալինին»: Ահա այն ամբողջությամբ.

«Մտքեր փոխանակելով Ադրբեջանական ու Հայկական հանրապետություններում վերջին տարիներին տեղի ունեցած տնտեսական վերափոխումների հետևանքով առաջացած մի քանի հարցերի առթիվ՝ Ձեզ ենք դիմում հետևյալ առաջարկություններով:

Մինգեչաուրի հանգույցի ոռոգման տակ առնվող նոր հողերը և գոյություն ունեցող բամբակային շրջանների աշխատավոր ձեռքի պակասը, ինչպես նաև բամբակի բերքատվության բարձրացման խնդիրը հարց են բարձրացնում ավելացնելու Ադրբեջանական ԽՍՀ այդ շրջանների բնակչությունը:

Այդ հարցի իրական լուծում կլիներ Հայաստանում ապրող թվով 130 հազար հոգի ադրբեջանական բնակչության վերաբնակեցումն այդ շրջաններում:

Հայաստանից ադրբեջանական բնակչությանը վերաբնակեցումն Ադրբեջան մեծապես կթեթևացներ արտասահմանյան երկրներից հայերի վերադարձող հայերի ընդունման ու դասավորման պայմանները:

---

[308] «Союз», 1990, N. 39:

Ադրբեջանական բնակչության վերաբնակեցման շնորհիվ ազատվող հողերն ու բնակարանները կարող են օգտագործվել Հայաստան եկող արտասահմանյան հայերի գյուղացիական մասերի համար:

Այս նկատառումներից ելնելով՝ խնդրում ենք Ձեր թույլտվությունը.

1. Հայկական ԽՍՀ-ում ապրող ադրբեջանական բնակչության վերաբնակեցումը Ադրբեջանական ԽՍՀ նոսր բնակչություն ունեցող բամբակային շրջաններում և ազատվող հողերի ու բնակարանների օգտագործումը՝ արտասահմանից Հայկական ԽՍՀ վերադարձող հայերին ընդունելու և դասավորելու համար:

2. Թույլ տալ Ադրբեջանական ԽՍՀ ու Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհուրդներին ստեղծել միացյալ հանձնաժողով վերաբնակեցման պայմանների ու կարգի մշակման, ինչպես նաև վերաբնակեցումն իրականացնելու համար:

3. Այդ վերաբնակեցման հետ կապված ծախսերը վերցնել միութենական բյուջեի վրա»[309]:

Այս փաստաթղթից անելիք ամենակարևոր եզրակացությունն այն է, որ Հայաստանից Ադրբեջան փոխադրելն ու բամբակային շրջաններում վերաբնակեցնելը մեկ հիմնական նպատակի համար էր՝ լուծել Մինգեչաուրի հիդրոհանգույցի ստեղծմամբ պայմանավորված տնտեսական ու սոցիալական մեծամեծ հիմնահարցերը, համալրել առաջիկայում ոռոգման տակ դրվելիք սակավաբնակ շրջանների գյուղացիների շարքերը և բարձրացնել բամբակի բերքատվությունը: Այսքանից հետո միայն նշվում է իրականացվող միջոցառման հավելյալ շահը, այն, որ վերաբնակեցման շնորհիվ ազատված հողերն ու բնակարանները կօգտագործվեն արտասահմանից հայրենիք վերադարձող հայերին տեղավորելու-դասավորելու համար:

Այս է փաստաթղթից արվելիք միակ եզրահանգումը, որ պարզորոշ ջնջում է Մութալիբովի ու նրա նմանների հերյուրած բամբասանքները:

Նշենք նաև, որ վերաբնակեցումը հիմնականում կատարվել է ադրբեջանական կողմի ներկայացուցիչների կողմից, և վերաբնակեցվողներն էլ այդ միջոցառումն ընդունել են գոհունակությամբ, նույնիսկ խանդավառությամբ: Դրա համար բավական է ծանոթանալ միջոցառման կազմակերպիչ ադրբեջանցիների զեկույցներին: Ահա նրանցից մեկը՝ Հայաստանում Ադրբ. ԽՍՀ ներկայացուցիչ Ն. Ալլահվերդիևը, 1948 թ. հունիսի 7-ին Հայաստանի ղեկավարությանն է հղել նամակ, որով հաղորդում է, թե «ադրբեջանական բնակչությունը քաղաքական վիթխարի վերելքով, մեծ հաճույքով ու միասնությամբ սկսել և ավարտել է դիմումներ գրելն ու անկետաներ լրացնելը, որտեղում արտահայտել է իր համաձայնությունը վերաբնակվելու Ադրբ. ԽՍՀ-ում»[310]:

Պահպանված փաստաթղթերի հանգամանքից քննությունը բերում է այն եզրակացության, որ Հայաստանի ղեկավարությունը վերաբնակեցման գործի եռանդուն մասնակիցն էլ չի եղել: Սա կարելի է բացատրել թեկուզ նրանով, որ 1948 թ. արդեն երկրի վերին վարչական մարմինների կողմից դադարեցված է եղել արտասահմանյան հայության հայրենադարձումը, բացի այն հանգամանքից, որ հայրենադարձվածներն էլ հիմնականում տեղավորվել են քաղաքներում, և այլևս կարիք չի եղել գյուղաբնակ ադրբեջանցիներին տեղահանելու:

Բայց ահա ադրբեջանական ղեկավարությունն այն շարունակեց և այնպիսի մի եռանդով ու շահագրգռությամբ, ասես միջոցառումն ինքն էր միայնակ նախաձեռնել և ինքն էլ անց էր կացնում իր բազմակողմանի շահագրգռությունը հագուրդ տալու համար: Այդպիսի եզրակացության կարելի է գալ Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի բյուրոյի 1948 թ. ապրիլի 13-ի որոշումից, որն ասում է.

---

[309] ՄԼԻ ՀԲԱ, ֆ. 1, g. 28, գ. 97, թ. 14:
[310] Անդ:

«Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի բյուրոն նշում է, որ Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի խնդրանքով ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի 1947 թ. դեկտեմբերի 23-ին ընդունված «Հայկական ԽՍՀ-ից ադրբեջանցի կոլտնտեսային և այլ բնակչության Ադրբեջանական ԽՍՀ վերաբնակեցնելու մասին» որոշումը հանդիսանում է մեծ քաղաքական կարևորության փաստաթուղթ և վկայում է Կուսակցության, կառավարության ու անձամբ ընկեր Ստալինի հոգատարությունը Ադրբեջանական ԽՍՀ ու ադրբեջանական ժողովրդի հետագա մշակութային-տնտեսական զարգացման ու աճի նկատմամբ:

Վերաբնակեցումը Հայկական ԽՍՀ-ից Ադրբեջանական ԽՍՀ միաժամանակ ստեղծում է մեծ հնարավորություններ Մինգեչաուրյան սիստեմի շինարարության կապակցությամբ նոր յուրացվող հողերը լրիվ օգտագործելու և ընդարձակելու համար»[311]:

Ինչպես պարզ երևում է այս կարևորագույն փաստաթղթից, վերաբնակեցման մասին միութենական կառավարության որոշումն ընդունվել է միայն ու միայն Ադրբեջանի կուսակցական Կենտկոմի խնդրանքով, Ադրբեջանի տնտեսական-մշակութային զարգացման մտահոգությամբ: Եվ սրանից էլ չի կարելի չեզոքացնել, որ Գր. Հարությունովը, Բաղիրովի հետ ստորագրելով 1947 թ. դեկտեմբերի 3 թվակիր նամակը, հետագայում մի առանձին խանդավառություն էլ չի ցուցաբերել վերաբնակեցման հարցում՝ թերևս գուշակելով նրա իրականացման բուն նպատակը: Իսկ այն բոլորովին էլ անվտանգ չէր հայկական կողմի համար, եթե նկատի ունենանք, որ Հարությունովը լավ էր հասկանում, թե Բաղիրովն ի՞նչ տեսակ դիվային ծրագրեր էր մտմտում արցախահայության դեմ:

Ստանալով վերաբնակեցման թույլտվությունը և հսկայական պետական միջոցներ ու այլ վիթխարի արտոնություններ, որոնք հաստատված էին միութենական կառավարության 1947 թ. դեկտեմբերի 23-ի և 1948-ի մարտի 10-ի որոշումներով, Ադրբեջանի կառավարությունը և նրա ղեկավար Բաղիրովն անձամբ՝ լծվեցին մի այլ, իրենց համար շատ ավելի կարևոր միջոցառման՝ Արցախի հիմնահարցը ժողովրդագրական եղանակով մեկընդմիշտ լուծելուն: Հայաստանից վերաբնակեցվող 100 թե 150 հազար ադրբեջանցիների մեծագույն մասը բնակեցրին Արցախի գյուղերում:

Ադրբեջանի կուսակցական Կենտկոմը 1948 թ. ապրիլի 13-ին ընդունել էր որոշում «Ադրբեջանական կոլտնտեսականների և այլ բնակչության Հայկական ԽՍՀ-ից Ադրբեջանական ԽՍՀ վերաբնակեցնելու կապակցությամբ զանգվածային-բացատրական աշխատանքի մասին», որի միայն մեկ արտահայտությունը, թե վերաբնակեցումն իրականացնելու դեպքում Հայաստանում ազատվող բնակավայրերը ծառայելու են հայրենադարձվող սփյուռքահայերի տեղավորմանը, արդեն ինքնին բավական էր, որպեսզի արցախահայությունն ամեն կերպ ընդառաջեր իր գյուղերը լցվող ադրբեջանցիներին, օժանդակեր նրանց տեղավորելուն ու դասավորելուն:

1948 թ. ես աշխատել եմ Մարտունու շրջանի Գիշի գյուղում և ականատեսն եմ եղել այն գործարար ու սրտագին խանդավառությանը, որ գիշեցիներն են ցուցաբերել Վեդիի շրջանից տեղափոխված մի ամբողջ գյուղ իրենց ազատ շենքերում, սենյակներում, գոմերում ու մառաններում տեղավորելու համար: Նրանք ի՞նչ իմանային, թե վերին կառավարության ընդունած որոշմամբ իրենց պատվավոր հյուրերը պետք է վերաբնակվեին միայն Կուր-Արաքսյան հարթավայրում ու անապատ բամբակային շրջաններում, մինչդեռ նրանց բերել, խցկում են Արցախի խիտ բնակեցված շրջաններն ու գյուղերը՝ իբրև սողացող օկուպացիա, որի նպատակն է մարզում ադրբեջանական բնակչության տոկոսի շեշտակի բարձրացումը, որով և պիտի կոտրվեր մարզի հայ բնակչության մեջքը, անիմաստ և ավելորդ դառնար ինքնավարության հետագա գոյությունը:

Բարեբախտաբար եկվոր ադրբեջանցիներն Արցախում երկար մոխիր գցել չկարողացան: Ավելի ճիշտ՝ արցախցիներն իրենք վերջապես հասկացան վերաբնակեցման բուն նպատակը և հիմա էլ արեցին ամեն ինչ, որպեսզի տրոյական ձին դուրս տարվի մարզից:

---

[311] Անդ, ֆ. 1, ց. 28, գ. 13, թ. 24:

Եվ ուղիղ մեկ տարի հետո, 1949 թ. ամառնամուտին, Բաղիրովն ստիպված եղավ արցախյան վերաբնակներին փոխադրել մարզից դուրս գտնվող ուրիշ շրջաններ՝ Շահումյան, Խանլար, Քարհատ ևն, դարձյալ ո՛չ բամբակային, բայց անպայման հայաբնակ շրջաններ՝ հիմա էլ այս շրջաններում ազգագրական խարդավանքներ իրականացնելու նպատակով...

Որքան հայտնի է, այս շրջաններում ևս երկար չմնացին վերաբնակները, քանի որ, ինչպես Արցախում, այնպես էլ այստեղ նրանք բացարձակապես զրկված էին իրենց համար վերին կառավարության բաց թողած միջոցներից ու նյութական հնարավորություններից (դրանք Ադրբեջանի վերին ու ստորին ղեկավար շրջաններն էին խժռել), իսկ Հայաստանում նրանց սպասում էին իրենց բնակարանները, թողած կայքն ու գույքը: Եվ եթե 1950 թ. նոյեմբերի 20-ին Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին կից Վերաբնակեցման վարչության պետի տեղակալը զեկուցեց, թե Ադրբեջան վերաբնակեցվածներից զանգվածաբար վերադառնում են Հայաստան, իրենց նախկին բնակավայրերը, որովհետև «վերաբնակեցման վայրում անհրաժեշտ ուշադրություն չի դարձվել նրանց տնտեսական կարգավորման ու ամրապնդման համար», ապա դա լոկ մեղմ ու մակերեսային գնահատականն էր բաղիրովյան վարչակարգի գործունեության:

Իսկ Գրիգոր Հարությունով-Հարությունյանը...

Թիֆլիսաբնակ իմ մի բարեկամը, որ կյանքի վերջին տարիները Թիֆլիսում անցկացրած Գրիգոր Շինարարի հետ մեկ-մեկ հանդիպել է, պատմում է, թե նա ինչպես հաճախ անդրադառնում էր իր կենսագրության կարևորագույն դեպքերին և այդ շարքում մի անգամ ցավագնորեն հիշել է նաև Արցախ-Ղարաբաղը:

— Դուք չկարծեք, թե Ստալինին դիմելով՝ ես մտահոգված եմ եղել միայն Լեռնային Ղարաբաղի ճակատագրով,— ասել է նա:— Ղարաբաղը պետք է փրկել, դա անկասկած է: Բայց ով լավ է ճանաչում ղարաբաղցուն և Ղարաբաղը, նրա հողն ու ջուրը, տենչանքն ու հնարավորությունները, անպայման կմտածի, որ դա պիտի լիներ նաև Հայաստանի փրկությունը:

Ես հիշեցի Գարեգին Նժդեհի իմաստուն կանխատեսությունը՝ Հայաստանը, ինչ ցուցանակի ներքո էլ որ գտնվի...

Այստեղ երևի հարկ է խոսք ասել նաև ինքնավար մարզի կյանքի այն ասպարեզի առիթով, որ կոչվում է կադրային քաղաքականություն: Ես դա կանեմ օրինակներով: Հիշեմ, այսպես, շատ բնութագրական մեկին՝ Եղիշե Գրիգորյանին: Նա երկու անգամ կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար է եղել՝ պատերազմի տարիներին և 1952—58 թվականներին: Երկու անգամ էլ նշանակել են և ո՛չ ընտրությամբ անցկացրել: Նշանակել են, որովհետև շատ էին վստահում: Շարքային աշխատողից աստիճան առ աստիճան բարձրացել էր իրենց աչքերի առաջ, վստահելի էր թեկուզ հենց այն պատճառով, որ կինը ադրբեջանուհի էր: Բավարար գրագիտություն չուներ ո՛չ հայերեն, ո՛չ ռուսերեն: Սակայն դա չէր խանգարել, որպեսզի Բաքվի հայկական «Կոմունիստ» թերթը խմբագրի, որովհետև հանրապետությանը պետք էր ոչ թե գրագետ խմբագիր, այլ վստահելի մարդ: Եվ այսպես «Կոմունիստի» խմբագրությունից էլ՝ կուսակցության Ղարմարզկոմի առաջին քարտուղար:

Ականատեսները պատմում են, որ պատերազմի ծանր տարիներին նա արժանապատվությամբ ղեկավարել է մարզը, դարձել աշխատավորության, մանավանդ գյուղացիության սիրելին: Եվ սա՝ անշահախնդիր ու անկաշառ նվիրվածության, առասպելական աշխատասիրության համար: Երբ ևս նոր-նոր շրջապատիս չարն ու բարին հասկանում էի, նա արդեն մարզի հայության միակ ու անմրցակից պաշտելին էր: Եվ հենց այս հանգամանքն էլ դարձավ ահավոր վտանգ հենց իր սեփական անձի ու պաշտոնի համար: Ինչպե՞ս կարելի էր մարզի ղեկավար պահել մեկին, որին պաշտում է ժողովուրդը և որի հետևից կգնա, ուր որ էլ նա տանի:

Եվ նրան հանեցին պաշտոնից: Բայց որովհետև լուրջ ոչ մի փաստ չունեին դեն շպրտելու համար, տարան Կենտկոմի ապարատ, դարձրին ստորին մի պաշտոնի տեր, ասացին՝ եթե

կարող ես, նորից բարձրացիր: Այստեղ նա բարձրացավ մինչև, կարծեմ, բաժնի վարիչի աթոռը, և այստեղից 1952-ին, դեռևս Մ. Ջ. Բաղիրովի տիրապետության շրջանում, վերստին բերեցին մարզկոմի առաջին քարտուղար:

Նրա նոր պաշտոնավարությունը համընկավ ստալինյան բռնության տապալմանն ու խրուշչովյան ձնհալին: Եվ երբ մարզի հայկական կյանքին թարմ շունչ տալու առաջարկություններ ու նախաձեռնություններ եղան, նա պաշտպան կանգնեց այդ ամենին և տեր դարձավ մարզի ինքնավարությունն իրական հունի մեջ դնելու համար ծավալված շարժմանը:

Այն ժամանակ ես ղեկավարում էի Գրողների մարզային բաժանմունքը: Կուսակցական մարզային ակտիվում ելույթ ունեցա, բողոքեցի հանրապետության ղեկավարների հակաարցախյան-հակահայկական գործարքների դեմ, ցույց տվի մարզի մամուլի հրատարակչական հնարավորությունների ողորմելի վիճակը... Եվ հաջորդ օրվա առավոտյան հայտնեցին, թե Գրիգորյանը զրույցի է հրավիրում: Մտածեցի, որ կշտամբանքի խոսքեր պիտի ասի... Չէ՞ որ այն ժամանակ սովորական էր հանրապետության ղեկավարության փառաբանությունը, կասկածելի՝ լռելը, իսկ քննադատական խոսքը՝ հանցանք... Այդպիսի բան դեռ չէր եղել:

Զրույցն ընթացավ, ինչպես ասում են, բարյացակամության ու փոխըմբռնման մթնոլորտում, և վերջում էլ առաջարկեց, որ դառնամ «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագիր: Հրաժարվեցի: Եվ այստեղ էլ գլխիս քարոզ կարդաց. ուզում ես, որ կյանքը փոխվի, մշակույթը, մամուլը, դպրոցը և առհասարակ ամեն ինչը հայանան: Բայց չէ՞ որ դա ինքնահոսով չի լինում:

Վերջը համաձայնեցի, և հետո մենք գործում էինք միասին ու միահամուռ: Ինքը մարզկոմի երկրորդ քարտուղար ու գրող Սարգիս Աբրահամյանը և ես: Խմբագրությունից էլ ինձ տարան մարզգործկոմ: Նախագահի տեղակալն էի և ղեկավարում էի մշակույթի, լուսավորության ու հարակից բնագավառները: Կուսակցության մարզային կոնֆերանսում խոսել էի մարզում ազգային մշակույթի զարգացման դեմ ծառացած դժվարությունների մասին՝ բոլորի հիմք համարելով այն, որ մարզային հիմնարկություններում գրագրությունը հիմնականում վարում են ո՛չ հայերեն: Գրիգորյանի եռանդուն օժանդակությամբ որոշման մեջ հատուկ կետ ընդունեցինք, որ մարզի սահմաններում տիրական լինի միայն հայերենը: Մի քանի օր հետո էլ կանչեց իր մոտ, խնդրեց որ անձամբ գնամ Երևան, մարզային հիմնարկների գրամեքենաները հայերեն դարձնելու համար բավականաչափ տառեր բերեմ: Մարզկոմի այն ժամանակվա գաղափարական բաժնի վարիչ Արսեն Եղիազարյանի հետ ճանապարհվեցինք Երևան, և պարզվեց, որ այդտեղ հայերեն տառեր ձեռք են բերում Էջմիածնի Մայր աթոռից: Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության առաջին ամիսներն էին: Նրա կարգադրությամբ մեզ 50 լրակազմ տառեր տվին՝ մարզի իսկական լուսավորության այս նոր գործին մաղթելով ամենայն հաջողություն:

Գրիգորյանի աջակցությամբ մենք մարզխորհրդի նստաշրջանի որոշմամբ հայոց լեզվի դասավանդումը պարտադիր դարձրինք մարզի ռուսական ու ադրբեջանական դպրոցների համար, միաժամանակ հայկական դպրոցում ավելորդ համարելով ադրբեջաներենի դասավանդումը, և այս որոշումն անշեղորեն կիրառվեց 50-ական թվականների կեսերից մինչև 70-ականները, երբ չարահուշ Կենտկոմի կարգադրությամբ ադրբեջաներենի դասավանդումը վերստին պարտադիր դարձավ հայկական դպրոցներում...

Նշված և բազմաթիվ միջոցառումներ լրջորեն վերարծարծեցին մարզի ազգային կյանքի ընթացքը, խթանեցին նրա զգացումը: Մանավանդ, որ դրանց կողքին արվում էին առաջին քայլերը Հայաստանի հետ կապեր ստեղծելու, հանրապետության ստեղծագործական ու մշակութային կազմակերպությունների ուշադրությունը մարզի վրա բևեռելու համար:

Մարզի հայությունը սրտագին խանդավառությամբ, նույնիսկ մի առանձնակի երախտագիտությամբ էր ընդունել այս միջոցառումները: Սրթանցել, ծաղկումի ու վերելքի ուղին էր բռնել ազգային ոգին: Երևանից մեզ հյուր եկող գրական, թատերական գործիչները,

նույնիսկ առանձին խիզախ պաշտոնյաներ, տեսնելով մարզի ազգային զարթոնքը, չէին թաքցնում իրենց հիացմունքը և խորհուրդ էին տալիս լինել զգաստ ու, եթե կարելի է, նաև մի քիչ զգուշավոր: Թե չէ, ասում էին, վերևներում կիմանան, կգան, գլխներիդ կտան...

Եվ վերևներում իմացան, վրդովվեցին: Նախ կարգադրեցին մարզի ղեկավար պաշտոնների կրճատում կատարել՝ այդ սկսելով մարզգործկոմից... Բայց երբ իմ պաշտոնը կրճատել էին, համոզվել, որ դա տեղի է ունեցել առանց բարդության, ու ես նորից Գրողների բաժանմունքում եմ, — կարգադրեցին վերականգնել մնացած կրճատված հաստիքները...

Իսկ մարզկոմի քարտուղարը շարունակում էր ինձ պահել աշխատանքային ճակատում: Ինչպես մեր եռյակը, այնպես էլ նոր միջոցառումներին լծված բազմաթիվ մարդիկ ջանում էին ձեռքից եկածն անել մարզի հայկական կյանքը անխաթար ու անկասեցելի դարձնելու համար:

Վերջն ի՞նչ պիտի լիներ, ո՞ւր պիտի տաներ այդ ընթացքը, երբ գնալով մեր գործը դառնում էր ավելի ու ավելի նպատակասլաց, և, այսպես կոչված, ադրբեջանական կողմն էլ կույր չէր, տեսնում էր ամեն ինչ և մեզանից էլ ո՛չ պակաս պատկերացնում որոշակի հեռանկարը:

1956 թ. ուշ աշնանը վախճանվել էր Դերենիկ Դեմիրճյանը, և Եղիշե Գրիգորյանի նախաձեռնությամբ մենք մարզի հատուկ պատվիրակություն կազմեցինք ու եկանք մասնակցելու թաղմանը: Ադրբեջանական պատվիրակության անդամները դրան նայում էին որպես իրենց դեմ գործված դավադրության: Հաջորդ տարվա հոկտեմբերին էլ եկանք Իսահակյանի թաղմանը: Այս անգամ արդեն ադրբեջանական պատվիրակության ղեկավար Մամեդ Ռահիմը, միամտության չափ անզուսպ մի մարդ, որ ինձ էլ իր բարեկամն էր համարում, բացվեց: «Դու գիտե՞ս, — ասաց, — որ ձեր այդ ինքնուրույն քայլերը մերոնց դուր չեն գալիս: Դեմիրճյանի թաղմանն էիք եկել առանձին պատվիրակությամբ: Հիմա էլ Վարպետի համար... Դու ինքդ ուզում էիր գալ, կասեիր, կմտցնեինք մեր պատվիրակության կազմի մեջ... Չէ՞ որ մեր մարդն եք, մեր հանրապետության մասը»:

Ես այս դիտողությունը լուրջ բանի տեղ չդրի, մանավանդ որ լավ էի ճանաչում Մ. Ռահիմին և համոզված էի, որ նա իրենց հանրապետության քաղաքական կյանքում էական դեր չի կատարում և իր դիտողությամբ չի կարող արտահայտել Բաքվի պաշտոնական շրջաններում տիրապետող որևէ տրամադրություն:

Սակայն մի երկու շաբաթ հետո Ադրբեջանի կուսակցական Կենտկոմ հրավիրեցին մեր մարզկոմի ամբողջ բյուրոն (այն ժամանակ ես էլ դեռևս բյուրոյի կազմում էի) և պահանջեցին, որ հաշվետվություն տանք: Ինչպես լինում էր նման դեպքերում, Գրիգորյանը պիտի զեկուցեր, որից հետո էլ պիտի լիներ «մտքերի փոխանակություն», որին էլ կհետևեր սովորական ֆրազներով սարքված որոշման ընթերցումը...

Սակայն այս անգամ ամեն ինչ անսովոր էր սկզբից ևեթ: Մեզ ընդունել էին հայացքների փշերով, Գրիգորյանի զեկուցման սկիզբը լսեցին քրթմնջյուններով, իսկ մի քանի րոպե հետո էլ Կենտկոմի առաջին քարտուղար Իմամ Մուստաֆաևը հարձակվեց նրա վրա.

— Այդ թվերի ու փաստերի տեղը մենք էլ գիտենք: Դու այն ասա, թե ինչպես է, որ Ղարաբաղի մարզն առանձնացրել եք հանրապետությունից ու ուզում եք միացնել Հայաստանին:

Ըստ երևույթին նախապես պայմանավորվել էին, թե ինչի՛ց են սկսելու և ինչպե՞ս են վարվելու հետագա ընթացքը: Առաջինն այս քար գցելը նշան էր, որպեսզի տարբեր կողմերից վրա տան, քարկոծեն ու կաթվածահար անեն... Երբ արդեն կարծում էին՝ քարկոծված Գրիգորյանին մնացել է մեռելական խոսք ասել ու հպատակության երդում տալ, սա կանգնեց շիտակ և խրոխտորեն ասաց.

— Այստե՛ղ չէ, որ պիտի լուծվի մեր մարզն Ադրբեջանից բաժանելու և Հայաստանին միացնելու հարցը: Այնտեղ, ուր նման հարցեր կարող են լուծվել, իմ կարծիքը կհարցնեն, ես էլ կասեմ և չեմ ամաչի ազգիս առաջ: Հասկացա՞ք, ընկեր Մուստաֆաև:

Ասաց ու նստեց: Դրանից հետո մեռելատան էր նման այն սենյակը, ուր բյուրոյի նիստն էր գնում: Ադրբեջանցիները շշմած իրար երեսի էին նայում:

Վերջում ոչինչ չասող մի որոշում կարդացին, մեզ ճանապարհ դրին:

Վերադարձին Գրիգորյանը, մարզկոմի երկրորդ քարտուղար Սարգիս Աբրահամյանը և ես մի մեքենայում էինք: Ամբողջ ճանապարհին փորձում էինք պարզել, թե ինչի՛ց էր հոխորտացած Մուստաֆաևի բանակը: Ես հիշեցի Մամեդ Ռահիմի խոսքը և ասացի՝ ադրբեջանական պատվիրակությունը Երևանում մեզ տեսնելով՝ կարծում էր, թե գնացել ենք իրենց տունը քանդելու...

Գրիգորյանը, որ բարեկիրթ մարդ էր, իմ ջահել ու անփորձ ականջների համար անսովոր, պարարտ ու բազմահարկ մի հայհոյանքով պատվեց Կենտկոմի բյուրոյի անդամներին:

— Ուրեմն մեր սիրելի գրողների թաղմանը մասնակցելու իրավունք է՞լ չենք ունեցել, հա՞, մեր այս ինքնավար մարզում:

Քիչ ժամանակ անց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատների թեկնածուներ պիտի առաջադրեին և Ե. Գրիգորյանին շրջանցեցին: Մի երկու ամիս անց էլ եկան, կուսակցական մարզկոմի պլենում արին և, Գրիգորյանի փոխարեն, մարզկոմի առաջին քարտուղար նշանակեցին մի ոմն Նիկոլայ Շահնազարովի, որը եղել էր Նախիջևանի Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալը և իր կյանքի մի ամբողջ տասնամյակը նշանավորել էր այդ մարզը հայաթափ անելու մատուցած ահավոր ծառայությամբ:

Նրան ես ճանաչում էի Նախիջևանից և գիտեի, որ, ինչպես մեր Արցախում կասեն, հայոց լեզուն փեշով է բռնում: Երբ 1958 թ. սկզբին հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահ Վալի Ախունդովը բերեց և մարզկոմի պլենումում ներկայացրեց իբրև Կենտկոմի երաշխավորված առաջին քարտուղարի, ես վեր կացա, ասացի.

— Ընկեր Ախունդով, երբևէ դուք դեռևս չեք մոռացել, որ այս մարզը հայկական է՝ հայ ժողովրդի ինքնավարությամբ: Ես գիտեմ, որ ձեր երաշխավորված մարդը հայերեն չի խոսում: Մարզկոմի առաջին քարտուղարին էլ թարգմանիչ տրված չէ: Այդ երաշխավորված ընկերն ի՞նչ լեզվով պիտի խոսի մարզի տեր հայության հետ:

Ախունդովը քմծիծաղեց և, ձեռացնելով, թե ինքը չի եկել զռռով անցկացնելու իր բերած թեկնածուին, ասաց.

— Այդ հարցին ինչո՞ւ ես պատասխանեմ, թող ի՛նքն ասի, թե ինչ է մտածում:

Եվ Շահնազարովը, կարմիր ճակնդեղ կտրած, անցավ ամբիոնի ետևը, խոստացավ մի քանի ամսում վերականգնել իր «սիրելի մայրենի լեզուն» ու վեց ամսից ելույթ ունենալ հայերեն:

— Չէ՞ որ իմ նախնիներն էլ այս հողից են, և ես ոտք եմ դնում նրանց փառավոր հայրենիքում...

Ես ուզում էի էլի խոսել... Սակայն Ախունդովը դահլիճին առաջարկեց իրենց երաշխավորածին ժամանակ ու հնարավորություն տալ խոստումը կատարելու: Դրանով էլ ավարտվեց դրամափոխությունը: Եղիշե Գրիգորյանը, որ ամբողջ կյանքում առաջին անգամ նոր միայն հասկացել էր, թե Արցախին ինչպիսի՛ ղեկավար է պետք, և ինչպե՞ս պիտի իրականացնեի նրա ինքնավարությունը, գնաց հարկադիր թմբիրի, իսկ մարզը տրվեց մեկի ձեռքը, որ պատրաստ էր ոչ թե իր մոռացած մայրենի լեզուն վերականգնելու, այլ մարզի հայությանն ստիպելու, որ մոռանա իր լեզուն:

60-ական թվականների նոր բռնկումն անսովոր ու անբնական, թերևս նաև իր ըմբոստության մեջ մի խելագար երևույթ էր խորհրդային կարգերի պայմաններում: 1958-ին կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար էին նշանակել Նիկոլայ Շահնազարովին, և սա էլ նախնական մեկ-երկու տարվա երկչոտ քայլերից հետո, 61—62-ին, արդեն գործում էր իբրև հանրապետության շովինիստ ղեկավարության բացահայտ հակահայ ծրագրերի

իրականացնող: Գործում էր անվախ, անսքող՝ երևի հենվելով Նախիջևանում ունեցած ավելի քան մեկ տասնամյակի գործունեության փորձի վրա: Չէ՞ որ այնտեղ նա այնքան ժամանակ վարել էր, այսպես կոչված, ինքնավար հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալի պաշտոնը և իր հիմնական պարտականությունը տեսել էր նրանում, որ ոտնատակ տա նախիջևանահայության իրավունքները, ամեն կերպ օգնի նրա տարհանվելուն, պարզապես ավարտին հասցնի մարզի պարպումը տեղաբնիկ հայերից:

Ադրբեջանի հայատյաց ղեկավարությունը միշտ էլ շատ մեծ հաջողությամբ կարողանում էր գտնել պաշտոնամոլ ու հնազանդ հայերի և նրանց ձեռքերով՝ իրականացնել իր հակահայկական այլանդակ ծրագրերը: Բաղիրովի տասնամյակներին կուս. Կենտկոմի երկրորդ քարտուղարը միշտ էլ հայ է եղել, նախարարներ ու այլ բարձրապաշտոն հայեր կային, որոնք և անմիջապես իրականացնում էին բաղիրովյան սև ծրագրերը հայության դեմ:

Շատ լավ եմ հիշում տխուր մի դեպք: 50-ական թվականներին մեր մարզը սոցիալիստական մրցության մեջ էր Նախիջևանի հետ, և ձևական մրցության ընթացքն «ստուգելու» համար մեր պատվիրակությունը գնացել էր Նախիջևան: Մեզ՝ պատվիրակության անդամներիս, տանում, ցույց էին տալիս նախօրոք սարքած-սարքագրած տնտեսություններ, որոնցում ամեն ինչ իր տեղն էր, մանավանդ կերուխումի շքեղ սեղանները, որոնք տրվում էին ուտելիքի և խմելիքի բազմազանությունից ու առատությունից: Այդ ցուցադրանքից կշտացած՝ մի օր էլ ես առաջարկեցի, որ մեզ տանեն որևէ միացյալ հայ-ադրբեջանական գյուղ: Նույնիսկ գյուղի անունն էլ տվի՝ Շոռոթ: Այնտեղ էր ծնվել իմ լավ բարեկամ Մարգար Դավթյանը: Բաքվի հայ գրող, Գրողների միության հայկական միավորման բազմամյա ղեկավար: Իսկ ավելի վաղ Շոռոթը երկրամասի հայության մշակութային փառավոր կենտրոններից մեկն էր եղել՝ հռչակված իր վանքերի ու եկեղեցիների ճարտարապետությամբ, գրչական-լուսավորական կենտրոնով: Եվ, վերջապես, Շոռոթն է եղել մեր հռչակավոր Հովնաթանյան տոհմի (նկարիչների ու գուսանների) ծնունդավայրը, ստեղծագործական միջավայրը:

Առաջարկությունը երևի շատ էր տարօրինակ. այն ժամանակ սովորություն չէր, որ նման պատվիրակությունները տեսնելիքի և «ուտուխմելիքի» նկատմամբ որևէ նախաձեռնություն ցուցաբերեին, ունենային սեփական կարծիք: Այդ պատճառով էլ նախ գլուխները կորցնելու պես մի վիճակ ապրեցին, ապա ուշքի գալով՝ միանգամից համաձայնեցին, երևի որոշելով, որ կտանեն, թռուցիկ ցույց կտան, ապա ժամանակին կհասցնեն հերթական «սուփրա-սեղանին», որ, կարծեմ, իրենց հանրահայտ հանքաջրերի մոտ էր լինելու:

Բայց երբ հասցրին Շոռոթ, ցույց տվին գյուղի վարչական շինությունները, նույնիսկ մսուր-մանկապարտեզը, որ բավական տանելի վիճակ ուներ, և շտապեցնում էին ավելորդ ժամանակ չկորցնել, քանի որ հերթական «սեղանը» կսառչեր, ես ստիպեցի, որ մեզ Շոռոթի դաշտն էլ տանեն: Իմ այս առաջարկությունը երևի շատ մեծ կամայականություն թվաց, ուզում էին բանի տեղ չդնել: Սակայն նույնը պնդեց պատվիրակության մի անդամ ևս՝ Մարդակերտի շրջանի Սեյսուլանի կոլտնտեսության նախագահ Արտաշես Հարությունյանը:

Տեսան՝ փրկություն չի լինելու, մեզ մի մեքենա տրամադրեցին, ասացին. — Գնացեք, ձեր ուզած դաշտը տեսեք, իսկ մենք ձեզ կսպասենք «սեղանի» շուրջ:

Մեզ ուղեկից դարձավ այն տարիներին Նախիջևանում «Կոմունիստ» (Բաքվի հայերեն) թերթի սեփական թղթակից Հարություն Մկրտչյանը և, ասես մեր ցանկությունը մինչև վերջ հասկանալով, տարավ ուղիղ մի դաշտ, որի արտում ու բանջարանոցում հայ կանայք էին աշխատում: Հայ կանայք, որոնցից մի քանիսը՝ ծծկեր երեխաներով: Սրանց մենք հարց տվինք՝ ինչո՞ւ երեխաներին չեն թողել գյուղի մսուր-մանկապարտեզում:

Ձահել հարսներն սկզբում ջանում էին խոսքը կտուրը գցել: Հետո տեսան, որ անվնաս հայ մարդիկ ենք, բացատրեցին. — Մսուր-մանկապարտեզում մեր երեխաներին չեն ընդունում, ասում են՝ դուք հարամ եք, ձեր երեխաներն էլ են հարամ: — Իսկ չի՞ լինի այնտեղ հայկական բաժին էլ ստեղծեն, — հարցրեց Արտաշես Հարությունյանը:

— Է՛, ա՛յ ախպեր, ի՞նչ տարբերություն՝ երեխա է, թե բաժին: Չեն ուզում հարամուտվել: Ասում են՝ քանի՞սն եք մնացել, հե՛սա, դուք էլ կգնաք, Շոռոթը կմաքրվի ձեզանից: — Այդպես էլ ասո՞ւմ են երեխաներին: — Է՛հ, դա ի՞նչ է որ... Մեր ականջներն ամեն օր Է՛ն խոսքերն են լսում, որ աստված հեռու տանի:

Հետագայում, երբ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Նիկոլայ Շահնազարովին պատմեցինք այս ամենի մասին և զայրացած սպառնացինք բողոքել հանրապետության ղեկավարությանը, նա հանգիստ ու անվրդով լսեց մեզ և միայն մի հարց տվեց. — Դուք Երևանո՞ւմ եք եկել Նախիջևան: — Այո՛, Երևանում ենք եկել: Բայց այնտեղ ի՞նչ մի վտանգավոր կամ վնասակար բան կա: — Ո՛չ մի, — ասաց, — պարզապես դա հասկանալի է դարձնում ամեն ինչ:

Այս Շահնազարովն էր կուսակցության մեր մարզկոմի առաջին քարտուղարը և, ըստ երևույթին, իրեն հեռատես մարդ համարելով, լավ էր պատկերացնում մարզի ապագան, ամեն կերպ ջանում էր ըստ հնարավորինն այն մոտեցնել: Շուշիի կուսակցական ակտիվի նիստում խոսել էր, պահանջել, որ ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում ժողովներն անցկացնեն միայն ադրբեջաներեն: Ո՛չ ռուսերեն, ո՛չ հայերեն, միայն ադրբեջաներեն: Ստեփանակերտի հավաքներին, մարզային միջոցառումների ժամանակ ադրբեջաներեն խոսելը խրախուսում էր, իսկ հայերեն խոսողին կանգնեցնում, թե դու չե՞ս կարող խոսել ռուսերեն: Մարզկոմի ինչ-որ նիստում պահանջել էր փաստաթղթեր պատրաստել, որպեսզի վերևների առաջ հարց բարձրացվի «Խորհրդային Ղարաբաղ» հայերեն չորս էջանոց թերթի 2 էջն ադրբեջաներեն դարձնելու մասին: Մարզային հիմնարկ-ձեռնարկությունները, հատկապես առողջապահության բնագավառը միայն վերջերում լցված ադրբեջանցի աշխատողներն իրենց այնպես սանձարձակ էին պահում, որ տեսնողը պիտի մտածեր, թե նրանք միահեծան տերն են ամենուրեք, և հայերը խելոք կվարվեն, եթե թողնեն-հեռանան իրենց մարզից:

Այս ամենն առաջացրել էր բողոքի ու դժգոհության ալիքներ, որոնք բարձրանում էին տարբեր հիմնարկներում, հատկապես արդյունաբերության բնագավառում ու շինարարությունում:

Շահնազարովը, հավանաբար, կազմել էր բերանները փակելու, այսպես կոչված, ազգայնական խմորումները տեղերում ոչնչացնելու իր ծրագիրը և նրա իրականացումն սկսեց Ստեփանակերտի շինարարների ակտիվի մի նիստով, որին նույնիսկ հանրապետական ղեկավարության ներկայացուցիչներ էր հրավիրել: Երևի շատ ցայտուն տեսնում էր իր հաղթանակն այդ նիստում և որոշել էր հպարտանալ բաքվեցիների առաջ, ցույց տալ, թե ինչպես է նրանց հանձնարարությունն իրականացնում օր առաջ և հավելումով:

Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի դահլիճը լցված շինարարներն էլ ունեին իրենց ծրագիրը՝ Շահնազարովին հասկացնել, որ Նախիջևանից բերած զուռնան Արցախում չի կարող նվագել...

Ձեկուցում պիտի կարդար Շահնազարովը: Բայց դահլիճը թույլ չտվեց, ասաց՝ դու այսօր պիտի միայն լսես, թե մենք ի՛նչ ենք ասում:

Եվ առաջինը ելույթի խոսք վերցրեց տարեց շինարար Իշխան Դայանը, որ քաղաքի երևելի մարդկանցից էր, ծանրակշիռ ու ազդեցիկ իր խոսքն ունեցող մարդ: Ասաց.

— Դո՛ւ, Շահնազարո՛վ, շատ ես սիրում, որ մեր ժողովներում մարդիկ խոսեն թուրքերեն: Ես հիմի թուրքերեն պիտի խոսեմ, բայց դա՝ ո՛չ թե քո աչքերին դուր գալու համար, այլ որպեսզի քո այդ Բաքվից հրավիրածները լավ հասկանան և էստեղից գնան՝ ասածս ականջներին օղ արած...

Ապա դահլիճի հավանության բացականչություններն ու խրախուսիչ աղմուկը ձեռքի մի կտրուկ շարժումով լռեցրեց, դարձավ նույն Շահնազարովին.

— Ես վերջին հիսուն տարում ձեր Մելիք-Շահնազարների տոհմից ոչ մի դավաճան չէի բարձրացնում: Մենք էլ մտածում էինք, որ դավաճանի սերմն իսպառ կտրվել է, ու տոհմն այսուհետ միայն իր հին ու հայտնի շնորհներն է ցույց տալու: Հիմի մենք շատ ենք ուզում իմանալ, թե դու էդ որտեղի՞ց հայտնվեցիր՝ էդքան բացահայտ դավաճան և էդպես ծախու հոգի:

Դահլիճը փոթորկվեց: Իշխան Դայու համախոհները ծափահարեցին, իրենք էլ իրենց հերթին բազմաձայն որոտացին՝ «Էդ որտեղի՞ց հայտնվեցիր»...

Շահնազարովի դրածոներն ու կուսակցական կարգապահության պաշտպանները տարբեր տեղեր ոտքի կանգնեցին, փորձեցին նիստը կառավարել, կարգի հրավիրել մարզի տիրոջը վարկաբեկողին: Սակայն անմիջապես էլ ստիպված եղան ընկրկել, տա կենալ:

Երբ դահլիճը մի փոքր խաղաղվել էր, և նախագահությունում դեռ չէին հասկանում, թե իրենք ի՞նչ պետք է անեն, ամբիոն բարձրացավ քաղաքի շինարարության վարչության աշխատակից (կարծեմ կադրերի բաժնի վարիչն էր) Երվանդ Մարությանը, նախկին ժողդատավոր, դատախազ: Սա Շահնազարովի գործունեությունն սկսեց գնահատել իրավաբանության նորմերով: Հիմա դժվարանում եմ վերականգնել ելույթը, բայց լավ եմ հիշում, թե ինչպես նա Շահնազարովին ներկայացրեց որպես մարզի վարչությունը, տնտեսությունը և հասարակական կարգը քայքայող չարատատի, որի յուրաքանչյուր երկու քայլից մեկը դատապարտելի է...

Բաքվից եկած մեկը դրանից հետո անցավ ամբիոնի ետև, փորձեց կարգի հրավիրել դահլիճը: Այս ու այնտեղից բացականչություններ եղան նրա դեմ, պահանջում էին, որ նա հանրապետության ղեկավարների հակահայկական քաղաքականության համար պատասխան տա:

Սա տեսավ՝ խաղաղ խոսքն օգուտ չի տալիս, սկսեց հոխորտալ, սպառնաց «չափը կորցրածների» հետ ուրիշ լեզվով խոսել...

Այն ժամանակ դահլիճում գտնվողները միանգամից վեր կացան, հեռացան, և նախագահությունը մնաց ապշած:

Այս դեպքից շատ ժամանակ չէր անցել, որ Ստեփանակերտի ավտոբազայի երիտասարդ աշխատողների մի խումբ եկավ ինձ մոտ՝ Գրողների միության մարզային բաժանմունք, խնդրեց, որ միութենական կառավարությանն իրենց անունից նամակ գրեմ՝ ներկայացնելով մարզի գաղութային վիճակը և առաջարկելով ընդառաջել հայության վճռական կամքին՝ վերամիավորվելու Հայաստանի հանրապետությանը, ապրելու մայր ժողովրդի հետ միասին, նույն Խորհրդային Միության սահմաններում, կոմունիստական կուսակցության դրոշի ներքո: Մի շաբաթ հետո նամակը, ավելի քան 300 ստորագրություններով հաստատված, հանձնվեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը, կուսակցության Կենտկոմ և Մինիստրների խորհրդին: Ավտոբազայի աշխատողների ներկայացուցիչներն անձամբ էին տարել և հանձնել ըստ պատկանելույն, և ովքեր տեղյակ էին, ստորագրողները՝ հատկապես, համոզված էին, որ իրենց պահանջն անպայման կկատարվի: Ինչո՞ւ չպետք է կատարվի, ի՞նչը կարող է խանգարել. մի քանի տարի առաջ (1954 թ) վերին կառավարության մի հասարակ որոշումով Ղրիմի մարզը Ռուսաստանի ֆեդերացիայից հանվել, տրվել էր Ուկրաինային, և դա ոչ ոքի չէր անհանգստացրել: Մերոնք համոզված էին, որ իրենց հարցն էլ նույն հեշտությամբ կլուծվի, մանավանդ, որ խրուշչովյան ձնհալի տարիներն էին, և երկրում տիրապետող էր դառնում ժողովրդավարական վարչության կարգը, հասարակական մթնոլորտում կարգախոսներ էին թևածում ազգերի ու ժողովուրդների ազատ, ինքնավայել կյանքի մասին:

Սակայն մի քանի շաբաթ անց հանրապետության տարբեր վերադասներից առանձին ղեկավար աշխատողներ եկան մարզ, ստուգումներ կատարեցին, «գաղափարաքաղաքական միջոցառումներ» անցկացրին: Ավտոբազան դարձել էր բոլորի ուշադրության կենտրոնը: Քննչական մարմինները, ներքին գործերի մինիստրության ու

ՊԱԿ-ի աշխատողներն այնտեղ շատ գործ կատարեցին՝ մարդկանց նեղելու, ձեռնարկությունում սարսափի ու խեղճացման հին մթնոլորտը վերականգնելու համար:

Դեպքերից առաջ ընկնելով հայտնեմ, որ երեք տարի հետո, 1965-ին, երբ Մոսկվա էի տարել «13-ի» նամակը, կուսակցության Կենտկոմի գրասենյակում ցույց տվին մեր ավտոբազայի աշխատողների նամակը՝ այսպիսի մակագրությամբ. «Ընկ. Յա. Ն. Զարոբյանին. ծանոթանալ և տալ առաջարկություն», ապա Զարոբյանի կից գրությունը, որով հաղորդվում էր, թե ինքը ծանոթացել է նամակին և գտնում է, որ հեղինակին ու ստորագրողներին ղեկավարել է ազգայնական վատառողջ տրամադրությունը (բովանդակությունը հաղորդում եմ մոտավորապես, որովհետև վերականգնում եմ հիշողությամբ):

Ցույց տվողն ինձ ասաց. «Ձեր մարզի աշխատավորության ցանկությունը չի բաժանում նույնիսկ ազգակից ղեկավարը, ինչո՞ւ դժգոհում եք ուրիշներից»: Ես շշմած էի տեսածից և արդարանալու խոսք չգտա:

— Երևի դա թյուրիմացությո՞ւն է,— ասացի,— Զարոբյանից այդպիսի բա՞ն...

— Այստեղ թյուրիմացություններ չեն լինում,—վճռաբար հայտարարեց գրասենյակի պատասխանատու աշխատողը, և դրանով էլ մեր տխուր զրույցն ավարտվեց:

1968 թ. Մոսկվայում մեր անվանի արվեստագետ Սուրեն Քոչարյանն ինձ հրավիրել էր իր տունը, ուր ներկա էին Յա. Զարոբյանն ու մի այլ նշանավոր հայ՝ Լեոնիդ Կոստանդովը: Ճաշկերույթին, երբ Սիբիրի մասին հորդում էին ջերմագին խոսքերը՝ համեմված ցավի ու ափսոսանքի արտահայտություններով, հատկապես, երբ դրանք առատորեն հնչում էին Զարոբյանի շուրթերից, ևս այլևս չդիմացա:

— Ընկեր Զարոբյան,— ասացի,— բայց դուք մի քանի տարի առաջ Արցախի մասին բոլորովին էլ այդպես չէիք մտածում...

— Ինչպե՞ս թե: Մի քանի տարի առաջ Արցախի մասին ո՞վ էր իմ կարծիքը հարցնում, որ ես իմ այս խոսքերն ասեի:

— Հարցրել են,— ասացի,— Ստեփանակերտի ավտոբազայի աշխատողների համախոսականի կապակցությամբ ձեր կարծիքն են պահանջել, և դուք...

— Այդպիսի բան չի եղել, ձեզ երևի... ինչ-որ մեկը սխալ տեղեկություն է հաղորդել,— հրաժարվեց նա, և ձայնը դողաց, երերաց:

— Բայց ես իմ աչքով եմ տեսել ձեր ձեռաց գիրը...

Քոչարյանն աչք-ունքով փորձում էր հասկացնել, որ ես չշարունակեմ այս տհաճ զրույցը: Սակայն ուշ էր արդեն:

Այնուհետև մեր զրույցը չէր կպչում, որքան էլ Քոչարյանը ջանում էր այն ջերմացնել զանազան սրամիտ պատմություններով...

Երեկոյի վերջում Զարոբյանը, այնուամենայնիվ, խոստովանեց, որ նման մի բան եղել է:

— Գիտե՞ք,— ասաց,— այն ժամանակ այդ Ղարաբաղն ինձ համար մի հեռավոր ջունգլի էր: Եվ ոչ միայն Ղարաբաղը: Հետո՛ միայն, մտերմանալով Հրաչյա Քոչարի ու մեր մյուս նշանավոր մտավորականների հետ, ես մտա մեր ազգային ցավերի մեջ, հասկացա, թե ի՛նչ կա աշխարհում, և ես ի՛նչ պիտի անեմ...

Ուզում էի ասել՝ իսկ այդ պարագային ինչո՞ւ էիք գրում ձեզնից պահանջվող առաջարկությունը կամ կարծիքը: Հրաժարվեիք, խորհրդակցեիք տեղյակ հայրենակիցների հետ և նոր միայն հանեիք ձեր վճիռը:

Սակայն արդեն շատ էր ուշ, անօգուտ ու ավելորդ:

Այս պատմությունը եկավ չարահուշ Նիկոլայ Շահնազարովի վրա:

Այդ օրերի Արցախի մեծագույն ողբերգությունն, իհարկե, Շահնազարովի «տիրապետությունը» չէր: Եվ ո՛չ միայն այն օրերի, այլև բոլոր ժամանակների, սկսած 1920 թվականից: Շահնազարովը չլիներ, մեկ ուրիշն էր գալու՝ իրեն հանձնարարված ծրագիրը մասամբ կամ ամբողջությամբ կատարելու: Քանի՞-քանիսն են եղել: Ա՛յ, հենց իմ աչքի առաջ՝ կուս. մարզկոմի քարտուղարներ Միքայել Մանուկյանը, Տիգրան Գրիգորյանը, Սեդրակ Աբրամովը, Եղիշե Գրիգորյանը: Բոլորն էլ նշանակվել են վերևից, իբրև Ադրբեջանի ղեկավարության դրածներ և ունեցել են միայն մեկ պարտականություն՝ լինել Ադրբեջանի շովինիստ ու հայակուլ ղեկավարության կամակատարները, որ պիտի մարզը կողոպտեին հանրապետության գրպանները լցնելու համար, բնում խեղդեին նույնիսկ հեռավոր կերպով ազգային տրամադրություն հիշեցնող ամեն երևույթ... Իրավունք ունեի՞ն այդպիսին չլինելու, կարո՞ղ էին չլինել: Ամենանշան կասկածն անգամ բավական էր, որ նրանք կորցնեին վստահությունը, իսկ առաջին հերթին՝ պաշտոնը: Տիգրան Գրիգորյանը հայկական ազգայնամոլություն էր փնտրում ու պատժում ամենուրեք, նույնիսկ մի բանաստեղծության մեջ, որի էությունը ժողովրդավարական գորովալից վերաբերմունքն է հացի նկատմամբ: Եվ պաշտոնանկ եղավ միայն նրա համար, որ աշխատասենյակում ընդունել էր Ավետիք Իսահակյանին: Եղիշե Գրիգորյանն իր պաշտոնավարության վերջո՛ւմ միայն հասկացել էր, որ ինքը ղեկավարում է հայկական ինքնավար մարզ և հարկ է, որ այդ երբեք չմոռանա: Անմիջապես իմացան ու հանեցին...

Եվ հիմա էլ Շահնազարո՞վը...

Ավտոբազայի համախոսականի կապակցությամբ Բաքվից ու Մոսկվայից եկածները մարզի աչքաբաց մարդկանց հասկացրել ու համոզել էին, որ Արցախը Հայաստանին վերադարձնելու մասին խոսք լինել չի կարող, դա մի զառանցանք է, որ կարող է ելնել միայն հիվանդ գլուխներից: Ուրիշ չէր և մեր երևանցի ընկերների կարծիքը: Արդեն մասամբ ազատ էր ճանապարհը, գալիս էին, ասում-խոսում, մենք էինք Երևանում զրույցի նստում հետները... Միայն մեկ խորհուրդ ունեին՝ աշխատեցեք մարզը պահել, նրա հայկականությունը չխաթարել: Մնացածը կա՛մ անիրականանալի երազ է, կա՛մ հեռավոր, երանելի ապագայի գործ...

Եվ ես այն ժամանակ (1962 թ. ամառն էր) մտածում էի, որ մարզը պահելու առաջին պայմանը Շահնազարովից ազատվելն է: Բայց ինչպե՞ս ազատվել, երբ նրա հարցն Ադրբեջանի Կենտկոմում են լուծում, իսկ այնտեղ էլ համոզված են, որ նա իսկ և իսկ իրենց մարդն է, իրենց ուզածն ու հլու կամակատարը:

Նստեցի, Շահնազարովի քառամյա ղեկավարության շրջանում մարզի տնտեսական կյանքում եղած հակաօրինական քայլերը նկարագրեցի, ցույց տվի մարզի հայկական ինքնավարության դեմ պարբերաբար գործվող չարությունները, Շահնազարովի անձնական գործունեության մեծամեծ արատները՝ կադրային քաղաքականության մեջ թույլ տրված կամայականությունները, ամենատարբեր անօրինությունները և, մանավանդ, կաշառակերությունը մարզ մուծելու, այն ամենակարճ միջոցում տարածելու ահավոր ախտը: Կաշառակերության բազմաթիվ փաստեր էին նշվում: Դրանք բոլորն էլ, առանց դժվարության, կարող էին ապացուցվել, հաստատվել բազմաթիվ վկաների ու քաջատեղյակ մարդկանց միջոցով: Բայց միայն մի դեպքում՝ եթե վերադասները ցանկություն ունենային այդ ամենը քննել իրատեսորեն, հասնել ճշմարտությանը: Իսկ եթե չկամենա՞ն, ինչպես որ լինում է սովորաբար, եթե գործին խառնված են լինում ադրբեջանական ղեկավարության օղակները: Չէ՞ որ Ադրբեջանում կաշառակերությունն ամենատարածված, ամենաընդունելի երևույթն էր, և հենց այդտեղ էլ քննվելու էր հարցը, այնտեղ այն ստանալու էր իր արժանի գնահատականը:

Շարադրելով Շահնազարովի կաշառակերության հանրահայտ փաստերը, նրանց շարքը փակեցի մի արտասովորով, որ կատարվել էր փոստով և երեք-չորս տարի շարունակ: Փոստի մարզային բաժանմունքից ինձ էին բերել մի բուռ անդորրագրեր, որոնք ցույց էին տալիս, թե մարզային հիվանդանոցի գլխավոր վիրաբույժ ոմն Մամեդկարով ինչպես ամեն ամիս

Շահնազարովի՝ Մոսկվայում սովորող տղային է ուղարկում պարտադիր դարձած թոշակ-կաշառքը:

Ես համոզված էի, որ անդորրագրերն արդեն այն ահռելի պայթուցիկ նյութն են, որ կործանելու են շահնազարովյան դիրքերը:

Նամակը, որ ուղարկել էի Ադրբեջանի Կոմկենտկոմի առաջին քարտուղար Վալի Ախունդովին ու կուսակցության միութենական Կենտկոմի գլխավոր քարտուղար Ն. Ս. Խրուշչովին, անմիջապես մարդ բերեց մոսկովյան կուսակցական մի հանձնաժողով, որն Ստեփանակերտում ու շրջաններում լայն ու խոր ստուգումներ կատարեց, վերջում էլ ինձ հետ երկար, բարյացակամ զրույց ունեցավ: Բաժանվելիս էլ, երբ խոստացան հարցը լուծել կարճ ժամանակում, մարզի համար ձեռնտու եղանակով, ես ասացի. «Հետո՞ ինչ, կպահանջեք Շահնազարովին հանել, և Ախունդովը նրա աթոռի համար կուղարկի մի նոր հայատյաց կաշառակերի»: Ասացին՝ այդպիսի բան չի կարող լինել, որովհետև իրենց եզրակացությունն այնպիսին է, որ նոր քարտուղարը պիտի ընտրվի տեղացիներից, մարզի հայ ղեկավարության կամքով:

Իմ բարեկամ Մարգար Դավթյանի քենակալ Փաշա Առուշանովը, որ 50-ական թվականներին մի քանի տարի մեր մարզի գործադիր կոմիտեի նախագահն էր եղել և այդ ժամանակ էլ Ադրբեջանի կուսկենտկոմի նավթային արդյունաբերության բաժինն էր ղեկավարում, Մարգարին պարբերաբար ստույգ տեղեկություններ էր հաղորդում Շահնազարովի գործի վերաբերյալ, և ես օր օրի վրա սպասում էի, որ ահա վերևից կգան, մարզը կփրկեն այդ աղտեղությունից, և մենք էլ հնարավորություն կունենանք մարզի պատմության մեջ առաջին անգամ մեր կամքով ընտրելու մեր ղեկավարին:

Սակայն հարցը ձգձգվում էր:

Աշնանամուտին Բաքու էի գնացել: Գրական ֆոնդի նախագահ Ներսես Բրուտենցն ինձ Կիսլովոդսկի առողջարանի ուղեգիր առաջարկեց, թե «Գնա, հանգստացիր, գիտեմ, որ վերջին ժամանակները շատ ես չարչարվեցիր»:

Ուղևորվեցի Կիսլովոդսկ՝ Մարգարին խնդրելով, որ Առուշանովի հետ ամենօրյա կապ ունենա և միշտ ինձ տեղեկացնի գործի ընթացքի մասին: Կիսլովոդսկում մի շաբաթ էլ չէի անցկացրել, որ Մարգարն իմ հերթական հեռախոսազանգին պատասխանեց, թե Մոսկվայի ներկայացուցիչն արդեն Բաքվում է և սպասվում է, որ այս օրերին կգնա Ստեփանակերտ:

Այդ օրն իսկ թռա Բաքու: Եվ Մարգարից իմացա, որ Շահնազարովի հարցն արդեն լուծված է, իսկ տեղն առաջարկել են Առուշանովին, որն էլ մերժել է...

Ստեփանակերտ հասա այն հանձնաժողովի հետ միասին, որի կազմում Մոսկվայի ներկայացուցիչն էր (Միութենական Կենտկոմի պատասխանատու մի աշխատող), Ադրբեջանի կուսակցական Կենտկոմի քարտուղար Իսմայիլ Վելիզադեն, հայերեն «Կոմունիստ» թերթի խմբագիր Հրանտ Բաբայանը և էլի ինչ-որ մարդիկ:

Առաջին իսկ օրվա ուշ երեկոյան ինձ հրավիրեցին հյուրանոց, ինչպես իրենք էին ասում, որոշման մանրամասնները հետս համաձայնեցնելու համար: Ծանոթացա նախագծի հետ և հայտնեցի կտրուկ դժգոհությունս, պահանջեցի, որ անպայման նշվեն թույլ տրված կոպիտ սխալներն ու հանցագործության հասնող արարքները, և, առանձնապես, հատուկ կետով բացառվի հետագայում Շահնազարովին ղեկավար աշխատանք տալու հնարավորությունը:

Խասայ Վեզիրովիի հետ վաղուցվա ծանոթներ էինք: 1950-ականների կեսերին ինքն ադրբեջաներեն «Կոմունիստի» խմբագիրն էր եղել, ես էլ խմբագրում էի «Խորհրդային Ղարաբաղը», հետո էլ իրեն գրականության մարդ էր համարում, հաճախ էինք հանդիպում Գրողների միությունում ու գաղափարաքաղաքական աշխատանքներին նվիրված հանրապետական զանազան հավաքներում: Մտերմորեն խնդրեց, որ զիջող լինեմ:

— Գրող մարդ ես, — ասաց, — բարի եղիր: Թե չէ, անձնական քարտուն էլ պիտի փչացնենք, էլ էլ գլուխ բարձրացնելու ոչ մի հնար չի ունենա...

Փոխադարձ համաձայնությամբ միջին մի տարբերակ սարքեցինք... Եվ հաջորդ առավոտյան Կուսակցության մարզկոմի պլենումում, Շահնազարովին հրաժեշտ տալով, մարզկոմի առաջին քարտուղար ընտրեցինք Գուրգեն Մելքումյանին՝ նախկին երկրորդ քարտուղարին, որը դրանից առաջ էլ առաջին քարտուղար էր եղել Հադրութի ու Մարտունու շրջաններում: Հայտնի էր որպես գրագետ, բարեկիրթ ու պարտաճանաչ մարդ: Իսկ ես նրան գիտեի 1950 թվականից, երբ նա դեռևս Հադրութի շրջկոմի շարքային քարտուղարն էր: Շրջանի ուսուցիչների վերավորակավորման երկարաձգված հանձնարարությամբ այնտեղ էի գնացել և գործը պիտի կատարեինք միասին: Այդ երկար միջոցին մենք մտերմացանք: Ես գնահատում էի նրա մարդկային արժանավորությունները և, պարզ է, որ հիմա էլ ուրախ պիտի լինեի այդ ընտրությամբ. մարզի ղեկավարն էր դառնում մեզանից մեկը, մեր ընկերն ու բարեկամը:

Այստեղ պիտի ընդգծեմ «ընտրեցինք» բառը, որովհետև, ճիշտ է, Գուրգեն Մելքումյանին դրանից առաջ կանչել էին Մոսկվա, ծանոթացել ու «բարի երթ» մաղթել, որ առօրյա խոսակցության մեջ կոչվում էր «երաշխավորել», իսկ իրականում՝ «նշանակել» և այն էլ անառարկելի, սակայն կուսակցական մարզկոմի պլենումի այն նիստում մենք այնպես էինք մտածում, թե առաջին անգամ ինքներս ազատել ենք վերևի դրածո ապիկար ղեկավարին, ինքներս էլ ընտրում ենք մեր ուզածին, մեր ճանաչած, ստուգած ընկերոջը:

Այն ժամանակ անգամ երևակայել չէինք կարող, որ մեր ընտրածը ոչ մի դեր էլ չպետք է ունենա, ո՛չ մի վճռական դեր: Որովհետև շատ շուտով պարզվեց, որ ադրբեջանական հակահայ մոլեռանդության հետ որևէ խաղ շահելու համար չափազանց քիչ է լինել գրագետ, բարեկիրթ ու պարտաճանաչ մարդ: Պարզվեց նաև, որ ադրբեջանական ղեկավարության համար Մելքումյանը շատ ձեռնտու մարդ է՝ թեկուզ հենց իր բարեկիրթ ու փափուկ բնավորությամբ: Այդ պատճառով էլ հասկանալի է, թե ինչո՞ւ նրա իշխանության ավելի քան տաս տարիները դարձան հայկական ինքնավար մարզի քաղաքական ու ազգային դիմագծի ավերելու սկիզբը:

Նախորդ շուրջ քառասնամյա ժամանակաշրջանում ոչ ոք այդքան երկար տարիներ չէր զբաղեցրել մարզի ղեկավարի պաշտոնը: Դիմանում էին շատ-շատ երկու-երեք տարի, իսկ Տիգրան Գրիգորյանը՝ միայն վեց ամիս, 1948-ի ամռանից մինչև 49-ի հունվարը: Երևի Բաքուն մտածում էր, թե քարտուղարին չի կարելի պահել այնքան, որ մերվի տեղացիների հետ, դառնա նրանց իսկական ներկայացուցիչն ու զավակը... Մյուս կողմից էլ, մարզի ղեկավարի այդ պաշտոնին մի տեսակ «գայլի թակարդի» դեր էր վերապահված. հենց որ հանրապետության մայրաքաղաքում որևէ հայ այնքան էր բարձրանում, որ դեռևս այնտեղ չէր լինում, ուղարկում էին մարզի ղեկավար և կարճ ժամանակում թևերն այնպես էին տալիս, որ նա այլևս գլուխ բարձրացնելու ուժ ու հնար չունենա:

Մելքումյանը դիմացավ ավելի քան տաս տարի և այդ էլ ոչ թե մարդկային բարեմասնությունների համար, որ, անկասկած, ուներ, այլ թերությունների՝ ավելի ճիշտ՝ ամենամեծ թերության՝ փափուկ բնավորության, որովհետև նրա առկայությունը խանգարիչ հանգամանք չէր, որպեսզի իրենք ազատ ու անկաշկանդ վարեն իրենց բացահայտ հակահայ քաղաքականությունը:

Մելքումյան Գուրգենն իր քարտուղարության տարիներին իմ անձնական բարեկամներից մեկն է եղել, այժմ էլ է: Սակայն դա չի կարող պատճառ լինել, որ ես այստեղ չշարադրեմ ամբողջ ճշմարտությունն այն ժամանակի կարևորագույն դեպքերի և դրանց դասավորության մեջ իր իսկ խաղացած անբարեհամբույր դերի մասին:

1965 թ. ամառնամուտին, երբ արդեն, ինչպես ասում են, դանակը ոսկորին էր հասել, ես մի նամակ գրեցի մարզի հին ու նոր ցավերի մասին, այն կարդալու տվի մոտ բարեկամներիս, և երբ կարծիքները միասնականացան, տասներեք ընկերներ, բոլորն էլ, բացի բանաստեղծ Բոգդան Ջանյանից, մարզի ղեկավար աշխատողներ, ստորագրեցինք, որոշեցինք

ներկայացնել միութենական ղեկավարությանը: Ո՞վ պիտի տաներ, ինչպե՞ս... Նման հարց, կարծեմ, չծագեց էլ: Ինքս եմ գրել, ինքս ստորագրություններ կազմակերպել, որ այն ժամանակ Արցախի պայմաններում շատ էլ հեշտ ու անվտանգ նախաձեռնություն չէր, ի՛նքս էլ պիտի տանեի:

Ստորև ներկայացնում եմ այդ նամակը.

«ԽՄԿԿ Կենտկոմի նախագահության,

ընկ. ընկ. Լ. Ի. ԲՐԵԺՆԵՎԻՆ,

Ա. Ն. ԿՈՍԻԳԻՆԻՆ,

Ա. Ի. ՄԻԿՈՅԱՆԻՆ.

Մենք երկար ժամանակ տարակուսանքի մեջ էինք՝ գրե՞լ այս նամակը թե ոչ: Մենք կարծում էինք, թե Ադրբեջանի ԿԿ կենտկոմն ու կառավարությունը կփոխեն իրենց վերաբերմունքը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի նկատմամբ, թե մեր մարզի ղեկավարման գործում նրանց թույլ տված սխալները բխում են գործերի, Լեռնային Ղարաբաղի աշխատավորների շահերի ու պահանջմունքների չիմացությունից: Սակայն, ավա՜ղ, մենք մոլորության մեջ էինք:

Բոլորին հայտնի է, թե ինչպիսի տեմպերով են զարգանում մեր երկրի ժողովրդական տնտեսությունը, մշակույթը, գիտությունն ու տեխնիկան: Այդ զարգացումը տեղի ունի բոլոր հանրապետություններում, մարզերում, երկրամասերում ու շրջաններում: Իսկ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը, չգիտես ինչո՞ւ, տխուր բացառություն է կազմում:

Ո՞րն է պատճառը: Չէ՞ որ Ղարաբաղի հողը դարեր ի վեր համարվել է առատաբաշխ ու բարեբեր և ոչ իզուր տեղը: Ղարաբաղյան այգեգործներն ու հացագործները, բանջարաբույծներն ու անասնապահները, որմնադիրներն ու կահույքագործները համարվել են իրենց գործի հմուտ վարպետներ: Չէ՞ որ Լեռնային Ղարաբաղը, որ Կապանի ու Զանգեզուրյան լեռների շարունակությունն է հանդիսանում, հարուստ է պղնձի, մոլիբդենի, արճճի, իսլանդական շպատի և այլ հանքային թանկարժեք հանածոների վիթխարի պաշարներով, ինչպես նաև հանքային բուժիչ ջրերի տասնյակ աղբյուրներով: Ինչո՞ւ նրանք չեն օգտագործվում: Ինչո՞ւ գերազանցապես գյուղատնտեսական մարզ համարվող Լեռնային Ղարաբաղում խորհրդային իշխանության 45 տարիների ընթացքում չի ձեռնարկվել ջրատնտեսական որևէ խոշոր միջոցառում, երբ ամեն տարի երաշտի պատճառով կորցնում ենք տասնյակ հազար տոննաների բերք, իսկ մեր լեռնային գետերի ջրերը հոսում են անօգուտ կամ ոռոգում են միայն մեր հարևանների դաշտերը:

Ինչո՞ւ գյուղատնտեսական այս մարզում մինչև այժմ չի կառուցվել գյուղատնտեսական մթերքներ մշակող արդյունաբերական որևէ խոշոր ձեռնարկություն: Ինչո՞ւ այդ տիպի միակ ձեռնարկությունը, Ստեփանակերտի սննդկոմբինատը, որի շինարարությունը ձգձգվել էր ուղիղ 8 տարի, շահագործման հանձնվելուն պես էլ փակվեց, իսկ սարքավորումները քանդվեցին ու բաշխվեցին հարևան ադրբեջանական շրջաններին: Եվ դա այն ժամանակ, երբ մեր մարզում սպառման օջախների բացակայության պատճառով ամեն տարի չեն հավաքվում ու փչանում են հազարավոր տոննաների բանջարեղեն ու մրգեր:

Վերջին չորս-հինգ տարիներին նկատվում է մարզի ձեռնարկությունների ու շինարարական կազմակերպությունների հանրապետական

կազմակերպություններին կամ մարզից դուրս գտնվող մարմինների կցելու տենդենց: Այս և ուրիշ պատճառներով 1962 թ. մեր մարզում բռնկվել էին աշխատավորների դժգոհություններ ու ըմբոստացումներ: Վախենալով հետևանքներից՝ Ադր. ԿԿ Կենտկոմն ու կառավարությունը շուտափույթ ընդունեցին ծավալուն որոշում «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողովրդական տնտեսության զարգացման ու աշխատավորների մշակութային-կենցաղային սպասարկումը բարելավելու միջոցառումների մասին»: Այդ որոշման մեջ չկան մարզի տնտեսական վերելքն ապահովող միջոցառումներ: Եվ, այնուամենայնիվ, նախատեսված միջոցառումների 70—80 տոկոսը մնացել է թղթի վրա: Դեռ ավելին. տարեցտարի մարզի արդյունաբերությունը ետ է գնում: 1964 թ. համեմատությամբ ընթացիկ տարում համախառն արտադրանքի պլանը իջեցվել է 16,9 տոկոսով, երբ անցյալ տարվա պլանը կատարված է եղել 100,9 տոկոսով:

Ստեփանակերտում գորգագործական նոր ֆաբրիկա են կառուցել և ավարտելուն պես փակել: Կրճատվել են ֆաբրիկայի գործող բաժինները, որի հետևանքով ավելի քան 100 վարպետներ մնացել են անգործ:

Մարզի խոշորագույն արդյունաբերական ձեռնարկությունում՝ Մետաքսկոմբինատում, կրճատվել են ոլորման և գործվածքային արտադրությունները, և 180 բանվորներ ազատվել են աշխատանքից: Ինչպես նշեցինք, մարզի շատ կազմակերպություններ ու ձեռնարկություններ տրվել են մարզից դուրս գտնվող կազմակերպությունների իրավասությանը, որը շատ վատ է անդրադարձել աշխատանքի կազմակերպման վրա: Մարզային շինարարական հ. 59 վարչությունում, որը տրվել է Մինգեչաուրի հ. 5 տրեստին, դա արտացոլվել է առավել ցայտուն: Այստեղ ծայրահեղ վատ է նյութատեխնիկական սպասարկումը, որի պատճառով կառույցների վրա պարապուրդներն ու հոսունությունը դարձել են սովորական երևույթ: Միայն ընթացիկ տարվա հինգ ամսում 540 բանվորներից 220-ը հեռացել են մարզից:

Ստեփանակերտում հարյուրավոր անգործ մեխանիզատորներ ու վարորդներ կան: Սակայն քաղաքի ու մարզի կառույցներում՝ որպես վարորդներ ու մեխանիզատորներ աշխատում են Մինգեչաուրից գործուղված մարդիկ, որոնք ստանում են գործուղման ծախսեր և ձրի օգտվում են կոմունալ բոլոր ծառայություններից:

Մարզում տնտեսական ու մշակութային օջախներ ստեղծելու մասին մարզային կազմակերպությունների ու աշխատավորների խնդրանքներին Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարները պատասխանում են մերժումով: Պարզապես նրանք չեն ցանկանում Լեռնային Ղարաբաղում կատարել կապիտալ ներդրումներ: Սակայն կլիներ չարյաց կեսը, եթե նրանք բավարարվեին դրանով: Դժբախտաբար մեր մարզի նկատմամբ նրանց վերաբերմունքի մեջ չի կարելի չտեսնել վատագույնը. նրանք անում են ամեն ինչ՝ մարզի տնտեսությունը խարխլելու, մշակութային ամեն մի առաջընթաց խափանելու համար:

Դա դժվար չէ տեսնել գյուղատնտեսության օրինակի վրա:

Լեռնային Ղարաբաղի գյուղական աշխատավորները մեծ ոգևորությամբ են ընդունել ԽՄԿԿ Կենտկոմի մարտյան պլենումի որոշումները, որոնք խոշոր հեռանկարներ են բացում գյուղատնտեսության առաջընթացի համար: Սակայն որքան էլ հասկանալի լինի, այդ իսկապես լավ ու գործնական որոշումները մեզ մոտ ցանկալի արդյունք չեն տալու, որովհետև հանրապետական կազմակերպություններն առաջիկա հնգամյակի համար մեր մարզին հասցրել են ոչնչով չհիմնավորված պլաններ:

1965 թ. նախնական պլանը հացամթերքների գծով հանրապետությունում իջեցվել է 36 տոկոսով, իսկ մեր մարզում՝ ընդամենը 18: Այն այն դեպքում, երբ մարզում

հացահատիկայինների համար չկան ոռոգվող հողեր, և մարզի կոլխոզներն ամեն տարի պետությունից գնում են 20—25 տոննա սերմեր ու կոնցենտրատներ:

Համեմատեցեք մեր մարզի և նույն Ադրբ. ԽՍՀ Նախիջևանի ԻԽՍՀ պլանները: Նախիջևանի հանրապետությունը, որի տարածքը մեր մարզից ավելի է 700 քառ. կմ-ով (իսկ ցանքատարածություններն ու ոռոգվող հողերի տեսակետից՝ առավել ևս), պետությանը կվաճառի շուրջ 2000 տոննա հաց, իսկ մեր մարզը՝ 5000:

Խնդրում ենք ուշադրություն դարձնել հետևյալ փաստի վրա. 1966 թ. Նախիջևանի հանրապետությունը պետությանը պիտի վաճառի 11800 տոննա բամբակ, 1970 թ.՝ ընդամենը 6,5 հազար տոննա: Իսկ մեր մարզի պլանը մինչև 1970 թ. թողնվել է նույնը, երբ հանրապետության Մինիստրների խորհրդի որոշմամբ բամբակի համար նախատեսված հողերի զգալի մասում արդեն խաղողի այգիներ են տնկված:

Հանրապետությունում 1965 թ. նախնական պլանի համեմատությամբ մսի վաճառքի մակարդակը իջեցվել է 18 տոկոսով, իսկ մեր մարզում՝ միայն 2,5 տոկոսով: Առաջիկա 5 տարում նախատեսված է հանրապետությունում մսի արտադրանքն ավելացնել 2,7—3 տոկոսով, իսկ մեր մարզում 12—13 տոկոսով: Մինչև 1970 թ. հանրապետությունում մսի վաճառքը կավելանա ամեն տարի 2000 տոննայով, որից 500—700-ը՝ մեր մարզի հաշվին, այն դեպքում, երբ հանրապետության ոռոգվող տարածքի 5 տոկոսը կազմող մեր անջրդի մարզի պլանը մինչև այժմ կազմել է հանրապետության պլանի 6—7 տոկոսը:

Մարզի տնտեսության զարգացման մեջ խոշոր դեր կարող է կատարել խաղողը: Մանավանդ, որ դա մեր տնտեսության ամենաեկամտաբեր ճյուղն է: Բերրատու տարիներին մարզը պետությանը վաճառել է 100000 տոննա խաղող: Վերջին երկու-երեք տարվա ընթացքում խաղողի այգիների տարածությունն ավելացվել է ևս մի քանի հազար հեկտարով: Այդ նշանակում է՝ առաջիկա տարիներին կբազմապատկվի խաղողի արտադրությունը: Հետևաբար անհրաժեշտ է ավելացնել նաև պետական գնումների պլանը: Սակայն հանրապետական կազմակերպությունները կատարել են հակառակը, խիստ կրճատելով պետական գնումների պլանները, որով արհեստականորեն խանգարում են մարզի խաղողագործության զարգացմանը:

Ղարաբաղցիները դարեր ի վեր զբաղվում են թթաբուծությամբ, որի արտադրանքից (սպիրտ, զանազան հյութեր, չամիչ և այլն) ստանում են հսկայական եկամուտներ: Մարզի գիտնականների և հանրապետության Գիտությունների ակադեմիայի մասնագետների հաշվիկներով՝ միայն թթից պատրաստած գինին մարզին ամեն տարի կարող է տալ 30 միլիոն ռուբլու եկամուտ: Դրա համար միայն անհրաժեշտ է ունենալ վերասարքավորված 15—20 ավտոմեքենա: Մի քանի տարի առաջ Ադր. ԽՍՀ Մինիստրների խորհուրդը հատուկ որոշմամբ համապատասխան մարմիններին հանձնարարել էր մարզի կոլխոզներին տրամադրել այդպիսի մեքենաներ: Այս որոշումը մինչև այսօր չի կատարվել, որի հետևանքով մարզն ամեն տարի զրկվում է հսկայական եկամուտներից:

Անհասարակ մեր մարզի նկատմամբ հանրապետական կազմակերպությունների կողմից միշտ էլ կիրառվում է հետաքրքիր մի խաղ. վերադասներն ընդունում են գեղեցիկ որոշումներ, տալիս բազմախոստում կարգադրություններ և այլն, իսկ ստորադասներն անպատիժ կերպով չեն կատարում այդ որոշումներն ու կարգադրությունները:

ԽՍՀՄ Պետպլանի «Ագրոլեսպրոեկտ»-ի աշխատողներից կազմված մի հանձնաժողով անցյալ տարի մեր մարզում արձանագրել է, որ 50000 հեկտար հող էրոզիայի ենթարկվելով անպետքացել է գյուղատնտեսության համար: Հանձնաժողովը նշել է նաև, որ 150 հազար հեկտար էլ էրոզիայի է ենթարկվում: Կուսակցության մարզկոմը և մարզխորհրդի գործկոմը, այդ հանձնաժողովի

ստիպմամբ, հարց են հարուցել, որպեսզի 50000 հեկտարը դուրս գրվի մարզի բալանսից և տրվի անտառային տնտեսություններին, իսկ 150000 հեկտարի վրա կատարվի համապատասխան աշխատանք՝ հողի կազմությունը վերականգնելու համար: Սակայն Ադրբեջանի կառավարությունը մերժել է այդ խնդիրը և շարունակում է գյուղատնտեսական մթերքների պլաններ գցել այդ անպետք հողերի հաշվին:

Մենք լրջորեն անհանգստացած ենք մարզի բնակչության մեծ հոսունությամբ: Մարդիկ զանգվածաբար հեռանում են մարզից՝ ուրիշ վայրերում աշխատանք գտնելու հույսով:

1939 և 1959 թթ. մարդահամարների միջև ընկած ժամանակահատվածում մարզից հեռացել են ավելի քան 110 հազար բնակիչներ: Միայն Հադրութի շրջանում 1939 թ. ապրում էր 27,1 հազար մարդ, իսկ հիմա՝ ընդամենը 16,8 հազար:

Ցանկանում ենք Ձեր ուշադրությունը հրավիրել նաև մի ուրիշ փաստի վրա: 1939 թ. մեր մարզում ապրում էր 150 հազար մարդ, իսկ Ադրբ. ԽՍՀ Նախիջևանի ինքնավար հանրապետությունում՝ 127 հազար: 1964 թ. մեր մարզն ուներ 142 հազար բնակիչ, իսկ Նախիջևանի ԽՍՀ-ը՝ 179 հազար: Ինչո՞վ բացատրել, որ մեր մարզի բնակչությունը տարեցտարի նվազում է, իսկ Նախիջևանինը՝ ավելանում, երբ Լեռնային Ղարաբաղը աչքի է ընկնում ծննդի բարձր տոկոսով, իսկ մարդկանց երկարակեցության տեսակետից, «Իզվեստիա» թերթի հավաստմամբ, բռնում է առաջին տեղը ամբողջ աշխարհում: Ո՞րն է Ղարաբաղի բնակչության հոսունության պատճառը:

Բանվորական ուժի հավաքագրման ճանապարհով ամեն տարի մարզից հանրապետության այլ շրջաններն են տանում 250—300 տղամարդկանց: Ձանազան գայթակղությունների միջոցով պահում են նրանց, որից հետո յուրաքանչյուր այդպիսի տղամարդուն հետևում է նաև նրա ընտանիքը:

Չորս տարի առաջ Ստեփանակերտում բացվեց շինարարական ուսումնարան:

Մենք կարծում էինք, թե այդ ուսումնարանը կդառնա դարբնոց՝ մարզի կոլխոզների ու նորակառույցների համար շինարարական կադրեր պատրաստելու համար: Սակայն ուսումնարանը դարձավ մեկն այն ուղիներից, որոնցով մարզից դուրս են մղում երիտասարդ մարդկանց: Չորս տարվա ընթացքում ուսումնարանը թողարկել է 600 մասնագետներ, որոնցից 50-ը աշխատում են հանրապետության տարբեր շրջաններում, երբ մեր մարզի կոլխոզները խիստ կարիք են զգում շինարարական կադրերի: Այժմ ուսումնարանն ամեն տարի թողարկում է 200—250 վարպետներ: Սա նշանակում է, որ ուսումնարանի միջոցով ամեն տարի մարզից դուրս է գալիս 200—250 երիտասարդ, այսինքն՝ միայն այս ճանապարհով դատարկվում է տարեկան մեկ գյուղ:

Վերջերս մեր մարզն էր եկել ԽՍՀՄ Պետպլանի աշխատակից ընկ. Մոսկալենկոն, որը հետաքրքրվել է մարդկանց աշխատանքի ընդգրկելու հարցով: Միայն Ստեփանակերտում անգործների թիվը հասնում է 700-ի: Նկատի առեք, որ ավելի քան 2000 արհեստավորներ էլ աշխատում են հանրապետության այլ շրջաններում: Այդ նշանակում է 25-հազարանոց քաղաքի յուրաքանչյուր տասներորդ բնակիչն անգործ է: Ընկ. Մոսկալենկոն համապատասխան տեղեկանք է ներկայացրել Ադրբ. ԿԿ Կենտկոմին: Սակայն ո՛չ մի արդյունք: Կողմնակի մարդը կարող է մտածել, թե, երբ ինքնավար մարզում տնտեսական հարցերը չեն լուծվում, ապա թերևս մշակութային բնագավառո՞ւմ դրությունը բարվոք է:

Չէ՞ որ ինքնավարությունը հիմնականում մշակութային է: Այն բնակչությանն է տրվում ազգի ազատ զարգացումն ապահովելու նպատակով:

Դժբախտաբար մշակույթի բնագավառում մեզ մոտ դրությունն ավելի վատ է:

ԽՍՀՄ Սահմանադրությունը մեր երկրի հիմնական օրենքն է: Ըստ այդ Սահմանադրության ինքնավար մարզում պետական իշխանության և պետական վարչության մարմինները պետք է գործեն տեղական ազգաբնակչության մայրենի լեզվով: Բայց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում հիմնական օրենքի այդ հիմնական կետը համարվում է անօրեն: Մարզային բոլոր կազմակերպություններում (և ո՛չ միայն մարզային) գործավարությունը տարվում է ո՛չ հայերեն: Էլ չենք խոսում աշխատավորների դեպուտատների մարզխորհրդի նստաշրջանների, մարզգործկոմի նիստերի, գործնական ու հանդիսավոր խորհրդակցությունների ու ժողովների մասին:

Մարզխորհրդի գործկոմն ունի նախագահ (մասնագիտությամբ ագրոնոմ) և երկու տեղակալ (ագրոնոմ ու ճարտարապետ): Նրանցից ոչ ոք չի ղեկավարում (և ի վիճակի էլ չէ ղեկավարելու) մարզի մշակութային կյանքը, լուսավորությունը, առողջապահությունը: Իսկ կուսակցության մարզկոմում մշակութային շինարարության ու գաղափարական աշխատանքները «ղեկավարում է» մարզի դատախազի նախկին օգնականը՝ կիսագրագետ ու անօգնական մի մարդ:

Այսպիսի վիճակը ոչ ոքի չի անհանգստացնում:

Ինքնավար մարզը չունի իր հրատարակչությունը, պարբերական գրական-գեղարվեստական օրգանը (մինչև պատերազմն այդպիսի հանդես գոյություն է ունեցել), չունի երիտասարդական կամ լուսավորական հարցեր լուսաբանող որևէ թերթ, իսկ մինչև պատերազմը մարզում հրատարակվում էին երիտասարդական թերթ և լուսավորական բյուլետեն:

Այսպիսի պայմաններում մարզի միակ տպագիր մարմինը՝ «Խորհրդային Ղարաբաղը» (որն ունի «Պրավդայի» ֆորմատի կեսը) պարտավոր է կատարել խորհրդային մամուլի ու հրատարակչության բոլոր պարտականությունները:

Մարզում աճել է գրողների մի մեծ խումբ: Նրանց լավագույն երկերն արժանացել են ընթերցողների ու գրական հասարակայնության ուշադրությանը: Սակայն վերջին երկու տարում այդ գրողների և ոչ մի գիրք չի մտել Ադրբեջանի պետական հրատարակչության պլանների մեջ, թեպետ համապատասխան մարմինների կողմից նրանց վեց գրքեր երաշխավորված են եղել հրատարակության:

Մարզի դրամատիկական թատրոնն ու երգի-պարի պետական անսամբլը, որոնք կոչված են սպասարկելու ոչ միայն Լեռնային Ղարաբաղի, այլև Բաքվի ու մյուս շրջանների հայ բնակչությանը, հազիվ քարշ են տալիս իրենց գոյությունը: Թատրոնը ստանում է չնչին դոտացիա, անսամբլը՝ ո՛չ մի: Իսկ հանրապետության համանման կոլեկտիվներն ստանում են այնքան, որքան անհրաժեշտ է:

Մենք ոչնչով չհիմնավորված ու անմարդկային ենք համարում Լեռնային Ղարաբաղի և Հայկական ԽՍՀ միջև գոյություն ունեցող արհեստական պատնեշները: Ղարաբաղցի հայերն իրավունք չունեն լսելու իրենց մայր ժողովրդի ռադիոձայնը: Երևանի թատերական ու համերգային լավագույն կոլեկտիվները հյուրախաղերով պարբերաբար հանդես են գալիս Բաքվում, Կիրովաբադում և Ադրբեջանի մյուս քաղաքներում: Դա համարվում է բարեկամություն: Սակայն նրանց թույլ չի տրվում գալ Ղարաբաղ՝ իրենց արյունակից եղբայրների մոտ: Սա ևս բարեկամություն է համարվում:

Ինչ-որ հրամանով ստեղծվել է այսպիսի կարգ. առանց կուսակցության մարզկոմի բյուրոյի որոշման Հայաստանի գրողը կամ արվեստի գործիչը իրավունք չունի գալ Ղարաբաղ՝ իր ընթերցողների ու երկրպագուների մոտ:

Լեռնային Ղարաբաղում հայերեն կրկնօրինակված ֆիլմեր չեն ցուցադրվում, եթե նույնիսկ նրանք գիտամասսայական բնույթ ունեն և ստեղծված են աշխատավոր լայն զանգվածներին տանելու առաջավոր փորձը, տեխնիկայի ու գիտության նորույթները: Ուղղակի պետք է կույր ու խուլ լինել՝ չտեսնելու, չզգալու համար այն ծրագրվածությունը, որով սիստեմատիկաբար խափանվում է մեր մարզի տնտեսական ու մշակութային առաջընթացը, ոտնահարվում են ղարաբաղցի հայերի օրինական իրավունքներն ու ազգային արժանապատվությունը: Եվ այս բոլորը հասցրել է նրան, որ այժմ «ինքնավար» ածականը մարզի կողքին հնչում է որպես չար կատակ:

Հանրապետության ղեկավարները համարյա չեն լինում մեր մարզում: Իսկ զանազան հանդիսավոր արարողությունների ու մարզային կուսակցական կոնֆերանսների ներկայանալուց չեն հանդիպում աշխատավորների հետ: Միտինգներում արտասանում են ոգեշունչ ճառեր եղբայրության ու բարեկամության մասին, խոստանում ոսկու սարեր և՝ մարզից հեռանալով՝ մոռանում այս բոլորը: Մարզի աշխատավորներին իրենց ուշադրությամբ երես չեն տալիս նաև ԽՄԿԿ Կենտկոմի ներկայացուցիչները, որոնք տարին մեկ կամ երկու տարին մեկ Ղարաբաղ գալով, զրուցում են մարզկոմի առաջին քարտուղարի հետ ու վերադառնում:

Հանրապետության ղեկավարներն իրենց յուրաքանչյուր ելույթում, անդրադառնալով Լեռնային Ղարաբաղին, չեն կարող չթմբկահարել, թե այն (այսինքն՝ Լեռնային Ղարաբաղը) Ադրբեջանի անբաժանելի մասն է կազմում:

Դա քաղաքական դեմագոգիա է, սարսափի խրտվիլակ, որ ստեղծվել է դեռևս Բաղիրովի կողմից:

Ադրբեջանի ո՞ր մասն է այն, երբ իրենք՝ Ադրբեջանի ղեկավարները, Լեռնային Ղարաբաղին նայում են որպես օտարերկրացիներով բնակեցված մի երկրամասի: Մի՞թե նրանք կարծում են, թե աշխարհագրական քարտեզի վրայի մի սև գիծը բավական է, որպեսզի երկփեղկվի միասնական մի ազգ, միասնական իր հազարամյա պատմությամբ, հոգեբանությամբ ու ճակատագրով: Եվ դա՝ սոցիալիստական կարգի պայմաններում, լենինյան ազգային քաղաքականության դրոշի տակ:

Լեռնային Ղարաբաղի բնակչության 85 տոկոսը հայեր են, և նրանք այս հողի վրա ապրում են անհիշելի ժամանակներից: Իսկ հողը պատկանում է նրան, ով ապրում է նրա վրա: Այս ճշմարտությունը շատ լավ են հասկացել նրանք, ովքեր 1920 թ. Լեռնային Ղարաբաղը տվեց հենց նոր ստեղծված Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը: Այս երախտալից ակտը ոգեշնչությամբ է ընդունվել մեր ազգի կողմից:

Սակայն հետագայում Ստալինի թեթև ձեռքով բեկանվել է Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը Հայաստանին:

45 տարիներ կտրված լինելով իր ազգի հիմնական մասից՝ Ղարաբաղի հայությունը զրկված է եղել տնտեսական ու մշակութային մեծ առաջընթացի հնարավորություններից:

Ադրբեջանական ժողովրդի, նրա կուսակցական կազմակերպության ու կառավարության ինտերնացիոնալ պարտքն է՝ հարգել Լեռնային Ղարաբաղի հայերի իրավունքները, Լեռնային Ղարաբաղը վերադարձնել Հայաստանին: Դա ղարաբաղցի աշխատավոր բոլոր հայերի՝ տասնամյակներով փայփայած իղձն է: Հարցրե՛ք նրանցից յուրաքանչյուրի (բայց ո՛չ, այսպես կոչված, ղեկավար դրածոներին), և դուք կլսեք միայն խնդրանք ու աղաչանք վերամիավորման մասին:

Մենք ստորագրություններ չենք հավաքում: Առանց այդ էլ գրգռված են մարդիկ: Դժգոհությունն օրըստօրե ծավալվում է՝ ընդունելով ամենաանսպասելի ու տհաճ ձևեր: Դիմելով ձեզ, մենք համոզված ենք, որ Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության Կենտկոմը և խորհրդային կառավարությունը, որոնք միշտ և ամենուրեք պաշտպանում են բոլոր ազգերի շահերը, անհապաղ իրենց բարի ուշադրությունը կդարձնեն ղարաբաղցի հայերի օրինական ձայնին և մարզը կվերամիավորեն Հայկական ԽՍՀ-ին:

Նամակն ստորագրել են.

1. Բագրատ Ուլուբաբյան — Գրողների միության մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղար,

2. Սերգեյ Շաքարյան — Ստեփանակերտի քաղսովետի գործկոմի նախագահ,

3. Լազր Գասպարյան — «Խորհրդային Ղարաբաղ» մարզային թերթի խմբագիր,

4. Գրիգոր Ստեփանյան — մարզային ռադիոյի ավագ խմբագիր,

5. Արամ Բարայան — Ստեփանակերտի հ. 2 սովխոզի դիրեկտոր,

6. Արսեն Մարտյան — Ստափ Շահումյանի անվան կոլխոզի նախագահ, Ադրբ. Գերագույն խորհրդի դեպուտատ,

7. Գուրգեն Գաբրիելյան — կուլտուրայի մարզային վարչության պետ,

8. Բոգդան Ջանյան — բանաստեղծ,

9. Միքայել Կորգանյան — հանրապետության ժողովրդական դերասան,

10. Արկադի Մանուչարյան — Ստեփ. հ. 59 շինվարչության պետ,

11. Ալբերտ Սեյրանյան — Ստեփ. էլեկտրատեխնիկական գործարանի դիրեկտոր,

12. Մաքսիմ Ավանեսյան — Ստեփ. ռադիոյի ավագ խմբագիր,

13. Սերգեյ Գրիգորյան — հ. 59 շինվարչության գլխավոր ինժեներ»:

Նամակը գրվել է 1965 թ. հունիսի սկզբին, ԽՄԿԿ Կենտկոմին է հանձնվել նույն ամսի 28-ին:

Զարմանալի տնաճ մի զուգադիպությամբ այնպես էր դասավորվել, որ նամակն ստացվել էր 13 թվ., ստորագրվել էին 13 հոգի, Մոսկվա էի հասել հունիսի 13-ին և տեղավորվել է «Արմենիա» հյուրանոցի 4-րդ հարկի 13-րդ համարում:

Այդքան ձախորդ հանդիպադրություն կյանքումս չէի կատարել: Ստեփանակերտի օդանավակայանից չկարողացա թռչել Երևան, որովհետև Շուշվա ճակատին մի բուռ ամպ էր թառել: Շուշվա «մշուշը» մինչև ե՞րբ պետք է փակի մեր ճանապարհը:

Իսկ ես Երևանում պիտի Մոսկվա հասնեի: Երևանից մի ընկեր խոստացել էր միջնորդել, որպեսզի անվանի գիտնական և Միկոյանի խնամի Անուշավան Արզումանյանն ինձ օգնի մեծերի հետ հանդիպել:

Ուշանալ չէր կարելի: Թռա Բաքու, այնտեղից հեռախոսեցի այդ ընկերոջ հետ, ցավով իմացա, որ հայտնի ցույցերի կապակցությամբ Երևան ժամանած մոսկովյան հանձնախմբին իրենց նամակի վրա (դարձյալ Ղարաբաղի մասին) ուշադրություն չի դարձրել, և որ Ան. Արզումանյանն ինձ օգնել չի կարող, որովհետև ծանր հիվանդ է...

Մի խոսքով՝ պետք է հույսը դնել սեփական ուժերի վրա:

Մոսկվա հասա փառատոջ վիճակում: Եվ, այսուհանդերձ, զանգեցի սրան-նրան: Խոստացան ծանոթացնել ականավոր դիվանագետ Համազասպ Հարությունյանի հետ:

Հաջորդ առավոտյան Համո Ակիմովիչի (Հարությունյանի) տանն էի:

Սիրալիր ընդունեց տիկին Անահիտը՝ Թումանյանի թոռ Շաղիկը, մի բարեհամբույր, քնքուշ էակ, որն առաջին իսկ րոպեներից սրտին անչափ մոտ զգաց Ղարաբաղն ու նրա ցավը: Մարդ ու կին իրարով անցան գործին իրենց օժանդակությունը հասցնելու համար: Տանուտեղ հայությամբ էր շնչում: Հետո պիտի իմանայի, որ նրանք իրենց բնակարանը դարձրել են մոսկվաբնակ հայերի համար նախկին մշակույթի տանը փոխարինող մի ջերմ օջախ:

Համո Ակիմովիչը հիվանդ պառկած լսեց նամակը և տվեց այսպիսի խորհուրդներ.

1. Հանել տեղական ղեկավարների հասցեին եղած քննադատությունը: «Կգան, ամեն ինչ կբարդեն նրանց գլխին, կհանեն պաշտոններից և հարցը դրանով կփակվի»[312]:

2. Առհասարակ շատ կրճատել նամակը, թողնել ողնաշարը. «Մեր գերագույն ղեկավարները 2—3 էջից ավելի ոչ մի փաստաթուղթ չեն ընթերցում: Փորձից գիտեմ»:

3. Սա էլ՝ երկրորդ կետի շարունակությունը. «Ես սնոտիապաշտ չեմ, բայց այդ 13-ներն ինձ դուր չեն գալիս. նամակը 13 էջից է բաղկացած, և ստորագրողներն էլ 13 հոգի են»: Ու ժպտաց: Իսկ երբ թվարկեցի նաև մյուս 13-ները, ծիծաղեց. «Ուրեմն՝ առավե՛լ ևս»:

Խոստացավ ապաքինվելուց զանգել՝ ում պետք է. «Այդ մեծերի օգնականներն առաջ ինձ մոտ են աշխատել»:

Միջօրեին պիտի գնայի նկարչի տուն՝ Մարտիրոս Սարյանի հետ տեղի ունենալիք հանդիպմանը:

Մինչ այդ Գրողների միությունում հանդիպեցի ՀԴՄ ներկայացուցիչ Գրիգոր Մանասյանին: Դեռ էականից չէինք խոսել, երբ հեռախոսով կուսակցության Կենտկոմից մեկը նրանից պահանջեց բացատրել Հովհաննես Շիրազի «Մեր մարդկանց անունները»: Նա ջանաց հասկացնել, որ դա հայրենասիրական երկ է, նացիոնալիստական ոչ մի երանգ չունեցող: Հետո էլ ինձ հաղորդեց, թե քանի՛ օր է, նույն խնդրով հարցաքննում են իրեն, ուզում են հաստատել, որ Եղեռնի ցույցերը հայ գրողներն են կազմակերպել՝ Հրաչյա Քոչարը, Սիլվա Կապուտիկյանը, Հովհաննես Շիրազը, Սերո Խանզադյանը...

«Վերջերս էլ լրտեսական դիտողությունների դոկտոր այսինչն այդ զրպարտությամբ դիմել է Գրողների միության քարտուղար Վորոնկովին ու մյուս ղեկավարներին, հավանական է՝ նաև Կենտկոմի համապատասխան բաժնին: Սրիկան ամեն կերպ աշխատում է համոզել, որ Երևանի ցույցերն ունեցել են միայն և միայն հակառուսական բնույթ: Եվ պատահական չէ, որ Կենտկոմի աշխատակիցը պահանջել էր ասել, թե ռուսական ի՞նչ անուններ են ծաղրի ենթարկված Շիրազի պոեմում»:

Երբ հայտնեցի Մոսկվա ընկնելու բուն նպատակը, Գրիշան պատմեց, որ մի քանի օր առաջ, Տերյանի երեկոյին, մարշալ Բաղրամյանին հիացրել է Գևորգ Էմինի զեկուցումը, այդ երեկոյից նրանք բարեկամացել են, և Էմինը կարող է օգնել, որպեսզի մարշալը միջնորդի:

Քիչ անց Գրողների միություն է գալիս ինքը՝ Էմինը: Խոսում ենք: Հայտնում է օգնելու իր պատրաստակամությունը: «Սիրում եմ քեզ: Դու էլ ինձ նման ես. տեսնում ես աշխարհի բոլոր անարդարությունները և էլի հավատում ինչ-որ բանի»: Ճաշի է հրավիրում, իսկ ես շտապում եմ նկարչի տուն: Պայմանավորվում ենք հանդիպել:

Հույս ունեի Սարյանի ցուցահանդեսում հանդիպման ժամանակ տեսնել անհրաժեշտ մարդկանց, խոսել իմ ցավից: Ի՞նչ իմանաս՝ որտե՞ղ է բացվելու մեր բախտի դուռը...

---

[312] Նամակի նախնական տարբերակում եղած այդպիսի քննադատությունը հանվել է, և երկրի ղեկավարությանն է ներկայացվել այստեղ մեջբերվող տարբերակը (Ս. Ռ.):

Կուզնեցկի մոստ, 11, Նկարչի տուն: Այստեղ ամեն ինչ Սարյան է՝ սկսած շենքի մատույցներից: Ցուցասրահը չորսին է բացվում, իսկ երեքին շենքն արդեն պաշարված է: Առաջին ներս մտնողներից մեկն եմ: Լցվում եմ ցուցահանդեսի արևով, լույսով, խանդավառ հպարտությամբ: Արդեն քանի օր է, ցուցահանդեսի բացումն է եղել, Մոսկվանվան այս սրահներում հաղորդակցվում է վրձնի հանճարեղ վարպետի հետ, առնում նրա գույներն ու բույրերը... Բայց էլի գալիս է, հորդում է ներս, մանավանդ որ այսօր նորից պիտի տեսնի իրեն՝ Վարպետին:

Այստեղ է դարձյալ բարձրաճաշակ Մոսկվան: Սրահների կեսը լուսանկարիչ-թղթակիցներն են ու կինոնկարահանման խցիկներով բեռնված մարդիկ:

Չորսին ներս են բերում Վարպետին: Աջ թևը կնոջ ձեռքերում է, ձախը՝ ծերունազարդ նկարիչ Կուզնեցովի, այն չքնաղատեսիլ մեծի, որի մասին Սարյանը մի քանի օր առաջ հոդված տվեց «Կոմսոմոլսկայա պրավդայում», փառաբանեց որպես մեծ արվեստագետի, որի հետ մտերմությամբ է կապված մանկությունից:

Թնդում են ծափերը, հսկայական դահլիճը հոտնկայս երկար ժամանակ պատվում է պաշտելիին:

Ձեկուցում է ակադեմիկոս Միխ. Ալպատովը: Ընդհանուր ուղղակի գովեստ է:

Ապա ծաղկեփնջերով բեմահարթակ են բարձրանում ՌՍՖՍՀ նկարիչները, որոնց անունից Պիմենովը ոգեշունչ խոսք է ասում: Մի գեղեցկուհի ալբոմ է մատուցում:

Կոմպոզիտորների միության ներկայացուցիչնե՞րը: Սրանց անունից կոմպոզիտոր Նինա Մակարովան, մի փառահեղ տիկին, Վարպետին է մատուցում երաժշտական աշխարհի պատկառանքի, պաշտամունքի խոսքերը, իր անունից էլ՝ «Ես ամբողջ հոգով սիրում եմ Ձեզ, թույլ տվեք գրկել»: Նվագում է Հայաստան կատարած իր առաջին այցելությունից ծնված սկերցոն՝ աշխարհին արդեն հայտնի մանուկ աղջկա (ջութակահար) նվագակցությամբ: Վարպետը գրկում է այս աղջկան, գուրգուրում:

Ապա բեմ են գալիս նկարչի տան վարչության անդամները՝ մի երկար տախտակի վրա դրված 16 մատրյոշկաներով և մի փայտի վրա հագցրած երկար շարք հացե պայուսակներով: Երգիծանկարիչ Բորիս Եֆիմովը սրամիտ ճառ է ասում:

— Վաղո՛ւց, շա՛տ վաղուց մենք այսպիսի ցուցահանդես չէինք տեսել մեր սրահներում: Դուք, մե՛ծ Վարպետ, անկեղծ խոստովանենք, մեր Տանը հաց տվիք: Դրա համար էլ հացին հացով ենք պատասխանում... Այս տիկնայք էլ թող ձեզ շրջապատեն: Չի կարող պատահել, որ դուք միշտ ոգևորություն ստացած չլինեք կնոջից...

Վարպետը խոսում է արվեստի առանձնահատկությունների, հին և նոր սերնդի փոխհարաբերությունների, նոր սերնդի պարտքի մասին:

Մեծ համերգ է, որը վարում է Սուրեն Քոչարյանը: Մի գեղեցիկ տոնով նա բացում է համերգը:

— Մեր ժողովուրդը շատ է սիրում կյանքը, արևը, երջանկության տենչը: Փորել են նրա աչքերը՝ հանգցնելու համար նրա լույսն ու արևը: Չեն հասկացել, որ նրա լույսը հոգու մեջ է: Մեր ժողովուրդը մեզ տվել է այդ ամբարված լույսի, երջանկության տենչի ու Արևի շողը: Ասել է՝ տա՛ր մարդուն, դարերին: Ասել է՝ դժվար պիտի լինի քո ճանապարհը... Բայց հեշտ չի եղել նաև իմը: Հետո էլ՝ չէ՞ որ քո անունը Մարտիրոս է: Եվ դու հերոսի պես, մարտիրոսաբար անցար քո կյանքի ուղիականը... Վկան այն ցուցահանդեսն է՝ ուղղված այն անգերազանց արեստով, որ աշխարհի բոլոր արվեստագետների համար կոչվում է Սարյանական:

Իրակլի Անդրոնիկովը, մինչև կարտասանի իր պատմվածքը Հռոմ կատարած ճամփորդության մասին, ոգեշունչ ճառ է ասում Գրողների միության անունից, վերջում երանի տալով այն գրողին, որ կունենա Սարյանի գույները, այնպիսի թանաքաման, ինչպիսին Սարյանի ներկապնակն է, այնպիսի գրիչ, ինչպիսին Սարյանի վրձինն է...

Բանաստեղծ Վլադիմիր Սոկոլովը հայերենից թարգմանություններ է արտասանում, ապա մաքուր հայերեն «Ես իմ անուշ Հայաստանին», հետո՝ դրա թարգմանությունը: Վերջում կարդում է իր բանաստեղծությունը Արարատի մասին: «Դեռ պետքեր պանդուխտ... կարդալով մնում ենք քո հայրենադարձին, որ չի կարող չլինել»: Դահլիճում թնդում է ծափը՝ վերածվելով որոտի: Սոկոլովն՝ ամբողջ դահլիճը ցույց տալով (իբր, այդ բոլորի անունից) գրկում և համբուրում է Սուրեն Քոչարյանին: Ապա տանում է առաջին շարքում նստած Սարյանի մոտ: Սա համբուրում ու նստեցնում է իր կողքին: Կատյա Կիսելյովան պատմում է, որ բացման հանդեսին անձրև է եղել, մռայլ: Հենց որ Վարպետը պիտի խոսեր, արևը բացվել է, ապակյա կտորով թափվել ներս: Նա ձեռքերը տարածել է, թե.

— Տեսնում եք՝ ի՜նչ արև է:

Գովել է պաշտոնապես չընդունված ու չընդունվող, բայց իսկական արվեստագետներին: Դահլիճը խելագարի պես է ընդունել այս բոլորը: Իսկ երբ ասել է՝ «Ինչքա՜ն լավ է ապրելը, արև կա, ստեղծելու երջանկություն (հետո էլ խորամանկ մի ժպիտով կողքի է նայել) և, վերջապես, երկնասուր հանճար Կոնենկո՜վն է կողքիդ...

Դահլիճին շատ լավ է հասել նրա հումորը. բոլորը գիտեն, որ աստվածապաշտ Կոնենկովը մեծամտաբար իրեն համարում է երկնառաք հանճար...

— Ահա իսկակա՜ն հանճարը, — իր ելույթի վերջում ասաց Անդրոնիկովը: — Այս դահլիճներն այսքան արև ու լույս չեն տեսել: Ձեզ շնորհավորելը քիչ է ու սխալ, մե՜ծ Վարպետ: Մենք՝ արվեստասերներս, իրար ենք շնորհավորում այս մեծ տոնի ու Ձեր պարգևած անպարփակ բերկրանքի համար:

Այս հանդիպմանը ևս հայտնություն եմ անում. պիտի դիմել Սուրեն Քոչարյանին, մանավանդ, որ վաղուց բարեկամներ ենք, ես եմ տարել Ղարաբաղ, իր ելույթները կազմակերպել ամենուրեք:

Գիշերը զանգում եմ: Ցնծում է հեռախոսի մեջ.

— Ա՛յ տղա, շուտ արի մոտս, հենց հիմա սպասում եմ քեզ:

Իր նեղ տանը մեծասիրտ ընդունում է: Նամակն ընթերցելուց խանդավառվում, խոստանում է հաջորդ օրն իսկ խոսել, իր կարծիքով, ղարաբաղցի, Քիմիայի մինիստր Կոստանդովի հետ: Պահում է նաև նամակի մի օրինակը:

Հաջորդ օրը հայտնում է, որ Կոստանդովը հիվանդ պառկած է, վեր կենա թե չէ, կխոսեն, կպայմանավորվեն. «Այնուամենայնիվ, դու ինձ հետ ամենօրյա կապ պահպանիր»:

Գիշերը, ծանր նոպայից հետո, Համ. Հարությունյանին տարել են Կունցևո՝ Կրեմլյան հիվանդանոց:

Էմինն էլ պիտի գնա այնտեղ (ամենամսյա գլխացավեր ունի), այդ պատճառով էլ չի կարող օգնել:

Հիվանդանոց եմ գնում, և պարզվում է, որ, Հարությունյանից ու Էմինից բացի, այնտեղ պառկած են նաև Հակոբ Սալախյանն ու Վարդգես Թեքեյլանը... Մարդիկ, որոնք կարող են օգնել: Թե՞ նախախնամությունը փակում է բոլոր ճանապարհները:

Պատահաբար ծանոթացա մարշալ Բաղրամյանի եղբորորդի Հրաչիկի հետ: Խոստացավ դիմել մարշալին: Հաջորդ օրը ցավերով հայտնեց, որ մարշալը Բաքու է գնացել, այնտեղից էլ Երևան ու Թբիլիսի, ռազմական վարժությունների պիտի ականատես լինի:

Ծանոթներից հույս չկա: Սարքում եմ նամակի կարճ տարբերակը (8,5 էջ), տանում Կունցևո, ընթերցում Էմինին, Սալախյանին ու Հ. Հարությունյանին: Գտնում են, որ լավ է: Հ. Անիսիմը խոստանում է ոտքի ելնելուն պես կառավարական հեռախոսով զանգել մեծերին կամ նրանց օգնականներին. «Էլի կապ պահպանիր»:

Հույսս դնում եմ ճակատիս գրության վրա, գնում Գերագույն խորհրդի նախագահություն:

Միկոյանի հետ հանդիպելն անհնար է: Ուղարկում են խորհրդականների մոտ: Մի օրվա պայքարից հետո ընկնում եմ Միկոյանի օգնականի մոտ: Նա սկզբում փորձում է գլխից «ռադ անել»: Ստիպում եմ, որ նամակն ընթերցի: Ընթերցում է ու աչքերը չռում. «Մի՞թե այս բոլորը տեղի ունի մեր երկրում: Վաղը կգաս ինձ մոտ, ընդունելության համար կպայմանավորվենք»:

«Վաղն» էլ ասում է. «Զեկուցել եմ: Երեկոյան պիտի նամակն ընթերցի, իսկ ձեզ կընդունի վաղը, ժ. 12-ին»:

Ամբողջ գիշեր աչքս չեմ փակում:

Ժամը 11-ին օգնականը հին ծանոթի պես ընդունում է:

— Ցավում եմ, որ այսպես է ստացվում: Լավ է դուք գնաք կուսակցության Կենտկոմ, նամակը հասցնեք Բրեժնևին: Գիտեք՝ որոշ նկատառումներով անհարմար է, որ ընկ. Միկոյանը բարձրացնի այդ հարցը:

— Բայց մեր վիճակը միայն նա՛ կհասկանա:

Դրա համար էլ, հենց որ Կենտկոմում հարցը բարձրանա, Անաստաս Իվանովիչը կասի իր կարծիքը, և այդ կարծիքը կլինի վճռական:

— Այդ ի՞նքն է ասել:

Օգնականը խորամանկ ժպտում է.

— Իսկ մի՞թե դա կարևոր է:

— Ինձ համար կարևոր է. եթե ինքն է ասել, նշանակում է՝ կարելի է հուսալ...

— Այո՛, գնացեք Կենտկոմ... Համ էլ, միևնույն է, բոլոր դեպքերում այսօր նա ձեզ չէր կարող ընդունել. առավոտյան թռել է Սիբիր՝ Իոսիֆ Բրոզ Տիտոյին է ուղեկցում:

Գր. Մանասյանն ասում է՝ «Նաիրի Զարյանն էր քեզ փնտրում, հեռախոսի համարը թողել է»:

Զարյանն ու ժողովրդական նկարիչ Խաչատուր Եսայանը եկել են Խաղաղության համամիութենական կոնֆերանսի: Զանգում եմ, ժամադրվում ենք և կեսօրից ետ «Մոսկվա» հյուրանոցում հանդիպում:

Ընթերցում են նամակը, ոգևորվում: Զարյանը զանգահարում է իր անվանի ծանոթներին, օգնության հնարավորություններ է փնտրում:

— Ա՛յ տղա, ախր, մենք տոմսեր ենք առել, Երևանում ժողովի ենք շտապում, բա ո՞նց անենք: — Հիշում է Մարտիրոս Սարյանին: — Նա անպայման կօգնի: Էլ ե՞րբ պետք է նրա փառքից օգտվի իր ժողովուրդը:

Զանգում է Սարյանի տղա Ղազարոսին, առաջարկում իր խնդիրը հաղորդել Վարպետին:

Տղան երևի փորձում է խուսափել:

— Լավ կլինի, որ պապան չխառնվի այդ հարցերին: Տկար է, կհուզվի, կհիվանդանա:

Զարյանը վրդովված լափողը դնում է, աջով տրորում դեմքը: Սենյակում դես ու դեն քայլելով առաջարկում է, որ նամակի պատճենը տամ, տանի իրենց ղեկավարներին:

— Նագուշը (Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը) Միկոյանի մտերիմներից է, կխոսի հետը: Եվ, հետո էլ, մերոնք ևս տեղյակ կլինեն. գուցե հնարավորություն ունենան լուրջ խոսելու Կենտկոմում...

Այդ օրը չկարողացա պատճենը տալ: Բայց հետո ուղարկեցի Երևան:

Իսկ Սարյանի տղայի հետ ունեցած զրույցի մասին պատահաբար խոսեցի տիկին Ծաղիկի հետ: Երևի սա էլ Սարյաններին էր հաղորդել: Առավոտյան զանգեց Սարյանի տիկին Լուսիկ Լազարեանը (Ղ. Աղայանի դուստրը):

— Երիտասարդ, — բարկացած խոսեց նա, — մեր Սարիկին ի՞նչ է ասել ձեզ, որ դուք էլ Համո Ակիմիչի տնեցիներին եք զանգահարել:

Փորձում եմ արդարանալ, ճշմարտությունը հասկացնել, իսկ ինքն անդրդվելի է: Առաջարկում է, որ գնամ իրենց համարը՝ «Արմենիայի» երկրորդ հարկում:

— Մարտիրոս Սերգեևիչն է խնդրում:

Ես իսկույն վազում եմ նրանց մոտ: Լուսիկ Լազարեանն դեռ պատերազմական վիճակում է.

— Ա՛յ տղա, ես ինքս ղարաբաղցի եմ ու չուզե՞մ, որ իմ հողը փրկվի, ես ու իմ տղան խանգարե՞նք...

Վարպետը մտախոհ, ձեռքերը թափ է տալիս:

— Լա՛վ, բավական է, տղան չի եկել մեր աղմուկները լսելու:

Պատմում եմ եղելությունը, սպասում եմ, թե այդ մեծ, շատ մեծ մարդը կասի՝ «Ինչո՞վ կարող եմ օգնել»:

Ձեռքերը վեր տարածած բողոքում է.

— Այստեղի մեծ հայերը մոռացել են իրենց հայ լինելը, անտեղ նացիոնալիստներ են: Միայն մի իսկական հայ կա՝ Համո Հարությունյանը: Ճանաչո՞ւմ ես: Ուրեմն, նա՛ է: Դժբախտաբար նա էլ հիվանդ է: Իսկ մյուսնե՞րը... Մի անգամ այդ Հարությունյանի հետ Միկոյանի հյուրն էինք: Որ մենակ մնացինք, ասի՝ «Անաստաս Իվանովիչ, ինչո՞ւ Ղարաբաղը մեզ չեք վերադարձնում: Մինչև ե՞րբ պիտի շարունակվի այս անարդարությունը»: Թե. «Ղարաբաղն ինչների՞դ է պետք»: «Ո՞նց թե ինչներիս է պետք: Ժողովուրդը միասնական կլինի, երջանիկ, հարուստ»: «Ուզում եք ժողովուրդը հարուստ ու երջանիկ լինի, մի քանի խոշոր գործարան տանք, կառուցեք, մարդիկ գործ ունենան, ապրեն, հանրապետությունը հարստանա: Թե չէ, Ղարաբա՞ղը... Ղարաբաղի հետ գործ չունեք»: Ուրեմն, Ղարաբաղի հայությունը մերը չի՞ համարում: Կամ էլ, չի ուզում գլխացավանքի մեջ մտնել... Դե՛, մեծը Միկոյանն է, նա է այդպես է մտածում: Ի՞նչ կարող ես անել: Համենայն դեպս, դու գնա՛, պայքարի՛ր, պահանջի՛ր: Պիտի գլուխները ծակես, որ ուշադրություն դարձնեն:

Մի ժամ չափ խոսում ենք ամենատարբեր հարցերի մասին: Դուրս եմ գալիս այնպիսի ինքնազգացողությամբ, կարծես ինձ կողոպտել են, անվերադարձ տանելով ամենաթանկագին մի բան, որով միշտ հպարտացել եմ, որը պահել եմ սուրբ թալիսմանի պես:

Կենտկոմի ամենաշարքային աշխատողի հետ տեսակցելու համար շաբաթներով պիտի դռներ (ավելի ճիշտ՝ նախագահներ ու հեռախոսներ) մաշես: Վերջում էլ նա քեզ կընդունի ընդունելության շենքի առաջին հարկի մի անշուք սենյակում (ուրիշ ընդունողների ու ընդունվողների աղմուկի հարևանությամբ), կտա մի քանի չոր ու ցամաք, անկարևոր հարց, պատասխանները գրի կառնի, աչքի պոչը դռան վրա, որով, կարծես, ասում է՝ պրծի՛, գնա՛, գլուխ չունեմ քեզ համար ցավեցնելու...

Համո Ակիմիչն ասել էր. «Իմ անունից խնդրիր Կենտկոմի աշխատակից Գրիգոր Արզումանյանին (Անուշավան Արզումանյանի կրտսեր եղբայրը), և նա քեզ կօգնի»: Հեռախոսի համարն էլ էր տվել:

Այս Գր. Արզումանյանն ինձ ընդունեց դրսում: Սկզբում մտածում էի, որ հարգանքի նշան է. շենքի առաջ կդիմավորի ու կառաջնորդի իր կաբինետը:

Հետո պարզվեց, որ վախենում է իր մոտ հայ մարդ ընդունելուց: Մանրամասներն իմանալուց էլ «ցավաց», որ Կենտկոմի քարտուղար Դեմիրճյանը նոր է արձակուրդ գնացել, թե չէ, նրա միջոցով մի բան կաներ (այս քարտուղար Դեմիրճյանն է զբաղվում ազգային հարցերով):

— Կես ժամ հետո դու ինձ զանգ տուր, ես քեզ հեռախոսների համարներ կտամ:

Զանգ տվի, հայտնեց կուսակցական մարմինների, գաղափարական, կուլտուրայի ու գրականության բաժինների վարիչների հեռախոսների համարները: «Դեռ աշխատիր դրանց հետ խոսել, — խորհուրդ տվեց Կենտկոմում հայ ժողովրդին ներկայացնող ընկ. Գր. Արզումանյանը: — Իսկ եթե նամակն ինձ ևս տան ընթերցելու, մի բան կանեմ»:

Մի շաբաթ էլ այս հեռախոսների համարների հետ ապարդյուն չարչարվեցի: Մի անգամ պատահաբար խոսեցի Ադրբեջանի գծով նախկին պատասխանատու աշխատակից Ստարչենկոյի հետ: Ներկայացրեց. «Հիմա այդ հարցերով ե՛ս չեմ զբաղվում», և խոսափողը գցեց:

Ըստ երևույթին դրանից հետո նա կուսակցական մարմինների բաժնում ինձ մշակել է (վրեժ ունի. Շահնազարովի գործով նրան լավ է հասել): Նրանից հետո մեկը թե.

— Դուք գուցե 1962-ին գրած նամակի հարցո՞վ եք եկել:

— Ի՞նչ նամակի:

— Շահնազարովի և ձեր ազգային գործերի մասին:

— Իսկ ձեզ մոտ երեք տարի ձգձգո՞ւմ են նամակի քննությունը:

Սա ևս գցեց խոսափողը:

Ուրիշ ելք չկար: Հունիսի 28-ի առավոտյան նամակը հանձնեցի ընդունարան: Ընդունողը, սփինքսակերպ մի կին, նստած էր պատի մեջ փորած փոքրիկ անցքի ետում: Անցքը այցելուի դեմ «փակված է» հաստ ապակիների լաբիրինթոսով: Իզուր պիտի փորձես բան հասկացնել սփինքսին կամ բան հասկանալ նրա մունջ շուրթերի մրմունջից: Լաբիրինթոսը ձայն չի հաղորդում: Սփինքսի ձեռքը ապակիների արանքում զսպանակով վերցնում է քո մեկնածը և փոխարենը գցում թղթի մի փոքրիկ կտոր՝ վրան հեռախոսի երկու համար: Ես գլխի եմ ընկնում, որ դա նշանակում է՝ «Պատասխանը կարող ես իմանալ այդ համարների հեռախոսներից»:

Եկա հյուրանոց ու փորձի համար երկու-երեք ժամ զանգեցի ձեռքիս համարներով: Կամ զբաղված էին, կամ էլ չէին պատասխանում:

Կենտրոնական փոստում կատաղությունից դողացող ձեռքով հեռագրեցի. «ԽՄԿԿ Կենտկոմի Նախագահություն, ընկեր Բրեժնևին: Ամսի 15-ից Գերագույն խորհրդի նախագահությունում, իսկ 23-ից էլ ԽՄԿԿ Կենտկոմում չկարողացա արժանանալ ընդունելության՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տագնապալից վիճակի հարցով:

Մեկնելուց առաջ թողնում եմ նամակ՝ մարզի մի խումբ կոմունիստ պատասխանատու աշխատողների ստորագրություններով:

Բագրատ Ուլուբաբյան»:

Հեռագիրը հանձնել եմ ու հանգիստ սրտով հյուրանոց եմ գալիս: Գալիս եմ ու մտածում, որ ցնորամտություն են աշխարհի անարդարությունները վերացած տեսնելու մեր երազանքներն ու բարբաջանքները: Այս հիմնարկներո՞վ պիտի վերացնենք: Վերևներում ինչպե՞ս կամ ի՞նչ իրավունքով են խոսում բյուրոկրատիզմի ու սրա երանգի մյուս կեղտերի մասին: Եվ իմ ամբողջ կյանքում չէի տեսել մեկ-տասներորդն այն բյուրոկրատիզմի ու այլանդակության, որ տեսա այս 15—20 օրվա մեջ, մեր երկրի գերագույն մարմիններում:

Որքա՜ն իմաստուն են տնտեսուհիները, որ սանդուղքները մաքրում են՝ սկսելով վերին աստիճաններից:

Առավոտյան նախաճաշում եմ «Արմենիայի» կաֆեում, և հանկարծ հարկի հերթապահն ու հյուրանոցի ադմինիստրատորը հևասպառ թափվում են գլխիս. «Կենտկոմից ձեզ են փնտրում, շո՛ւտ արեք»:

— Ոչի՜նչ, ես չե՛մ շտապում:

— Լսե՛ք, հեռախոսները փշրում են, հասկանո՞ւմ եք:

— Ասեք՝ իմ համարում կլինեմ կես ժամից:

Կենտկոմում ինձ ընդունում է ինչ-որ Կիսելյով՝ սևամեջ ինքնահավանի կերպարանքով: Նստեցնում է երկաթուղային կայարան հիշեցնող ընդունարանի մի անկյունում, աչքը տնկում վրաս: «Ի՞նչ եք ուզում»: «Մանրամասն բացատրեք ձեր գանգատը»: Հարցեր է տալիս, իսկ հայացքն ասում է. «Ինչ էլ ուզում ես ասա, քեզ չեմ հավատում»:

— Ես ուզում եմ իմ գանգատն ասել ընկեր Բրեժնևին:

— Մենք պետք է իմանանք, հետո՛:

— Ձեր իմանալիքը նամակում գրված է:

— Բաժնում ընթերցել ենք:

— Հետո՞:

— Այսօր պիտի զեկուցենք ընկեր Բրեժնևին, գուցե և նախագահությանը:

— Ես էլ կսպասեմ արդյունքին: Բայց այնպես արեք, որ նորից չհեռագրեմ:

Հաջորդ օրը կուսակցական մարմինների բաժնի վարիչն ու գրականության բաժնի վարիչն ինձ հայտնում են, որ Բրեժնևը նամակին ծանոթացել է և կարգադրել, որպեսզի հանձնաժողով կազմեն, ուղարկեն տեղում քննելու...

— Իսկ եթե ուզում եք հետը հանդիպել, պետք է հերթի գրվեք:

— Հերթս ե՞րբ կհասնի:

— Գուցե մի շաբաթից, գուցե և մի ամսից:

Երկու օր էլ չէի կարող մնալ. սպառվել էին համբերությո՛ւնս ու գրպանիս պարունակությունը:

Հանձնաժողով է գալու Մոսկվայից: Ուրեմն, ամեն ինչ, կամ համարյա ամեն ինչ կախված պիտի լինի նրանից, թե այդ հանձնաժողովն ի՞նչ զեկույց կտանի Ղարաբաղից: Իսկ նրանց տեղեկություններ մատակարարողները լինելու են մեծ մասամբ մարզի ղեկավարները:

Սարգիս Աբրահամյանը խորհուրդ է տալիս նամակի հետ ծանոթացնել մարզկոմի առաջին քարտուղար Մելքումյանին:

— Նախ, բարեկամներ եք, անհարմար է նրանից գաղտնի պահելը: Հետո էլ նրանից շատ բան է կախված, պիտի նախապատրաստել: Ուզում ես՝ ինքս նախօրոք խոսեմ հետը:

Խոսում է, պայմանավորվում, և հուլիսի 4-ին նամակը տանում եմ: Ընթերցում է, հավանություն տալիս:

— Մեղմ է, — ասում է: — Ինձ տեղեկացրած լինեիր, ավելի ուժեղ փաստեր կտայի: Ես եմ նրանց հետ շփվում, չէ՞, տակն ու գլուխը գիտեմ... Բայց լավ ես գրել:

Միակ դիտողությունը վերաբերում է Ղարմետաքսկոմբինատի համախառն արտադրանքի կրճատմանը:

— Բնական մետաքսը փոխել են արհեստականով, էժանացել է արտադրանքը: Այդ պատճառով է իջել համախառն արտադրանքի մակարդակը:

— Դա մասնակի փաստ է: Կարևորը վերաբերմունքն է: Կոմբինատի բանվորներն իրենց նկատմամբ եղած անարդար ու անազնիվ վերաբերմունքի հետևանքով ապստամբներ են դարձել:

— Ճիշտ է, — համաձայնում է, ապա հարցնում. — Իսկ եթե հանկարծ Ղարաբաղը վերադարձնեն Հայաստանին, այն ժամանակ ինչպե՞ս պիտի լինի Ադրբեջանի մնացած հարյուրի վիճակը:

Ես պատասխանում եմ, որ «մնացածի» ամենաշատը Բաքվում է: Իսկ Բաքվի հայն իր հարցն ինքն է իր ձեռքով լուծել: Օգնել է, որ փակվեն ազգային մշակութային օջախները, երեխային հայկական դպրոց չի տալիս, տանը խոսում է ո՛չ հայերեն… Ինչ մնում է մյուս շրջաններում ապրող հայերին, նրանց հարցն էլ հանրապետության ղեկավարներն են լուծում արագացված տեմպերով: Եղել են համարյա մաքուր հայկական շրջաններ՝ Շամխորն ու Քարհատը: Հիմա սրանցում բնակչության մեծամասնություն են կազմում ադրբեջանցիները: «Լուծվում է» նաև Խանլարի շրջանի հարցը: Մնում է Շահումյանի շրջանը, որը շատ է խանգարում: Բայց հաստատելով ի՞նչ պիտի անի:

— Ճիշտ ես ասում: Պայմանավորվեցինք: Հենց որ հանձնաժողովը եկավ, մարզը ցույց կտամ այնպես, ինչպես կա: Հիմնական հարցերում էլ, պարզ է, բոլորս կլինենք միահամուռ:

— Հարցը հասունացած է, Գուրգեն Ալահվերդովիչ, — վերջում ասում եմ ես, — իմացիր, որ սրանից առավել ճակատագրական պահ Ղարաբաղի հայության համար չի եղել ու չի լինելու: Տապալվելու դեպքում մեկընդմիշտ պիտի զրկվենք այս հարցը նորից բարձրացնելու իրավունքից, հնարավորությունից: Աշխատիր այնպես անել, որպեսզի կարողանաս բաց ճակատով նայել քո ժողովրդին...

Ժպտում է ու ձեռքս ամուր սեղմում:

— Ի՞նչ է, դու ինձ հայ չե՞ս համարում:

Սերգեյ Շաքարյանի հետ միասին նույն օրն էլ նամակը տանում ենք կուսակցության Ստեփանակերտի քաղկոմի առաջին քարտուղար Գրիգոր Գալստյանի մոտ: Ընթերցում է, գլուխը տմբտմբացնում.

— Ինձ չե՞ք վստահել, — ասում է, — չեք տվել, որ ստորագրեմ:

— Իսկապե՞ս կստորագրեիք:

Ես եմ հարցնողը:

— Ուրեմն կասկածում է՞լ եք: Այ մարդ, մի՛ անգամ պիտի մեռնենք: Բա փառք չի՞ այսպիսի ճշմարտության համար մեռնելը:

— Բայց մենք այսքանն արել ենք ոչ թե մեռնելու համար, հատկապես, ո՛չ փառքով մեռնելու համար:

— Չէ, ես այդ չէի ուզում ասել: Այսքան ճշմարիտ ու արդար նամակի տակ ստորագրելը ամեն մի ազնիվ մարդու պարտքն է:

Սերգեյն իսկույն վրա է տալիս:

— Ստորագրությունը կարևոր չէ: Ստորագրողների ցուցակը մեկով ավել կամ պակաս՝ դրությունը չի փոխվի դրանից: Բայց երբ հանձնաժողովը գա, և քաղկոմում նրան հրամցնեն ճշմարտությունը, ա՛յ, դրանից շատ բան կփոխվի:

— Ուրեմն կասկածում է՞լ եք, — նորից վիրավորված է ձևանում քաղկոմի քարտուղարը:

Ապա պայմանավորվում ենք կոնկրետ հանգամանքների մասին ու բաժանվում:

Մեր մարզում տարածել են, թե հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահ Ալիխանովը պիտի գար Ստեփանակերտ, կես ճանապարհից վերադարձել է, որովհետև շտապ կանչել են Մոսկվա: Ախունդովն արդեն երկրորդ ամիսը հիվանդ պառկած է: Ադրբեջանը մնացել է Ալիխանովի տնօրինության տակ: Դրա համար էլ նրան են կանչել:

Երկու օր հետո բացվում է հանրապետության մինիստրների, նրանց տեղակալների ու Կենտկոմի աշխատողների ճանապարհը դեպի Լեռնային Ղարաբաղ: Գալիս են, հավաքում մարզի ղեկավարներին, ոտ ու ձեռ ընկնում. «Ի՞նչ պահանջներ ունեք, ասացե՛ք: Ինչպիսի՞ չլուծված հարցեր ունեք, ներկայացրե՛ք»: Քաղցրացել են, ուշադիր են ու բարի, պատրաստ են մեր բոլոր պահանջները կատարել, անլուծելի հարցերն անգամ լուծել:

Մենք հասկանում ենք, որ սա ծեծ ուտելու վախից է: Ալիխանովը դեռ Մոսկվայից է կարգադրել, որ սրանք գան, բարեկամություն խաղան: Պարզապես առաջնորդուկ են խաղում. տեսե՛ք-տեսե՛ք, արդեն պահանջները բավարարել ենք, հարցերը լուծել ենք կամ կլուծենք: Մի խոսքով՝ ամեն ինչ հարթված է, մնում է վերջին կետը… Իսկ դա իմաստ չունի լուծել, որովհետև մարզի համար այսպես էլ վատ չէ:

Մենք այդպես ենք մտածում, անտեղյակ այն չարագործությանը, որ Ալիխանովն ու գործակիցները ԽՄԿԿ Կենտկոմի նախագահության նիստում Լեռնային Ղարաբաղի հայության դեմ նյութել են և այն էլ Անաստաս Միկոյանի օգնությամբ:

Հանրապետության ղեկավարներն իրենց պարտականություններն ավարտում-վերադառնում են: Ապա Մեջլումյանին են կանչում Բաքու: Լուրեր են պտտվում, թե Մոսկվայից մարդիկ են եկել և քանի՞ օր է, Բաքվում մեր հարցով են զբաղված:

Մեջլումյանը Բաքվից վերադառնում է փոխակերպված: Ճիշտ է, շարունակում է մտերիմ մնալ, վատ ոչինչ առայժմ չի անում: Սակայն բնազդով զգում եմ, որ մի բան իր տեղում չէ:

Հուլիսի 21-ին Ծմակահողում տոնում ենք ակադեմիկոս Անդրանիկ Իոսիֆյանի 80-ամյակը:

Այստեղ իմանում եմ, որ մեր անվանի հայրենակիցը Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում է ստացել Գագարինի՝ տիեզերք թռչելու առթիվ, նրա մատը խառն է տիեզերական գործերին, և ինքն էլ ազատ ելումուտ ունի Կրեմլ, ամենամեծերի մոտ: Մելքումյանին ասում եմ՝ առաջարկիր, որ Իոսիֆյանը Ստեփանակերտ գա, աշխատավորների հետ հանդիպելու: Համաձայնում է: Առաջարկում է հոբելյանին, և պայմանավորվում ենք:

Մի քանի օրից Իոսիֆյանը Ստեփանակերտում է: Փառահեղ երեկո ենք անցկացնում, ասում ամենաքաղցր խոսքեր... Հաջորդ օրը հետը մենակ եմ մնում և պարզում, որ նա էլ մեր ցավով տառապում է: Ծանոթացնում եմ իրերի վիճակին: Մի ամբողջ շաբաթ ուսումնասիրում է մարզի տնտեսությունը, չլուծված հիմնահարցերն ու հեռանկարները: Պահանջում է, որ մենք՝ նամակի հեղինակներս, իրեն գրավոր դիմենք, խնդրելով միջամտել հարցին վերևներում: «Որպեսզի այնտեղ ասեմ՝ մարդիկ ինձ դիմել են իբրև կուսակցության 22-րդ համագումարի պատվիրակ, և ես էլ ծանոթացել եմ մարդու դրությանը, ահա զեկուցում եմ»:

Դիմումը գրում, տալիս ենք իրեն: Խոստանում է գործի մեջ քաշել բոլոր ականավոր հայերին ու նրանց ռուս բարեկամներին: Պայծառ ծրագրերով ու խոստումներով ուղևորվում է Մոսկվա:

Ղարաբաղում եղբայրության միտինգ են անցկացնում: Մասնակիցները մարզի ու հարևան ադրբեջանական շրջանների պաշտոնյաներն են: Ղեկավարը Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի քարտուղար Իսաայ Վեզիրովն է: Հաջորդ օրն այս Վեզիրովը մեզ հավաքում է զրույցի:

Ներկա են մարզի գաղափարական «ճակատի» ղեկավարները. «Մենք դարավոր բարեկամներ ենք, եկեք բարեկամներ էլ մնանք: Պատրաստ ենք ձեր բոլոր պահանջները կատարել: Ինչպիսի՞ չլուծված հարցեր ունեք: Իհարկե, մենք շատ լավ գիտենք՝

հանրապետության ղեկավարների մեջ կան տհաս մարդիկ, որոնք երբեմն մոռանում են, որ սա ինքնավար մարզ է, իր հատուկ պայմաններն ու պահանջներն ունի...»:

Եվ ժողովրդական կրթության մարզային բաժնի վարիչ Հակոբ Օհանջանյանը վեր կացավ ու մարզի լուսավորության բնագավառի «պահանջներն առաջադրեց» քծնանքից ծալծլվելով.

— Մենք երախտապարտ ենք հանրապետության կառավարությանն ու կուսակցական Կենտկոմին մեր մարզի նկատմամբ ցույց տված հայրական անբասիր հոգատարության համար... Խնդրում եմ՝ կարգադրե՛ք ֆինանսների մինիստրությանը, որպեսզի մեր մարզի ուսուցիչների որակավորման ինստիտուտին տան ադրբեջանական լեզվի տեսչի միավոր...

Վեզիրովն ու իր համարզները մնացին իրար երեսի նայելիս... Ահա՛ թե ո՛րն է սրանց ինքնավար մարզի լուսավորության բնագավառի պահանջը:

Երբ խոսելու հերթն ինձ հասավ, արհամարհանքով լռեցի սպահանջների մասին.

— Դուք այստեղ խոսեցիք եղբայրության պահապանի անունից,— ասացի,— ժամուկես էլ այդ հարցով երեկվա ժողովում էիք խոսել: Բայց ես ձեր խոսքին ինչպե՞ս հավատամ, երբ ամբիոններից եղբայրության երդում եք տալիս, իսկ ձեր ակադեմիայի հրատարակչությունում ֆաշիստական զրպարտություն տարածում իմ ժողովրդի հասցեին: Զարմանո՞ւմ եք, խնդրե՛մ, նայեցե՛ք ու հիացե՛ք, ահա 25 հազար տպաքանակով տպագրած «Գաթարնաման»: Հայ ժողովրդի ամենանենգ թշնամիներն անգամ իրա վրա այդպիսի կեղտ չեն թափել իրենց պիղծ բերաններից...

Նայում է, սևանում, ճերմակում, ապա թե.

— Շա՛տ լավ, վերադառնալուց մենք արժանի պատիժ կտանք դրա տպագրողներին:

Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչ Ռաջաբովը նայում է իմ ցույց տված էջը, տիտղոսաթերթն է բացում, հետո էլ մրթմրթում.

— Մենք տպագրել ենք համաշխարհային մշակույթի հուշարձանը:

— Երևում է, թե ինչպիսի աղբն ու աղտեղությունն է ձեր հուշարձանը:

Վեզիրովն աչքերը ոլորում է իր բաժնի վարիչի վրա: Իսկ երբ բաժանվում էինք, վեր կացավ, գլուխ խոնարհեց, ձեռքս թափահարեց.

— Ես ձեր նկատմամբ առանձնակի համակրանք ունեմ,— ասաց:— Ինչո՞ւ Բաքու գալուց չեք մտնում ինձ մոտ, պահանջներ ունենալիս չեք դիմում: Իմացած եղեք, որ մենք միշտ էլ բարձր ենք գնահատում...

Ես երեսս շրջում եմ, որովհետև այլևս հնարավոր չէր լսել այդ հարկադիր երկերեսանիությունը:

Մի շաբաթ չանցած գալիս է Եղիազարյանը՝ Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի երկրորդ քարտուղարը:

Առավոտյան ժամը 9-ին ինձ կանչում են մարզկոմ.

— Եղիազարյանն ուզում է քեզ հետ զրուցել:

— Ի՞նչ ունի ինձ հետ, ի՞նչ է ուզում:

Մելքումյանի կաբինետում ինքը՝ Մելքումյանն է, մարզգործկոմի նախագահ Մուշեղ Օհանջանյանը, Եղիազարյանը, Երվանդ Բաղդասարյանը, Կենտկոմի հրահանգիչ Եփիմ Գինցհուբ, Եղիազարյանի օգնական Լազար Լալայանը և բաղկոմի քարտուղար Գրիգոր Գալստյանը: Մտնում եմ, ու ընդառաջ է գալիս Եղիազարյանը.

— Ահա և ընկեր Ուլուբաբյա՞նը: Հենց այսպես էլ պատկերացրել եմ ձեզ,— ձեռքս սեղմում է ու քաղցրախոսում: Ես չեմ զարմանում. ինչ էլ որ լինի, մարդը 3—4 տարի աշխատել է

Ախուրյանում, Վեզիրովի ու նրանց նմանների հետ, քիչ բան չէ: — Նստեցե՛ք, խնդրեմ: Որոշել ենք ձեզ հետ զրուցել նամակի ... ձեր նամակի առիթով:

— Ո՛չ թե իմ, — ուղղում եմ ես, — այլ տասներեք կոմունիստների:

— Դե՛, մենք գիտենք, որ տասներեքի ղեկավարն ու կազմակերպիչը դուք եք: Մյուս կողմից էլ՝ ես մի քիչ ոճից հասկանում եմ. նամակը գրված է ձեր ձեռքով:

— Դա կարող է պատահել, — ժպտում եմ: — Բայց տասներեքից յուրաքանչյուրը կազմակերպված մարդ է և կարիքի դեպքում ինքն էլ կգրի: Հիմա պարզապես մեկը պիտի շարադրեր բոլորի մտքերը:

— Այն ժամանակ ուզում եք՝ կանչենք բոլորին:

— Ինչպես ուզում եք. ես պատրաստ եմ տասներեքի տեղ էլ պատասխան տալ... Եթե ձեզ պատասխանն է հետաքրքրում: — Չէ, պայմանավորվենք մի ժամից հավաքվել, որպեսզի բոլորն էլ ներկա լինեն:

Մի ժամից հավաքվում ենք: Նույն կազմն է նստած, առանց Երվանդ Բաղդասարյանի: Զրույցն սկսվում է Ելիստրատովի հարձակումով: Առաջին իսկ փաստի մասին խոսելիս կոպտում է Գրիգոր Ստեփանյանին ու սխալվում, որովհետև Գրիգորը պարտքի տակ չի մնում: Այս անհաջող քայլից հետո էլ ուժը փորձում է Սերգեյ Շաբարյանի վրա:

— Դուք ամենից շատ եք պատասխանատու այս թերությունների համար, — գոռում է նա: — Ի՞նչ իրավունք ունեք ուրիշներին մեղադրելու: Ուլուբաբյանը կարող է գրել և պետք է գրի, գրող է, սիրտը ցավում է մարդի համար: Իսկ դո՞ւք ինչացու եք...

Պարզ է. ուզում է մեզ լարել իրար դեմ: Ուլուբաբյանը իրավունք ունի, անձեռնմխելի է, և ձեզ էլ կրակի մեջ է գցել: Ես որոշում եմ պատասխանել, իսկ Սերգեյն արդեն ակտիվ հակահարձակման է անցնում:

— Ընկեր Կենտկոմի քարտուղար, — զսպված բարկությամբ սկսում է, — դուք, եթե մեկ էլ փորձեք գոռալ, մենք վեր կկենանք ու կհեռանանք այստեղից: Հասկանալի՞ է: — Ի՞նչ գոռալ: Իմ խոսելու տոնն է այդպես: — Իմ տոնն էլ դրանից է բարձր: Ես էլ կխոսեմ իմ տոնով, և այն ժամանակ կմնա բռնցքամարտը: — Շա՛տ լավ, — զիջում է Ելիստրատովը, — կզրուցենք հանգիստ: Բայց անցնենք նամակի երկրորդ մասին, և այն ժամանակ եմ ձեզ հետ խոսելու, կտեսնեք, թե ինչպես կմերկացնեմ ձեր տեղական նացիոնալիզմը:

Անցնում ենք նամակում նկարագրված փաստերի քննությանը:

Արդյունաբերությանը վերաբերող հարցերից խոսելիս Ելիստրատովը աղավաղում է թվերը: Մենք ուղղում ենք, հասկանում, իսկ նա չի ուզում հասկանալ, որովհետև նրա սխալները հիմա պնդում են նաև տեղական ղեկավարները, հատկապես Մուշեղ Օհանջանյանը: Ես մտածում եմ, որ դիվանագիտական խաղ է. մերոնք անհարմար են համարում իրենց դերն սկսել մեր պաշտպանությամբ: Հիմա ձևականորեն կպաշտպանեն Ելիստրատովին, հետո կանցնեն մեր կողմը և անպայման կասեն ճշմարտությունը: Սակայն գնալով նրանք ավելի անպատկառ են դառնում և գյուղատնտեսության վիճակը, սրա պլանավորման այլանդակությունն արտացոլող թվերն այնպես են ներկայացնում, որ դուրս է գալիս, թե մենք վայրիվերոթյուններ ենք շարադրել:

Մենք դարձյալ փորձում ենք բացատրել, հասկացնել: Ելիստրատովը ցույց է տալիս, թե հասկանում է առանձին բնագավառներում եղած անօրինությունները: Իսկ տեղացիներն ամեն կերպ ջանում են Ելիստրատովին ետ համոզել, նույնիսկ ինչ-որ սուտ-սուտ թղթեր են վկայակոչում, սարքած թվեր ընթերցում: Մենք այդ պահին չէինք էլ ենթադրում, թե նրանք համոզված կերպով դավաճանում են...

Տնտեսությանն ու մշակույթին վերաբերող հարցերի քննարկումն իբր թե ավարտվել է: Ընդմիջում ենք անում (ժամը 10-ից մինչև 14-ը նստած էինք): Կես ժամից հավաքվում ենք, և ես նստելուն պես խոսում եմ.

— Ընկեր Ելիստրատով, դուք խոսելիս նայում էիք ինչ-որ «Զեկույցի»: Ըստ երևույթին, դա արդեն ուղարկված է Կենտկոմ՝ որպես մեր նամակի պատասխան, այո՞:

— Այո՛:

— Իսկ դուք այսօր չհամոզվեցի՞ք, որ աղավաղված են մեր նամակի շատ մտքերը, բաց են թողնված այն կետերը, որոնց դեմ ոչինչ ասել հնարավոր չէ, կեղծված են թվերն ու փաստերը...

— Ես համոզված եմ, որ դուք գրել եք ճշմարտությունը, բարձրացրել եք հարցեր, որոնք լուծելի են, և մենք անպայման կլուծենք: Բոլոր հարցերն էլ կլուծենք...

— Բայց Կենտկոմ եք ուղարկել մի թուղթ, որով ամեն կերպ ջանում եք ապացուցել, թե նամակը զրպարտություն է: Ո՞վ է այդ կեղտոտ թղթի հեղինակը:

Գինդոսի կախ-կախ ականջները կարմրում են: Ես նոր հասկանում եմ, որ այդ աղվեսակերպի գործն է. իբրև Ադրբ. ԿԿ Կենտկոմի՝ մեր մարզի գծով հրահանգիչ՝ սարքել է տեղացիների օգնությամբ:

Ելիստրատովը նամակի վերջի առթիվ մեզ ջարդելու խոստումը չի կարողանում կատարել, որովհետև մենք նրան հարկադրում ենք լսել վերջին երեք էջը: Ընթերցում ենք, և նրա լեզուն կտրվում է: Պարզ է, որ Կենտկոմում, ինչ-ինչ նկատառումներով, սրան և Ադրբեջանի մյուս ղեկավարներին այդ մասը չեն տվել ընթերցելու: Բայց նախօրոք որտեղի՞ց գիտեր: Հավանական է տեղացիներն են բզբզել:

Ընթերցում ենք: Շաբարյանը հպարտ խոսում է.

— Դե՛, հիմա ասացեք, տեսնենք որտե՞ղ է դրա տեղական նացիոնալիզմը:

— Նացիոնալիզմը... նացիոնալիզմ չէ, — գլուխն օրորում է Ելիստրատովը: — Ի՞նչ նացիոնալիզմ: Բայց տարաժամ պահանջ է: Մեր երկրի ամեն մասում հիմա նացիոնալիզմի բռնկումներ կան՝ Ուկրաինայում ու Մերձբալթյան հանրապետություններում, Միջին Ասիայում ու Դաղստանում... Էլ չեմ խոսում Մոլդավիայի մասին... Եվ դուք էլ վեր եք կացել ու այդպիսի հարց եք բարձրացնում...

— Բայց եթե այդքան շատ տեղերում ազգերն իրենց ազգային հարցերն են բարձրացնում, — ես եմ խոսում, — ինչո՞ւ չմտածել, որ կա ինչ-որ ընդհանուր ցավ, ինչո՞ւ անվերջ կրկնել նույն բանը, թե՝ մեր երկրում ազգային հարցը վերջնականապես լուծված է, և մենք այլևս ոչ մի անելիք չունենք: Դուք ինչո՞ւ փորձում եք արդարացնել Ադրբեջանի ղեկավարների շովինիզմը, իսկ նրա դեմ բարձրացրած մեր արդար ձայնը համարում եք նացիոնալիզմ: Մենք ի՞նչ ենք ուզում. մեր ժողովրդի միասնությունը՝ սոցիալիզմի դրոշի տակ: Ամերիկայի երկու զուտ հային քաշում-բերում էր, Խորհրդային Հայաստանին միացնում, իսկ կողքին մի ամբողջ մարզի հայությունը նրանից կտրում հազար ու մի պատնեշով:

— Մենք կվերացնենք բոլոր պատնեշները, մենք կկատարենք ձեր բոլոր պահանջները:

— Գիտե՞ք ինչ կա, ընկեր Ելիստրատով, երեխան լալիս է ու իր մորն է ուզում, իսկ դուք նրան ուզում եք լռեցնել խաղալիքներով: Մինչև ե՞րբ:

— Իսկ դուք հասկանո՞ւմ եք, որ եթե հանկարծ հարցը լուծվի ձեր ուզածի պես, Ադրբեջանի ժողովուրդը կապստամբի:

Քթիս տակ ծիծաղում եմ:

— Լուրջ բան եմ ասում, դուք ծիծաղում եք:

— Ինչո՞ւ պիտի ապստամբի:

— Որովհետև ուզում եք նրան զրկել մի ամբողջ մարզից:

— Նախ այդ մարզը երբեք էլ նրանը չի եղել: Դրա ապացույց՝ պատմությունը: Եվ երկրորդ, դուք ամեն առիթով պնդում եք, թե մեր մարզը ոչինչ չի տալիս, այլ միայն խժռում է: Ընդհակառակը, ադրբեջանցիները ուրախ պիտի լինեն, որ իրենց փրկենք այս անտանելի բեռից:

— Ո՞վ է պնդում:

— Դուք և մյուս ղեկավարները:

— Ոչ ոք այդպիսի հիմարություն չի ասել, — խեղդված պատասխանում է, ապա ակնոցի տակից չարությամբ նայում Մելքումյանին: «Այս դո՞ւ ես հաղորդել»:

Մելքումյանն անհանգիստ շարժվում է տեղում:

— Իսկ ձեզ հայտնի՞ է, որ Ղարաբաղն ու Նախիջևանը Ադրբեջանին են տրվել Թուրքիայի պահանջով և նրա հետ կնքված պայմանագրով: Հիմա մենք Թուրքիայի հետ բարեկամություն ստեղծելու ջանքեր ենք գործադրում և վեր կենանք ու այստեղ էլ պայմանագի՞րը խախտենք:

— 20-ական թվականների սկզբին Թուրքիան կարող էր իր կամքը թելադրել հյուծված ու թույլ խորհրդային երկրին: Իսկ հիմա, երբ մենք պայքարում ենք աշխարհի նույնիսկ ամենաոխերիմ տերության ներքին գործերին ուրիշների կողմից միջամտելու դեմ, ինչպե՞ս է, որ Թուրքիան կարողանում է խառնվել խորհրդային երկրի պես հզոր պետության ներքին գործերին...

Բաժանվում ենք:

Ելիստրատովն այն կարծիքին է, թե մենք բավարարված ենք այս զրույցով, մանավանդ որ սկզբից մինչև վերջ՝ 8 ժամվա ընթացքում, նա միայն պաշտպանվում էր: Երևի մտածում էր, որ բարոյական հաղթանակի բավականությունն է մեզ կգոհացնի:

Իսկ մենք համոզված ենք, որ պետք է շարունակենք: Վերջում ես իրեն այդպես էլ ասում եմ.

— Իմացած եղեք, որ սրանով միայն սկսվում է:

Մի զրույցով վերջնականապես պարզեցի, որ մարզի ղեկավարները մեզ հարվածել են թիկունքից, հարվածել են պաշտոնների թելադրանքով ու մորթապաշտությունից: Եվ շատ լավ էլ հասկացել են, թե ինչ են անում: Սա կարևոր էր. չէր կարելի նոր քայլի դիմել, առանց բոլոր հարցերի վերաբերյալ պարզ պատկերացում ունենալու: Այսքանից հետո գրեցի երկրորդ նամակը:

«ԽՄԿԿ ԿԵՆՏԿՈՄԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆԸ»

Մենք՝ լեռնային-ղարաբաղցի 13 կոմունիստներս, սրանից երեք ամիս առաջ ընկ. ընկ. Լ. Ի. Բրեժնևին, Ա. Ն. Կոսիգինին և Ա. Ի. Միկոյանին գրել ենք նամակ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի վիճակի մասին: Այդ նամակում մենք կոնկրետ փաստերով ցույց ենք տվել, որ Ադրբեջանական ԽՍՀ-ը չի մտահոգված իր մեջ մտցված մեր մարզի ճակատագրով, նրա տնտեսական ու մշակութային զարգացման խնդիրներով, իսկ որ ավելի վատթար է, բոլոր միջոցներով խափանում է նրա զարգացումը: Մենք խնդրել էինք մեր նամակի քննարկումը չհանձնարարել Ադրբեջանի ղեկավարությանը, քանի որ այն իր հասցեին ուղղված արդար

քննադատության ամեն մի փորձ ընդունել ու ընդունում է որպես նացիոնալիզմ և քննադատողին ենթարկում հարվածների ու հետապնդումների:

Մենք համոզված էինք, թե ԽՄԿԿ Կենտկոմը, տեղում ուսումնասիրելով դրությունը, ձեռք կառներ մարզի տնտեսության ու մշակույթի համակողմանի զարգացումն ապահովող անհրաժեշտ միջոցներ: Սակայն ստացվել է այնպես, որ մեր նամակի հետքերով մեկը մյուսի հետևից մեր մարզն են եկել հանրապետության մինիստրները, Ադրբեջանի կկ Կենտկոմի քարտուղար ընկ. Վեզիրովը, Մինիստրների խորհրդի նախագահ ընկ. Ալիխանովը: Հանդիպել են նրանք (բացառությամբ ընկ. Վեզիրովի) միայն մարզի ղեկավարության հետ, փակ դռների ետև տվել խոստումներ, արել հարգանքի ու եղբայրության հավաստիացումներ, գնացել: Իսկ ինչպիսի՞ն է արդյունքը: Օրինակի համար վերցնենք թեկուզ ընկ. Ալիխանովի փութառատ «կարգադրությունը», որի մեջ նա նույնիսկ այս դեպքում չկարողացավ թաքցնել իր կողմնակալությունը: Նրա ողորմածությունից բաժին է հասել լոկ այն բնակավայրերին, ուր ապրում են ադրբեջանցիներ և հայեր՝ գ. Շոշի, Տող, Էդիլլու, Մարտունի գյուղերը: Մեկին՝ ավտոմեքենա, մյուսին՝ մագնիտոֆոն, երրորդին՝ բիթում... Իսկ մարզի տնտեսության ու մշակույթի զարգացմանն ուղղված միջոցառումներ այս «Կարգադրության» մեջ չեք գտնի: Բայց ահա, ընկ. Ալիխանովին, չգիտես ինչու, անհրաժեշտ է եղել շտապ ստեղծել կոմպլեքսային բրիգադ Շուշի քաղաքը պատմական, ազգագրական ու հնագիտական ուսումնասիրության ենթարկելու համար, որի երկհարյուրամյա պատմությունը լի է հայերի ու ադրբեջանցիների փոխհարաբերությունների ամենամռայլ էջերով (պարբերական արյունհեղություններ, կոտորածներ, հրդեհներ, որոնք լաքել են քաղաքի հայկական մասը):

Մի քանի օր առաջ Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի քարտուղար ընկ. Պ. Մ. Ելիստրատովը եկել էր Ստեփանակերտ՝ նամակի հեղինակների հետ զրուցելու: Կողմնակի լսողն այդ զրույցից կարող էր եզրակացնել, թե նամակը լի է չհիմնավորված փաստերով ու թվերով, վատառողջ տրամադրությամբ և «ավարտվում է տեղական նացիոնալիզմով» (ընկ. Ելիստրատովի ասածներից):

Զրույցի ժամանակ մեզ հայտնի է դարձել, որ մեր նամակի, այսպես կոչված, քննության առթիվ հաշվետվությունը կազմել է Ադրբ. ԿԿ Կենտկոմի հրահանգիչ ընկ. Եֆիմ Գինդոսը: Այդ հաշվետվության մեջ ընկ. Գինդոսը կաշվից դուրս է եկել, որպեսզի, ինչպես ասում են, երևա ավելի կաթոլիկ, քան Հռոմի պապը: Առանց խղճի խայթի նա կեղծել է նամակը, շրջանցել այն փաստերը, որոնց դեմ անհնար է առարկել՝ սննդկոմբինատի փակումը, մարզային կազմակերպությունների ղեկավարությունը հանրապետականներին կամ հարևան ադրբեջանական շրջանայիններին տալը, «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողովրդական տնտեսության զարգացման միջոցառումների մասին» հայտնի որոշման չկատարելը, թթի այգիների ոչնչացումը, հայ ազգաբնակչության իրավունքների ոտնահարումն ևն, ևն:

Մյուս փաստերն ու հարցերը հաշվետվության մեջ վերաշարադրված են այնպես, որպեսզի հեշտ լինի վիճարկել կամ ժխտել: Իսկ ինչ մնում է պատասխաններին, ապա այստեղ մարդն իրեն ազատ է զգացել խուսանավելու և կեղծելու համար:

Այն հարցին, թե ինչո՞ւ մարզում չեն օգտագործվում հարուստ հանքերն ու հանքային ջրերի աղբյուրները, ինչո՞ւ գյուղատնտեսական այս երկրամասում մինչև այժմ չի կառուցվել գյուղատնտեսական արտադրանքը մշակող որևէ արդյունաբերական ձեռնարկություն, չի ձեռնարկվել ջրատնտեսական որևէ խոշոր միջոցառում, ընկ. Ելիստրատովը միայն մեկ պատասխան ունի՝ «Մենք փող չունենք»: Նամակում բերված փաստերը, որոնք արտացոլվում են մարզի տնտեսության քայքայիչ պլանավորումը, վերցված են եղել կուսակցության մարզկոմի և մարզխորհրդի գործկոմի՝ Ադրբ. ԿԿ Կենտկոմին հասցեագրված նամակից, որն ինչ-ինչ պատճառով

չի ուղարկվել, կուսակցության մարզկոմի քարտուղար ընկ. Գ. Ա. Մելքումյանը, մինչև հանրապետական ղեկավարների մեզ մոտ գալը, ծանոթացած է եղել մեր նամակին: Այն ժամանակ նա չի վիճարկել այդ փաստերից և ոչ մեկը, ընդհակառակը, ասել է, որ մենք քիչ փաստեր ենք բերել, խոստացել է անձամբ ներկայացնել առավել ծանր ու համոզիչ փաստեր ԽՄԿԿ Կենտկոմի հանձնաժողովին, եթե միայն այդ հանձնաժողովը գալու լինի: Սակայն հետո համոզվելով, որ ԽՄԿԿ Կենտկոմից չպիտի գա և ոչ մի հանձնաժողով, ըստ երևույթին հանրապետության ղեկավարության ճնշման տակ հաշվետվություն կազմողին օգնել է կեղծելու թվերն ու փաստերը:

Զրույցի ժամանակ ընկ. Ելիստրատովը մեր նամակի վերջը համարել է տեղական-նացիոնալիստական: — Ինչո՞ւ, — հարցրել ենք մենք: — Որովհետև դուք ցանկանում եք Ադրբեջանը զրկել մի ամբողջ մարզից:

Վերջապես նույն այդ ընկ. Ելիստրատովը Ադրբ. ԿԿ նախագահությունում շերամապահության հարցի քննարկման ժամանակ մեր մարզի ղեկավարներին կշտամբել է նրա համար, որ Լեռնային Ղարաբաղը նստած է հանրապետության վզին, ոչինչ չի տալիս և միայն խժռում է ու խժռում (այս մասին պատմել են մեր մարզի ղեկավարները):

Ինչո՞ւ նա զայրանում է, երբ ցանկանում են Ադրբեջանը փրկել այդպիսի բեռից, մի մարզից, որը ոչինչ չի տալիս, այլ միայն խժռում է ու խժռում: — Իսկ եթե ադրբեջանական ժողովուրդն ապստամբի՞, — հարցրել է ընկ. Ելիստրատովը:

Ադրբեջանական ժողովուրդն ինչո՞ւ պիտի ապստամբի: Մեր մարզի Մարտունու շրջանի տարածքի կենտրոնում կա ադրբեջանական մի փոքրիկ գյուղ՝ Վեյսալուն, որը ենթարկվում է հարևան ադրբեջանական Ֆիզուլու շրջանին: Հայկական ԽՍՀ Գորիսի շրջանի խորքում ևս կա ադրբեջանական մի գյուղ: Հանրապետությունների սահմանի, լեռների ու ձորերի վրայով այն ենթարկվում է Ադրբեջանական ԽՍՀ-ին: Էլ չենք խոսում Նախիջևանի ԻԽՍՀ-ի մասին: Ինչո՞ւ այդպես է: Որովհետև ադրբեջանական բնակչության ղեկավարությունը հեշտ է իրականացնել ադրբեջանցիների կողմից: Նույնիսկ անհարմար է բացատրել:

Բայց ահա ուրիշ մի «ինչո՞ւ»-ի ոչ ոք չի ուզում պատասխանել: Ինչո՞ւ Լեռնային Ղարաբաղի հայկական ինքնավար մարզը չի կարող լինել իր հիմնական ժողովրդի հետ, խորհրդային սոցիալիստական հանրապետության, որը ծաղկում է հարևանության մեջ, նրա կողքին: Ինչո՞ւ այս օրինական, միակ արդարացի պահանջը հակասում է ուրիշների շահերին, ինչ-որ մարդկանց թվում է նացիոնալիզմ: 1920 թ. Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանի խորհրդային կառավարության և կոմունիստական կառավարության կողմից ընդունվել է որպես վիթխարի նշանակություն ունեցող ինտերնացիոնալիստական միջոցառում հայերի ու ադրբեջանցիների բարեկամության և համագործակցության ստեղծման համար: Ականավոր լենինյան Գ. Կ. Օրջոնիկիձեն ասել է, թե դա (Լեռնային Ղարաբաղի միացումը Հայաստանին) «Մեծագույն կարևորություն ունեցող ակտ է, դա պատմական ակտ է, որը մարդկային պատմության մեջ չունի նման օրինակ» (Գ. Կ. Օրջոնիկիձե, «Հոդվածներ և ճառեր», ռուս. հրատ., էջ 141):

Ինչո՞ւ այժմ պատմական, քաղաքական ու ինտերնացիոնալիստական արդարության վերականգնման մասին խոսողները դատապարտվում են ու հալածվում:

Լեռնային Ղարաբաղում նացիոնալիզմ չկա: Նացիոնալիզմը պետք է փնտրել այնտեղ, ուր այն գոյություն ունի և օրըստօրե մոլեգնում է: Նացիոնալիզմը դա մեր ազգային իրավունքների ու արժանապատվության ոտնահարումն է: Նացիոնալիզմը դա Ադրբ. Գիտությունների ակադեմիայի կողմից 25 հազար տպաքանակով տպագրվել է մի տափակ «Գաբուսնամեի», որի մեջ հայ ժողովուրդը բնութագրվում է ամենակեղտոտ հերյուրանքներով:

Երբ մենք հարցրել ենք, թե ինչո՞ւ այդ զրպարտությունը տպագրվել է, Ադրբ. ԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Ռազբարովը պատասխանել է. «Մենք հրատարակել ենք համաշխարհային մշակույթի հուշարձանը»:

Նացիոնալիզմը այս բոլորն է և ոչ թե սրա դեմ բարձրացած ազնիվ ու արդար ձայնը:

Ահա համառոտ շարադրանքն այն ամենի, ինչ տեղի է ունեցել մեր նամակից հետո:

Մենք Լեռնային Ղարաբաղի տագնապալից վիճակի մասին գրել ենք ԽՄԿԿ Կենտկոմին: Սակայն մեր նամակի քննությամբ զբաղվել են մարդիկ, որոնք միայն պետք է պատասխան տային:

Մենք հավատում ենք մեր կուսակցության Կենտկոմին և հուսով սպասում ենք մեր մարզի հիմնահարցի արդարացի քննությանն ու լուծմանը:

Նամակի հեղինակների անունից ու հանձնարարությամբ.

1. **Բ. Ուլուբաբյան**
2. **Ս. Շահբազյան**
3. **Լ. Գասպարյան**
4. **Գր. Ստեփանյան**

22 սեպտեմբերի, 1965 թ.:

Մի քանի օր հետո Կենտկոմի պլենում պիտի գումարվեր: Նամակը տեղ հասցրինք այդ պլենումի նախօրյակին:

Հետագայում Մելքումյանը պատմում էր, որ պլենումն ավարտելուն պես իրեն ու Ադրբեջանի ղեկավարներին կանչել են, թե. «Բա ասում եք՝ հարցերը լուծել եք, այս ինչպե՞ս է, որ ընկերները նորից են գրել»: Ընթերցել են տվել, կշտամբանքներով ճանապարհել: Պատմում էր նաև, որ հետագայում ամեն գնացող ստիպում էին, որ կարդան: «Ախար, կարդացել ենք երկու նամակն էլ, անգիր գիտենք»: «Կարդացե՛ք, կարդացե՛ք, որպեսզի ոչինչ չմոռանաք»:

Ուրեմն, պլենումից գալիս են մեր երկրորդ նամակն ընթերցած:

Իսկ ահա երկրորդը ցույց է տալիս Ալիխանովի, Ենիստրատովի, Մելքումյանի և մյուսների այն դատապարտելի քայլերը, որոնք կատարվել էին առաջին քննարկման ժամանակ և այդ կապակցությամբ:

Մելքումյանը գալիս ու ոչինչ չի խոսում մեզ հետ:

Մի քանի օր անց ինձ պատմում են, որ հավաքել է մարզային բոլոր կազմակերպությունների, շրջկոմների ու շրջգործկոմների ղեկավարներին և «պատմել» մեր նամակները, որոնք, իբր թե, զրպարտություն են սկզբից մինչև վերջ, ուղղված խորհրդային կարգի ու կոմունիստական կուսակցության, Ադրբեջանի ինտերնացիոնալ ու եղբայրական ղեկավարության դեմ, անպատվաբեր մեր մարզի մարտական կուսակցական կազմակերպության համար, որ մարզի կուսակտիվը պարտավոր է քննել այդ զրպարտությունները, իր խոսքն ասել: Վերջում էլ առաջ է քաշել ամենակարևոր հարցը՝ Ադրբեջանի ղեկավարությունն ու Ղարաբաղի մարզկոմն ուզում են իմանալ՝ մարզի ակտիվը կպաշտպանի՞ իրենց, թե՞ ոչ:

Համակատարներն իսկույն արձագանքել են խանդավառության մոլուցքներով: Չէ՞ որ առիթ էր բացվում ցույց տալու իրենց նվիրվածությունը և հաշվեհարդար տեսնելու նամակի հեղինակների հետ, որոնց դեմ քանի՛ տարի լցված էին անզուսպ կատաղությամբ... Իսկ հիմա սրանք թակարդ են ընկել ու անպաշտպան են:

Հակոբ Օհանջանյանը, Ռուբեն Շահրամանյանը, Գրետա Սահակյանը և, ո՛վ զարմանք, Արամ Գրիգորյանը առաջարկել են նամակների հեղինակներին վտարել կուսակցության շարքերից, ենթարկել խստագույն պատժի... Մյուս 20—25 հոգին էլ, որ ելույթ են ունեցել, ավել կամ պակաս կրքով կրկնել են սրանց, հայտնել իրենց պատրաստակամությունը՝ կանգնելու մարզկոմի ու Կենտկոմի թիկունքում:

Որոշել են այդ ժողովի մասին ոչ ոքի ոչինչ չասել և նախապատրաստվել վճռական հարվածին:

Ինձ ամեն օր տեղեկացնում էին այդ նախապատրաստության մանրամասներին: Գիտեի, թե մարզկոմի բյուրոյի ո՛ր անդամը կամ մարզկոմի ո՛ր աշխատակիցը քանի՛ հոգու է ելույթ պատրաստում և ինչպե՛ս:

Մենք չպետք է ձեռներս ծալած սպասեինք հարվածին: Սկսեցինք դավադիրների հավաքագրածներին ծանոթացնել նամակների հետ, լուսավորել, հասկացնել գործի էությունը: Ապա որոշեցինք, որ ես նորից Մոսկվա գնամ ու իմանամ, թե երկրորդ նամակից հետո ինչո՞ւ Մոսկվայից եկողները Բաքվում էլ հետաքրքրվել են մեր գործերով ու վերադարձել (մենք տեղյակ էինք նրանց զրույցներին), ինչո՞ւ ԽՄԿԿ Կենտկոմի աշխատակից Կիսելյովը մի շաբաթից ավել մարզը շրջել է, ամենուրեք մարդկանց հարցուփորձել, խոսեցրել մեր նամակների մասին, իսկ մեզ չի հանդիպել, մեզ հետ ոչ մի խոսք չի փոխանակել:

Մոսկվայում իմ առաջին խնդիրն էր տեսնել Խրուշչյովին: Իսկ նա քաղաքում չէր: Մինչև կգար, կարողացա մտնել ԽՄԿԿ Կենտկոմի կուսակցական մարմինների բաժին: Ինձ պատասխանեցին, որ մարզկոմի արածն ու նախապատրաստությունը ինքնագործունեություն են, իրենք այդպիսի հանձնարարություն չեն տվել:

— Մենք ձեզ կոնկրետ չենք պատասխանի, ինչո՞ւ: Որովհետև տնտեսական ու կուլտուրական շինարարության վերաբերող հարցերը կլուծեն Ադրբեջանի ղեկավարները: Նրանք պարտավոր են: Իսկ հիմնականը, որի համար երկու նամակներն էլ գրել եք (Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելը, չէ՞ որ, իսկապես, բոլորը դրա համար եք գրել), այս հիմնականը, որքան էլ իրավացի ու արդար լինի, այժմ չենք կարող կատարել: Հասկանո՞ւմ եք:

— Ինչո՞ւ չեք կարող:

— Գնացեք, ձեր հայրենակցին հարցրեք:

— Ո՞ր հայրենակցին:

— Անաստաս Իվանովիչին:

— Ի՞նչ: Նա դե՞մ է:

— Ձեր երկու նամակներն էլ իրենց ժամանակին Կենտկոմի նախագահության հատուկ քննության առարկա են դարձել, հասկանո՞ւմ եք: Եվ երկու անգամ էլ Անաստաս Իվանովիչն զգուշացրել է...

— Ումի՞ց, ինչի՞ց:

— Ձեր հարևաններից: Ասել է՝ խայտառակ էքսցեսներ կլինեն: Իբր, овчинка выделки не стоит.

Դժվար է հավատալ: Միկոյանն ինչո՞ւ պիտի խանգարեր: Բայց ինչպե՞ս պարզեմ ճշմարտությունը:

Անդրանիկ Իոսիֆյանի հետ հեռախոսով պայմանավորվել էինք, հանդիպեցինք իր ինստիտուտում: Խոսում է հուսահատ: Ես պատմեցի դրությունը մարզում: Գլուխն օրորեց.

— Հիմա տեղի կունենա հայերիս համար շատ բնորոշ. մարզում կսկսեն իրար ուտել, և չարամիտները կնայեն ու կծիծաղեն:

— Իսկ ձեզ ոչինչ չհաջողվե՞ց անել:

— Ի՞նչ անեի, մարդ աստծո: Դեմիչևի վրա էր հույսս: Մի խորհրդակցությունում Եդեռնի մեր ցույցերի մասին այնպիսի զայրույթով խոսեց, որ ասացի՝ սա Ղարաբաղի հարցն ուրիշ չի հասկանա, քան այդ ցույցերի շարունակությունը: Մնում էր Միկոյանը: Որոշել էի եղբոր միջոցով գործը կազմակերպել: Արտեմն էլ ոտ ու ձեռս այնպես թուլացրեց, որ բոլորովին հուսահատվել եմ: Ասում է. «Երկու անգամ եկել ու տանը հոխորտացել է. «Տեսե՛ք-տեսե՛ք, իմ ժողովրդին փրկեցի խայտառակությունից: Ղարաբաղի հարց են բարձրացրել: Եթե լուծեինք, մի նոր կոտորած լիներ: Թույլ չտվի»:

Ուրեմն Կենտկոմում ճիշտ էին ասում. երկու անգամն էլ նա է խափանել:

Հակոբ Սալախյանից իմացա, որ վերջերս Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը, մեր նամակին արձագանքելու համար, իր հորդորանքով Միկոյանի մոտ է գնացել, պատմել, որ Ղարաբաղում հայությունը վատ վիճակում է, որ պահանջում է մարզը վերադարձնել Հայաստանին: Եվ Միկոյանը նրան լռեցրել է. «Բավական է՝ Ղարաբաղ-Ղարաբաղ, էս փրկություն չպիտի՞ ունենամ այդ կռվախնձորից»:

Ինչո՞ւ է խափանել: Մի՞թե իսկապես այն կարծիքին է, թե դրանով մեր ազգը կխայտառակվեր, թե հարևանները կհամարձակվեին մեզ կոտորել, կհամարձակվեին թեկուզ և ձայն բարձրացնել:

Ո՛չ, Միկոյանն այնքան միամիտ մարդ չէ: Նա լավ գիտի, թե մի ժողովուրդ մեր երկրում ու մեր օրերում ի՞նչ կարող է անել և ի՞նչ չի կարող: Շա՜տ լավ գիտի: Գիտի նաև, որ հարցը լուծելու համար ուրիշ բան պետք չէր: Կկանչեին Ադրբեջանի ղեկավարին, կկարգադրեին՝ «Գնա, հրաման կազմակերպիր Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու մասին: Պա՞րզ է»: «Այո՛, պարզ է, աչքի՛ս վրա»:

Եվ հաջորդ օրն իսկ հարցը լուծված կլիներ:

Բայց երևի գիտի ու մտածում է նաև, որ հրամանը «կազմակերպելուց» հետո Ադրբեջանի նացիոնալիստական ղեկավարները (և ոչ միայն ղեկավարները) հանգիստ չեն տա Կենտկոմին, անվերջ կխսսեն ու կգրեն, որ ամեն ինչ Միկոյանն է արել: Չէ՞ որ տասնհինգ տարի առաջ Բաղիրովը նրան ահ ու սարսափի մեջ էր գցել հենց այդպիսի մեղադրանքով, և միայն Ստալինի մահն էր, որ Բաղիրովի ու Բերիայի նենգավոր պլանները հօդս ցնդեցրեց:

Բաղիրովի դատավարությունը շատ բան էր ջրի երես հանել, այդ շատի մեջ էլ Բաղիրովի ու Բերիայի կեղտոտ ձեռքերով սարքված «Միկոյանի գործը»: Երևի Հարությունովի 1945 թ. գրած նամակը Բաղիրովին համոզած է եղել, որ Լեռնային Ղարաբաղի հարցը մեռնող-հառնող երևույթներից է և, որքան էլ ինքը ժամանակին մեռցրել է, վերստին հառնելու է: Հավանաբար նկատի ուներ նաև, թե այդպիսի պարագայում Միկոյանի պես մի ուժը պիտի լինի ղարաբաղյան հարցը հայերի օգտին լուծելու անհաղթահարելի գործոնը: Ուստի և լծվել էր այդ գործոնն ասպարեզից հեռացնելու պարտականությանը: 1948—52 թվականներին Ստեփանակերտում, Կիրովաբադում ու Բաքվում հայ մտավորականների ու ղեկավար աշխատողների էին կալանքի տակ առել՝ նրանց մեղադրելով դաշնակցական-ահաբեկչական գործունեության մեջ: Իբր, այս խմբի վերջնական նպատակն է եղել է Ղարաբաղի միացումը Հայաստանին: Դաշնակցական այս երեք կենտրոնների տեղական ղեկավարը համարվել էր

հանրապետության մինիստր Աղաբաբովը՝ Ան. Միկոյանի քեռակալը, որն էլ, իբր, պիտի որ կատարած լիներ ավագ քեռակալի հանձնարարություններն ու խորհուրդները: Դատավարության ժամանակ նախկին մեղադրյալները հանգամանորեն պատմում էին, թե պետանվտանգության քննիչներն ինչպե՞ս էին նման ցուցմունքներ հերյուրում և բռնության ու կտտանքների միջոցով ստիպում, որ իրենք ստորագրեն...

Միկոյանը չէր կարող տեղյակ չլինել այս ամենին: Հավանաբար կմտածեր նաև, որ պետանվտանգության սարքած կամ հայտնաբերած տվյալներն անմահ են ու կարող են փոխարինել հավերժական շարժիչին... Ինչպես նաև, լինելով անձնական շահը մյուսներից, մանավանդ ազգայինից վեր դասող մարդ, չէր կարող հարցականի տակ դնել իր վաղը՝ բարձրագույն թոշակը, թոշակառուին կցվող անհատական մեքենայի, ամառանոցի ու քաղբյուրոյական բարեկեցության մյուս բոլոր բաղկացուցիչների հեռանկարը:

Կարող են ինձ հակաճառել՝ հիմա ուրի՞շ ժամանակ է, Ստալին չկա, Բերիան ու Բաղիրովը դատապարտված են պատժի գերագույն չափի...

Սակայն չէ՞ որ նա եկել է այն մի ժամանակից և նորերի հետ թռչկոտելիս ինքն էլ համոզված է, որ ճերմակ ագռավն է սևերի շրջապատում: Վախը, զգուշավորության բնազդը... Մանավանդ երկրորդը, որ նրան ապահով անց է կացրել ինչ-ինչ փորձությունների միջով, հասցրել խաղաղ եզերք... Մի ինչ-որ Ղարաբաղի համա՞ր հարցականի տակ դներ այդ ամենի արդյունքը...

Խղճիս վրա մե՞ղք եմ անում: Ո՛չ, երանի՜ թե այդպես լիներ:

Մի օր Ղարաբաղի մարզգործկոմի նախագահ Մուշեղ Օհանջանյանն ինձ հաղորդեց քանի ամիս պահած իր մի գաղտնիքը, որից հետո այլևս անհնար է հավատալ, թե Միկոյանն ի վիճակի էր գոնե վեհանձնորեն մի կողմ քաշվել և լավ կամ վատ որևէ դեր չխաղալ մեր հարցի համար:

«Օգոստոսին էր, — իր գաղտնիքն այսպես բացեց Օհանջանյանը,— մի խնդիրքով զանգել էի Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Իսկենդերովին, ասաց՝ Բաքու գալուդ անպայման կմտնես ինձ մոտ, կարևոր բան կա: Երբ մոտն էի, պատմեց, որ հունիսին, որ դու փորձել ես նամակը հանձնել Միության Գերագույն խորհուրդ, ինքն այնտեղ իր ամսական հերթապահությունն անցկացնելիս է եղել: Միկոյանը կանչել է իր մոտ, մտերմաբար հաղորդել, թե, ահա, օգնականների մոտ է գտնվում Ղարաբաղի նոր դաշնակների ներկայացուցիչը, ընդունելություն է խնդրում, որպեսզի մարզը Հայաստանին վերադարձնելու մասին համախոսական հանձնի: «Բայց ես նրան չեմ ընդունել և օգնականներիս միջոցով հասկացրել եմ, որ ձեռ քաշի նման արկածախնդրությունից — իբր, ա՛յս է եղել Միկոյանի խոսքը:

Միկոյանի այս խոսքը կարող էր այլ երանգ էլ ունենալ, դա ոչ մի կարևորություն չունի: Կարևորն ու միակ անհանգստացնողն այն էր, որ ընդունելության խնդրանքիս ու դիմումը Գերագույն խորհրդի հանձնելուս փորձերի մասին միայն Միկոյանը գիտեր և անմիջապես հայտնի է դարձել Իսկենդերովին: Վերջինիս նա այս ամենի մասին պատմել է այն ժամանակ, երբ օգնականի միջոցով ինձ վստահեցնում էր, թե Կենտկոմում հարցը քննելիս ինքը կասի իր վճռական խոսքը:

Ահա թե նա ինչպես է վերաբերվել իր ազգի պատմական արդար դատին: Ա՛յն ազգի, որին իր կյանքում մի գրոշի օգուտ չի տվել և որին միայն մեկ անգամ կարող էր օգնել ու պետք է օգներ:

Ա՛յն ազգի, որը նրան պահող միակն է լինելու, ինչ էլ որ լինի...

Բայց, ըստ երևույթին, նա այն մարդկանցից է, որ մտածում է միայն ա՛յս կյանքի մասին, իսկ իր մահից հետո՝ թեկուզ ջրհեղեղ...

Մեր հակառակորդները վերակենդանացել են: Քր. Պետրոսյանը, Ս. Յարամիշյանը և մյուս խտտվիկները մարզկոմի ու մարզգործկոմի ապաների կաբինետներից դուրս չեն գալիս: Փողոցներում կանգնեցնում են սրան-նրան, զրպարտում նամակներն ու նրանց հեղինակներին: Մարզդատախազությունում սպառնալիքով դուրս են վռնդել Պետրոսյանին: «Գիշերը կտան-կսատկեցնեն, ու ոչ ոք չի կարող պարզել, թե ինչպես եղավ: Գնա՛, զինքդ հավաքիր»: Սակայն սա զինքը հավաքող չէր: Սա այն տիպերից է, որոնց անհանգստացնում է ուրիշների հանգիստը: Մարզի ղեկավարների գաղտնի համաձայնությամբ զրպարտագրեր է ուղարկել տալիս Բաքու և Մոսկվա ու ամեն պատահողի ականջի փսփսում է. «Շուտով նրանց ճաշը կեփեն»:

Դեկտեմբերի 6-ին զանգեց Մելքումյանը, թե.

— Ազատ չե՞ս:

— Ի՞նչ կա որ:

— Չե՞ս կարող գալ, մի քիչ խոսենք:

— Կգամ: Ե՞րբ:

— Կուզես՝ հենց հիմա:

Առավոտյան ժամը տասն էր: Գնացի: Նստած էին ինքը, Մ. Օհանջանյանը: Վեր կացան, դիմավորեցին, ձեռք սեղմեցին սիրալիր, նստեցինք: Երկար ժամանակ, թերևս երկու-երեք րոպե, ոչ ոք չէր խոսում: Ես սպասում էի: Գիտեի, որ նախապատրաստած խոսք ունեն: Ամիսուկես-երկու ամիս առաջ հավաքել էին մարզի բոլոր ղեկավար աշխատողներին, հանձնարարականներով ճանապարհել տեղերը, զգուշացրել, որ շուտով պիտի քննեն նամակների հարցը, պետք է կազմ ու պատրաստ լինել: Ապա ես էի Մոսկվա գնացել: Ըստ երևույթին թույլ են տվել ու հետո միայն հասկացել, որ սխալվել են. այնտեղ քարտերը պիտի խառնեի:

— Այն երկրորդ նամակն ինչո՞ւ եք գրել, Բագրատ Արշակովիչ,— վիզը ծռած, բարեկամաբար հարցնում է Մելքումյանը:

— Ինչպե՞ս թե «ինչո՞ւ եք գրել», — ես էլ իմ հերթին եմ հարցնում: — Եվ դեռ զարմանում է՞լ եք:

— Իսկապես, ինչո՞ւ եք գրել, — Մելքումյանի աչքամիջին նայելով՝ խոսում է Օհանջանյան Մուշեղը: — Առաջինից հետո հանրապետության ղեկավարները եկել են, մեր պահանջները («մե՛ր») կատարել, հեռանկարային խոստումներ են տվել: Ամեն ինչ խաղաղ անցել էր: Ի՞նչ կարիք կար նորից գրգռելու:

— Ուրեմն ձեզ համար կարևորը խաղաղ անցկացնելն է, — պատասխանեցի անվրդով: Երկրորդը գրել ենք, որպեսզի Կենտկոմին ցույց տանք, թե դո՛ւք ինչ եք արել, որպեսզի ոչինչ պարզ չերևա: Զարմանո՛ւմ եք: Միայն դրա համար ենք գրել: Ձեր արածներն են անվայել ու տգեղ, ու դո՛ք եք վիրավորված: Հիմա էլ այն ողորմելիներին եք հավաքել ու հաշվեհարդար եք նախապատրաստում: Ո՞ւմ համար հասկանալի չէ, որ դրա պատճառը երկրորդ նամակում ձեր մասին եղած խոսքն է: Ձե՛ր և Եղիատրատովի:

— Արի մի քիչ հանգիստ խոսենք,— շառագունած խոսում է Մելքումյանը:

— Սրանից էլ հանգի՞ստ:

— Ազնիվ խոսք եմ ասում, Բագրատ Արշակովիչ, մեջտեղ անձնական ոչինչ չկա: Ուղղակի դուք ինքներդ ամեն ինչ իրար եք խառնել այդ երկրորդ նամակով:

— Ի՞նչ ենք իրար խառնել: Չի՞ լինի ասես: Եվ առհասարակ, ի՞նչ կա այդ երկրորդում: Առաջինը «քննելու» ձեր միջոցառումներն է պատմում և ուրիշ ոչինչ: Նրա մեջ ի՞նչն է սխալ: Սո՞ւտ է, որ դու նախապես ծանոթ ես եղել առաջին նամակին: Որ դու ոչ մի առարկություն

չես ունեցել նրա դեմ, բացի Ղարմետսպառկոմիտեի համախառն արտադրանքի մակարդակի իջնելու բացատրությունից:

— Ճիշտ է:

— Իսկ Ելիստրատովի հետ քննելիս ինչո՞ւ յուրաքանչյուր հարցում արդարացնում էիք մարզի վիճակը և ամեն անգամ սուտ պատճառաբանություններ էիք բերում նամակում եղածի հակառակն ապացուցելու համար: Նույնիսկ ա՛յն ժամանակ, երբ Ելիստրատովը տեղ-տեղ զայրացած գոռում էր, թե՝ մարդիկ ճիշտ են գրել, ինչո՞ւ այսպես է:— Շրջվում եմ դեպի Օհանջանյանը: — Մարզում ջրատնտեսական ի՞նչ միջոցառումներ եք կատարել, որ հպարտանալով պատմում էիր, թե պլանները գերակատարել եք: Ամոթ չէ՞:

— Գերակատարել ենք, էլի՛: Պլանավորված են եղել փորել 14 արտեզյան ջրհոր, փորել են 16-ը:

— Եվ դու այդ համարում ես ջրատնտեսական խոշոր միջոցառո՞ւմ: Նույնիսկ թղթեր էիր վերցրել հետդ՝ մեզ «փաստերով» ջախջախելու համար:

— Է՛, դա արդեն դատարկ բան է, — իբր կատակում է Մելքումյանը: — Նամակում խոշոր միջոցառումների մասին է խոսվում: Իսկ արտեզյան ջրհորը... Բարդայի շրջանի յուրաքանչյուր կոլխոզի մի բրիգադը դրա երեք չափ ունի...

— Իսկ ինչո՞ւ այդքանը չասացիր Ելիստրատովին:

— Ինքը չգիտի՞, որ ես ասեմ:

— Հիմա ի՞նչ եք ուզում: Որ դուք եթիմ Գեդիկին ու Ելիստրատովին օգնեիք կեղծելու մեր նամակը, Կենտկոմին ներկայացնելու մի սուտ ու անպատկառ զեկույց, իսկ մենք լռեի՞նք: Ա՛յդ եք ուզում: Ես նորից եմ կրկնում: Երկրորդ նամակն իրենից ոչինչ նոր բան չի ներկայացնում: Եթե առաջինի դեմ առարկություն չունեք...

— Չունենք: Ընդհակառակը, նրանով մեզ շատ եք օգնել, — միաբերան ասում են երկուսով:

— ...Երկրորդով մենք մեր կուսակցության Կենտկոմին պատմել ենք, թե ինչպիսի պայմաններ են սարքվել առաջին նամակի տվյալները կեղծելու համար և այն ինչպես է քննվել:

Այս ոգով զրույցը շարունակվում է մինչև ժամը 2-ը:

Խոսում ենք «քննարկման» ժամանակ Ելիստրատովի բռնած անպատկառ դիրքի մասին: Մինիստրների խորհրդի նախագահ Ալիխանովի չարաբաստիկ «կարգադրությունն» եմ վերլուծում, և իրենք ի վերջո համոզվում են (չնայած էն գլխից էլ համոզված էին ներքուստ), որ դա մի ճարպիկ խաղ է եղել, որով թոզ է փչել ոչ միայն մարզի ղեկավարության ու աշխատավորների, այլև ԽՄԿԿ ԿԿ-ի նախագահության աչքերին: Մանավանդ որ նա մեր առաջին նամակի բոլոր փաստերը կետերի է վերածել, դարձրել 42 և բոլոր կետերի գծով էլ կարգադրություններ արել, իբր թե «լուծել»:

— Իսկ այդ աչքակապության կետերից քանի՞սն են լուծվել,— հարցնում եմ: — Բոլորն էլ պիտի կատարվեին 10, 20, 30 օրվա ընթացքում: 3—4 ամիս է անցել, ինչո՞ւ չեք ընդհանրացնում, տեսնենք՝ ի՞նչն է կատարվել, ի՞նչը՝ ոչ:

— Ճիշտ է, քիչ բան է կատարվել, — քթի տակ պատասխանում է Մելքումյանը:

Իսկ Օհանջանյանը սևակնած է: Երբ հուլիսին՝ մարզկոմի պլենումում նախշուն խաղալիք գտած երեխայի պես խնդմնդալով կարդում էր Ալիխանովի կարգադրությունը, ես վեր կացա, ասացի. «Դա աչքակապություն է: Այստեղ ոչ մի կետ չկա, որ ուղղված լինի մարզի տնտեսության ու մշակութային կյանքի զարգացմանը, պարզապես փշրանքներ է շպրտել՝ մեկին մի քիչ փտում, մյուսին մազութափոխադրիչ, երրորդին՝ մի քիչ փող... Իսկ շատ կետեր բոլորովին չեն կատարվի, որովհետև նրանք իրենց հիմքում անիրականանալի ու կեղծ են:

Օրինակ, կարգադրում է, որ մի շաբաթվա ընթացքում Հադրութում կաթնամթերման կետ ստեղծեն ու կաթ ընդունեն: Մի՞թե ձեզ համար պարզ չէ, որ կաթն ընդունելու համար կաթնամշակման գործարան է պետք, իսկ գործարանը կառուցվում է փողով և այն էլ ոչ մի շաբաթվա ընթացքում... Ինչո՞ւ կարծում եք, թե Ալիխանովը չի իմացել՝ ի՞նչ արժե կարգադրությունը...»:

Օհանջանյանն էր, որ եռանդորեն աշխատեց Ալիխանովի աչքակապությունը պաշտպանել հարձակումից, և նրան օգնության հասավ Ռուբեն Շահրամանյանը.

— Մեզ ո՞վ է իրավունք տվել քննության առնելու հանրապետության կառավարության ղեկավար ընկ. Ալիխանովի կարգադրությունը:

— Իսկ ինչո՞ւ ընթերցվում է, — տեղից շպրտեցի ես: — Աստվածային պարգևը պետք է համբուրել ու պաշտել:

Հիմա էլ չարությամբ լռում է այդ նույն Օհանջանյանը:

...Ժամը երկուսին եկել եմ աշխատավայրս, ներսից դուռը կողպել ու ուզում եմ քննել տեղի ունեցածը: Ինչո՞ւ են կանչել: Մի՞թե նրա համար, որպեսզի չորս ժամվա ընթացքում լսեն միայն իրենց կատարած տգեղ դերի դատապարտումը և վերջում էլ սուտ բարեկամության առաջարկություն անեն:

— Մինչև ե՞րբ այսպես խռովված մնանք: Եկեք աշխատենք ու մոռանանք՝ ինչ եղել է:

Ո՛չ, ըստ երևույթին խորքում կա իրենց համար առավել կարևոր մի բան, որ այնպես խնամքով թաքցնում էին: Ամենայն հավանականությամբ փորձում էին իմանալ, թե ի՞նչ եմ արել Մոսկվայում: Ոչինչ չկարողացան պարզել: Ես այդ մասին լռում էի, իսկ իրենք չէին համարձակվում հարցնել:

Մեկ էլ. երևի ուզում էին հանգստացնել, քնեցնել և իրենց գործը տեսնել: Այս վերջինի մեջ ինձ համոզեց հաջորդ օրվա մի կարճ զրույցը կուսակցական-պետական վերահսկողության մարզկոմի նախագահ Երվանդ Բաղդասարյանի հետ: Նա, որ բոլոր դեպքերում աշխատում էր մնալ անկողմնակալության դիրքերում (և դա հիմնականում հաջողվում էր), առաջարկեց, որպեսզի 13-ս էլ հրաժարվենք առաջին նամակի վերջից:

— Դրանով մեր ու ձեր գործը կհեշտանա, և ոչ մի բարդություն չի լինի:

— Իսկ ի՞նչ բարդություն պիտի լինի:

— Դու ինձնից մանրամասնություններ մի պահանջիր, — «մեծահոգաբար» խնդրեց նա ու զրույցը համարեց փակված:

— Եթե այդպես է, — հայտնեցի բաժանվելիս, — հաղորդիր, որ մենք գրել ենք մեր համոզմունքը և մահվան սպառնալիքի տակ անգամ չենք հրաժարվի նրանից:

— Այնուամենայնիվ, մտածի՛ր:

— Մտածել եմ գրելուց առաջ: Հասկանո՞ւմ ես, Երվանդ, դա մեր սրտի, մտքի, մեր կյանքի թելադրանքն է, և ոչ թե վայրկենական պոռթկումի հետևանք: Դու հասկանո՞ւմ ես այսքանը:

— Հասկանում եմ, բայց...

Այս «բայցը» պարզվեց երկու օր հետո՝ դեկտեմբերի 9-ին: Զանգեցին, թե ժամը երկուսին պետք է լինեմ մարզկոմի բյուրոյում: Միաժամանակ որպես գաղտնիք հայտնեցին, որ հրավիրված են նաև «ընկերները»: Մեր նամակներն են քննարկելու:

Դեկտ. 9-ը ծննդյանս օրն է: Այսօր քառասունամյակս էր լրանում (հարազատներս ու մտերիմ ընկերներս նախապատրաստվել էին ու պիտի նշեին):

Մտածեցինք, որ բյուրոյի նիստը կտևի մինչև 5—6-ը: Կպրծնենք ու կհավաքվենք մեր տուն:

Գնացինք մարզկոմ հանգիստ սրտով, առանց մի որոպե իսկ պատկերացնելու այն ահավորն ու ամոթալին, որ նախապատրաստվել էր մեր նախկին գործընկերների ու բարեկամների, ամենից կարևորը՝ հայ մարդկանց կողմից:

Միջանցքներում ոմանք խուսափում են մեզ հետ հանդիպելուց: Նրանց թևատակերին թղթապանակներ կան: Ենթադրում եմ, որ պիտի խոսեն: Երկու ամիս առաջ են հանձնարարություն ստացել և կեղտաջուր պիտի թափեն մեզ վրա: Այդ պատճառով էլ խույս են տալիս: Մյուսները հայացքներով ու խոսքերով ոգևորում են:

— Պինդ կացեք, ճշմարտությունը ձեր կողմն է:

— Իսկ դո՞ւք:

— Մենք ևս: Բայց մեր կարծիքն ո՞վ է հարցնում:

Մնում է թքել այսպիսիի երեսին ու հեռանալ:

Մելքումյանը բաց է հայտարարում բյուրոյի ընդլայնված նիստը:

Փոքր դահլիճում ասեղ գցելու տեղ չկա: Հրավիրված են շրջկոմների բոլոր քարտուղարները, գործկոմների նախագահները, մարզային կազմակերպությունների բոլոր ղեկավարները, Միության ու հանրապետության Գերագույն խորհուրդների դեպուտատներ և պարզապես շարքային զրպարտիչներ:

Իսկ վերջում, որոշումն ընթերցելուց հետո, պարզ է դառնում կազմակերպիչների նպատակակետը՝ նամակները դատապարտվել են մարզի կուսակցական ակտիվի կողմից:

— Օրակարգում դրված է մի հարց՝ մարզի մի խումբ կոմունիստների՝ ԽՄԿԿ Կենտկոմին գրած երկու նամակների քննարկումը, — հայտարարում է Գ. Մելքումյանը:

Ես.

— Իսկ դուք լիազորվա՞ծ եք այդ նամակները քննարկելու:

Լռում է: Ես ոտքի եմ ելնում:

— Գրավոր կամ բանավոր ձեզ լիազորե՞լ են քննարկելու այն նամակները, որոնք ուղղված են կուսակցության Կենտկոմին և բովանդակում են խիստ քննադատություն հանրապետության և մարզի ղեկավարների հասցեներին:

— Այո, — առանց ինձ նայելու պատասխանում է Մելքումյանը և փորձում է զեկուցել:

— Առանց Կենտկոմի որևէ ներկայացուցչի՞:

— Այո՛:

— Ճիշտն ասած, մենք՝ տասներեքս, կարող էինք և չներկայանալ, որովհետև կուսակցական կարգապահության և առհասարակ ամենատարրական տրամաբանության կանոններով՝ դուք իրավունք չունեք քննության առնելու մեր նամակները:

— Ինչո՞ւ:

— Նախ, որովհետև դրանք ձեզ չեն ուղղված: Ապա՝ նրանք ձեզ են քննադատում: Դուք կարող եք և պետք է միայն պատասխան տաք: Եվ երրորդ, ձեր ձեռքի տակ չունեք քննության առարկան՝ մեր նամակները: Պա՞րզ է: Դե՛, իմացած եղեք, որ մենք կարող էինք չներկայանալ այս ապօրինի քննարկմանը: Բայց, այնուամենայնիվ, եկել ենք, որովհետև կոմունիստներ ենք և հավատում ենք մեր մարզկոմին: Առաջարկում եմ ամենայն մանրամասնությամբ արձանագրել՝ ինչ որ այստեղ ասվելու է:

Մելքումյանը վրդովմունքով լի հայացքը հառում է մարզկոմի հատուկ բաժնի պետ Քնարիկ Մուսայելյանին, որն ամբիոնի առաջ նստած է և ուսերն է թոթվում, իբր, ես մանրամասն արձանագրող չեմ:

Ես նստում եմ: Մելքումյանն սկսում է առաջին նամակի «վերլուծությունը»: Ես նորից եմ վեր կենում:

— Առաջարկում եմ նախ հրապարակել նամակը, որպեսզի մարդիկ իմանան, թե խոսքն ինչին է վերաբերում:

— Խոսքը քեզ կտամ, դու կհրապարակես, — շարունակում է «վերլուծությունը»:

Կանգ է առնում նամակի յուրաքանչյուր փաստի, կետի, նույնիսկ ենթակետի վրա, թվեր ու փաստեր է բերում իր հերթին, բայց այնպես, որ նստածներից ոչ ոք չի հասկանում, թե նամակում ինչն է ճիշտ, ինչը՝ սխալ:

Երբ հասնում է մարզի գյուղատնտեսության վիճակը ցույց տվող թվերին և աշխատում է նրանք էլ ներկայացնել որպես կեղծիք, ես չեմ համբերում.

— Այդ թվերը քաղված են այն փաստաթղթերից, որոնց տակ դուք եք ստորագրել:

Ասես ոչինչ չի լսել, համառությամբ շարունակում է:

— Մարզի թթենու այգիների ոչնչացումը համարում է ճիշտ, սակայն մեղադրում է միութենական ղեկավարությանը:

Լազր Գասպարյան.

— Ի՞նչ կապ ունի միութենական կառավարությունը, երբ հանրապետության Մինիստրների խորհրդի որոշմամբ է կատարվել ամեն ինչ:

Մելքումյան.

— Որ տեղեկություն չունեք, լավ է լռե՛ք:

Ես.

— Գուրգեն Ալավերդովիչ, երևում է դուք ինքներդ այնքան էլ տեղյակ չեք այդ հարցին: Կոսիգինի ստորագրությամբ թուղթ կա թթի օղին որպես ազգային խմիչք օգտագործելու մասին: Միության պետական պլանն է թույլ տվել: Եվ այդքանը բեկանվել է միայն հանրապետության Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ ոմն Օրուջովի կողմից: Ինչո՞ւ եք թյուրիմացության մեջ գցում լսողներին:

Շուռ է գալիս ուրիշ հարցի վրա:

— Մարզի բնակչությունն օրըստօրե պակասում է, — հայտարարում է և հետո էլ փորձում ապացուցել դրա օրինաչափ լինելը:

— Մարզային հիմնարկներում գործերը վարվում են ո՛չ հայերեն, — և փորձում է դրա մեջ ոչինչ վտանգավոր չտեսնել: — Ով ի՞նչ լեզվով ուզում է, թող խոսի:

— Բաբելոնյան խառնակությո՞ւն է մեզ մոտ, թե հայկական ինքնավար մարզի ազգային իրականություն:

Եվ այսպես առաջին նամակի ատամները մեկ առ մեկ հանելուց հետո հասնում է երկրորդին:

— Սա սկզբից մինչև վերջ զրպարտություն է հանրապետության ղեկավարության հասցեին (համեստաբար իր անունը չի տալիս): Առաջին նամակի քննությունից հետո, — շարունակում է Մելքումյանը, — երբ մենք զանգ էինք տվել մեր ղեկավարներին, որպեսզի իմանանք, թե ինչպես պիտի վարվել, ընկ. Եղիստրատովը պատասխանել է. «Կենտկոմի նախագահությունում խորհրդակցել ենք, գտել, որ իմ ու նրանց զրույցով պիտի բավարարվել

(ինչպիսի՜ ներողամտություն): Մենք իրար հասկացել ենք: Կարծում եմ՝ ընկերները գիտակցել են իրենց սխալը, կուղղեն: Նրանք մնում են մեր կոմունիստները, պիտի մեզ հետ աշխատեն (որքա՜ն մեծահոգի են)...»: Եվ այսքանից հետո գնում ենք Մոսկվա՝ Կենտկոմի պլենումին, ու մեզ են տալիս այդ երկրորդ նամակը. «Ծանոթացե՛ք»: Կարդում ենք ու մնում ապշած: Սա ի՞նչ կարգ է: Հանրապետության ղեկավարները եկել են մեր հոգսերին ծանոթացել, տեղում լուծել հարցերը...

Տեղից Գրիգոր Ստեփանյանը գոռում է.

— Իսկ ինչո՞ւ մինչև նամակը չէին գալիս:

Մելքումյանը համառորեն շարունակում է.

— Մինիստրների խորհրդի նախագահի կարգադրությամբ մեր մարզի տնտեսության բոլոր պահանջների բավարարման հարցն է դրվել...

— Իսկ այդ հարցերից քանի՞սն են լուծվել, — ես եմ:

— Չպիտի մոռանալ, որ դա ընդամենը կարգադրություն է, և ոչ թե որոշում:

— Իսկ ինչո՞ւ ոչ որոշում: Եվ ինչո՞ւ մինչև հիմա նրանց խոստացած որոշումը չկա:

Պատասխանն այնպես է խառնում, որ ես ինքս էլ բան չեմ հասկանում:

— Եվ վերջապես Կենտկոմի քարտուղար ընկ. Եղիստրատովն է գալիս, ութ ժամ նստում հետները, հանգիստ ու հանգամանալից զրուցում...

— Իրեն պահելով որպես մի աղա, որի բերանից թափվում են կեղտոտ բառեր, — տեղից նետում է Սերգեյ Շաքարյանը: — Այդ զրույցի ժամանակ նա քա՞նի անգամ վիրավորեց մեր ազգային արժանապատվությունը: Իսկ ձեզ համար՝ հհո՜...

— Դուք չեք կարողանում հասկանալ... Ռուս մարդ է, ռուսավարի անկեղծ խոսում էր մարդը...

— Կուսակցական տանը պիտի խոսել միայն մարդավարի: Հետո էլ, ինչո՞ւ եք վիրավորում ռուս ժողովրդին: Ռուսավարին հայհոյե՞լն է:

— Առհասարակ այս երկրորդ նամակի տոնն այնքան կոպիտ ու չգրգռող է, որ չի կարելի ընթերցել առանց զայրույթի: Երեք անգամ դիմել ենք Կենտկոմ (Ադրբեջանի՜, հասկանալի՜ է). «Ինչպե՞ս վարվել սրանց հետ»: «Ի՞նչ անենք» (լա՜վ նախաձեռնություն է): Կարո՞ղ եք ինքներդ քննարկել»: «Այո՜, — պատասխանել ենք, — կքննարկենք, ինչպես հարկն է»: Եվ նրանք վստահել են մեզ, մեր մարզի կուսակցական առողջ կազմակերպությանը: Պետք է շնորհակալ լինենք այս վստահության համար:

Մելքումյանից անմիջապես հետո ես եմ խոսում: Դարձյալ հայտարարում եմ, որ կարող էինք չներկայանալ «քննարկմանը», բայց եկել ենք: Վերստին պահանջում եմ մանրամասն արձանագրել ժողովը: Ապա ընթերցում եմ առաջին նամակը:

Դահլիճում ճանճ տզզա՝ կլսվի:

— Ընկերնե՜ր, սա է մեր առաջին նամակը, որի փաստերն ու մեկնաբանություններն իր զեկուցման մեջ այնպես մշուշոտեց ընկեր Մելքումյանը: Ով անկաշառ դատողություն ունի, է և խղճի դատի: Այստեղ հավաքված են մարդիկ, որոնք գիտեն մարզի վիճակը, ցավում են ու պատասխանատու են այդ վիճակի համար: Ի դեպ ասեմ, որ առաջին նամակի մասին Գուրգեն Ալավերդովիչն անգամ այլ կարծիքի չի եղել, ինչ այսօր: Ասում են՝ երկու ամիս առաջ, երբ ձեզ հավաքել է այս «քննարկումը» նախապատրաստելու համար, հայտարարել է, թե, իբր, ինքը նամակին ծանոթացել է միայն Մոսկվայում, օգոստոսին: Ես նամակը Կենտկոմ եմ հանձնել հունիսի վերջին: Հունիսի 2-ին եղել եմ Ստեփանակերտում, 4-ին պատճենը տվել եմ իրեն, ընթերցել է: Վկաներն այստեղ են: Եթե կարիք կա, կհաստատեն: Ընթերցել է, հավանություն տվել...»

— Իսկ դիտողությունն՞ե՞ր, — խեղդված հարցնում է կողքից:

— Սպասեք, ես ձեզ պես չեմ զեկուցելու: Հավանել է, ընկերներ, ժպտացել, թե՝ «սեղմ ես գրել, եթե նախօրոք իմաց տված լինեիր, ես ավելի թունդ փաստեր կտայի: Վերևի հետ մենք ենք շփվում ամեն օր... Նրանց վերաբերմունքը Ղարաբաղին, բավական էր: Բայց մի տեղ անճշտություն կա. Ղարմետաքսկոմբինատի համախառն արտադրանքի կրճատումը կատարվել է այն պատճառով, որ բնական մետաքսը փոխարինվել է արհեստականով: Իսկ արհեստականն մի քանի անգամ էժան է»: «Դա ես գիտեմ, — ասել եմ, — բայց առանձին արտադրություններ էլ կրճատվե՞լ են»: «Այո՛, կրճատվել են, հաստատել է ինքը և մեկ էլ հարցրել. — Եթե Ղարաբաղը միանա Հայաստանին, ի՞նչ պիտի լինի Ադրբեջանի մնացած հայության վիճակը: Գիտե՞ս, որ հենց միայն Բաքվում ավելի քան երկու հարյուր հազար հայ կա»: Ես ասել եմ. «Բաքվի հայն ինքն է իր հարցը լուծել: Փակել է մշակութային իր օջախները, դպրոցներն է փակել, չի խոսում հայերեն, հրաժարվել է ազգային իր հատկանիշներից ու արժանապատվությունից: Միայն մի ազգանվամբ կամ ազգանվան առաջին մասով ազգային պատկանելություն չի լինում: Այնպես որ, նորից եմ կրկնում, Բաքվի հայն իր հարցը հաջողությամբ լուծել է: Նա այլևս չի կարող մեզ համար ոչ ուղեցույց լինել, ոչ էլ բեռ: Մանավանդ որ մեր մարզի իրականությունը մինչև այսօր ո՛չ որևէ նշանակություն է ունեցել Բաքվի հայության ճակատագրի համար, ո՛չ էլ ունենալու է այսուհետև: Ինչ մնում է Ադրբեջանի մյուս շրջանների հայության հարցին, այստեղ էլ հանրապետության ղեկավարությունն է ո՛չ առանց հաջողության լուծում: Մի ժամանակ Շամքորն ու Դաշքեսանը եղել են գերազանցապես հայկական շրջաններ: Վերաբնակեցնելով, հարևաններին կցմցելով, կոլխոզներ խոշորացնելով ու ցրելով, հազար ու մի ստոր եղանակով հասցրել են նրան, որ այսօր հայությունն այդ շրջաններում կցորդ է: Այդ վիճակն է սպասվում նաև Խանլարում ու Շահումյանում: Խանլարում, իհարկե, ավելի շուտ, որովհետև խանլարցիները չեն դիմադրում: Իսկ Շահումյանը դեռևս դիմադրում է, համառում: Անցյալ տարի նույնիսկ հրաժարվեց մասնակցել միացված հարևանների հետ անցկացվելիք կուսակցական շրջանային կոնֆերանսին... Սակայն դու էլ գիտես, որ դանակից փախչող ոչխարի ապարդյուն ջանքն է: Շատ-շատ մի քանի րոպե էլ ուշանա վերջը... «Դա, չորտ պոբրալ», — արձագանքել է ընկ. Մելքումյանը և հառաչել:

Իսկ Մոսկվայում նամակի թողած տպավորության, նրա շուրջն ունեցած զրույցների ու եզրակացությունների մանրամասները լսելուց հետո ասել է. «Շատ լավ, պայմանավորվենք այսպես, եթե ԽՄԿԿ-ի հանձնաժողովը եկավ, ես ու մեր մյուս ընկերները կանենք մեզնից կախված ամեն ինչ՝ նամակը հաստատելու և հարցը լուծելու համար: Մի՛ կարծիր, թե մենք հայ չենք և չենք ուզում մեր ազգի բարօրությունը»:

Այսպես էլ բաժանվել ենք:

Իսկ Էլիստրատովի «քննության» ժամանակ ընկ. Մելքումյանն ու ընկ. Օհանջանյանը բռնել են այնպիսի դիրք, որը դավաճանական համարելու համար ես ոչ մի դժվարություն չեմ քաշում: Նրանք ոչ մի առիթ բաց չէին թողնում կեղծելու թվերը, ծուռ ու գլխիվայր ներկայացնելու փաստերը: Սա մեզ զայրացրել էր: «Քննության» ժամանակ մեզ հայտնի էր դարձել, որ նամակի առիթով Կենտկոմ է գնացել սուտ ու անամոթ մի պատասխան-հաշվետվություն, որի մեջ բոլոր ստերը թխվել են մեր ղեկավարների օգնությամբ:

Մեզ ի՞նչ էր մնում: Կամ լռել և Կենտկոմին թողնել այն համոզման, որ այս 13-ը բախտախնդիրներ են, սուտ-սուտ նամակ են գրել՝ իրենց ազգային հիվանդոտ զգացմանը հագուրդ տալու համար: Կամ էլ՝ նոր նամակով (քանի մենք հաղորդակցվելու ուրիշ ճանապարհ չունենք) Կենտկոմին բացատրել դրությունը, կեղծարարությունը և պահանջել արդար մոտեցում: Չէ՞ որ ծիծաղելի վիճակ էր ստեղծվել. նամակն ուղղված էր Ադրբեջանի ղեկավարության աղաղակող ու բացահայտ նացիոնալիզմի ու շովինիզմի դեմ, մինչդեռ նացիոնալիզմի մեջ մեղադրվում էին նամակի հեղինակները:

Անհրաժեշտ էր ջրի երես հանել ճշմարտությունը, մի բան, որ մենք անաչառ կատարել ենք մեր երկրորդ նամակում:

Եվ ընթերցում եմ երկրորդը:

— Ահա այն ամենը, որ կատարվել է 13-ի կողմից, ընկերնե՛ր: Հիմա դուք գիտեք իրողությունը, կարող եք դատել խղճի մտոք:

Մի քանի րոպե քար-լռություն է դահլիճում: Ոչ ոք չի ուզում խոսել: Շատերը նոր են հասկանում ճշմարտությունը: Նրանք, որ եկել են պատրաստի ելույթների պաշարով, երևի մի պահ ծանրութեթև են անում իրականության իսկական պատկերն ու իրենց պատրաստած ասելիքը և երկընտրանքի մեջ են՝ խոսե՞ն թե ոչ: Իսկ այսքանից հետո ինչպե՞ս կընդունեն իրենց:

Մարդիկ կարճացել են նստարանների վրա, խոնարհած գլուխներով կպել իրար, ստացվել է մռայլ մի զանգված:

Եվ հանկարծ այդ մեռելությունից վեր է ձգվում մեկի ձեռքը, ապա մինչև ձայն կտան, ամբիոնի մոտ է վազում պետական անվտանգության մարզային վարչության պետ Հայկ Մարկարովը:

— Վերջին տարում մենք վնասազերծել ենք (профилактировали) 20 մարդու, — հոխորտալով սկսում է, հետո էլ թռչկոտում մի հարցից մյուսը. — Մեր մարզի երիտասարդությունը ձեռքից գնում է: Ահա թե ինչը պիտի մեզ անհանգստացնի: Ինչո՞ւ մենք լռում ենք, երբ մեզ մոտ նացիոնալիստական թռուցիկներ են տարածում:

— Ո՞վ է տարածում, — բացականչում է Ռոգդան Զանյանը:

— Դեռևս չենք հայտնաբերել:

— Իսկ դուք ինչի՞ եք ծառայում, եթե այդ էլ չեք կարողանում հայտնաբերել:

Մեկը բոլորի համար լսելի ասում է. «Իրենք են տարածում, որպեսզի ասեն՝ Ղարաբաղում նացիոնալիստներ կան»:

Նախագահությունում անհանգստանում են: Մելքումյանը ծեծում է ջրամանի կողը:

— Ով չի կարող իրեն պահել, թող դուրս գա:

Մարկարովը շարունակում է կտցահարել հարցերը.

— Դաշնակների պարագլուխ Հարություն Թումյանը շրջել է Ղարաբաղի շրջանները և կոչ արել, որպեսզի ոտքի հանեն ժողովրդին:

Երևանից գրող անվան տակ ինչ-որ տականքներ են գալիս մեզ մոտ և ժողովրդին գրգռում եղբայրական ադրբեջանական ժողովրդի դեմ…

— Ո՞վ է այդ տականքը,— դարձյալ Բոդդանն է բացականչում, այս անգամ ոտքի ելած. — Սերո Խանզադյա՞նն է տականք, թե՞ Սիլվա Կապուտիկյանը: Դուք գիտե՞ք, թե ո՛ւմ եք զրպարտում, ընկեր Մարկարով:

Աղմկում են դահլիճում: Նախագահությունում իրարով են անցնում:

— Ես ուրիշների նկատի ունեմ, — լեզուն ծամծմում է Մարկարովը: — Ընկեր Մելքումյանը լավ գիտե, թե խոսքն ում է վերաբերում:

Ես չեմ դիմանում.

— Ձի՞ լինի անունը տաք, ջուր ծեծելու փոխարեն:

Եվ նա «ջուր ծեծելու փոխարեն» անցնում է Բ. Ուլուբաբյանի «մերկացմանը»:

— Ուլուբաբյանն իմ բարևը չի առնում: Երեք անգամ երես առ երես ենք եղել, ես բարևել եմ, ինքն անցել է արհամարհանքով:

— Իսկ դուք փողոցով քայլելիս ձեր ոտքերի թաթերից բացի ուրիշ բա՞ն եք տեսնում, որ մարդկանց նկատեք կամ բարևեք, — դժգոհում են դահլիճից:

Բայց նա իրենն է պնդում:

— Նույնիսկ Երևանից եկած ուսանող նացիոնալիստներին իր կաբինետից քշելուց հետո էլ մեզ չի հայտնել այդ նացիոնալիստների մասին:

— Դուք շա՞տ չեք ուռճրած պատկերացնում ձեր դերը, — արհամարհանքով խոսում եմ ես: Իսկ ինքը շարունակում է.

— Իհարկե, ի պատիվ իրեն պիտի ասել, որ նրանց շառլատաններ է անվանել ու վռնդել իր կաբինետից: Բայց ինչո՞ւ մեզ չի հայտնել այդ մասին: Ինչո՞ւ նույնիսկ այն ժամանակ, երբ ես նրան կանչել եմ վարչություն՝ այդ նացիոնալիստների մասին ցուցմունքներ վերցնելու, չի եկել: Թողել, գնացել է Երևան, և ես ստիպված եմ եղել հայտնել Երևանի մեր կոլեգաներին, որպեսզի նրանք հարցաքննեն… Ինչ վերաբերում է նամակներին, ապա դրանք ես դատապարտում եմ: Ինչո՞ւ են 1965 թ. ազգային հարց բարձրացրել…

Մաքսիմ Հովհաննիսյանը տեղից գոռում է.

— Դու ի՞նչ իրավունք ունես մեր ազգային հարցի մասին դատողություններ անելու, երբ ինքդ հայերեն չես խոսում և ոչ մի կապ չունես հայ ժողովրդի հետ:

Դահլիճի խորքից մեկը նկատողություն է անում.

— Նամակը թողած՝ ԿԳԲ-ի գործունեությունն է զեկուցում:

— Հայ ականավոր գրողներին անվանում է տականք:

Մարկարովը մեկ էլ դատապարտում է նամակի հեղինակներին՝ կոլեկտիվ նամակ գրելու համար («ԽՄԿԿ կանոնադրությամբ դատապարտվում է կոլեկտիվ դիմումը») և հաղթականորեն նստում:

Մենք նախապես պայմանավորվել էինք սկզբից ելույթ չունենալ, թույլ տալ, որ իրենք խոսեն, բացվեն, որպեսզի հետո միայն վեր կենանք ու պատասխանենք: Մաքսիմ Հովհաննիսյանը մոռացե՞լ էր այս պայմանը, թե՞ սրտի սանձը չէր կարողանում պահել, Մարկարովից հետո վեր կացավ ու նրա հիմարությունները, ժողովրդին գրգռող, հավասարակշռությունից հանող արարքները մերկացրեց, ջրի երես հանեց արդարությունը: Բայց ի՞նչ պիտի անի մերկ ու անպաշտպան արդարությունը՝ իր դեմ ուղղված կեղծիքի ու դավաճանության սրերի դեմ:

Ելույթի համար խոսք է խնդրում Մարտակերտի շրջգործկոմի նախագահ Դարուեիշ Պողոսյանը: Ես միշտ էլ սրա մասին հարգալից վերաբերմունք եմ ունեցել: Մարզային ժողովներում խոսելիս ցավով վեր էր հանում մեր մեծ ու փոքր հոգսերը, դժգոհ էր մարդի վիճակից և հաճախ ցավի ակունքն էր ցույց տալիս համարձակ:

Քանի՜-քանի անգամ քննադատել է հանրապետական կազմակերպություններին, շեշտելով, որ նրանք նույն աչքով չեն նայում մեզ ու հարևաններին: Մի խոսքով՝ իր կարծիքն ու ճշմարտությունն ունեցող մարդ է և սազում էլ է, որ նրա ճերմակ քաշը, հարթ ու շիտակ բոյ-բուսաթն ունեցող մարդը լինի այդպիսին: Սակայն բերանը բացում է ու՝ ոնց որ կացնով զարկեն գլխիս.

— Նամակում նշված շատ փաստեր համապատասխանում են իրականությանը: Բայց հանրապետության ո՞ր շրջանում չկան համանման կամ դրանցից էլ մեծ թերություններ...

Հետո նա խոսում է իրենց շրջանի ցավերի մասին: Մեղադրում է մարզային կազմակերպություններին, որոնք բավականաչափ սկզբունքայնություն չեն ցուցաբերում, որպեսզի վերևներում պահանջները բավարարվեն: Մեզ է մեղադրում, որ հարցերը նախ տեղում լուծելու փորձ չենք արել կամ վերև չենք դիմել՝ մարզկոմի միջոցով:

— Ես գյուղատնտեսության բնագավառի աշխատող եմ, — կրակոտ ու կոնկրետ սկսում է կուսակցության մարզկոմի գյուղատնտեսական բաժնի վարիչ, գյուղատնտեսական գիտությունների թեկնածու Սերգեյ Ասլանյանը, — և պետք է ասեմ, որ նամակում մարզի գյուղատնտեսությանը վերաբերող բոլոր փաստերն ու թվերը ճիշտ են, համապատասխանում են իրականությանը: Դեռ ավելին կասեմ, նամակում շատ մեղմ է նկարագրվում Լեռնային Ղարաբաղի գյուղատնտեսության անհանդուրժելի վիճակը, որի համար առաջին հերթին պատասխանատու են հանրապետության, ապա մարզի ղեկավարները:

Չնախատեսված այս խոսքերից խիստ զայրացավ Մելքումյանը: Ուշքի գալով, աչքերը տրորեց, ապա փորձեց լռեցնել:

— Բավական է անպատասխանատու հայտարարություններ անես: Դրա համար փաստեր են պետք...

Ասլանյանը ձեռքի շարժումով լռեցրեց նրան:

— Փաստեր էլ կբերենք, — խոստացավ ու շարունակեց. — վերջերս մարզկոմում, քարտուղարների ներկայությամբ, մի հետաքրքիր զրույց տեղի ունեցավ: Մոսկվայից՝ Կենտկոմից եկած ընկեր Կուզնեցովը հարց էր տվել. «Մի տարվա ընթացքում մարզի կոլխոզները քանի՞ ավտոմեքենա են ստացել»: Նայեցինք թղթերը և ասացինք՝ «Հինգ»: Իսկ Ադր. ԿԿ Կենտկոմի պատասխանատու աշխատակից ընկ. Շմավոն Պետրոսյանը, որ ներկա էր, միջամտեց զրույցին, թե՝ «Միայն Ժդանովի շրջանն այս տարի ստացել է 14 ավտոմեքենա»: «Անարդարությո՞ւն է՝ ինչ փաստ եք ուզում», — դառը ժպտալով՝ մերոնց դիմեց ընկ. Կուզնեցովը: Այս մեկ փաստ, ընկ. Մելքումյան, եթե ձեզ միայն փաստերն են հետաքրքրում:

— Հետո շատերը ջանում են ամեն կերպ ստեղծել այն տպավորությունը, թե նամակը ոչ մի դրական դեր չի խաղացել մարզի համար, ընդհակառակը, վնաս է հասցրել: Փորձեք բաց աչքերով նայել և կտեսնեք, թե ինչ հարցեր են լուծվել այդ նամակի շնորհիվ: Ինչո՞ւ ընկ. Ալիխանովի 42 կետից բաղկացած իր կարգադրությունը չէր գրում նամակից առաջ: Եթե Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ ընկ. Օրուջևը գրչի մի հարվածով կարող է դրական լուծում տալ Ղարաբաղի խաղողագործության ու թթաբուծության հիմնահարցին, ինչո՞ւ նամակից առաջ գրչի այդ փրկարար հարվածը չէր հասցնում, այլ պարբերաբար հղած իր կարգադրություններով կասեցնում էր մարզի խաղողագործության զարգացումը և ոչնչացնել էր տալիս թթենու ավանդական այգիները...

Դահլիճը, շունչը պահած կլանում է Ասլանյանի խոսքը, իսկ Մելքումյանն ու Օհանջանյանը զայրույթից տեղները հանգիստ նստել չեն կարողանում:

— Լսի՛ր, — տեղից վեր է կենում Մելքումյանը, — դու խոսում ես որպես մարզկոմի բաժնի վարի՞չ, թե՞ շարքային խառնակիչ:

— Խոսում եմ, նախ և առաջ, որպես մարդ ու կոմունիստ, ապա՝ որպես մարզկոմի բաժնի վարիչ: Իսկ եթե ձեզ դուր չի գալիս այս ճշմարտությունը, կարող եմ չշարունակել:

Դահլիճի այս ու այն կողմերից պահանջում են շարունակել, նա ամբիոնից հեռանում է:

— Ես իմն ասացի, այսքանն էլ բավական է:

Իսկապես, բավական է, կեցցե՛ն, ասլան-Սերգեյ:

Ռուբեն Շահրամանյանից ես լավ բան չեմ սպասում: Ասում են՝ նախապատրաստական ժողովում առաջարկել է նամակների հեղինակներին վտարել կուսակցությունից, որպեսզի ուրիշները դաս առնեն: Նկատի առնենք, որ այդ օրերին Մոսկվայում Գերագույն խորհրդի հերթական նստաշրջանն էր, և Շահրամանյանն ու Ծատուրի կոլխոզի նախագահ Սուրեն Ադամյանն այնտեղ պիտի գտնվեին իբրև մարզից պատգամավորներ: Սակայն չէին գնացել, մնացել էին, որպեսզի մասնակցեն մեր նամակների քննարկմանը:

Հիմա Շահրամանյանը «քննարկում է»:

— Նամակում նշված շատ փաստեր ճիշտ են: Բայց դրա համար ինչո՞ւ միայն մեղադրել հանրապետության ղեկավարներին: Քառասունհինգ տարի շարունակ մենք ձեռք-ձեռքի տված ապրել ենք հարազատ ադրբեջանական ժողովրդի հետ եղբայրական մի ընտանիքում: Որ բաժանվենք ու միանանք Հայաստանին, ի՞նչ կասեն մեր մասին: Եվ դրանից բացի, ինչո՞ւ ընկերները կարծում են, թե Հայաստանը դրախտ է Ադրբեջանը՝ դժոխք: Ես շատ լավ գիտեմ, որ Հայաստանը հնարավորություն չունի իր սեփական տնտեսությունը զարգացնելու: Ո՞ւր մնաց, թե Ղարաբաղը զարգացնի:

Ժողովրդական կրթության մարզբաժնի վարիչ Հակոբ Օհանջանյանն ամբիոնում հայտնվում է իբրև մարզի գաղափարական ծանր հրետանին: Իսկ այս թեթևամիտ ծանր հրետանին սկզբից ևեթ ռմբակոծում է յուրայինների դիրքերը: Մարքսիզմի դասականներից մեջբերումներ է կատարում ազգի, նրա ինքնորոշման ու ինքնավարության մասին, կուսակցության ծրագրից է պարբերություններ կարդում, որոնք խոսում են իրենց դեմ: Իսկ երբ դահլիճի աղմուկը լռեցնել տալու նպատակով, վիզը դեպի նախագահություն երկարած, երդվում է, թե.

— Ես խոսում եմ սոցիալիզմի դիրքերից, մարքսիզմ-լենինիզմի դիրքերից, ինտերնացիոնալիզմի դիրքերից...

Բ. Զանյանը դիպուկ հարվածում է.

— Ո՛չ, դու խոսում ես միայն պադլիզիզմի դիրքերից:

Ծիծաղն ու հռհռոցը, հեգնական բացականչությունն ու ծափահարությունը բռնում են դահլիճը: Նախագահության կեսը ոտքի է կանգնում շփոթած: Յուրայինները ևս կլանչներ են արձակում այս ու այն անկյուններից:

— Այդ Զանյանին վռնդել դահլիճից, — գոռում է Աշոտ Բախշյանը՝ Ստեփանակերտի շրջգործկոմի նախագահը, որին Զանյանը մի ամիս առաջ թերթում խայթել էր որպես բյուրոկրատի: Սա հարմար տեղ է գտել վրեժ հանելու:

— Լա՛վ գործ են բռնել և դեռ էստեղ էլ իրենց պահել չգիտեն, — արձագանքում է հին բոլշևիկ Եղիշե Համբարձումյանը:

Կրքերը հանգստանում են, և Օհանջանյանը հասնում է իր «զեկուցման» հիմնական մասին՝ Բ. Ուլուբաբյանին ջախջախելու առաջադրանքը: «Ապացուցում է», որ Ուլուբաբյանը Ղարաբաղում կուռտ է դարձել ("а он ведь всего-навсего писатель"): Որ նա պաշտոնում թե անպաշտոն՝ սրան-նրան պաշտոններ է տալիս կամ պաշտոնազրկում: Մերոնցից մեկը ծաղրում է.

— Զգո՛ւյշ խոսիր, հիմա քեզ էլ կպաշտոնազրկի:

Հավասարակշռությունից դուրս է գալիս ու հիստերիկ ծկլթում.

— Я не боюсь, не боюсь, не боюсь, — և ամեն «не боюсь»-ի հետ մի քայլ ետ է գնում:

«Խոսքն» ավարտում է նրանով, որ, իբր, Ուլուբաբյանն անվանարկել ու զրպարտել է մարզի ու հանրապետական կուսակցական ղեկավարներին: Նրանց քաշելով նաև իր գրական գործերի մեջ, որոնք պասկվիլներ են կուսակցական-խորհրդային ղեկավարության դեմ:

Օհանջանյանը հականե-հանվանե չի ասում, թե ո՛ւմ է զրպարտել ու խայտառակել: Նրա փոխարեն այդ անում է կուսակցական բարձրագույն դպրոցը նոր ավարտած ու դեռ պաշտոն չստացած Սոկրատ Իսրայելյանը: Եվ պարզվում է, որ Բ. Ուլուբաբյանի կողմից զրպարտվածն ու խայտառակվածը մարզկոմի նախկին անփոփոխ քարտուղար Նիկ. Շահնազարովն է:

— Ա՛յ, լսի՛ր,— գոռում է մեկը դահլիճից. — Շահնազարովն ինքն է իրեն խայտառակել... Սա էլ մա՞րդ է ճարել ռեաբիլիտացիայի ենթարկվելու:

— Ո՞վ չգիտե, որ Ուլուբաբյանն է մարզում պաշտոններ տվողն ու պաշտոնանկ անողը:

— Դիմում գրիր, մի պաշտոն էլ քեզ տամ, խե՛ղճ մարդ, — ծիծաղելով ասում եմ ես:

— Չեմ ուզում, — դեղնած ու փրփրած հրաժարվում է:

— Բայց Մելքումյանը նկատի կունենա, շարունակի՛ր այդ ոճով:

Մելքումյանը երևի գլխի էր ընկել, որ դժգույն ելույթն իրենց չի զարդարում, վրա պրծավ.

— Ընկե՛ր Իսրայելյան, ի՞նչ է, այստեղ մարզկոմ-մարզգործկոմ չկա, ինչպե՞ս թե պաշտոններ է տալիս ու պաշտոնազրկում...

Իսրայելյանն էլ «կողմնորոշվում է» անմիջապես և խոսքն ավարտում մի այլ հիմարությամբ.

— Եվ, վերջապես, ընկերներ, մի՞թե Ուլուբաբյանին քիչ է բնութագրում այն հանգամանքը, որ նա ձեռնառելով մեր սիրելի ընկեր Գուրգեն Ալահվերդովիչի մտերիմ ընկերը, հուդայաբար դավաճանել է նրան և Կենտկոմին գրած նամակում զրպարտել:

Այստեղ էլ սխալվեց Ս. Իսրայելյանը՝ դավաճանության հասցեն շփոթելով: Դահլիճն իրարով անցավ, ստիպեց լռեցնել նրան... Եվ նա կափկափելով հեռացավ ամբիոնից ու լքեց դահլիճից:

Կարծես միևնույն հանձնարարականով էին խոսում Մարդակերտի շրջկոմի քարտուղար Սեդրակ Նանագյուլյանը, Հադրութի շրջկոմի առաջին քարտուղար Հայկ Սարգսյանը և Շուշվա շրջկոմի քարտուղար ինչ-որ Մուսայելյան: Նույն թեզերով. սո՛ւտ է նամակը, ժողովուրդների խորհրդային բարեկամության վրա նետած ռո՛ւմբ: Հեղինակներն ի՞նչ իրավունք ունեն մեր անունից գրելու, թե ուզում ենք միանալ Հայաստանին, նրանց պետք է չարաչար պատժել: Երանգավորումներն էին տարբեր.

ա) Հայկ Սարգսյանը լուտանք էր թափում նամակն ստորագրած Գուրգեն Գաբրիելյանի վրա, որը, ինչպես հետո իմացա, երկու շաբաթ առաջ մարզկոմի պլենումում նրան տեղին ու խիստ քննադատել է:

Ուրեմն, մի նամակ, որի տակ Գ. Գաբրիելյանի ստորագրությունը կա, սկզբից մինչև վերջ խոցելի է, վնասակար ու հակակոմունիստական:

բ) Նանագյուլյանը կուրծք ծեծելով պատմեց, որ նամակի հեղինակներն իրեն ևս առաջարկել են ստորագրել: Սակայն ինքը, ինտերնացիոնալիստ ու բարձր-գաղափարական մի մարդ, հրաժարվել է ու ասել. «Դա սխալ ու վտանգավոր քայլ է, խորհուրդ եմ տալիս դուք էլ հրաժարվեք»: Իսկ ճշմարտությունն այն է, որ Վադուհասից մինչև Մարտակերտ, մի ամբողջ օր, Նանագյուլյանն ինձ ու Ջանյանին զզվեցրել էր իր իսկապես նացիոնալիստական բամբասանքով, իսկ նամակը չստորագրելով հանդերձ՝ խոստացել էր ավելի խիստ գրել անձամբ, քանի որ ինքն, իբր, մարզկոմին ստորագրություն է տվել՝ չմասնակցելու ոչ մի խմբավորման կամ հակախոսական նամակի:

գ) Մուսայելյանը խոեց բեկվանների սեղանապետույն տիպական բառապաշարով և այնպիսի նողկալի երկերեսանիությամբ, որ զզվեցրեց շրջահայաց լսողներին: Իսկ երբ սրան հուշում էր առաջին քարտուղար Աղաջիշևը (որին ելույթի խոսք չտվին՝ հասկանալի նկատառումով, ինչքան էլ սա ցատկոտում ու ճայթրատում էր տեղից), Հադրութի շրջկոմի երկրորդ քարտուղար Հենրիկ Հովհաննիսյանը դահլիճից գոռաց. «Վերջապես լռեցրե՛ք այդ զազրախոսին, թե՞ ոչ»: Ընդմիջմանը Աղաջիշևը բռնվեց Հովհաննիսյանի հետ, և բանը պիտի հասներ ձեռնամարտի, եթե զգուշավորները վրա չհասնեին ու նրանց չքաշեին տարբեր անկյուններ:

«Քննարկման» ամենահետաքրքիր կտորներից մեկն էր մարզի պլանային հանձնաժողովի նախագահ Գրիգոր Մարտիրոսովի ելույթը: Ո՞վ-ո՛վ, սա չպիտի մեր դեմ խոսեր: Ամենից շատ սա՛ գիտեր մարզի նկատմամբ գործադրվող ճնշումը, մեր ազգային իրավունքների ոտնահարումները և ամենից շատ ինքն էր այդ մասին խոսում մարզգործկոմի շենքի միջանցքներում, քաղաքի փողոցներում, նույնիսկ այդ օրվա քննարկման ընդմիջումներին:

Դրանից առաջ ամեն անգամվա պես պայծառ ելույթ էր ունեցել Սերգեյ Շաքարյանը: Ստեփանակերտին ու մարզի շինարարությանը, արդյունաբերությանն ու մշակույթին վերաբերող նոր փաստերով մի անգամ ևս ապացուցել էր, որ նամակներն սկզբից մինչև վերջ ճշմարտություն են, և հանրապետության ղեկավարությունն իր հայասպան քաղաքականությունն է շարունակում նույնիսկ այսքան աղմուկից հետո:

Վեր կացավ Գրիգոր Մարտիրոսովը և սկսեց.

— Գուրգեն Ալահվերդիևիչ, այս Շաքարյանը Երևանի ռադիոյով արտասահմանյան հայության համար ելույթ ունենալով փառաբանել է մեր քաղաքն ու շինարարությունը: Հետո այդպիսի նամակ է ստորագրել ու հիմա էլ պաշտպանում է: Մենք ո՞ր Շաքարյանին հավատանք:

Ես հարց տվի.

— Եվ դա էլ քեզ զարմացնո՞ւմ է, ա՛յ Մարտիրոսով:

Ձևացրեց, թե չի լսել: Միսպետ Պողոսյանը գլխով ինձ ցույց տվեց ու թե.

— Բա՞ն էր հարցնում ընկեր Ուլուբաբյանը:

— Ես ապացուցում եմ, որ Նամակի փաստերը չեն համապատասխանում իրականությանը:

— Իսկ որտեղի՞ց են պեղվել այդ փաստերը: Չէ՞ որ դու ինքդ ես տվել,— հայտարարեցի ինքս:

Մեջլումյանը կանգնեց:

— Вот оно что!

Բյուրոյի անդամները երեսները շրջեցին: Դահլիճում հռհռացին այդ անօրինակ անհեթեթության վրա:

— Բոլոր փաստերն ի՛նքն է տրամադրել, իսկ հիմա կուրծք ծեծելով ձեզ ձայնակցում է: Ահա ձեր զինվո՞րը, — չեմ հիշում՝ ով էր մեզնից, շպրտեց դեպի նախագահությունը: Եվ Մարտիրոսուն այլևս չշարունակեց իր «ապացուցելը»:

Այսքանից հետո էր, որ Ղարմետաքսկոմբինատի կուսկազմակերպության քարտուղար, բակոմի բյուրոյի անդամ և Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի անդամ Գրետա Սահակյանը վեր կացավ և, ինչպես նրանից առաջ էլ Մարդակերտի շրջկոմի առաջին քարտուղար Արամ Գրիգորյանն էր հայտարարել, ասաց.

— Նախորդ անգամ նամակները մեզ աղավաղված են ներկայացրել: Այդ պատճառով էլ մենք հեղինակների հասցեին արտահայտվել ենք խիստ ու անհիրավացի: Հիմա տեսանք, թե ինչպես մի խումբ կոմունիստներ ազնվորեն նկարագրել են մեր մարզի անհանդուրժելի վիճակը, նրա վրա հրավիրել վերադաս կազմակերպությունների ուշադրությունը: Ես չեմ հասկանում, թե ինչո՞ւ այդ նամակները մենք ենք քննարկում, երբ նրանք ուղղված են ԽՄԿԿ Կենտկոմին: Եվ եթե այդպիսի անարդարություն է կատարվում է, ապա ինչո՞ւ այստեղ ներկա չէ ԽՄԿԿ Կենտկոմի կամ գոնե Ադրբեջանի Կենտկոմի ներկայացուցիչը:

— Ես գտնում եմ, որ նամակների հեղինակների դեղատոմսը, թե Ղարաբաղը փրկելու միակ ելքը Հայաստանին վերամիավորելն է, միակ ելքը չէ, — վերջում հայտարարեց Սահակյանը և նստեց:

Նրանից առաջ նույնն էր ասել նաև Սարգիս Աբրահամյանը՝ միաժամանակ հակահարված տալով Հակոբ Օհանջանյանին, որն ամեն կերպ ջանում էր ապացուցել, թե նամակն սկզբից մինչև վերջ նացիոնալիստական է և որպես այդպիսին՝ նրա կազմակերպիչ Բ. Ուլուբաբյանի համար ոչ պատահական մի երևույթ:

Հեղինակներից խոսեցին նաև շինվարչության պետ Արկադի Մանուչարովը և Հասանաբադի այգեգործական սովխոզի դիրեկտոր Արամ Բաբայանը:

Մանուչարովը հարստացրեց նամակում շինվարչությանը վերաբերող մասը:

Իսկ Բաբայանը դահլիճին հիացրեց իր գեղջկական պարզամիտ արդարությամբ ու հումորով:

— Ես նամակի տակ ստորագրելիս այդ վերջի մասին շատ եմ մտածել:

Մեր հակառակորդներն աշխուժանում են: Երևի մտածում են, որ ահա՝ մեկը նահանջում է, և դա մեծ հաղթանակ է իրենց համար: Սակայն Բաբայանը սառը ջուր է մաղում գլխներին:

— Ասել եմ՝ ահա գրել-ուղարկում ենք այսքան արդար ճշմարտությունները: Գալու են ամեն ինչ մի կողմ թողնեն ու կպչեն այս վերջից: 'Դե՛, գիտեք, էլի՛, թե մինչև հիմա քանիսի գլուխն է ջարդվել այս հարցի վրա: Ասել եմ՝ մարդիկ են լինելու, որ պաշտոնազրկվելու են այս վերջի համար, լինելու են և շա՛տ են լինելու, որ առաջ են քաշվելու, նոր պաշտոններ են ստանալու. դե՛, չէ՞ որ պայքարել են, իրենց ինտերնացիոնալիստ են ցույց տվել: Նրանց համար՝ թքա՛ծ, որ Ղարաբաղի ժողովուրդը քառասունհինգ տարի տեսնում է այս երկրում ստեղծված տնտեսական ու հոգևոր զարգացման անսահման հնարավորությունները, տեսնում է, բայց չի կարողանում նրանից օգտվել: Մարդակերտի բամբակագործները դեռ թավշյա աղյալների ու Ղարաբաղի մելիքների քաշած արիխներով են իրենց հողերը ջրում, երբ որ մի քանի կիլոմետրի վրա մեր հարևանները Վերին Ղարաբաղյան, Շիրվանի և, ի՞նչ իմանամ՝ Էլ ինչպիսի ջրամբարներ ու արհեստական ծովեր են օգտագործում: Խիղճ պետք է ունենալ, ընկերներ: Ես մեր ղեկավարների՛ն եմ ասում, մտածեցե՛ք ժողովրդի մասին: Չէ՞ որ մտածում: Դուք ո՞նց եք բաց ճակատով մարդկանց առաջ դուրս գալիս...

Ապա խոսում է մարդու հատ ու կենտ շինարարական հրապարակներում պարապ մնացած մարդկանց, Ղարգիտնտեսին հասցվող անիմաստ պլանների ու կամայականությունների մասին:

Ես էլ եմ խոսում: Խոսքս սկսում եմ մեր ընդդիմախոսների երկերեսանիությունից:

— Զրույցների ժամանակ յուրաքանչյուրը հազար փաստ ունի՝ մեր նամակները հաստատող: Նույնիսկ այստեղ միջանցքներում խոսելիս, դահլիճում նստած՝ մի բան են խոսում, ամբիոն բարձրանալուց կարծես մարդուն փոխ են գցել, տեղը դրել իր հակառակորդին:

Ես այդպիսի մի քանիսին եմ հիշում, ցույց եմ տալիս ասածների կեղծիքներն ու անտրամաբանական էությունը, ապա շարունակում.

— Սրա՞նք են մեր ընդդիմախոսները: Եվ ինչե՞ր են ասում սրանք՝ կուրացած իրենց նեղ շահերից, անձնական վիրավորանքներից ու հակակրանքներից:

Վեր կացողը խոսում է Նամակի վերջի մասին. ուզում են Ղարաբաղը միացնել Հայաստանին, մեր ժողովուրդներին թշնամացնել:

Առաջինը՝ մենք Նամակն այդտեղից չենք սկսել: Նախ վեր ենք լուծել մեր մարզի վիճակը, ապացուցել, որ քառասունհինգ տարի շարունակ այս հանրապետության ղեկավարները մեր մարզին վերաբերվել են չարամտությամբ: Խափանել են նրա տնտեսական ու մշակութային առաջընթացի բոլոր հնարավորությունները: Քանի՞ անգամ փոխվել է ղեկավարությունը, իսկ վերաբերմունքը նույնն է մնացել: Պա՞րզ չէ, որ այդքանից հետո մնում է միայն մի ելք. Ղարաբաղը տալ օրինական տիրոջը՝ Հայաստանին, հայ ժողովրդի այս փոքր հատվածը

միացնել մեծին ու ամբողջին, որ ինքն էլ խորհրդային սոցիալիստական հանրապետություն է:

Այս առաջի՞ն:

Երկրորդ. մեր ընդդիմախոսներն ասում են՝ Ղարաբաղը միացնել Հայաստանին՝ նշանակում է ղարաբաղցիներին թշնամացնել ադրբեջանցիների հետ: Միացնել չէ, այլ վերամիացնե՛լ: Հետո էլ, ինչո՞ւ պիտի թշնամանան: Մի՞թե զանգեզուրցին կամ ղափանցին, լեհինականցին կամ շամշադինցին ադրբեջանցիների թշնամիներն են, քանի որ միացած են Հայաստանին:

Մարդիկ ինչո՞ւ մի րոպե չեն մտածում, որ հետո խոսեն:

Մենք ադրբեջանական ժողովրդի հետ ոչ մի հաշիվ չունենք, թշնամանք՝ հատկապես:

Եթե բարեկամության մասին եք ուզում իմանալ, հայտարարություններն անիմաստ են: Հակոբ Օհանջանյանն ինձ նացիոնալիստ է համարում և ադրբեջանական ժողովրդի թշնամի: Ես այդ ժողովրդի գրականության լավագույն շատ նմուշներ թարգմանել, տվել եմ ընթերցողին, բանաստեղծություններ ու ակնարկներ եմ գրել հայի ու ադրբեջանցու բարեկամության մասին, իսկ ինքը՝ իրեն մարքսիստ-ինտերնացիոնալիստ հորջորջող Հ. Օհանջանյանն այս ամառ ասում էր. «Վիրահատության պիտի գնամ, բայց վախենում եմ Բաքվից: Կսպանեն ինձ ու կթողնեն: Ադրբեջանցիները թունավոր նացիոնալիստներ են, — ասում էր, — ծծկեր երեխայից սկսած մինչև առաջին ղեկավարը»: Սա «մարքսիստ-ինտերնացիոնալիստ» Օհանջանյանի անկեղծ խոսքն է:

— Սո՛ւտ է, տեսե՛ք՝ հիմա էլ ինչպե՞ս է ինձ զրպարտում, — լսվեց դիմացի շարքում, տեղից:

— Ասել է, Սեդրակ Քոչարյանի առանձնասենյակում: Աննա՛ Քոչարյան, հարցրե՛ք:

Մարզգործկոմի նախագահի տեղակալ Սեյդալիևն Օհանջանյանի կողքին էր, վեր կացավ, մի աթոռ հեռու նստեց:

— Այստեղ Եղիշե Համբարձումյանը Շաքարյանին ասաց. «Չի էլ ամաչում, այսքանից հետո երես ունի խոսելու»: Այս դիտողությունը բոլոր տասներեքիս է վերաբերում, առաջին հերթին՝ ինձ: Այստեղ պարտքս եմ համարում հայտարարել, որ մենք կատարել ենք մեր մարդկային, ազգային, կուսակցական սովորական պարտքը և դրա համար պատրաստ ենք ամեն զրկանքի ու քննության ենթարկվելու: Նման քայլի գնացողները վարձատրության ակնկալություն չեն ունենում:

— Բայց մենք իրապես ամաչում էլ ենք: Այս մեկը չեմ կարող չխոստովանել: — Համբարձումյանի նիհար երեսին ինքնագոհ ժպիտ է ծաղկում. «Հը՛, Է՛դ ասա, Է՛»: — Ճիշտը որ խոսեմ, շատ ենք ամաչում, ես՝ առանձնապես: Մենք ձե՛զ համար ենք ամաչում, ձեր արածի՛, ձեր վարքի՛: Որ աշխարհում ձեզ պես հայ մարդիկ կան և այն էլ Ղարաբաղում: Ղարաբաղո՛ւմ, որի պատմությունն ազգային ինքնագիտակցության, արժանապատվության և հերոսական պաշտպանության շողշողուն օրինակներ է տվել... Դուք ի՞նչ պիտի պատասխանեք, երբ գալու լինի երազելի ժամանակը, և ամեն մարդ դառնա պատասխան տվող, ինչպես ահեղ դատաստանի օրը...

Ասում են՝ պատերազմի ժամանակ պատահում է, որ մարտի ավարտից հետո, — երբ կողմերը, ամեն ինչ ավարտված համարելով, գնացել են հանգստի, — թաքստոցից դուրս է գալիս մի հացկատակ և վախից իր շուրջը բուռը կտրելով՝ ավտոմատի կրակահերթ է տալիս արդեն դատարկ խրամատների վրա...

Ճիշտ այդպիսի տպավորություն թողեց ռադիոյի մարզային հաղորդումների գլխավոր խմբագիր Զավեն Դավթյանը: Նրան կատաղեցրել էր Բ. Ուլուբաբյանի ելույթը (ինչպես ինքը խոստովանեց իր խոսքի սկզբում): Երևի կարծել էր՝ նամակի հեղինակները դահլիճից պիտի հեռանան ջարդված ու կիսակենդան, մինչդեռ վերջին հարվածը նրանցն էր դարձյալ և, ինչպես ինքն էր հասկացել՝ վճռական հարվածը: Որոշել էր խորտակիչ հակահարված տալ:

Սա բոլորովին անզոր էր թաքցնել իր ատելությունը Բ. Ուլուբաբյանի նկատմամբ, ատելություն, որ ողորմելիի հոգում մեծացել էր, ուռճացել ու վերածվել հայատյացության:

— Ի՞նչ Հայաստան: Ով որ Հայաստան է ուզում, ճանապարհը բա՛ց է, թո՛ղ գնա՛: Իսկ մենք կապ չունենք Հայաստանի հետ և չենք ունենալու: Եթե երբևէ, Ղարաբաղը կապ է ունեցել Հայաստանի հետ, ապա եղել է նրա տիրապետության տակ, որպես նրա գաղութ:

Այդպես էլ ասաց, և ես ցավի կամ վիրավորանքի ոչ մի արտահայտություն չտեսա մեր հակառակորդների դեմքերին: Սա արդեն ահավոր էր ու դիվային:

Թերևս կարիք չլիներ անդրադառնալ բյուրոյի անդամների ելույթներին, քանի որ Երվանդ Բաղդասարյանը, Արտաշես Պողոսյանն ու Հմայակ Սարյանը, մեղադրելով նամակների եզրակացությունն ու «ջղային տոնը», միաժամանակ աշխատում էին խղճի մտոք ցույց տալ, թե նրանցում կա նաև մարզի պատկերը, և սրա վրա էլ պիտի ուշադրություն դարձնել:

Բայց ելույթ կարդաց նաև Մուշեղ Օհանջանյանը:

Նա ոգևորված կարդում էր, իսկ ես մտածում էի, թե ո՛վ պիտի գրած լինի: Մի քանի օր հետո պարզ դարձավ, որ Քրիստափոր Պետրոսյանի հերյուրանքն է:

Սա մարզխորհրդի գործկոմի նախագահ Օհանջանյանն է, այն մարդը, որ իր պաշտոնավարության երկու տարվա ընթացքում չորս-հինգ անգամ ձեռքն առաջ մեկնած Երևան է գնացել և ամեն անգամ էլ վերադարձել խորթի ուրախությամբ:

— Մինիստրների խորհրդի նախագահ Քոչինյանը բավարարեց իմ ամեն մի խնդրանքը, — պատմել է բոլոր հանդիպողներին: — Ա՛յ տնաշենի տղերք, չեք պատկերացնի, է, միանգամից այնքան շինանյութեր ու սարքեր տվեց, որքան մեր այս հանրապետությունից մի տասնամյակի ընթացքում էլ չենք ստանում:

Հիմա այս նույն լեզուն օձի խարազան է դարձել Հայաստանի ու նրա ղեկավարության դեմ:

— Բոլոր խառնակությունների սկիզբ են առնում Հայաստանից, նրա ղեկավարներից ու մտավորականներից: Իսկ ի՞նչ կա Հայաստանում, ո՞վ է ասել, թե Հայաստանի հետ մեզ համար ավելի լավ է լինելու, քան հիմա է: Հայաստանն իսկի չի կարողանում հայրենադարձների պահանջները բավարարել, իր բերանի պատառը մե՞զ է տալու:

Այս լեզվո՞վ չէր խոսում Ռուբեն Շահրամանյանը:

Ստեփանակերտի կուսակցական քաղկոմի քարտուղար Գրիգոր Գալստյանը նամակները դատապարտեց հիմնովին, առաջարկեց հեղինակներին ազատել զբաղեցրած պաշտոններից, որովհետև նրանք մեծամասնությամբ գաղափարական աշխատանքի բնագավառներ են ղեկավարում, իսկ նամակներով ապացուցել են, որ իրենք կարիք ունեն գաղափարական վերադաստիարակության:

Սա այն Գալստյանն է, որն առաջին նամակն ընթերցել է հուլիսի 4-ին, Մելքումյանից անմիջապես հետո: Ընթերցել է, ապա Բ. Ուլուբաբյանին ու Մ. Շաքարյանին իր դժգոհությունն արտահայտել, որ նրանք նամակն իրեն չեն տվել ստորագրելու:

— Ինչո՞ւ չեք վստահել: Մի՞թե կարծում եք, թե ես վատ հայ եմ ու հայրենասեր: Ես հաճույքով կստորագրեի և ստամոքսով կպաշտպանեի:

— Ստորագրությունն ի՞նչ կարևոր է, — պատասխանել էին նրան: — Իսկ պաշտպանելն ուշ չէ:

— Իմացած եղեք, որ ամբողջ քաղկոմը և Ստեփանակերտի շրջանի կուսակցական ակտիվն ամուր կանգնած է ձեր թիկունքում, — հավաստացրել էր վերջում:

Սա էր Գր. Գալստյան-թիկունքը:

Մանյա Գրիգորյանը (մարզկոմի «գաղափարական» քարտուղարը) անկապ, ափեղցփեղ նամակատարումից հետո փորձեց նամակների վերջնական գնահատականը տալ.

— Սա մի խայտառակություն է, ընկերներ, մեր մարզի կուսակցական կազմակերպության համար:

Ես արհամարհանքով ասացի.

— Մեր մարզի կազմակերպության ամենամեծ խայտառակությունն այն է, որ քեզ նմանը մարզկոմի քարտուղար է:

Դահլիճում սա պայթեց որպես հավանության ու համերաշխության քրքիջ, և այնուհետև ոչինչ չէր կարելի հասկանալ Մ. Գրիգորյանի փնփնթոցից:

Գուրգեն Մելքումյանը երևի թե քննարկումից որոշ ճշմարիտ կողմնորոշման հանգել էր, հաշտարար, համերաշխության ու համագործակցության կոչող տոնով ասաց. «Դուք մեր կոմունիստներն եք, գրել եք ճշմարտությունը, եզրակացությունների մեջ շեղվել եք: Մերն եք, քանի՜-քանի՜ անգամ ձեր ազնվությունն ու սկզբունքայնությունը գործով ցույց տված, ապացուցած: Եվ մենք պետք է աշխատենք միասին»:

Ընթերցում են որոշման նախագիծը, և մարդիկ մնում են քար կտրած:

Նամակներում փաստերը հիմնականում սուտ են: Մարզկոմի բյուրոն, մասնակցությամբ մարզի կուսակցական ակտիվի, դատապարտում է նամակներն ու հեղինակներին, Ղարաբաղը Հայաստանին միացնելու տրամադրությունը համարում վնասակար ու կորստաբեր հայ և ադրբեջանական ժողովուրդների եղբայրության համար:

Ապա.

ա) Բ. Ուլուբաբյանին՝ որպես այս ամենի կազմակերպչի, հայտարարել խիստ նկատողություն վերջին նախազգուշացումով, գրանցելով անձնական քարտի մեջ:

բ) Մ. Շաքարյանին, Լ. Գասպարյանին, Գ. Գաբրիելյանին ու Գր. Ստեփանյանին (որը բացակայում էր բյուրոյի նիստից) ազատել աշխատանքից:

գ) Մյուսներին՝ զգուշացում:

Մարդիկ մտածում էին, որ քննարկում են, որպեսզի ի գիտություն ընդունեն, հայտարարեն և վե՜րջ: Ոչ մի որոշում չպետք է ընդունվի: Մանավանդ, եթե որոշում պիտի լիներ, ապա կարգով ու օրենքով պարտավոր էին նախօրոք ծանոթացնել մեզ:

Այդպես էին մտածում նույնիսկ նրանք, ովքեր մեզ մեղադրում էին:

Նախագիծն ընթերցելուց հետո կարծիքներ չհարցրին, քվեարկության չդրին: Միանգամից՝ «Բյուրոյի նիստը համարվում է փակ»:

Այս էր Գ. Մելքումյանի համագործակցության կոչը: Ես ձեզ պատժեմ ու աշխատանքից ազատեմ, իսկ հետո եկեք, համագործակցենք:

Բայց ինչի՞ էր պետք նրա լալկան-հաշտարար, կեղծ-եղբայրական ու կեղծ-բարեպաշտական ելույթը՝ այս հակահայկական ու չարաբաստիկ որոշումից առաջ:

Դահլիճը կամաց-կամաց դատարկվեց: Ոչ ոք չէր խոսում, կարծիք չէր ասում: Երևի շատ էր սահմռկեցուցիչ: Մարդիկ մարզկոմը թողեցին մեկ-մեկ, գաղտագողի: Նույնիսկ սովորական «բարի գիշեր» ոչ ոք ոչ ոքի չմաղթեց: Ասես մարդ էին սպանել, և ամեն մեկն իր հետ տանում էր այդ սպանության բոթն ու մասնակցի ցավը:

Ուշքի գալու, պատահածը լրջորեն քննելու համար երկար ժամանակ է պետք: Հատկապես պատահածի նշանակությունը որոշելու, Ղարաբաղի գլխին իջած հարվածի ահագնությունը չափելու համար:

Բայց և այնպես փորձում եմ ետ նայել:

Ի՞նչ կատարվեց:

Մարզկոմի բյուրոյում որոշում ընդունեցին մեր դեմ: Ո՛չ թե մեր, Ղարաբաղի հայության, հայ ժողովրդի արդար դատի՛ դեմ: Որոշման մեջ դատապարտեցին Ղարաբաղը Հայաստանին վերադարձնելու պահանջը: Եվ դատապարտողը ոչ թե կուսակցության Ղարաբաղի մարզկոմի բյուրոն էր, այլ բյուրոն՝ մարզի կուսակցական ակտիվի հետ միասին: Այդպես էլ արձանագրեցին: Դա շատ էր պետք մեր դատի հակառակորդներին: Ըստ երևույթին դա թելադրված է եղել Ադրբեջանի կենտրոնից: Որպեսզի «քննությանը» մասնակցեն և իրենց խոսքն ասեն մարզի ու շրջանների ղեկավարները, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի դեպուտատները:

Դե՛, այսուհետ թող մեկն ու մեկը փորձի Ղարաբաղի հարցը բարձրացնել: Աչքը կխոթեն որոշումը:

— Ի՞նչ ես ուզում, ո՞ւմ անունից ես խոսում: Ղարաբաղի կուսակցական ակտիվն իր կարծիքն ասել է այդ հարցի առթիվ: Ասել է բոլոր ղարաբաղցիների անունից, հիմնավորապե՛ս և մեկընդմի՛շտ:

Գուցե նույնիսկ այսքան էլ չերկարացնեն: «Այ դա այն հարցը չէ՞, որի մասին իրենք՝ ղարաբաղցիները, որոշում են հանել: Բա էլ ի՞նչ են ուզում: Գրե՞լ են: Դե՛ն շպրտեք, պատասխանելն ավելորդ է»:

Եվ մեր հակառակորդների ձեռքում չկա ու չի լինի ավելի զորավոր մի կռվան, քան այս կեղտոտ թուղթը, այս չարճուն զրպարտությունը Ղարաբաղի հայության դեմ: Եվ այնքան վիրավորակա՛ն՝ այդ հայության, մեր ազգի բազմաթիվ անգամ չարչրկված ճակատագրի համար:

Հայը կուսակցական որոշում է հանում այն մասին, որ ինքը չի ուզում ապրել հայի հետ և գերադասում է անիրավվածի ու զրկվածի, ամեն օր ուրիշի ձեռքին նայող մուրացիկի իր վիճակը: Մուրացիկի իր տանը, իր հողի վրա:

Ինչպե՞ս ոտնատակ տրվեց արդարությունը: Սրիկաներն աչքիդ մեջ նայելով կեղծում էին ու ստում, շողոքորթում ու դավաճանում:

Ո՞վ արդարություն... Ես իմ արյունակից եղեռնաբախտ բանաստեղծի պես չեմ փորձի թքել քո ճակատին: Ես գիտեմ, որ դու ճակատ չունես...

Ես որոնեցի և գտա այն. տեսա՛ անբարոյական գործարքի մեջ է իմ ազգի թշնամների հետ, մեկ էլ մեր դավաճաններին է քաշել այդ թշնամների բանակը, և նրանք մեկտեղ ու միասնական, ոտքի տակ տրորում են մեր ազնիվ դատը:

Կատարվեց ակադեմիկոս Իոսիֆյանի կանխատեսությունը: Եղավ ու որերորդ անգամ կրկնվեց մեր պատմության ամենամռայլ հիմարությունների մեկը: Հայերի ձեռքով հայերի դեմ հաշվեհարդար տեսան մեր երդվյալ թշնամիները: Եվ ինչպիսի՛ հաշվեհարդար: Երբ Հակոբ Օհանջանյանն ու Սոկրատ Իսրայելյանը, Մանյա Գրիգորյանն ու Զավեն Դավթյանը բերան էին շաղ տալիս մեր դեմ, չէր կարելի չզգալ, որ նրանք այդ անում են ապուշի բավականությամբ: Իսկ լսողները նողկանք չէին զգում: Գոնե չկար մեկը, որ արտահայտեր իր դժգոհությունը, եթե չհաշվենք Սարգիս Աբրահամյանին, որը վեր կացավ ու պաշտպանեց մեզ:

— Ընկերներ, ի՞նչ նացիոնալիզմի մասին եք խոսում: Մարդիկ ցավով շարադրել են մեր մարզի ողբերգությունը...

Երբ ես ընթերցում էի «Գարունաձայն»-ի հայհոյանքը հայ ժողովրդի հասցեին, ոչ ոքի դեմքին զայրույթ չկար: Ոչ ոք չդատապարտեց այդ խուլիգանությունը, չվրդովվեց իր ժողովրդի վրա շպրտված կեղտի դեմ: Տասներեքի դեմ խոսում էին ինչպիսի՜ զայրույթով:

Իսկ ի՞նչ են արել այդ տասներեք կոմունիստները: Իրենց կուսակցության կենտկոմին պատմել են հարազատ ժողովրդի անտանելի վիճակը, գանգատվել են այդ ժողովրդի անկապտելի իրավունքների ոտնահարողների դեմ:

Ասում են՝ 1958-ին, երբ Ադրբեջանի Կուսակցական Կենտկոմի պաշտոնամոլ ղեկավարները մեկմեկու խորտակելու համար իրար դեմ են ելել և իրար մեղադրել նացիոնալիզմի մեջ, Միրզա Իբրահիմովը մատ է թափ տվել նրանց վրա. «Ի՞նչ բանի եք, անհավատներ: Դուք մտածո՞ւմ եք, թե ո՛ր ժողովրդի ճակատագրի հետ եք խաղում»: Եվ մեկեն լռել են բոլորի կրքերը:

Իսկ հայը հային մեղադրելու համար նրան կպցնում է մի «նացիոնալիստ» պիտակ ու կողքից չարախնդում, լավ հասկանալով, որ մեր օրերում դա միակ մեղադրանքն է, որին հավատում են, առանց ստուգելու:

Ովքե՞ր էին մեզ նացիոնալիստ կոչում, զրպարտում Ղարաբաղին, հայհոյում Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությանը: Հայաստանի հյուրընկալ ու սրտաբաց համալսարաններում ուսում առած Հայկ Սարգսյանը, Սեդրակ Նավասարդյանը, Երևանի Գյուղատնտեսական ինստիտուտի ասպիրանտ Գրիգոր Գալստյանը:

Ահա ովքե՛ր քեզ դավաճանեցին, իմ հա՛յ ժողովուրդ: Մի՞թե քո բռան մեջ աղ չկա: Մի՞թե քիչ են եղել քո տառապանքներն ու դաժան փորձությունները, որպեսզի նրանց մասին իմացողը երբևէ փորձի նորից խաղալ քո բախտի հետ: Ո՛վ «հազարապատիկ խոցված տիրամայր»:

Բայց, այնուամենայնիվ, դու լավ պիտի իմանաս ու պիտի ճանաչես քո նոր ուրացողներին:

Շատ է պատահել, որ դու ետ ես նայել՝ տեսնելու համար, թե ի՜նչ տեսակ արնոտ ճամփա էր, որ ետև թողեցիր, ինչպիսի՜ մղձավանջով անցկացրիր քո սրբազան քարավանը, և ամեն անգամ քո պատմաբանների ու գրողների անեղծ բերանով փորձել ես արդարացնել նույնիսկ Վասակ Սյունեցուն:

Իսկ ո՞վ պետք է փորձի արդարացնել սրանց: Եվ ինչպե՞ս պետք է արդարացնի, ինչո՞վ:

Մարզի ղեկավարները գիտեին, որ Մոսկվայում խոստացել են հանձնաժողով ուղարկել՝ տեղում վիճակին ծանոթանալու համար: Շուտացավ այդ հանձնաժողովը, որի գլխավորն էր ոմն Կիսելյով, տհաս ու թեթևամիտ մեկը: Այն ժամանակ այս ղեկավարները, Սխիանովի ու Նիստրատովի սպառնալիքներով, ոչ միայն իրենք խաբեցին ու կեղծեցին փաստերը, այլև առաջին իսկ րոպեներից հանձնաժողովի երթուղիներն այնպես դասավորեցին, որպեսզի այն տեսակցի ու խոսի միայն կեղծարարների հետ: Ուղեկիցներ էին նշանակել Հակոբ Օհանջանյանին ու Էդուարդ Ղուկասովին, երկու ծախու հոգիների, որոնք անվերջ մեր դեմ կեղտ էին լցրել եկածների ականջները: Եվ սրանք Էին, որ կազմակերպեցին Կիսելյովի զրույցները մարզի երկու շատ «հարմար» ղեկավար աշխատողների հետ:

Առաջինը Ղարաբաղի «նախանձելի» վիճակի մասին հեքիաթներ պատմելուց հետո մատուցել է նաև մի շատ կարևոր մանրամասն.

— Մեր ընտանիքը ձեզ օրինակ. փեսաս ադրբեջանցի է, քրոջս հարսը՝ ռուս: Եվ մեր տանը երանելի խաղաղություն ու փոխըմբռնություն են թագավորում: Ով որ բողոքում է Ադրբեջանի ղեկավարության դեմ, ժողովուրդների բարեկամության վրա է քար նետում, պաշտոնամոլ է ու նացիոնալիստ:

Իսկ երկրորդը ցույց է տվել Մարտունու խաղողագործական տնտեսության բանվորներին, թե.

— Տեսե՛ք, կեսից ավելին ադրբեջանցիներ են ու եղբայրաբար, հաշտ ու համերաշխ աշխատում են իրենց հայ եղբայրների հետ, ամեն ինչից գոհ ու երջանիկ: Սրանց Հայաստան պետք չէ, որովհետև սրտները մաքուր են: Իսկ ովքեր Հայաստանի հետ են ուզում միանալ, Ղարաբաղից դո՛ւրս քշեցեք, թողեք գնան Հայաստան:

Իսկ ո՞վ է խոսել կամ գրել երկու ազգերի համերաշխության դեմ: Մեր նամակների ո՞ր տողի մեջ կարող են հակաադրբեջանական տրամադրություն գտնել: Մեր ցավն ադրբեջանական ղեկավարությունն է, որը միշտ էլ շովինիստական է եղել: 45 տարվա ընթացքում քանի՛ անգամ է փոխվել: Փոխվել են բագիրովներն ու յակուբովները, մուստաֆաևներն ու ախունդովները, իսկ Ղարաբաղի նկատմամբ վերաբերմունքը նույնն է մնացել. նույն շովինիստականը, հայահալածն ու անուղղելին:

Նույնիսկ կարելի է հասկանալ այս ամենը: Նրանք քաջ գիտեն, որ անարդարություն է Լեռնային Ղարաբաղը Հայաստանից բաժան պահելը: Եվ համոզված են, որ վաղ թե ուշ պետք է վերջ տրվի այդ անարդարությանը՝ Ղարաբաղը պետք է վերադարձվի իր միակ օրինական տիրոջը՝ իր մայր Հայաստանին: Այդ պատճառով էլ Ղարաբաղում կապիտալ ներդրումներ չեն անում, որպեսզի հորթը փախչելիս չափու էլ վզին չտանի:

Սա պետք է հասկանալ: Բայց ո՞նց արդարացնել: Եվ ինչպե՞ս արդարացնել նրանց մոլեռանդ ու սադիստական ձգտումը՝ ինչ գնով էլ լինի, Ղարաբաղը պահել իր ներկա խայտառակ վիճակում: Թող նրան պահելը հանրապետությանը տնտեսապես վնաս լինի: Թող նա անընդհատ գլխացավանք պատճառի: Միայն թե մերը լինի, ավելի շուտ՝ մեր ձեռքի տակ, մեր ձեռքին նայելիս:

Այս չարամտությունն ինչպե՞ս արդարացնես:

Կենտկոմի կուսակցական մարմինների բաժնում ինձ ասել էին. «Մենք ձեր նամակները քննելու հանձնարարություն չենք տվել, և եթե ձեր մարզում այդպիսի բան են նախապատրաստում, դա ինքնագործունեություն է: Կկարգադրենք, որ իրենց գործով զբաղվեն»:

Այս ինչպե՞ս եղավ: Նրանք ինձ խաբե՞լ էին, թե՞ սրանք են մոլեգնել վրիժառությունից և մոռացել ամեն չափ ու կարգ:

Հեռագրեցի.

«ՄՈՍԿՎԱ,

ԿՐԵՄԼ

ԸՆԿԵՐ ԲՐԵԺՆԵՎԻՆ.

Մենք՝ Լեռնային Ղարաբաղի տասներեք կոմունիստներս, երկու անգամ դիմել ենք ԽՄԿԿ Կենտկոմին: Առաջին անգամ նկարագրել ենք մեր մարզի անհանդուրժելի վիճակը, իսկ երկրորդով պատմել ենք Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի քարտուղար ընկեր Էլիստրատովի և մարզկոմի քարտուղար ընկեր Մելքումյանի կողմից նամակի անարդարացի քննարկումը:

Մեր մարզն են եկել ԽՄԿԿ Կենտկոմի ներկայացուցիչները, որոնք նույնիսկ արժան չեն համարել խոսելու նամակների հեղինակների հետ:

Այնուհետև մարզկոմի քարտուղար ընկեր Մելքումյանը, հավանաբար ո՛չ առանց հանրապետության ղեկավարների երաշխավորության, կազմակերպել է նամակների «քննարկումը» մարզկոմի ընդլայնված բյուրոյում:

Ըստ էության դա հաշվեհարդար էր այն կոմունիստների դեմ, որոնք համարձակվել են ճշմարտությունը գրել իրենց կուսակցության Կենտրոնական Կոմիտեին:

Եթե այս բոլորը կատարվել է ԽՄԿԿ Կենտկոմի թույլտվությամբ, որի մեջ կասկածում եմ, ապա որտե՞ղ փնտրել արդարությունը:

Հարգանքով՝

Գրող Բագրատ Ուլուբաբյան

12 դեկտեմբերի, 1965 թ.»

Նման բովանդակությամբ մի հեռագիր էլ տվեց Գրիգոր Ստեփանյանը:

Աչքերիս առաջ արդարություն կոչվածը պոռնկություն է անում, իսկ մենք դեռ հույս ունենք, թե դա մոլորություն է եղել, և էլի հավատում ենք ինչ-որ բանի:

Մարզկոմն անգործ է թողել Սերգեյ Շաքարյանին ու Գրիգոր Ստեփանյանին: Շաքարյանին հանել են գործկոմի տնօրեն: Վախեցել են՝ հարցը հանեն բադխորհրդի նստաշրջան և տապալվեն:

Հիմա մարզից քշելու համար ամեն ինչ անում են, ամեն ինչի հիմքն ու առանցքն էլ՝ անգործ թողնելը: Իսկ անգործ թողնելն ի՞նչ դժվար բան է: Օրերով մտածում են, թե ի՛նչ աշխատանք առաջարկեն, որպեսզի նրանք մերժեն: Մտածում են, մտածում, գտնում:

— Շաքարյան, որոշել ենք քեզ ուղարկել կապի մարզային բաժանմունքի պետ: Առայժմ: Հետո մի բան կմտածենք: Ի՞նչ կարծիքի ես:

— Երևանից պիտի աշխատեմ:

— Երևանից ուզե՛ս: Թեկուզ վաղվանից:

— Նշանակեցե՛ք:

«Վաղը» կանչում են, թե.

— Գիտե՞ս ինչ կա: Կապի մինիստրը համաձայն չէ: Ասում է՝ պիտի մասնագետ լինի:

— Իսկ դուք ինչո՞ւ նրա հետ նախօրոք չէիք պայմանավորվել:

— Սխալվել ենք: Մի երկու օրից ուրիշ որևէ բան կառաջարկենք:

Մի երկու օրից կանչում են ու.

— Որոշել ենք կապի մարզային բաժանմունքի պետի տեղակալ դարձնել:

— Մինիստրի հետ խոսե՞լ եք:

— Այո:

— Դե, նշանակեցեք, գնամ, աշխատեմ:

— Այս երկու օրը Բաքու՝ Կենտկոմ եմ գնալու,— Մելքումյանն է ասում:— Ընկերների հետ խոսեմ, գամ-նշանակեմ:

Գնում-գալիս է, թե.

— Գտնում են, որ հարմար չէ: Գուցե համաձայնե՞ս տեղական արդյունաբերության կոմբինատի դիրեկտոր...

Այս կոմբինատը մի երկու արտել է՝ միավորված: Հո դրան էլ չի համաձայնելու: Սակայն հակառակի պես՝ Շաքարյան «չարիքը» դրան էլ է համաձայնում:

Մելքումյանն ստիպված է լինում մի քանի օր հետո վերստին կանչել, ասել.

— Գիտե՞ս ինչ կա...

— Գիտեմ՝ արտելների դիրեկտոր ես չի կարելի: Է՞լ ինչ ունեք առաջարկելու:

— Գուցե համաձայնես գնալ Ղարմետաքսկոմբինատի դիրեկտորի տեղակալ...

—...Համաձայն եմ: —...տնտեսական գծով:

— Համաձայն եմ, է՛, համաձայն եմ, թեկուզ և բակը մաքրելու գծով լինի, համաձայն եմ: Ձեռքերս քոր են գալիս, էլ չեմ կարող անգործ մնալ: Աշխատանք տվեք:

Մելքումյանը մտածում էր, որ այս անգամ էլ թեթև արդյունաբերության մինիստրը չի համաձայնի: Շաքարյանին ուղարկեց նրա հաստատմանը: Եվ, ինչքան էլ տարօրինակ ու անսպասելի, այս մինիստրը հաստատեց:

Ստեփանյանի հետ երկար մուկ ու կատու չխաղացին: Կանչեցին բյուրոյի:

— Հեռագրե՞լ ես:

— Այո՛, հեռագրել եմ:

— Հը՞մ: Կարող ենք նշանակել ժողովրդական ստեղծագործության տան դիրեկտոր: Իննսուն ռուբլով:

— Քիչ է, դրանով չեմ կարող ընտանիք պահել:

— Առաջ ինչքա՞ն էիր ստանում:

— Երկու հարյուր:

— Հիմա մեր հնարավորությունը դա է:

Հունվարի կեսերին ադրբեջանի գրողների միության համագումարին էր: Գնացել էինք նաև Ղարաբաղի գրողներս: Ինձ նայում էին որպես խոզի մսի: Իմ նախկին բարեկամներն ու ընկերներն անգամ անծանոթ էին ձևանում կամ կողքովս անցնում էին ու ինձ «չէին տեսնում»: Ես էլ իրենց «չէի տեսնում»:

Առաջին նիստից առաջ բանից անտեղյակ ֆոտոթղթակիցները միջանցքներում փնտրում-գտնում են ղարաբաղցիներիս, խնդրում, որ հարմար կանգնենք, նկարեն: Ես տղաներին աչքով եմ անում, որպեսզի հեռանան: Սակայն մինչև նրանք իմ ակնարկը կհասկանան, թղթակիցներից մեկին մոտենում է Գրողների միության նախկին քարտուղար Նաբի Խազրին ու ականջին ինչ-որ բան փսփսում: Սա բավական է լինում, որպեսզի ֆոտոթղթակիցները խմբով փախչեն մերոնցից և հետո այնպես իրենց հեռու պահեն, կարծես հանկարծ ապարատներն իրենք իրենց կնկարեն մեր թշնամական մռութները և տերերին կգցեն կրակի մեջ:

Համագումարում մեր մասին ո՛չ մի խոսք: Մենք չկանք էլ կարծես:

Մեր մասի՞ն: Մենք ի՞նչ: Մարգար Դավթյանի կամ Սամվել Գրիգորյանի մասին գեթ մեկ նախադասություն ասեին. ամբողջ կյանքը նվիրել են ադրբեջանական գրականության պրոպագանդային:

Համագումարին հրավիրել էին Լենինյան մրցանակի դափնեկիր, դաղստանցի Ռասուլ Համզատովին, երևի որպես հավատակցի ու ուզում են, որ իրենց փառաբանի: Իսկ սա վեր է կացել, թե.

— Դուք դարձել եք իմ բարեկամները, իմ սիրելիները: Բայց ինձ համար պակաս սիրելի չեն նաև այն բարեկամները, որոնք ապրում են ձեզնից այն կողմ (բոլորը գիտեն, որ «այն կողմ» հայեր են, և ջղային լռում, սպասում են):

— Այսօր չի կարելի իսկական բանաստեղծ լինել, առանց ուրացած լինելու հոգևոր այն գանձերը, որ աշխարհին են պարգևել Շոստակովիչն ու Սարյանը:

Կարծես քիչ էր այս երկու հարվածը, վերջում էլ թե.

—... Միջանցքներում թղթակիցներն ինձ հարց են տվել. «Ադրբեջանի ո՞ր բանաստեղծին եք սիրում»: Ես նրանց ասել եմ՝ այդ հարցին կպատասխանեմ իմ ելույթում և հիմա պատասխանում եմ. Ադրբեջանում չկա այն բանաստեղծը, որին ես պիտի սիրեմ: Այսօրվա շարքային ընթերցողը ժառանգորդն է համաշխարհային գրականության ու մշակութային լավագույն գանձերի, իսկ ձեր լավագույն բանաստեղծներն անգամ Նիզամուց ու Ֆիզուլուց, Ախունդովից ու Սամեդ Վուրղունից դենը չեն տեսնում:

Դահլիճը թնդում է, մեկ էլ հանկարծ մեռնում... Սրանից հետո առաջին իսկ խոսողը՝ Գյուման Մուսաևը, ապա մյուսները, նույնիսկ հրավիրված հյուրերն իրենց ելույթներում դատապարտում են Համզատովի «չարախոսությունը»:

Հրաչյա Հովհաննիսյանը, իրեն պահում էր հարսնավորի տանտիրոջ աղքատ ազգականի պես, ընդմիջմանը մեզ ասում է. «Համզատովն այն ելույթից հետո թևս բռնեց, թե՝ գնանք-խմենք: Խմելիս էլ փնթփնթում էր. «Սրիկաները ձեր հողերը զավթել են, հիմա էլ աչքները տնկել Դաղստանի վրա»:

Կոնստանտին Սերեբրյակովն ասում է. «Գիշերվա կեսից մինչև առավոտ խմում էր ու հայհոյում Ռասուլ Ռզային: Այս Ռզան Համզաթովին, իբր թե, հյուրասիրության է կանչել: Ու սեղանի վրա առաջարկել է «Միասնություն»: «Մեր երկու հանրապետությունները միավորենք, դառնանք հզոր մի պետություն: Դրանից հետո մեզ համար սարսափելի ոչինչ չի լինի»:

Համզաթովը կոպտորեն մերժել է Դաղստանը գաղութացնելու այս առաջարկությունը և հեռացել: Ահա թե նա որտեղի՞ց էր այնքան թույն ասել իր ողջույնի խոսքի համար, որի մեջ էլ թափանցիկ այսպիսի ակնարկ ուներ. «Երբ իմ լեռնաստանում գլուխս դնում եմ բարձին, շատ եմ երազում, որ հարևան Ադրբեջանից միայն խաղաղ հովեր գան դեպի մեր կողմերը, բարեկամական հովեր»:

Սակայն խիզախ լեռնցին այսքանով չբավարարվեց: Համագումարից հետո օպերային թատրոնում գրական երեկոյին էլ առաջինը խոսք տվին՝ երևի մտածելով, թե որևէ կերպ կշտկի իր անբարյացակամ խոսքի տպավորությունը:

Իսկ այստեղ նա նորից հունչը հիշեցրեց.

— Մենք մարդ ենք: Աստված մեզ հարևաններ է դարձրել: Ես Կասպից ծովի այն ափին հաճախ գլուխս դնում եմ ժայռերին իմ հայրենի և երազում, որ այս ափից միայն բարեկամության քամիներ գան մեր ափը...

Օվացիա սարքեցին, լռեցին, նոր հասկացան...

Իսկ Համզաթովը լավ էր հասկացել համագումարի տերերին և այն մթնոլորտը, որ տիրում էր Բաքվում: Նա գիտեր, որ շովինիզմը մարդկանց մեջ մարդկայինն սպանելով՝ նրանց դարձրել է գիշատիչներ:

Երբ իրանից գաղթական դարձած բանաստեղծ Բալաշ Ազերոզլին ամբիոնից ասաց. «Ես փափագում եմ այն օրը, երբ ձեզ հյուր եմ ընդունելու իր Ադրբեջանին վերադարձված

Թավրիզում», նախագահությունը ու դահլիճը հոտնկայս դղրդացրին շենքը: Ես երկրորդ անգամ տեսա, թե ինչպիսի՛ պոռթկումի է ընդունակ մահմեդական մոլեռանդությունը: Առաջին անգամ այդպիսի տեսարանի ականատես եմ եղել Ֆիզուլու 400-ամյակին. թուրք պրոֆեսորը դահլիճին դիմեց «լեզվի և հավատի եղբայրներ» կոչականով, և շենքը երերաց մոլեռանդության այն ցույցից, որի մեջ մռնչոցն ու ծափը, կոչն ու վայնասունը խառնվել էին իրար:

Իսկ այստեղ Ազերօղլու կոչով ու դրան ուղեկցած հրաբուխով չբավարարվեցին: Նրանք այնուհետև ամեն մի ելույթում անդրադառնում էին Արաքսի այն կողմ իրենց օգնության «սպասող» եղբայրներին: Մթնոլորտն այնպես էին շիկացրել, որ այսքանից հետո ելույթ ունեցող բելոռուսական դելեգացիայի ղեկավարն անհարմար համարեց անձամբ չանդրադառնալ այդ հարցին, շողոքորթությամբ ասաց.

— Ով-ով, մենք լավ գիտենք, թե ի՞նչ է նշանակում ապրել կապիտալիզմի լծի տակ: Համոզված եմ, որ դուք կազատագրեք Հարավային Ադրբեջանը, և հաջորդ անգամ մենք կհանդիպենք Թավրիզում...

Այստեղ պայթեց այնպիսի ամպրոպ, որի համար կարծես դահլիճն էր հրավիրված միլիոնանոց մի խաժամուժ:

Եվ սրանք են, որ կատաղում են, երբ Լեռնային Ղարաբաղ փոքրիկ Հայաստանն ուզում է ապրել իր Մեծ Հայաստանի հետ:

Եվ սրա՞նք են, որ զարմանում են, երբ կողքինը փորձում է պաշտպանել իր ազգային ոտնահարված իրավունքը: Կենտկոմի առաջին քարտուղար Վալի Սխունդովի ելույթն ամբողջովին ազգամոլական քարոզ էր: Չէր կարելի չնկատել, որ սա պոչ է շարժում Միրզա Իբրահիմովի առաջ, ա՛յն Իբրահիմովի, որը մի անգամ բեկվելուց հետո բարձրացել, վերագտել է Ադրբեջանի կուռքի իր գահը և նորից հանրապետությունը թունավորում է ամենակատաղի շինիզմով:

Սխունդովն իր ելույթը ավարտում է հետևյալ փիլիսոփայությամբ.

— Մեկը, որ չի սիրում իր ազգին, սրիկա է ու չի կարող սիրել ուրիշ ազգի: Չհավատաք, եթե այդպիսին ձեզ սիրո խոստովանություն անի:

Ուզում եմ վեր կենալ ու գոռալ երեսին, թե այդ դեպքում դու ինչո՞ւ հավատում ու հովանավորում ես Ղարաբաղն այսօր ծախողներին, ինչո՞ւ հալածում ես այն հայերին, որոնք սիրում են իրենց ազգն ու երազում են այդ ազգի միասնությունը:

Ընտրությունների ժամանակ իմ անունն էլ գրած տալիս են Գրողների միության վարչության թեկնածուների ցուցակում: Կուզենային գրել միայն մի տեղ՝ շիրմաքարի վրա: Բայց այս ցուցակն են մտցրել, որպեսզի Ղարաբաղի դեպքերի մասին խոսեն (համագումարի ընթացքում չէին կարող խոսել, դրա համար առիթ չկար):

Կենտկոմի քարտուղար Հասայ Վեզիրովը ցուցակն ընթերցում է բառատրոփ և իմ անվան վրա կանգ է առնում, շունչ քաշում:

— Ո՞վ է ուզում խոսել:

Ձայն չկա:

— Ո՞վ է ուզում Ուլուբաբյանի մասին խոսք ասել, առաջարկություն անել:

Հարցը չորրորդողվելուց թե հինգերորդվելուց հետո դահլիճի վերջից տնկվում է ինչ-որ Ջամշիդ Ամիրով, սողունական կապ ունեցող մի մարդ, որը վերջերս ասպարեզ է ընկել եղբոր՝ Կենտկոմի քարտուղար Ամիրովի շնորհիվ:

— Առաջարկում եմ դրա անունը հանել ցուցակից:

Դահլիճի տասնյակ տեղերից ձայնակցում են.

— Հանե՛ն:

— Դուք գիտե՞ք, որ վերջերս այդ Ուլուբաբյանը Լեռնային Ղարաբաղում ծավալել է նացիոնալիստական գործունեություն, վտանգի տակ դրել ադրբեջանցի և հայ ժողովուրդների բարեկամությունը... Մարդկությունը նրան խիստ պատժի է ենթարկել: Իսկ մենք այստեղ նրան ընտրում ենք Գրողների միության ղեկավարության մեջ: Առաջարկում եմ...

Նույն խոսքն է ասում նաև բանաստեղծ Բախտիար Վահաբզադեն, և նորից դահլիճով մեկ բազմաձայն կրկնվում է ցուցակից հանելու առաջարկությունը:

Միրզա Իբրահիմովը տեղից բարձրանում է, մի քանի վայրկյան ձեռքը թթի պես առաջ մեկնած սպասում, որ լռեն, ապա ավելի մանրամասն պատմում Ամիրովի ասածը:

— Ճիշտ է, ընկերներ, այսքանը եղել է, — հայտարարում է նա,— ե՛ւ ոչ միայն այսքանը: «Գրական Ադրբեջան» հանդեսի խմբագիրն ինձ զեկուցել է, որ նրա նացիոնալիզմն ու մյուս վտանգավոր արարքներն արտահայտվել են նաև գրական գործերի մեջ: Ինձ ցույց են տվել նույնիսկ հատվածները... Բայց մենք ճանաչում ենք Ուլուբաբյանին, գիտենք, որ հոգու մեջ լավ մարդ է ու լավ գրիչ ունի, համոզված ենք, որ իրեն կուղղի...

Նույնը կրկնում է նաև Խասայ Վեզիրովը: «Համոզված ենք, որ իրեն կուղղի»:

Ո՛չ, նրանք համոզված են մի այլ բանի մեջ. որ այդ հայտարարությունը բավական է, որպեսզի բոլորը չնջեն: Սակայն ջնջեցին միայն 40 հոգի (210-ից):

Ցուցակները ձեռքներն առնելուց, առաջին հերթին, հիշել են իրենց անձնական հակառակորդներին ու ջնջել են Նաիրի Բագրունուն, Սամվել Գրիգորյանին ու բոլոր նրանց, ում հետ ավելի կոնկրետ հաշիվ ունեն... Եվ սրանք համարյա իմ չափ ջնջվել են:

Նույն օրերին տեղի է ունեցել Ստեփանակերտի քաղաքային կուսակցական կոնֆերանսը: Այս կոնֆերանսի մասին պատմում են հետևյալը. Զեկուցման մեջ թռուցիկ խոսվել է մեր արածների ու ստացած պատիժների մասին:

Մենք պայմանավորվել էինք, որ դելեգատ Շաքարյանը ելույթ ունենա, հանգամանորեն պատմի ամեն ինչ՝ հատկապես, եթե խոսք լինի մեր մասին:

Ելույթ ունեցողներից ոմանք, ասում են, կողահարել են նամակները, մի քանի բերան հաչել մեր հասցեներին, անցել: Ելույթ է ունեցել Շաքարյանը:

— Այստեղ խոսվում է նաև մեր նամակների մասին: Եվ խոսողներն անպատասխանատու, անխիղճ կերպով այդ նամակները ներկայացնում են որպես զրպարտչական դիմումներ: Ինչո՞ւ դելեգատները չեն պահանջում, որպեսզի հենց այստեղ հրապարակվեն նամակները: Թե չէ, պարկի մեջ են գցել մի անմեղ ու ազնիվ էակ ու հայտարարում են. «Ներսում գող կա, ծեծե՛ք»:

Դահլիճը եռում է. — Նամակներն ընթերցե՛լ: — Պահանջում ենք, որ տեղն ու տեղը կարդա՛ք նամակները:

Մի կերպ լռեցնում են դահլիճը, և Շաքարյանը շարունակում է.

— Կոնֆերանսի նախագահության խղճին եմ թողնում նամակների հրապարակման հարցը: Բայց ես չեմ կարող չասել հետևյալը: Մենք՝ տասներեք կոմունիստներս, մեր մարզի անտանելի վիճակի հարցով դիմել ենք կուսակցության Կենտրոնական Կոմիտեին, ա՛յն կուսակցության, որի անդամներն ենք ինքներս: Մենք չենք դիմել ուրիշ որևէ տեղ: Մենք մեր ցավոտ հարցերը բամբասանք չենք դարձրել: Բոլորին է հայտնի: Առաջին նամակում բերված փաստերն ու քննադատված երևույթները տարիների, տասնամյակների պատմություն ունեն: Նրանք միշտ եղել են փակ ու բաց ժողովների քննության նյութ: Նրանք քանի՛ անգամ ներկայացվել են հանրապետության ղեկավարներին՝ որպես դիմում, որպես պահանջ, որպես

բողոք այն եղանակներով, որ ընդունված են մեր երկրում: Սակայն այդ ղեկավարներից մենք դատարկ խոստումներից ու սուտ եղբայրության երդումներից բացի ոչինչ չենք տեսել:

Ապա պատմում, մեկնաբանում յուր փաստերն ու թվերը հիշելով՝ ներկայացնում է նամակների բարձրացրած հարցերը:

— Ահա այս է նամակների բովանդակությունը: Մենք ցավով ու վրդովմունքով գրել ենք այս մասին: Եվ դրա համար մեզ նացիոնալիստ են համարում: Ղարաբաղում նացիոնալիստ չկա: Նացիոնալիզմը փնտրեցեք Ադրբեջանի ղեկավարության մեջ, որը չի ցանկանում բավարարել մեր ինքնավար մարզի կենսական ու հոգևոր պահանջները:

Մենք՝ Ադրբեջանում ապրող կոմունիստներս, միշտ հպարտացել ու հպարտանում ենք Բաքվի 26 կոմիսարների ինտերնացիոնալիստական ավանդներով: Երբ խոսք է լինում եղբայրության ու այլասիրության դաստիարակելու մասին, մենք ոգևորությամբ օրինակ ենք բերում 26 կոմիսարների համատեղ կյանքն ու պայքարը՝ հանուն նոր հասարակարգի կառուցման: Դա պատմություն է, ոչ ոք չի կարող մոռանալ կամ ուրանալ: Բայց պատմությունն առաջ է գնացել: Եվ այսօր 26-ի ինտերնացիոնալիստական ավանդներից ի՞նչ է մնացել: Ասացեք, խնդրեմ, Ադրբեջանական հանրապետության ներկա կառավարության ու կուսակցական Կենտրոնկոմի ապարատում Ադրբեջանում բնակվող ազգերի քանի՞ ներկայացուցիչներ կան: Այդ ինչպե՞ս է, որ Լեռնային Ղարաբաղում համարյա ռուսներ չկան, բայց կուսակցության մարզկոմի երկրորդ քարտուղարը ռուս է, ադրբեջանցիները կազմում են 10 տոկոս, բայց մարզխորհրդի գործկոմի նախագահի տեղակալն ադրբեջանցի է, իսկ հանրապետության կենտրոնական ղեկավար մարմիններում այլևս հայ կադրեր չկան: Չէ՞ որ Ադրբեջանում բնակվում է կես միլիոն հայ: Հայ կադրերն արհամարհվում են, որի հետևանքով էլ նրանց լավագույն ներկայացուցիչները թողնում և հեռանում են հանրապետությունից: Ա՛յ, սա՛ է նացիոնալիզմը:

Մենք մեր նամակներում պահանջել ենք, որպեսզի այս հարցերն ավելի արագ ու ճիշտ լուծելու համար Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը, որպես հայաբնակ և Հայաստանի սահմանակից երկրամաս, վերամիացվի նրան, քանի որ ազգային կառավարության համար ավելի հեշտ է ղեկավարել տվյալ ազգի ժողովրդին:

Եթե մեր հանրապետության և մարզի որոշ ղեկավարներ գտնում են, որ դա նացիոնալիզմ է, ապա թող նրանք ասեն, թե որն է ինտերնացիոնալիզմը: Նրանք մոլորապաշտներ են և ջուր են պղտորում:

Պատմում են, որ դահիճը մի քանի անգամ երկարատև ու բուռն ծափահարություններով իր հավանությունն ու համերաշխությունն է արտահայտել ելույթի ժամանակ: Եվ նախագահությունը, այդ ռեակցիայից սարսափած, իսկույն ընդմիջում է հայտարարել, չնայած նիստից չէր անցել 40—45 րոպե:

Ընդմիջումից հետո ամբիոն են բաց թողնվել հատկապես այդպիսի նպատակների համար մարզված դեմագոգները՝ հնացած կոմունիստ Արմո Սողոմոնյանը, որին տարիներ առաջ շրջկոմի քարտուղարությունից խայտառակաբար հանել են տգիտության ու կաշառակերության համար: Շոշ գյուղի կոլխոզի նախագահ Արշավիր Գալստյանը: Վերջինս, իր ազգակից Գր. Գալստյանի պես վիրավորված, մի անգամ Գուրգեն Գաբրիելյանի ուղեկցությամբ մտել էր մոտս, գանգատվում էր. «Ինչո՞ւ նամակը չեք տվել ստորագրեմ, մի՞թե ինձ չեք վստահում: Համենայն դեպս իմացած եղեք, որ մի ամբողջ կոլխոզ կազմ ու պատրաստ կանգնած է ձեր թիկունքում և սպասում է ձեր ձայնին կամ նշանին»:

Սրանք իրենց ելույթներում դատապարտել են նամակները, կոչ արել խստագույն պատժի ենթարկել ստորագրողներին: Ապա կոնֆերանսի բանաձևի մեջ հատուկ կետ է ընդունվել նամակների դեմ, մերժել Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու տրամադրությունը՝ որպես նացիոնալիստական քայլ:

Վերադարձել եմ գրողների համագումարից:

Հեռախոսի զանգ: Ընկալուչը վերցնում եմ, ձայնը ճանաչում: Նորից զանգ: Վերցնում եմ:

— Մելքումյանն է խոսում:

— Ի՞նչ է պատահել, սի՞րելի դու ինձ ասելիք էլ ունես, — նորից ձգում եմ:

Երկու օր անց Բոժինյանն ասում է.

— Մելքումյանի մոտ էի: Պատմեցի համագումարի մանրամասները: Զայրացած է, մեր դեմ ցուցաբերված վերաբերմունքից և խոստացել է բողոքել Կենտկոմի ղեկավարությանը: Ուզում է քեզ հետ զրուցել: Ինչո՞ւ ես հրաժարվում:

Մտածում եմ, որ կարող է մարզային կոնֆերանսի որոշման մեջ նա մտցնեն նամակի դատապարտման զառանցանքը: Մի անգամ էլ երբ զանգում-առաջարկում է հանդիպել, գնում եմ:

— Կարծում ես՝ ինձ համար հե՞շտ է այս մորթու մեջ ապրել: Զանգում են, մտնում են, երեսիս ամենաանվայել խոսքեր են շպրտում: Սպառնալիքներ են տալիս:

— Ամեն մարդ, վաղ թե ուշ, իր ցանածի պտուղներին է արժանանում: Քաղաքային կուսակցական կոնֆերանսի բանաձևի մեջ էլ մտցրիք: Է՛լ ինչ կա պլանավորված:

— Շաքարյանն է մեղավոր: Խոսած չլիներ, հարցը չէր բարդանա...

— Դա քո՛ իմանալու բանն է: Բայց շուտով մարզային կուսակցական կոնֆերանսն է լինելու: Այնտեղ որտեղ խոսք լինի մեր մասին՝ ելույթներում կամ որոշման մեջ, այն ժամանակ մենք ուրիշ տեսակ կգործենք:

Խոստանում է քաղաքային կոնֆերանսի բանաձևի խմբագրման ժամանակ նամակները դատապարտող կետը հանել, ապա այնպես անել, որ մարզային կոնֆերանսում ոչ մի խոսք չլինի մեր ու նամակների մասին:

Խոստանում էր Գր. Ստեփանյանին դարձնել պետական դրամատիկական թատրոնի դիրեկտոր: Կանչում են, պայմանավորվում, երևի մեկ էլ հիշում Ստեփանյանի հեռագիրը ԽՄԿԿ Կենտկոմին և զղջում խոստման համար:

Գրիգորը դեռ անգործ է: Հույս էլ չկա, թե գործ կունենա: Չէ՛, Պալոնյանի խաղը պիտի լրացնել, եթե ուզում ես քաղցած մնալ, արդարություն որոնիր:

Նա մի քանի ամիս անգործ թափառելուց հետո փոխադրվեց Երևան:

Մի տարի հետո, 1966 թ. ամռանը, արցախահայությունը վերստին բարձրացրել էր իր ազգային ինքնորոշման, իր քաղաքական իրավունքների պաշտպանության համար: Շուրջ 50 հազար ստորագրություններով համախոսական դիմումներ հասան երկրի Գերագույն խորհուրդ, ԽՄԿԿ Կենտկոմ ու Մինիստրների խորհուրդ: Նման թղթեր էին գնացել նաև Երևանից, Հայաստանի տարբեր շրջաններից, Խորհրդային Միության զանազան քաղաքներում բնակվող հայերից:

Երկրի ղեկավարներն ուշադրություն դարձրին աշխատավորական զանգվածների, ամբողջ հայության կամքի այդ բուռն ու միասնական արտահայտությանը: Եվ ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարությունը 1966 թ. օգոստոսի 8-ին ընդունեց որոշում, որով հանձնարարում էր Ադրբեջանի ու Հայաստանի ղեկավարներին (Ադրբեջանից՝ Ախունդով, Ամիխանով, Իսկենդերով, Հայաստանից՝ Քոչինյան, Մուրադյան, Հարությունյան)՝ համատեղ ջանքերով քննել Լեռնային Ղարաբաղի Խորհրդային Հայաստանին վերամիավորելու հնարավորությունը և իրենց առաջարկությունները ներկայացնել ԽՄԿԿ Կենտկոմ՝ հարցի վերջնական լուծման համար:

Օգոստոսի 10-ին այդ որոշումը ես տեսել ու կարդացել եմ ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ա. Ե. Քոչինյանի առանձնասենյակում:

Երևի ոչ ոք ի վիճակի չլինի պատկերացնել այն խելագար երջանկությունը, որ այդ օրն ինձ էր պաշարել: Հավատում էի աչքերիս, սակայն և վախենում անագորույն բախտից, որը մեզ միշտ թիկունք է դարձրել:

Մենք երկար խոսեցինք անելիքների, ձեռնարկվելիք միջոցների ու յուրաքանչյուրիս պարտականությունների մասին: Քարտուղարը շատ էր լավատես և արդեն ծրագրած ուներ առաջիկա կարճ ժամանակում Ղարաբաղի համար, այդ զարկված ու զրկված աշխարհի համար իրականացվելիք վիթխարի միջոցառումներ: Ասում էր. «Մեկ տարվա ընթացքում Զոդից Ստեփանակերտ երկաթգիծ կանցկացնենք, և Արցախը կփրկվի շնչահեղձ լինելուց»:

Պայմանավորվեցինք, որ երկու օր հետո Գորիսում հանդիպեն ինքն ու Ղարաբաղի կուսակցական մարզկոմի քարտուղար Մելքումյանը և պայմանավորվեն առաջիկա անելիքների շուրջ: Քոչինյանը համոզված էր, որ գործի հաջողությանը մեծ օժանդակություն կլինի, եթե մարզի ղեկավար կազմակերպությունները (մարզկոմ, դեպուտատների մարզխորհուրդ) որոշումներ ընդունեն՝ արտահայտելով վերամիավորման իրենց կամքը:

Ես թռա Ստեփանակերտ և Մելքումյանի հետ պայմանավորվեցի իր ու Քոչինյանի հանդիպման մասին:

Մելքումյանն, իհարկե, գիտեր Կենտկոմի քարտուղարության որոշման մասին. մեկ օր առաջ կուսակցության Ադրբեջանի ԿԿ երկրորդ քարտուղար Ելիստրատովն էր զանգել և առաջարկել, որ որոշմամբ արտահայտեն իրենց վերաբերմունքը:

— Ես ասացի՝ «Կուսակցությունն ինչպես որ հարցը լուծի, մենք համաձայն կլինենք», — նա այսպես հաղորդեց Ելիստրատովին տված իր պատասխանը:

...Մելքումյանը Գորիսից վերադարձավ՝ որոշած լինելով վճռական որևէ քայլ կատարելուց հրաժարվել:

— Դուք պայմանավորվել էիք, որ հանդիպեք ես ու Քոչինյանը,— ինձ այսպես բացատրեց նա: — Սակայն Գորիս էր եկել Մինիստրների խորհրդի նախագահ Բադալ Մուրադյանը: Հնարավոր է, որ Քոչինյանն այնքան էլ չի հավատում գործի հաջողությանը: Այս դեպքում մենք ինչպե՞ս կարող ենք մարզային կազմակերպություններին հարվածի տակ դնել[313]:

Սակայն հարցի լուծման հնարավորության լուրն իսկ բավական եղավ, որպեսզի ամենակարճ ժամանակում ոտքի կանգնի, ցնծա ամբողջ մարզը: Չէ՞ որ, եթե մարզկոմի կարծիքն անհրաժեշտ է Կենտկոմին, ապա առավել ևս անհրաժեշտ պետք է լինեն բնակչության կարծիքը, նրա ցանկությունն ու կամքը: Այսպես էլ տարերայնորեն սկսվեց նոր համաժողովրդական-դիմումների առաքումը Մոսկվա: Այն դիմումների, որոնցով ղարաբաղցիներն իրենց ցնծությունն էին արտահայտում ստացված հիշարժան լուրերի առթիվ և հայտնում էին իրենց երախտագիտությունը կուսակցության ու կառավարության հանդեպ:

Տառացիորեն մի քանի օրվա ընթացքում նման դիմումներ են դրվել, ստորագրվել, Մոսկվա ուղարկվել մարզի բոլոր հիմնարկություններից ու ձեռնարկություններից, կոլխոզներից ու խորհրդատնտեսություններից:

---

[313] Վերջերս Քոչինյանը հրապարակեց այն օրերի իրադարձությունների մասին իր հուշերը, որոնցում որոշիչ նշանակություն է վերագրում Գ. Մելքումյանի անվճռական դիրքին, իբր, եթե նա մարզկոմի ու մարզխորհրդի որոշում ընդունած լիներ, ապա դա մեծապես կօգներ հարցի դրական լուծմանը: Չի ընդունվել, դրա համար էլ հարցը տապալվել է (տե՛ս «Գարուն», 1989, հ. 7, էջ 93): Անշուշտ, այստեղ չափազանցված է մարզային ղեկավար կազմակերպությունների և առաջին քարտուղարի դերը, և ստորինները, նույնիսկ մակարդակական բարձրագույն ղեկավար «ստորինները», լրիվ գերագույն կամակատարներն են:
Գուրգեն Մելքումյանի դիրքն այս պարագային և մեկ տարի առաջվա իրողություններում՝ լոկ բարոյական նշանակություն ուներ և այն հենց այս տեսակետից էլ պետք է գնահատել:
(Ծանոթությունը գրվել է 1989 թ. վերջին):

Չի կարելի կասկածել, որ այդ դիմումների տակ ստորագրել է Ղարաբաղի հասուն ամբողջ բնակչությունը:

Այն ժամանակ այդ համաժողովրդականին մեծ նշանակություն էր տրվում: Երևանում գիտական ու ստեղծագործական մտավորականությունն այնպես խանդավառված էր, ասես եկել է վճռական ժամը, և ամեն մի թերացում կարող է տապալել տասնամյակների երազանքի իրականացումը: Պրոֆ. Սողոմոն Սողոմոնյանը՝ մեր հին բարեկամը, վեր էր կացել եկել, թե՝ ուղարկիր որևէ գյուղ, գնամ ստորագրություններ հավաքեմ: Բացատրեցի, որ ստորագրությունները հավաքվում են, ինչպես պետք է: Հանգստացրի, ուղարկեցի Մարդակերտի շրջկոմի առաջին քարտուղար Արամ Գրիգորյանի մոտ: «Թարթառի ձորում ժամանակ անցկացրեք, ևս կգամ»:

Հաջորդ օրն էլ եկան Պարույր Սևակն ու նկարիչ Սարգիս Մուրադյանը: Նրանց ևս ուղարկեցի Թարթառի ձորը:

Միսակ Սողոմոնյանն ու Կամո Դանիելյանն գործից հեռու պահել չեղավ: Այդ պատճառով էլ Գուրգեն Մելքումյանը երեկոյան տուն զանգեց, թե.

— Ա՛յ Բագրատ, տղերքն այդ ի՞նչ են անում:

— Ո՞ր տղերքը:

— Միսակն ու իր ընկերը: Սեյդիշենի գյուղամիջում սեղան են դրել, անցուդարձողներին քաշում են, թե ստորագրեցե՛ք:

— Ոչի՛նչ, կասեմ՝ էլ չեն անի:

Մինչև ասեի, նրանք հավաքած բերեցին Սեյդիշենի ու հարևան գյուղերի ծրարները: Իսկ Երևանում մեր ծանոթին ծրարներին էր սպասում մեծահարգի մաթեմատիկոս Նիկոլ Գասպարյանը, որպեսզի անմիջապես ինքնաթիռով հասցնի մոսկվաբնակ իր տղային, և նա էլ ձեռաց հանձնի երկրի ղեկավար մարմիններին:

Եվ այս, և նախորդ անունները հիշում եմ երախտագիտությամբ, բայց և անհուն ցավով. նրանցից շատերն այլևս չկան: Գասպարյանը, այդ ծեր ու հիվանդ մարդն ինչպիսի՜ խանդավառությամբ էր կատարում իր գործը և ինչպե՜ս էր երազում էր երանելի օրը... Թարթառի ձորում Պարույրը գինով էր և հաճարի ծառի տակից մի բուռ հող էր առել, երեսին էր քսում. «Չմեռնենք, մինչև այն օրվան արժանանանք...»: Էլ չեմ խոսում մեր Լազր Գասպարյանի, Գրիգոր Ստեփանյանի, Սողոմոն Սողոմոնյանի, այս գործում հիշված ու չհիշված տասնյակ ու հարյուրավոր երազողների մասին... Նրանք հավատում էին այն օրվան, հավատում էին, և վառվեցին իրենց հավատի համար...

Երևանն ապրում էր «վերևից ստացվելիք» պարգևի ցնծությամբ: Սակայն և գործ էր կատարում: Նախապատրաստում էր նրա բերելիք հոգսերին:

Ես չեմ մոռանում Գևորգ Տեր-Ղազարյանի ու Բագրատ Մուրադյանի խանդավառ մասնակցությունն այն օրերի եռուզեռին: Առաջինը Մոսկվայում, բարձր պաշտոնեության մեջ ունեցած իր բարեկամների հետ սերտ կապեր ուներ և գիտեր հարցին առնչվող յուրաքանչյուր արդյունք: Իսկ Մուրադյանը մտմտում էր իր անելիքները, համարյա ամեն օր կապված էր Արցախի հետ (մեր միջնորդ օղակը Հայկարամ Ութմազյանն էր, որ իր պարտականությունը կատարում էր բացառիկ եռանդով):

Գործողությունների հետագա ընթացքը, սակայն, դասավորվեց ընդդեմ հարցի դրական լուծման: Պատմում են, որ Ադրբեջանի ղեկավարները սպառնալից բողոքներով ԽՄԿԿ Կենտկոմ են գնացել, «ապացուցել», որ Լեռնային Ղարաբաղը միայն Ադրբեջանի կազմում կարող է կյանք ունենալ, հակառակ դեպքում՝ կապստամբի ադրբեջանական ժողովուրդը և, որ ամենակարևորն է, խորհրդային իշխանության դեմ թշնամաբար կտրամադրվի մահմեդական Արևելքը:

Հայաստանի ղեկավարները դանդաղորեն ընթացան միայն դեպքերի ետևից: Այսինքն՝ եթե ադրբեջանցիները բողոքով, սպառնալիքներով ու տագնապի աղաղակով էին գործում Մոսկվայում, իրենք ստիպված եղան միայն արդարանալ հակառակորդի լպիրշ մեղադրանքների դիմաց:

Ինձ հայտնի է, որ Սիմոնովն ու իր գործակիցներն այս անգամ ևս օգտվել են Ա. Միկոյանի ծառայությունից: Նրա և հատկապես Սուսլովի ստորություններն են օգտագործել լուծման հրաշալի հեռանկարով բացված հարցի դեմ:

Հայտնի է այս բոլորի վերջը:

Ադրբեջանի հաղթանակած ղեկավարները (Սիմոնով, Ալիխանով, Իսկանդերով) պարտության Ղարաբաղին հայտարարեցին խաչակրաց արշավանք, որի արտահայտությունը դարձան մարզի հայության նկատմամբ պարբերաբար նյութվող նոր ամենաանօրինակի չարագործությունները:

Երևի թե արցախցի այլախոհները Խորհրդային Միությունում առաջիններից էին, որ ենթարկվեցին պաշտոնական շրջանների հալածանքներին: Սակայն, ի տարբերություն ուրիշ վայրերում հալածվող բախտակիցների, որոնք ամեն պարագայում ունեցել էին նաև պաշտպաններ ու քողարկված հովանավորներ, իրենք մեծ մասամբ զուրկ էին բարոյական ու նյութական օժանդակությունից: Երբ ինձ ազատել էին աշխատանքից, անմիջապես էլ արգելեցին պիեսիս բեմադրությունը մարզային թատրոնում, իմ դեմ փակեցին մարզային թերթի էջերը, իսկ գրքի տպագրության մասին մտածելը կլիներ արդեն ցնորաբանություն:

Ինձնից առաջ նույն բախտին էին արժանացել բանաստեղծ Բոգդան Ջանյանը, թատերագետ ու լրագրող Գրիգոր Ստեփանյանը: Սերգեյ Շաքարյանի հետ կատարված փաստի մասին պատմեցի վերը:

Ցավալին այն էր, որ այս հալածյալները, հարկադրված լինելով փոխադրվել Երևան, այստեղ ևս արժանանում էին նույն վերաբերմունքին: Գրիգոր Ստեփանյանը բոլորից շուտ էր փոխադրվել և ընտանիքը պահելու համար պատրաստ էր կատարել ամեն տեսակ աշխատանք, որը նրան ոչ ոք չէր տալիս: Այդ «ոչ ոքի» մեջ էլ՝ նույն այն բարձրապաշտոն «հայրենասերները», որոնք շարժման թեժ օրերին ոգևորում էին, սրտապնդիչ խոսքեր ասում և, իբր, պատրաստ էին իրենց կյանքը պարգևել շարժմանն ու նրա ղեկավարներին:

Սակայն մեծ բարեբախտություն է, որ ամեն տեղ էլ կան բացառություններ, և նրանք անմիջապես ասպարեզ են գալիս, իրենցով լրացնում հուսահատեցնող դատարկությունը:

Երբ Գրիգոր Ստեփանյանի համար այլևս ոչ մի դուռ չէր մնացել, ես ինքս գնացի հանրահայտ հեռվից ծանոթ Ջոն Կիրակոսյանի մոտ (նա նոր էր նշանակվել Ռադիոկոմիտեի նախագահ), և բացատրելու կարիքն անգամ չզգացվեց: Նույն օրն իսկ Ստեփանյանն աշխատանքի էր:

Բոգդանին էլ Ջոնը տեր կանգնեց, երբ այդ իսկական բազմաչարչար մարդը մեր գրական ու լրագրական ծանոթ-բարեկամների դռները երկար ու ապարդյուն ծեծել էր ու մնացել դուրս:

Ստեփանակերտի քաղխորհրդի գործկոմի նախկին նախագահ Սերգեյ Շաքարյանն իր բախտը փորձել էր Երևանի մեծ ու փոքր բազմաթիվ հիմնարկներում: Նույնիսկ հանրապետության բարձրագույն ղեկավարներն զբաղվել էին նրա հարցով՝ չխնայելով իրենց ջրիկ խոստումները: Սակայն ստիպված եղավ չնչին մի աշխատավարձով գործի անցնել էլեկտրացանցի ինչ-որ բաժանմունքում… Մինչև որ դիմեցինք մի «շարքային» ղեկավարի՝ Սպանդարյանի կուսշրջկոմի քարտուղար Մուսայել Քոչարյանի օգնությանը:

Տղերանց հետ հաշիվները մաքրելուց հետո «զբաղվեցին» ինձնով: Մենակ էի մնացել, համարում էին, որ այստեղ դժվարություն չպետք է ունենան: Ըստ երևույթին ինքս էլ «օգնեցի», որ խնդիրը հեշտանա: Մի պիես էի գրել, տվի Ստեփանակերտի դրամատիկական թատրոնին: Եվ այնտեղ առանց պայմանագրի, առանց հանրապետության կուլտուրայի մինիստրության թույլտվության, որ պարտադիր էր նման դեպքերում, կարճ ժամանակ հետո

բեմականացումը պատրաստ էր, աֆիշներն ազդարարում էին առաջին ներկայացումը: Հենց այդ օրերին էլ Ստեփանակերտում հայտնվում է Ադրբ. ԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Վալի Ախունդովը, և, փողոցներում տեսնելով աղմկարար աֆիշները, հարցնում-իմանում է ամեն ինչ, զարմանում իրականացվող դավադրական աղետով, մանավանդ, որ պիեսի վերնագիրն իսկ բորբոքիչ շատ բան է ասում՝ «Ո՞ւմ հետ ես դու»: Ասում են՝ գազազած Ախունդովը մեր ղեկավարներին հարցրել է.

— Այդ ձե՞զ է հարց տալիս, — հետո էլ. — Նա դեռ այստե՞ղ է և գործո՞ւմ է:

Անկասկած դա հանձնարարություն էր՝ այնպես անել, որպեսզի նա այլևս այստեղ չլինի և չգործի: Եվ հասկանալի էր ամեն ինչ. մի ժամ չանցած աֆիշները պոկոտվում են, թատրոնի ղեկավարները կանչվում են մարզկոմ, որպեսզի պատասխան տան, բացատրեն, թե ինչպես է պատահել, այդ Ուլուբաբյանն անարգել անց է կացրել իր հերթական դիվերսիան:

Փորփրել, հայտնաբերել էին նաև ուրիշ նոր զանցանքներ: Օրինակ, մարզկոմի երկրորդ քարտուղար Կաստրյուկինը զանգեց, թե.

— Ասում են՝ քաղաքում տարածված է ինչ-որ Մագդա Նեյմանի հակահեղափոխական գիրքը Ղարաբաղի մասին, և ակունքն էլ դուք եք:

Ասում եմ.

— Այնտեղ հակահեղափոխական ոչինչ չկա, մի դար առաջ գերմանացի մի կին հիացած է եղել Ղարաբաղի մելիքների սխրագործություններով և այդպես էլ գրել է:

— Դե՛, ուղարկիր, կարդամ, տեսնեմ՝ այդ ինչպիսի հիացմունք է, որ ուրիշներին թվում է հակահեղափոխություն,— կարգադրում է մարդկոմի քարտուղարը, և ես ասում եմ.

— Չեմ ուղարկի:

— Ինչո՞ւ չեք ուղարկի:

— Կարդաք, չեք հասկանա:

— Ո՞նց թե:

— Այդպես: Ձեզ նմանների համար չէ գրված:

Սրանով էլ ավարտվում է մեր զրույցը, բայց ես համոզված եմ, որ այն լոկ սկսվում է:

Ես, իհարկե, հիացած չէի Մագդա Նեյմանի պարզունակ ու մակերեսային գրքով: Սակայն նրա տրամադրությունը, օտարի խանդավառ փառաբանությունը մեր նախնիների մասին, դատողությունները հայոց ճակատագրի մեջ Արցախի խաղացած փառահեղ դերի վերաբերյալ՝ չէին կարող իրենց բարերար ազդեցությունը չունենալ մեր ժամանակակիցների թմրած ուղեղների վրա, չարթնացնել այն հպարտ ինքնաճանաչումը, որ, ըստ իս, անհրաժեշտ էին մեր օրերի արցախցիներին: Եվ Երևանի Մյասնիկյանի գրադարանի միջոցով Լենինգրադից բերել էի տվել, մեքենագիր օրինակներով տարածել Ստեփանակերտում...

Կաստրուլինի հետ ունեցած զրույցից մի կես ժամ անց իմ աշխատասենյակում հայտնվում է մարդկոմի մյուս քարտուղար Ալեքսանդր-Շուրա Հարությունյանը՝ իր հետ բերած լինելով այն մեղադրանքը, որ ես մարզի կուսակցական ղեկավարին ասել եմ՝ դուք չեք հասկանա ձեր կարդացած գիրքը:

— Ի՞նչ է, դու կարծում ես՝ ինքդ կհասկանա՞ս,— կատակով պատասխանում եմ իր կշտամբանքին:

— Դե՛, տուր, կարդամ, տեսնեմ,— ինքն էլ, իբր, չվիրավորված՝ խոսում է, և ես սրան սատանայի գիրկն եմ ուղարկում՝ արդեն ուշ չդարձնելով ոչնչի վրա, որովհետև գիտեի, որ սրա կարգադրությամբ մի ամիս շարունակ ստուգել են բոլոր այն հիմնարկների

հաշվապահությունները, որոնցում ինքս եմ աշխատել՝ սկսած 1949 թ. ապրիլից: Եվ երբ զեկուցել են, թե ֆինանսական ոչ մի խախտում չկա, մոլոտացել է. «Կաշառված եք, ո՞նց կարող է լինել, որ հիմնարկի ղեկավարը 18 տարվա ընթացքում որևէ խախտում չանի», և կարգադրել է, որ հորինեն հարմար մի բան...

Հաջորդ օրն իսկ կուսակցության մարդկոմի բյուրոն քննեց իմ հարցը: Դարձյալ ընդլայնված, դարձյալ շրջկոմների ու շրջգործկոմների, մարզային կազմակերպությունների ղեկավարների մասնակցությամբ: Հակոբ ու Մուշեղ Օհանջանյանները, Կաստրուլինն ու իր կապած-բաց թողած շարքային զրպարտիչները մի ամբողջ օր «մշակում էին» ինձ: Բյուրոյի անդամ, ՆԳՄ մարզային բաժնի վարիչ Արտաշես Պողոսյանը վերջում, ինձ պաշտպանելով հերքյուրված զրպարտություններից ասաց.

— Կյանքումս դեռ չեմ տեսել այսքան անարդար ու անազնիվ ժողով:

Իսկ Մարտակերտի շրջկոմի քարտուղար Յաշա Բատմանը, որ ելույթների ընթացքում հաճախ էր անհանգիստ նկատողություններ արել, խոսեց այնպես վրդովված, որ այսօր էլ աչքիս առաջ է.

— Մենք՝ մասնակիցներս, միայն թամաշաչի ենք, ո՛չ վճռական ձայն ունենք, ո՛չ էլ պատասխանատու ենք: Իսկ դուք՝ բյուրոյի անդամներդ, ի՞նչ պատասխան պիտի տաք այն ժողովրդին, որ ճանաչում է այդ մարդուն...

Վճիռ հանելու համար երկու առաջարկություն կար, մեկը՝ վտարել կուսակցությունից, որ իրար հերթ չտալով քվեարկության էին ներկայացրել Հակոբ Օհանջանյանը, Կաստրուլինն ու Շուրա Հարությունյանը, և մյուսը՝ ազատել աշխատանքից, որ մարդկոմի առաջին քարտուղարի առաջարկությունն էր՝ իբրև չարիքներից փոքրագույնը:

Առաջինը չանցավ, որովհետև բյուրոյի ինն անդամներից նրա համար ձայն տվին չորսը: Իսկ մյուս հինգը համերաշխ ու թեթև սրտով քվեարկեցին աշխատանքից ազատելու օգտին, որպես թե ինձ բարություն էին անում:

Անգործ մնալով՝ Ստեփանակերտում մնացի մինչև գարուն, ավելի քան կես տարի: Այդ ամբողջ ընթացքում չհաջողվեց որևէ բան տպագրել մարզային կամ Հայաստանի թերթերում: Երևանում էլ արդեն ուրիշ տեսակ էին վերաբերվում:

Ես Երևան փոխադրվեցի լոկ նրանից հետո, որ Ստեփանակերտի իմ բարեկամներն ու նախկին գործընկերները նրբանկատ ու բարեկիրթ ձևով հասկացրել էին, թե իրենց համար այլևս անվտանգ չէ ինձ հետ շփում ունենալը:

Մինչ այդ էլ անգամ Լազր Գասպարյանն ինձ հաղորդել էր, թե իր բարեկամ համագյուղացին, որ ՊԱԿ-ի մարզային վարչության պետի տեղակալ էր, ասել է. «Ձեր այդ Ուլուբաբյանն ինչո՞ւ մարզից չի հեռանում»:

Լազրն ասել էր. «Շատ խնդրեցի, որ բացատրի, թե ի՞նչ է նշանակում այդ հարցը, չբացեց: Խնդրեց միայն ոչ մի տեղ այդ մասին խոսք չասել, մեկ էլ՝ որպեսզի դու մարզը թողնես, որքան հնարավոր է շուտ... Բաժանվելիս էլ ասաց՝ հայ մարդ եմ, զգուշացնելն իմ պարտքն էի համարում»:

«Հայ մարդու» զգուշացումը ինձ չէր կարող ստիպել, որ Արցախը թողնեմ: Արցախը, որից դուրս ես չէի պատկերացնում իմ կյանքը, նույնիսկ սովորական գոյությունը: Սակայն երբ իմ ընկերներից միայն մեկը համարձակվեց գիշերվա կեսին այցելել ինձ, մտնել իմ տունը և հեռանալիս էլ խեղճացած խնդրեց՝ «Այնպես չլինի, որ իմանան այս այցելության մասին», ապա և սա կրկնվեց մեկ ուրիշի կողմից մի քանի օր հետո, ես դառնորեն մտածեցի, որ մնալն ավելորդ է: Ոչ միայն վտանգավոր, այլև ավելորդ:

Երևանում առաջինն արժանացա Մինիստրների խորհրդի նախագահ Բադալ Մուրադյանի հոգածությանը: Կարծեմ Հայկարամ Ութմազյանն էր հաղորդել փոխադրվելուս լուրը... մի օր

էլ Գրողների միությունում հայտնեցին, որ Մինիստրների խորհրդի ֆոնդից ինձ բնակարան է հատկացվել:

Մուրադյանն Ութմազյանի Մամուլի կոմիտեին էլ տվել էր ինչ-որ բաժնի թե վարչության պետի միավոր, որպեսզի ինքս այնտեղ աշխատեմ... Սակայն այդ միավորը կուս. Կենտկոմի իրավասության տակ գտնվող պաշտոնացանկի մեջ էր մտնում, այնտեղ չէին համաձայնի ինձ նշանակել, և դրանով էլ աշխատանքիս հարցը փակվել էր: Մի տարի հետո էլ Հանրագիտարանի խմբագրությունում էին ուզում աշխատանք տալ: «Գործ» էի լրացրել, տարել: Հետո, սակայն, գլխավոր խմբագիր Աբել Սիմոնյանը, Հ. Ութմազյանի պես, մեղավոր-մեղավոր բացատրեց, թե չկարողացավ համաձայնեցնել Կենտկոմի համապատասխան ընկերների հետ:

«Համապատասխան» բաժնի վարիչի հետ ես զրույց ունեցա ամիսներ անց: Իբր, կանչել էր Անտոն Քոչինյանի կարգադրությամբ:

Մտածում էի, որ Քոչինյանն է կարգադրել, ուրեմն հարցը կլուծվի առանց դժվարության, մանավանդ, որ այդ բաժնում էլ իմ նկատմամբ մի առանձնակի հակակրանք չպետք է լինի:

Հենց վերջին օրերին վարիչը Գրողների միությունում հանդիպեց, բարև տվեց էր ու թե.

— Մենք մտածում ենք քո մասին:

— Շնորհակալ եմ,— ասացի,— դուք, որ մտածում եք, անպայման մի բան կստացվի՝ լավ կամ վատ:

Ես մոտավորապես գիտեի, որ երկու անգամն էլ իրենց է դեմ առել աշխատանքիս հարցը:

— Վատի մասին ինչո՞ւ ես մտածում:

— Ասում են՝ վատի մասին չմտածես, լավը չի գա:

— Գործ չունես ռեբուսների հետ:

— Ի՞նչ ռեբուս, ժողովրդական խոսքն եմ ասում:

— Ժողովրդական խոսք էլ ասում ես, կարծես կուսակցության կանոնադրությունում է գրված:

— Բայց ժողովրդական ու կուսակցական կանոնադրությունը կապ ունե՞ն իրար հետ:

— Որ ուզես, կունենան,— ժպտալով պատասխանեց երևի չցանկանալով շարունակել անիմաստ զրույցը:

Այս անգամ ամեն ինչ պարզ էր և խոսքը միանգամայն հասկանալի:

— Կարծում ես՝ կարող ենք աշխատանքի նշանակել, չէ՞նք նշանակում, փնթփնթաց նա: — Վերջապես պետք է նկատի առնել. այնտեղ քեզ աշխատանքից ազատել են Ադրբեջանի Կենտկոմի կարգադրությամբ: Եկել ես կուսակցական ծանր տույժով… Երկու անգամ առիթ է եղել, կարող էինք նշանակել, մեկ էլ ես ու քարտուղարը մտածեցինք, որ Բաքվում կիմանան ու աղմուկ կբարձրացնեն, — բացատրում էր և ուրախ-ուրախ ծիծաղում, ոնց որ երկու անգամ էլ հայ ժողովրդին փրկած լինեին ահավոր աղետից… Հետո լրջանալով՝ դարձյալ քթի տակ փնթփնթաց. — Ուրի՛շ բան, որ այդ կուսակցական տույժը հանված լիներ…

Իսկ Կենտկոմի բյուրոյի նիստին, երբ կուսակցական տույժս պիտի հանեին և կարդացին մարզկոմի որոշումն այն մասին, թե այն ինչի՞ համար է տրվել (մարդում ազգայնական գործունեություն ծավալելու, Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու առաջարկով հանդիսակալներ կազմակերպելու ենն, ևն), կարծեմ Բադալ Մուրադյանն էր, ընկերների համար լսելի արտահայտեց իր զարմանքը.

— Բա ափսո՛ս չէ այդպիսի նկատողությունը հանենք:

Ծիծաղեցին ու հանեցին:

Դրանից հետո էլ, հավանաբար, «արժեզրկվել» էի իբրև մեկը, որ այլևս տեղը չէ այն «ափսոսալի» նկատողության:

Պարույր Սևակի միջնորդությամբ Կուլտուրայի մինիստրությունում մի չնչին աշխատանք էին տվել (իբր թե խմբագիր էի և պարտավոր էի առավոտից իրիկուն հիմնավոր մերժումներ գրել դրամուրգների ապուշ պիեսների մասին):

Հետո էլ Գևորգ Հայրյանը (այն ժամանակ՝ Կինոյի հանրապետական կոմիտեի նախագահը) Համո Սահյանի ու Սերո Խանզադյանի երաշխավորությամբ նշանակեց Կինոստուդիայի սցենարական խմբի անդամ: Լավ խումբ էր. այնտեղ էին Հրանտ Մաթևոսյանը, Աղասի Այվազյանը, Զորայր Խալափյանը… Կեսօրվա դեմ գալիս էինք մեր հավաքատեղին, որ խարխուլ մի խուց էր… փողոցի հնամաշ շինությունների շարքում: Խոսում էինք դեսից-դենից, ամենից շատ Արցախի վիճակից ու ճակատագրից… Մի սցենար գրեցի Իսրայել Օրիի մասին: Հավանության արժանացավ: Նույնիսկ որոշեցին նկարահանել, և երբ Հրաչյա Քարամյանը գործի էր լծվել, դերասաններ էր փնտրում նկարահանումն սկսելու համար- Մոսկվայից ինչ-որ հանձնաժողով եկավ և սկսեց իմ սցենարը տակնուվրա անել:

Ինձ նորից մեղադրում էին ազգայնամոլության մեջ: Սցենարիստներն ասել էին՝ պետք է Հայաստանը միավորել, դարձնել միասնական, անորոշելի երկիր և դրանից հետո՝ միայն ընդունել Ռուսաստանի գերակայությունը: Իսկ թե ինչո՞ւ նախ միավորել, դրա պատասխանն էլ կար. բաժան-բաժան երկիրը հեշտությամբ կուլ կգնա օտարներին...

Հանձնաժողովն այս մեղադրանքը տարել էր Կենտկոմ, և այնտեղ Հայրյանին ներկայացրած ամենալուրջ դիտողությունն իմ մասին է եղել. «Էլի՞ նա: Հանի՛ր աշխատանքից, թող իր շատը քաշի մեզանից»:

Հայրյանն ինձ աշխատանքից չէր հանի և գրությամբ փրկեց սցենարական խումբը ցրվելուց:

Երբ ես արդեն պատմագիտական դիսերտացիա էի պաշտպանել ու աշխատանքի անցա Ակադեմիայի Պատմության ինստիտուտում, նորից Կինոստուդիա հավաքեցին սցենարական խմբի հին անդամներին, և, առանց ինձ, մարդիկ անցան իրենց հալալ աշխատանքին:

Հետաքրքիր ընթացք ունեցավ նաև իմ դիսերտացիան: Դեռ Լեռնափանսկերտում գիրք էի գրել իբրև պատասխան ադրբեջանցի պատմաբանների կեղծարարությունների, որոնք վերաբերում էին Արցախի հին ու նոր պատմությանը: Կոչվում էր «Արցախի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև 10-րդ դարը»: Պարույր Սևակն ու Ասատուր Մնացականյանը կարդացին, հավանեցին: Միասին գրախոսեցին, ներկայացրին Պետհրատին, նա էլ ուղարկեց տպարան, որպեսզի տպագրեն: Սակայն այնտեղ հասարակական-քաղաքական գրականության հարցերի համար պատասխանատու մեկը կանգնեց, թե «Միայն իմ գերեզմանի վրայով»: Իմ երեսին էր ասել: Համարյա նույնն էլ կրկնեց դիրեկտորի առանձնասենյակում:

— Քանի ես կամ, Պետհրատն այդպիսի գիրք չի տպագրի:

Չէր ասում՝ քանի ես այստեղ, Պետհրատում եմ, այլ՝ քանի ես կա՛մ:

Ձեռագիրս առա, գնացի տուն:

Դրանից հետո էր, որ Պարույրն ու Ասատուրը խորհուրդ տվին և ստիպեցին, որ այդ ուսումնասիրությունը պաշտպանեմ իբրև դիսերտացիա:

— Իսկապես տպագրել չի լինի, — վշտացած խոսեց Պարույրը, որ դառն փորձ ուներ. կալանքի տակ էր իր «Եղիցի լույսը»: — Տեսնո՞ւմ ես՝ ինչպես էլ մեծանշանակ ասել է. «Քանի ես կա՛մ»:

Դիսերտացիայի պաշտպանությունը տեղի ունեցավ արագ, մեծ հաջողությամբ, եթե չասեմ՝ աղմուկով: 1969-ի գարնանային այդ օրը համալսարանում այնքան հետաքրքրասերներ էին

հավաքվել, ասես քսան տարի հետո լինեինք. ցույցերից մեկն էր կամ կանխավ ավյուն էր փոխ առել նրանցից: Եվ զուր չէր, որ բոլշևիկյան զգաստ հոգիներից մեկը «ВАК» էր հեռագրել՝ հայտնելով, թե «Դա դիսերտացիայի պաշտպանություն չէր, այլ Երևանի ազգայնամոլ մտավորականության ցույցը եղբայրական Ադրբեջանի դեմ»:

«ВАК»-ն ուշադրություն չդարձրեց այդ հեռագրին (պարզ է, որ այն ժամանակ դեռ Մոսկվայում խիստ չէին հայ-ադրբեջանական հարաբերությունների կտրուկ սրումից): Արագ հաստատեցին: Խորշում էին Երևանում, և հաստատվելուց հետո անգամ աշխատանքի ընդունվելիս բավական քաշքշեցին, որովհետև չէին ուզում մոռանալ ոչ հեռավոր անցյալը: Բայց ինչո՞ւ միայն 69-ին: Հետագա տարիներին մոռացա՞ն: Նույնիսկ 1987-ին, արցախյան շարժման նոր, հզոր պոռթկումի նախօրեին, Պատմության ինստիտուտի կուս. սկզբնական կազմակերպության ժողովում 37-ի նշանավոր հերոսներից մեկն էր ինձ «մնացուկ»-ի մատը վրաս թափ տալով նախատում.

— Մենք լավ գիտենք, թե դու որտեղի՜ց ես եկել և ինչպե՜ս...

1965—66 թթ. դեպքերն Ադրբեջանի ղեկավարությանը հուշել էին, որ Արցախի հայությունը երբեք չի հաշտվելու իր վիճակի հետ: Ուրեմն պետք է գործել: Իսկ գործելու, իրենց հարցերը թուրքավարի-ադրբեջանավարի լուծելու մեծ փորձ արդեն ունեին: Հանրապետական ղեկավար մարմինների ներկայացուցիչները մարզ էին այցելում անսովոր շատ, և ամեն մի այցելությունից հետո մարզում անպայման հակահայկական չարագործություններ էին կատարվում: Մի կոլտնտեսության ոչխարապահական ֆերման էին քշում-տանում, մյուսի պահակին էին սպանում, երրորդի դաշտային օթևանը հրդեհվում էր, և հանցանքի հետքերը տանում էին հարևան ադրբեջանական շրջանը: Մարտունու շրջանի Կոլպատկինի խաղողագործական սովխոզում, գիշերային աշխատանքների ժամանակ, սպանել էին գլխավոր ագրոնոմին: Ամիսներ անց էլ սպանեցին նրա հաջորդին՝ Բենիկ Մովսիսյանին, 9 տարեկան որդուն: Պարզվեց, որ սպանությունների կազմակերպիչը գյուղի դպրոցի դիրեկտոր Արշակ Մամիկոնվն է: Դպրոցի պահակի օգնությամբ երեխային քարշ էին տվել, մտցրել նկուղը, խոշտանգել, գլխին մեխեր տնկելով սպանել:

Արշակ Մամիկոնվի հանցանքի նախաքննությունը տևեց ավելի քան մեկ տարի: Այդ ընթացքում մարզի տարբեր վայրերում տեղի ունեցան նոր սպանությունների դեպքեր, որոնցից չէր կարելի եզրակացնել, որ գործում է դիվային մի ծրագիր, որի նպատակն է հայերին ստիպել, որ հեռանան անտանելի դժոխք դարձած իրենց բնակավայրից: Մարդակերտի սովխոզի պահակին, նրա կնոջն ու երեխաներին վառել էին պահականոցում: Մարտունու շրջանի Նորշենի կոլտնտեսության երկու տրակտորիստների սպանեցին գիշերավարի ժամանակ: Շուշվա փողոցում օրը ցերեկով սպանեցին երիտասարդ մի հայի, Աղդամում՝ Ստեփանակերտի բնակիչ Զավադ Ավանեսյանի որդուն: Երկու դեպքում էլ սպանողները մնացին անհայտ, որովհետև ոչ ոք վկա չէր կանգնում, որ հանցագործի ինքնությունը պարզվի:

Իմիշլիում երեք հայ արհեստավորներ ադրբեջանցու համար տուն կառուցելիս են եղել: Տանտերը գիշերով բարձր լարման էլեկտրական հոսանք է միացրել քնած երեքին, և նրանք այլևս չեն արթնացել...

Շուշիում մոլեգնել էր մի բարբարոսություն, որին զոհ գնացին քաղաքի հայկական չորս գերեզմանատներն իրենց փառաշուք շիրմաքարերով, խաչքար-կոթողներով: Կարգը վերևից էր տրված: «Строитель» թերթի 1966 թ. փետրվարի 2-ի համարում ճարտարապետ մի ոմն Ք. Սևիրով «խորհուրդ էր տալիս» Շուշվա թոքերը փրկել գերեզմանական շրջապատից (բառացի՝ «Мертвые съели живых»), և վայրի խուժանը գործի անցավ շինարարական առաջնակարգ մեքենաներով:

Արշակ Մամիկոնվի դատավարության հանգամանքները ևս ցույց տվին, որ գործում է հրեշավոր մի ծրագիր: Նախ դատավարությունն անց կացրին (1967 թ. հուլիսին) բացօդյա,

Ստեփանակերտի ամառային զբոսայգու տարածքում, ապա մի քանի օր շարունակ զայրույթից վառվող հասարակայնության առաջ հայտնեցին, թե արնախում չարագործը դատապարտվում է ընդամենը 10 տարվա ազատազրկման: Երբ նրա կինն ու մյուս հարազատներն էլ արել էին հանդուգն հայտարարությունները («Անզգամ, պայմանվել ենք, տաս օր էլ չես նստելու», «քո կշռով մեկ ոսկի ենք ծախսել, դու հանգի՛ստ եղիր»...), հավասարակշռությունը կորցրած ժողովուրդը հարձակվեց, պահակներից խլեց հանցագործին ու նրա գործակցին և մի երրորդ սրիկայի, որը փորձել էր դեմ կանգնել ինքնադատաստանին: Երեքին էլ սպանեցին ու դիակները վառեցին զբոսայգում սարքած խարույկի վրա:

Վառված հանցագործների թաղումը կատարվեց հանրապետական փայլ ու շուքով: Այն գլխավորում էր Ադրբ. Մինիստրների խորհրդի նախագահ Ալիխանովը, որն իր հետ Բաքվից բերել էր երաժշտախումբ ու մոլլաներ: Իսկ հետո էլ կարճ ժամանակում կանգնեցնել տվեց արժանավոր գերեզմանակոթող՝ միաձույլ շիրմաքարի վերև բացված գիրք, որը խորհրդանշում է ազգի արժանավոր մտավորական հանգուցյալի գրքասիրությունը...:

Այս աննախադեպ տեսարանի հեռատես հեղինակները, այսպիսով, հասան իրենց նպատակին: Ղարաբաղի հայերը կատարել էին ինքնադատաստան, հակաօրինական մի արարք, որով ադրբեջանական շովինիստների ձեռքերն ազատվեցին կատարելու հայերի նոր զանգվածային կալանավորումներ և բռնադատումներ: Անմիջապես բանտերը նետեցին ավելի քան 50 մարդ, որոնցից ոմանք մահացան քաղցից ու խոշտանգումներից: Արշադ Մամեդովի մտերիմ, Ստեփանակերտի հիվանդանոցի բժիշկ Ա. Սբատովը մահացել տալով սպանեց միլիցիայի վարչության պետի տեղակալ, նախաքննությամբ Ա. Մամեդովի չարագործությունը մերկացրած Ս. Աբրահամյանին: Հիվանդանոցում, միանգամայն թեթև վիրահատության ժամանակ «մահացավ» նաև նախաքննության մյուս մասնակիցը Մարտունու դատախազ Հակոբյանը: Բաքվում հարցաքննության ժամանակ ծեծելով սպանեցին միլիցիայի մարզային վարչության աշխատակից լեյտենանտ Լևոն Հարությունյանին... Եվ այս ահավոր հանցագործությունները մնացին ոչ միայն անպատիժ, այլև նույնիսկ չգրանցված:

Այո՛, Ադրբեջանի շովինիստ ղեկավարներին հաջողվեց մինչև վերջ օգտագործել հատուկ ծրագրով կատարված տեսարանի ընձեռած բոլոր հնարավորությունները: Նախ վրեժ լուծեցին սպանված չարագործների համար. մեկի դիմաց տասը, ապա մարզի հայության համար ստեղծեցին չդադարող ահաբեկումների ու սարսափի մի մթնոլորտ, որի մեջ ոչ ոք այլևս չէր կարող ձայն բարձրացնել: Եվ հենց այս մթնոլորտում էր, որ հնարավոր դարձան հետագա չարագործությունները:

1973 թ. հոկտեմբերին Գուրգեն Մելքումյանին ազատեցին կուսակցության մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնից և նրա տեղը նշանակեցին Բաքվի Նարիմանովի շրջանից բերած ինչ-որ Բորիս Կևորկովի:

Կևորկովն ի՞նչ կապ ուներ հայկական ինքնավար մարզի հետ: Ո՛չ հայերեն խոսել գիտեր, ո՛չ էլ նույնիսկ երբևէ որևէ առնչություն էր ունեցել հայկական միջավայրի հետ: Հիմնականում գյուղական տնտեսությամբ զբաղվող այդ մարզի հետագա կյանքը պիտի ղեկավարեր մի մարդ, որը գյուղում հյուր էլ չէր եղել (մասնագիտությամբ, իբր թե, իրավաբան էր):

Նոր քարտուղարի գործունեության առաջին ամիսներն իսկ ցույց տվին, թե առաջնահերթ ի՞նչ ծրագիր ունի իրականացնելու և նրա իրականացման համար ի՞նչ միջոցներ ու եղանակներ է գործադրելու:

1974-ի փետրվարին Կևորկովը մարզգործկոմի նախագահի պաշտոնից ազատեց Մուշեղ Օհանջանյանին և տեղը դրեց Բաքվից բերած ինչ-որ Արամայիս թե Մայիս Ասլանովին: Օհանջանյանին, որին կարող էր տեղից չշարժել, սա հավատարմորեն կկատարեր Կևորկովի ու նրա հովանավորների հակահայկական ամենաստոր հրահանգները: Սակայն երևի թե «յան»-ով ավարտվող ազգանունը հիմնավոր պատճառ էր, որ վստահություն չներշնչեր, և դրա համար էլ նրան փոխարինեց Ասլանովը: Որ սուննիաթած ազգանուն ունենալը

Կևորկովի ու նրա հովանավորների համար կարևորագույն նշանակություն է ունեցել, դա կարելի է եզրակացնել մարզում կիրառված կադրային քաղաքականության հետագա ընթացքից. իրավապահ մարմինների ղեկավարներ դարձան Բաքվից բերած ինչ-որ Մուրադով, Ռագուբով, Սամեդով և այլ «ով»-եր:

Կևորկովն ու մյուս կլկորները սկզբնական շրջանում մարզի տնտեսության հարցերով համարյա չէին զբաղվում: Մշակույթի բնագավառը, լուսավորությունն ու ժողովրդական կյանքի մյուս ոլորտները նրանց հետաքրքրում էին այնքան, որքան կարող էին գլխացավանք պատճառել, այսինքն ծագող բոլոր հարցերը խլացնում էին հասկացնելով, որ գործուղված են միանգամայն ուրիշ խնդիրներ ունեցող մարդիկ են, հենց որ այդ խնդիրները կատարեն-վերջացնեն, թողնելու են, գնան:

Եվ երբ 1975 թ. մարտին Կևորկովի առաջնորդությամբ տեղի ունեցավ կուսակցության մարզկոմի պլենումը՝ կոչված լինելով քննելու և վճռելու մարզի համար ամենակարևոր նշանակություն ունեցող խնդիրը, տեղացիները, նույնիսկ պաշտոնական ոլորտի ու շատ ու շատ ներկայացուցիչներ, նոր հասկացան, թե նախընթաց շուրջ տարիուկեսի ընթացքում ինչի՛ են նախապատրաստվել Կևորկովն ու մյուս դրածոները:

Պլենումը գումարվել է մարտի 21-ին և քննարկել է միայն մեկ հարց՝ «Աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակության հետագա բարելավման ուղղությամբ Լեռնային Ղարաբաղի մարզային կուսակցական կազմակերպության խնդիրների մասին»:

Պլենումի շատ մասնակիցներ, մանավանդ մարզկոմի բյուրոյի տեղացի անդամները պատմում են, որ զեկուցումը գրվել է Բաքվում, Ադրբ. ԿԿ Կենտկոմի գաղափարական բաժնի և մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի ադրբեջանական մասնաճյուղի մի շարք աշխատողների մասնակցությամբ և մարզի կուսակցական կազմակերպությանն ու ամբողջ բնակչությանն է ներկայացվել իբրև վերադասի, այսինքն՝ ադրբեջանական բռնատիրության կարծիքն ու հրահանգը, որոնք մարզի կողմից պիտի ընդունվեին օրենքի տեղ և դառնային ուղեցույցներ: Զեկուցման սկզբից մինչև վերջ հորդել են սանձարձակ զրպարտությունն ու ատելությունը Հայկական ԽՍՀ ղեկավարության, հայ մտավորականների, առհասարակ հայ ժողովրդի ու ամեն հայկականի հանդեպ:

Ասում են՝ պլենումի նախօրյակին մարզկոմի բյուրոյի անդամները հավաքված են եղել, որպեսզի, ինչպես սովորաբար լինում է, լսեն, քննարկեն ու պլենումին ներկայացնելու համար երաշխավորեն Բաքվից բերած զեկուցագիրը: Բյուրոյի նիստում տեղացիներից ոմանք Կևորկովին զգուշացրել են, թե Հայաստանին վերաբերող «քննադատական դիտողությունները» (իրականում՝ սանձարձակ հարձակումները) կարող են գրգռիչ դեր խաղալ, առաջացնել «հարևան» հանրապետության ղեկավարության վրդովմունքն ու բողոքը, և այն ժամանակ վերևներում ստիպված կլինեն դա գնահատել իբրև սադրիչ գործողություն: Եվ Կևորկովն այսպես մտածողներին սաստելով ասել է.

— Հայաստանն ի՞նչ է, ովքե՞ր են նրա ղեկավարները, որ բողոքեն Բրեժնևի սիրելի Հեյդար Ալիևի դեմ: Ալիևն ինձ այս մոլուխին ուղարկելիս ասել է՝ «Ով որ քո զեկուցումից դժգոհ կլինի, թույլ տուր խելք ունենա հասկանալու, որ գործ ունի ինձ հետ»:

Եվ զեկուցումն ուղղություն է տվել պլենումի ամբողջ նիստին: Եթե Կևորկովը Հայաստանը համարել է մի հենադաշտ, ուր կուտակվում են արտասահմանյան իմպերիալիստական շրջաններից և մասնավորապես դաշնակցության «հակախորհրդայկական գաղափարները», այնտեղից էլ սողոսկում Լեռնային Ղարաբաղ՝ այստեղ թունավորելով աշխատավորության միտքն ու հոգին, ապա շատ ելույթ ունեցողներ էլ համապատասխան «փաստեր» ու «օրինակներ» են հրապարակել «հաստատելու» համար զեկուցման հիմնազուրկ ու անառարկա հայտարարությունները:

Զեկուցման հիմնական մասն է կազմել «Լեռնային Ղարաբաղի տեղի» հարցի «քննությունը»: «Որտե՞ղ պետք է լինի Լեռնային Ղարաբաղի տեղը» (չակերտների մեջ առնված այս և հաջորդ կապակցությունն ու խոսքերը բառացի մեջ են բերված «Սովետական Ղարաբաղ»

թերթի 1975 թ. մարտի 23-ի, 25-ի ու հետագա համարներից), — այսպիսի հարց է առաջ քաշել Կևորկովը և պատասխանելու համար կատարել հակապատմական, հակագիտական, պարզապես անտրամաբանական մարզանքներ, որոնք եթե մի կողմից շոշափում էին մարզի հին ու նոր պատմության դեպքերը, փաստերը, պատմական ու մշակութային հուշարձանները, մյուս կողմից էլ խեղաթյուր ու ներյուրված պատկերացում էին տալիս մարզի հայության կյանքի ու բարոյական մթնոլորտի մասին:

«Որտե՞ղ պետք է լինի Ղարաբաղի տեղը»: Իրողությանն անծանոթ մարդը կարող է մտածել, թե Ղարաբաղն անհայտ աշխարհ է, կամ ինչ-որ ժամանակ կորած մի տարածք, և ահա Բ. Կևորկովի փորձում է գտնել, պարզել նրա տեղը: Ո՛չ, այդպես չէ: Նա ուզում է որոշել Ղարաբաղի տիրո՛ջ հարցը: Բայց մի՞թե դա էլ հարց է: Չէ՞ որ բոլոր ժամանակներում ամեն մի երկիր պատկանել է նրան, ով ապրել է այդ երկրում: Իսկ Ղարաբաղում անհիշելի ժամանակներից մինչև այսօր անընդմեջ ապրում է հայ ժողովրդի մի մասը և, չմոռանա՛նք, այն մասը, որն ուշ միջնադարի ամենածանր մղձավանջում անգամ բնիկ հայկական պետական կազմավորում ունեցող միակ մարզն էր: Եվ խորհրդային շրջանում դարձյալ Ղարաբաղի բնակչության հիմնական, գերակշիռ զանգվածն է կազմում հայ ժողովուրդը (1923 թ. ամբողջ բնակչության ավելի քան 94 տոկոսը, 1939-ին՝ 88 տոկոսը, 1959-ին՝ 84,5 տոկոսը, իսկ 1970-ին՝ 80,5 տոկոսը):

Ո՛չ, Բ. Կևորկովին անհանգստացնողը հարցի այս կողմն էլ չէր: Նա ուզում էր պարզել, ցույց տալ Ղարաբաղի վարչական պատկանելությունը և չէր բավարարվում այսօրվա վիճակով (որ այն, իբրև ինքնավար հայկական ազգային մարզ, մնում է Ադրբեջանական ԽՍՀ սահմանների մեջ), փորձում էր պատմականորեն ցույց տալ ու ապացուցել Ադրբեջանի անկապտելի իրավունքը (այլ խոսքով՝ տիրապետությունը) Ղարաբաղի ու նրա հայ բնակչության վրա: Հենց այստեղ էլ նա, պատմական անառարկելի փաստերն ու փաստաթղթերը մի կողմ թողած, պատմության փոշու տակից հանում էր պատեհապաշտական եղանակով ժամանակին մոգոնված թղթեր, դրանք իրար կցմցում, սազացնում առաջադիր նպատակին, առանց ամաչելու այն ահավոր կեղծիքից ու ախտավոր «տրամաբանությունից», որոնք չեն կարող թաքցվել նույնիսկ գիտական պատրաստություն չունեցող մարդկանց աչքից: Բ. Կևորկովը հայտարարում էր, թե միայն դաշնակներն էին, որ ցանկանում էին Ղարաբաղը միացնել Հայաստանին, որով, իբր, ուզում էին հասնել իրենց դիվային նպատակին՝ «Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը թշնամացնել իրենց դարավոր եղբայրների հետ», որոնք ադրբեջանցիներն են:

Նախ ծագում է հասարակ մի հարց. հայկական մարզը Հայաստանին միացնելը, Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելը ինչո՞ւ պետք է թշնամական զգացում առաջացներ հարևան ադրբեջանական ժողովրդի մեջ: Ինչո՞ւ Բ. Կևորկովն այնքան չար էր պատկերացնում ադրբեջանական ժողովրդին: Մի՞թե Ղարաբաղի մարզկոմի քարտուղարի հասկացողությամբ՝ հայերն ադրբեջանցիների հետ բարեկամ կարող են լինել միայն Ադրբեջանի կազմում: Իսկ Ադրբեջանի կազմի մեջ չմտնող հայե՞րը, ասենք Երևանի, Շիրակի, Լոռու և Զանգեզուրի հայ բնակիչները, Ադրբեջանի ու ադրբեջանցիների թշնամինե՞րն են:

Կևորկովն ամեն կերպ ջանում էր ապացուցել, թե Լեռնային Ղարաբաղը ոչ մի ժամանակ ոչ մի կապ չի ունեցել, Երևանի, ուրեմն և Հայաստանի հետ, չունի այժմ և չի ուզում ունենալ երբևէ: Եվ բոլոր նրանք, ովքեր ինչ-որ ժամանակ փորձել են ստեղծել այդպիսի կապեր, ադրբեջանական ժողովրդի, հետևապես և ինտերնացիոնալիզմի ու խորհրդային համակեցության թշնամիներ են: Սույն սկզբունքից ելնելով էլ անողոք դատափետման էր ենթարկում անցյալի առումով՝ մարզի այն 13 ղեկավար աշխատողներին, որոնք 60-ական թվականներին ելնելով «Ադրբեջանի հարազատ ղեկավարության դեմ՝ ըստ էության ընկան «դաշնակցության ճանկերը»: «Բագրատ Ուլուբաբյանն ու նրան համախոհ հետամնաց, գաղափարապես չհասունացած մարդիկ,— գրել էր Կևորկովը,— փորձեցին Ղարաբաղի հարցը մեկնաբանել ազգային էգոիզմի ու ազգային սահմանափակվածության արատավոր դիրքերից»:

Ուրեմն, սոսկ «փորձեցին... մեկնաբանե՞լ»: Իսկ պլենումին նախորդած բյուրոյի նիստում հայտարարած է եղել, թե Ալիևը գիտե, որ 1965—66 թթ. Արցախից Մոսկվա են հասել 100 հազար ստորագրություններով հանձնարարականներ, որոնք պետք է ոչնչացնել՝ հակառակ առավել մեծ ուժի փաստաթղթեր ստեղծելով: Եվ այդ փաստաթղթերի առաջնեկն ու հիմնարարն էլ պետք է լիներ կուսակցության մարզկոմի որոշումը:

Այստեղ ես չպիտի խոսեմ այն ելույթների մասին, որ պլենումի անդամ ու ոչ անդամ արցախցիներն են ունեցել՝ արձագանքելով Կետրոկովի վայրահաչությանը: Իր պատմության մեջ արցախցին առաջին անգամ թշնամական ուժերի առաջ ծնկի իջած՝ հպատակության ու ստրկամտորեն ծառայելու երդումներ է տվել, բամբասել հարազատներին, սեփական ազգին ու նրա կառավարությանը: Ելույթ ունեցած ապիկարներից շատերն այսօր էլ դեռ կան, պաշտոններ են զբաղեցնում, նույնիսկ ազատագրական շարժմանն են մասնակցում... Իսկ ես այն կարծիքին եմ, որ դավաճանությունն առհասարակ անհնար է քավել նույնիսկ անձնազոհությամբ:

Պլենումն ընդունել է որոշում, որի հիմքում ընկած է եղել «Լեռնային Ղարաբաղի տեղի» հարցը, որ մարզը ո՛չ մի ժամանակ որևէ կապ չի ունեցել Հայկական հանրապետության հետ, չունի և չի ուզում ունենալ:

Պլենումի նիստը կետրոկովյան առաքելության իրականացման առաջին վճռական քայլն է եղել: Ապա նույն հարցը նա քննության է դրել նաև կուսակցական շրջկոմների պլենումների նիստերում, մարզի սկզբնական կուսակցական բոլոր կազմակերպություններում, կոմերիտմիության մարզկոմի, շրջկոմների ու սկզբնական կազմակերպությունների, արհմիությունների մարզկոմի, շրջկոմների և տեղկոմների նիստերում (տես «Սովետական Ղարաբաղ» թերթի 1975 թ. մարտի 30-ի, ապրիլի 15-ի, 16-ի և այլ համարները): Այլ խոսքով՝ նա իր առաջ քաշած հարցի քննարկմանը մասնակից է դարձրել Լեռնային Ղարաբաղի բնակչության ամբողջ չափահաս մասին և, ըստ էության, ընդունված որոշումները պետք է ներկայացներ իբրև Ղարաբաղի հայության միահամուռ կամքի արտահայտությունը: Իսկ բոլոր ժողովներում քննության կենտրոնում է եղել «Լեռնային Ղարաբաղի տեղի հարցը՝» Բ. Ս. Կետրոկովի մեկնաբանությամբ, կուսմարզկոմի պլենումում չարչրկված անունների շուրջ ժողովից ժողով ահագնացող մեղադրանքների հոլովումներով և վերջում ընդունվող որոշումներով՝ «Հավանություն տալ և պաշտպանել կուսակցության մարզկոմի առաջին քարտուղար ընկ. Բ. Ս. Կետրոկովի զեկուցման մեջ շարադրված դրույթներն ու եզրակացությունները» («Սով. Ղարաբաղ», 1975, ապրիլի 15):

Այս բոլոր որոշումների կնքված թարգմանությունները նվիրաբերվել են Հեյդար Ալիևին, որն էլ շատ է գոհ եղել իր դրածոյի եռանդուն ձեռնարկից:

Կետրոկովյան միջոցառումները փոթորկել էին ամբողջ հայ ժողովրդին: Հայաստանում այն ոտքի էր հանել մտավորականությանը:

Այն օրերին ես Արզնիի բուժարանում էի գտնվում: Բուժվող-հանգստացողներն իրարով էին անցել, ամեն հանդիպողի հարցնում էին՝ ի՞նչ է անում հանրապետության ղեկավարությունը, մի՞թե այս խայտառակությունն էլ պիտի մարսի:

Մարտի վերջին էր, բուժարան եկավ մեր Զորի Բալայանը և ասաց.

— Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը Գրողների միության նախագահ Վարդգես Պետրոսյանին հանձնարարել է գտնել քեզ ու պատվիրել, որ հանգամանալից տեղեկանք գրես Արցախում տեղի ունեցածի ու նրա այլևայլ առնչությունների մասին:

Մի շաբաթում գրեցի տեղեկանքը, որ կազմում էր մեքենագիր 75 էջ: Կարդացի Լևոնիդ Հուրունցի տանը, ուր հավաքված էին ինքը՝ Հուրունցը, Զորին, Միքայել Շաթիրյանը, որն այն ժամանակ Կենտկոմում արվեստի ու գրականության հարցերով էր զբաղվում և բավական գործուն մասնակցություն ուներ հայրենասիրական միջոցառումներին:

Տեղեկանքը գոհունակությամբ ընդունվեց ընկերների կողմից: Շաթիրյանն այնքան էր ոգևորվել, որ գտավ, թե անմիջապես էլ պիտի թարգմանել ռուսերեն և դնել շրջանառության մեջ: Թարգմանությունը մի քանի օրում կատարեցին ինքն ու դուստրը, և շատ շուտով Դեմիրճյանն իր ձեռքի տակ ուներ երկու լեզվով կազմված մի բովանդակալից փաստաթուղթ, որն ավարտվում էր աղերսանքով, որպեսզի գործ կատարվի, Արցախի հիմնահարցը պաշտոնական քննության դրվի, պայքար մղվի նրա արդար լուծման համար, մանավանդ երբ նախահարձակ է եղել հակառակորդը՝ մեզ հրաշալի հնարավորություն ընձեռելով տալու վճռական հարվածը...

Հետագայում, երբ կրքերը համեմատաբար հանգստացել էին, և նույնիսկ ինքս անտարբեր էի դարձել Դեմիրճյանի անտարբերության հանդեպ, Վարդգես Պետրոսյանը հայտնեց, թե, իբր, նա ցնցված է կարդացածի մանրամասներով, սակայն դեռևս վճռական քայլեր չի ձեռնարկում՝ մտածելով, որ դրա համար պիտի հայտնվի ավելի հարմար ժամանակ:

Հեյդար Ալիևը 1976 թ. դարձավ ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյի անդամության թեկնածու՝ ամբողջ աշխարհի աչքի առաջ տված կաշառքների ու լպրծուն շողոքորթությունների շնորհիվ: Հետո էլ հասավ Մոսկվա, դարձավ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ: Այս ընթացքում երևի նա մտածել է, թե Կետրոկովի ու մյուս հաճկատարների ձեռքով արդեն թաղել է Արցախի հիմնահարցը: Պաշտոնանկ դառնալուց հետո էլ նա պետք է բարձրագույն մի ամբիոնից հայտարարեր, թե իր օրոք, այսինքն՝ իր տիրապետության շրջանում, մարզը ո՛չ մի հարց չի ունեցել և երանություն է համարել իրեն վիճակված բախտը: Ինչպե՞ս կարող էր մոռացած լինել, որ մարզի, այսպես կոչված, ինքնավարության 50-ամյակին նվիրված միտինգում այսպիսի ուղենիշ խոսք է ասել. Լեռնային Ղարաբաղի նվիրաբերումն Ադրբեջանին պատմական այն երջանիկ պահն է եղել, երբ «Վ. Ի. Լենինի և կոմունիստական կուսակցությունը մեծ հոգատարություն են ցուցաբերել Խորհրդային Ադրբեջանի և նրա անբաժան մասը կազմող Լեռնային Ղարաբաղի վերածննդի ու սոցիալիստական ծաղկման նկատմամբ»[314]:

Սակայն հենց այն օրերին, երբ ԽՍՀՄ նոր Սահմանադրության նախագիծն էր դրված համաժողովրդական քննության, և ժողովուրդը, նրա զանազան հատվածները, բոլոր հիմնարկներն ու ձեռնարկությունները, անհատներն ու զանազան խմբակցությունները միութենական Սահմանադրական հանձնաժողովին էին հղում իրենց առաջարկները, պահանջներն ու նկատառումները, մի հեղեղ կազմեցին Արցախի հիմնահարցին վերաբերող թղթերը: Սրանց ուշադիր քննության շնորհիվ հանվեց հիմնավոր եզրակացությունը, որն էլ ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահության արձանագրության մեջ ստացավ հետևյալ ձևակերպումը. «Պատմական մի շարք հանգամանքների հետևանքով մի քանի տասնամյակ առաջ Լեռնային Ղարաբաղն արհեստականորեն միացվել էր Ադրբեջանին: Ըստ այդմ հաշվի չէին առնվել մարզի պատմական անցյալը, նրա ազգային կազմը, ժողովրդի ցանկությունը և տնտեսական շահերը: Անցել են տասնամյակներ, և Ղարաբաղի հարցը շարունակում է հոլովվել, առաջացնել անհանգստություն և անբարյացակամության պահեր դարավոր բարեկամությամբ իրար հետ կապված երկու ժողովուրդների միջև: Անհրաժեշտ է Լեռնային Ղարաբաղը (հայերեն՝ «Արցախ») միացնել Հայկական ԽՍՀ հետ: Այն ժամանակ ամեն ինչ կբռնի իր օրինական տեղը»[315]:

Խորհրդային երկրում 1985 թ. գարնանը տեղի ունեցած երեսունթվական հեղափոխությունը, որ պետական շրջաններում կոչվում էր վերակառուցում և հրապարակը լցրել էր ժողովրդավարության, հրապարակայնության, անհատի ու ազգի իրավունքների պաշտպանության բարձրագոչ խոստումներով, երևի թե ամենից շատ ոգևորել էր հայ ժողովրդին, իսկ հայ ժողովրդի մեջ էլ՝ արցախահայությանը: Մարզի ամբողջ հայ բնակչությունը, ղեկավարներից (չհաշված Կևորկովին ու նմաններին) մինչև հողագործ ու անասնապահ, բանվոր ու արհեստավոր, միանգամից խանդավառ եռուզեռ ապրեց՝

---

[314] «Սովետական Ղարաբաղ», 1973, նոյեմբերի 24:

[315] ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահության 1977 թ. նոյեմբերի 23-ի № 61 արձանագրություն, կ-4133:

հուսալով իրականացած տեսնել տասնամյակների իր երազանքը: Աշխատավորական խմբեր ու անհատներ էին գալիս Երևան, առաջարկում էին վերստին բարձրացնել մարզը Հայաստանին վերամիացնելու հարցը, պահանջել ու պայքարել, որ այն վերջնական լուծում ստանա: Այդ ներկայացուցիչների ու առանձին խմբերի ձայնը Մոսկվա էր հասել. գնում էին, իրենց ծանոթների միջոցով կամ ինքնուրույն դիմում կուսակցական ու կառավարական վերին մարմիններին... Եվ որովհետև ոչինչ չտվող կարգախոսների ու շռայլ խոստումների ժամանակ էր, արժանանում էին բարյացակամ ընդունելության, տուն էին դառնում հուսավառ տրամադրություններով, մոտալուտ երջանկության սպասումով:

Մի օր էլ, 1987 թ. դեկտեմբերին էր, հորաքրոջս տղան՝ Գրիգոր Ուլուբաբյանը, որ ապրում է Արցախի Մարտունի քաղաքում, ոգևորված եկավ մեր տուն ու հաղորդեց, թե մարզից մի շատ ներկայացուցչական խումբ է եկել, Մոսկվա պիտի մեկնի և ուզում է ինձ հետ հանդիպել, խորհրդակցել անելիքի շուրջ: Հրավիրեցի մեր տուն, իսկ նա ասաց՝ նախապես պայմանավորվել են, որ հանդիպումը տեղի ունենա իմ հին ծանոթ Զարեհ Մելիք-Շահնազարյանի տանը, որը գտնվում է Երևանի հին մարզադաշտի կողքին:

Հանդիպեցինք: Տեսա, որ իսկապես բավական պատկառելի խումբ է. էլ կուսակցական, խորհրդային, տնտեսական ղեկավար աշխատողներ, միութենական ու Ադրբեջանական Գերագույն խորհուրդների և տեղական ամեն տեսակ խորհուրդների դեպուտատներ, լրագրող ու իրավաբան, ուսուցիչ ու ճարտարապետ...

Զրուցեցինք, պայմանավորվեցինք, թե ինչ և ոնց են անելու, մանավանդ Մոսկվայում բնակվող մեր նշանավոր հայրենակիցներից ո՞ւմ և ինչպես են լծելու գործին (տվի նրանց հասցեներն ու հեռախոսների համարները)...

Գնալն ու վերադառնալը կատարվեց այնպես արագ, ասես չեր էլ եղել: Եկան, պատմեցին, որ ղեկավար մարմիններում իրենց ամենայն ուշադրությամբ լսել են, խոստացել հետագա աջակցություն: Ընդունողների մեջ եղել են կուսակցության Կենտկոմի պատասխանատու աշխատողներ, Գերագույն խորհրդում՝ նախագահության նախագահի տեղակալ Պ. Ն. Դեմիչևը և այլք:

Իբր, հենց Դեմիչևն է բացատրել, թե ոչինչ չի կարող խանգարել, որպեսզի հայկական ինքնավար մարզի հիմնական բնակչության միահամուռ-միասնական ցանկությունը կատարվի: Հասկացրել է նաև, որ դրա համար անհրաժեշտ պիտի լինի նոր համախոսականներ կազմակերպել:

Մի քանի օր հետո սկսվեց դիմում-համախոսականների հոսքը Ստեփանակերտից Մոսկվա: Այս գործի գլուխ էր կանգնած մեր Զորի Բալայանը, և չէր կարելի կասկածել, որ ամեն ինչ կատարվելու է բարեհաջող ու բարձր մակարդակով:

Եվ հենց նույն այդ օրերին էր, որ տեղի ունեցավ շատ կարևոր մի դեպք՝ հիշարժան հատկապես իր քստմնելիությամբ: Գրողների միության սկզբնական կուսակցական կազմակերպության ժողովն էր, և ելույթ ունեցողների մեծ մասի խոսքը պտտվում էր Արցախի հարցի շուրջ: Ժողովին ներկա Ռոբերտ Արզումանյանը՝ ՀԿԿ Կենտկոմի քարտուղարը գաղափարական գծով, եռում էր նստած տեղը և, այդ հարցը հանգիստ թողնելու իր առաջարկը մի քանի անգամ կրկնելուց հետո, մեկ էլ վրդովված տեղից վեր կացավ.

— Եղբայր, դուք ղարաբաղցիների բերա՞նն եք, ի՞նչ է, ի՞նչ իրավունքով նրանց տեղը այստեղ հարցեր եք լուծում: Ղարաբաղն Ադրբեջանում իրեն շատ լավ է զգում և ոչ մի գանգատ էլ չունի իր վիճակից...

Այդ վայրկյանին Զորի Բալայանը վեր ցատկեց տեղից ու, թևատակ առած երկու մեծադիր հատորներ, անցավ նախագահության սեղանի ետևը, Կենտկոմի քարտուղարի խոսքի կեսը բերանում թողեց:

— Երբ որ նվազագույն տեղեկություն իսկ չունեք, լավ կլինի, որ նման հայտարարություններ չանեք, ընկ. Արզումանյան: Ա՛յ, տեսնո՞ւմ եք այս հատորները: — Նա ձեռքի ծանրումեծ գրքերը բարձրացրեց գլխից վեր և մեկ էլ, շրա՜խկ, զարկեց սեղանին: — Այստեղ արցախցիների ստորագրություններն են այն համամիութենական տակ, որով մեր կենտրոնական ղեկավար մարմիններից պահանջվում է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը փրկել Ադրբեջանի գաղութակալությունից և միացնել Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետությանը:

Դահլիճն իրարով անցավ. մարդիկ ծափահարում էին, աղմկում: Քարտուղարը՝ Զորիի կողքին ներստված՝ ձեռքերն էր թափ տալիս, ինչ-որ քթթմնջում: Սակայն լսող չկար: Երբ նախագահող Վարդգես Պետրոսյանին հաջողվեց համեմատական անդորրը վերականգնել, Ռոբերտ Արզումանյանը հավասարակշռությունը կորցրած, ձեռքերը թափահարելով դահլիճի վրա գոռաց.

— Անբարոյականությո՛ւն է Ադրբեջանից Ղարաբաղը պահանջելը, անբարոյականությո՛ւն...

Դահլիճը նորից փոթորկվեց, բոլորը ոտքի կանգնեցին, սկսեցին ժայթքել կշտամբանքի չտարբերակված խոսքեր, որոնցից դժվար էր բան հասկանալ: Իսկ Սերո Խանզադյանը, որ նստած էր առաջին շարքում, անմիջապես նախագահության սեղանի դեմ-դիմաց, բռունցք արած աջը մեկնեց դեպի քարտուղարի ճակատը և որոտաց.

— Անբարոյականը դո՞ւք եք, մեկ էլ ձեր պես մտածողները: Հասկացա՞ք. դո՜ւք, մեկ էլ ձեր պես մտածողները...

Նա ուրիշ այսպիսի բաներ էլ ասաց, սակայն առաջին հարվածի արձագանքը, դահլիճի գոհունակության աղմուկն ու դղիրդը ցնցում էին շենքը, և այլևս հնարավոր չէր որևէ խոսք տարբերակել:

Հաջորդ օրը Զորիի հետ մի երկար զրույց ունեցանք: Մտածեցինք գործի դեմքիք օղակների մասին և եկանք այն եզրակացության, որ ամենից առաջ անհրաժեշտ է նախապատրաստել մեր հանրապետության երեք ղեկավարների դիրքը: Ես հիշեցի Կ. Դեմիրճյանի մի հանդիպումը Գրողների միության վարչության անդամների հետ՝ 1975-ի դեպքերից և իմ գրած տեղեկանքից հետո: Հր. Հովհաննիսյանն ու Գ. Էմինը կտրուկ պահանջում էին հաղորդել, թե Կետկովի խառնակչության դեմ ի՞նչ է արել և ի՞նչ ծրագիր ունի հանրապետության ղեկավարությունը: Եվ Դեմիրճյանը, նշանակալից հայացքն ինձ վրա հառած, հարց տվողներին ասաց.

— Միայն ձեզ չէ, որ հետաքրքրում է այդ հարցը: Ընկերներ կան, որոնք ընդարձակ տեղեկանք են ներկայացրել՝ մարդի խնդրին վերաբերող սպառիչ բացատրություններով ու առաջարկություններով և հիմա էլ սպասում են արդյունքին: Կարող եմ վստահեցնել, որ մենք հանգամանքներն ու գերագույն զգուշավորությամբ պատրաստում ենք հարցի քննությունը: Իսկ կոնկրետ քայլեր կձեռնարկենք, հենց որ համոզված լինենք, որ եկել է ժամանակը և կարելի է հասնել հաջողության: Ժամանա՜կը, ժամանակը պիտի մեզ տա հաջողության երաշխիքներ: Թե չէ, դուք գիտեք, որ եղել են ժամանակավրեպ ձեռնարկումներ, որոնք միայն վնասել են գործին և առավել բարդացրել մեր խնդիրը...

Ես լավ էի հիշում այս խոսքերը և համոզված էի, որ ավելի հարմար ժամանակ, մեզ համար ձեռնտու ուրիշ պայմաններ չեն լինելու: Համոզված էի նաև, որ հենց իր՝ Դեմիրճյանի համար էլ ամենաբարենպաստ պահն է: Նախընթացին Մոսկվայում քննել էին Հայաստանի կուս. Կենտկոմի գործունեությունը, արձանագրել մի արտասովոր դժգոհություն, հրապարակել պաշտոնական տեղեկատվություններ, որոնցից չէր կարելի չեզոքացնել, որ Դեմիրճյանի հարցը լուծված է: նա պետք է հրաժեշտ տա իր աթոռին: Եվ այս պայմաններում մի՞թե ձեռնտու և խելամիտ լավագույն քայլը չպետք է լիներ անձնվիրությամբ լծվել Արցախի հարցին, դժգոհ պաշտոնավարության վախճանը զարդարել մի այդպիսի ազգանպաստ գործի համար պայքարողի անունով:

Այն ժամանակ Հայաստանի ղեկավարները (Դեմիրճյանը հատկապես) դժգոհ էին Զորիից, որը «ԼԳ»-ում և ուրիշ թերթերում ելույթ էր ունեցել բնապահպանական հարցերի մասին և խիստ քննադատության ենթարկել հանրապետության կառավարներին:

Որոշեցինք, որ ես խոսեմ Դեմիրճյանի հետ և անմիջապես էլ զանգեցինք, որպեսզի պայմանավորվենք:

Պատասխանեց Դեմիրճյանի օգնականը, մեզ ծանոթ Հրանտ Լալայանը և ասաց, որ ընդունելության հարցով զբաղվում է մյուս օգնականը՝ ինչ-որ Զախմախչյան: Սա էլ, որ իր ասելով ինձ ճանաչում էր, սկսեց հարցուփորձ անել. ի՞նչ հարցով եմ խոսելու հետը, ինչո՞ւ անպայման իր հետ, երբ նա խիստ զբաղված է և նույնիսկ շրջկոմների քարտուղարներին ու մինիստրներին չի ընդունում:

Ես գիտեի, որ քանի՛ տարի էր, շրջկոմների քարտուղարներն ու մինիստրներն իրոք չէին կարողանում գոնե կառավարական հեռախոսով կապվել հետը, լուծել իրենց տանջող հարցերը: Մի քանի ամիս առաջ էլ իր մոտ էր հրավիրել ԳՄ վարչության անդամներին, իբր, հանրապետության հոգսերը քննելու նպատակով լսելու նրանց, խելք-խելքի տալու: Սակայն 5—6 ժամ հիմնականում խոսեց միայն ինքը: Երբ բաժանվելուց առաջ մերոնք դժգոհեցին, թե այս ի՞նչ եղավ, եկել էինք ձեզ բան ասելու և բերաններս փակ էլ վերադառնում ենք, նա իր հերթական ժպիտով համեմած հրավերք արեց.

— Ես շաբաթ-կիրակի այստեղ եմ լինում, եկեք, խոսենք: Ճիշտ է, գիտեմ, որ անհնար է հեռախոսով ինձ մոտ ընկնել-պայմանավորվել: Բայց, միևնույն է, փորձեցեք...

Վերջապես Զախմախչյանի հետ պայմանավորվեցինք, որ խնդիրքս հաղորդի և համաձայնեցնի հանդիպում ինձ հետ:

Երկար ժամանակ երկու-երեք օրը մեկ զանգում էի, սակայն որոշակի ոչինչ չկար: Իմ հայրենակից ու մտերիմ մեկը, որ Զախմախչյանի հետ բնակարանի հարևան է, խոստացավ միջամտել, հանդիպումը գլուխ բերել: Սրանից էլ ոչինչ չստացվեց: Երևում էր՝ հանրապետության առաջին ղեկավարը հիմնավորապես մտել էր իր կաղապար շերամի մեջ, ոչ ոքի չէր տեսնում, չէր լսում, երևի մտածելով, որ դա ամենաերանելի վիճակն է... Մինչև շերամը կծակեն ու իրեն դուրս կբերեն:

Բայց ի՞նչ իմանաս, գուցե Լ. Զախմախչյանն էր նրան պաշտպանում իմ պատռվածքի հոգսից:

Իսկ աշխարհը, հատկապես Հայոց աշխարհը, երկունքի մեջ էր: Ի՞նչ պետք է ծներ, հայտնի չէր: Կարևորը երկունքն էր, որ սկսվել էր բրեժնևյան տիրապետության շուրջ երկուտասնամյա մղձավանջից հետո:

Անուղղելի հավատավորները խանդավառված կրկնում էին թերթերից, ռադիոյից, հեռուստատեսությունից գիշեր-ցերեկ դուրս ժայթքող և օդն իրենցով լցրած կարգախոսները, դատապարտում էին ամեն ինչ, որ եղել է առաջ և, համոզված էին՝ այլևս չի կարող լինել: Զգուշավորները սարսափում էին լսածներից: Իսկ հոռետեսները պնդում էին, թե շատ շուտով այդ պոռոտախոսները հենց իրենք են երանի տալու անցածին և բռնվել են սեփական գլուխները փրկելու անհնար ցավով...

Սակայն, միևնույն է, պատռվել էր պատնեշը, դուրս էր հորդում ճահճի պարունակությունը, և խելք ունեցողը մտածում էր անցյալի թողած բոլոր աղտեղություններից փրկվելու մասին:

Արցախյան երկրորդ պատվիրակությունը Մոսկվա հասավ հունվարի 7-ին: Նրա ղեկավարն էր ԽՍՀՄ ԳԽ-ի պատգամավոր Վազգեն Բալայանը (Մարտունու շրջանի Սոս գյուղից), իսկ անդամները՝ Արկադի Կարապետյանը (Ստեփանակերտ), Սերժ Առուշանյանը (Ստեփանակերտ), Քրիստ. Խաչատրյանը (Ստեփանակերտ), Սլավիկ Առուշանյանը (Ասկերան), Գուրգեն Շահրամանյանը (Մարտունի), Արթուր Մկրտչյանը (Հադրութ) և

ուրիշներ, բոլորն էլ հեղինակավոր մարդիկ, որոնք ներկայացնում են մարզի քաղաքային ու գյուղական աշխատավորությունը, մտավորական շրջանները: Երևանում սրանց միացավ նախկին հադրութեցի, տնտեսագետ Իգոր Մուրադյանը:

Մոսկվա հասնելուն պես պատվիրակությունը հայտնվեց ԽՄԿԿ Կենտկոմի ու ԳԽ նախագահության ընդունարաններում, և արդյունքն այն եղավ, որ հունվարի 8-ին ընդունեց ԳԽ նախագահության նախագահի առաջին տեղակալ Պ. Ն. Դեմիչևը, իսկ հունվարի 11-ին՝ Կենտկոմի ազգային հարաբերությունների սեկտորի վարիչ Վ. Ա. Միխայլովը:

Պատվիրակությունը Դեմիչևին հանձնեց մարզի բոլոր մակարդակների դեպուտատների, ղեկավար աշխատողների և աշխատավորության հեղինակավոր ներկայացուցիչների (260 հոգի) հանրագիրը, որի մեջ ո՞րերորդ անգամ նկարագրվում էր մարզի հայության գաղութային վիճակը և պահանջվում էր մարզը հանել Ադրբեջանական հանրապետության կազմից, վերամիացնել Հայաստանին: Պատվիրակության անդամներն էլ իրենց հերթին ամենայն մանրամասնությամբ խոսեցին մարզի մասին, բացատրեցին առաքելության նպատակը: Սերժ Առուշանյանն իր օրագրում նշում է, որ Դեմիչևը բարյացակամությամբ ծանոթացել է ներկայացված հանրագրին, ուշադիր հետաքրքրությամբ ունկնդրել իրենց բացատրությունները և ասել իր խոսքը, որից կարելի է անել այս հետևությունները.

Ա) Ետպատերազմյան շրջանում Լեռնային Ղարաբաղի հարցը երրորդ անգամն է բարձրացվում, որ նշանակում է՝ այն լուրջ անհանգստություն է պատճառում հայ ժողովրդին, որի ցավի հանդեպ չի կարելի մնալ անտարբեր:

Բ) Խորհրդային կառավարությունը միշտ էլ անհանգստացած է եղել Ղարաբաղի հարցով, սակայն լճացման տարիներին, հասկանալի բան է, նման հարցը լուծվել չէր կարող:

Գ) Գերագույն խորհրդի նախագահությունը, խնդրի հանգամանորեն ծանոթանալու համար, հանձնարարել է համապատասխան արխիվներին ու գիտական հաստատություններին, որպեսզի ներկայացնեն գոյություն ունեցող նյութերը:

Դ) Խորհրդային կառավարությունը Լեռնային Ղարաբաղն այսօրվա Հայաստանին միացնելու պահանջի մեջ չի տեսնում ոչինչ ազգայնական, առավել ևս հակախորհրդային բան, հետևաբար և կջանա հարցի քննարկումն ու լուծումը կազմակերպել և անցկացնել ժողովրդավարական հիմունքներով, վերակառուցման հռչակված սկզբունքներով:

Պատվիրակությունը կուսակցության Կենտկոմի ազգային հարաբերությունների սեկտորի վարիչ Վ. Ա. Միխայլովի ընդունելությանը գնացել է բավական սրտապնդված. չէ՞ որ Դեմիչևը ոչ միայն Գերագույն խորհրդի նախագահության նախագահի առաջին տեղակալն էր, այլև կուսակցության Կենտկոմի քաղբյուրոյի անդամ, որի բարյացակամ վերաբերմունքը չէր կարող իշխող չլինել նաև Կենտկոմում: Արցախցիները Միխայլովին հանձնեցին հանրագրի երկրորդ օրինակը, մարզի հարյուրավոր բնակիչների անհատական ու խմբակային բազմաթիվ նամակներ և հարցին վերաբերող հին ու նոր կարևոր փաստաթղթեր: Շուրջ երեք ժամ տևած զրույցի ընթացքում Միխայլովը ցուցաբերեց հետաքրքրություն՝ հիմնահարցը խորությամբ հասկանալու և մութ ոչ մի կետ չթողնելու համար: Նրա խոսքերից էլ պատվիրակության անդամը (Ս. Առուշանյան) եզրակացրել է, որ

Ա) Պատվիրակության մասին անպայման կզեկուցի Կենտկոմի քարտուղարությանը:

Բ) Կենտկոմը ԽՍՀՄ ԳԱ Պատմության և Ազգագրության ինստիտուտներին հանձնարարել է պատրաստել-ներկայացնել հանգամանալից տեղեկանք Լեռնային Ղարաբաղի պատմության, նրա ժամանակակից ազգագրական ու տնտեսական-քաղաքական վիճակի և ստեղծված հիմնահարցի վերաբերյալ:

Գ) Ստեղծվելիք տեղեկանքի, առկա փաստաթղթերի ու նոր ստացված հանրագրերի ու առաջարկների հիման վրա փաստաթուղթ կպատրաստվի Կենտկոմի քարտուղարության համար:

Դ) Լեռնային Ղարաբաղի հայությունը կարող է վստահ լինել, որ կուսակցության Կենտկոմը բծախնդրությամբ հետևում է Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձություններին և ամենայն հավանականությամբ տարվա կեսերին, հունիսին, տեղի ունենալիք կուս. կոնֆերանսում լայն քննության կառնվի նաև Ղարաբաղի հարցը:

Ե) Հայտնի է, որ նախկինում Ղարաբաղի հարցը բարձրացնող մարդիկ ենթարկվել են հալածանքների: Այժմ Կենտկոմն ուշի ուշով հետևում է, որպեսզի նման բան թույլ չտրվի, հակառակը, արժանի պատիժ ստանան այն վարշարարները, որոնք կփորձեն արգելել արդարության ձայնը:

Այսքանի հետ միասին Միխայլովը խորհուրդ տվեց մարզում հանդարտության ու զսպվածության մթնոլորտ ստեղծել, որպեսզի աշխատավորության բնական ու խրախուսելի ազգային տրամադրությունները չվերածվեն ընդվզումների:

Պատվիրակությունն Արցախ վերադարձավ հունվարի 13-ին և մարզը գտավ փոթորկված վիճակում: Եթե առաջները մարդիկ իրենց տրտունջներն ու Հայաստանին միանալու ցանկությունն արտահայտում էին կիսաձայն, զգուշանալով շրջապատից (Կենտկոմն ու մնացած «ով»-երը, աչք ու ականջ դարձած, հետևում էին, որպեսզի «դաշնակցական տրամադրությունները» չտարածվեն, չընդգրկեն աշխատավորական լայն զանգվածներին), ապա այժմ ժողովներ ու զանազան հանրահավաքներ էին անում, տասնամյակներ շարունակ հոգու խորքերում պահած դժգոհությունն ու զայրույթն արտահայտում: Եվ ամենուրեք նույն աներեր վճիռն էր թնդում՝ Արցախը պետք է հանել Ադրբեջանի կազմից, միացնել Հայաստանի հանրապետությանը: Միացո՛ւմ, միացո՛ւմ: Հունվար էր, ձմռան ցուրտ, բայց օդը շիկացած էր այդ ամենազոր հրեղեն բառից:

Այն օրերին արցախահայության տրամադրությունը բաժանում էր նաև հարևան ադրբեջանցիների մի զգալի մասը: Հայտնի է, որ բազմաթիվ ադրբեջանցիներ, մանավանդ աշխատավորության հասարակ ներկայացուցիչներ ու մասնագետներ, որոնք ակնկալություն չունեին պաշտոնների ու վերևներից կաթող արտոնությունների և գնահատում էին արդարությունն ու հասարակության առողջ անդորրը, ստորագրել էին արցախահայության հանրագրերը, նույնիսկ հանրահավաքներում քննադատել ու դատապարտել Ադրբեջանի ղեկավարության խտրական քաղաքականությունը մարզի հանդեպ:

Իսկ հայերը, հայությունը, հին Արցախական աշխարհի տերերն ու մեծ զրկյալները ոտքի էին ելել և անհողդողդ վճիռ ունեին այս անգամ պայքարել մինչև վերջ, մինչև հաղթանակ: Հաղթանա՜կ, որ միացո՛ւմն էր լինելու:

Արցախահայության երրորդ պատվիրակությունը կազմված էր հիմնականում մարզի մշակույթի գործիչներից: Նրա երթուդարձի և գործունեության հանգամանքներն ինձ համար գրի է առել բանաստեղծ Գուրգեն Գաբրիելյանը, իմ հին բարեկամը, 80-ականների շարժման մասնակիցներից մեկը, զգացմունքներով բանաստեղծորեն կառավարվող, գլուխը հազար պատի զարկվելուց հետո էլ անհունորեն հավատավոր և մարզի փրկությանը մինչև վերջ նվիրված այդ բարի հսկան:

Ահա պատվիրակության կազմը. Վաչե Սարուխանյան (թատերական գործիչ, պատվիրակության ղեկավար), Գուրգեն Գաբրիելյան (բանաստեղծ), Վարդան Հակոբյան (Գրողների միության մարզային բաժանմունքի քարտուղար), Հրաչյա Բեգլարյան (բանաստեղծ), Էդուարդ Ղազարյան (երգահան), Գոհարիկ Սարինյան (սոց. աշխ. հերոս), Բենիկ Օվչյան (ժողովրդական արտիստ), Ժաննա Գալստյան (վաստակավոր արտիստուհի), Արմեն Հակոբյան (քանդակագործ):

Փետրվարի 7-ի երեկոյան դեմ հիվանդանոցային իմ սենյակը լցվեցին Գուրգենը, Վարդանն ու Հրաչյան, հայտնեցին, որ հաջորդ օրը Մոսկվա են թռչելու, պիտի նորից վերևներին հաղորդեն Արցախի վճիռը՝ վերամիավորվելու մայր Հայաստանին: Երկար զրուցեցինք իրենց անելիքի, մոսկովյան մեր հայրենակիցների հետ ստեղծելիք համագործակցության և

ուրիշ բազմաթիվ խնդիրների մասին: Բաժանվեցինք մի քիչ մեզ չվայելող զգացմունքային եղանակով: Իրենք գիտեին, որ հաջորդ առավոտյան ևս պիտի ենթարկվեի ծանր վիրահատության, մաղթեցին կորով: Իսկ ես խոստացա իրենց վերադարձը դիմավորել ոտքի վրա, և եթե բարի լուր բերեն, դա էլ կդառնա հրաշալի սպեղանի:

— Ցավում եմ, որ ձեզ հետ չեմ,— ասացի:— Գիտեք, որ պիտի լինեի...

Գուրգենը շատ հուզվեց.

— Երբ դու միայնակ, այն դաժան ժամանակներում, գնում-գալիս էիր, կռիվ էիր տալիս...

Չթողեցի որ շարունակի.

— Գնացե՛ք, աստված թող ձեր առաջ բացի բոլոր փակ դռները և հարթի խորդուբորդ ճանապարհները: Սիրտս ձեզ հետ է:

Մոսկվայում պատվիրակությանն անմիջապես տեր են կանգնել պրոֆ. Եպիսկոպոսյանը, գեներալ Հարությունյանն ու մեր մյուս եռանդունները, և փետրվարի 10-ին նրանց ընդունել է ԽՄԿԿ Կենտկոմի ազգային հարաբերությունների սեկտորի վարիչ, մեզ հայտնի Վ. Ա. Միխայլովը: Խոսել են պատվիրակության բոլոր անդամները, ջահել ու լեզվանի Վաչե Սարուխանյանից մինչև տարեց, ալեհեր Բենիկ Օվչյանը: Պատմել են մարզի հայության ցավերի ու հոգսերի մասին, յուրաքանչյուրն իր բնագավառի վիճակն է նկարագրել, ներկայացրել մարզի գաղութային վիճակը և առաջարկել նրա փրկության միակ միջոցը՝ վերամիացումը Հայաստանին: Այն ժամանակ Միխայլովը դարձել է անկյունում կուչ եկած, անխոս Գոհարիկ Սարինյանին:

— Ա՛յ մայրիկ, ձե՛զ ինչն է Մոսկվա բերել: Տեսնում եմ՝ աշխատանքի հերոս եք, փառքի ճանապարհ անցած, վաստակած հայուհի:

Եվ նա առաջ ու առաջ թույլտվություն է խնդրել, որ խոսի հայերեն, ապա այսպես է բացատրել իր այցի նպատակը:

— Քե մատաղ,— ասել է,— ամուսինս զոհվել է հայրենական պատերազմի ճակատում: Նրանից ինձ միայն մի տղա էր մնացել և մեկ էլ վերջին այն նամակը, որով խնդրում էր պահել տղայիս, լավ հայ դարձնել, լավ հայ ընտանիքի տեր անել, որ ապրի-շարունակվի մեր ազգը, չեռանա մեր Ղարաբաղ աշխարհը: Հիմա իմ այդ տղայի ընտանիքը խեղդվում է ադրբեջանցիների, վերևների ու վայրիների թշնամությունից, գիշեր-ցերեկ մեր վրա թափվող ամեն տեսակի խայտառակությունից... Եվ մտածում եմ, թե այդ ընտանիքն ինչքա՞ն կդիմանա թշնամությանն ու դավերին: Չէ՞ որ մարդիկ էլ քարից չեն, պողպատից չեն. մեկ էլ իրենց փրկելու համար վեր կկենան, կհեռանան մարդից, և մեր այդ սուրբ հայրենիքը գել ու գազանի բաժին կդառնա... Բա ես մինչև գերեզման իջնելս չիմանա՞մ, որ մեր Ղարաբաղ աշխարհի համար էլ մի լույս է բացվում...:

Միխայլովը շատ հուզված ու կարեկից է ձևացել և շոյիչ խոսքեր է ասել տարեց, հոգսի կծիկ դարձած արցախուհուն:

— Լույս էլ կբացվի, ձեր Ղարաբաղ աշխարհում երջանիկ ու անհոգ էլ կապրեք: Մեր Կենտկոմում շատ լավ գիտեն ձեր վիճակի, ձեր վճռական ցանկության մասին և, հուսով եմ, անպայման մի ելք կգտնվի:

Գուրգենն իր օրագրում նշում է, թե վերջում, բաժանվելիս, ինքն իր սովորության համաձայն Միխայլովի մեջքը թփթփացրել և հարց է տվել.

— Վերջապես մենք իրավունք ունե՞նք լավատես լինելու. կա՞ թեկուզ մի փոքրիկ ու վարդագույն հույս:

Եվ Կենտկոմի ներկայացուցիչը խանդավառությամբ, ժպտուրախ հավաստիացրել է.

— Իսկ ինչո՞ւ փոքրիկ և ինչո՞ւ վարդագույն: Կա մի մեծ ու կարմիր հույս, որը ձեզ է սպասում:

Այս մեծ ու կարմիր հույսի խոստմամբ երջանկացած պատվիրակությունը Մոսկվայում մնացել է ևս մի քանի օր: Սկզբից ևեթ իրենց դիմավորած հայրենակիցներին զեկուցել է հանդիպման հանգամանքների մասին, և նրանք խորհուրդ են տվել անպայման հանդիպել նաև Կենտկոմի որևէ քարտուղարի, եթե հնարավոր է՝ անպայման Ա. Յակովլևի հետ: Նրանք բոլորը միահամուռ են եղել այն կարծիքի մեջ, որ Յակովլևը հայասեր ու արդարամիտ մարդ է և ձեռքից եկած ոչինչ չի խնայի մեր հարցի համար:

Փետրվարի 12-ին մեծ ընդունելություն է եղել Հայաստանի կառավարության մոսկովյան մշտական ներկայացուցչությունում, ուր արցախյան մեկնողներին տեսնելու և լսելու էին հավաքվել մայրաքաղաքում բնակվող հարյուրավոր հայեր: Բոլորին պարուրել էր մի գերագույն երջանկություն: Կենտկոմի համարյա երկրորդական մի աշխատողի ոչինչ չորոշող խոստումն ասես նրանց պարգևել էր Արցախը, և մնում էր մի ձևական բան՝ Կենտկոմի որոշումը կամ Գերագույն խորհրդի հրամանագիրը: Տրամադրությունների այս հեղափոխության հիմքը հավանաբար ոչ այնքան խոստումն էր եղել, որքան ժամանակի շունչը, մթնոլորտում թևածող կարգախոսներն ու հայտարարությունները: Վերակառուցում կոչված այն երևույթը, որ սկզբնապես թվում էր այնպես մարդկային, արդար և հեղաշրջող: Մշտական ներկայացուցչության ղեկավար Հայկազյանն էլ ոգևորված խոստացել էր կազմակերպել պատվիրակության հանդիպումը Հայաստանի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի հետ, որն այն օրերին անպայման պիտի Մոսկվա ժամաներ:

— Երեք օրից նա այստեղ է լինելու, կխոսի ձեզ հետ, անհրաժեշտ խորհուրդներ կտա և ինքն էլ կորոշի իր ու Հայաստանի ղեկավարության անելիքը... Հիմնահարցն այսպե՞ս կմտնի իր իսկական գործնական փուլը:

Պատվիրակությանն սպասում էին Արցախում: Սպասում էին ու գործում:

Խլվում էր ամբողջ մարզը: Շրջկենտրոններում ու գյուղերում ժողովրդական ցույցեր էին անում, ժողովների էին հավաքվում, ընդունում որոշումներ, ուղարկում վերևները, Մոսկվա: Փետրվարի 14-ին պատվիրակների հետ հեռախոսով կապվում են Ստեփանակերտի գործակիցները և կատարում արտակարգ մի հաղորդում. լսափողում դղրդում է քաղաքի կենտրոնական հրապարակը, լսվում են կոչեր ու կարգախոսներ, մարտական երգեր ու ոգեպնդիչ ելույթներ:

— Լսո՞ւմ եք, — Ստեփանակերտի կենտրոնական հրապարակից հարցնում է Արկադի Մանուչարովը: — Ձեզ հետ է մեր ողջ քաղաքը, լսեցե՛ք նրա ձայնը և հաղորդեցե՛ք՝ ուր որ պետք է, ով որ դեռ խուլ է մեր ձայնի հանդեպ:

Գուրգեն Գաբրիելյանը վկայում է, թե փետրվարի 16-ին Մոսկվա է հասել Ռ. Բաղդասարյանը՝ համախոհների ու որոշումների մի մեծ կապոցով, որն անմիջապես էլ հանձնվել է ԿԿ Կենտկոմ և Գերագույն խորհուրդ: Բաղդասարյանը պատմել էր նաև, թե Արցախ են հորդացել Ադրբեջանի ղեկավարները (Կենտկոմի առաջին քարտուղար Բաղիրովը, ԿԿ-ի բաժնի վարիչ Ասադովը և լն.), ինչպես նաև ԽՄԿԿ Կենտկոմի պատասխանատու աշխատակից Կոնդրատևը: Նրանք, իբր, նախ առատ խոստումներ են տվել մարզի տարբեր վայրերում ունեցած հանդիպումների ժամանակ, երդվել են հենց տեղնուտեղը վճռել ամեն խնդիր ու ցանկություն, եթե միայն մեջտեղից վերանա այդ չարաբաստիկ միացման թե միավորման պահանջը: Սակայն պայծառ հեռանկարով հարբած բազմությունները լսել անգամ չէին ուզում այդ հիմար խոստումները և միաբերան պնդում էին իրենց վճիռը... Այն ժամանակ մեծապետական պարոնները միանգամից կերպարանափոխվել են, մտել իրենց հին ու սովորական դերի մեջ: Կոնդրատևը, օրինակ, հայտարարել է, թե Վերակառուցումը սովորական միջոցառում է, որի օրերը հաշված են, և ղարաբաղցիները զուր են նրա հետ որևէ հույս կապում: Բաղիրովն բռունցք է թափ տվել արցախահայերի դեմ, սպառնացել, թե հաշվեհարդար կտեսնի խռովարարների հետ, որոնք ոտնահարում են խորհրդային օրինականությունն ու ժողովուրդների ինտերնացիոնալ միասնությունը: Իսկ Ասադովը հրապարակել է մի մեծ գաղտնիք, ասել է. Ղարաբաղի սահմաններում պատրաստ են և

իրենց հրամանին են սպասում հարյուր հազար զինված մուսուլմաններ... Եվ այսքանից հետո էլ խոսել է Վերակառուցումից:

— Ա՛յ կողբահատ դարաբաղցիներ, — ասել է, — ուշքի եկեք, եթե չեք ուզում այս մարզը դարձնել հայոց նոր գերեզման:

Այս լուրերին տեղեկացած պատվիրակները խորհրդակցել են մոսկվաբնակ մի քանի հայրենակիցների հետ, որպեսզի ամեն ինչ հաղորդվի Պետ. անվտանգության միութենական կոմիտեի ղեկավարությանը, կուս. Կենտկոմի բաժիններին և էլի ուր որ պետք է:

Հայտնի է նաև արդյունքը. փետրվարի 16-ի ու 17-ի գիշերները Արցախ հասցվեցին ներքին զորքերի միավորումներ, որոնք և սկսեցին վերահսկել մարզ մտնող բոլոր ուղիները:

Փետրվարի 16-ին Մոսկվա էր ժամանել Կ. Դեմիրճյանը: Նա հրաժարվեց ընդունել Արցախի պատվիրակությանը:

Գուրգեն Գաբրիելյան. — Երեք օր ու գիշեր վայրկյաններ էինք հաշվում, թե ահա գալու է հայ ժողովրդի առաջին ղեկավարը, Հայոց պետական ու քաղաքական կյանքի գերագույնը: Հույս ունեինք և հավատացած էինք, թե նա իր ձեռքն է վերցնելու մեր հիմնահարցի սանձերը և այնուհետև գլխավորելու է Հայաստան աշխարհի այսօրվա ամենակենսական ու ամենաանհետաձգելի խնդրի իրականացումը: Հանուր հայության համազգային շարժումն է գլխավորելու:

Որքա՜ն լավատես էր այս մշտական ներկայացուցիչ Հայկազյանը: Ասում էր՝ կգա Կարեն Սերոբիչը և, երևի արդեն քաջատեղյակ Արցախում բորբոքված համաժողովրդական շարժման ընթացքին, կտեղեկանա նաև այստեղի, վերևների բարյացակամությանը և կգլխավորի մեր բոլոր ուժերը: Կգլխավորի, չէ՞ որ նա է մեր ամենամեծ իրավատերը... Եվ այն ժամանակ փոքրիկ Արցախի հիմնահարցն իր ամբողջ մեծությամբ ու լրջությամբ կկանգնի Վերակառուցման ճանապարհը բռնած երկրի ղեկավարության առաջ:

Մեզնից ոչ պակաս վշտացած ու հիասթափված էր Հայկազյանը, — իր խոսքն այսպես է ավարտում Գուրգեն Գաբրիելյանը: — Պայմանավորվեցինք այս տխուր ու տհաճ միջադեպի մասին ոչինչ չասել մոսկվաբնակ հայերին՝ արդեն հարազատացած այդ նվիրյալներին: Առհասարակ այս առթիվ ոչ մի տեղ էլ չպիտի խոսեինք: Հատկապես մերոնց՝ արցախցիների հետ... Կսպասենք, կտեսնենք, գուցե հետո փոխվի՜, նա Է՛լ գիտակցի իր դերն ու պարտականությունը: Վատագույն դեպքում՝ գոնե չխանգարի: Չէ՞ որ այդպես էլ եղել:

Պատվիրակությունը Ստեփանակերտ հասավ փետրվարի 17-ին, երբ ամբողջ Արցախական աշխարհը ոտքի վրա էր, պատրաստ իր պատմության երկար ճանապարհի ամենավճռական քայլերից մեկին, թերևս հենց ամենավճռականին: Վերամիավորման պահանջով որոշումներ էին ընդունել մարզի բոլոր շրջխորհուրդները, որոնք միաժամանակ պահանջում էին նույնպիսի որոշում ընդունելու համար հրավիրել մարզխորհրդի արտակարգ նստաշրջան: Մարզխորհրդի արտակարգ նստաշրջան հրավիրելու համար կազմվել էր նաև պահանջվող թվով դեպուտատների ստորագրությամբ մի վճիռ-կարգադրություն:

Իսկ Ադրբեջանի ղեկավարությունը, ինչպես և նրա հարկադրանքով Արցախ ժամանած ղեկավար մունկվացիները ոտնաձեռ ընկած փորձում էին կասեցնել վերահաս «աղետը»:

Ստեփանակերտի կենտրոնական հրապարակը գիշեր-ցերեկ լեփ-լեցուն էր վճռական պայքարի ելած և «միացո՛ւմ-միացո՛ւմ» վանկարկող արցախցիներով, որոնց մեջ եթե մեծամասնություն էին կազմում ստեփանակերտցիները, ապա առկա էին նաև մյուս բոլոր շրջաններից ժամանած բազմաթիվ խմբեր:

Արտահերթ նստաշրջան գումարելու պահանջը դեպուտատներից անցել էր ցուցարարներին, որոնք, մարզգործկոմի շենքը պաշարած, ստիպում էին նիստ գումարել,

որոշում ընդունել, հակառակ դեպքում սպառնում էին ինքնադատաստան անել խանգարողների դեմ:

Խանգարողները կուս. մարզկոմի քարտուղար Կևորկովն ու մարզգործկոմի նախագահ Օսիպովն էին: Երբ մի քանի դեպուտատների աջակցությամբ գրող ու պատգամավոր Վարդան Հակոբյանը մարզգործկոմում Օսիպովին զգուշացրել էր, թե հրապարակը եռում է, նստաշրջան չգումարելը կհանգեցնի ահավոր հետևանքի, Օսիպովը նրան հայտնել է.

— Այդ հրապարակը եռացողներից հեռու մնացեք, ընկեր Բաղիրովի կարգադրությամբ զորք է գալու, որպեսզի «հանգստացնի»:

— Բայց նկատի ունեցեք, — ասել է Հակոբյանը, — որ նստաշրջանն անպայման կգումարվի:

— Եվ այն կլինի անօրինական:

— Անօրինակա՞ն: Բայց չէ՞ որ օրինականն ու անօրինականը ժողովուրդն է որոշում, իսկ նա արդեն իր խոսքն ասել է:

Օսիպովը Հակոբյանին ստիպում էր գնալ և Բաքվից սպասվող պատժիչ նոր ուժերի սպառնալիքով ժողովրդին հեռացնել հրապարակից:

— Եթե չեք ուզում, որ մեծ արյունահեղություն լինի:

Հակոբյանն ու մյուս պատգամավորները խառնվեցին ցուցարարներին, ելույթ ունեցան նրանց առաջ, կոչ արին պայքարել մինչև վերջ, մինչև իրական միացում:

Գնալով դրությունը ահագնանում էր: Շրջաններից լուրեր էին գալիս գյուղական ցույցերի ու տոնախմբությունների մասին: Պարզմիտ գյուղացիները մտածում էին, թե հենց միայն այս ազատ ու հպարտ խոսքն ինքը որոշում է ամեն ինչ. խոսելն ինքն արդեն միացում է... և երջանկությունից աշխարհի տերն էին դարձել: Ոչխար էին մորթում, կարաս էին բացում, կազմակերպում ցնծություններ, որպիսիք տարիներ ի վեր չէին եղել այն ալևոր լեռնաստանում..."

Իսկ Բաքվից հեռախոսով, ռադիոյով ու հեռուստատեսությամբ հաղորդում էին անսանձ սպառնալիքներ: Ո՞նց թե Ղարաբաղը ոտքի է ելել և ուզում է միանալ իր Հայաստանին: Ուրեմն ապստամբե՞լ է: Բայց մի՞թե այդ Ղարաբաղի համար դաս չեղավ 1920-ի ապստամբությունը: Մոռացե՞լ է Շուշին, Ասկերանը: Կարկառի ձորի հայկական գյուղերի ավար-ավե՞րն է մոռացել:

Ասում են՝ Բաղիրովն Աղդամում կուսակցական ակտիվի ժողով է գումարել, և հակահայկական այդ վանդեան, հարևան ավազակային որջերի հետ միասին, արդեն պատրաստ է շարժվելու Ստեփանակերտի վրա:

Վերջն ի՞նչ է լինելու: Արցախյան խուլ գոյապայքարն արթնացել, գարնանային գետի պես հորդում, ծփում, ափերն է ծեծում: Ի՞նչ է բերելու վաղը, կործանարար փոթորի՞կ, թե՞ գարնանաբույր, պայծառ եղանակ:

Լեռնաստանի վրա փետրվարի 20-ն է բացվում ազատության ու երջանկության շռայլ խոստումներով:

1988—1989 թթ., Եղվարդ—Երևան: